9(~)
Ս-25

Հ. Ստրքյան

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

9(~)
Ս-25

Հ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Թույլատրված է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության պետական կոմիտեի կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի և տեխնիկումների ուսանողների համար:

930

«ԼՈՒՅՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1965

Այս գիրքը գաղութատիրության պատմության մի համառոտ ուրվագիծ է։ Հեղինակը շարադրում է գաղութատիրության և գաղութային նվաճումների համառոտ պատմությունը, հանգամանորեն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես է նոր գաղութատիրությունը դարձել ժամանակակից գաղութատիրություն՝ նեոգաղութատիրություն, ապա խոսվում է ագրեսիվ տերությունների ներքին ու արտաքին քաղաքականության և գերշահույթի գաղութային աղբյուրների մասին։ Մանրամասն քննարկվում է ազատագրված ժողովուրդների կեղեքման ու ստրկացման մեթոդները ու ձևերը, ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի տակտիկական եղանակները։

Տիպրը գրված է փաստացի և ճանաչողական հարուստ նյութի հիման վրա և նախատեսված է որպես ուսումնական ձեռնարկ ազգային-ազատագրական շարժումները, քաղաքատնտեսության ու պատմության հարցերն ուսումնասիրող և այդ հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանի համար։

Խմբագիր՝

Տնտեսագիտ. գիտությունների թեկնածու

ԱՐՏՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

АРУТЮН НЕРСЕСОВИЧ САРКИСЯН

СТАРЫЙ И НОВЫЙ КОЛОНИАЛИЗМ

(на армянском языке)

Издательство «Луйс»

Ереван—1965

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատերազմները մարդկության պատմության մշտական ուղեկիցներն են եղել։ Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին ամիսներին «Վելտվոխե» հանդեսը, որ լույս էր տեսնում Ցյուրիխում, հաղորդեց, որ անգլիացի գիտնական Թոբերտ Կաշինգի տվյալներով վերջին 3521 տարում մարդկությունը միայն 268 տարի է խաղաղ ապրել։ Մնացած 3253 տարիներից և ոչ մեկը այս կամ այն աշխարհամասում չի անցել առանց պատերազմի։ Այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած մոտավորապես 15000 պատերազմները պատճառ են դարձել ավելի քան երեքուկես միլիարդ մարդու ոչնչացման, այսինքն՝ ավելին, քան այժմ ապրում է մեր մոլորակի վրա։

Հարց է ծագում՝ ի՞նչ բնույթի պատերազմներ էին դրանք։ Ինչ խոսք, մեծ մասամբ գաղութային։ Այս ամենը վկայում է, թե աշխարհի ժողովուրդների համար ինչպիսի չարիք է գաղութատիրությունը։

Գաղութատիրության պրոբլեմը հասարակության զարգացման պատմության ամենակարևոր և բարդ պրոբլեմներից մեկն է։ Այն ծնել և ծնում է պատերազմներ, թշնամանք և ատելություն ժողովուրդների միջև, արգելակում մի միասնական համաշխարհային ընտանիքում նրանց համախմբմանը, մի սիրելի կամավոր միության մեջ, «որը թույլ չտար մի ազգի ոչ մի բռնություն մյուսի նկատմամբ» (Վ. Ի. Լենին)։ Գաղութատիրությունն է պատճառն այն վիճակի, որ շատ ժողովուրդներ զրկվել են ինքնուրույնությունից ու ազատությունից, դարձել են «աղքատ», «փոքր», «հետամնաց», իսկ մի քանիսը՝ «հարուստ», «մեծ», «առաջավոր» ժողովուրդներ անծայրածիր տերիտորիայով։

Գաղութատիրությունը սոսկալի հարվածներ հասցրեց հայ ժողովրդին։ Լոնդոնյան «Թայմս» թերթն անցյալ տարվա վերջերին հրապարակեց Անկարայի իր թղթակցի հոդվածը, որտեղ իրավացիորեն նշված է. «Քիչ ազգեր և նույնիսկ ոչ էլ հրեաներն են ունեցել ավելի սոսկալի պատմություն[1]», քան հայերը։ Խոսքը Մեծ եղեռնի մասին է, որն սկսվեց 50 տարի առաջ, 1915 թվականի ապրիլի 24-ին և փաստորեն տևեց մինչև 1920 թվականի նոյեմբերի 29-ը։ Այդ տարիներին գաղութատերերի կամքով մահվան դատապարտվեց «Բարձր քաղաքակրթության հասած մի ժողովուրդ, մեծ ու փառավոր անցյալով, որի մատուցած ծառայություններն արվեստին, գրականությանն ու գիտությանը երբեք չեն կարող մոռացվել, մի ազգ, որը տվել է քաղաքավարի ու երևելի մտածող մարդիկ... որոնք ծանոթ են եղել աշխարհի բոլոր ընդուներին... խորաթափանց վաճառականներ, ականավոր բժիշկներ, գիտնականներ, դերասաններ, աղնիվ աշխատանքով բարգավաճած գյուղացիներ, որոնք հողը բերքատու էին դարձնում և որոնց միակ մեղքն այն էր, որ նրանք անպաշտպան էին, խոսում էին իրենց հետապնդողներից տարբեր լեզվով և ծնված էին տարբեր հավատով»[2]։

Ճիշտ է, XX դարի 50—60-ական թվականները նշանավորվեցին իմպերիալիզմի տրադիցիոն գաղութային ամբողջ սիստեմի փլուզումով։ Պետական անկախ կյանքի ուղին թևակոխեցին Ասիայի ու Աֆրիկայի տասնյակ ժողովուրդներ, այդ թվում մանդինգոները, էլերը, ֆուլբերը, նիլոտները, աշանտիները, բանդուները և ուրիշներ, որոնց գոյությունը մինչև վերջերս միայն-քչերին էր հայտնի։ Թվում էր, թե Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդներն այժմ կարող էին վստահ լինել իրենց ապագայի նկատմամբ։ Բայց ավա՜ղ։ Երևան է եկել «նոր» թշնամի՝ նեոգաղութատիրությունը։ 1961 թվականի մարտին Աֆրիկայի ժողովուրդների երրորդ կոնֆերանսը բանաձև ընդունեց նեոգաղութատիրության առթիվ, այն որակելով իբրև

[1] «Գրական թերթ», 1964 թ. նոյեմբերի 13, № 46։

[2] ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին 1919 թ. հունվարին գերմանական գրող Արմին Վեգների բաց նամակից։

«մեծագույն սպառնալիք աֆրիկյան այն երկրների համար, որոնք հենց նոր են անկախություն նվաճել կամ գտնվում են այդ ճանապարհին»։ Կոնֆերանսը նեոգաղութատիրությունը դիտեց իբրև գաղութային սիստեմի պահպանման կատարելագործված մի նոր քաղաքականություն։ Չնայած ձևականորեն ճանաչվել է որոշ երիտասարդ երկրների քաղաքական անկախությունը, սակայն նրանք «գտնվում են տիրապետության անուղղակի և առավել նրբին ձևերի զոհեր»։

Իսկապես, քաղաքական անկախություն նվաճած Ասիայի և Աֆրիկայի երկրների համար նեոգաղութատիրությունը մեծագույն սպառնալիք է։ Այն է՛լ ավելի լուրջ վտանգ է ներկայացնում երկրագնդի այն շրջանների ժողովուրդների համար, որոնք դեռևս գտնվում են գաղութային ճնշման տակ։ Այժմ իմպերիալիստական աշխարհի բոլոր պետությունները նեոգաղութատիրության քաղաքականություն են վարում, անկախ այն բանից, թե ինչ նշանաբանով են վարում այդ քաղաքականությունը՝ «Գաղութներից հեռանալ՝ այնտեղ մնալու համար», թե՝ «Ոչնչացնել և ասիմիլացնել գաղութների ժողովուրդներին՝ ընդմիշտ այնտեղ մնալու համար»։ Նեոգաղութատիրությունը, այսպիսով, գաղութատիրության զարգացման մի նոր էտապ դարձավ։ Այն կապիտալիզմի զարգացման իմպերիալիստական փուլի ուղեկիցն է, կապիտալիզմ, որը ճգնում է «նոր մեթոդներով և նոր ձևերով... պահպանել ժողովուրդների գաղութային շահագործումը»։

Նեոգաղութատիրությունը իր էությամբ ու բովանդակությամբ չի տարբերվում տրադիցիոն գաղութատիրությունից։ Նպատակներն ու խնդիրները մնացել են նույնը՝ պայքար հանուն գերշռության գաղութային աղբյուրների։ Սակայն նա զինվել է նոր մեթոդներով և նոր ձևերով, որպեսզի, իբր թե, «պայքարի»... գաղութատիրության դեմ։ Հանդես գալով անտեսանելիի դերում, նեոգաղութատիրությունը ձգտում է մոլորության մեջ գցել աշխարհի ժողովուրդներին, զինաթափել և բթացնել նրանց զգոնությունը սպառնացող մահացու վտանգի հանդեպ։ Սովորական գաղութատիրությունը գործում էր գլխավորապես ուղղակիորեն, առանց վերապահումների, նեոգաղութատիրությունը շրջանցող մանևրներ է անում, ձգտում

է իր ապագա դրված նպատակներին հասնել, այսպես ասած, ետնամոտքից։

Շրջանցման, անուղղակի գործողությունների ստրատեգիան, ինչպես հայտնի է, ռազմական գործում առավել արդյունավետ է հակառակորդին բարոյապես ընկճելու և ֆիզիկապես ոչնչացնելու իմաստով։ Ամբողջ ֆեոդալական Եվրոպայի միացյալ ռազմական ուժը տարիներ շարունակ ոչ միայն չկարողացավ հաղթել Նապոլեոնին, այլև պարտություն-պարտության ետևից կրեց։ Սակայն բավական եղավ նրան հանգիստ թողնել և շրջանցման ճանապարհով շարժվել դեպի Փարիզ, այն գրավել, և «հեծյալ Ռոբեսպիերը» անձնատուր եղավ Եվրոպայի միապետներին։

Նեոգաղութատիրությունը ժամանակակից պետական կապիտալիզմի հենց այն «մեծ քաղաքականության» անուղղակի գործողությունների ստարտեգիան է, որի միջոցով մտադիր է իր անսահմանափակ տիրապետությունը հաստատել աշխարհի վրա, ձգտում է ժողովուրդների անկախությունը ոչնչացնել ոչ թե բաց ճակատամարտում, այլ շրջանցման ուղիով, խաբեության միջոցով։ Այդ իսկ պատճառով XX դարի այդ երկերեսանի այլանդակ ծնունդը իր աշխարհ գալու առաջին հսկ օրից հանդես եկավ իբրև մարդկության առաջին ու անհաշտ թշնամի, նրա դեմ մղվող պայքարի հարցը վաղուց ի վեր հուզում է աշխարհի ժողովուրդներին։ Զարմանալի չէ, որ նեոգաղութատիրությունը գիտական ուսումնասիրությունների թեմա է դարձել արտատամանի առաջադեմ հեղինակների և ազգային-ազատագրական շարժումների ղեկավարների համար, հատուկ քննարկման առարկա՝ միջազգային ու զոնալ կոնֆերանսներում և խորհրդակցություններում։

Գաղութատիրության այլափոխությունը վկայում է, որ նա դառնում է չարորակ ուռուցք մարդկության առողջ մարմնի վրա։ Սովորական քաղցկեղի բուժման համար բժիշկները դեռ արմատական միջոց չեն գտել։ Ավելին, դեռ հայտնի չէ այդ հիվանդության հարուցիչը։

Արդյոք դրությունը նույնը չէ՞ սոցիալական քաղցկեղի բուժման նկատմամբ։ Բարեբախտաբար, ո՛չ։ Մարդիկ վաղուց գտել են այդ հիվանդության հարուցիչը և նրա բուժման միջոցը։ Հարուցիչը, ինչպես հայտնի է, այն հատարակարգն է, որը հիմնված է մարդու կողմից մարդու շահագործման վրա, մի ազգի կողմից մյուսին կեղեքելու վրա։ Բարասանը այդ իրավակարգի ոչնչացումն է, առավել արդար սոցիալական կարգի հաստատումը։

Ոմանք սխալմամբ կարծում են, որ գաղութատիրության հակացողությունը կապված է սոսկ ազգի առաջացման, ուսի և կապիտալիզմի առաջացման հետ։ Մինչդեռ գաղութատիրության մայր հողը թե՛ ստրկատիրական կարգերն են, թե՛ ֆեոդալիզմը և թե՛ կապիտալիզմը, այսինքն՝ բոլոր շրջանները միասին վերցրած։

Այս գրքի նպատակն է՝ բացահայտել սոցիալական այդ բարդ երևույթի բնույթը, տալ այդ պրոբլեմի ծագման, զարգացման բացատրությունը, օգնել ընթերցողներին ավելի լավ հասկանալու այն հարցերը, որոնք վերաբերում են գաղութատիրության սոցիալ-տնտեսական բնույթին, նրա ներքին ու արտաքին քաղաքականությանը, իմպերիալիզմի դարաշրջանում գերշահույթի գաղութային աղբյուրների դերին, գաղութների և թույլ զարգացած երկրների ժողովուրդներին կեղեքելու և ստրկացնելու ձևերին ու մեթոդներին, նեոգաղութատիրության տարատեսակներին, ինչպես նաև ազգային-ազատագրական պայքարին։

Ընթերցողը շնորհակալ կլինի այն բոլոր ընկերներից, որոնք իրենց դիտողություններն ու կարծիքները կհայտնեն։

Առաջին գլուխ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սարկության վրա հիմնված Հռոմը գաղութային քաղաքականություն էր վարում և իմպերիալիզմ էր իրականացնում։

Վ. Ի. Լենին

Ոսկու և արծաթի հանքավայրերի հայտնագործումն Ամերիկայում, բնիկների բնաջնջումը, սարկացումն ու ողջ-ողջ թաղումը հանքերում, Արևելյան Հնդկաստանը նվաճելու ու կողոպտելու առաջին քայլերը, Աֆրիկան սևամորթներին որսալու արգելադաշտ դարձնելը,— ահա արտադրության կապիտալիստական դարաշրջանի արշալույսը։ Այդ իդիլիական պրոցեսները նախասկզբնական կուտակման գլխավոր մոմենտներն են կազմում։

Կ. Մարքս

Ա. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

§ 1. ԳԱՂՈՒԹԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍՆՈՒՆԴԸ։ Գաղութային առաջին տերությունների երևան գալը կապված է նախնադարյան-համայնական կարգերի քայքայման, ցեղային միավորումների ու միությունների գոյացման, առաջին պետությունների ծագման հետ։ Այդ պրոցեսը տեղի է ունեցել մեր թվարկությունից առաջ IV—III հազարամյակում, Նեղոսի ու

Միջագետքի (Տիգրիսի և Եփրատի) հովիտներում։ Ինչ խոսք, դրանից առաջ էլ ցեղերը կռվում էին միմյանց դեմ, թափառական կյանք էին վարում և անվերջ շարժման մեջ էին։ Սակայն դա դեռ գաղութատիրություն չէր։ Վերջինս երևան եկավ միայն այն ժամանակ, երբ առաջին ցեղային միավորումը դուրս եկավ իր տերիտորիայի բնական սահմաններից և զավթեց մի այլ ցեղի տերիտորիա՝ այն իր ձեռքում պահելու, այդ ցեղերից շարունակ հարկ կամ ուրիշ եկամուտ ստանալու նպատակով։ Իսկ այդ բանը հնարավոր դարձավ միայն այն ժամանակ, երբ զավթիչը նվաճած վայրերում հնարավորություն ստացավ որոշակի չափով ուժ պահել։ Այդպիսի ուժ՝ մշտական զորք, որքանով մեզ հայտնի է պատմիչների վկայություններից, առաջին անգամ ստեղծեց Սարգոն թագավորը (մեր թվականությունից ավելի քան 2300 տարի առաջ)։ Նրա բանակը բաղկացած էր թագավորից ամբողջովին կախման մեջ գտնվող 5400 պրոֆեսիոնալ ռազմիկներից։ Այդ ուժի միջոցով Սարգոնն ստեղծեց իր ժամանակվա մասշտաբներով ակկադական գաղութային մեծ տերություն։ Հետևաբար, այդ տերությունը պետք է համարել նաև պատմության մեջ առաջին գաղութային երկիրը։

§ 2. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆ Է ՄՏՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՁԱՐԻՔ։ Շահագործողական պետության զարգացման որոշակի էտապում պատերազմն սկսեց ընդունել գաղութակալական իմաստ ու բովանդակություն։ Մարդկությունը իրավացիորեն այն համարում է ժողովուրդների համար մեծագույն չարիք։ Պատերազմը դարձավ նրա մշտական ուղեկիցը, իսկ խաղաղությունը՝ հազվագյուտ երևույթ, երջանիկ պատահականություն։ Գաղութատիրությունն անբաժան է պատերազմից, բռնություններից։ Նրանք մինչև օրս մնում են որպես Սիամի երկվորյակներ։ Այդ իսկ պատճառով պետությունների պատմությունը դարձել է մետրոպոլիայի սահմանների ընդլայնման կամ մետրոպոլիայի պահպանման, այսինքն՝ նրա ռազմա-ստրատեգիական ու քաղաքական-տնտեսական շահերի պահպանման պայքարի պատմություն։

§ 3. ԱՐԵՎԵԼՔԻ ՌԱԶՄԱ-ԲՌՆԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ Ստեղծելով ուժեղ բանակ, Սարգոնը արշավանքներ վարեց դեպի հարևան շրջանները՝ Միջին Եփրատ, Սիրիա, Տավրոսի լեռները։ Նա միավորում է Ակկադները և Շումերները։ Ակկադական թագավորությունը իր առավելագույն հզորությանը հասավ Նարամսինի թագավորության շրջանում (2290—2254 թթ.)։ Վերջինս շարունակում էր նվաճել հարևան երկրները և հասավ մինչև Հայաստանի լեռները։

Այնուհետև ասպարեզ է գալիս ու հզորանում հին Բաբելոնի թագավորությունը։ Համմուրաբի թագավորը (1792—1750 թթ. մ. թ. ա.) զավթում է Տիգրիսի ու Եփրատի հովիտները, տիրում դեպի արևելք, հյուսիս ու արևմուտք տանող առևտրական ճանապարհները։ Թագավորության մեջ զարգանում է հողագործությունը, ընդլայնվում ոռոգման ցանցը, շրամբարձ շինությունները, որոնք թույլ են տալիս ոռոգել Երբեմնի անմշակ դաշտերը։ Զարգանում է առևտուրը։ Առևտրականները հետզհետե ավելի ու ավելի մեծ դեր ու ազդեցություն են ձեռք բերում Երկրի տնտեսության մեջ։ Տիրող դասակարգերը մշտական պատերազմներ են մղում ուրիշ ցեղերին կողոպտելու նպատակով։

§ 4. ԱՍՈՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ։ Հին աշխարհի գաղութատիրության պատմության մեջ խոշոր դեր է խաղացել ասորական պետությունը։ Նա գոյացել է II և I հազարամյակների սահմանագլխում (մ. թ. ա.), տեխնիկայի, գիտության, կուլտուրայի ու ռազմական գործի հետագա զարգացման, հասարակության արտադրողական ուժերի բուռն աճման շրջանում։

Դասակարգային հակամարտությունների սրվելուն զուգընթաց կատարելագործվում են պետությունը կառավարելու, պատերազմելու ու ստրուկներ ձեռք բերելու ձևերն ու մեթոդները։ Ասորական արքաները հաջող պատերազմներ են վարում Միտանիի, Բաբելոնի, Խեթական տերության դեմ, գրավում ռազմա-տնտեսական տեսակետից կարևոր շրջաններ։ Դա տիրապետող դասակարգերին հնարավորություն է տալիս գերելու ստրուկներ, զավթելու երկաթահանքերը և անտառները։ Օգտվելով հարևանների թուլացումից, Ասորիքի թագավորներն ընդլայնում են իրենց տերության սահմանները մինչև

Պարսից ծոցը, Սև ծովը, մինչև Լիբանանի լեռները։ Նրանք ապրում են Ուրարտուն, Փյունիկիան, Եգիպտոսը, որի մայրաքաղաք Թեբեն 660 թվականին ընկնում է նրանց ձեռքը։

Ինքնուրույն զարգացման ուղին թևակոխած հայ ժողովուրդը դեռ այն հեռավոր ժամանակներում պաշտպանում էր իր գենետիկը։ Հանրահայտ է Արա Գեղեցիկ թագավորի առասպելը. Արան զոհվեց անհավասար կռվում՝ հանուն Հայաստանի անկախության, Շամիրամ թագուհու արշավանքի ժամանակ։

4. Մարքսը անգլիացիներին անվանել է «նվաճող ժողովուրդ»։ Հին դարերում այդպիսի երկիր էր Ասորեստանը։ Համաշխարհային գաղութային տերության՝ Ասորեստանի, տիրող դասակարգերն էին զինվորականները, բարձրաստիճան քրմերը, պետական պաշտոնյաները ու քաղաքային վաճառականները։ Նրանք բոլորն այդ ժամանակներում չլսված հարստություններ էին դիզում։

Ասորեստանը զավթողական պատերազմների սկզբնական շրջանում պարզապես բնաջնջում էր տեղացիներին կամ սովի մատնում։ Պատմաբանները հաշվել են, որ մեր թվականությունից առաջ 883 թվականից մինչև 876 թվականն ընկած ժամանակամիջոցում ասորեստանցիները սպանել կամ ստրկացրել են նվաճված երկրներում արական բնակչության առնվազն մեկ երրորդը։ Սպանված ու ստրկացված վանանց թիվն ավելի մեծ էր։ Երեխաներին ոչ թե գերի էին վերցնում, այլ բնաջնջում։ Մնացած բնակիչները, որոնք փրկություն էին գտնում լեռներում, քարանձավներում ու անտառներում, սովի ու մահվան էին մատնվում, քանի որ ասորեստանցիները ավերում էին տնտեսությունը՝ ոչ մի բան չթողնելով բնիկներին[1]։

Հետագայում, երբ աշխատանքի արտադրողականությունը զգալիորեն բարձրացավ, գերի ստրուկները ասորեստանցիների համար դարձան շահույթի նոր աղբյուր, այսինքն՝ զավթիչների համար ստեղծում էին նոր արժեքներ, ասորեստանցիները փոխեցին իրենց վերաբերմունքը նվաճած տերիտորիաների բնակչության նկատմամբ։ Բնակիչներին արդեն ոչ թե բնաջնջում էին, այլ փոխադրում այնտեղ, ուր շահավետ էր շահագործել։ Գերիներին տանում էին ոչ թե մերկացրած ու շղթայակապ, ինչպես առաջ, այլ թույլ էին տալիս հետները վերցնել իրենց գույքի մի մասն ու ընտանիքի անդամներին[1]։

§ 5. ԱՐԵՎԵԼՔԻ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ։ Միանգամայն ակներև է, որ Ասորեստանի տիրող դասակարգերը չէին կարող այդպիսի հզոր տերություն ստեղծել, եթե չունենային ուժեղ պետական ապարատ իր բոլոր ատրիբուտներով՝ բանակով, պատժիչ մարմիններով, բյուրոկրատական ապարատով։ Եվ իրոք, Ասորեստանը ժամանակի ամենակատարյալ պետությունն էր։ Ավելին, ատրական պետական կարգերը, որոնց հիմնական սկզբունքները, անշուշտ, գալիս են եգիպտական փարավոնների ու Բաբելոնի կարգերից, դարեր շարունակ տիրապետող էին Արևելքի երկրներում և ստացան «ասիական» կամ «արևելյան» անունը՝ ի տարբերություն հունական քաղաք-պետությունների դեմոկրատական կարգերի, որոնց տրադիցիաները հետագայում անցան Արևմուտքի երկրներին՝ եվրոպական, կամ անգլո-սաքսոնական, անունով։

Քանի որ արևելքում պետական ռեժիմը խարսխվում էր բռնակալի (ցեղապետի, շահի, սուլթանի, արքայի) անսահման, բացարձակ իշխանության վրա, հպատակների անվերապահ ստրկական ենթակայության վրա, ապա այդպիսի կարգերը այդ երկրների ժողովուրդներին զրկում էին դեմոկրատական կենսաձևի նկատելի փորձ կուտակելու հնարավորությունից, որը չէր կարող հետք չթողնել նաև նրանց մտածողության վրա և որը մարդկանց մեջ ծնում էր երկդիմություն, մի կողմից ստեղծում էին բռնապետի անձի պաշտամունք, կորցնում արժանապատվության զգացումը, մյուս կողմից, այլ պայմաններում, նրան վատաբանում նույնպիսի կրքոտությամբ։ Եթե հունական քաղաք-պետությունների քաղաքացիները զգում էին, որ փրկենք ազատ քաղաքացիներ են և ունեն իրենց պետության քաղաքականության վրա ազդելու իրա-

[1] Академия Наук СССР, Всемирная история, том I, М., 1956, стр. 539.

[1] Академия Наук СССР, Всемирная история, том I, М., 1956, стр. 541.

վոնք, ապա Ասորեստանի քաղաքացիները նույնիսկ չէին կարող երազել այդ մասին։ Եթե Աթենքի կամ Հռոմի ազատ քաղաքացին ֆորումներում կարող էր իր մտքերն ու պահանջները հայտնել, ապա Արևելքում նման փորձերի համար ջարդում էին մարդկանց կողերը, պոկում լեզուները, կտրում գլուխները։ Տարբերությունը սկզբունքային էր, և դա շուտով տարբեր արդյունքների հասցրեց։

Դեմոկրատական կարգերի պայմաններում մարդիկ շահագրգռված էին պետական ապարատի, հոմանիտար և ճշգրիտ գիտությունների, տեխնիկայի, ռազմական գործի կատարելագործման մեջ, մինչդեռ բռնապետական կարգերը կաշկանդում էին մարդկանց նախաձեռնությունն ու ջանքերը, արգելքներ ստեղծում արտադրողական ուժերի զարգացման ճանապարհին, պետությունն այդտեղ մասսաներից պատնեշվում էր չինական պարսպով։

Եթե Աթենքում կամ Հռոմում ընդունակ քաղաքացին կարող էր հույս ունենալ, որ ընտրության միջոցով կարող է պետական ու ռազմական պաշտոն ստանալ, ապա արևելյան կայսրությունների մայրաքաղաքներում դա երազել անգամ հնարավոր չէր։ Ռազմական կողոպուտից բաժին էր ընկնում Հռոմի ոչ միայն լեգեոներներին, այլև թիկունքում գտնվողներին, քանի որ կողոպուտը բաժանվում էր բոլորին, մինչդեռ Արևելքում դրանից օգտվում էին արքունիքը և որոշակի իշխող խավեր։

Մի հանգամանք ևս։

Ոսկին, արծաթին ու ակնեղենը դարեր շարունակ կուտակվում էին Արևելքի արքաների նկուղներում իբրև մեռյալ գանձ, ինչ չէր կարող տեղի ունենալ Աթենքում կամ Հռոմում։ Ալեքսանդր Մակեդոնացին Պարսկաստանի արքաների անհամար հարստությունները գրավելով, դրանցով հեղեղեց այն ժամանակվա ամբողջ աշխարհը, կտրեց և շրջանառության մեջ դրեց ոսկյա, արծաթյա ու պղնձյա նոր դրամներ։ Դժվար չէ պատկերացնել, թե դա ինչպիսի խթան եղավ առևտրի, արհեստագործական արդյունաբերության և ընդհանրապես արտադրողական ուժերի զարգացման համար։

Հետևաբար, հասկանալի է, թե ինչու հունական կամ

հռոմեական փոքր բանակները կարողանում էին ջախջախել Արևելքի թվով իրենց զգալիորեն գերազանցող բանակներին։ Ճիշտ է, պատերազմական ընդհարումների և, ընդհանրապես, շփումների, փոխհարաբերությունների ժամանակ Արևմուտքը շատ բան վերցրեց Արևելքից և ընդհակառակը։ Բայց, այնուամենայնիվ, պետական կարգերի ու տնտեսության զարգացման այդ երկու գծերը չմիաձուլվեցին։ Մի փոքր առաջանցնելով ասենք, որ, այլ հանգամանքների հետ միասին, հենց այդ հանգամանքը հանգեցրեց այն քանին, որ արևելյան գաղութատիրությունը դարեր շարունակ իր տեղը զիջեց արևմտյան գաղութատիրությանը՝ ռազմական հզորությամբ ու քաղաքականությանն ճկունությամբ։

Բռնապետական կարգերը Ասորեստանին հնարավորություն տվին աշխարհում առաջին անգամ ստեղծել համաշխարհային գաղութային տերություն, դառնալ «չորս աշխարհամասերի» տերը, ինչպես սիրում էին իրենց անվանել Ասորեստանի արքաները, մի նպատակ, որին նրանցից հետո շարունակ ձգտել են աշխարհակալ ավազակները։

§ 6. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ։ Ասորեստանը, ինչպես նշվեց, գաղութատիրության պատմության մեջ դրեց նոր դարաշրջանի՝ համապարփակ համաշխարհային գաղութային կայսրությունների ակիզբը։

Ի՞նչ պատճառներ նպաստեցին այդ պրոցեսին։ Դրանք շատ են։ Նշենք միայն մի քանիսը։

Նախ, պատերազմը հաղթողին հնարավորություն էր տալիս գերեվարելու տանջյակ հազարավոր ստրուկներ։ Արտադրողական ուժերի զարգացումը, մասնավորապես հողագործության, արհեստագործական արտադրության, առևտրի հաջողությունները հնարավորություն էին տալիս հողագործ և արհեստավոր ստրուկների աշխատանքով ավելացնելու նյութական արժեքները։

Երկրորդ, նվաճված հողերը դառնում էին թագավորի կամ պետության սեփականությունը (բացի վանքապատկան ու քաղաքային հողերից, որոնց տերերը կամավոր անցնում էին զավթիչների կողմը)։ Նոր հողերը բաժանում էին սպաներին և

ու զինվորներին, կամ, իբրև պարգև, հանձնում պետական ապարատի պաշտոնյաներին ու մերձավորներին։ Այդ ամենը հանգեցնում էր մետրոպոլիայի սահմանների ընդարձակմանը։

Երրորդ, թագավորի իշխանությունը անվանական կամ թույլ իշխանությունից դառնում էր փաստացի և ուժեղ այնքանով, որ ռազմական հաջողությունների և երկրի սահմանների ընդլայնման շնորհիվ նրա ձեռքում էին կենտրոնանում նյութական ու մարդկային մեծ ռեսուրսներ։

Եվ, վերջապես, չորրորդ, պետական կարգերը կազմավորվում ու ամրապնդվում էին տիրապետող դասակարգերի վերոհիշյալ շահերին համապատասխան։

§ 7. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ։ Ինչպես ամեն մի կայսրություն, այնպես էլ ասորական կայսրությունը չէր կարող հավերժական լինել։ Նա կործանվում է 605 թվականին Բաբելոնի և այլ երկրների հարվածներից։ Նրան հաջորդում են նոր Բաբելոնի թագավորությունը և Մարաստանի տերությունը։ Իսկ դրանց փոխարինում է աշխարհակալ գաղութային Աքեմենյան տերությունը, որը հիմնում է Կյուրոս Երկրորդը (558—529 թթ.)։ Վերջինս, օգտվելով Մարաստանի Աստիագ արքայի և վերնախավի գժտություններից, ապստամբեց և եռամյա կռիվներում ջախջախեց Մարաստանին, ստեղծեց այնպիսի մի տերություն, որն իր հզորության շրջանում ընդգրկեց Իրանի բարձրավանդակը, Միջին Ասիայի մեծ մասը, Հնդկաստանի մի մասը, ամբողջ Առաջավոր ու Փոքր Ասիան և Եգիպտոսը։

Արևելքը, ի դեմս պարսից Աքեմենյան տերության, բազմիցս փորձել է իր տիրապետությունը տարածել նաև արևմուտքում։ Սակայն Հունաստանը դրամբելու նրա փորձերը հաջողությամբ չպսակվեցին։ 490 թվականին Մարաթոնի ճակատամարտում Դարեհ I-ի պարտությամբ վերջ դրվեց Հունաստանի դեմ ուղղված պարսկական էքսպանսիային։ Ագրեսիան խափանվելուց հետո Հունաստանը բռնեց Արևելքը նվաճելու ուղին։ Արևմուտքը ոգևորված այն բանից, որ լավ պինված ու կարգապահ փոքր բանակով կարողացավ ջախջախել վատ կազմակերպված մեծ բանակին, սկսեց Արևելքը նվաճելու ծրագրեր կազմել։ Դրանք, ինչպես հայտնի է, փոր-

ձեց իրագործել Արեքսանդր Մակեդոնացին։ Եվ գրեթե 200 տարի գոյատևելուց հետո պարսկական աշխարհակալ տերությունը փուլ եկավ մակեդոնական ֆալանգների հարվածների տակ։

§ 8. ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԵՔ ԷՏԱՊ։ Պատմական այդ իրադարձությունները նշանավորեցին Սարգոնից մինչև Դարեհ II-ը ձգված ժամանակաշրջանի վախճանը, որ պատմության մեջ մտել է որպես հին գաղութատիրության առաջին ժամանակաշրջան։ Այդ շրջանում ամրապնդվում է գաղութատիրությունը, առաջանում են զանազան կարգի էֆեմերային, ռազմա-բռնակալական կայսրություններ, որոնց առանձին մասերը միմյանց հետ համարյա կապված չէին տնտեսական, քաղաքական և այլ կապերով։ Այդ ժամանակաշրջանի վախճանը միաժամանակ նշանավորում էր Արևելքի ռազմա-տնտեսական հզորության և Արևմուտքի վրա ազդելու նրա ձգտումների վախճան։

Երկրորդ ժամանակաշրջանն սկսվում է Դարեհ II-ի դեմ Արեքսանդր Մակեդոնացու տարած հաղթանակից մինչև հանրապետական Հռոմի անկումը։ Այդ շրջանը նշանավորվեց Արևելքում արևմտյան գաղութատիրության հարձակմամբ։ Նվաճումներն ընդգրկում են մեծաքանակ աշխարհագրական շրջաններ և ջանքեր են գործադրվում դրանք շաղկապելու տնտեսապես, քաղաքականապես և կրոնական տեսակետից։ Փորձեր են արվում «գիտակցաբար» հիմնավորելու (Պլատոն, Արիստոտել, Պոլիբիոս, Պոսիդոն, Տակիտոս և ուրիշներ) ամբողջ աշխարհի մասշտաբով «արդար» կարգերի՝ միասնական գաղութային մի կայսրության ստեղծումը սկզբում Մակեդոնիայի, նրա անկումից հետո՝ Հռոմի հովանու ներքո։ Այսպիսով, երկրորդ էտապը նշանավորվում է գաղութային իմպերիալիզմի առաջին բացահայտ հատկանիշների դրսևորմամբ։

Հռոմում կառավարման կայսերական սիստեմի հաստատմամբ սկսվում է երրորդ շրջանը՝ մարդկության պատմության մեջ գաղութային առաջին իմպերիալիզմի ժամանակաշրջանը, որը աչքի է ընկնում գաղութային նվաճումների ընդհա-

նուր բնույթով, պետական կարգերի, ներքին ու արտաքին քաղաքականության նոր սկզբունքների հաստատմամբ։

§ 9. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ։ Ալեքսանդր Մակեդոնացին ստեղծեց ավելի լայնածավալ գաղութատիրական կայսրություն, քան նրանից առաջ որևէ մեկը։ Բայց նա քիչ ապրեց և չկարողացավ լուծել այդ աշխարհակալական կայսրության ստեղծման հետ կապված բազմաթիվ կազմակերպչական, քաղաքական, կրոնական ու կուլտուրական հարցեր։ Չնայած դրան, նա բազմաթիվ վերափոխությունների հիմք դրեց։ Այսպես, նա ակտիվ վարել «իրավահավասարության» հիման վրա Ասիայի ու Եվրոպայի «միաձուլման ու միավորման» քաղաքականություն։ Նա կառավարման արևելյան բռնապետական ձևերը զուգորդում էր հունական քաղաքների դեմոկրատական կարգերի մեթոդների հետ, ընդունեց թագավորական իշխանության աստվածային ծագման արևելյան տեսությունը, ինչպես նաև առաջնորդի պաշտամունքը, պետական ծառայության մեջ ներգրավեց Արևելքի մի շարք իշխանների, իր բանակի կազմի մեջ մտցրեց երեսուն հազար պարսիկ երիտասարդների, ինքը և իր ամբողջ սպայակազմը ամուսնացան նշանավոր պարսկուհիների հետ։

Այս ամենի նպատակն էր Արևելքը կապել Արևմուտքի հետ, ստեղծել մակեդոնա-հունա-պարսկական մի միասնական մետրոպոլիա՝ զուտ ռազմական նվաճումների շնորհիվ ստեղծված աշխարհակալ կայսրությունն ամրապնդելու համար։

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նրա զորավարների միջև ծայր առան գժտություններ, որոնց պատճառով կայսրությունը բաժանվեց մի շարք ինքնուրույն պետությունների՝ պտղոմեական պետությունը Եգիպտոսում, որի հիմնադիրը եղավ Պտղոմեոս Լագուն և որի դինաստիան երկրում իշխեց համարյա երեք հարյուր տարի. սելևկյանների պետությունը արևելքում, որի հիմնադիրը նույնպես եղավ Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներից մեկը՝ Սելևկոսը, և այլն։ 250 թվականին հույն-մակեդոնացիների դեմ ապրստամբում են պարթևները ու հայերը։ Նրանց պայքարը հաջողությամբ պսակվեց, նրանք ստեղծեցին փրենց անկախ պետությունները։

Աշխարհը մոտավորապես հետևյալ պատկերն ուներ մինչև Հռոմի գաղութատիրական իմպերիալիզմի երևան գալը, որը դարձավ աշխարհի բոլոր փոքր ու թույլ ժողովուրդների ավելի նենգ և ուժեղ, առավել ագահ, անհաշտ ու մահացու թշնամին, քան նրանից առաջ եղած գաղութակալական երկրները։ Նա կատարելագործեց ժողովուրդների կեղեքման բոլոր ձևերը։ Այժմ դժվար է գտնել գաղութային ստրկացման որևէ ձև, ագրեսիվ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության որևէ սկզբունք, որոնք սկիզբ չառնեն «Հավերժական քաղաքի» քաղաքականությունից։

§ 10. ՓՅՈՒՆԻԿԵՑԻՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԹԱԳԵՆԸ։ Հռոմի հզորացումից առաջ Միջերկրական ծովի շրջանում տիրապետող էր Փյունիկիայի նախկին գաղութը՝ Կարթագենը, իսկ Փյունիկիան առաջին հազարամյակում (մ. թ. ա.) նկատելի դեր է խաղացել Առաջավոր Ասիայի պատմության մեջ։ Փյունիկեցիները եղել են հիանալի ծովագնացներ, ծովային առևտրի կազմակերպիչներ, ինչպիսին դարձան հետո դարձան հռոմեացիները, նորմեգացիները, անգլիացիները։

Նրանք ստրատանցիները, հռոմեացիները, * իսկ այնուհետև Արևելքի ֆեոդալական բոլոր պետությունները պատերազմներ էին մղում հանուն ուղղակի կողոպուտների և ուրիշ ժողովուրդների տերիտորիան «առհավետ» զավթելու, ապա փյունիկեցիները և կարթագենցիները ժողովուրդներին կողոպտում էին անհամարժեք առևտրական փոխանակության միջոցով։ Նրանք անդրծովյան հողեր էին զավթում՝ այնտեղ նավահանգիստներ ու ապրանքային պահեստներ ստեղծելու համար։

Տյուրոս քաղաքի փյունիկյան պետությունը Հիրամ I թագավորի օրոք (969—936 թթ.) աշխույժ առևտուր էր անում Միջերկրական ծովի արևմտյան հատվածի երկրների հետ։ Նա բերքերների թագավորներից գրավում էր ծովամերձ բնակավայրերը և այնտեղ կառուցում մի շարք առևտրական ֆակտորիաներ ու քաղաքներ, որոնցից առանձնապես աչքի ընկավ

Կարթագենը, որ 814 թվականին հիմնել էր Դիդոնա թագուհին։

Ինչպես հետագայում անգլիական գաղութ Ամերիկան, ազատվելով ճնշումից, ստեղծեց Ամերիկայի Միացյալ Նահանգների պետությունը և դարձավ Անգլիայից ավելի զորեղ տերություն, այնպես էլ Կարթագենը պոկվեց մետրոպոլիայից և ընթացավ անկախ զարգացման ուղին։ VI—V դարերում Կարթագենը (փյունիկերեն՝ Նոր քաղաք) իրեն ենթարկեց ամբողջ Բերբերիան և իր շուրջը համախմբելով ինչպես Փյունիկիան, այնպես էլ հունական գաղութներն ու մյուս քաղաքները, ստեղծեց ստրկատիրական առևտրական մի հզոր հանրապետություն՝ Միջերկրական ծովի ամենաուժեղ պետությունը։ Ոչ ոք մինչ այդ չի ունեցել թվապես ու որակապես այնպիսի ուժեղ և հզոր ռազմական ու առևտրական նավատորմ, ինչպես Կարթագենը։

§ 11. ՊՅՈՒՐՈՍԸ ԵՎ ՀՌՈՄԸ։ V—IV դարերը (մ. թ. ա.) միջազգային իրադրության մեջ նշանավորվեցին Կարթագենի ու Արևմուտքի հելլենների պայքարով, որի մեջ վաճառականական հանրապետության բացահայտ գերակշռությունը ակնհայտ էր։ Երրորդ դարից ասպարեզ է մտնում հզորացող Հռոմեական պետությունը։ Նա միավորում է Իտալիան, երկրի հարավում գրավում մի շարք հունական գաղութներ, որոնք սկսում են պաշտպանություն հայցել հունական պետություններից, մասնավորապես Էպիրից։ Էպիրի արքա Պյուրոսը, որ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների մասնակից էր և որին Հաննիբալը Ալեքսանդր Մակեդոնացուց հետո համարում էր պատմության մեջ երկրորդ մեծ զորավարը, ոչ մի բան չկարողացավ անել Հռոմին, թեպետև մի շարք փայլուն հաղթանակներ տարավ նրա դեմ։ Այդ հաղթանակները նա տարել էր այնպիսի մեծ կորուստների գնով, որ հավատար էին պարտության (այստեղից էլ «պյուրոսյան հաղթանակ» հայտնի արտահայտությունը)։

«Եվս մի այդպիսի հաղթանակ, և ես մենակ կվերադառնամ Էպիրոս»,— ասել է նա Ապուլիայի մոտ 279 թվականի դարնանը տարած հաղթանակից հետո։ Հեռատես զորավարին այլ բան չէր մնում անելու, քան տուն վերադառնալ։

§ 12. ԿԱՐԹԱԳԵՆԻ ԵՎ ՀՌՈՄԻ ՊԱՅՔԱՐԸ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ։ Կարթագենից հետո Հռոմը դառնում է հին աշխարհի երկրորդ հզոր, բայց առավել ռազմամոլ պետությունը։ Նշանավոր հռոմեացի պետական գործիչ Մարկ Պորցիուս Կատոնը (Ավագը), ինչ նյութի մասին էլ որ խոսեր սենատում, իր ճառը միշտ ավարտում էր նույն դարձվածքով. «Այնուամենայնիվ, ես կարծում եմ, որ Կարթագենը պետք է կործանվի»։

Այդպես երկու տերությունների միջև ծայր առավ աշխարհին տիրելու մրցակցությունը։ Մնացած բոլոր անկախ և կախյալ պետությունները՝ Եգիպտոսը, Անտիոքը, հունական պետությունները դառնում են Հռոմի կամ Կարթագենի դաշնակիցներ կամ էլ վախից վարում չեզոք քաղաքականություն (որը դարձյալ ձեռնտու էր Հռոմին)։

Ստեղծվեց երկու լագեր՝ ժողովուրդների գաղութային ստրկացման երկու սիստեմ, որոնցից որևէ մեկի հաղթանակը կարող էր լուծել միայն պատերազմը և, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այն էլ ոչ թե մեկ, այլ երեք պատերազմը։ Այդպես սկսվեց փյունիկյան պատերազմների շրջանը՝ հին աշխարհի համաշխարհային առաջին պատերազմների շրջանը։ Փյունիկյան առաջին պատերազմը տևեց 23 տարի (264—241 թթ.), երկրորդը՝ 18 (219—201 թթ.) և երրորդը՝ 4 (149—146 թթ.)։

Դրանք իր ժամանակի համար իրոք ո՛չ միայն համաշխարհային, այլև տոտալ պատերազմներ էին։ Պատերազմող կողմերը ծայրաստիճան լարել էին իրենց նյութական և մարդկային ռեսուրսները։ Բավական է ասել, որ պատերազմի միայն հինգ տարում Հռոմի քաղաքացիների թիվը նվազեց համարյա 40000-ով, ընդ որում այդ թվի մեջ չեն մտնում Հռոմի դաշնակիցների կորուստները, որոնք Հռոմից ավելի շատ կորուստներ էին կրել, քանի որ մասնավորապես ծովի վրա մղված պատերազմի հիմնական բեռը նրանք էին կրում։

Ծովամարտերին յուրաքանչյուր կողմից մասնակցում էին ավելի քան 200 նավ, որոնք հնգական տախտակամած ունեին, փակ ցամաքային կռիվներին՝ մի քանի հարյուր մարտական փղեր՝ հին աշխարհի «ծանր տանկերը»։ Միայն Պա-

նորմայի մի ճակատամարտում հռոմեացիները գրավեցին 120 փիղ, Էկնոմայի ծովամարտում Հռոմի նավատորմը բաղկացած էր 330 առագաստանավից և 100 հազար մարդուց։ Բացի դրանից, նավատորմն ուներ 40 հազար դեսանտային մարտիկ։ Կարթագենի նավատորմն ավելի շատ նավեր ուներ։

Փյունիկյան երեք պատերազմների ընթացքում Կարթագենը վերջնականապես պարտվեց և զենքը ցած դրեց։

Հռոմեական սենատի պահանջով քաղաքն ամբողջովին ավերեցին՝ այրեցին, ապա հողին հավասարեցրին։ Նրա տերիտորիան նվաճվեց և «հավիտյանս» արգելվեց այնտեղ բնակություն հաստատելը։

§ 13. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ։ Նվաստացված ժողովուրդները, որոնք Հռոմին օգնում էին Կարթագենին տապալելու գործում, ակնկալում էին, թե դրանով վերջ է դրվում մի ժողովրդի կողմից մյուսին ճնշելու քաղաքականությանը։ Նրանք նույնիսկ չէին կասկածում, որ սեփական ձեռքերով իրենց համար կռում են ավելի ծանր գաղութային շղթաներ, քան կարթագենյան լուծն էր։ Կարթագենի առևտրականները մյուսներին ճնշում էին տնտեսապես, գլխավորապես առևտրի ասպարեզում, սակայն չէին խառնվում նրանց քաղաքական, վարչական, կրոնական և հոգևոր կյանքին։ Մինչդեռ Հռոմի գաղութատիրությունն զգացվում է ստրկացված ժողովուրդների քաղաքական-տնտեսական կյանքում։ Հռոմեացիները բոլոր հնարավոր միջոցներով ջանում էին այդ երկրները դարձնել Հռոմի հավերժական սեփականությունը։

Տնտեսական գաղութատիրության քաղաքականության հիմքերը, ինչպես արդեն տեսանք, դրեցին փյունիկեցիները։ Իսկ քաղաքական-տնտեսական գաղութատիրությանը՝ Մակեդոնիայի Ֆիլիպ թագավորը և առանձնապես նրա որդին՝ Ալեքսանդրը, երբ հորից ժառանգած մակեդոնա-հունական պետությունը դարձրեց մակեդոնա-հունա-պարսկական մի հսկայածավալ տերություն։

Հռոմեացիները, ի տարբերություն կարթագենցիների, Միջերկրական ծովի ավազանում ամեն կերպ խոչընդոտում

էին նոր ժողովուրդների առաջացմանը և մեծապետական քաղաքականություն էին վարում։

Կարթագենի վաճառականական հանրապետության ջախջախումից հետո տնտեսական գաղութատիրությունը երկար ժամանակ փրկն զգացնել չէր տալիս։ Քաղաքական-տնտեսական գաղութատիրությունն սկսեց բարգավաճել նույնիսկ Հռոմի աշխարհակալ տերության փլուզումից հետո, թեև ֆեոդալական մասնատվածության պատճառով այն մի երկրի մենաշնորհ չդարձավ։ Այդպիսի գաղութային քաղաքականություն են վարել, օրինակ, Իսպանիան, Պորտուգալիան, Թուրքիան, ցարական Ռուսաստանը և ուրիշ բռնապետական տերություններ։

Նորածնունդ բուրժուազիան, ինչպես կտեսնենք, փոխեց ֆեոդալիզմի գաղութային քաղաքականության մեթոդներն ու ձևերը։ Նա սկսեց վարել ավելի ճկուն՝ տնտեսական ներթափանցման քաղաքականություն։ Իմպերիալիզմի դարաշրջանում, երբ վրստիկ գաղութատիրությունը վերաճել է նեոգաղութատիրության, իմպերիալիստական որոշ, այսպես կոչված, բուրժուա-դեմոկրատական երկրներ սկսել են վարել այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը նրանց թույլ է տալիս որոշ զիջումների գնով հետամնաց ժողովուրդների միայն իրավական վիճակի մեջ արմատական խոր փոփոխություններ մտցնելով, ամրապնդել իրենց տնտեսական դիրքերը։ Սակայն ֆաշիստական և ֆաշիստացող իմպերիալիստական երկրները չեն հրաժարվել նախկինում վարած քաղաքականությունից, շարունակում են քաղաքական-տնտեսական գաղութատիրության քաղաքականությունը։ Այդ երկրները, բանավոր զիջումներից բացի, ուրիշ շոշափելի զիջումներ չեն անում։ Սակայն այս մասին հետո։

§ 14. ՀՌՈՄԻ ԵՎ ԿԱՐԹԱԳԵՆԻ ՎԱՐԱԾ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԵՂԵՔՄԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։ Վերադառնանք Հռոմի քաղաքականությանը։

Իր ստրատեգիական նպատակներին հասնելու համար Հռոմը, առանձնապես իր գերիշխանության սկզբնական շրջանում, այնպիսի տակտիկական եղանակների էր դիմում, որոնք

ելնում էին ոչ միայն և ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական շահերից։

Հռոմեացիները հեռահար նշանակության քաղաքականություն էին վարում, ըստ որի քաղաքականություն՝ հօգուտ ամբողջ «հասարակության» և «աշխարհի ժողովուրդների», հանդես գալով «ճնշվածների ազատարարի ու պաշտպանի առաքելությամբ»։ Ժողովուրդները հռոմեացիներին «դիմավորում էին իբրև ազատարարների»։

Հռոմի և Կարթագենի գործադրած տակտիկական եղանակների մասին առավել հանգամանորեն խոսում է Թ. Մոմզենը. Հռոմը վարում էր ուրիշ ժողովուրդների ապազգայնացման քաղաքականություն և Հռոմի քաղաքացիության իրավունք էր շնորհում միացված երկրներին։ Նա լատինական համայնքների մեջ նույնիսկ ստեղծել էր օրինական կարգով մուտք գործելու ճանապարհ։ Իսկ Կարթագենը ներփակվել էր իր մեջ և ենթակա մարզերին երբեք իր հետ հավասարվելու նույնիսկ հույսի նշույլ չէր թողնում։ Հռոմը միաժամանակ վարում էր «իրավահավասարության» քաղաքականություն։ Նա հաղթանակների պտուղների մի մասը զիջում էր որոշ համայնքների, զիջում էր հատկապես նորանվաճ պետական հողերից, իսկ իրեն ենթակա մյուս պետություններում ջանում էր առնվազն ստեղծել իրեն նվիրված պարտիա, նյութական արտոնություններ շնորհելով անվանի ու հարուստ մարդկանց։ Կարթագենը ոչ միայն յուրացնում էր հաղթանակի բոլոր պտուղները, այլև նույնիսկ արտոնյալ քաղաքներին առևտրի ասպարեզում զրկում էր նախկինում ունեցած ազատությունից, այդ իրավունքը վերապահելով միմիայն իրեն։

Հռոմն անգամ առանց մանրամասն նախապատրաստության, իրավունքներից չէր զրկում նույնիսկ իր նվաճած համայնքներին և մշտական հարկեր չէր դնում նրանց վրա։ Իսկ Կարթագենը ամենուրեք ուղարկում էր իր փոխարքաներին և ծանր հարկերի տակ էր դնում նույնիսկ Փյունիկիայի հին քաղաքները։ Հասկանալի է, թե ինչու Հռոմեա-իտալական դաշինքը համեմատարար ամուր էր Կարթագենա-աֆրիկյանից։ Հասկանալի է նաև, թե ինչու Հռոմը, չունենալով Պյուրոսի ու

Հաննիբալի նման հանճարեղ զորավարներ, այնուամենայնիվ, հաղթում էր նրանց[1]։

Տասնհինգ տարի շարունակ Հաննիբալը, թիկունքից բոլորովին կտրված և փաստորեն առանց նրանից օգնություն ստանալու, կռվում էր Իտալիայում։ Զորավարը շատ ճակատամարտեր տվեց, բայց ոչ մեկը տանուլ չտվեց։ Իսկ Կաննայի մոտ նրա տարած հաղթանակը փայլուն էջ գրեց ռազմական արվեստի պատմության մեջ[2]։ Ու, այնուամենայնիվ, նա չկարողացավ խորտակել, քայքայել հռոմեական դաշինքը, ստիպված եղավ հայրենիք վերադառնալ։ Այդտեղ, սիրելի մայրաքաղաքի մոտ, նա կյանքում առաջին ու միակ պարտությունը կրեց այն պատճառով, որ իր դաշնակիցները մարտի ժամանակ անցան հռոմեացիների կողմը։ Շուտով նա ստիպված էր թողնել երկիրը ու գնալ Հայաստան։

§ 15. ՀՌՈՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ։ Հռոմի դիվանագիտական արվեստը ճանապարհ էր հարթում իր լեգեոնների համար։ Հռոմեական գաղութային իմպերիալիզմի նվաճումներն ընդգրկում էին շատ երկրներ։ Հռոմեացիները գրավում են Եգիպտոսը, Անտիոքը, հունական պետությունները, Արևելքում ոչնչացնում Միհրդատի տերությունը, վերջ տալիս հայոց թագավորների ուժեղ ու անկախ տերություն ունենալու ձգտումներին, նվաճում Հյուսիսային Աֆրիկայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Անգլիայի, Բալկանյան թերակղզու, Անդրկովկասի ժողովուրդներին։ Միջերկրական և Սև ծովերը փաստորեն դառնում են «Հավերժական քաղաքի» ներքին «լճեր»։ «Հռոմի մարդիկ դարձել էին հարևանների քաղաքակրթության դահիճները, թեթևամտորեն կարծում էին, թե կեղծ լացով կարող են սրբել իրենց ազգի հավերժական խայտառակությունը»[3]։

---

[1] Т. Моммзен, История Рима, том I, стр. 473.

[2] Այդ մարտում կարթագենցիներն ունեին 54 հազար, իսկ հռոմեացիները՝ 86 հազար զինվոր։ Մարտում զոհվեց 70 հազար հռոմեացի, այդ թվում երկու կոնսուլ, սպայակազմի երկու երրորդը, 80 սենատոր, գերի ընկավ 10 հազար հռոմեացի։ Հաննիբալը կորցրեց միայն 6 հազար մարդիկ։

[3] Т. Моммзен, История Рима, том I, стр. 622.

Այսպես աշխարհ եկավ գաղութային առաջին իմպերիալիզմը։

§ 16. ԾՈՎԱՀԵՆՈՒԹՅՈՒՆ։ Տասնյակ ու հարյուրավոր ժողովուրդների և ցեղերի բաց ճակատամարտում կրած պարտությունը բազմաթիվ խիզախ մարդկանց մղում էր դեղեպի Հռոմի հետ կռվելու պարտիզանական, օրհասական ուղին՝ ծովահենության ուղին։ Ծովահենությունն առանձնապես մեծ չափեր ընդունեց փյունիկյան երրորդ պատերազմից հետո, երբ շատերը գիտակցեցին Հռոմի «ազատագրական առաքելությունը»։

Ծովահաններն ունեին ոչ միայն ծովափնյա ամրություններ, այլև պետություն (օրինակ՝ Կիլիկիայում), լավ զինված բանակ ու նավատորմ։ Կիլիկիայի և Կրետեի ծովահենները մոտավորապես հազար նավ ունեին։ Նրանք ահ ու սարսափի մեջ էին պահում «Հավերժական քաղաքը», հարձակումներ էին գործում բուն Իտալիայի ծովամերձ քաղաքների վրա, խախտում էին աշխարհակալ պետության ծովային առևտրական կապերը նրա բազմաթիվ գաղութային տիրապետությունների հետ։

Ծովահենները զգալի օգնություն էին ցույց տալիս նրանց, ովքեր զինված պայքար էին մղում Հռոմի դեմ։ Այսպես, երբ Լուկուլլոսը պատերազմ էր մղում Տիգրան II-ի դեմ, Աֆինոդորոս ծովահենը հարձակվեց Դելոս կղզու վրա, որը հռոմեական զորավարի ծովային բազան էր, և ավերեց այն։ Նրանք մեծ աջակցություն ցույց տվեցին նաև Միհրդատին Պոմպեոսի դեմ նրա պայքարում։ Նույնիսկ Միհրդատի կայսրության կործանումից հետո էլ նրա ահեղ բազմաթիվ բերդաքաղաքները շարունակում էին պայքարը ծովահենների ուղղակի աջակցությամբ։

Պատմությունից հայտնի է, որ Սպարտակը նույնպես կապեր է պահպանել ծովահենների հետ, նրանցից երկաթ ու պղինձ ստացել ապստամբ ստրուկներից բաղկացած իր բանակի սպառազինման համար։

§ 17. ՀՌՈՄԻ ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Հռոմի նկատմամբ ճնշված ժողովուրդների ատելությունը ի հայտ էր գալիս կա՛մ ակտիվ, կա՛մ պասսիվ պայքարի ձևով։

Իհարկե, ընդունելով բազմապիսի երանգներ։ Եվ դա հասկանալի է։ «Հավերժական քաղաքի» աշխարհակալական ձգտումները և հանուն այդ աշխարհակալության նրա մղած մշտական պատերազմները կյանքի բոլոր բնագավառներում ու ժողովուրդների գործունեության մեջ հաճախ միանգամայն անակնկալ ու տարբեր հետևանքներ էին ծնում։ Այդ հետևանքները շատ ասպարեզներում ճակատագրական եղան ինչպես բազմաթիվ փոքր ու թույլ ժողովուրդների ու ցեղերի, այնպես էլ, վերջին հաշվով, նաև իր՝ Հռոմի համար։

Կայսրության մեջ մտնող երկրների նկատմամբ իր քաղաքականությունը մշակելիս Հռոմը հաշվի էր նստում կոնկրետ պայմանների հետ՝ անհրաժեշտ էր ստիպանաբար մարել զավթածը։ Մի դեպքում հռոմեացիները հաշվում էին այն բանի հետ, որ առանձին ժողովուրդներ լոկ անվանապես էին իրենց ենթարկվում, կիսանկախ վիճակում էին, մի այլ դեպքում չէին հանդուրժում ինքնավար կառավարման նշույլները, դավանանքի ազատության երևույթները և ըմբոստանում էին նույնիսկ անհաճո սովորույթների դեմ։ Մի մասի նկատմամբ վարում էին հեռահար քաղաքականություն՝ «ազատագրման» քաղաքականություն, մի այլ մասի նկատմամբ՝ «իրավահավասարության» հաստատման քաղաքականություն, ապազգայնացման կոսմոպոլիտական եղանակները զուգորդելով ֆիզիկական բնաջնջման քաղաքականության հետ։

Կարթագենը գրավելուց հետո հռոմեացիները բնիկներին զրկեցին ոչ միայն պետական անկախությունից, այլև արգելեցին հայրենի հողի վրա ապրելու իրավունքից։ Ողջ մնացած փյունիկեցիները, ինչպես և շատ ուրիշներ այդ դեպքերից հետո ստիպանաբար հեռացան պատմության բեմից։

§ 18. ՀՌՈՄԸ ԵՎ ՀՈՒԴԱՆԵՐԸ։ Հռոմեացիները նույնպիսի վիճակ էին նախապատրաստում նաև հուդաների համար, բայց վերջիններս այնքան տոկուն ու հաստատակամ եղան, որ կարողացան անցնել հռոմեական դժոխքի բոլոր կրակների ու ծովերի միջով և դառնալ «բաբելոնյան անառակի» խայտառակ վախճանի վկաներ։

Հուդաների մեծամասնությունը իրադարձությունների բերումով ապրում էր ոչ թե իր հայրենիքում՝ Հուդայի երկ-

ռում, այլ Մերձավոր Արևելքի ու Միջերկրական ծովի երկրներում։ Օրինակ, Եգիպտոսի ութ միլիոն բնակչությունից մեկ միլիոնը հուդաներ էին։ Հանրապետական կարգերի ժամանակ, այսինքն՝ նախքան բռնապետական, կայսերական իշխանության հաստատումը Հռոմում, նրանք լայն ու առանձնահատուկ իրավունքներով էին օժտված։ Այսպես, Ստրաբոնի վկայությամբ, նրանք Ալեքսանդրիայում ունեին «ամբողջ ժողովրդի իրենց սեփական ազգային պարագլուխը, որը քննում էր վեճերը, պայմանագրեր էր կնքում և որոշումներ արձակում»։

Զանազանաբար պաշտպանելով իրենց ազգությունը քայքայումից ու ձուլումից, նրանք, կարծես, ապրում էին միմիայն կրոնով. շաբաթ օրերը չէին աշխատում, չէին ծառայում հռոմեական բանակում, ապրում էին համայնքներով, խստորեն պահպանելով իրենց սովորությունները։ Ամեն տարի յուրաքանչյուր հուդա իր լուման էր ներդնում ազգային ընդհանուր գանձարանը հօգուտ իր միակ աստծու՝ Յահվեի, կամ ամեն մի համայնքի յուրաքանչյուր անդամ տարեկան Երուսաղեմ էր ուղարկում լուման՝ մի որոշ գումար տաճարների համար։ Այդ գումարները ստացվում էին ավելի կանոնավոր կերպով, քան Հռոմի գանձարանը մուտք արվող պետական տուրքերը։ Յուրաքանչյուր ոք պարտավոր էր իր կյանքում առնվազն մեկ անգամ անձամբ լինել Երուսաղեմում ու Յահվեին զոհաբերություն անել, այսինքն՝ ամբողջ աշխարհի այն միակ վայրում, որը հաճելի էր Յահվեին։ Ազգային միասնության անբաղդատելի հասունացող հաստատուն գիտակցությունը պատճառ դարձավ հին աշխարհում հուդաների կզգիացած վիճակին[1]։

Հռոմում հանրապետական կարգերի վերացումից հետո նոր աշխարհակալները, իրենց ձեռքում կենտրոնացնելով ամբողջ իշխանությունը, ուզում էին հաջողություններն ամրապնդել, այսպես ասած, «առհավետ»։ Ալեքսանդր Մակեդոնացու օրինակով Հռոմի կայսրերն սկսեցին հենվել ոչ միայն Իտալիայի՝ իբրև իրենց հիմնական մետրոպոլիայի վրա,

[1] Т. Моммзен, История Рима, том 4, М., 1949, стр. 443.

այլև Հունաստանի վրա, դնելով համաշխարհային երկրերության սկիզբը։ Այդ ճանապարհով նրանք ձգտում էին ամրապնդել իրենց ազգային բազան և, երկրորդ, հույների հետ միասին վճռական պայքար մղել կենտրոնախույս ուժերի դեմ, որն իրականում կնշանակեր գաղութային ժողովուրդների ապազգայնացման քաղաքականություն լեզվի, դավանանքի, կուլտուրայի և նույնիսկ սովորությունների առպարեզում։

Եվ քանի որ հուդաները ավելի ուժեղ էին դիմադրում այդ քաղաքականությանը, ապա մոլեգնությունն ուղղվեց նրանց դեմ։ Սակայն, ինչպես վկայում են պատմական փաստերը, արտաքին ճնշման ու հետապնդման շրջանում հուդաների ազգային միասնությունն է՛լ ավելի ամրապնդվեց, թշնամիների համար դարձավ մի պատկառելի և նույնիսկ «զարհուրելի» (Մոմզեն) ուժ։

Հռոմի Օգոստոս կայսրը կարգադրեց հուդաներին զինվորական ծառայության վերցնել, նրանց արգելեց շաբաթ օրը հանգստանալ, վարեց հուդաների լեզուն ու համայնքներն արգելելու գիծ։ Նույն ուղիով ընթացավ նաև Տիբերիոսը։ 19 թվականին Հռոմում և ամբողջ Իտալիայում արգելվեց հուդաների Յահվե աստծո պաշտամունքը (ինչպես արգելված էր եգիպտացիներինը)։ Իտալիայից արտաքսեցին այն բոլոր հուդաներին, որոնք հրապարակորեն հրաժարվել էին իրենց դավանանքն ուրանալուց։ Արգելվեց նույնիսկ թլփատումը։

Այդ ամենը հրեաներն ընդունեցին իբրև ոտնձգություն իրենց ազգային գոյության նկատմամբ։ Լեզվի հարցում նրանք շուտ անձնատուր եղան, իսկ ուրիշ հարցերում զիջումներ չարեցին։ Հրեաների կրոնը ոչ միայն չնահանջեց, այլև, ընդհակառակը, սկսեց հարձակման անցնել։ Յահվեն սկսեց ներգել հռոմեական աստվածներին։ Ներոնի կինը՝ Պոպեա Սաբինան Յահվեին պաշտպան դարձավ։ Տիբերիոսի և Կլավդիոսի գարաշրջանում հուդայականություն ընդունեցին Ադլաբենայի արքունիքի բոլոր անդամները՝ Իզատ թագավորը, նրա մայրը՝ Հեղինեն և մյուսները։ Ոչինչ չէր ստացվում նաև թլփատման, շաբաթվա պահպանման արգելումից և հուդաներին հռոմեական բանակ զորակոչելու քաղաքականությունից։

Այդ ժամանակ Հռոմը որոշեց ավելի դգալի հարված

հասցնել հուդաներին՝ վերացնել նրանց թագավորությունը Հուդայի երկրում, որը հուդայական սփյուռքի սիրտն էր։ Հուդաների ինքնուրույնությունն «անհամատեղելի էր Հռոմի աշխարհիկ մեծապետական աբսոլյուտիզմի հետ»,— նշում է Թ. Մոմզենը[1]։

Հուդայական թագավորությունը մասնատվեց հինգ օկրուգների՝ ինքնուրույն կառավարմամբ։ Կրոնապետ Գիրկանը զրկվեց աշխարհիկ իշխանությունից։ Հուդայի երկիրը դարձավ Հռոմի երկրորդական նահանգներից մեկը։ Պետությունն ընկճվեց, բայց հուդայության ոգին՝ ո՛չ։ Հուդաներն էլ ավելի էին ըմբոստանում Հռոմի դեմ։ Նրանք մշակեցին մի ուսմունք, որի համաձայն միայն աստվածն է տերը, մահը ոչինչ է, ազատությունը՝ ամեն ինչի փոխարինող միակ բարիքը։ Հովհաննի ավետարանի ուսմունքի համաձայն Հռոմը հայտարարվում էր «բաբելոնյան անառակ» և «ամբողջ մարդկության ընդհանուր թշնամի»։

Այդ ամենը քաջ հայտնի էր հռոմեացիներին, և նրանք սկսեցին հուդաներին հրահրել ապստամբության, որպեսզի ջախջախեին բաց ճակատամարտում։ Նրանք հասան իրենց նպատակին՝ հուդաներն ապստամբեցին։ Սկսվեց անհավասար մարտը։ Հռոմեական լեգեոնները տևական ու կատաղի կռիվներից հետո գրավում են Երուսաղեմի գլխավոր տաճարը և կողոպտում նրա անհամար հարստությունները։ Քաղաքը, Կարթագենի նման, հիմնովին ավերվեց։ Դժբախտ մարդկանց ծաղրելու ու նվաստացնելու համար Հռոմը չվերացրեց այն ամենամյա մուծումները, որ կատարում էին սփյուռքի հուդաները, բայց այդ միջոցները գնում էին արդեն ոչ թե Յահվեի, այլ Յուպիտերի՝ Հավերժական քաղաքի հեթանոս աստծո և նրա հողածին փոխանորդի՝ Հռոմի կայսեր օգտին։

Մայրաքաղաքը կորցնելուց հետո ապստամբները մի քանի տարի շարունակեցին պայքարը Մեռյալ ծովի լեռներում, բայց վերջ ի վերջո պարտվեցին։ Ով ազատվել էր սրից ու սովից, վաճառվեց ստրկության։

Սակայն հուդայականությունը դիասպորում (սփյուռքում) պահպանեց իր տնտեսական, գաղափարական ու քաղաքական հզորությունը։ Առաջին ապստամբությունից հիսուն տարի անց, այսինքն՝ մեր թվականության 116 թվականին, հանուն անկախության նա մեծից ապստամբության դրոշ է պարզում։ Ապստամբությունն սկսվեց Կիպրոսում ու Եգիպտոսում, իսկ այնուհետև արագորեն տարածվեց ամբողջ դիասպորում՝ Ասիայում, Միջագետքում և հուդաների երկրում։ Շատ գիտնականներ այդ ապստամբությունն համարում են ամենակատաղի ու տևական ապստամբությունը, որ երբևէ տեսել էր հռոմեական ամբողջ կայսրությունը։ Հուդաների պատերազմը Հռոմի դեմ գլխավորեցին Բեն Եղիազարը և Սիմոնը։ Ինչ խոսք, պատերազմը վերջացավ Հռոմի հաղթանակով։ Տրայանոս կայսեր լեգեոնները գրավեցին 50 ամրոց, 985 բնակավայր, ապանեցին 580 հազար ապստամբ պարտիզանների։

Այս անգամ հաղթանակը կատարյալ էր։ Հուդաներին ընդմիշտ վերջ տալու նպատակով, որոնք իբրև ժողովուրդ անկախ գոյություն էին երազում և չէին ցանկանում ձուլվել ո՛չ Հռոմի և ոչ էլ Կոնստանտինի հետ, Հռոմը նրանց արգելեց իրենց անվանել հուդա, իսկ նրանց երկիրը՝ Հուդայի երկիր։ Այդպես հուդաներին սկսեցին կոչել հրեա, իսկ նրանց երկիրը՝ Սիրիա կամ Սիրիա-Պաղեստին։ Հրեաներին մահվան ապառնալիքով արգելում էին այցելել Երուսաղեմ։ Նրանց արգելեցին Կիպրոսում ապրել։

§ 19. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՌՈՄԸ։ Սակայն այն խիզախներն ու քաջերը, որոնք որոշել էին մահու և կենաց մարտ մղել Հռոմի դեմ, իհարկե, ավելի քիչ էին, քան նրանք, ովքեր վերջնականապես կորցրել էին բռնակալական «Հավերժական քաղաքի» նկատմամբ հաղթանակ տանելու հավատը։ Վերջիններիս թիվն առանձնապես մեծացավ ստրուկների, հուդաների և շատ այլ ժողովուրդների ապստամբությունների պարտությունից հետո։ Իսկ նրանք, ովքեր կորցնում են հավատը կյանքի նկատմամբ, անխուսափելիորեն միստիցիզմի մեջ են ընկնում։ Նույնը տեղի ունեցավ և այդ մարդկանց հետ, որոնք սկսեցին սպասել միայն երկնային «փրկչին»։ Այդպես ծնունդ առավ քրիստոնեության գաղափարը, և պատահական չէ, որ այն ծնունդ առավ հենց հրեաների մեջ,

[1] Т. Моммзен, История Рима, том 5, стр. 483.

որոնք այնպես մոլեգնորեն կռվում էին Հռոմի դեմ հանուն իրենց ազգային ազատության ու անկախության, թեև, վերջ ի վերջո, պարտվեցին։ Այդ հավատը համապատասխանում էր բոլոր նվաստացված ու ընչազուրկ մարդկանց խոհերին, ըղձերին, ամենանվիրական երազանքներին։ Եվ քրիստոնեությունն սկսեց ապշեցուցիչ արագությամբ տարածվել նրանց մեջ։

Առաջին դարի երկրորդ կեսին քրիստոնեությունն առանձնացավ հուդայականությունից և դարձավ բոլոր ստրուկների, ազատ արձակվածների, մանր արհեստավորների, պլեբեյների, իսկ այնուհետև բազմաթիվ ժողովուրդների կրոն։ Նրանք բոլորն ընդունեցին այն ուսմունքը, որը քարոզում էր մարդկանց ու ժողովուրդների հավասարություն, սեր և ոչ թե ատելություն։

Թեպետև քրիստոնեությունը բացահայտորեն հանդես չէր գալիս Հռոմի իշխանության դեմ, այնուամենայնիվ, նա հեթանոսական աշխարհը «սատանայական աշխարհ» հայտարարելով և իր բոլոր անդամներին կոչ անելով՝ չմասնակցել հեթանոսական պաշտամունքներին, գործնականում նշանակում էր հրաժարումն պետական և մունիցիպալ պարտականությունների կատարումից։ Իսկ նրա կոչը՝ «Մի՛ սպանիր», հավատացյալներին պարտավորեցնում էր հրաժարվել հռոմեական բանակում ծառայելուց, որը բռնության, կեղեքման ու ագրեսիայի բանակ էր և ոչ թե՝ «ազատարար»։ Քրիստոնեական մյուս պատվիրանները («Մի՛ շնանար», «մի՛ գողանար», «սուտ վկայություն մի՛ տուր մերձավորիդ դեմ» և այլն) ըստ էության նույնպես ուղղված էին միապետական Հռոմի դեմ։

Այդ ամենը, իհարկե, դիմադրություն էր, թեպետև պասսիվ դիմադրություն հռոմեական հեթանոս աշխարհին, որը բոլորի համար դարձել էր «սատանայական»

§ 20. ՀՌՈՄԻ ԱՆԿՈՒՄԸ։ Ի վիճակի չլինելով կռվել նոր դավանանքի դեմ, հին գաղութային իմպերիալիզմի ջատագովները փորձում են այն ծառայեցնել իրենց նպատակներին։ Բայց այդ բանը հռոմեական կայսրությանը չփրկեց կործանումից։ Նա ընկավ հարվածներից գերմանական ցեղերի,

որոնց հռոմեացիները մեծամտորեն անվանում էին «բարբարոսներ»։ 476 թվականին գերմանական վարձկանների առաջնորդ Օդոաքրը իշխանությունից զրկեց հռոմեական վերջին կայսրին, որը, ճակատագրի հեգնանքով, կրում էր Հռոմի առասպելական հիմնադրի՝ Հռոմուլոսի անունը։

Աշխարհի ժողովուրդները տասնամյակներ շարունակ սպասում էին այդ ժամին՝ ատելի կայսրության ու նրա մայրաքաղաք Հռոմի կործանմանը, ճիշտ այնպես, ինչպես մի ժամանակ Արևելքի ժողովուրդներն սպասում էին ասորական կայսրության ու նրա մայրաքաղաք Նինվեի՝ «արյան քաղաքի» վախճանին։ Աշխարհի ամենառազմաշունչ և ուժեղ, մարդաշատ ու հարուստ, փառահեղ ու տիրապետող քաղաքը դատարկվեց, աղքատացավ, ամայացավ։ Իսկ Հռոմի նշանավոր ֆորումում, որտեղ առաջ ժողովուրդների ու նրանց երկրների բախտն էին որոշում, «փարթամ խոտ աճեց, խոզեր էին արածում»[1]։

II. ՀՌՈՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

§ 21. ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԱՍԻԱՅՈՒՄ։ Հռոմեական ստրկատիրական հասարակության փլատակների վրա սկսեց բարգավաճել հասարակական-տնտեսական նոր ֆորմացիան՝ ֆեոդալիզմը։ Նա շատ նոր բան մտցրեց ժողովուրդների պատմության մեջ ընդհանրապես և գաղութատիրության մեջ՝ մասնավորապես։ Մարդիկ նոր հասարակարգի հետ էին կապում իրենց հույսն ու երկյուղը։

Ժողովուրդների ձևավորման պրոցեսը, որ սկսվել էր ստրկատիրական կարգերի ժամանակ Հռոմի ցանկություններին հակառակ, սկսեց առաջադիմել։ Այդ երևույթը մենք առանձնապես վառ կերպով տեսնում ենք Եվրոպայի երկրներում, որոնց ժողովուրդներին հաջողվեց ջախջախել ատելի Հռոմը։ Այդտեղ սկսեց ավելի շուտ, քան որևէ այլ տեղ, ա-

[1] Академия Наук СССР, Всемирная история, том 2, М., 1956, стр. 811.

վարտվել ազգային տերիտորիաների միավորման և ազգային տերությունների ստեղծման պրոցեսը։ Դուրս գալով ինքնուրույն զարգացման ասպարեզ, այդ երկրների ժողովուրդներն սկսեցին ձեռք բերել ազգի բնորոշ հատկանիշներ՝ տերիտորիայի, էկոնոմիկայի, լեզվի, կուլտուրայի ընդհանրություն և այլն։ Հենց այդ հանգամանքը Եվրոպայի ժողովուրդներին հնարավորություն տվեց ստեղծել մեծ կուլտուրա, որը պատմության մեջ մտել է եվրոպական կուլտուրա անունով։

Ֆեոդալիզմի շրջանում պատմության թատերաբեմ ելան նոր ժողովուրդներ ու նոր պետություններ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում՝ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Պորտուգալիան, Իսպանիան, Դանիան, Նորվեգիան, Շվեդիան, Լեհաստանը, Ճապոնիան, Ռուսաստանը, Հնդկաստանը և ուրիշ երկրներ։

§ 22. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ։ Ֆեոդալիզմի դարաշրջանի գաղութատիրության պատմության մեջ սկսվում է գաղութային նվաճումների ու զավթումների երկու ալիք, այսպես ասած՝ երկու տեսակի գաղութատիրություն՝ արևելյան (ասիական) և արևմտյան (եվրոպական)։ Արևմտյան գաղութատիրությունը կապված էր արտադրողական ուժերի հետագա զարգացման, գլխավորապես աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետ, իսկ արևելյանը՝ անասնապահության զարգացման հետ։

Եվրոպական գաղութատիրությունը գլխավորապես հենվում էր ոչ համարժեք առևտրական փոխանակության, շահագործման գաղութային աղբյուրներ որոնելու վրա, ուստի առևտրական ընկերությունները դարձան գաղութային քաղաքականության գլխավոր լծակներ։ Ասիական գաղութատիրությունը ձգտում էր ուրիշ ժողովուրդների տերիտորիան զավթել «առհավետ»։ Եթե արևմտյան գաղութարարները իրենց կուլտուրական մակարդակով, արտադրողական ուժերի ու տեխնիկայի զարգացման աստիճանով նվաճված ժողովուրդներից անհամեմատ բարձր էին, ապա արևելյան գաղութարարները (հոները, արաբները, սելջուկները, մոնղոլները, թուրքերը և այլն), ընդհակառակն, անհամեմատ շատ հետամնաց էին։ Արևմտյան գաղութակալ երկրներն ապրում էին ազգերի ու

ազգային փուլտուրաների ձևավորման սկզբնական շրջան, այնինչ արևելյան երկրները՝ ցեղական միությունների ու միավորումների առաջացման շրջան։

Արևմտյան ու արևելյան ֆեոդալական ռեժիմների միջև հսկայական տարբերություն կար։ Եվրոպայում ֆեոդալիզմն ուներ վասալություն և ասպետականություն, ինչի մասին խոսք չի կարող լինել Ասիայում։ Եթե Արևմուտքի իշխանավորներն ու նրանց հովանավորները որոշակի իրավունքներ և պարտավորություններ ունեին այուզերենի հանդեպ, ապա Արևելքում նրանց ճակատագիրը բացարձակապես կախված էր միապետի կամքից ու քմահաճույքից։ Արևմուտքում, արքաներից ու արքայիկներից բացի, գործում էին Վերածնության դարաշրջանի հսկաները, իսկ Արևելքում, ամենազոր բռնապետ արքա դահիճներից բացի, չկար ու համարյա թե չկար ոչ ոք, և դա բոլորովին էլ ոչ այն պատճառով, որ Արևելքը չուներ «հսկաներ մտքի, կրքոտության ու գիտության ուժով», որոնց մասին խոսել է Ֆրիդրիխ Էնգելսը։ Ո՛չ, իհարկե, Արևելքը ծանրակշիռ հիմքեր ուներ այդպիսի մարդիկ տալու, բայց այդպիսի գործիչները չէին կարողանում Ասիայում գործել, ստեղծագործել, նրանք կարող էին կամ ազատության մեջ թողնել, կամ իրենց կյանքն ավարտել կախաղանի վրա։

Արևմուտքում գաղութային քաղաքականություն էին վարում առանձին առևտրական կազմակերպություններ, ձեռք բերած տիրապետությունները պատկանում էին նրանց, մինչդեռ արևելքում գաղութարարի դերում հանդես էր գալիս ինքը՝ ֆեոդալական պետությունը, նոր հողերը բացառապես պատկանում էին ցարերին, սուլթաններին, շահերին, խաքաններին, բոգդիխաններին։ Եվ, վերջապես, Եվրոպայում ստեղծվեցին կապիտալիստական հարաբերություններ, որոնց գաղափարախոսները քարոզում էին մտքի, անձի, ժողովուրդների ազատություն։ Ասիայի գաղութատիրությունը դեռ շատ հեռու էր այդ բոլորից։

§ 23. ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԵՎԱՃՈՒՄՆԵՐԸ։ Գրքի ծավալը թույլ չի տալիս ավելի հանգամանորեն ծանրանալու գաղութային նվաճումների պատմության վրա։ Սակայն հարկ ենք համարում համառոտակի շոշափել միայն մոնղոլական,

թուրքական և Եվրոպայի «մեծ» տերությունների նվաճումները, քանի որ դրանք առավել կհետաքրքրեն ընթերցողներին։

Մոնղոլական տափաստաններում ցեղային կռիվներն ավարտվեցին XIII դարի սկզբներին, ստեղծվեց ցեղային մի միավորում, որը, ինչպես հայտնի է, կարևորագույն դեր խաղաց հետագա համաշխարհային իրադարձությունների մեջ։ Այդ միավորման մեջ մտնում էին թաթարները, տայչժնոտները, քերեյտները, նայմանները և մերկիտները։ Ցեղերի ֆեոդալական ավագանին բռնեց արտաքին նվաճումների ուղին Չինգիզ-խանի (1206—1227 թթ.), ապա նրա ժառանգների գլխավորությամբ։

Մի կողմից, հեծյալ աշխարհազորի բացառիկ շարժունությունը, երկաթե կարգապահությունը, չինական ռազմական տեխնիկային տիրապետելը, մյուս կողմից, առավել կուլտուրական հարևանների ֆեոդալական մասնատվածությունը, ապահովեցին մոնղոլական նվաճողների հաջողությունը։ Նրանք գրավեցին Չինաստանը, Տիբեթը, Հնդկաչինը, գրեթե հասան մինչև Վենետիկ։ Դա կուլտուրայի, գիտության ու առևտրի նորագույն կենտրոնների (Յանզցին, Բուխարա, Թերմեզ, Մերվ, Հերաթ, Անի, Բաղդադ, Կիև) կործանման պատճառ դարձավ։ «Չինգիզ-խանի զորավարները ամենից առաջ բոլոր բնակիչներին դաշտ էին քշում, որպեսզի նվաճողների համար ավելի հարմար լիներ քաղաքի կողոպտումը և արժեքավոր ամեն ինչի հափշտակումը։ Հետո կռվելու ընդունակ բոլոր ռազմիկներին սպանում էին, իսկ արհեստավորներին (ընտանիքներով), ինչպես նաև երիտասարդ կանանց ու աղջիկներին, սարկության էին քշում։ Առողջ երիտասարդներին վերցնում էին գոմակ և պաշարողական աշխատանքների համար»[1]։ Ստորև կտեսնենք, որ Չինգիզ-խանի՝ այդ բարբարոս, բայց հանճարեղ զորավարի քաղաքականությունը շատ բանով նման է «հանճարեղ», «կուլտուրական» Հիտլերի և նրա նման ֆյուրերների քաղաքականությանը։ Այստեղ միայն նշենք, որ հազարավոր ծաղկուն քաղաքներ ու գյուղեր մոխրակույտերի էին վերածվում։ Հարյուր հազարավոր մարդկանց անգթորեն բնաջնջում կամ ստրկացնում էին։

Այսպիսով, ցեղային առաջնորդների շահույթի աղբյուրը ոչ միայն ֆեոդալական շահագործումն էր, այլև կողոպտիչ պատերազմները։ Նրանց հարկավոր էին ոչ միայն արոտավայրեր ու շուկաներ՝ անասուններ վաճառելու կամ մորթու, մետաքսե ու բամբակե կտորի ու կաթսայի հետ փոխանակելու համար, այլև պատերազմներ, որոնք հարստացման աղբյուր էին։

§ 24. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ։ Նույնպիսի նպատակներ էին հետապնդում նաև թուրքական նվաճողները, որոնք իրենց պլաններն իրագործում էին նույն մեթոդներով, ինչ որ Չինգիզ-խանն ու նրա հաջորդները։ Մի փոքր հանգամանորեն խոսենք թուրքական նվաճումների մասին։

Ներկայիս թուրքերի նախնիները եկել են Միջին Ասիայից։ Միջին Ասիա կատարած մոնղոլների արշավանքի ժամանակ թուրքական Կայնա ցեղի օղուզ քոչվոր միավորումը, որը բաղկացած էր ընդամենը մի քանի հազար վրանից, Խորեզմի շահ Ջալալ-էդ-Դինի հետ տեղափոխվեց արևմուտք, սկսեց ծառայել Ռումի սելջուկ սուլթանին, որից Կայնա օղուզների առաջնորդ Էրթողրուլը XIII դարի 30-ական թվականներին ստացավ ֆեոդալական մի փոքրիկ տիրապետություն։ Նրա ռեզիդենցիան գտնվում էր Սեգյուդ քաղաքում[1]։ Էրթողրուլի տղան՝ Օսման առաջինը (1282—1326 թթ.) 1299 թվականին իրեն հայտարարեց սելջուկ սուլթաններից անկախ տիրապետ։ Նրա անունով պետությունը հետո կոչվեց Օսմանյան (կամ թուրքական) կայսրություն։ Օսման I-ի ժառանգները լայն մասշտաբի գաղութային էքսպանսիա սկսեցին։ 1326 թվականին նրանք Բյուզանդիայից գրավում են Բուրսան, որը 1329 թվականին դառնում է Օսմանյան պետության առաջին մայրաքաղաքը։

Շուտով օսմանցիներն անցնում են Դարդանելը և ներխուժում Եվրոպա։ Մուրադ I-ը Եվրոպայում առաջին անգամ ստեղծում է մշտական, պրոֆեսիոնալ ենիչերական բանակ,

---

[1] Академия Наук СССР, Всемирная история, том 3, М., 1957, стр. 518.

[1] АН СССР, Всемирная история, т. 3, М., 1957, стр. 733.

որը նոր աշխարհազոր էր։ Թուրքերի նոր, ուժեղ բանակը նվաճում է Բուլղարիան, Մակեդոնիան, Թեսալիան։ Մահմեդ II-ը (1451—1481 թթ.) 1453 թվականին գրավում է Պոլիսը և այն դարձնում իր կայսրության մայրաքաղաքը։ Նա նվաճում է նաև Բոսնիան, Հերցեգովինան, Ալբանիան, Մորեան, ամբողջ Հունաստանը (նրա մնացած մասը), իր գերիշխանությունն է հաստատում Սերբիայի, Մոլդավիայի, Վալախիայի, Ղրիմի խանության (1478 թ.) նկատմամբ։

Սելիմ Ահեղը (1512—1520 թթ.) գրավում է Մոսուլը (1516 թ.), Սիրիան, Պաղեստինը, Եգիպտոսը (1517 թ.), Ալժիրը (1519 թ.)։ Սուլեյման Նվաճողը (1520—1566 թթ.) Եվրոպայում պայքարում էր հեգեմոնիայի համար Կարլոս V-ի Հռոմեական սրբազան կայսրության դեմ։ Նա նվաճում է Հարավային Հունգարիան (1526 թ.)։ 1529 թվականին Թուրքերը պաշարում են Վիեննան։ Սուլեյմանը զորք է ուղարկում Լեհաստան և Ուկրաինա։ Թուրքերը գրավում են Դանուբի ստորին ու միջին հոսանքների շրջանը, Դնեպրի, Դնեստրի ու Դոնի գետաբերանները։ Սելիմ II-ը 1569 թվականին արշավում է Վոլգա՝ Կազանն ու Աստրախանը Օսմանյան կայսրությանը միացնելու համար։ Այդ նպատակով նա պատրաստվում է ջրանցք կառուցել Դոնի և Վոլգայի միջև, որպեսզի նավատորմը Ազովի ծովից փոխադրի Աստրախան, բայց մի շարք հանգամանքներ Թուրքերին թույլ չեն տալիս գլուխ բերել այդ գործը։ Ու, այնուամենայնիվ, Սև ծովը դառնում է թուրքական լիճ։ Թուրքերը հավակնում են տիրելու ամբողջ Լեհաստանը և Ուկրաինան, չեն բավարարվում այդ երկրների մի մասի գրավմամբ։

§ 25. ԽԱՉԻ ԵՎ ԿԻՍԱԼՈՒՄՆԻ ՄԵՆԱՄԱՐՏԸ։ Մենք արդեն խոսել ենք հնադարյան այն ծովահեղության մասին, որը ոչնչացվեց հավերժական քաղաքի ջանքերով, քանի որ այն խանգարում էր Հռոմի աշխարհակալությանը և կողոպտած հարստությունները ծովով Հռոմ փոխադրելուն։

Միջին դարերում ծովահեղությունը նոր ուժ ստացավ, սակայն այլ բովանդակություն ուներ։ Եթե, ինչպես արդեն ասել ենք, առաջներում նա արտացոլում էր ստրուկների ու ստրկացված ժողովուրդների ատելությունն ու մոլեգնությունը աշխարհակալ Հռոմի դեմ, նրանց պայքարի սուր զենքն էր Հռոմի դեմ, ապա այժմ այն դարձել էր արևելյան թուրքական գաղութային կողոպտման ու պայքարի տեսակներից մեկը, այն գաղութատիրության, որը գրավել էր հին Պարսկաստանի տեղը, կռվում էր Եվրոպայի ժողովուրդների ու եվրոպական գաղութատիրության դեմ։ Այդ պայքարն ընդունեց քրիստոնեական Եվրոպայի և իսլամական Արևելքի միջև մղվող կրոնական պայքարի երանգ։ Արևմուտքը արշավանքներ էր կազմակերպում իբր իր «տիրոջ գերեզմանն ազատագրելու» նպատակով, իրականում՝ Մերձավոր Արևելքն ու առևտրական ուղիները գրավելու համար, Արևելքը՝ իբր «անհավատների» դեմ կռվելու, իրականում՝ Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի ժողովուրդներին կողոպտելու և ստրկացնելու նպատակով։

Խաչի և կիսալուսնի մենամարտը, այդպիսով, տեղի էր ունենում ամենուրեք, հաղթողը թելադրում էր իր կամքը։ Երբ թուրքերը գրավեցին Պոլիսը, նրա հոյակապ եկեղեցիների մեծ մասը մզկիթների վերածեցին. դրանց թվում էին աշխարհահռչակ Սոֆիայի տաճարը (Այա-Սոֆիա), Սարգսի ու Բաքոսի տաճարները (քյուչուկ Այա-Սոֆիա), Իրինայի տաճարը (թուրքական բանակի թանգարան) և այլն։ Իրենց հերթին այդպես վարվեցին նաև քրիստոնյա գաղութարարները։ Ֆրանսիացիները, օրինակ, Հյուսիսային Աֆրիկայի քաղաքներում մզկիթները վերածում էին եկեղեցիների, «աշխարհի փրկության» խորհրդանշան խաչը երևան էր գալիս բոլոր այն ամրոցների վրա, որ Մահմեդի որդիները կառուցել էին քրիստոնյա ժողովուրդների դեմ։

Խաչի և կիսալուսնի մենամարտը շարունակվեց նաև մարտական գործողությունը դադարելուց հետո։ Կիսալուսինը պայքարը շարունակում էր հին նշանաբանով՝ ապօրինություն և կամայականություն, խաչը՝ նորով՝ «օրենք», «ազատություն, հավասարություն, եղբայրություն»։ Բայց երկուսի նպատակն էլ նույնն էր՝ իրենց դավանանքը պարտադրել հակառակորդին և դրանով հեշտացնել տերիտորիայի նվաճումն ու ընդհանրապես ասիմիլացիան։ Այդ մասին բացեիբաց խոսել է Ալժիրի գեներալ-նահանգապետի քարտուղար Բյուժոն դեռևս 130 տարի առաջ։ «Հասել են իսլամի վերջին օրերը,— հայ-

տարարել է նա,— քսան տարի հետո Ալժիրում Քրիստոսից բացի ուրիշ աստված չի լինի։ Արդեն հիմա սկսված է տիրող գործը։ Եթե դեռ կարելի է կասկածել, թե արդյո՞ք այս հողը կմնա Ֆրանսիային, ապա արդեն միանգամայն պարզ է, որ այդ հողը կորած է իսլամի համար... Ընդհանուր վերադարձ դեպի տիրող դիրքը կլինի այն նշանը, որից ես կիմանամ, որ Ֆրանսիան կպահպանի Ալժիրը։ Արաբները կպատկանեն Ֆրանսիային միայն այն ժամանակ, երբ քրիստոնյա դառնան»[1]։ Սակայն իսլամը չէր ուզում իրեն պարտված ճանաչել, և պատերազմը շարունակվում էր[2]։

§ 26. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ։ XVI դարում Երևան են գալիս Օսմանյան կայսրության անկման առաջին, բայց ակնբախ նշանները։ XVII դարը դարձավ այդ ագրեսիվ երկրի թուլացման և մայրամուտի դար։ 1683 թվականին թուրքերը պարտություն են կրում Վիեննայի ճակատամարտում, որով նշանավորվում է թուրքական էքսպանսիայի վախճանը Եվրոպայում։ Մայր է առնում մի հակադարձ պրոցես՝ զենքի ուժով ձեռք բերած գաղութային տիրապետությունների կորուստը։ XVIII—XIX դարերում Ռուսաստանի և Ավստրիայի դեմ պատերազմներում Թուրքիան տերիտորիալ խոշոր կորուստներ էր կրում։ Նիկոլայ I-ի արտահայտությամբ, թուրքական «հիվանդ մարդու» քայքայման պրոցեսը շարունակվեց XX դարում։

Ինչպես արևելյան մյուս կայսրությունների, այնպես էլ թուրքական կայսրության կազմալուծման վարևոր պատճառներից մեկը, ինչպես նշում է Մարքսը, այն է, որ տիրող դասակարգերը արգելակում էին արտադրողական ուժերի աճը, չէին ապահովում շահերն ու անվտանգությունը այն մարդկանց, ովքեր առաջ էին մղում այդ ուժերը։

Եվրոպայում իրերի դրությունը միանգամայն այլ էր։ Այնտեղ արագ տեմպերով զարգանում էին ապրանքային տնտեսությունը, արհեստները, տեխնիկան, հումանիտար և ճշգրիտ գիտությունները և այլն։

§ 27. ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ։ XIV դարից մինչև XVII դարի կեսն ընդգրկող ժամանակաշրջանը դարձավ համաշխարհային պատմության վարևորագույն էտապ։ Դա ամբողջ Եվրոպայում Վերածնության գաղափարախոսության ձևավորման ու տարածման, աշխարհագրական մեծ հայտնագործությունների, համաշխարհային շուկայի առաջացման ժամանակաշրջանն էր։ Նորածնունդ բուրժուազիան դարձավ Վերածնության դարաշրջանի հրապարակախոսը, այն դարաշրջանի, որով նշանավորվեց ազգերի կազմավորման պրոցեսի սկիզբը։ Պատահական չէ, որ այն սկսվեց հենց Իտալիայում, որ հենց իտալական ժողովուրդը ծնեց Վերածնության այնպիսի փայլուն, անմահ աստղեր, ինչպիսիք են Լեոնարդո դա Վինչին (1452—1519), Միքելանջելոն (1475—1564), Ռաֆայելը (1482—1520), Լյուդովիկո Արիոստոն (1474—1533), Ջորջոնեն (1478—1510), Տիցիանը (1477—1576) և ուրիշներ, որոնք իրենց ստեղծագործություններում ոչ թե պարզապես երգում էին մարդկային մարմնի հմայքը, այլ այն զուգորդում մարդկային հոգու հմայքի փառաբանման, անհատի ազատության, ժողովուրդների անկախության համար մղված պայքարի գաղափարի հետ։ Իսկ աշխարհագրական մեծ հայտնագործությունները հանգեցրին այն բանին, որ տարբեր աշխարհամասերի ու ժողովուրդների միջև կապը դարձավ կանոնավոր, հաստատուն ու աճող, մինչդեռ դրանից առաջ նրանց հաղորդակցությունը անցողիկ

[1] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 60.

[2] Այն առանձնապես կատաղի բնույթ ստացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ուժեղացավ Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը գաղութատիրության դեմ, ազատության և անկախության համար։ Վատիկանը ձգտում է ոչ միայն ամրապնդել Հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների նկատմամբ ձեռք բերած հաջողությունները, այլև «տիրող դիրքը վերադարձնել» աֆրիկյան նեգրերին՝ նրանց, ովքեր արդեն անկախություն են նվաճել, և ովքեր շարունակում են պայքարը անկախության համար։ Իսկ Իսլամը պայքարում է իր նպատակների համար։

Արևմտյան մամուլի խոստովանությամբ, մենամարտը մղվում է կիսալուսնի օգտին։ «Վերջին 20 տարում,— գրում է «Բիզնես ուիկ» հանդեսը,— մուսուլմանությունը նվաճեց Սահարան և հսկայական հաջողություններ հասավ արևմտաաֆրիկյան նեգրերին իսլամացնելու գործում։ Կահիրեի պրոպագանդան խարսխվում է այն բանի վրա, որ քրիստոնեությունը միայն սպիտակամորթների համար է, մինչդեռ Իսլամը մորթու խտրություն չի դնում»։

քնույթ էր կրում և ամուր հիմք չուներ։ Բայց նրանք միաժամանակ գաղութային նվաճումների մի ամբողջ պատմական դարաշրջան բաց արեցին, սկզբնավորելով այն պրոցեսը, որը Կ. Մարքսն անվանել է կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցես։

§ 28. ԻՍՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ։ Եվրոպական երկրներից առաջինն այդ ուղին թևակոխեցին Իսպանիան և Պորտուգալիան։ Նրանք Այլ դարձան ֆեոդալական արևմուտքի առաջին մեծ տերություններ։ Քրիստափոր Կոլումբոսի և Մագելանի կողմից Նոր աշխարհի և Եվրոպայից Ասիա տանող ծովային ուղիների մեծ հայտնագործությունները օգնեցին այդ երկրներին ստեղծելու աննախադեպ գաղութային կայսրություններ։ Օրինակ, Կարլոս II-ի (1665—1700 թթ.) իսպանական կայսրության մեջ մտնում էին. Եվրոպայում՝ Միլանի հերցոգությունը, Նեապոլը, Սարդինիան և Սիցիլիան, Կանարյան կղզիները. Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում՝ Լա-Պլատայի փոխարքայությունը (ներկայիս Արգենտինան, Ուրուգվայը, Պարագվայը, Բոլիվիան), Նոր Իսպանիան (Ֆլորիդան, Մեքսիկան՝ Տեխասի ու Կալիֆորնիայի հետ), Նոր Գրանադան (Կոլումբիան, Պանաման, Վենեսուելան, Էկվադորը), Պերուն (ներկայիս Պերուն և Չիլին), Կուբան, Պուերտո-Ռիկո կղզին, Սան-Դոմինգոյի մի մասը. Ասիայում՝ Ֆիլիպինյան և Կարոլինյան կղզիներն ու այլ տերություններ։ Այդ երկրներում ապրում էր 16 միլիոն մարդ, մինչդեռ մետրոպոլիայի ծնունդ իսպանացի գաղութարարները ընդամենը 200 հազար էին։

Պորտուգալիան տիրում էր Բրազիլիային, որը գրավում էր Հարավային Ամերիկայի տերիտորիայի համարյա կեսը։ Նա Արևելքում նույնպես ստեղծեց կայսրություն, որի կենտրոնը Հնդկաստանում դարձավ Գոան։ Պորտուգալացիներն այն գրավեցին 1510 թվականին։

Իսպանիան և Պորտուգալիան շարունակ մրցակցության ու թշնամանքի մեջ էին։ Նրանց վիճաբանությունը լուծեց Հռոմի պապը։ Սարագոսայի համաձայնագրով (1529 թ.) աշխարհը բաժանվեց այդ երկու երկրների միջև։ Նոր աշխարհը

(Բրազիլիայից բացի) դարձավ Իսպանիայի ազդեցության զոնա, իսկ Ասիան (Հնդկաստանը, Չինաստանը, Ինդոնեզիան)՝ Պորտուգալիայի զոնան։ Ոչ ոք ուրիշի գոտին մտնելու իրավունք չուներ։ Այդ օրենքը խախտող նավը կարող էին բռնագրավել, իսկ անձնակազմը՝ գնդակահարել կամ ստրկացնել։

Եվրոպական մյուս երկրները (Հոլանդիան, Անգլիան, Ֆրանսիան), որոնք ուշ թևակոխեցին գաղութային զավթումների ուղին, բոլորովին չէին հրաժարվել գաղութային կայսրություն ստեղծելու մտքից։ Այդ նպատակով նրանք սկսեցին ուժեղ հետախուզություն հետևյալ նպատակով.

ա) որոնել նոր երկրներ, որոնք դեռևս չեն հայտնաբերվել և նվաճվել Իսպանիայի ու Պորտուգալիայի կողմից։

բ) տեղեկություններ հավաքել իսպանական ու պորտուգալական գաղութների և նրանց մոտենալու ուղիների մասին՝ այդ գաղութները հետագայում զավթելու նպատակով։

գ) ծովահենային գործողություններով ջլատել իսպանացիների ու պորտուգալացիների առևտրի մենաշնորհը։

Սակայն այդ երկրները, ի տարբերություն Իսպանիայի, Պորտուգալիայի և ֆեոդալական մյուս պետությունների, նոր բան մտցրին գաղութային նվաճումների քաղաքականության մեջ։

§ 29. ՆՈՐԸ ԾՆՎՈՂ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ։ Ֆեոդալական պետությունների գաղութային քաղաքականությունը մեծապես տարբերվում էր նոր ծնվող բուրժուազիայի քաղաքականությունից։ Առաջինների ժամանակ գաղութային պատերազմներ էր մղում պետությունը, նվաճված հողերը համարվում էր թագի սեփականություն, գաղութային ավարը ծախսվում էր դինաստիական պատերազմների վրա։

Բուրժուազիան նոր ձևեր ու մեթոդներ մտցրեց այդ քաղաքականության մեջ։ Պետական իշխանությունն այլևս անմիջականորեն չէր մասնակցում գաղութների գրավմանը և շահագործմանը, նրան փոխարինում էին մասնավոր կազմակերպություններ և անձինք՝ այս կամ այն ընկերության փայատերերը։ Պետությունը բացեիբաց և բազմազան ձևերով աջակ-

ցում ու նպաստում էր այդ ընկերությունների գործունեությանը։ Սակայն գաղութային շահագործման բուն ապարատը գտնվում էր ոչ թե պետության տրամադրության տակ, ինչպես Իսպանիայում, Ռուսաստանում, Թուրքիայում և այլուր, այլ մասնավոր մարդկանց ձեռքում։ Գաղութային ավարը ծառայում էր կապիտալի կենտրոնացմանը միայն մասնավոր մարդկանց ձեռքում։

XVII դարը Եվրոպայում այդպիսի ընկերությունների ծաղկման դար էր։ Նրանցից հոլանդական և անգլիական ընկերությունները առավել կարևոր դեր խաղացին գաղութային զավթումների մեջ։

1600 թվականին կազմակերպված անգլիական արևելահնդկական ընկերությունը շատ «համեստ» հնարավորություններ ու իրավունքներ ուներ։ Նա ղեկավարվում էր հետևյալ լոզունգով՝ «Մեր իսկական նպատակն է՝ էժան գնել Հնդկաստանում և թանկ վաճառել Եվրոպայում»։ Անգլիացիները, այդպիսով, ձգտում էին գերշահույթի գաղութային աղբյուր ձեռք բերել անհամարժեք առևտրական շրջանառության միջոցով, ինչպես հին դարերում այդ անում էր Կարթագենի վաճառականական հանրապետությունը։ Սակայն անգլիացիները գործում էին հռոմեական կայսրության հեռահար տակտիկական եղանակներով։

Հոլանդական արևելահնդկական ընկերությունը կազմակերպվել էր լայն հիմունքներով և ավելի ագրեսիվ էր։ Ըստ խարտիայի, նա իրավունք ուներ «Հնդկաստան տանող ճանապարհին բռնելու և բռնագրավելու ամեն մի օտար նավ, ամրոցներ և ֆակտորիաներ հիմնել, դրամ կտրել, զորք պահել, պատերազմ հայտարարել, հաշտություն ու պայմանագրեր կնքել Հոլանդիայի տիրապետի անունից, ինչպես նաև դատական ու վարչական լիակատար իշխանություն ուներ իր ծառայողների և գրաված տերիտորիաների բնակչության նկատմամբ»։ Նա ուներ նաև առևտրական լայն արտոնություններ. առանց մաքսի ապրանքներ էր տանում Հոլանդիա, այնտեղից բերում երեք տոկոս մաքս վճարելով։ Ընկերությունը ուներ 6,5 միլիոն ֆլորինի նախաձեռնական կապիտալ, որը կուտակվել էր բաժնեգրության միջոցով։

§ 30. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՍՆԱՏՈՒՄԸ ԵՎ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՆԳԼԻԱՅԻ, ՀՈԼԱՆԴԻԱՅԻ, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ։ Հանդես գալով «ազատարարների» դերում, անգլիացիներն ու հոլանդացիները շուտով գրավեցին շատ գաղութներ և իրենց երկրները դարձրին խոշոր ու զորեղ տերություններ։ Հոլանդացիները ամրանում են Ինդոնեզիայում, անգլիացիները՝ Ինդոստան թերակղզում, սակայն շուտով հոլանդացիները դուրս են քշում անգլիացիներին և իրենց ձեռքը վերցնում հարավային ծովերի երկրների առևտուրը։ Պորտուգալիայի հզոր կայսրությունից մնում է միայն երեք կետ՝ Գոան, Տիմոն և Դամանը։

XVI դարից սկսվում է Հյուսիսային Ամերիկայի գրավումը։ 1535 թվականին ֆրանսիացիները գրավում են Կանադան, 1606 թ. անգլիացիները՝ Վիրգինիան, 1626 թ. հոլանդացիները հիմնադրում են Նոր Ամստերդամը ներկայիս Նյու-Յորքի տեղում։

Նույն ժամանակաշրջանում ֆեոդալական Ռուսաստանը նույնպես ընդլայնում է իր մետրոպոլիայի սահմանները. XVI դարում և XVII դարի առաջին կեսին «կամավոր կերպով» նրա մեջ են մտնում շատ ժողովուրդներ՝ կարելները, կոմիները, նենեցները, խանտիները, մանսիները, մարիները, մորդվաները, ուդմուրդները, չուվաշները, թաթարները, բաշկիրները և այլն։

III. ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԱԺԱՆՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ

§ 31. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ։ Միջին դարերը շատ նոր բան մտցրին գաղութատիրության պատմության մեջ։ Ասիայի ու Եվրոպայի ֆեոդալական պետությունները, ինչպես նաև արևմուտքի երկրների նոր ծնվող բուրժուազիան, աշխարհագրական մեծ հայտնագործությունների շնորհիվ գաղութային զավթումներն ընդլայնեցին՝ ընդգրկելով բոլոր մայր ցամաքները։

Նոր ժամանակները քաղաքական հաղթանակ բերեցին կապիտալիզմին։ Անգլիական (1649 թ.) և ֆրանսիական

(1789 թ.) ռևոլյուցիաների միջև ընկած ժամանակաշրջանը դարձավ այդ պատմական պրոցեսի անցման ժամանակաշրջան, իսկ 1789 թվականից և 1871 թ. Փարիզի կոմունայի ժամանակից՝ ավարտման, այսինքն՝ եվրոպական ֆեոդալական աբսոլյուտիզմի կործանման ժամանակաշրջան։

Կապիտալիզմը դառնում է համաշխարհային սիստեմ։ Նոր ժամանակի պատմությունը բնութագրվում է շատ գործոններով։ Նշենք երեքը. ա) տեղի են ունենում արդյունաբերական հեղաշրջում և աշխատանքի համաշխարհային բաժանում, բ) ուժեղանում է ազգային-ազատագրական շարժումը, առաջանում են ազգային նոր պետություններ, գ) գաղութատիրությունը թևակոխում է իր զարգացման նոր փուլը։

Մեքենայական խոշոր ինդուստրիան, որ հիմնադրեց «էլեկտրականության դարը» և հաջորդեց «շոգու դարին», այսինքն՝ կապիտալիստական արտադրության զարգացման մանուֆակտուրայի փուլին, մտցրեց ոչ միայն տեխնիկական, այլև սոցիալ-քաղաքական խոշոր փոփոխություններ, որոնք չէին կարող չհանգեցնել ֆեոդալական հարաբերությունների հեղաբեկման, աշխարհի քաղաքական քարտեզի վերաձևման, ազգային-ազատագրական և բանվորական ռևոլյուցիոն շարժման ուժեղացման։ Մյուս կողմից, էլեկտրականության դարն ավելի ու ավելի մեծ չափով պահանջում էր արդյունաբերական ապրանքների վաճառահանման նոր շուկաներ և միաժամանակ հումք ու բանվորական ուժ այդ արդյունաբերության համար։

Այսպիսով, կապիտալիզմի ժամանակաշրջանի քաղաքական պատմությանը բնորոշ է երկու տենդենց՝ առաջադիմական և հետադիմական։ Առաջինը տանում է դեպի ազգերի ամրապնդում և ազգային անկախ պետությունների ձևավորում, իսկ մի շարք երկրներում՝ դեմոկրատական կարգերի հաստատում, երկրորդը՝ դեպի թույլ ու փոքր երկրների ճնշում, ստրկացում։

§ 32. ԱՄԵՐԻԿՅԱՆ «ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՅԻ» ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ։ XVIII դարի երկրորդ կեսից սկսած Եվրոպայի ու Նոր Աշխարհի շատ ժողովուրդներ վերջնականապես ձևավորվեցին իբրև ինքնուրույն ազգեր և կազմեցին անկախ պետություններ։ 1776 թվականի հուլիսի 4-ին Ֆիլադելֆիայում ամերիկյան կոնտինենտալ երկրորդ կոնգրեսն ընդունեց Թ. Ջեֆերսոնի կազմած «Անկախության դեկլարացիան»։ Այդ նշանավոր փաստաթուղթն աշխարհում առաջին անգամ հռչակեց բուրժուա-դեմոկրատական ազատությունների հիմնական դրույթները՝ դասային արտոնությունների ոչնչացում, քաղաքացիների իրավահավասարություն, յուրաքանչյուր ազգի ազատ գոյության իրավունք։ Անկախության դեկլարացիան «անաչառ աշխարհին» հայտնում էր՝ «յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրավունք և նույնիսկ պարտականություն ոչ միայն փոխելու, այլև ոչնչացնելու կառավարման հին ձևը», եթե այդ ձևը այլևս չի բավարարում։ Ելնելով այդ անվիճելի ու բնական իրավունքից, ամերիկյան ժողովուրդը հռչակեց իր երկրի անջատումը Անգլիայից, ազատ, անկախ պետության ստեղծումը։ Ինչպես հայտնի է, «Անկախության դեկլարացիան» եղավ ֆրանսիական մեծ հեղափոխության հռչակած «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի» նախատիպը, Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի, ինչպես նաև ուրիշ երկրների գաղութային ժողովուրդներին պայքարի ոգեշնչելով հանուն անկախության, հանուն գաղութային ճնշումից ազատագրվելու։

§ 33. ԱԶԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊՐՈԳՐԵՍԸ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ։ Նապոլեոնի պատերազմների ժամանակաշրջանում Իսպանիայի և Պորտուգալիայի թուլացումը Նոր Աշխարհի ժողովուրդներին օգնեց ազատարար գեներալ Սիմոն Բոլիվարի, հերոս հայրենասերներ Խոսե Սան-Մարտինի, Բերնարդո օ-Հիգենսենի և ուրիշների ղեկավարությամբ ազատություն նվաճել։ Այդպիսով, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի մի շարք երկրներ նույնպես քաղաքական անկախություն նվաճեցին։

«Սրբազան դաշինքի» և ֆեոդալական աբսոլյուտիզմի կործանումը, ազգային-ազատագրական շարժման հաջողությունները, ինչպես նաև գաղութարարների հակատությունները չէին կարող չնպաստել Եվրոպայում ազգերի ձևավորման հետագա պրոցեսին։ Անկախություն ստացավ Հունաստանը (1822 թ.), Բելգիան դուրս եկավ Նիդեռլանդական միությունից

և անկախություն նվաճեց (1830 թ.), Իտալիան դարձավ միասնական պետություն (1870 թ.), Գերմանիան միավորվեց Ֆրանսիայի դեմ հաղթանակ տանելուց հետո (1871 թ.), Ռումինիան (1881 թ.), Սերբիան (1882 թ.) հռչակվեցին անկախ թագավորություններ, իսկ Բուլղարիան (1879 թ.)՝ ստմանանադրական միապետություն։ XX դարի սկզբներին ազատություն նվաճեց նաև Նորվեգիան։

Այդ առաջադիմական պատմական պրոցեսը՝ ազգերի ձևավորումը, կապիտալիզմի հաղթական երթի վճռական պայմաններից մեկն էր։ Բայց երբ կապիտալիզմը վերածվեց գաղութային իմպերիալիզմի, սկսեց արհեստականորեն արգելակել այդ պրոցեսը, դրանով իսկ կանխորոշեց իր քայքայումն ու կործանումը։ Այժմ նա պետք է իր տեղը զիջեր այն իրավակարգին, որը ոչ միայն ճանաչում, այլև փաստորեն ազատություն ու անկախություն էր տալիս բոլոր ժողովուրդներին և չէր ընդունում մի ազգի կեղեքումը մյուսի կողմից։

§ 34. ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՎ ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԻ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ։ Կապիտալիզմի իմպերիալիստական ժամանակաշրջանի քաղաքական պատմության ռեակցիոն գիծը Ֆ՝լ ավելի իշխող ու զորեղ էր, քան նրա առաջադիմական ու դեմոկրատական գիծը։ Իրականում իշխող դասակարգերը չեն կարող յոլա գնալ առանց շահագործման և թույլերի ստրկացման, առանց նրանց նկատմամբ իրենց բացարձակ իշխանությունը հաստատելու։

Աբսոլյուտիզմի և ռեակցիայի ուժերը եվրոպական ռևոլյուցիայի ու դեմոկրատիայի դեմ մղած պայքարում գլխավորում էր ցարական Ռուսաստանը։

«Ռուսաստանը,— նշել են գիտական կոմունիզմի հիմնադիրները,— անվերապահորեն այնպիսի երկիր է, որը ձգտում է նվաճումների, և այն այդպիսին է եղել, այդպիսին էր մի ամբողջ հարյուրամյակի ընթացքում, մինչև որ 1789 թվականի մեծ շարժումը ծնեց նրա ահեղ հակառակորդին, որը կենսական հզոր ուժերով էր լի։ Մենք նկատի ունենք եվրոպական ռևոլյուցիան, դեմոկրատական գաղափարների պայթուցիկ ուժը և մարդու ազատության բնածին ձգտումը։ Սկսած այդ ժամանակվանից եվրոպական կոնտինենտում փաստորեն

գոյություն ունեն միայն երկու ուժեր՝ մի կողմից Ռուսաստանն ու աբսոլյուտիզմը, մյուս կողմից՝ ռևոլյուցիան և դեմոկրատիան»[1])։

Ռևոլյուցիոն այդ նոր ուժի երևան գալով պատմությունը փաստորեն իր դատավճիռը կայացրեց աբսոլյուտիզմի նկատմամբ։ Ճիշտ է, այդ ուժը սկզբում թույլ էր, իսկ կամայականության ուժը այնքան պատկառելի, որ եվրոպական ռևոլյուցիան ու դեմոկրատիան հարկադրված էին ժամանակավորապես նահանջել։ Ավստրիական կայսր Ֆրանց I-ը և Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ II-ը, ռուսական Ալեքսանդր I ցարի գլխավորությամբ Վիեննայում «Սրբազան դաշինք» կնքեցին ժողովուրդների ազատության ու անկախության դեմ պայքարելու համար և բացահայտորեն պատերազմ հայտարարեցին ամերիկյան «Անկախության դեկլարացիայի», ֆրանսիական մեծ ռևոլյուցիայի սկզբունքներին։

Ցարական Ռուսաստանը դարձավ ժանդարմ Արևելքում ու Արևմուտքում։ Նա ճնշում ու կեղեքում էր ոչ միայն ուրիշ ժողովուրդների, այլև ռուս ժողովրդին։ Ցարական Ռուսաստանում միշտ իշխել է ռազմա-ֆեոդալական աբսոլյուտիզմը, որը ճնշում էր դեմոկրատական ամեն մի ազատություն։ Ոստի պատահական չէ, որ ժողովուրդների բանտապաշարի մեջ մտան ցար, մտրակ, Սիբիր բառերը։ Հեռու էր Հոկտեմբերյան հեղափոխությունը, որը պետք է այդ բառերը փոխարիներ Լենին, ռևոլյուցիա, բոլշևիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ բառերով։

Ցարական Ռուսաստանը ընդհանուր լեզու էր գտնում՝ ոչ միայն ֆեոդալական Եվրոպայի, այլև կապիտալիզմ թևակոխած Եվրոպայի հետ։ Կապիտալիստական Եվրոպայի ռեակցիոն շրջանները հանձին ցարական Ռուսաստանի տեսնում էին գաղութային կողոպտողի և ազգային-ազատագրական ու ռևոլյուցիոն շարժումները խեղդող ժանդարմին։

Այդպիսով, նոր ժամանակները նոր բովանդակություն տվեցին գաղութատիրությանը։ Եթե մինչև վերջերս հողը

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, II изд., М., 1957, стр. 15.

զավթվում էին պարզապես հանուն թալանի կամ արոտավայրերի համար, ապա այժմ այն հարկավոր էր արդյունաբերական ապրանքներ վաճառահանելու, արդյունաբերական հումք և բանվորական ուժ ձեռք բերելու համար։

§ 35. ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ։ Անհամաչափ զարգացման պրոցեսը և գաղութային գերշահույթի նոր աղբյուրների ետևից ընկնելը փոխեցին ուժերի հարաբերակցությունը գաղութատիրական աշխարհում։ XVII դարի այսպես կոչված «մեծ» տերությունները՝ Իսպանիան, Հոլանդիան և Շվեդիան իսպանական ժառանգության համար մղած պատերազմից (1701—1713 թթ.) և Հյուսիսային պատերազմից (1700—1721 թթ.) հետո ասպարեզից դուրս եկան։ 1714 թ. Իսպանիան կորցրեց իր տիրապետությունները Իտալիայում և Նիդեռլանդներում։ Շուտով Հոլանդիան Անգլիային զիջեց իր առևտրական ու գաղութային դիրքերը։ Շվեդիան Հյուսիսային պատերազմի ժամանակ իր գաղութային տիրապետությունները հանձնեց Ռուսաստանին։ Ֆրանսիան գրավեց Իսպանիայի տեղը, բայց Ամերիկայում ու Հնդկաստանում կորցրեց իր գաղութները հօգուտ Անգլիայի։ Այս և հաջորդ դեպքերը հանգեցրին այն բանին, որ Եվրոպայի «մեծ տերությունների երգչախմբում» հանդես եկան նոր երկրներ՝ Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան և, նույնիսկ, Իտալիան։

Գաղութարարների այդ մրցակցությունը հանգեցնում է ռազմական տեխնիկայի հետագա կատարելագործման, սպառազինությունների մրցավազքի և ռազմական նոր բախումների։ Օրինակ՝ իսպանա-ամերիկյան (1898 թ.) անգլո-բուրական (1899—1902 թթ.), ռուս ճապոնական (1904—1905 թթ.), իտալա-թուրքական (1911—1912 թթ.), բալկանյան (1912—1913 թթ.) և մյուս պատերազմները։

Իսպանա-ամերիկյան պատերազմից հետո ԱՄՆ-ին են անցնում Հավայան և Ֆիլիպինյան կղզիները, ինչպես նաև Սամոան, Պուերտո-Ռիկոն, Գուամը։ Կուբան անկախ է հայտարարվում։ Ամերիկայի Միացյալ Նահանգները Մեքսիկայից խլում են Տիխասն ու Կալիֆոռնիան։ Նրանք գործում են

թե՛ զենքով և թե՛ դոլարով, Նապոլեոնից գնում են Լուիզիանան, Իսպանիայից՝ Ֆլորիդան, Ռուսաստանից՝ Ալյասկան։

Անգլիացիներն ավարտում են Բիրմայի, իսկ ֆրանսիացիները՝ Հնդկաչինի նվաճումը։ Մեծ Բրիտանիան Եգիպտոսի Իսմայիլ Խեդիվից շնչին գնով գնում է Սուեզի ջրանցքի հսկիչ ծրարը (1875 թ.), իսկ հաջորդ տարին Վիկտորիա թագուհին հռչակվում է Հնդկաստանի թագուհի։ Անգլիան գրավում է Կիպրոսը։ Գերմանիան օվկիանոսում տիրում է Սողոմոնի, Մարշալի և Կարոլինյան կղզիներին ու Նոր Գվինեայի մի մասին։

§ 36. ԱՖՐԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ։ Մեծ տերություններն սկսում են Աֆրիկայի բաժանումը, որն ավարտվում է XX դարի սկզբներին։ Եվրոպացիներից ամենից առաջ այդտեղ թափանցել էին պորտուգալացիները, որոնք XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին հիմնել էին իրենց գաղութները՝ Պորտուգալական Գվինեան, Անգոլան և Մոզամբիկը։ Նրանցից հետո ասպարեզ մտան հոլանդացիները, որոնք հիմնեցին Կանի գաղութը։ Հոլանդացիներից հետո Սև աշխարհամաս են թափանցում ֆրանսիացիները, անգլիացիները, իսպանացիները, իտալացիները և ուրիշներ։ Ֆրանսիան գրավում է Ալժիրը, Թունիսը, Մարոկկոն, Սենեգալը, Գաբոնը, Մադագասկարը, Հասարակածային Աֆրիկայի արևմտյան և հարավարևմտյան ափերի հողերը։

Մեծ բաժին է ընկնում անգլիական գաղութարարներին։ Նրանց են անցնում Սիերա-Լեոնեն, Գամբիան, Ոսկե Ափը, Լագոսը, Սուդանը, Եգիպտոսը, Ուգանդան, Քենիան, Հյուսիսային Ռոդեզիան և մի շարք ուրիշ երկրներ։ Իտալացիները տիրում են Սոմալիին, Էրիտրեային, Տրիպոլիին, Կիրենայիկային, իսկ իսպանացիները՝ Մարոկկոյին, Ռիո-Դե-Օրոյին, Գվինեային։ Բելգիայի Լեոպոլդ II թագավորը գառնում է Կոնգոյի տերը։ Այդտեղ իրենց կայսրությունն են հիմնում նաև գերմանական գաղութարարները, ամրապնդվելով հիմնականում Տոգոյում, Կամերունում, այն անվանելով «Գերմանական Հարավ-Արևմտյան Աֆրիկա», Ամերիկայի Միացյալ Նահանգները տեղի մի ցեղապետից հող են գնում, որն այ-

նուհետն (1847 թ.) հայտարարում են անկախ ռեսպուբլիկա՝ Լիբերիա։

§ 37. ՃԱՊՈՆԻԱՆ ԵՎ ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ։ Բոլորից ուշ գաղութային թալանի լայն ճանապարհ է դուրս գալիս Ճապոնիան։ Նա գրավում է Կորեան, Սախալինի հարավային մասը, Տայվան կղզին, ներխուժում Չինաստանի հյուսիս-արևելյան նահանգները։

Հետաքրքրական է, որ Ճապոնիան, երբ դեռ թույլ էր, եվրոպական գաղութային ներթափանցման դեմ կռվելու համար վարում էր արտաքին աշխարհից մեկուսանալու քաղաքականություն։ 1636 թ. կառավարությունը ճապոնացիներին արգելեց հեռանալ հայրենիքից և հեռավոր նավագնացության համար նավեր կառուցել։ Ճապոնիան հետապնդում էր եվրոպացիներին և, առանձնապես, քրիստոնյա միսիոներներին, որոնց օգնությամբ եվրոպական գաղութարարները կամենում էին թափանցել Ճապոնիա։ 1638 թ. բոլոր օտարերկրացիներին Ճապոնիայից արտաքսելու և նրանց այլևս երկիր չթողնելու կարգադրություն է արվում։

Նման միջոցների էին դիմում նաև Չինաստանն ու Կորեան։

Ինչ վերաբերում է ֆեոդալական Ռուսաստանին, ապա նա Անգլիայից ու Ֆրանսիայից բնավ ետ չէր մնում գաղութային լայնածավալ կայսրություն ստեղծելու ասպարեզում։ Նա իր տիրապետությունն է հաստատում Բալթիկ ու Սև ծովերում, գրավում Սիբիրը, խաղաղ օվկիանոսի ափերը։ 1654 թվականից Զախափնյա Ուկրաինան (Կիևի հետ միասին) մտնում է Ռուսաստանի կազմի մեջ։

Եվրոպայի ռեակցիոն տերությունները՝ Պրուսիան, Ավստրիան, Ռուսաստանի գլխավորությամբ, խեղդում են ազգային-ազատագրական շարժումները։ Նրանց միացյալ ուժերի իշխանության տակ էր Լեհական պետությունը։ Այն երեք անգամ բաժանեցին միմյանց միջև՝ առաջին բաժանումը կատարվեց 1772 թ., երկրորդը՝ 1793 թ. (Ռուսաստանի և Պրուսիայի միջև՝ Բելոռուսիան և Աջափնյա Ուկրաինան անցան Ռուսաստանին, Մեծ Լեհաստանի մի մասը, Տորունը և Գդանսկը՝ Պրուսիային), երրորդը՝ 1795 թ. (Ռուսաստանն ստացավ արևմտա-բելոռուսական և արևմտա-ուկրաինական հողերը, Լիտվայի մեծ մասն ու ամբողջ Կուրլյանդիան, Ավստրիան ստացավ Կրակովն ու Լյուբլինը, Պրուսիան՝ մայրաքաղաքը՝ լեհական հնադարյան հողերի մի մասի հետ միասին։

Ռուսաստանը տերիտորիալ մեծ նվաճումների հասավ Անդրկովկասում։ Վերջինս Ռուսաստանին է միացվում XIX դարի I-ին կեսին՝ Իրանի (1804—1813 թթ.) և Թուրքիայի (1806—1812 թթ.) դեմ մղած պատերազմներից հետո։ 1801 թ. սկզբներին հայտարարվեց, որ Ռուսաստանի կազմի մեջ են մտցվում Քարթլի-Կախեթիայի թագավորությունը, 1803 թվականին՝ Մենգրելիան, 1804 թվականին՝ Գյանջայի խանությունը և Ջարո-Բելոկանի մարզը, 1805 թվականին՝ Ղարաբաղի, Շաքիի ու Շիրվանի խանությունները և Շիրակի տերիտորիան, 1810 թվականին՝ Աբխազիան։ Շվեդիայի դեմ մղած պատերազմի ժամանակ Ռուսաստանը նվաճեց Ֆինլանդիան և Ալանդական կղզիները (Բալթիկ ծովում)։

Նապոլեոնի տապալումից հետո Եվրոպայում իշխում է ֆեոդալական ռեակցիան։ Վիեննայի կոնգրեսը Ռուսաստանին է տալիս Վարշավայի նախկին հերցոգության մեծ մասը, նրան է վերապահում Եվրոպայի քարտեզը իր ուզածի պես ձևելու իրավունքը։ 1827 թվականին Ռուսաստանը գրավում է Երևանի ու Նախիջևանի խանությունները։

Ռուսական աբսոլյուտիզմը միայն հողերի նվաճումով չէր բավարարվում, նա ձգտում էր ձեռք բերել նաև իր ապրանքների վաճառահանման նոր շուկաներ ու հումքի բազաներ, մասնավորապես տեքստիլ արդյունաբերության համար։ Այդ նպատակով ռուսական զորքերը 1864—1873 թվականներին նվաճում են Միջին Ասիան՝ Բուխարայի, Կոկանդի և Խիվայի խանությունները, ինչպես նաև մի քանի կիսանկախ բեկերի հողերը։ Ռուսաստանը երազում է գրավել Դարդանելը և դուրս գալ Միջերկրական ծով։

Եկատերինա II-ը իր թոռին անվանեց Կոնստանտին՝ Կոստանդնուպոլսի հիմնադրի անունով, իսկ Նիկոլայ I-ը «Ռուսաստանը հռչակեց արևելյան Հռոմ»[1]։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, стр. 202.

Ցարական Ռուսաստանը դարձավ ժողովուրդների բանտ։ Այս արտահայտությունն առաջին անգամ 1843 թվականին օգտագործել է ֆրանսիական գրող Ադոլֆ դը Կյուստինն իր այն գրքում, որը Ա. Ի. Գերցենն անվանել է «ամենահիանալի ու խելամիտ գիրքը, որ Ռուսաստանի մասին գրել են օտարները»։ Նա ասել է. «Ինչքան էլ անծայրածիր է այդ կայսրությունը, այնուամենայնիվ այն այլ բան չէ, քան մի բանտ, որի բանալին պահվում է կայսեր մոտ»։ Կյուստինն առաջինն էր, որ Նիկոլայ I-ին անվանեց «երկրագնդի մեկ երրորդի բանտապետ»։

§ 38. ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔԸ ԵՎ ԵՌՅԱԿ ԱՆՏԱՆՏԱՆ։ Սակայն մեծ տերությունների գաղութային վակխանալիան դրանով չավարտվեց։ XIX դարի վերջերին Անգլիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, ապա նաև Ճապոնիան, սկսեցին Չինաստանը, Կորեան մասնատել ազդեցության տիրույթների։ Նույն բախտին արժանացավ Իրանը, բաժանվելով երկու մասի՝ Ռուսաստանի (Հյուսիսային Իրան) և Անգլիայի (Հարավային Իրան) միջև։

Այսպես ամբողջ աշխարհը բաժանվեց գաղութային տերությունների միջև։ Բայց նրանք դեռ գոհ չէին։ Մի մասը (Գերմանիան, Իտալիան, Ավստրո-Հունգարիան) իրենց «վիրավորված» էին համարում, «նվաստացած» ու «աղքատ», աչք էին դնում նրանց վրա, ովքեր շատ էին խլել (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա)։ Մյուսները վախենալով նրանց հարաճուն ռազմա-տնտեսական հզորությունից, հավատացնում էին, որ «խեղճերին» չափազանց մեծ բաժին է ընկել։ Այդպես, 1882 թվականին, ծնունդ առավ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի ու Իտալիայի Եռյակ միությունը, իսկ 1907 թվականին՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի Եռյակ համաձայնությունը (Եռյակ անտանտան)։

Օրակարգում դրված էր արդեն բաժանված աշխարհը վերաբաժանելու հարցը, որը կարելի էր լուծել միայն համաշխարհային պատերազմի միջոցով։

Երկրորդ գլուխ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Իմպերիալիզմը թևակոխել է մայրամուտի և կործանման ժամանակաշրջանը։ Կազմալուծման անկասելի պրոցեսն է համակել կապիտալիզմին հիմքից մինչև գագաթը՝ նրա տնտեսական ու պետական կարգին, քաղաքականությանն ու գաղափարախոսությանը»։

(ՍՄԿՊ ծրագիր)

§ 39. Ի՞ՆՉ Է ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ։ Համառոտակի, ընդհանուր գծերով, ծանոթանալով գաղութատիրության պատմության հետ, մենք տեսանք, որ նա մեծագույն չարիք է, որի դեմ ըմբոստանում են մարդկային բանականությունը, ժողովուրդների խիղճը, տենչերն ու իղձերը։ Ինչո՞վ է բացատրվում նրա տևականությունը, ո՞րն է ընդհանրապես գաղութատիրության և, մասնավորապես, նեոգաղութատիրության սոցիալ-տնտեսական էությունը։

Գաղութատիրությունը, տնտեսական տեսակետից, ուրիշի հողերը զավթելու, գերշահույթի գաղութային աղբյուրներ նվաճելու, մետրոպոլիայի համար վաճառահանման ու հումքի շուկաներ ձեռք բերելու քաղաքականություն է, քաղաքական տեսակետից՝ բնիկների պետական անկախությունը վերացնելու, նրանց իրավազրկելու, տիրապետող ազգի կող-

մից պետական-վարչական և իրավական այնպիսի նորմաներ պարտադրելու քաղաքականություն, որոնք միանգամայն խորթ են բնիկ ժողովրդի ոգուն ու պատմական անցյալին։ Իրավաբանական-իրավական տեսակետից գաղութատիրությունը բանդիտիզմ է, որ գործում է ջունգլիների օրենքով։ Տեսական առումով գաղութատիրությունը ռասիստական ու կոսմոպոլիտական «տեսություններին» և «ուսմունքներին» մի այլանդակ կոմպլեքս է, «տեսություններ», որոնք հաճախ տրամաբանորեն չեն կապվում միմյանց հետ։

Էմոցիոնալ և հոգեբանական տեսակետից գաղութատիրությունը ռազմականապես ուժեղ տերության երկյուղն ու ատելությունն է մյուս երկրների ու ժողովուրդների սոցիալ-տնտեսական առաջադիմության նկատմամբ։

Գաղութատիրությունը, այսպիսով, բարձր աստիճանի հասցված պարազիտիզմ է։ Այն ոչ թե կեղեքման, շահագործման սովորական մեթոդ է, այլ ժողովուրդների ստրկացման ու ոչնչացման շատ բարդ, յուրատեսակ պետական սիստեմ։ Դա տիրապետող ազգի և ճնշված ազգի, մետրոպոլիայի և գաղութի այնպիսի հարաբերություն է, երբ ագրեսորը՝ տիրապետողը, թույլ, տուժող ժողովրդի նկատմամբ կիրառում է, Կ. Մարքսի արտահայտությամբ, «իսկական արյունարբության» մեթոդներ։

Հոլանդացի առաջադեմ գրող Մուլտատուլին գաղութային շահագործման մեքենան համեմատում է մի այնպիսի պոմպի հետ, որը միացված է խողովակների մի ամբողջ սիստեմի. դրանք իրենց անթիվ-անհամար ճյուղավորումներով ծավալվում են գաղութային երկրների միլիոնավոր բնակիչների սրտերում։

Գաղութատիրության բոմն հիմքում դրված է գերշահույթի գաղութային աղբյուրներ գավթելու, ժողովուրդներին կեղեքելու և անգամ ոչնչացնելու ձգտումը։ Խաչատուր Աբովյանը Հայաստանի նկատմամբ գաղութային տիրապետությունն անվանել է «Վերք Հայաստանի» և պատկերել է, թե որքան խոր ու մահացու է այդ վերքը ժողովրդի համար։

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի սեսիաներից մեկում, գաղութային բոլոր երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու հարցին նվիրված քանաձևի քննարկման ժամանակ, Չադի պատվիրակը գաղութատիրությունն անվանեց աշխարհի ամենամեծ չարիքը, իսկ Մալիի պատվիրակն ասաց, որ գաղութատիրությունը ավազակություն է, ավանտյուրիզմ, ուրիշի հարստության մեծածախ առևտուր[1]։

Մեր մոլորակի ժողովուրդների առողջ մարմնի վրա այդպես գոյացավ չարորակ մի ուռուցք։

§ 40. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ «ՀԱՎԵՐԺԱԿԵՆԴԱՆ ՄԱՅՐՆ Է ԺՈՂՈՎՐԴԻ»։

Գաղութարարները ձգտում են զավթել ուրիշի հողերը. Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ նրանք մարտնչում են «տնտեսական տերիտորիայի համար»։

Իսկ ի՞նչ բան է հողը ժողովրդի համար։

Մարդի կոչվող փոքր ժողովուրդն ունի մի իմաստուն ասացվածք՝ «Երկիրը հավերժակենդան մայրն է ժողովրդի»։ Հիրավի։ Յուրքանչյուր ժողովուրդ մեր մոլորակի վրա ունի իր որոշ հողակտորը, որն իր ազգային տերիտորիան է։ Այդ հողը՝ նրա ընդերքը, դաշտերը, անտառները, ջրերը, կլիման, իր կնիքն է դնում բնակիչների խառնվածքի, արտաքին կերպարի վրա։ Այդ հողը նրանց գոյության միակ աղբյուրն է։ Հողը ոչ միայն ժողովուրդների ընտանիքի, այլև երկրագնդի վրա ամեն մի կենդանի, սպրող-շնչող էակի ու արարածի մայրն է։

Վերջին մի քանի տարում մարդը գիտության ու տեխնիկայի բնագավառներում այնպիսի ապշեցուցիչ հաջողությունների հասավ, որ առաջին անգամ գործնականորեն հնարավոր դարձավ իր մայր մոլորակից պոկվելը։ Եվ այսօր արդեն մարդը ակոսում է տիեզերքը, պատնում դեպի նրա հեռաստանները։ Բայց մարդն արդյո՞ք կգտնի «նոր մայր» այդ միջմոլորակային տարածություններում։

Թողնենք հիպոթեզները և վերադառնանք հիշյալ իմաստուն խոսքին. «Երկիրը հավերժակենդան մայրն է ժողովրդի»։ Մենք, հայերս, ինչպես նաև մեր հարևան ժողովուրդները, հարազատ ենք այդ խոսքի ոգուն՝ «Մայր Հայաստան», «Матушка Русь» ենք անվանում մեր օրրաններին։

Ճիշտ է, մարդը կարողացավ պոկվել իր մայր երկրից, բայց առայժմ չի կարող ապրել առանց նրա։ Մեր մոլորակը,

[1] «Правда», 3 декабря, 1960.

որ տիեզերականության դարում այնքան էլ մեծ չէ, այնուամենայնիվ, առաջվա նման թանկ է իր բնակիչների համար։ Երբ երկրորդ տիեզերագնաց Գերման Տիտովը տիեզերքում մնաց ավելի քան մեկ օր և 17 պտույտից հետո վայրէջք կատարեց Երկրի վրա, ոտքի տակ զգաց սովորական հողը, նա մի առանձին ջերմությամբ զգաց, թե որքա՜ն գեղեցիկ է Երկիրը։ Նա, 1962 թվականի մայիսին Վաշինգտոնում հանդես գալով գիտնականների առջև, խոսեց այն մասին, թե ինչպես էր տիեզերական տարածությունից հրճվում «գեղանի մոլորակով... Գեղեցիկ է նա՝ մեր հին, բայց հավերժ երիտասարդ, ծաղկող Երկիրը»։ Հասկանալի է, որ ամեն մի երկիր գեղեցիկ ու թանկ է իր ժողովրդի համար, գեղեցիկ ու թանկ է իրենց մայր։ Իզուր չեն ասում՝ «ձկանը՝ ջուր, թռչունին՝ օդ, իսկ մարդուն՝ հող»։ Օտարության մեջ ապրող հայերի համար հայրենի հողի կարոտը դարձել է պաշտամունքի նման մի բան, «երազի մեջ երազ»։ Դանիել Վարուժանի գրատեղանի վրա միշտ դրված էր «ափ մը հող», որ Հայաստանից բերել էին «արյունոտ ճանապարհներով»։ Այդ բանը միլիոնավոր հայերի համար դարձել է տրադիցիա։

Հայրենի հողի նկատմամբ այսպիսի սերը պատահական երևույթ չէ։ Երկիրը մայր է, առանց որի չի կարելի ապրել։ Միայն հայրենի հողն է անմահություն տալիս ժողովրդին։ Ինչքա՜ն երգեր են հորինվել ու ինչքա՜ն գրքեր են գրվել հայրենիքի մասին։ Աշխատավոր մարդիկ աշխատանքով են փառաբանում հայրենիքը, քրտինքով ցողում նրա հողը, տներով, պալատներով, ծաղկուն դաշտերով, այգիներով ու անտառներով, գործարաններով ու ֆաբրիկաներով զարդարում այն, խորապես գիտակցելով, որ ինչքան լավ զարդարեն երկիրը, այնքան նա կգեղեցկանա ու կհարստանա, այնքան կգեղեցկանա ու կհարստանա նաև իրենց կյանքը։ Վտանգի պահին նրանք զենքով պաշտպանում են հայրենիքը, նրան նվիրում են ամենաթանկ բանը՝ իրենց կյանքը։

Սակայն, եթե հայրենիքն այս կամ այն ժողովրդի «հավերժակենդան մայրն է» և առանց նրա այդ ժողովուրդը դատապարտված է մահվան, ապա ամբողջությամբ վերցրած՝ մեր մոլորակը մարդկության, այսինքն՝ աշխարհի բոլոր ժողովուրդների «հավերժակենդան մայրն է»։ Եվ չնայած մեր մոլորակն ի վիճակի է հավասարապես ապահովելու այդ բոլոր ժողովուրդների համատեղ բարգավաճումը, այնուամենայնիվ, գաղութատերերը ձգտում են ապրել թույլ ու փոքր ժողովուրդների հաշվին, նրանց երկրների հարստությունների հաշվին, թշնամություն սերմանելով նրանց միջև։

§ 41. ՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅՈՒՆ։ Ակներև է, որ պետական սուվերենությունը եղել է և մնում է ինչպես բուն ժողովրդի, այնպես էլ նրա երկրի պահպանության գլխավոր միջոցը։ Պետական անկախությունը ժողովրդի համար նույնն է, ինչ որ արևը բուսական աշխարհի համար։ Պետականությունից զուրկ ժողովուրդը բռնության աշխարհում զոհ է դառնում, տանջանքի, տառապանքի ու մահվան է մատնվում։ Պատմությունն անհերքելիորեն վկայում է, որ երկրները բարգավաճել են այն ժամանակ, երբ եղել են ազատ ու անկախ և, ընդհակառակն, հետադիմել՝ հենց որ զրկվել են պետականությունից, դարձել են իրենց հեռու կամ մոտիկ հարևանների զոհերը։

Հասկանալի է, որ նախքան ուրիշի տերիտորիան գրավելը, գաղութարարները ամենից առաջ պետք է վերացնեն նրա պաշտպանին, այսինքն՝ ժողովրդին զրկեն ինքնուրույնությունից։ Գաղութարարները հենց այդպես էլ անում են։

§ 42. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ։ Տերիտորիան, այսպիսով, ժողովրդի կենսական բարիքների աղբյուրն է, ուստի բնական է, որ նրա իսկական տերը կարող է լինել միայն տվյալ տերիտորիայում ապրող աշխատավոր ժողովուրդը, այլ ոչ թե շահագործողները՝ ստրկատերերը, կալվածատերերը, կապիտալիստները կամ մի ինչ-որ թագավոր, կայսր, վարչապետ ու առավել ևս՝ օտար զավթիչ։ Դա, ամեն մի ժողովրդի, անձեռնմխելի իրավունքն է։

Արդյո՞ք այսպես է դրությունը շահագործողական հասարակություններում։

Ո՛չ, այդպես չէ։

Ստրկատիրական և ֆեոդալական հասարակության մեջ տերիտորիան համարվում էր տիրապետների՝ թագավորների, կայսրերի, իսկ կապիտալիզմի ժամանակ՝ պետության

«անձնական սեփականությունը»։ «Տերիտորիան հանրային սեփականությունն է պետության, այլ ոչ թե մի առանձին ազգի,— ասված է միջազգային իրավունքի նշանավոր բուրժուական մասնագետ Լ. Օպենհայմի աշխատության մեջ։— Ամեն մի անձ, ամեն մի իր, որ գտնվում են պետական տերիտորիայում, ենթարկվում է պետության գերագույն իշխանությանը»[1]։ Միջազգային իրավունքի սուբյեկտներ են ոչ թե ժողովուրդները, այլ պետությունները[2]։

Հետևաբար, «միջազգային իրավունք» տերմինը փաստորեն նշանակում է ոչ թե իրավունք ազգերի, ժողովուրդների միջև, այլ իրավունք պետությունների միջև։ Այս բանը հարկադրված են խոստովանելու նաև իրենք՝ բուրժուական մասնագետները։ Միջազգային իրավունքը կարգավորում է ոչ թե ժողովուրդների, այլ պետությունների փոխհարաբերությունները, սովորաբար հանրագումարն է այն իրավական ու պայմանագրային նորմերի, որ պետությունները պարտադիր են համարում իրենց փոխհարաբերություններում[3]։

Սակայն տերիտորիայի նկատմամբ ժողովրդի իրավունքն այնքան ակներև է, որ այն ի վիճակի չէր չնկատել անգամ Գրոցին (1583—1625 թթ.), որին Արևմուտքում համարում են միջազգային իրավունքի «հայր»։

Եվ, այնուամենայնիվ, բնական իրավունքով չեն առաջնորդվում։ Ինչո՞ւ։ Շատ պարզ։ Այդպիսի իրավունքը ձեռնտու չէ տիրող դասակարգերին։ Նրանց ձեռնտու է այն իրավունքը, որը հնարավորություն է տալիս շահագործելու սեփական երկրի աշխատավոր զանգվածներին, տիրել երկրի հարստությանը, այն իրավունքը, որն «օրինականացնում է» գաղութների ժողովուրդների կեղեքումը և նրանց «հավերժակենդան մոր» զավթումը։

§43. ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՍՈՒՎԵՐԵՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԲԱԺԱՆ ՉԷ։ Գաղութատիրության երկրպագուները հնարել

[1] Л. Оппенгейм, Международное право, перевод с 6-го английского издания, том I, полутом 2, М., 1949, стр. 26—27.

[2] Там же, том I, полутом 1, М., 1948, стр. 41.

[3] Там же, стр. 26—27.

են (և հնարում են) շատ «տեսություններ», որպեսզի արդարացնեն ուրիշի հողերի զավթումը կամ բռնագրավումը։ Նրանք այդ բանն անում են ելնելով կամ «պատերազմի իրավունքից», կամ ըստ վաղեմության տերիտորիա զավթելու «իրավունքից», կամ հանուն «հատարակության բարօրության» և այլն, և այլն։ Այս բոլոր «սկզբունքների» սնանկությունն ակներև է։ Չի կարելի ժողովրդին զրկել այն պատճառաբանությամբ, թե՝ նա թույլ է, կամ թե՝ նա իր տերիտորիան «կորցրել է» 30 կամ 200 տարի առաջ։ Հրեաները իրենց սեփական հողից զրկվել էին մոտավորապես երկու հազար տարի առաջ, բայց նրանք այդ հողը վերստացան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և այնտեղ ստեղծեցին իրենց պետությունը, որ ճանաչվեց շատ երկրների կողմից։ Այս օրինակը վկայում է, որ բուրժուական աշխարհում սուվերենությունը անբաժանելի չէ, իրավունքը ուժն է, նա է ընթանում իրավունքի առջևից։

§ 44. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ։ Միջազգային իրավունքի սովետական սկզբունքները, մասնավորապես ազգային տերիտորիայի հարցում, ամենից արդար և իրավաբանորեն հիմնավորված սկզբունքներ են։ «...Տերիտորիան նյութական արտահայտությունն է այդ տերիտորիայի ժողովրդի գերիշխանության, անկախության ու անձեռնմխելիության»[1]։

Սովետական կոնստիտուցիայում նշվում է, որ «հողը համաժողովրդական սեփականություն է»։ Մարքսիզմ-լենինիզմը ընդունում է ոչ միայն ժողովրդի սուվերենությունը ազգային տերիտորիայի նկատմամբ, այլև նրա անվիճելի այն իրավունքը, որ ստեղծվի աշխատավոր մեծամասնության անկախ, և ոչ թե շահագործվող փոքրամասնության պետություն։ Մեր օրերում սուվերենությունը իրավունքն է այն ժողովուրդների, որոնք թոթափել են և թոթափում են գաղութային ստրկության լուծը[2]։

[1] Академия Наук СССР, Международное право, М., 1951, стр. 257.

[2] Журнал «Международная жизнь», № 9, 1960, статья Е. Коровина, Суверенитет и мир.

§ 45. ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։ Գաղութատիրությունը, այսպիսով, ամենից առաջ հետապնդում է տնտեսական նպատակներ, այսինքն՝ ձգտում է զավթել ուրիշ ժողովուրդների «հավերժակենդան մորը», որը գաղութային գերշահույթի աղբյուր է դառնում։ Այդ նպատակին հասնելու համար նա կանգ չի առնում ամեն տեսակի բռնություն և կամայականություն գործադրելու առջև։ «Բռնությունը միայն միջոց է, իսկ նպատակը տնտեսական օգուտներ քաղելը (Ֆ. Էնգելս)։ Կապիտալիզմի օրոք ստրկացումը ծառայում է միայն կապիտալի կուտակման և շահույթներ քաղելու նպատակներին։

Գաղութարարները տարբեր ճանապարհներով են հասնում իրենց նպատակներին, բայց բոլոր դեպքերում գաղութային գերշահույթի աղբյուրների զավթման դրդապատճառներն են որոշում գաղութատիրության բուն էությունը։

Իհարկե, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների, գիտության ու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց տնտեսական էքսպանսիաների ձևերը փոխվել են։ Օրինակ, հին Տյուրոսի գաղութարարները ձգտում էին առևտրական նավահանգիստներ ունենալ Միջերկրական ծովի երկրներում։ Կարթագենը պարտված ժողովուրդներից արդեն տուրք էր պահանջում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև օժանդակ զորք։ Հռոմի նվաճողները զավթած մարդերը բնամթերային հարկի տակ էին գցում և ստրուկներ էին վերցնում։

Նվաճված երկրները կողոպտվում և ավերվում էին ֆեոդալ կառավարիչների կողմից, սակայն նրանք էլ ստրկատիրական ժամանակաշրջանի գաղութարարների նման դրանից հետո չէին գնում. ձեռք չէին տալիս գաղութների ներքին տնտեսական հարաբերություններին։ Կապիտալի նախասկզբնական կուտակման և արդյունաբերական կապիտալիզմի ժամանակաշրջանում դրությունը փոխվեց։ Գաղութարարներին հարկավոր էին նյութական արժեքներ, և նրանք բացահայտորեն կողոպտում էին գաղութային ժողովուրդներին։ Նրանց հարկավոր էին աշխատող ձեռքեր, և նրանք «կոնտրակտացիայով» կազմակերպում էին աշխատուժի արտահանում իրենց ցանկացած վայրը։ Գաղութները, այսպիսով, ներգրավվում էին համաշխարհային շրջանառության մեջ, դառնում վաճառահանման շուկա և հումքի աղբյուր։

Եվ, այնուամենայնիվ, գաղութարարները հիմնականում չէին փոխում արտադրության բնույթը։ Գաղութային շահագործման ձևերի մեջ բեկումը տեղի է ունենում իմպերիալիզմի դարաշրջանում։ Նախորդներից վերցնելով կեղեքման բոլոր տեսակի եղանակները, գաղութարարները ձգտում են աշխարհի ժողովուրդներին դարձնել իրենց կոլեկտիվ ստրուկները, ներխուժում են նրանց հասարակական-տնտեսական կյանքի բնագավառը։ Ժամանակակից գաղութարարները ավելի հեռուն են գնում՝ թափանցում են ստրկացված ժողովուրդների նաև հոգևոր կյանքի ոլորտները։

§ 46. ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։ Տնտեսական նպատակներն իրենց հերթին ծնում են քաղաքական նպատակներ։ Դրանք արտահայտվում են նվաճված երկրի պետական սուվերենության ոչնչացմամբ և նվաճող երկրի քաղաքական ու վարչական իշխանության հաստատմամբ։

Այդ իշխանությունը գաղութարարներն իրագործում են կա՛մ անմիջականորեն՝ մետրոպոլիայի պաշտոնյաների միջոցով (կլասիկ գաղութատիրություն), կա՛մ իրենց վերահսկողության ու ղեկավարման ներքո գտնվող տեղական կառավարության միջոցով (նեոգաղութատիրություն)։ Ընդսմին, նոր գաղութարարները դիմում են ամեն տեսակ կեղծիքների, որ թաքցնեն իրենց քաղաքական նպատակները։

Նրանք, օրինակ, հայտարարում են, որ այդ տիրապետությունները, իբր, «իրավահավասար» են մետրոպոլիայի հետ կամ պնդում, թե դրանք մետրոպոլիայի հետ կազմում են մի միասնական ամբողջություն, «մի պետություն» և այլն, և այլն։ Այսպես, 1908 թվականի գաղութային խարտիայի համաձայն Բելգիան և Կոնգոն կազմում էին կարծես թե մի «միասնական պետություն». Այժիրը օրենքով հայտարարվեց «Ֆրանսիայի անկապտելի մասը»։ Իսկ Մարոկկոն, իսկական անկախություն նվաճելուց առաջ (երկրորդ համաշխարհային պատերազմից հետո) թղթի վրա համարվում էր «անկախ պետություն» և օրենքները (դահիրները) հրապարակվում

էին «անկախ» սուլթանի անունից։ Դրությունն այսպես է նաև Մոսկատի սուլթանությունում, «անկախ» Քուվեյթում։ «Իրավահավասար են» համարվում նաև Ֆրանսիական միության անդամները։

Սակայն որքան էլ բազմազան լինեն քաղաքական ստրկացման ձևերը, նրանց էությունը նույնն է՝ գաղութների բնակիչները զրկված են ամենահիմնականից՝ իրենց սեփական բախտը, հայրենի երկրի հարստությունները տնօրինելու իրավունքից, իրենց կյանքը ցանկացած ձևով կառուցելու իրավունքից և նույնիսկ ոչ միայն իրենց ներկայի ու ապագայի մասին մտածելու, այլև իրենց անցյալը մտաբերելու իրավունքից։

Գաղութներում գավթելով գերագույն իշխանությունը, գաղութարարները դրանով իսկ իրենց տիրապետությունների ժողովուրդներին «իրավաբանորեն» օրենքից դուրս են դնում նաև միջազգային իրավական կյանքում։ Գաղութային ժողովուրդների տնտեսական ու քաղաքական ճնշման, հոգևոր դեգրադացիայի, ֆիզիկական ոչնչացման և ասիմիլյացիայի քաղաքականությունը հայտարարում են մետրոպոլիայի «ներքին գործ», որը չի գտնվում որևէ միջազգային կազմակերպության կամ պետության իրավասության տակ։

§ 47. ԴԱՐՁՅԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։ Գաղութատիրությունը ինչպես տեսանք, միշտ հանդես է եկել երկու ձևով՝ տնտեսական ու քաղաքական-տնտեսական։ Հին Տյուրոսը, իսկ այնուհետև Կարթագենը հիմնականում տնտեսական նպատակներ էին հետապնդում անհամարժեք առևտրական փոխանակության ասպարեզում, իսկ Հռոմը քաղաքական-տնտեսական նպատակ էր հետապնդում։

Դրանք այլևայլ անուններով հետագա զարգացում ստացան ֆեոդալիզմի ու կապիտալիզմի դարաշրջանում։ Կարթագենի տնտեսական գաղութատիրությունն սկսեցին անվանել արևմտյան (դեմոկրատական, անգլո-սաքսոնական կամ հյուսիսամերիկյան), իսկ Հռոմի քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը՝ արևելյան (բռնապետական, ռազմա-ֆեոդալական)։ Ընդսմին, հետաքրքրական է նշել բնորոշ մի երևույթ. այսպես կոչված անգլո-սաքսոնական կամ հյուսիսամերիկյան գաղութատիրությունը դինվեց հեռահար նպատակի հռոմեական քաղաքականության տակտիկական մեթոդներով, իսկ ռազմա-ֆեոդալական գաղութատիրությունը (բյուզանդական, թուրքական, ռուսական ցարերի գաղութատիրությունը և այլն) Կարթագենի տակտիկական մեթոդներով, որն իր ենթակա երկրներում իշխում էր կամայականության, ուժի, սարսափի միջոցով։

Տնտեսական գաղութատիրությունը փոքր ու թույլ երկրների քաղաքական ու պետական անկախության նկատմամբ համեմատաբար հանդուրժող է, միայն թե տնտեսական օգուտներ քաղի նրանցից։ Քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը, ընդհակառակն, անհանդուրժողություն է հանդես բերում թույլ ժողովուրդների թե՛ պետական անկախության, թե՛ քաղաքական, կուլտուրական ու հոգևոր գործունեության նկատմամբ։ Եթե տնտեսական գաղութատիրությունը բացահայտորեն հեռուն չի գնում և բավարարվում է միայն գաղութային գերշահույթի մի քանի աղբյուրների ձեռք բերումով և այլն (անհամարժեք առևտրական փոխանակությամբ, կապիտալի արտահանությամբ և այլն), ապա քաղաքական-տնտեսականը (որ ցանկանում է անպայման բոլոր աղբյուրների տերը դառնալ) գործում է հետևյալ սկզբունքով՝ քոնը ինձ է, իմը իմն է, ամեն ինչ իմն է։

Եվրոպայում կան մի շարք փոքրիկ տերություններ։ Դրանցից Սան-Մարինոյի և Լյուքսեմբուրգի, այսպես կոչված, թզուկ պետությունները համարվում են Եվրոպայի հնագույն պետությունները։ Սան-Մարինո հանրապետությունը հիմնվել է 301 թվականին, իսկ Լյուքսեմբուրգը՝ 963 թվականին։ Այս պետությունների չափերն ու բնակչությունն աննշան են։ Սան-Մարինոյի տարածությունը ընդամենը 100 քառ. կմ է, բնակչությունը՝ 15000 մարդ։ Լյուքսեմբուրգն ունի մոտավորապես 3000 քառ. կմ տարածություն և 300 հազարից մի փոքր ավելի բնակչություն։ Այսպիսի պետությունների գոյությունը պայմանավորվում է գլխավորապես այն բանով, որ Եվրոպայում հիմնականում գործել է տնտեսական գաղութատիրությունը։ Իսկ երբ գլուխ է բարձրացրել քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը (Նապոլեոն, Հիտլեր), ապա այն անհան-

դուրժողություն է ցուցաբերել այդպիսի երկրների ազատության նկատմամբ և հաշվի է նստել միայն մեծ ու ուժեղ պետությունների հետ։ Նույնը կարելի է ասել Կենտրոնական ու Հարավային Ամերիկայի փոքր կամ թույլ երկրների մասին։

§ 48. ՅԱՐԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ։ Այդ են վկայում ոչ միայն ցարական կառավարության ամբողջ ռազմական, պետական-վարչական ու գաղափարական գործունեությունը, այլև նրա ղեկավար պաշտոնյաների գաղտնի նամակագրությունը։

Ահա թե ինչ էր ասվում ռուսաց ռազմական մինիստրության 1916 թ. գրության մեջ, որը հավանություն էր գտել արտաքին մինիստրության և ցարի կողմից.

«Եթե Ռուսաստանը միշտ ձգտել է և ձգտում է յուր ծայր երկրներն իրեն սեփականացնելու ամրապես և ըստ կարելույն ազգայնացնելու, ապա... Ֆրանսիայի շահերը բացառապես ուղղված պիտի լինեն այն նպատակին, որ ինքը լավագույն շահագործման ենթարկե գրված տերիտորիան, ընդ որում վարչական տեսակետից նա հակված է լինելու հիշյալ տերիտորիայում բնակվող ցեղերին շնորհելու ըստ կարելույն լիակատար ինքնուրույնություն... ամենևին հաշվի չառնելով ռուսաց պետության շահերը»[1] (ընդգծումը մերն է։— Հ. Ս.)։

Ասված է շափազանց պարզորոշ։

Վերոհիշյալ վավերաթուղթը բնորոշ է և մի այլ տեսակետից։ Այն վկայում է, որ ցարական գաղութատիրության ջատագովները հիանալի հասկանում էին արևմտյան երկրների, մասնավորապես իր դաշնակիցների՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի տնտեսական գաղութատիրության քաղաքականության բուն նպատակը, խոստովանում էր նրանց քաղաքականության գերազանցությունն իրենի նկատմամբ, որը սարսափի մեջ էր գցում ցարական չինովնիկներին։

Նույն գաղտնի փաստաթղթի մեջ նաև ասված է. «Ֆրան-

[1] «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան։ Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից։ Պետական հրատարակչություն, Երևան, 1926, էջ 47։

սիական միսիոներական կազմակերպությունները ամերիկյան նման կազմակերպությունների հետ արդեն արել են իրենց գործը՝ հայերի համակրությունն ու հայկական իդեալները Ռուսաստանից ու ռուս պետությունից հեռացնելու իմաստով և կարելի է ասասել, որ խնդրի նոր պայմաններում այս նոր տկսած ձեռնարկումները վտան իրենց առատ պտուղը»[1]։

Քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը, որի բազան ֆեոդալական միապետությունն ու հետամնաց տնտեսություններն էին, հասկանալի է, չէր կարող մրցել նորագույն շրջանի տնտեսական գաղութատիրության հետ, քանի որ վերջինս հենվում է առավել հզոր տնտեսական բազայի և բուրժուական դեմոկրատիայի վրա։ Ու, այնուամենայնիվ, ինչպես միշտ, քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը առաջնորդվել է ոչ թե պաշտպանողական, այլ հարձակողական տակտիկայով։

Արևմուտքի առավելությունները չեզոքացնելու համար ցարիզմը ծրագրում է չինական պարսպով Ռուսաստանը կտրել արևմտյան երկրներից։ Թուրքիան, որքան էլ տարօրինակ է, պետք է այդ պարսպի դերը խաղար։ Պլանավորելով թուրքական կայսրության մասնատումը, ցարական Ռուսաստանը միաժամանակ հնարավոր ամեն ինչ անում էր, որ նա լիովին չքայքայվեր։ Ինչո՞ւ։ Շատ պարզ. ցարիզմի լծի տակ ընկած ժողովուրդները, նկատի ունենալով թուրքական լծի ավելի մեծ վտանգը, չէին ցանկանա անջատվել Ռուսաստանից։ Արևմուտքի երկրները հաշվի չէին նստում «ռուսաց պետական շահերի» հետ, այնինչ թուրքերը չէին կարող այդպես վարվել։ Այդ մասին գաղտնի փաստաթղթերում բացահայտորեն խոսում էին թե՛ արտաքին գործերի մինիստր Ն. Ն. Պոկրովսկին, թե՛ ռազմական հրամանատարությունը՝ ի դեմս գեներալ Բելյաևի, և թե ինքը՝ Նիկոլայ II-ը։

Բերենք միայն մի փաստաթուղթ։

«Մեր շահերին չի համապատասխանում փոքրասիական մեր ապագա սահմանների մոտ որևէ Եվրոպական մեծ պետության հաստատվելը, թեկուզ և վերջինս այժմ բարեկամ

[1] «Հայկական ավտոնոմիան» և Անտանտան, էջ 48։

էլ լինի մեզ,— ասում է արտաքին գործերի մինիստր Ն. Ն. Պոկրովսկին Լոնդոնի դեսպան, կոմս Ա. Կ. Բենկենդորֆին ուղղած իր հեռագրում (№ 5387,8,21 դեկտեմբերի 1916 թ.)։ Մեզ համար էականապես անհրաժեշտ է, որ Փոքր Ասիայում պահպանվի ըստ կարելույն մեծ սահմաններով անկախ տաճկական մի պետություն, որը քաղաքականապես ու տնտեսապես մեր կողմը հակված լիներ»։

Հետաքրքիր է նշել, որ այս հեռագրի բնագրի վրա կա Նիկոլայ II-ի ձեռքով արված հետևյալ մակագրությունը. «Ճիշտ է»։ Արքայական հրամանատարական կայան, դեկտեմբերի 12, 1916 թ.»[1]։

Մասամբ Արևմուտքի և Նոր Աշխարհի դեմոկրատական երկրների հետ ընդհանուր սահման ունենալու Ռուսաստանի երկյուղով է բացատրվում այն դրությունը, որ Թուրքիան, Իրանը և Աֆղանստանը պահպանեցին իրենց կիսանկախությունը։ Իսկ այնտեղ, ուր ցարիզմը ընդհանուր սահման ուներ եվրոպական պետությունների հետ, չէր կարող հույս դնել ճնշված ժողովուրդների համակրանքի, իր գաղութային քաղաքականության հաջողության վրա։ Ահա թե ինչու Բուլղարիան, Ռումինիան ու Հունաստանը, որոնց թուրքական լծից ազատագրելու համար այնքան շատ բան է արել ռուս ժողովուրդը, կազմեցին ինքնուրույն պետություններ։ Կենտրոնական Եվրոպայում ապրող սլավոնական բնակչությունը, ինչպես այդ մասին ասել է Վ. Ի. Լենինը, իրեն զգում էր անհամեմատ լավ ու ազատ, քան այն սլավոնները, որոնք ապրում էին ցարական Ռուսաստանում։

§ 49. ԿԼԱՍԻԿ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃՈՒՄԸ ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ։ Գաղութային ճնշման տնտեսական ու քաղաքական ձևերը չափազանց խայտաբղետ են։ Այդ բազմազանությունը շահագործող հասարակարգերն են մտցնում իրենց փոփոխության ժամանակ, մի ֆորմացիան մյուսով փոխարինելիս։

Մենք արդեն տեսանք, թե ինչպես դարերի ընթացքում փոխվում էին գաղութատիրության տնտեսական նպատակները։ Այդ նպատակները ոչ միայն նրանց համար ստեղծում են ժողովուրդների ստրկացման համապատասխան մեթոդներ, այլև որոշում են ամբողջ գաղութատիրության ու իմպերիալիզմի դեմքը։ Ինչպես հայտնի է, գաղութային քաղաքականությունը և իմպերիալիզմը գոյություն ունեին նաև կապիտալիզմի նորագույն փուլից առաջ և նույնիսկ մինչև կապիտալիզմը։ Օրինակ «Ստրկության վրա հիմնված Հռոմը գաղութային քաղաքականություն էր վարում և իմպերիալիզմ էր իրականացնում»[1] հին աշխարհում։

Սակայն «Հավերժական քաղաքի» կայսրության մեջ արտադրահարաբերությունները խարսխվում էին ստրուկի աշխատանքի վրա, մինչդեռ կապիտալիզմի կայսրություններում խարսխվում են վարձու բանվորի աշխատանքի վրա։ Հետևաբար, ինչպես գաղութային քաղաքականության մասշտաբները, այնպես էլ նրա տնտեսական խնդիրները տարբեր էին։ Կապիտալիզմը փոխեց հին գաղութատիրության ու իմպերիալիզմի դեմքը։ Եվ նա չէր կարող չփոխել։

Արևմտյան Եվրոպայում կապիտալիզմի զարգացման արշալույսին, կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում, սկսվում է գաղութատիրության քաղաքականության պատմության նոր էտապը՝ բոլոր «անտեր», «չզբաղեցված» տերիտորիաների զավթման դարաշրջանը։ Այդ պրոցեսն սկսվեց XV դարի առաջին կեսին և առանձնապես ուժգին բնույթ ստացավ XVII դարում։ Ինչպես ասել է Վ. Ի. Լենինը, գոյանում են «գաղութատիրական նոր երկրներ»՝ Պորտուգալիայի, Իսպանիայի, Հոլանդիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի (շարժում դեպի Ուրալից այն կողմ) կայսրությունները։

Իմպերիալիզմի սկզբնավորմամբ սրվում է աշխարհի վերաբաժանման համար մղվող պայքարը։ «...Քննարկվող ժամանակաշրջանի բնորոշ գիծը աշխարհի վերջնական բաժանումն է, վերջնական ո՛չ այն իմաստով, որ վերաբաժանումն անհնարին է այլևս,— ընդհակառակը, վերաբաժանումները հնարավոր են և անխուսափելի,— այլ այն իմաստով, որ կա-

[1] «Հայկական ավտոնոմիան» և Անտանտան, էջ 65։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 344—345։

պիտալիստական երկրների գաղութային քաղաքականությունն ավարտել է արդեն մեր մոլորակի վրայի չգրավված հողերի զավթումը։ Առաջին անգամ է, որ աշխարհը բաժանված է արդեն այնպես, որ այսուհետև լինելու են միայն վերաբաժանումներ, այսինքն՝ անցում մեկ «տիրոջից» մյուսին, ոչ թե անցում անտերությունից որևէ «տիրոջ»[1])։

Այսպիսով, կապիտալիզմի գաղութային քաղաքականությունը, ավարտելով «մեր մոլորակի չգրավված հողերի զավթումը», վերածվել է մի այնպիսի քաղաքականության, որը հետապնդում է արդեն ուրիշ նպատակ՝ աշխարհի վերաբաժանումը։ Դա գաղութային քաղաքականության պատմության նոր էտապ է, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, XX դարը եղավ «հին գաղութատիրությունից դեպի նոր գաղութատիրությունը կատարված շրջադարձի կետ»։ Այդ գաղութատիրությունը վերաճեց նեոգաղութատիրության՝ հիմնական հատկությունների զարգացման միջոցով։

Ինչպես ամեն մի մարդ, այնպես էլ յուրաքանչյուր դար ունի իր դեմքը, միայն իրեն հատուկ ձայնը։ Սակայն, մարդկանց նման, դարերն էլ շատ բանով հիշեցնում են իրար։ XX դարը դարձավ շրջադարձային կետ։ Մարդկության ճակատագրի վրա ունեցած իր ներգործությամբ այդ դարը տարբերվում է բոլոր նախորդ դարերից։ Այստեղ բանականությունը և խելահեղությունը, օրենքն ու կամայականությունը, ազատությունն ու ստրկությունը, վսեմ գաղափարն ու ստոր դեմագոգիան այդ աշխարհում համանման ասպարեզ ունեն իրենց գործունեության համար և զարգանում են զուգահեռաբար։

XX դարն սկսվել է, ինչպես ճիշտ նկատել է Բ. Գիմբարսկին, ոչ թե 1901 թվականի հունվարի 1-ի գիշերը, այլ մի քանի տարի հետո, ինչպես և XIX դարը, որն սկսվել է Վատերլոոյի ճակատամարտով։

1905 թվականին նորվեգական ժողովուրդը Շվեդիայից անջատվեց առանց որևէ կրակոցի և բռնեց անկախ զարգացման ուղին, իսկ հարավում նույնպիսի մի փոքր ժողովուրդ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 337։

ազատ ապրելու նման ձգտումների համար ֆիզիկական բնաջնջման էր ենթարկվում։

Առաջին համաշխարհային պատերազմի ճակատներում մահը դեռ շարունակում էր իր խելահեղ պարը, երբ «Ավրորայի» կրակոցները աշխարհին ազդարարեցին նոր դարաշրջանի ծնունդը մարդկության պատմության մեջ։

Դարի ուրվագծերը վերջնականապես որոշվեցին։

Մի կողմից ստեղծվում էր մի այնպիսի աշխարհ, որտեղ ժողովուրդներն ազատվում էին ճնշումից, հաստատվում էր իրոք ժողովրդական դեմոկրատիայի իշխանություն, մյուս կողմից հին աշխարհը դառնում էր կամայականության ու բռնության ավելի ու ավելի դաժան ասպարեզ։ Բանականությունը չէր կարող հաշտվել այդպիսի խելահեղության հետ, մարդը՝ շահագործման, ժողովուրդը կեղեքման հետ։ XX դարը դարձավ անհաշտելի հակասությունների դար՝ անտիբիոտիկների և Կատինյան անտառի դար, մի խումբ ժողովուրդների համար ազատագրման, մի այլ խումբ ժողովուրդների համար ողբերգության դար։ Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ կա երկու Գերմանիա, երկու Վիետնամ, երկու Կորեա, երբ ռևոլյուցիան ներկայացվում է իբրև «հակառևոլյուցիա», իսկ հակառևոլյուցիան՝ իբրև «ռևոլյուցիա»։

Պատմությանը հայտնի են այնպիսի պատերազմներ, որոնք տևել են երեսուն և նույնիսկ հարյուր տարի, բայց դեռ հայտնի չէ այնպիսի դեպք, երբ 4—6 տարի մղված պատերազմից 20 տարի անց հաշտության պայմանագիր կնքված չլինի։ Եթե մի դեպքում միջազգային իրավունքը, մարդու և ժողովուրդների իրավունքը հաղթանակում է, ապա մյուս դեպքում դրանք ոտնատակ են տրվում։ Եթե ոմանք խոսում են բանականության ու արդարության լեզվով, ապա ոմանք էլ ուրիշ լեզու են բանեցնում, այսինքն՝ բալիստիկ հրթիռներով ու ջերմամիջուկային զենքերով են սպառնում։

Ֆեոդալիզմի ժամանակ գաղութատիրությունը չկարողացավ գրավել ամբողջ աշխարհը։ Եվ ինչքան էլ ճգնում էին Արևելքի քոչվոր բռնակալներն ու Արևմուտքի «նստակյաց»

բոնապետները, այնուամենայնիվ, նրանց չէր հաջողվում վերականգնել Հռոմի «սրբազան կայսրությունը»։

Գրությունը փոխվեց կապիտալիզմի ժամանակ, երբ անցյալ դարի վերջերից նա դարձավ «...գաղութները հարստահարելու և երկրագնդի բնակչության հսկայական մեծամասնությունը մի քուռ «առաջավոր» երկրների ձեռքով ֆինանսապես խեղդելու համաշխարհային սիստեմ»[1])։ Լոնդոնը և Փարիզը, Բեռլինը և Պետրոգրադը, Վաշինգտոնը և Ստամբուլը առաջ էին քաշում ոչ միայն համաշխարհային հզոր կայսրությունների ստեղծման իրենց նախագծերը, այլև սկսել էին սեփական «ազգային» մեթոդներով հաստատակամորեն կենսագործել դրանք։ Ստրկատիրական Հռոմի դերը սկսեց հավակնել նույնիսկ «երիտասարդ» կապիտալիստական Հռոմը։

Սկզբում նրանք միմյանց միջև բաժանեցին աշխարհը։ Այդպես գաղութատերերի միջև ստեղծվեց դաշինք, որը նման էր Հռոմի Եռապետների (տրիումվիրատների) դաշինքին։ Պաշտոնապես այն կոչվում էր քաղաքական հավասարակշռություն։ Բայց քանի որ նրանցից ամեն մեկն ուզում էր Հռոմ դառնալ, ապա նրանցից յուրաքանչյուրը մյուսի համար Կարթագենի վախճան էր նախապատրաստում։ Հարցը կարող էր լուծվել, ինչպես այդ բանը տեղի էր ունեցել հնում, փյունիկյան նոր պատերազմներով։

1940 թվականին Հիտլերը իր ճառերից մեկում Լոնդոնն անվանեց Կարթագեն, որը, իբր թե, հարկավոր էր կործանել։ Ի պատասխան, Չերչիլն ասաց, թե դեռ հայտնի չէ, թե որ քաղաքը կդառնա Կարթագեն՝ Լոնդո՞նը, թե՞ Բեռլինը։

Պատերազմը ցույց տվեց, որ Բեռլինն էր Կարթագենը, բայց Լոնդոնը Հռոմ չդարձավ։

Ինչպես տեսնում ենք, իրենց խնդիրներով, ձգտումներով և գործողությունների մեթոդներով արդի գաղութարարները շատ բան ընդօրինակում են ստրկատիրական Հռոմից։ Հավերժական քաղաքի նման, իմպերիալիզմը երազում է այն «երանելի, հին ժամանակները», երբ ամբողջ աշխարհը ենթարկվում էր Հռոմին՝ ժողովուրդները նրա հարկատուներն էին, իսկ նրանց տերիտորիաները՝ Հռոմի «կենսական տարածությունը»։ Հին ու նոր հիտլերները ձգտում են միևնույն բանին, միայն թե Հռոմի «միակ կարգը» այժմ անվանում են «նոր կարգ», «նոր սիստեմ»։ Այո՛, իմպերիալիզմի գաղութատիրական ուժերը, որոնք այժմ խոսում են Ահրիմանի լեզվով, բուռ համառությամբ ձգտում են աշխարհակալության։ «Երկաթե համառությամբ, անշեղորեն հետամուտ լինելով ծրագրած նպատակին, կանգ չառնելով ոչ ուխտադրժության առջև, ոչ դավաճանության, ոչ անկյունից կատարվող սպանության առջև, ոչ ստրկահաճության առջև, բան չխնայելով կաշառելու համար, չարբենալով հաղթանակներով, պարտություններից չընկճվելով, ոտնատակ տալով միլիոնավոր զինվորների դիակներ և նույնիսկ իրենց սեփական կառավարիչների դիակները, այդ ուժերը «նուչքան անզոր, նուչքան տաղանդավոր, ամեն ինչ անում են, որպեսզի ընդլայնեն իրենց մետրոպոլիայի սահմանները, այն դարձնելով «մեծ, հզորազոր, ահազդեցիկ», այն հաշվով, որպեսզի բաց անեն «նրա համար աշխարհակալության ուղին»[1]։

Այս ամենը ինչքա՞ն նման է բաղում դարեր առաջ տեղի ունեցած անցքերին։

Ինչպես հայտնի է, կապիտալիզմն իմպերիալիզմ դարձավ միմիայն իր զարգացման որոշակի, շատ բարձր փուլում, երբ կապիտալիզմի մի քանի հիմնական հատկություններն սկսեցին վերածվել իրենց հակադրությանը, այսինքն՝ կապիտալիստական ազատ մրցակցությունը փոխարինվեց կապիտալիստական մոնոպոլիաներով։ Կապիտալիզմի հետագա զարգացումը նրան դարձրեց պետական կապիտալիզմ։ Այժմ ոչ միայն գաղութային ու կախյալ, այլև անկախ ժողովուրդների կողոպտիչների դերում հանդես են գալիս ոչ թե առանձին մոնոպոլիստական միավորումներ, այլ պետություններ։ Նեոգաղութատիրությունը ժամանակակից կապիտալիզմի զարգացման այդ նոր էտապի արտահայտությունն է։

Հենց այդ է կապիտալիզմի նախկին ստադիաների գա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 246։

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 16, часть 2, первое издание, стр. 7.

գուրթային քաղաքականության էական տարբերությունը ժամանակակից իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունից։

Վ. Ի. Լենինը ուսուցանում է. «Որքան ավելի է զարգացած կապիտալիզմը, այնքան ավելի ուժեղ է զգացվում հումքի պակասությունը, որքան ավելի սուր է հումքի աղբյուրների համար մղվող կոնկուրենցիան ու վազքը նրանց հետևից ամբողջ աշխարհում, այնքան ավելի կատաղի է գաղութներ ձեռք բերելու համար մղվող պայքարը»։

Ատոմային դարում ավելի մեծ չափով, քան երբևէ, մրցակցությունը և հումքի շուկաների գրավման տեմպը սկսել են առավել սուր բնույթ ստանալ, իսկ գերշահույթի գաղութային աղբյուրների համար մղվող պայքարն ավելի մոլեգնել ու սաստկացել է։ Սակայն ատոմային դարը միևնույն ժամանակ աչքի է ընկնում նաև մի ուրիշ, իր էությամբ հակադիր հանգամանքով՝ նա փոխել է պատերազմ մղելու մեթոդները։ Պատերազմը դադարում է համաշխարհային ավազակների համար այն գործիքը լինելուց, որով նրանք հեշտորեն փոխում էին առանձին երկրների ու ամբողջ աշխարհամասերի սոցիալ-քաղաքական ու իրավական կառուցվածքը։

Ավելացնենք նաև հետևյալը։

XX դարը լեթարգիական քնից արթնացրել է բոլոր գաղութային ժողովուրդներին, ամենահետամնաց ցեղերին ու ցեղախմբերին, բարձրացրել է նրանց արժանապատվության զգացմունքը՝ տոգորել ինքնուրույն, ազատ կերպով, առանց օտարերկրացիների թելադրանքի ապրելու ուժով, վստահությամբ ու վճռականությամբ։ Դեռ բոլորովին վերջերս գաղութարարները Աֆրիկան համարում էին պատմություն չունեցող աշխարհամաս, իսկ նրա ժողովուրդներին՝ ազգային հեռանկարային խնդիրներ ընկալելու անընդունակ, քարացած, մեռյալ ժողովուրդներ։ Սակայն այդ մահը երևակայական էր։ Աֆրիկայի հսկան արթնացել է և խոսում է ուժգին ձայնով։

Այսպիսով, կապիտալիզմի՝ իմպերիալիզմի վերածվելու պրոցեսը չէր կարող չհանգեցնել նրա գաղութային սիստեմի ճգնաժամին։ Անհաշտելի դարձան գաղութների ու մետրոպոլիաների հակամարտությունները։ Արտադրողական ուժերի, կուլտուրական ու հոգևոր արժեքների զարգացումը գաղութներում ու կախյալ երկրներում չէին կարող այլևս զարգանալ գաղութային կեղեքման ու ստրկացման կապանքներում, սկսեցին ինքնուրույն զարգացման ասպարեզ դուրս գալ ուժով։ Գաղութների և մետրոպոլիայի միջև տեղի ունեցած հակասությունների անտագոնիստական բնույթը մեր օրերում ավելի ակնհայտ է։ Եվ այդ հասկանալի է։ Տեղացի աշխատավորի ստեղծած հավելյալ արժեքը ծախսվում էր ոչ թե գաղութի, այլ մետրոպոլիայի արտադրողական ուժերի զարգացման վրա, մետրոպոլիայի ազգային հարստության աճը տեղի էր ունենում գաղութների հաշվին։

Բացի դրանից, գաղափարական ստրկացման հին, փորձված մեթոդները, որոնց օգնությամբ գաղութարարները պահպանում էին իրենց տիրապետությունն ու կազմալուծում ժողովուրդների ազատության ու անկախության կամքը, ավելի ու ավելի նվազ արդյունավետ էին դառնում։

Գաղութներում և ընդհանրապես աշխարհում ստեղծված օբյեկտիվ տնտեսական ու քաղաքական պայմանները ստրկացված երկրների ժողովուրդներին մղում էին քաղաքական անկախության նվաճման։

Այս բոլոր հանգամանքները, միասին վերցրած, չէին կարող չազդել գաղութատիրության վրա։ Հաշվի առնելով տեղն ու ժամանակը, նա սկսեց իր ստրատեգիան ամրապնդել նորանոր տակտիկական եղանակներով։ Պարզ է, որ ատոմային դարի սովետական կապիտալիզմի գաղութային քաղաքականությունը պետք է էականորեն տարբերվեր XIX դարի վերջերի կապիտալիզմի գաղութային քաղաքականությունից։ Եվ նա իսկապես էականորեն տարբերվում է։ Տրադիցիոն գաղութատիրությունը վերաճել է նեոգաղութատիրության։ Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, կարող ենք ասել, որ «մենք ապրում ենք համաշխարհային գաղութային քաղաքականության մի յուրահատուկ դարաշրջան, որ ամենասերտ կերպով կապված է «կապիտալիզմի զարգացման նորագույն աստիճանի», ֆինանսական կապիտալի հետ»[1] (ընդգծումը մերն է։— Հ. Ս.)։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 337։

§ 50. ԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՐԵՔ ԽՈՒՄԲ։ Նեոգաղութատիրության քաղաքականությունն վարելիս յուրաքանչյուր երկիր ելնում է ոչ թե շաբլոն, ստանդարտ սկզբունքներից, այլ կոնկրետ, միանգամայն յուրահատուկ պայմաններից։ Այդ քաղաքականության առանձնահատկությունները կախված են.

ա) տվյալ երկրի կամ գաղութի մասնակի առանձնահատկություններից.

բ) բուն մետրոպոլիայի «տրադիցիայից» (նրա պետական, սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման, ներքին դրության առանձնահատկություններից և այլն).

գ) ընդհանրապես աշխարհի ու մասնավորապես մետրոպոլիայի միջազգային դրությունից[1]։

Այնուամենայնիվ բոլոր տերությունները կարելի է բաժանել երեք խմբի, որոնց վարքագիծը շատ բանում համանման է։

Առաջին խմբի մեջ մտնում են գաղութներ ունեցող, այսպես կոչված, բուրժուա-դեմոկրատական երկրները, երկրորդ խմբի մեջ՝ նման տիպի, բայց գաղութներ չունեցող երկրները, երրորդ խմբի մեջ՝ ֆաշիստական կամ ֆաշիստացող երկրները։

Առաջին խմբի երկրները ետպատերազմյան ժամանակաշրջանում գաղութային ժողովուրդներին քաղաքական անկախություն տվեցին՝ իրենց տնտեսական դիրքերն այնտեղ պահպանելու համար։ Նեոգաղութատիրության քաղաքականության ճարպիկ կիրառման միջոցով տնտեսական ասպարեզում նրանք քիչ բան կորցրին։ Օրինակ, Բրիտանական կայսրությունը անվանվեց Ազգերի բրիտանական համագործակցություն, որը համարյա նույն չափերն ու կազմն ունի, ինչ որ նախկին կայսրությունը։ Այն գրավում է երկրագնդի ցամաքի ավելի քան մեկ քառորդը և ընդգրկում է երկրագնդի բնակչության համարյա նույնքան մասը։ Համագործակցությունից

[1] «Международная жизнь», № 8, 1961, стр. 9—10.

Բիրմայի, Էյրեի և Հարավային Աֆրիկայի դուրս գալը շատ քիչ բանով փոխեց առաջվա դրությունը[1]։

Երկրորդ խմբի երկրները, որոնք ձևականորեն գաղութներ չունեն, «շահագրգռված» են գաղութատիրության հին սիստեմի քայքայմամբ։ Օրինակ, ԱՄՆ-ը «դատապարտում է» գաղութատիրությունը, ձգտելով այդ ճանապարհով հեշտացնել իր ներթափանցումը այդ տերիտորիաները։ Հակագաղութատիրության քողի տակ այժմ Ասիայի ու Աֆրիկայի երկրներում զգալի ակտիվություն է ցուցաբերում նաև արևմտագերմանական նեոգաղութատիրությունը[2]։

Երրորդ խմբի գաղութարարները առավել վատթար, անկուշտ, ագահ և ամենադաժան գաղութարարներն են։ Այդ երկրների նեոգաղութատիրությունն արտահայտվում է միմիայն «ժողովուրդների ինքնորոշման իրավունքի» դեկլարատիվ ընդունմամբ, «միասնական պետության» շրջանակներում ճնշված ժողովուրդներին խոսքով «իրավահավասարություն» տալով։ Իսկ իրականում նրանց նկատմամբ վարում են գենոցիդի քաղաքականություն, ձգտում են դառնալ նրանց երկրների հավերժական տերը։ Այդ տերությունների նեոգաղութատիրական գենոցիդի քաղաքականությունն այժմ արտահայտվում է ոչ միայն գաղութների ժողովուրդների ուղղակի ֆիզիկական ոչնչացմամբ, այլև նրանց ասիմիլյացիայով։ Ալժիրում այդպիսի քաղաքականություն էին վարում ֆրանսիական նեոգաղութարարները, թեև նրանք իրենց աֆրիկյան մյուս տիրապետությունների մեծամասնության նկատմամբ ընթացան անգլիական նեոգաղութատիրության ուղիով։ Հետաքրքրական է նշել, որ առաջին դեպքում նրանք Ալժիրում յոթնամյա արյունահեղ սպանդից հետո խայտառակ պարտություն կրեցին, իսկ երկրորդ դեպքում առանց արյունահեղության զգալի հաջողությունների հասան։

Այսպիսով, իմպերիալիստական աշխարհի բոլոր տերությունները նեոգաղութատիրության քաղաքականություն են

[1] **Р. Палм Датт**, Некоторые аспекты английского неоколониализма, журнал «Проблемы мира и социализма», № 4, 1962, стр. 10—14.

[2] «Проблемы мира и социализма», № 4, 1962, стр. 10.

վարում։ Տնտեսական գաղութատիրությունը, լինելով առավել ճկուն, առաձգական, ստիպված է նահանջել, դիմել նույնիսկ գաղութային երկրների քաղաքական կառուցվածքի խոր փոփոխությունների, իսկ քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը չի դիմում գաղութների ժողովուրդների իրավական դրության այս կամ այն չափով նկատելի փոփոխության, թեպետ նույնպես սքողվում է նեոգաղութատիրության քաղաքականության ժամանակակից լոզունգներով։

§ 51. Ի՞ՆՉ Է ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ։ Երևանի Լենինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1962 թվականի մարտի 13-ին արտասանած ճառում Ա. Ի. Միկոյանն ասել է. «Նեոգաղութատիրությունը կառչում է ամեն տեսակ հնարավորություններից, հին կապերից, տնտեսական, ֆինանսական, ռազմական ու այլ լծակներից և հաճախ այդ երկրների վերասերված ու կաշառված ռեակցիոն տարրերին օգտագործում է, որպեսզի նոր եղանակներով շարունակի գաղութային շահագործումը»[1]։

Ուրեմն, նեոգաղութատիրությունը ժամանակակից իմպերիալիզմի՝ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի «մեծ քաղաքականության» անուղղակի գործողությունների ստրատեգիան է, որի նպատակն է նոր եղանակով, նոր ձևերով շարունակել գաղութային շահագործումը։

Ռ. Պալմ Դատը «Անգլիական նեոգաղութատիրության մի քանի ասպեկտները» հոդվածում, որը բանավեճի կարգով հրապարակվել է «Проблемы мира и социализма» հանդեսում, այլ կերպ է բնորոշում ժամանակակից գաղութատիրությունը. «Նեոգաղութատիրությունը,— գրում է նա,— ամբողջությամբ վերցրած իմպերիալիզմի ընդհանուր ստրատեգիայի նոր փուլն է և համապատասխանում է գաղութային սիստեմի ուժեղացող քայքայման ու նախկին գաղութների մեծամասնության՝ քաղաքականապես անկախ պետությունների վերածվելու ներկայիս ժամանակաշրջանին»[2]։

Նեոգաղութատիրությունը «ամբողջությամբ վերցրած» իսկապես ժամանակակից իմպերիալիզմի տնտեսական և ռազմա-քաղաքական ընդհանուր ստրատեգիայի նոր փուլն է։ Այս ձևակերպումն էլ իր այսպիսի հակիրճությամբ հանդերձ միանգամայն ընդունելի է։ Ինչ վերաբերում է նրա երկրորդ մասին, ապա ինչպես տեսանք նախորդ պարբերության մեջ, այն արտացոլում է անգլո-ամերիկյան տիպի նեոգաղութատիրության քաղաքականության էությունը և միանգամայն խեղաթյուրված է ներկայացնում երրորդ խմբի տերությունների նեոգաղութատիրության քաղաքականության էությունը։ Եթե ոմանք ձգտում են «հեռանալ գաղութներից՝ այնտեղ մնալու համար», և դա «համապատասխանում է» ժամանակի ոգուն, ապա մյուսները ձգտում են «ոչնչացնել ու ապազգայնացնել գաղութների ժողովուրդներին՝ այնտեղ ընդմիշտ մնալու համար», որը միանգամայն չի «համապատասխանում գաղութային սիստեմի ուժեղացող քայքայման և... նախկին գաղութների՝ քաղաքականապես անկախ պետություններ դառնալու ներկայիս ժամանակաշրջանի բովանդակությանը»։ Պարզ է, որ այսպիսի ձևակերպումը «ամբողջությամբ վերցրած» չի կարելի ճիշտ համարել։

§ 52. ԳԵՐՇԱՀՈՒՅԹԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՁՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ։ Իմպերիալիզմի գաղութային քաղաքականությունը իր զարգացման ընթացքում անցել է շատ աստիճաններ, բայց նա իր ամբողջ պատմության ընթացքում մշակել է գերշահույթի գաղութային աղբյուրների նվաճման չորս եղանակ։ Առաջինը առավել հին է, մնացածները «երիտասարդ են»։ Առաջինը ռազմական ուղին է։ Վերջինս գաղութարարներին հնարավորություն է տալիս զավթել ուրիշի երկիրը (կամ տիրել այդ երկրի մի մասին) պատերազմի իրավունքով, նրանց զրկելով քաղաքական անկախությունից և այնտեղ հաստատելով իր գաղութային վարչությունը՝ հիմնականում մետրոպոլիայի մարդկանցով։ Այս եղանակը օգտագործվեց Այժիրը և Աֆրիկայի ու Ասիայի բազմաթիվ ուրիշ երկրներ նվաճելիս։

Երկրորդ ուղին նույնպես ռազմական է, բայց, ի տարբերություն առաջինի, իրագործվում է «ազատագրման», «օգնության» ձևք մեկներու հրապուրիչ լոզունգներով։ «Օգնության» նպատակը ուրիշ երկրի նվաճումն է։ Եվ, վերջապես, գաղու-

1 «Սովետական Հայաստան», 1962, 14 մարտի։

2 «Проблемы мира и социализма» № 4, 1962, стр. 9.

թային վարչության անձնակազմը հավաքագրում են հիմնականում տեղացիներից։

Երրորդ ուղին, այսպես ասած, շրջանցման ուղին է։ Գաղութարարները տնտեսական, ֆինանսական և ուրիշ զանազան եղանակներով ստիպանարար քայքայում են, կաշկանդում ուրիշ երկրների պետական սուվերենությունը՝ կառավարման ազգային ձևի պահպանմամբ հանդերձ։

«Չնայած ինքնուրույն արտաքին հատկանիշներին», այդ երկրները «փաստորեն ենթարկված են օտարի լծին»[1]։ Գաղութային ստրկացման այդ եղանակի զոհերը դարձան Լատինական և Կենտրոնական Ամերիկայի երկրները։

Մասնավորապես այդ ուղու նպատակներին են ծառայում «Տրումենի դոկտրինան», «Մարշալլի պլանը» (որը նախատեսված է կապիտալիստական ամբողջ աշխարհը «փրկելու» համար[2]), «Հանուն առաջադիմության միությունը» (որը նախատեսված է Նոր աշխարհի համար), «Տասներկու կետի ծրագիրը» (որի յոթերորդ կետը հատկապես նվիրված է Աֆրիկային), ինչպես նաև Անգլիայի, Ֆրանսիայի ու այլ երկրների մյուս պլանները։

Չորրորդ ուղին բնորոշվում է որպես «մարդկանց մտքերի և հոգիների համար» մղվող պայքար։ Ինչպես հայտնի է, ատոմային դարը փոխել է պատերազմի ամբողջ բնույթը։ Այժմ այնքան էլ հասարակ բան չէ նոր գաղութների նվաճման համար պատերազմ սկսելը։

Ի՞նչ պետք է անել։

Շատ պարզ՝ հարկավոր է փոխել գաղութների նվաճման հին եղանակը։ Ժուռնալիստ Ու. Էիսմանը առաջարկում է ոչ թե ստանձնագործել համաշխարհային նոր պատերազմ, որը կհանգեցնի միմիայն պատերազմող կողմերի կործանման, այլ պայքար մղել «մարդկանց մտքերի և հոգիների համար»[3]։

---

1 Ա. Ի. Միկոյան, ճառ ՍՄԿՊ 22-րդ համագումարում։

2 «Մարշալլի պլանով ազատ աշխարհի պաշտպանության» համար 1945 թ. մինչև 1960 թ. սեպտեմբերն ընկած ժամանակամիջոցում Ֆրանսիան ստացել է 9 768 միլիոն դոլար, Բրիտանական կայսրությունը՝ 7 799, Բելգիան՝ 1 887, Պորտուգալիան՝ 376 միլիոն դոլար։

3 Журнал «За рубежом», № 6, 1962.

Հաջող պայքարի դեպքում կարելի է, նախ, կազմալուծել հակառակորդի պետական-քաղաքական կարգերը և, երկրորդ, հասնել այն բանին, որ տնտեսապես հետամնաց երկրների ժողովուրդներն իրենք «կամավոր կերպով», իրենց հողերով հանդերձ, դառնան գերշահույթի գաղութային աղբյուրներ։

Պայքարի այս եղանակն իրագործվում է արդեն ոչ թե հրանոթներով ու տանկերով, ոչ թե ինքնաթիռներով ու հրթիռներով և նույնիսկ ոչ թե ոսկով, այլ «հոգեբանական դիվերսիայի» մեթոդներով, հենց այն ժողովուրդների ձեռքով, որոնց ժամանակակից գաղութարարներն ուզում են դարձնել շահագործման օբյեկտ։

Ահա թե ինչպես է ԱՄՆ-ը կազմել պատրաստում Աֆրիկայի նվաճման ճակատամարտի համար։

Ամերիկայի 150 կոլեջներում սովորում են բազմաթիվ աֆրիկացիներ։ Ամեն տարի «ուսման ու պրակտիկայի» համար ԱՄՆ են գալիս հարյուրավոր աֆրիկացիներ, իսկ հարյուրավոր ամերիկացիներ էլ մեկնում են Աֆրիկա որպես ուսուցիչներ։ Միաժամանակ տեղի է ունենում ղեկավարների, մասնագետների ու կուլտուրայի էմիսարների փոխանակություն, որոնց ուղևորությունները ֆինանսավորում է ԱՄՆ-ի կառավարությունը։ Աֆրիկան ցանցի մեջ գցելու նպատակով կազմակերպած գաղափարական կենտրոնների գլուխ է կանգնել ԱՄՆ-ի ինֆորմացիոն գործակալությունը (ՅՈՒՍԻԱ), որն ունի 11 հազար աշխատակից։ Նրանց տրամադրության տակ են ռադիոն, թերթերը, գրքերը, հանդեսները, կինոնկարները։

Գերշահույթի գաղութային աղբյուրների նվաճման վերոհիշյալ չորս ուղիներից ամեն մեկն ունի իր առանձնահատկությունները, տարբերակները, ինչպես նաև բազմապիսի կոմբինացիաներ մյուս ուղիների հետ։

Սակայն, ինչպես գաղութների նվաճման ուղու ընտրությունը, այնպես էլ արտաքին նվաճումների մասշտաբները կախված են ոչ միայն այս կամ այն հարձակվող կողմի տնտեսական ու ռազմական հզորությունից, այլև նրա սոցիալական կարգերից ու պետության կառավարման կառուցվածքից։

Երրորդ գլուխ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏՐՈՊՈԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՀԱՑՈՒ ԹՇՆԱՄԻՆ Է

Մոնոպոլիստական կապիտալը, լրիվ զավթելով հիմնական նյութական միջոցները, ոչ ոքի հետ չի բաժանում քաղաքական իշխանությունը։ Նա հաստատել է իր դիկտատուրան՝ փոքրամասնության դիկտատուրան մեծամասնության նկատմամբ։

ՍՄԿՊ ծրագրից

§ 53. ՀԱՐՑԻ ԴՐՎԱԾՔԸ։ Մենք համառոտակի ծանոթացանք գաղութատիրության մարտական արկածախնդրություններին, նրա զարգացման փուլերին, գաղութատիրության և նեոգաղութատիրության էությանը։ Այս ամենից ակներև է, որ որևէ երկրի տիրապետող դասակարգը գաղութակալ է դառնում միայն այն ժամանակ, երբ դուրս է գալիս ազգային սահմաններից և ուրիշ երկրներում գերշահույթի գաղութային աղբյուրներ նվաճում։ Սակայն միանգամայն պարզ է, որ նախքան ավարի համար ճանապարհ ընկնելը, հարկավոր է համապատասխան ձևով պատրաստվել։ Մետրոպոլիան դառնում է ագրեսիայի բազա՝ տնտեսական, ռազմա-քաղաքական ու գաղափարական բազա։

Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, տիրապետող դասակարգերը պետք է նախապես մետրոպոլիայի բնակիչներին դարձնեն այնպիսի «ստրուկներ», որոնց վարելի լինի օգտագործել «ուրիշ ցեղերին ստրուկներ դարձնելու համար», այնպիսի ստրուկներ, որոնք հանդուրժում են իրենց մոտ այնպիսի «կառավարություն, որը դահճի վայրագությամբ ոչ միայն ճնշում է ազատության ամեն մի ձգտում» մետրոպոլիայում, «այլև, բացի դրանից, օգտվում է «սեփական երկրի» զորքերից «ուրիշի ազատության դեմ բռնի ոտնձգություն անելու համար»[1]։

Իշխող դասակարգերը գաղութարարներ դառնալուց առաջ, արդեն հանդես են գալիս իբրև սեփական ժողովուրդների թշնամիներ, իսկ այնուհետև իբրև ուրիշ ժողովուրդների մահացու թշնամիներ։ Նիդերլանդի, Տյուրոսի, Կարթագենի, Հռոմի, Տիղբոնի բուռն ու ագահ գաղութային գործունեությունը հանգեցրեց այն բանին, որ այդ մետրոպոլիաների ժողովուրդները կամ վերացան պատմության բեմից, կամ բռնեցին հոգևոր ու քաղաքական աղքատացման ուղին, հետադիմության ուղին։

Պատմական փաստերն անհերքելիորեն վկայում են, որ առավել ագրեսիվ գաղութարարներ են իշխող դասակարգերը այն երկրների, որտեղ նրանց հաջողվում է իրենց մոտ հաստատել բացահայտ տեռորիստական կարգեր՝ «ուժեղ մարդու» իշխանություն, սեփական ժողովրդին զրկելով ամենատարրական դեմոկրատական իրավունքներից։ Ոմանք գտնում են, որ իշխող դասակարգերն այդպիսի մեթոդների են դիմում իրենց սոցիալական կարգերը փրկելու նպատակով։ Սակայն գաղութատիրության ամբողջ պատմությունը հաստատում է այլ բան. նրանք պետության կառավարման այդ ձևերին են դիմում ոչ միայն այն ժամանակ, երբ նրանց վտանգ է սպառնում, այլև այն ժամանակ, երբ նրանք պատրաստվում էին վարելու ոչ թե պաշտպանողական, այլ հարձակողական, ագրեսիվ, զավթողական արտաքին քաղաքականություն։

Մի՞թե դա պարզ չէ։ Ամեն մի երկրի արտաքին քաղաքականությունն արտացոլումն է նրա ներքին քաղաքականության, ճիշտ այնպես, ինչպես պատերազմը շարունակությունն է խաղաղ ժամանակվա քաղաքականության, որն իրագործվում է միայն ոչ թե խաղաղ, այլ բռնի միջոցներով։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 411։

Դժվար է ըմբռնել գաղութատիրության էությունն ընդհանրապես և նեոգաղութատիրությանը՝ մասնավորապես, եթե, թեկուզ և ընդհանուր գծերով, չծանոթանանք շահագործող դասակարգերի ռազմատենչ նպատակներին, որոշ էքսպանսիոնիստական երկրների պետական կարգերի ու ներքին քաղաքականության առավել բնորոշ գծերին։

§ 54. ՀԻՆ ԵՎ ՆՈՐ «ԱՍՏՎԱԾՆԵՐ»։ Հին աշխարհում բռնապետներն իրենց համարում էին աստվածներ կամ, առնվազն, համաձայնում էին դառնալու երկրի գլխավոր աստվածների որդիները։ Ակադայի Նարամսին թագավորը, որը «աշխարհի չորս երկրների թագավորի» տիտղոս էր կրում, իրեն համարում էր «Ակադայի աստված»։ Աստվածներ կամ կիսաստվածներ էին Եգիպտոսի փարավոնները, Բաբելոնի, Ասորեստանի թագավորները։

Երբ հեթանոսական աստվածներն իրենց տեղը զիջելով մոնիստական աստվածներին, անհետանում էին, երկրային աստվածները դառնում էին երկրի վրա նրանց փոխանորդները, դառնում հավատի հովանավորողներ ու տարածողներ։

Հին բռնակալ «աստվածների» դափնիները հանգիստ չեն տալիս ժամանակակից իմպերիալիստական շրջանների ղեկավարներին։ Նրանք չեն ուզում հաշտվել այն բանի հետ, որ «աստվածների» ժամանակն ընդմիշտ անցել է և որ մարդիկ, ժողովուրդներն ուզում են ոչ թե աստվածներ, ոչ թե նոր մարգարեներ, այլ խաղաղություն, ազատություն, երջանկություն։ Նրանք իրենց երևակայում և դեմագոգիկ լոզունգներով ներկայացնում են իբրև «փրկիչների»։ Պրոֆեսիոնալ ավանտյուրիստների օգնությամբ նրանք իշխանության են ձգտում։ Հանճարեղ Արքիմեդի այն ձևակերպումը, թե «Տվեք ինձ մի հենման կետ, և ես Երկիրը շուռ կտամ», այժմ յուրովի է մեկնաբանվում։ Գնդապետ Ռոժե Տրենիսեն ասում էր՝ «Տվեք ինձ հարյուր ավազակ, և ես կահաբեկեմ Փարիզը... Թող ասեն, թե ես ֆաշիստ եմ, բայց մենք բնակչությանը պետք է ներշնչենք հնազանդություն, որպեսզի հեշտ լինի նրան կառավարելը»[1]։

[1] Газета «Правда», 29 января 1961.

Երբ քաղաքական բանդիտն անհաջողություն է կրում, նա զրկվում է գլխից, իսկ երբ հաջողվում է՝ համարվում է մեծ, նույնիսկ «հանճարեղ»։ Այդ ճանապարհով էին իշխանության գլուխ անցել «հանճարեղ» Մուսոլինին, «գերհանճար» Հիտլերը և մյուսները։ Նրանց ազգակիցն է իշխանության ձգտող Ամերիկայի «փրկիչ» Ռոբերտ Ուելշը՝ «ամերիկացի փոքրիկ Հիտլերը», ինչպես նրան անվանում են ամերիկյան թերթերը։ Բայց նա ամենևին չի ուզում «փոքրիկ Հիտլեր» լինել։ Ֆրանսիական գաղութարարների համար այդպիսի «փոքրիկի» համբավ էր վաստակել գեներալ Սալանը։ Եվ բոլորն էլ հավակնում են երկրում հաստատել ուժեղ կարգեր, բացարձակ ֆաշիստական դիկտատուրա։

Ինքնին հասկանալի է, հասարակության էքսպանսիոնիստական ուժերը կարող են ազատորեն գործել միայն այնպիսի պայմաններում, երբ ամբողջ գործադիր, օրենսդիր, դատական և հոգևոր իշխանությունը կենտրոնացված է «ուժեղ» մարդու ձեռքում։ Նրա «դիրիժորական փայտիկի» տակ տառացիորեն պետք է պարեն պետության բոլոր քաղաքացիները։ Ոչ ոք իրավունք չունի մտածելու. յուրաքանչյուրի փոխարեն մտածում է միայն նրանց «աստված» ֆյուրերը, բոլորը պետք է կատարեն միայն նրա կամքը, քանի որ միայն նրա միջոցով են «ժողովրդի ու երկրի» առջև բացվում «գրավիչ հեռանկարները» կամ «նոր բնագծեր»։

Արևի «ժառանգ» Միկադոն ուզում էր Ճապոնիայի առջև նոր հորիզոններ բաց անել՝ Արևելքի ժողովուրդներին համախմբել «Ծագող արևի» երկրի մեկ կտուրի տակ, իսկ Հիտլերն ուզում էր «ակամավոր գերմանական ռասայի» համար ապահովել երջանիկ ապագա, նրա համար նվաճելով «կենսական տարածություն»։ Մուսոլինին երազում էր Միջերկրական ծովը դարձնել իտալական ներքին ավազան, ինչպես եղել էր Կեսարի ժամանակ, Դը Գոլը խոստանում էր վերականգնել վաղեմի «մեծությունը Ֆրանսիայի»։

Հին Հունաստանում և Հռոմում կային այնպիսի օրենքներ, որոնք օրենքից դուրս էին հայտարարում երկրի գերագույն իշխանությունը բռնությամբ, ապօրինի կերպով գրաված մարդկանց։ Նրան, ով ապառնում էր իշխանությունը զավ-

թողին, ոչ միայն չէին դատում, այլև, ընդհակառակը, նրան համարում էին հայրենիքի պաշտպան, հանրապետության փրկիչ։ Ու, այնուամենայնիվ, ինչպես ուրիշ երկրների, այնպես էլ այդ երկրների ժողովուրդները չկարողացան ազատվել ուզուրպատորներից։

Շահագործող, իշխող դասակարգերը միշտ ստրուկներ, ուրիշի հարստություններ, նոր հողեր զավթելու մոլուցք են ունեցել։ Եվ նրանք գիտակցել են, որ իրենք ագրեսիա կարող են կատարել միայն այն ժամանակ, երբ աշխատավոր մասսաները ոչ միայն կդրկվեն իշխանության վրա որևէ ազդեցություն գործելու կարողությունից, երբ աշխատավոր զանգվածները կդառնան իրենց հոգևոր ստրուկները։ Ահա թե ինչու ամերիկյան ֆաշիզմի փիլիսոփա գաղափարախոս Ռեվիլիո Օլիվերը պահանջում է վերացնել «ամերիկյան դեմոկրատիան» և ԱՄՆ-ում հաստատել «Կեսարի ժամանակվա հռոմեական հանրապետություն»։ Նա գտնում է, որ «դեմոկրատիան Ջոն Բերչի հասարակության գլխավոր թշնամին է» ոչ թե այն պատճառով, որ դեմոկրատիան հիմարություն է, այլ այն պատճառով, որ նա բերչականների ագրեսիվ ռազմական ծրագրի ճանապարհին ընկած խոչընդոտ է[1]։

Արդյոք պատահականություն է, որ ամերիկյան ֆաշիստները երազում են «Կեսարի ժամանակվա հռոմեական հանրապետությունը»։ Իհարկե, ո՛չ։ Պատահական չէ և այն, որ Մուսոլինին, Հիտլերն ու նրանց նմանները իրենց երկրներում հաստատել էին հենց այդ տիպի «հանրապետություններ» և երազում էին կեսարներ դառնալ։

Այժմ տեսնենք, թե ինչ է իրենից ներկայացնում «Կեսարի հանրապետությունը»։

§ 55. ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՄԱՆ ՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՐԱ ՎԵՑ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ։

Եգիպտոսի փարավոնների, Ասորեստանի թագավորների, Պարսկաստանի շահնշահերի, Հռոմի կայսրերի մեջ կարելի է գտնել ոչ-քիչ գործիչներ, որոնք մեծ դեր են խաղացել գաղութատիրության մեջ։ Սակայն նրանցից ոչ մեկն իրենից

[1] Журнал «За рубежом», № 16, 1962, стр. 17.

հետո այնքան երկրպագուներ չի թողել այն մարդկանց մեջ, ովքեր երազել են աշխարհը նվաճել, որքան Հուլիոս Կեսարը[1]։

Գիտնականները տարբեր կերպ են գնահատում նրան։ Եթե Մոմզենն ու Մեյերը Կեսարին համարել են հանճարեղ հերոս և համաշխարհային պատմության մեծագույն դեմոկրատ միապետ, իսկ նրա կայսրությունը՝ վերդասակարգային, ապա Ֆերերոն նրան համարել է «մեծ արկածախնդիր և հանճարեղ ձախողակ»։ Սովետական գիտնական Վ. Ս. Սերգեևը նրան համարել է գինվորական միապետության հիմնադիր։

Անվիճելի է մի բան՝ Հուլիոս Կեսարը մարմնավորում է հին աշխարհի գաղութային իմպերիալիզմը։ Այդ իսկ պատճառով Կեսարը դարձել է համաշխարհային հետագա բոլոր մեծ ավազակների և այնպիսի «գիտնականների» կուռքը, որոնք երազել են ու երազում են գաղութային նոր իմպերիալիզմ, որը, ըստ նրանց, չի կարող գոյություն ունենալ առանց Կեսարի տիպի «ուժեղ» ու «լուսավոր» պետական գործչի։ Բանն այստեղ ոչ թե այն է, որ Կեսարին հաջողվել է գաղութային մեծ կայսրություն ստեղծել, այլ այն, որ նա «գիտականորեն հիմնավորված» մի շարք դոգմաների հեղինակ է, որոնց օգնությամբ բոլոր ժամանակների տաղանդավոր և ապաշնորհ ցավագարները ձգտել են ու ձգտում են գավթել իշխանությունը, ժողովուրդներին՝ նրանց իսկ կամքին ու ցանկությանը հակառակ, դարձնել իրենց աշխարհակալության գործիք։

Որո՞նք են այդ դոգմաները, ո՞րն է նրանց էությունը։

Կեսարը պատմության մեջ առաջին անգամ ստեղծեց մի «ինքնատիպ տեսություն», որի համաձայն առանձին անհատներ կամ անհատների փոքր խմբեր կարող են մի ամբողջ ժողովրդից, ժողովուրդներից և նույնիսկ ամբողջ մարդկությունից ավելի իրավասու լինել նրա ճակատագրի արմատական հարցերի լուծման գործում։ Ուստի նա այդպիսի մարդկանց իրավունք վերապահեց վերահսկելու մարդկության

[1] Սկսած չորրորդ դարից հռոմեական կայսրերը Կեսարներ են կոչվել։ Այդպես են կոչվել նաև ռուսական ցարերը։ Ի դեպ, ռուսերեն «царь» և հայերեն «կայսր» բառերն առաջացել են цезарь «կեսար» բառերից։

ապագան, հանուն որի նրանք պետք է գրավեն պետական իշխանությունը։

Հենց այդպես էլ վարվեց ինքը՝ Կեսարը։ Նրա դեմ հանդես էր գալիս (իսկ նա քաջ գիտեր այդ բանը) մետրոպոլիայի ու ամբողջ կայսրության բնակչության ճնշող մեծամասնությունը։ Կեսարին պաշտպանում էին հռոմեական հասարակության միայն այն ազդեցիկ խավերը, որոնք ենթադրում էին, թե հանրապետական կարգերն արդեն ի վիճակի չեն ապահովելու ամբողջ աշխարհը զավթելու փրենց շահերը, և որ գերշահույթի գաղութային նոր աղբյուրների նվաճումը հնարավոր կլինի միայն անսահմանափակ իշխանությունը տապալելուց և անհատական իշխանության ռեժիմ, այսինքն՝ բացարձակ դիկտատուրա հաստատելուց հետո։

Բայց քանի որ Կեսարի թշնամիները չափազանց շատ էին, բուրժուական գիտնականները չէին նկատում նրա «բարեկամներին», խոստովանում էին, որ Կեսարի դեմ հանդես էր գալիս Իտալիայի ու Հռոմեական կայսրության ամբողջ բնակչությունը։ Այսպես, նշանավոր Թ. Մոմզենը գտնում է, որ Կեսարի դեմ հանդես էին գալիս հողագործները, «կապիտալիստները», ֆինանսական վերնախավը, արիստոկրատիան և «ընդհանրապես բնակչության բոլոր դասակարգերը»[1]։ Գաղութային և Հռոմից կախյալ երկրները «լիովին ու հաստատապես կանգնեցին Պոմպեոսի կողմը, Կեսարի դեմ»[2]։

Երկրորդ՝ Հուլիոս Կեսարը իր անձնական օրինակով ցույց տվեց, որ այդպիսի անհատները չեն կարողանա իշխանության գլուխ անցնել օրինական ճանապարհով, ինչպես այդ բանին հասան Պերիկլեսն ու Գայոս Գրակքոսը, այլ հարկավոր է ընտրել բռնության ուղին։

Նա այդ եզրակացությանը հանգեց դեմոկրատական ճանապարհով իշխանության գլուխ անցնելու 18-ամյա զուր փորձերից հետո։ Իզուր չէ, որ Կեսարը սիրում էր արտասանել Էվրիպիդեսի հետևյալ տողերը.

---

[1] **Т. Моммзен**, История Рима, том 3, Госполитиздат, 1941, стр. 312.

[2] Там же, стр. 311.

«Թե խախտես օրենքը՝ խախտիր հանուն թագավորության,
Իսկ մնացած խնդիրներում դու պետք է օրենքը հարգես»։

Երրորդ՝ պետական իշխանության համար պայքարը հարկավոր է սկսել «պարտիայի» կազմակերպումից։ «Պարտիա» ասելով հասկանում էին մի անբան գործիք, որը կուրորեն կատարում էր իր «առաջնորդի» հրամանները։ Պատմաբաններն էլ ճիշտ կերպով նկատել են, որ «Կեսարի հզորությունը նախ և առաջ հիմնված էր միանգամայն անսահմանափակ իշխանության վրա, որը նա վայելում էր իր պարտիայում»[1]։ (Ընդգծումը մերն է—Հ. Ս.)։

Կեսարը «պարտիայի» մեջ հավաքագրում էր բախտախնդիր հանճարների, արկածախնդիրների, «բարոյապես ու քաղաքականապես անսկզբունք մարդկանց» կամ, պարզապես, վատահամբավ մարդկանց[2], որոնց թվում կային այնպիսի մարդիկ, ինչպիսիք էին Քվինտոսն ու Գորտենզին, Մարկ Անտոնիոսը և շատ ուրիշներ։ Նա չէր խորշում նաև այդպիսի «գործիչներին» ուղղակի կաշառելուց։ Նա կաշառեց կոնսուլ Լուցիուս Էմիլիային, ժողովրդական տրիբուն Գայոս Կուրիոնին և այլոց։ Այդ մարդիկ պարտավորվում էին ամեն ինչում պաշտպանել Կեսարին։ Վերջինս դրա համար առանց ամաչելու նրանցից «պահանջում էր երդում և նույնիսկ ստորագրություն»[3]։

Չորրորդ՝ Ռուբիկոնն անցնելուց առաջ անհրաժեշտ է թեկուզ որոշ ժամանակ ազդեցություն ունենալ բանակի վրա։

Կեսարը, պետական կարևոր պաշտոններ վարող իր գործակալների օգնությամբ կարողացավ ստանալ կայսրության հյուսիսային նահանգներում գործող բանակի հրամանատարի պաշտոնը, որտեղ նրան հաջողվեց մի շարք հաղթանակներ տանել «բարբարոսների» նկատմամբ։ Բանակի համակրանքը նվաճելուց հետո, նա բանակը շարժեց Հռոմի վրա, յուրա-

---

[1] **Т. Моммзен**, История Рима, том 3, Госполитиздат, 1941, стр. 305.

[2] Там же, стр. 382.

[3] **Гай Светоний Травквилл**, Жизнь двенадцати цезарей, стр. 12—14.

քանչյուր զինվորին խոստանալով հեծյալի ոսկե մատանի և չորս հարյուր հազար սեստերցի։

Միաժամանակ Կեսարի պարտիայի անդամներն սկսեցին ամենուրեք կազմակերպիչ աշխատանք կատարել։ Այդ գործում առանձնապես աչքի ընկավ Գայոս Կուրիոնը։ Լինելով ժողովրդական տրիբուն, նա վետո էր դնում սենատի՝ Կեսարի դեմ ուղղված բոլոր միջոցառումների վրա, այն Կեսարի, որը ձգտում էր իշխանության, ձգտում էր հանրապետության ոչնչացման։

Հինգերորդ, Կեսարը դեմագոգիան դարձրեց պետական իշխանության խորամտություն, ընդ որում «դեմագոգիան վերջնականապես դարձավ արհեստ»[1]։ Եվ Կեսարի ամենաէական տարբերություններից մեկը Ալեքսանդրից, Հաննիբալից ու Նապոլեոնից այն էր, որ նրա համար քաղաքական գործունեության մեկնակետը ոչ թե սպան էր, այլ «դեմագոգը»[2] (Ընդգծումը մերն է— Հ. Ս.)։

Կեսարը բոլոր դասակարգերին խոստանում էր «երկրային դրախտ», Հռոմի տականքին՝ ձրի մնունդ ու զվարճավայրեր, Իտալիայի նահանգների բնակիչներին՝ ազատագրում «Հռոմի ճնշումից», գաղութային ժողովուրդներին՝ «իրավահավասարություն»։ Իրականում նա դրանց բոլորին ավելի մեծ դառնություն բերեց։

Նա ասում էր մի բան, բայց անում մի ուրիշ բան։ Կեսարը, օրինակ, սենատին բոլորովին զրկեց իշխանությունից, բայց պնդում էր, թե իշխանությունը ստանում է սենատից, նա ոչնչացրեց հանրապետությունը, բայց ասում էր, թե «փրկեց այն», նա խլեց ժողովրդի ազատությունը և բռնապետ դարձավ, բայց պնդում էր, թե ժողովրդին փրկեց «բռնապետությունից»։ Բուրժուական գիտնականները, որոնք խոնարհվում են «անգերազանցելի հանճար Կեսարի» առջև, ստիպված են խոստովանել, որ նա հաջորդ բռնակալների նման միապետ էր, բայց երբեք ցույց չէր տալիս, թե ցար է։ Նույնիսկ իրեն հռոմեական կայսրության անսահմանափակ իշխանատեր,

[1] **Т. Моммзен**, История Рима, том 3, стр. 249.
[2] Там же, стр. 382.

նա իր գործողություններում մնում էր միմիայն իրեն «պարտիայի առաջնորդ»[1]։

Սովետական պատմագիտությունը վկայում է, որ «Հռոմի կայսրերը ձևականորեն իշխանությունն ստանում էին սենատից, որը փաստորեն մի հլու-հնազանդ գործիք էր կայսեր ձեռքում, որից կախված էին սենատի թե՛ անձնակազմը, թե՛ ֆունկցիաները և թե՛ իրավունքները։

Պրինցիպատի «ռեսպուբլիկական» բնույթը նույնքան դեալ չէ, ինչպես և ռազմական դիկտատուրայի կողմնակիցների առաջ քաշած այն առասպելը, թե իբր կայսերական իշխանությունը ժողովրդին փրկեց այս կամ այն քաղաքական խմբավորման «բռնակալությունից» և «ազատությունը» ժողովրդին վերադարձրեց։ Այս միտքը շրջանառության մեջ է դրել դեռ Կեսարը, որն իրեն հայտարարում էր հռոմեական ժողովրդի ազատության պաշտպան»[2]։

Նա մի այնպիսի իշխանապետ էր, որը մի կողմից կռվում էր պետության մեջ օրինականության և խնայողության համար, իսկ մյուս կողմից «դաշինքներ ու թագավորություններ էր վաճառում»։ Նա մի այնպիսի մարդ էր, որ արձակում էր դաժան «օրենքներ՝ ճոխության դեմ» և նույնիսկ զինվորներին ուղարկում էր շուկաները ոչ միայն հավաքելու արգելված ընտիր խորտիկները, այլև խլելու «արդեն տրված ճաշերը՝ ուղղակի սեղանի վրայից», բայց միաժամանակ իր սիրուհիներին պահում էր փարթամության մեջ։ Բրուտոսի մոր՝ Սերվիլիայի համար նա, օրինակ, գնեց «մի մեծ մարգարիտ, որն արժեր վեց միլիոն» և նրան նվիրեց շատ հարուստ կալվածքներ։

Անձամբ լինելով Դոն Ժուան, անառակ Կեսարը[3] «կռվում էր» անառակության դեմ՝ հանուն հռոմեական առողջ ընտանիքի։

[1] Там же, стр. 383.
[2] Журнал «Вестник древней истории», № 3, 1946, Передовая статья «О некоторых проблемах истории античности», стр. 6.
[3] **Гай Светоний Транквилл**, Жизнь двенадцати цезарей, стр. 19—22.

Այսպիսին էր Հուլիոս Կեսարը. ասում էր մի բան, անում էր մի ուրիշ բան։

Վերջապես, վեցերորդ։ Կեսարն ստեղծեց այնպիսի պետական-վարչական բյուրոկրատական ապարատ, որն ի վիճակի եղավ պետության քաղաքացիներին դարձնել իր ներքին ու արտաքին քաղաքականության գործիքը, բնավ չքաշվելով այն բանից, որ այդպիսի միստեմը հանգեցնում է հասարակության դեգրադացիայի, մարդկանց ստիպում է հրաժարվել մարդկային արժանապատվությունից և բռնել քծնանքի, երկերեսանիության, ստրկամտության ուղին։ Այդպիսի կարգերի պայմաններում ամեն ինչ դառնում է պաշտոնական։ Գրականությունը, արվեստը, հումանիտար գիտությունները դառնում են պալատական, իսկ նրանց ականավոր գործիչներն ընկնում այդ ցանցի մեջ։ Այսպես, Հորացիոսը և Տակիտոսն ընդունեցին հրեաների մասին պաշտոնական կարծիքը և արհամարհանք ու ատելություն էին քարոզում նրանց նկատմամբ։

Այս է մոտավորապես այն պետական «իմաստության «հավատամքը», որ ստեղծեց Կեսարը և որը Արևմուտքի «լուսավոր» կառավարիչների ու Արևելքի ոչ լուսավոր բռնապետների համար դարձավ աստվածաշունչ։ Նրանք բոլորը հավասար չափով ձգտում էին ունիվերսալիզմի, առաջնորդվում Կեսարի սխեմայով, հաճախ նույնիսկ ընդօրինակելով նրա գործողությունները։ Ինչ խոսք, Կեսարի ներքին (ինչպես և արտաքին) քաղաքականության հիմունքները մշակվել էին նրանից առաջ, բայց Կեսարը այնպիսի կատարելության հասցրեց դրանք, որ տիպարներ դարձան անգամ XX դարի գաղութային իմպերիալիզմի գործիչների համար։

§ 56. ՄՏՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐՆ Է։ Իշխանության գլուխ անցնելուց հետո Հուլիոս Կեսարը հատուկ ուշադրություն դարձրեց «մտրակի և բլիթի» քաղաքականությանը։ Վերջինս հանգում էր չորս խնդրի։ Առաջին խնդիրն էր՝ «սեփական տան մեջ ամուր կարգուկանոն» հաստատել։ Առանց դրան անհնարին էր արշավի դուրս գալ գերշահույթի գաղութային նոր աղբյուրների համար։ Առաջին

հերթին հարկավոր էր մտրակով դատաստան տեսնել քաղաքական բոլոր հակառակորդների հետ։

Ասորեստանի հին թագավորների՝ ահաբեկման ու բռնությունների քաղաքականությունն այնպիսի տեսք էր ստացել, որ անգամ իրենց պալատները զարդարում էին մորթազերծման պատկերներով։ Դրանք արտահայտում էին ոչ միայն արքաների հիշատակը, նրանց «մարտական քաջագործությունները», այլև հիշեցնում էին բոլորին, թե ինչ է նրանց սպասում, եթե ընդվզեն երկրի կառավարիչների դեմ, որոնք կոչվում էին Ասուրի՝ ասորական պետության գլխավոր աստծո որդիներ։ Այդ կառավարիչներից նույնիսկ մի քանիսը կրում էին «Ասուրնասիրպալ» անունը, որ նշանակում է «Ասուրը պաշտպանում է որդուն»։ Թող փորձեին չկատարել նրանց կամքը։

Այդպես էին վարվում նաև Հռոմի «աստվածազարմ» կայսրերը։ Նրանք վերահսկում էին մարդկանց «ոչ միայն արարքները, այլև թե՝ խոսքերը, թե՝ նշանները (знаки) և թե՝ նույնիսկ մտքերը»[1]։ Տիբերիոսի ժամանակ մի կին մահվան դատապարտվեց այն բանի համար, որ քնելիս հանդգնել էր հանվել կայսեր պատկերի՝ նրա քանդակի առջև։ Ո՞վ էր նրան մատնել իշխանություններին՝ ամուսի՞նը, ստրկուհի՞ն, թե՞ հարևանուհին։ Բայց մի՞թե այստեղ կարևոր է, թե ով էր նրան մատնել։ Ամենափոքր խակ կասկածանքների համար մարդկանց մեղադրում էին պետական դավաճանության մեջ, կամ, ինչպես այն ժամանակ արտահայտվում էին, «մեծությանը վիրավորելու», այսինքն կայսեր վիրավորելու մեջ։

Այս ամենն ինչքա՞ն նման է այն բանին, ինչ որ երեկ կար և ինչ այսօր կատարվում է իմպերիալիստական ագրեսիվ երկրներում։ Ֆաշիստական Գերմանիայում յուրաքանչյուր երեք կամ չորս մարդուց մեկը կամա թե ակամա աշխատանքի մեջ էր ներգրավված Գեստապոյում, «գերհանձար» ֆյուրերի հրամանով պարբերաբար կազմակերպում էին մարդ-

[1] Ш. Монтескье, Избр. произв., М., 1955, стр. 107.

կանց որս, այրում գիտական գրքեր, հանդեսներ, վերահսկում քաղաքացիների «ոչ միայն արարքները, այլև թե՛ խոսքերը, թե՛ նշանները և նույնիսկ մտքերը»։

Հնում բարդուղիության գիշերներն ավելի համեստ բնույթ ունեին, քան մեր օրերում։ Առաջ մարդկանց սպանում էին բացահայտորեն՝ դաշույնով կամ խոշտանգումներով, կամ պարզապես ջրասույզ էին անում Տիբերում ու Տիգրիսում։ Այժմ այդ բանն անում են գաղտնի և վիթխարի մասշտաբներով՝ հոգեառ մեքենաներով, մասաղացներով։ Այստեղ բանը բնավ էլ միայն տեխնիկայի զարգացման մեջ չէ. առաջ հարկավոր էր բնաջնջել հարյուրների, հազարների, իսկ այժմ գործ ունեն հարյուր հազարների հետ։

§ 57. ԱԳՐԵՍԻՎ ԲԱՆԱԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴ ԽՆԴԻՐՆ Է։ Ինչպես նոր, այնպես էլ հին «աստվածները» երկրորդ խնդիրը համարում էին ռազմական տեխնիկայի՝ գաղութային ագրեսիվ պատերազմի գործիքների անխոնջ կատարելագործումը։ Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ շահագործող բոլոր հասարակարգերի հիմնական ջանքերը ուղղված էին հենց այդ բանին։

Որքա՜ն միջոցներ, ինչքա՜ն տաղանդ ու աշխատանք է ներդրվել ռազմական գործի մեջ։ Բավական է ասել, որ պատերազմի ու նրա նախապատրաստման ծախսերը միայն XX դարի առաջին կեսին ամբողջ աշխարհում կազմել են ավելի քան չորս տրիլիոն դոլար։ Դրանով կարելի էր կես դար ձրի հաց տալ երկրագնդի բոլոր բնակիչներին և բարեկարգ տներ կառուցել 500 միլիոն ընտանիքի համար։ Մեր օրերում վիթխարի գումարներ են ծախսվում նոր պատերազմի նախապատրաստման վրա. տասնյակ միլիոնավոր մարդիկ անարտադրողական աշխատանքով են զբաղված։

Պատերազմ նախապատրաստելու և վարելու փողը պետությունը օդից չի վերցնում։ Նա քամում է ժողովրդից, նրա ուտելիքի, հագուստի հաշվին։ Ֆաշիստական Գերմանիայում ծնունդ առած «Հրանոթներ յուղի փոխարեն» արտահայտությունը բնորոշ է ամեն մի ագրեսիվ պետության քաղաքականությանը։

§ 58. ԲԼԻԹԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐՆ Է։ Սակայն պարզամտություն կլիներ ենթադրել, թե «առաջին» և «երկրորդ» խնդիրները կատարվում են միայն մտրակի քաղաքականության գործադրմամբ։ Իհարկե, ո՛չ։ Այդ նպատակներին պակաս չափով չի ծառայում բլիթի քաղաքականությունը։

Այս խնդիրը թեպետև «երրորդ խնդիր» է կոչվում, այնուամենայնիվ, ինչպես տեսանք Կեսարի օրինակով, էքսպանսիոնիստական շրջանները այն փրագործում են նախքան իրենց ներկայացուցչի՝ «ուժեղ մարդու» իշխանության գլուխ անցնելը, և այն գործում է նրա տիրապետության ամբողջ ժամանակամիջոցում։

Հեթանոսական շրջանի երկրային աստվածների բլիթի քաղաքականությունը նույնպես արտահայտվում էր ժողովրդի հանդեպ «հոգատարություն ցուցաբերելով»։ Խոր հնությունից մեզ հասած մակագրություններից մեկում Սարգոն թագավորն ասում է, որ ինքը «պաշտպանում է իրավունքն ու արդարությունը», պաշտպանում է «թույլերին ու աղքատներին»։ Նա իրեն ընտրել էր նույնիսկ այնպիսի անուն, որը ծառայում էր երրորդ խնդրի նպատակներին։ «Սարգոն» նշանակում է «իսկական թագավոր»։ Եթե արդարացիորեն խոսենք դրա մասին, ապա պետք է ասել, որ իրականում նա իր «ժողովրդական» գործերով նվաճել էր շատ երկրներ։ Կարևոր չէ, որ սարգոններն իրենց ժողովրդին հասցրին այնպիսի վիճակի, որ նա դուրս եկավ պատմության թատերաբեմից, և այժմ աշխարհում չկան ասորական ազգ, Ասորեստան, բայց «իսկական արքաները» պատմության մեջ ստեղծեցին «ասորական դար»։

Հռոմի «աստվածազարմ» կայսրերը, Պեմանի բառերով ասած, հռոմեական ժողովրդի համար կառուցում էին «սոցիալիզմ ու կոմունիզմ»։ Եվ, ինչ խոսք, հռոմեական խաժամուժի կյանքը դրախտային չէր, երբ ստանում էր ձրի հաց ու այլ մթերքներ, և Կեսարը, ի լրումն այդ ամենի, նրա համար «կազմակերպում էր խիստ բազմապիսի զվարճալիքներ՝ և՛ գլադիատորների մարտ, և՛ թատերական ներկայացումներ քաղաքի բոլոր թաղերում ու բոլոր լեզուներով, և՛ ձիարշավներ կրկեսում, և՛ ատլետների մրցախաղեր, և՛ ծովամարտ», և՝

շատ ու շատ այլ զվարճալիքներ։ Այդ բոլորը տեսնելու համար ամեն կողմից գալիս-հավաքվում էին այնքան մարդիկ, որ եկվորներից շատերը գիշերում էին փողոցներում ու նրբանցքներում, վրանների տակ, «իսկ հրմշտոցը այնքան սաստիկ էր լինում, որ շատերին, այդ թվում երկու սենատորի, ճզմելով սպանեցին»[1]։

Այսպես էր հնում, իսկ հետո՞, բազում դարեր հետո՞։

Հիտլերը գործում էր «սոցիալիզմի» լոզունգով և ուզում էր XX դարը դարձնել «գերմանական դար»։ Նա գործում էր նաև հանուն «ժողովրդի», խոսում էր այն մասին, որ Գերմանիան ունի «պատմական միսիա», այն է՝ ապահովել «հազարամյա» տիրապետություն աշխարհի վրա։ Գաղութարարները համաքաղաքացիներին իրենց նվաճողական քաղաքականության գործիք դարձնելու համար այն միտքն են ներշնչում, թե որքան շատ լինեն նոր հողերը, գերշահույթի աղբյուրները, այնքան մեծ կլինի երկիրը, այնքան լավ կապրեն իրենք։ Պատմական փաստերը միանգամայն ուրիշ բան են վկայում։

§ 59. ՆՎԱՃՈՂ ԱԶԳՆ ԱՎԵՐԻՉ ՈՒԺ Է։ «Նվաճող ազգը» շարունակ հանդես է գալիս իբրև ավերիչ, այլ ոչ թե ստեղծարար ուժ։ Ասորեստանը ժողովուրդներին բերեց շատ վիշտ ու տառապանք, բայց ամենշան ներդրում կատարեց հին աշխարհի կուլտուրայի մեջ։ Ասենք, ինչ էլ որ ունեին, գրեցին ոչ թե իրենց լեզվով, այլ ակադերեն։ Եվ բավական էր ինքնուրույնության կորուստը, որ արագորեն հեռանային ասպարեզից։

Նույնը պետք է ասել և Հռոմեացիների մասին։ Նրանց լեգեոներները սպանեցին Արքիմեդին, բայց աշխարհին չտվեցին ո՛չ Արքիմեդ, ո՛չ Էվկլիդես, ո՛չ Թալես, ո՛չ էլ Էրատոսթենես։ Հռոմեացիների գործը միայն զենքն էր, այլ ո՛չ թե գիտությունը, ավերումը և ո՛չ թե կառուցումը։ Մի քանի դար շարունակ Հռոմեացիները չէին կարողանում կարգուկանոն հաստատել նույնիսկ օրացույցի քաոսի մեջ։ Եվ միայն Հուլիոս Կեսարը մեր դարաշրջանից առաջ 46 թվականին

[1] **Гай Светоний Транквилл,** Жизнь двенадцати цезарей, М., 1964, стр. 17—18.

մտցրեց «նոր» օրացույց, որը փաստորեն ոչ թե հռոմեական, այլ եգիպտական օրացույց էր։ Նրանք կազմեցին իրենց այբուբենը (լատիներեն) հենվելով հունական գրի վրա, երկրպագում էին «ոլիմպյան» աստվածներին, փոխելով նրանց հունական անունները։ Եվ այն, ինչ ունեին (ճանապարհներ, կամուրջներ, պալատներ, ջրմուղներ), դարձյալ ուրիշ ժողովուրդներին կողոպտելու, ստրուկ բանվոր-արհեստավորների և ստրուկ գիտնականների աշխատանքի ու տաղանդի պտուղներն էին։ Պատահական չէ, որ «ասորի», «հռոմեացի» բառերը հնում բոլոր լեզուներով ստրկության, կեղեքման, կամայականության խորհրդանիշներ էին, հնչում էին այնպես, ինչպես այժմ «ֆաշիզմ» բառը։

Գեղեցիկ էր հույն ժողովրդի արշալույսը, այնքան գեղեցիկ, որ Կ. Մարքսի արտահայտությամբ, մարդկության արշալույսը դարձավ։ Համենայն դեպս, բազում վսեմ արժեքների համար, որ մարդկությունն ունի մտավոր ու պրակտիկ գործունեության շատ բնագավառներում, պարտական ենք այդ արշալույսին։

Այդ բոլորը ստեղծվեց այն ժամանակ, երբ հույները իսկապես իրենց անկախ պետությունների ազատ քաղաքացիներն էին, այլ ոչ թե գործիք նվաճողների ձեռքում։ Իսկ ազատ մարդը միշտ ազատ է ճշմարտությունը որոնելիս։ Եվ հին հույները ճշմարտությունը որոնում էին ոչ թե ուրիշին կողոպտելու, հարևանի հողը զավթելու մեջ, այլ աշխատանքում, գիտության, արվեստի, բնության գաղտնիքները հայտնագործելու մեջ։ Դա հույն ժողովրդին հնարավորություն տվեց աշխարհին այնպիսի մարդիկ տալ, որոնք մինչև օրս էլ մեր ուսուցիչներն են։ Բավական է բերել միայն մի օրինակ։ Մեր այսօրվա երկրաչափության դպրոցական դասագիրքը ավելի քան կիսով չափ ուղղակի գալիս է հույն գիտնական Էվկլիդեսից, որն ապրել է մոտավորապես 2.200 տարի առաջ։ Իսկ ինչքա՞ն այդպիսի էվկլիդեսներ ունեին հույները։ Սակայն, երբ հույները դուրս եկան իրենց ազգային սահմաններից՝ սկզբում մակեդոնական ֆալանգների, իսկ այնուհետև հռոմեական լեգեոնների կազմում, դարձան նոր կալի «թըշ-

նամիներ ժողովրդի», նրանց արշալույսը պղտորվեց, մռայլվեց, արյունոտվեց։

Այո՛, պատմական փաստերը վկայում են, որ այն ժողովուրդները, որոնք չեն մղում կամ հրաժարվում են մղել գաղութային, զավթողական պատերազմներ, իրենց կյանքը կառուցելու լավագույն հնարավորություններ են ստանում։ Բավական է բերել Շվեդիայի ու Շվեյցարիայի օրինակը։ Կապիտալիստական աշխարհի բոլոր երկրներից հենց այս երկրների վերնամակարդակն է ամենից բարձր։ Շվեդիայում կյանքի միջին տևողությունը ավելի քան 70 տարի է, նույնը կարելի է ասել նաև մի այնպիսի գյուղատնտեսական երկրի մասին, ինչպիսին է Դանիան։ Պատահական չէ, որ գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ռուս ժողովրդին կոչ էին անում ո՛չ թե գործիք դառնալ աշխարհակալություն երազող ցարերի ձեռքում, այլ զբաղվել ներքին կյանքի կազմակերպմամբ[1]։

§ 60. ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՍԵՎ ԳՎԱՐԴԻԱՆ։ «Մտրակի և բլիթի» ընդհանուր քաղաքականության մեջ մտնում է ևս մի խնդիր՝ սև գվարդիայի կազմակերպումը։ Հնուց ի վեր կառավարող դասակարգերը պետության քաղաքացիներին բաժանում են երեք կարգի՝ «սև գվարդիայի» անդամներ, «անտարբերներ ու լռակյացներ» և «անհոսալիներ»։ Առաջիններին վերաբերվում են սիրով, երկրորդներին՝ անտարբեր, երրորդներին՝ թշնամաբար։ Առաջին խմբի մեջ մտնում են ապաստակարգային տարրերը, որոնք կուրորեն կատարում են վերևից եկող հրամաններն ու կարգադրությունները, նույնիսկ առանց հասկանալու դրանց իմաստն ու բովանդակությունը, երկրորդի մեջ՝ այն մարդիկ, որոնք ձգտում են «անխռով» ապրել, իսկ երրորդի մեջ՝ հասարակության առավել առողջ ու ռևոլյուցիոն տարրերը, որոնք պատրաստ են մեռնելու հանուն ժողովրդի ու երկրի ամենավսեմ շահերի։

Հին Հռոմում սևգվարդիականների դերը խաղում էին լյումպեն պրոլետարները։ Առանց նրանց աջակցության ոչ ոք

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 16, часть 2, стр. 37. Первое изд.

չէր կարող «Հավերժական քաղաքի» սենատի տերը դառնալու հույս ունենալ։ Ուստի «հանրապետության առաջին քաղաքացու» տեղի բոլոր հավակնորդները հռոմեական լյումպեն պրոլետարիատի նկատմամբ փարում էին «ձրի հացի ու զվարճավայրի» քաղաքականություն։ Այդպես էին վարվում, օրինակ, Պոմպեոսը, Կեսարը և ուրիշներ։ Կ. Մարքսը մեջ է բերում Սիսմոնդիի այն դիպուկ դիտողությունը, թե «Հռոմի պրոլետարիատն ապրում էր հասարակության հաշվին, մինչդեռ արդի հասարակությունն ապրում է պրոլետարիատի հաշվին»։

Ստրոսկները նույնպես հաճախ հանդես էին գալիս նաև սև գվարդիան համալրողների դերում և գործիք դառնում այս կամ այն «ուժեղ մարդու» ձեռքին։ Բոնակալ Սուլլան, որն իրեն «Երջանիկ» էր հայտարարել, 10 հազար ստրոսկի ազատություն տվեց, որովհետև «առաջին սենատոր» դառնալիս իրեն օգնել էին։ Գայոս Մարիոսը զինեց Նումիդիայի ստրուկներին և նրանց վրա հենվելով գրավեց իշխանությունը. նա հինգ օրվա ընթացքում ընաջնջեց համարյա ամբողջ կառավարական պարտիան՝ արիստոկրատիան։ Այո՛, «ստրոսկները... միշտ խաղալիք են եղել տիրող դասակարգերի ձեռքում» (Լենին)։

«Սև գվարդիայի» օգնությամբ են կառավարող դասակարգերը հաշիվ տեսնում ժողովրդի ակտիվ մասի հետ, նրանցից են հավաքագրում մարտական ջոկատների անդամներ՝ գաղութային ժողովուրդներին կեղեքելու, զավթողական պատերազմներ մղելու համար։

Հայտնի է, թե ինչպիսի դեր էին խաղում սևհարյուրակայինները նախառևոլյուցիոն Ռուսաստանում։ Ցարի սև գվարդիան դատաստան էր տեսնում Ռուսաստանի ժողովուրդների ռևոլյուցիոն ու ազգային-ազատագրական շարժման նկատմամբ, կազմակերպում հրեական ջարդեր[1], ազգամիջյան բա-

[1] Ավելորդ չի լինի հիշեցնել, որ հրեական առաջին ջարդերը դարձյալ տեղի են ունեցել հռոմեական կայսրության ժամանակ։ Կայսր Գայոսը չէր թաքցնում իր արհամարհանքը հուդաների նկատմամբ։ Կամ նրա օգնշնչմամբ, կամ Գայոսին հաճոյանալու համար Ալեքսանդրիայի հռոմեական փոխկառավարիչ Ավիլիոս Ֆլանկոսը 38 թվականին հուդայական թագավոր Իրոդ Ագրիպպայի այցելելու օրը հրահրեց քաղաքային

խումներ, ցարական պահնորդական բաժնի համար ապահովում էր համապատասխան կադրեր՝ պրովոկատորներ, մատնիչներ, լրտեսներ, մարդասպաններ։ Սև գվարդիայում հավաքագրվում էին հասարակության տականքները, այլասերված մարդիկ, իշխող դասակարգի այսպես կոչված «հոգևոր ստրուկները»։

Նույնքան կեղտոտ էր Թուրք սուլթանների «սև գվարդիան»։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հոդվածներից մեկում կարդում ենք. «Տասներկու միլիոն սլավոններ, հույներ, վլախներ, առնաուտներ[1] ենթակա են մեկ միլիոն Թուրքի»[2]։ Թուրք գաղութարարները այդ ժողովուրդների նկատմամբ իրենց տիրապետությունն իրագործելիս հենվում էին «իսլամական մոլեռանդության վրա, որի ապավենը մի քանի խոշոր քաղաքների գերազանցապես Թուրք խուժանն էր»[3]։

Այնուհետև գիտական կոմունիզմի հիմնադիրները շարունակում են.

«Եվրոպայում Թուրք բնակչության գլխավոր պատվարը, չհաշված ռեզերվները, որ միշտ կարելի է գտնել Ասիայում, Պոլսի և մի քանի ուրիշ մեծ քաղաքների քաղաքային ամբոխն է։ Վերջինս գերազանցապես Թուրք է և, չնայած այն բանին, որ նրան աշխատանք են տալիս գլխավորապես քրիստոնյա կապիտալիստները, նա, այնուամենայնիվ, մոլեգնորեն պաշտպանում է իր երևակայական գերազանցությունն ու իրական իրավունքը՝ ամբարիշտ կերպով ապօրինություններ գործելու, մի իրավունք, որը նրան տալիս է, ի հակակշիռ քրիստոնյաների, պատկանելությունը արտոնյալ կրոնին՝ իսլամին։ Քաջ հայտնի է, որ ամեն մի կարևոր coup detot*-ի ժամանակ այդ ամբոխը անհրաժեշտ է իր կողմը գրավել կա-

խաժամուժի հարձակում հուդաների վրա։ Հովսեփ Ֆլավիոսը հաղորդում է, որ հուդայական պատերազմի ժամանակ Կեսար քաղաքում մեկ ժամում բնաջնջվեց 20 հազար հրեա։

1 Այրանացիների Թուրքերեն անվանումն է։

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, М., 1957, второе издание, стр. 5.

3 Там же, стр. 6.

* Պետական հեղաշրջում։

շառքի ու գովաբանության միջոցով։ Նա էլ կազմում է, չհաշված մի քանի գաղութացված օկրուգները, Եվրոպայի Թուրք բնակչության գագաթի ու կոմպակտ զանգվածը։ Եվ հասկանալի է, վաղ թե ուշ միանգամայն անհրաժեշտ կլինի եվրոպական մայրցամաքի ամենաանիծյալ մասերից մեկը ազատագրել ամբոխի տիրապետությունից, որի համեմատությամբ Հռոմեական կայսրության ժամանակների ամբոխը իմաստունների ու հերոսների հավաքածու էր»[1]։

Այսպիսի սև գվարդիաներ ունեն բոլոր երկրները, առանձնապես այնտեղ, որտեղ իշխանության գլուխ կանգնած է «պետության առաջին քաղաքացին»։ «Հին և նոր աստվածներ» պարագրաֆում մենք մոռացանք նշել, որ «տեսանելի աստվածները վաղուց ի վեր պաշտոնապես իրենց չեն անվանում «աստվածներ» կամ «աստվածների որդիներ» (խոսքը վերաբերում է «առաջավոր» երկրներին), ինչպես այդ անում էին շատ հին ժամանակներում, այլ համեստորեն իրենց անվանում են «պետության առաջին քաղաքացիներ»։ Հռոմի առաջին կայսրերն էլ իրենց այդպես էին կոչում՝ պրինցեպսներ, որ նշանակում է պետության առաջին սենատոր կամ առաջին քաղաքացի։ Այդ տերմինը այնուհետև փոխվեց ուրիշով՝ կայսր, ցար, թագավոր, պրեմիեր-մինիստր, ֆյուրեր, դուչե և այլն, բայց դրանից բովանդակությունը, ինչպես տեսնում ենք, չի փոխվել։

Ուրեմն այսպես, «երկրի առաջին մարդկանց», «ուժեղ մարդկանց» առաջին գործն էր իշխել՝ հենվելով սև գվարդիականների ավիններին։ Արդեն ասվեց, որ Հռոմում ոչ մի մարդ չէր կարող «առաջին սենատորի» հավակնություն ունենալ, եթե նախապես չստանար Հռոմի «պլեբեյների» «խուժանի» աջակցությունը։ Եվ պատահական չէ, որ ոչ միայն զինվորական պաշտոնյաների վարձատրությունը, այլև պլեբեյների հացի ու զվարճանքների կազմակերպման ծախսերը կատարվում էին պրինցեպսի միջոցներից։ Հռոմի ստրկատերերը սև գվարդիային էին դիմում խիստ գովաստանական ու ամպագորգոռ բառերով։ Եվ Հռոմի սև գվարդիականները վարձում

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, стр. 6—7.

էին, թե իրենք իսկապես «մարդկության հույսն են», ամենաքաղաքակիրթ ու առաջավոր մարդիկ, որոնք կոչված են «քաղաքակրթություն» տարածելու «բարբարոսների»՝ բոլոր ոչ հռոմեական ժողովուրդների մեջ։ Իսկ փրկանում նրանք ամենամեծ բռնակալների, հռոմեական պրինցեպսների հոգևոր ստրուկներն էին։ Երազելով աշխարհի ժողովուրդների «ազատագրման» (այսինքն՝ նվաճման) մասին, նրանց մտքով անգամ չէր անցնում «պետության առաջին քաղաքացիների» չծից ու կամայականություններից ազատվելը, մինչև որ նրանց, ինչպես հարկն է, շազատագրեցին «բարբարոսները», որոնք, ի վերջո, կարողացան ջախջախել աշխարհի ժողովուրդներին ստելի Հռոմի կայսրությունը։

Նման «վսեմ գաղափարներով» էին ղինված Հիտլերի ու Մուսոլինիի սև գվարդիաների զինվորները, իսկ մեր օրերում՝ Սալանի օասական ջոկատները, Ամերիկայի փոքրիկ Հիտլերի՝ Ռոբերտ Ռեյչի[1] ջոկատները և իմպերիալիստական պետությունների մյուս «ազատին» մարդկանց զինվորները։

Ասում են՝ մի վախեցիր թշնամուց, նա կարող է միայն ապանել քեզ, մի վախեցիր բարեկամից՝ ամենաշատը նա կարող է դավաճանել քեզ, այլ վախեցիր բարեհոգի մարդկանցից, որոնք իրենց անտարբերությամբ ու լռությամբ ավելի մեծ վնաս են հասցնում երկրին։ Որքան ուժեղ է իշխող դասակարգերի սև գվարդիան, այնքան այդ երկրում շատ են բարեհոգի ու լռակյաց մարդիկ։ Սև գվարդիականները կեղեքիչների ձեռքում եղել են և մնում են այն ուժը, որը վերահսկում է պետության բոլոր քաղաքացիների ամեն մի քայլը։

Ամենաառակցիոն ուժերի աջակցությամբ Հիտլերը դեմագոգիկ լոզունգներով իշխանության գլուխ անցավ և, նշված չորս խնդիրներն իրագործելուց հետո, սանձազերծեց երկրորդ համաշխարհային պատերազմը։ Արդյունքը հայտնի է՝ Հիտլերը իր «մեծ քաղաքականությամբ» աշխարհ մտավ շքա-

[1] «Маленький фюрер» и большой бизнес, «Правда», 1 января, 1962.

մուտքից, բայց դուրս եկավ ետնամուտքից։ Ու, այնուամենայնիվ, նոր հիտլերներն ընթանում են հների հետքերով։

Նշված չորս խնդիրները, ինչպես նաև նույնանման դոկտրինները, մի միասնական ամբողջություն՝ ժամանակակից իմպերիալիստական աշխարհի առավել ագրեսիվ պետությունների պետական սիստեմի քաղաքականության բաղկացուցիչ մասերն են։ Այդպիսին էր Գերմանիան՝ ֆաշիստական պետությունը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ պետությունը, ինչպես և նրա ղեկավարները կանգնեցին միջազգային տրիբունալի առջև։ Նրանք մեղադրվում էին աշխարհի դեմ, մարդկության դեմ կատարած հանցագործությունների մեջ[1]։ Այդ հրեշավորություններն արվել էին հանուն հարևան երկրների գավթման, գերմանական գաղութային հզոր կայսրության, հանուն այն բանի, ինչին շարունակ ձգտել են և ձգտում են գաղութարարները։

Նյուրնբերգի դատավարության պատմական նշանակությունը, իմիջիայլոց, այն է, որ առաջին անգամ պատմության մեջ արդարադատությունը դատապարտեց այդպիսի պետական գործիչներին. իբրև ոճրագործություն դատապարտվեց նրանց «պատմական միսիան», դատապարտվեց այդ պետությունը, նրա քաղաքական, իրավաբանական ու մյուս հիմնարկներն այն բանի համար, որ հանցագործների ձեռքում դրանք դարձել էին «համաշխարհային իրավակարգի» ստեղծման գործիք[2]։

Հիտլերյան Գերմանիայի պետական սիստեմի «տեսական» հիմքը այն էր, որ գերմանական ժողովուրդը ղեկավարվում էր «ֆյուրերության» ակզբունքով, որի համաձայն իշխանությունը կենտրոնանում էր «ուժեղ մարդու»— ֆյուրերի ձեռքում, որից նրա օգնականները լիազորություններ ունեին հիերարխիկ կարգով, ընդ որում նրանցից ամեն մեկն անվերապահորեն ենթարկվում էր իր անմիջական պետին ու միև-

[1] Нюрнбергский процесс, сборник материалов, издание третье, исправление, М., 1955, том I, стр. 35.

[2] Там же, Выступление главного обвинителя от СССР Р. А. Руденко, стр. 251.

նույն ժամանակ անսահման իրավասություններ ուներ իր ոլորտում։ Ֆյուրերի իշխանությունն «աստվածային» էր համարվում, տարածվում էր երկրի քաղաքացիների հասարակական ու անձնական կյանքի բոլոր կողմերի վրա[1]։

Հիտլերյան պետության քաղաքական հենարանը նացիոնալ-սոցիալիստական պարտիան էր, երկրում միակ լեգալ պարտիան։ Նա իր մեծաքանակ օժանդակ կազմակերպություններով (արհմիութենական, երիտասարդական, սպորտային և այլն) պետության նման, ֆյուրերի ձեռքում գործիք էր դարձել «նոր կարգի խնդիրների ու նպատակների կատարման համար»[2]։

§ 61. ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆ Է ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՊԵՏԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼ «ՄՏՐԱԿԻ ՈՒ ԲԼԻԹԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամ նեոգաղութատիրությունն է պետական օրգաններ ստեղծել, որպեսզի հասնի իր ներքին ու արտաքին քաղաքական նպատակների իրագործմանը ծառայող «մտրակի ու բլիթի» քաղաքականությանը։ Գերմանիայում այդպիսի հիմնարկություններ էին Գեստապոն՝ Հիմլերի գլխավորությամբ և Գեբելսի պրոպագանդայի մինիստրությունը։ Հիմլերի խնդիրն էր վերահսկել Գերմանայի յուրաքանչյուր քաղաքացու ամեն մի քայլը, բնաջնջել ոչ հաճելի մարդկանց, ինչպես նաև մահվան գործարաններ պատրաստել Եվրոպայի բոլոր ժողովուրդների համար։ Իսկ Գեբելսը, Հիտլերի խոսքերի համաձայն, պարտավոր էր «պրոպագանդայի խելացի ու տևական կիրառման միջոցով... երկինքը ժողովրդին ներկայացնել... իբրև դժոխք և, ընդհակառակն, ամենաաղքատ կյանքը պատկերել իբրև դրախտ»[3]։

Ֆրանսիական առածն ասում է. «Երբ սկսվում է պատերազմը, առաջին զոհը դառնում է ճշմարտությունը»։ Այսպես

[1] Нюрнбергский процесс, том I, выступление главного обвинителя от СССР Р. А. Руденко, стр. 38.

[2] Там же, стр. 37.

[3] **А. Гитлер**, Майн Кампф, цитата по книге Нюрнбергский процесс, том 2, стр. 177.

էր առաջ։ Նեոգաղութատիրության օրոք ճշմարտությունը զոհվում է ոչ միայն պատերազմի, այլև խաղաղ ժամանակ։ Նեոգաղութատիրությունն ուզում է բոլոր մարդկանց ու ժողովուրդներին անցկացնել իր լվացքի մեքենաներով։ Այդ բանին նա ձգտում է պրոպագանդայի ժամանակակից բոլոր միջոցներով, այդ թվում թերթերով. ընդամենը Գերմանիայում կային 2.300 ամենօրյա թերթեր։ «Գերմանական ամբողջ մամուլը,— ասել է հիտլերիզմի գաղափարախոսներից մեկը՝ Հանս Ֆրիցշեն,— «Գերմանական մամուլի բաժնի» միջոցով դարձել էր պրոպագանդայի մինիստրության գործիքը և ենթարկված էր կառավարության քաղաքական նպատակներին»[1]։

§ 62. ՊԱՇՏՈՆՅԱՅԻ ԲԱԶԿԱԹՈՌԸ ԵՎ ՕՐԵՆՔԸ։ Ահաբեկման (մտրակի) և խաբեության (բլիթի) օրգաններում գործում են մեծ ու փոքր պաշտոնյաներ՝ ֆյուրերներ։ Նրանք մարմնավորում են օրենքը, որի ամեն մի կետը մեկնաբանում են իրենց ուզածի պես։ Օրենքը խիստ այլազան երանգներ է ընդունում՝ նայած, թե ով է այդ աթոռը գրավում։ Սակայն, բոլոր դեպքերում ամեն մի պաշտոնյայի բախտը կախված է վերադասի քմահաճույքից, որի կամքով նա կարող է ցմահ գրավել այդ աթոռը կամ ոչնչացվել։ Ուստի պաշտոնյան մտածում է միայն մի բանի մասին՝ որքորեն կատարել վերադասի ցուցումները. նրան չեն կարող հուզել ժողովրդի շահերը։ Հենց այդ հանգամանքն է ժողովրդի ու պետության միջև ստեղծում, ինչպես ասում են, ջինական պարիսպ կամ բաբելոնյան աշտարակ։ Եվ պատահական չէ, որ ֆաշիստական երկրներում ծնունդ առավ այն ասացվածքը, թե ով դեմ է կառավարությանը, նա կողմ է ժողովրդին։

Ֆեոդալական միապետների բացարձակ իշխանության կամայականությունների դեմ կռվելու նպատակով Եվրոպայի մտքի տիտաններն առաջարկեցին պետական իշխանությունը բաժանել միմյանցից անկախ երեք մասի՝ օրենսդրական, գործադիր ու դատական։ Քաղաքակիրթ մարդկությունն ընդունեց Մոնտեսքյոյի «Օրենքների ոգին»։ Նեոգաղութատիրության երկրները՝ ֆաշիստական պետությունները թող-

[1] «Вопросы истории», № 6, 1961, стр. 90.

թի վրա չհանդգնեցին հրաժարվել այդ կարգից, բայց իրականում ստեղծեցին ավելի վայրագ վարչաձև, քան եղել էր ֆեոդալական Եվրոպայում։ Միջազգային ռազմական տրիբունալի դատավճռի մեջ ասված է. «Գերմանիան ընդունել էր դիկտատուրան. նրա բոլոր տեսորիստական մեթոդներով հանդերձ։ Լկտի ու բացահայտ կերպով ժխտելով օրենքի միջոցով կառավարումը»[1]։

§ 63. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՈՉ ՈՔԻ ՀԵՏ ՉԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Գաղութատիրության վերածումը նեոգաղութատիրության կապված է մոնոպոլիստական կապիտալիզմը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի վերածվելու հետ։

«Իմպերիալիզմի ստադիայում լայն զարգացում է ստանում պետական մոնոպոլիստական կապիտալիզմը»[2]։ Մոնոպոլիաների առաջացումը և անը հանգեցնում են կապիտալիստական վերարտադրության պրոցեսին պետության անմիջական միջամտության՝ հօգուտ այն իմպերիալիստական մեծապետական շովինիստական շրջանների ֆինանսական օլիգարխիայի, որոնք պայքարում են հանուն «վաճառահանման շուկաների, կապիտալի ներդրման ոլորտների, հումքի և աշխատուժի համար, համաշխարհային տիրապետության համար»[3]։

Այս նպատակների համար պետական կապիտալիզմը իր ձեռքում կենտրոնացնում է հանրային արտադրությունը, հիմնական նյութական միջոցները և երկրում հաստատում «իր դիկտատուրան՝ փոքրամասնության դիկտատուրան մեծամասնության նկատմամբ», ընդ որում նա «ոչ ոքի հետ չի բաժանում քաղաքական իշխանությունը»։

Կապիտալիզմի զարգացման առաջին փուլում պետությունը ոչ միայն չէր միջամտում կապիտալիստական էկոնոմիկային, այլև, ընդհակառակն, վճռականորեն մերժում էր այն, գտնելով, որ այդպիսի միջամտությունը խանգարում է արտադրողական ուժերի զարգացմանը։ Դա բուրժուական դեմոկրատիայի ծաղկման ժամանակն էր։ Եվ նա, հասկանալի է, չէր կարող հանդուրժել այնպիսի խոչընդոտներ, որոնք կաշկանդեին իր ազատությունը, նախաձեռնությունն ու ձեռներեցությունը ազատ մրցակցության մեջ։ Նյութական միջոցները գտնվում էին առանձին կապիտալիստների, տրեստների, սինդիկատների, բանկերի, կապիտալիստական միությունների ձեռքին։

Զնայած բուրժուական դեմոկրատիայի ամբողջ պոչատությանը, այնուամենայնիվ ժողովրդական զանգվածները (և առանձնապես պրոլետարիատը) կարողացան այս կամ այն կերպ ճնշում գործադրել կառավարության քաղաքականության, պետական պաշտոնյաների աշխատանքի, կապիտալիստների վրա՝ կա՛մ իրենց քաղաքական ու արհմիութենական կազմակերպությունների միջոցով, կա՛մ առաջադիմական մամուլի, կա՛մ էլ գործադուրների, ցույցերի, մասսայական մանիֆեստացիաների կազմակերպման միջոցով, և այլն։

Գաղութային ժողովուրդները մետրոպոլիայի կառավարման այդպիսի դեմոկրատական ձևի ժամանակ կարողացան ունենալ ինչ-որ ազգային կազմակերպություններ, իրենց թերթերը, ակումբները, հանդեսները, դպրոցները և, այդպիսով, պաշտպանել իրենց ազգային արժանապատվությունը՝ դիմադրել գաղութային կեղեքման, ասիմիլացման և ֆիզիկական բնաջնջման քաղաքականությանը։ Այդ ամենը, ինչ խոսք, միայն լույսի շող էր կապիտալիստական խավարի թագավորության մեջ, բայց այն մարեց, երբ կապիտալիզմը վերաճեց պետական կապիտալիզմի։ Պետությունը դարձավ ամենազոր, նա տիրապետում է «ազգի կյանքին»[1], դառնում կոզրպատման ու ագրեսիվ «գործերի կառավարման կոմիտե»[2]։

Այդ բանը տեղի է ունենում բուրժուական հասարակության ներքին օրենքներով, իմպերիալիստական շրջանների էքսպանսիոնիստական ձգտումների պատճառով, որովհետև կապիտալիզմի անհամաչափ զարգացումը փոխում է պետու-

[1] Нюрнбергский процесс, том 2, стр. 954.
[2] ՍՄԿՊ ծրագիր, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 30։
[3] Նույն տեղը, էջ 10—11։

[1] ՍՄԿՊ ծրագիր, էջ 30։
[2] Նույն տեղը, էջ 31։

թյունների ուժերի հարաբերակցությունը և սրում նրանց հակասությունները։ «Իմպերիալիզմի հակասությունները,— նշել է կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների Մոսկվայի խորհրդակցությունը (1960 թ.),— արագացրին մոնոպոլիստական կապիտալիզմի վերաճումը պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի»։ Վերջինս «մոնոպոլիաների ուժը միացնում է պետության ուժին մի միասնական մեխանիզմում», որպեսզի առավելագույն չափով ավելացնի շահույթները՝ երկրի ներսում ժողովրդական հոծ զանգվածների շահագործման և մետրոպոլիայից դուրս փոքր ու թույլ ժողովուրդների կողոպտման միջոցով։

§ 64. ԱԳՐԵՍԻՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏԻ ՊԱՏՃԱՌՆ է։ Պետությունը դառնում է ժողովրդի ու երկրի տերը։ Նրան են պատկանում գործարանները, ֆաբրիկաները, հանքերը, անտառները, դաշտերը... «Պատերազմի ընթացքում,— ժամանակին նշել է Վ. Ի. Լենինը,—համաշխարհային կապիտալիզմը մի քայլ առաջ արեց ո՛չ միայն դեպի համակենտրոնացում ընդհանրապես, այլև անցումը ընդհանրապես մոնոպոլիաներից դեպի պետական կապիտալիզմ է՛լ ավելի լայն չափերով, քան առաջներում»[1]։

Սակայն այդ «մի քայլ առաջը» չէր բավարարում միջազգային ավազակներին։ Նրանք ուզում էին մասնավոր կապիտալիզմը պետական դարձնելով՝ բուն պետությունը ծառայեցնել որպես ներքին ու արտաքին ագրեսիայի գործիք։ Դժվար չէ պատկերացնել ոչ միայն տվյալ ժողովրդի, այլև բանվորական աշխարհի առակարի դրությունն այն ժամանակ, երբ մեծ երկրի ամբողջ էկոնոմիկան և իշխանությունը կենտրոնացվում է պետության ձեռքում, որի գլուխ կանգնում է մի ինչ-որ դիվահար Հիտլեր՝ «խելագար հանճար» (ինչպես նրան անվանել է ամերիկացի մի գիտնական), որը երազում էր ամբողջ աշխարհում «նոր կարգեր» հաստատել։ Այդպիսի երկիրը դառնում է միջազգային լարվածության, սարսափի, անվստահության, կասկածանքի, սպառազինությունների մրցավազքի և վերջապես միջազգային աղետի պատճառ։ Այդպիսի երկրներում «կառավարման դիկտատորական մեթոդները զուգորդվում են պառլամենտարիզմի ֆիկցիային, որը զուրկ է դեմոկրատական բովանդակությունից և զուտ ձևականության է վերածված»։ Դեմոկրատական կազմակերպությունները օրենքից դուրս են հայտարարվում, թաղավորում է կամայականությունն ու ապօրինությունը, պետական հիմնարկությունները, հասարակական կազմակերպությունները դառնում են կառավարող պարտիայի օժանդակ բաժանմունքներ, իսկ բուն պարտիան՝ կառավարման օրգան «խելագար հանճարի» համար։ Անփիճելի է, որ պետական կապիտալիզմը մի նոր քայլ է կապիտալիզմի զարգացման գործում, նրա նոր ձևը։ Պարզ է, որ քաղաքական-տնտեսական նեոգաղութատիրությունը, ի վերջո, հանգեցնում է ֆաշիզմի բացահայտ տերորիստական դիկտատուրայի, որի գլխավոր նպատակը արտաքին ագրեսիան է։ Հենց «մոնոպոլիստական կապիտալը ծնում է,— ասված է ՍՄԿՊ ծրագրում,— ֆաշիզմի գաղափարախոսություն՝ ծայրահեղ շովինիզմի և ռասիզմի գաղափարախոսություն»[1]։

§ 65. ԵՐԲ ՄԱՐԴ ԴԱԴԱՐՈՒՄ է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄՏԱՆԵԼՈՒՑ։ Ստրատեգիան որոշում է տակտիկան։ Ֆաշիզմի գաղափարախոսությունը ծնում է պետության կառավարման ֆաշիստական սիստեմ, որն իր հերթին հիմնված է անհատի ճնշման, մարդկային արժանապատվության և ժողովուրդների իրավունքների ժխտման վրա։ Այդպիսի պայմաններում մարդիկ վերասերվում են, դադարում բանական արարածներ լինելուց, ինքնուրույն մտածելուց, մարդավարի խորհելուց ու գործելուց։ Նրանք իրենց ամեն մի քայլը կատարում են միմիայն հրամանով, իսկ իրենց «ինքնուրույն» մտքերը հարմարեցնում ֆյուրերի «տեսությանը» և «միսիային»։

Եթե կապիտալիզմը մարդուն դարձրեց ապրանք, իսկ այդ ապրանքը մտածող է, ապա ֆաշիզմը ձգտում է, որ այդ մտածող ապրանքը դառնա չմտածող ապրանք։ Մարդը զրկվում է ոչ միայն քաղաքական, տնտեսական, այլև գաղա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 279։

1 ՍՄԿՊ ծրագիր, էջ 62։

փարական ինքնուրույնությունից։ Ստեղծվում է մի այնպիսի «համապարփակ» ձև, որի մեջ ֆաշիզմը ներդնում է իրեն ձեռնտու ամեն մի բովանդակություն։ Այդպիսով պետական կապիտալիզմը XX դարի կուլտուրական մարդկանց դարձնում է մարդակերներ։

Ֆրանսիական պառլամենտի դեպուտատ Վայան-Կուտյուրե Մարիա-Կլոդ Վաժելը, Նյուրնբերգի դատավարության ժամանակ ցուցմունքներ տալով «առանց ատելության ու առանց վախի խոսելու երդմամբ», ասաց, որ ֆաշիստական սիստեմը բթացրել էր գերմանացիներին և «նրանց հասցրեց այն բանին, որ նրանք այլևս մարդկային արարածներ չէին»[1]։

Այո, նորմալ մարդիկ չէին կարող կատարել այն, ինչ կատարեցին հիտլերականները։ Փիլիսոփայության և բժշկության դոկտոր գերմանացի Կրեմերը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին իբրև «բժիշկ» աշխատել է Օվսենցիմի մահվան ճամբարում։ Այդտեղ նա հատուկ առաջադրանք էր կատարում՝ մահացու սրսկումներ անում մարդկանց։ Պատերազմից հետո նա խոստովանվեց, որ «տեղի ունեցածի համեմատությամբ Դանթեի դժոխքը պարզապես կատակերգություն է թվում ինձ։ Օսվենցիմը հարկավոր է ոչնչացման ճամբար անվանել»[2]։

Ռուդոլֆ Հեսն այդ ոչնչացման ճամբարի պետն էր։ Նյուրնբերգի դատավարության ժամանակ նա պատմեց, թե ինչպիսի հրեշավոր խոշտանգումներ էր կազմակերպում մարդկանց բնաջնջելու համար։ Այն հարցին, թե «Դուք ինքներդ ունե՞ք ընտանիք ու երեխաներ, դուք երբևէ խղճացե՞լ եք այդ մարդկանց», Հեսը պատասխանեց. «այո՛», իսկ այն հարցին՝ «Բայց ինչո՞ւ դուք, այնուամենայնիվ, կատարում էիք այդ բանը», նա պատասխանեց. «չնայած այն բոլոր կասկածանքներին, որ ծագում էին իմ մեջ, միակ դեկավար սկզբունքը մնում էր ռայխսֆյուրեր Հիմլերի պարտադիր հրամանը և նրա՝ այդ հրամանին տված հիմնավորումը»։

Համանման հարցին հրեա ժողովրդի դահիճ Ադոլֆ Այխմանը տվեց այնպիսի պատասխան, ինչպես ֆաշիստական Գերմանիայի բոլոր «գլխավոր ու ոչ գլխավոր» ռազմական հանցագործները, որոնք մեղադրական աթոռին էին նստել։

Ֆաշիզմը դաժանությունը դարձրեց պետական քաղաքականություն։ Սակայն դաժանություն, ինչպես, այլ մասշտաբներով եղել է նաև առաջ։

Վաղուց արդեն հայտնի է դարձել, որ դաժանությունն արմատներ է գցում այն հասարակության մեջ, որը պառակտված է շահագործողների ու շահագործվողների, իշխողների ու ենթակաների։ Հենց այն դասակարգերը, որոնք ձգտել են միշտ լինել հարուստ, իշխող, ապրել ուրիշի արյուն-քրտինքի հաշվին, նրանք են առաջին անգամ դաժանության տիպար դառնում։

Ասորեստանի թագավորները՝ Սամասիադը, Ասուրբանիպալը, Սալմանասարը և մյուսները, դեռ մեր թվականությունից երկու հազար տարի առաջ, խոշտանգել են այն մարդկանց, որոնք չեն ցանկացել իրենց ստրուկը դառնալ, մորթազերծ են արել նրանց. դրա համար հատուկ գործիքներ են ունեցել։

Առանձին մարդկանց մորթազերծումից մինչև միլիոնավոր մարդկանց ու ամբողջ ժողովուրդների, ազգությունների ու ցեղախմբերի բնաջնջումը՝ այս է աշխարհի «փրկիչների մարտական» ուղին ասորական առաջին «արքա-աստվածներից» մինչև այսօրվա աշխարհի «փրկիչները»—ֆյուրերները, դուչեները, միկադոները և ուրիշներ։

Քրիստոսը հեզություն ու գթասրտություն էր քարոզում նույնիսկ թշնամիների նկատմամբ, իսկ նրա առաքյալները հնարեցին ինկվիզիցիան։ XX դարի նոր «մեսիաները» բացահայտորեն քարոզում են մարդատյացության գաղափար, իսկ նրանց առաքյալներն զբաղված են մարդկանց մասսայական ոչնչացման ավելի հրեշավոր մեթոդների հայտնագործմամբ։ Հոլբախը խիստ սխալվում էր՝ միայն մի ժողովրդի մարդկանց մեղադրելով այն բանում, թե իբր նրանք են առաջին անգամ դաժանություն գործադրել։

Դրանում մեղավոր է ոչ թե մի որևէ ժողովուրդ, այլ

[1] Нюрнбергский процесс, том 1, стр. 871.
[2] Журнал «Новое время», № 11, 1961, стр. 16.

մեղավոր են շահագործող դասակարգերը, դրա վրա հիմնված հասարակությունը։

§ 66. «ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ Է»։ Այս խոսքերը Նապոլեոնինն են։ Ամենամեծ բարբարոսները գաղութարարներն են։ Նրանք կատարելապես տիրապետում են այդ գիտությանը։ Հռոմի ստրկատերերն իրենց ժողովրդին ներշնչում էին այն միտքը, թե պատերազմը միակ ճշմարիտ արվեստն է, իսկական արհեստ ազնիվ մարդկանց համար, իսկ աշխատանքը՝ արհամարհվածների, ստրուկների գործ է։ Ելնելով դրանից՝ նրանք իրենց զինվորներին դաստիարակում էին տոկունության, ամեն տեսակ դժվարություններ ու ձախորդություններ հաղթահարելու, ինչպես նաև հնազանդության ոգով։

§ 67. ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ։ Առաջին հերթին ռազմիկներն էին այդ ոգով դաստիարակվում, դրանք պետական սկզբունքներ էին և կատարվում էին անառարկելիորեն։ Հռոմեական զորավար Մանլիոսը սպանեց իր որդուն այն բանի համար, որ նա առանց հրամանի հարձակվել էր թշնամու վրա (չնայած հաղթել էր), քանի որ ռազմիկի այսպիսի վարքագիծը չէր կարող ամրապնդել հրամանատարության հեղինակությունը և զինվորական կարգապահությունը։ Եվ հայրը սպանեց որդուն։ Հռոմեական բանակի՝ առանց հրամանի նահանջելու դեպքում նրա հրամանատարը՝ Հռոմի կոնսուլը սպանում էր յուրաքանչյուր տասից մեկին, իսկ ողջ մնացած լեգեոներներին հրամայում նորից հարձակվել հաղթած թշնամու վրա և հաղթանակ նվաճել։ Երբ Սուլլան նկատեց, որ իր զինվորները բավականաչափ հարձակողական խանդավառություն չեն ցուցաբերում Միհրդատի դեմ պատերազմում, նրանց հրամայեց հոգեբուժիչ վարժություններ կատարել, բոլորովին անտեղի ռազմական շինություններ կառուցել այնքան ժամանակ, մինչև որ իրենք՝ լեգեոներները նրան խնդրեցին իրենց առաջնորդել Միհրդատի դեմ, որպեսզի դրանով իսկ վերջ տան իրենց տառապանքներին։ Երբ Հաննիբալը Կաննայի մոտ գլխովին ջախջախեց հռոմեական բանակը և նրա զինվորները շուտով հայտնվեցին Հռոմի պատերի մոտ, «Հաննիբալը դարբասի մոտ է» արտահայտությունը սարսափեցրեց Հռոմի խաժամուժի, բայց ոչ սենատի սիրտը, որը դեռ հաստատակամ ու անհողդողդ էր։ Նա ոչ միայն մերժեց Հաննիբալի առաջարկությունը՝ փրկագին վճարել գերի հռոմեացի զինվորների ու սպաների համար, այլև երկրի կանանց հրամայեց արցունք չթափել սպանվածների համար։ Երբ հռոմեական զորավարն աֆրիկյան ափ դուրս եկավ Բերբերիայի նվաճման համար, նա հրամայեց, ի տես բանակի, այրել ամբողջ նավատորմը։ Զինվորները հասկացան՝ նահանջի ճանապարհը փակ է,— ուրեմն պետք է կամ զոհվել մարտում, կամ ոչընչացնել Կարթագենի զորքը։

Մարդկանց դաստիարակության հենց այդպիսի ռազմատենչ սիստեմը Ալեքսանդր Մակեդոնացուն հնարավորություն տվեց հաղթել Դարեհի, իսկ Լուկուլլոսին՝ Տիգրան Բ-ի մեծաքանակ բանակներին։

§ 68. ԻՇԽՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԳԱՂՈՒԹԱՐԱՐ ԴԱՌՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ ՍՏՐԿԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԵՏՐՈՊՈԼԻԱՅԻ ՄԱՐԴԿԱՆՑ։ Մակեդոնացիները և հռոմեացիները ժողովուրդներին նվաճում էին հետևակով, արքաներն ու մոնղոլները՝ հեծելազորով, անգլիացիները՝ նավերով, ֆրանսիացիները՝ հրետանիով։ Հիտլերյան գաղութակալները ճգնում էին աշխարհը նվաճել տանկերով, ինքնաթիռներով ու ավտոմատներով, ժամանակակից աշխարհակալները՝ ջրածնային ռումբով։ Այդ նպատակով էքսպանսիոնիստական շրջանները մետրոպոլիայի մարդկանց, նախ, դարձնում են ստրուկներ, որոնք «իրենց մոտ հանդուրժում են այնպիսի կառավարություն», որը, ինչպես նշում է Լենինը, «դահճի մոլեգնությամբ» նրանցից խլում է «ազատության ամեն մի ձգտում», և, երկրորդ, այնպիսի ստրուկ-ռազմիկների, որոնց օգնությամբ էլ նույն կառավարական շրջանները ձեռք են բերում «ուրիշի ազատության վրա», «ստրկացնում ուրիշ» ժողովուրդների։ Այդ ամենը հանգեցնում է այն բանին, որ մետրոպոլիայի ժողովուրդը, գործիք դառնալով իր կառավարիչների ձեռքում, աստիճանաբար վերատերվում է, կորցնում իր ազգային դեմքը, հեռանում պատմության բեմից։ Դրա վառ վկայությունը գա-

ղութատիրության ամբողջ պատմությունն է և, առաջին հերթին, հռոմեական կայսրության պատմությունը։

§ 69. ՀՌՈՄԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Հռոմեական կայսրության կործանման պատճառների հարցը պատմագրության առավել բարդ հարցերից է։ Մոնտեսքյոն դրանք որոնում էր այն բանում, որ Հռոմն ընդունել էր Արևելքի շռայլությունը և բռնապետական կառավարման մեթոդները, որոնք հանգեցրին արիության ու պարզության կորստի։ Էդուարդ Մեյերը, Դ. Վիկոն, Պելմանը, Ռոստովցևը և ուրիշներ կանգնած էին ցիկլային զարգացման տեսակետի վրա, ենթադրելով, որ Հռոմը անցել էր բոլոր ֆորմացիաները և որ, հնում կապիտալիզմի հետ միասին զարգացել են սոցիալիզմն ու կոմունիզմը։

Տարբեր գիտնականներ տարբեր կերպ էին լուծում պրոբլեմը։ Բայց նրանք բոլորն էլ չեն ժխտում հետևյալ անհերքելի փաստերը՝ քաղաքացիական ու արտաքին անվերջ պատերազմները արյունաքամ արեցին Հռոմը։ Դրանք հանգեցրին այն բանին, որ իրենք գաղութարարները, այսինքն՝ իշխող դասակարգերն իրենք իրենց էին բնաջնջում, իսկ բուն Հռոմի ժողովուրդը աստիճանաբար հեռացավ թատերաբեմից, իր տեղը զիջելով մի այնպիսի ժողովրդի, որը, ճիշտ է, կոչվում էր հռոմեական, բայց արդեն բաղկացած էր նախկին ստրուկներից և Հռոմին ենթակա ուրիշ ժողովուրդներից ելած մարդկանցից։ Այս փաստերը հաստատել են Մոնտեսքյոն, Գիբոնը, Հայթլանդը, Տենտի Ֆրանկը և շատ ուրիշներ։

Ժողովուրդների կազմավորման բնական պրոցեսը խեղդելու քաղաքականությունը, որի նպատակն էր ստեղծել մի աշխարհակալ կայսրություն, չէր կարող չհանգեցնել ստրկական աշխատանքի և Հռոմի կործանմանը։ Ուրիշ տերիտորիաներ և ուրիշի բարիքը զավթելու, գաղութային գերշահույթի այլ աղբյուրներ ձեռք բերելու անզուսպ մոլուցքը չէր կարող չհասցնել իրենց՝ բուն հռոմեացիների կործանմանը։

Մի՞թե պարզ չէ, որ գաղութատիրությունը սեփական ժողովրդի՝ մետրոպոլիայի ժողովրդի առաջին ու մահացու թշնամին է։ Գաղութատիրությունը նման է Սատուռնին, որը հոշոտում է իր զավակներին։

Չորրորդ Գլուխ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՅԼ ՉԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՀԱՇՏ ԹՇՆԱՄԻՆ Է

Գաղութային ռեժիմի լրիվ ու վերջնական վերացումը, նրա բոլոր ձևերով ու դրսևորումներով հանդերձ, թելադրվում է վերջին տասնամյակների համաշխարհային պատմության ամբողջ ընթացքով։ Այն բոլոր ժողովուրդներին, որոնք տակավին գալարվում են գաղութատիրության շղթաներում, պետք է ամեն կերպ աջակցություն ցույց տրվի, որ ազգային անկախություն նվաճեն։ Գաղութային ճնշման բոլոր ձևերը պետք է վերացվեն։

(Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարությունից. *Մոսկվա, 1960, նոյեմբեր*)

§ 70. ՀԱՐՅԻ ԴՐՎԱԾՔԸ։ Եվ այսպես, մենք համառոտակի ծանոթացանք շահագործող դասակարգերի, իշխող դասակարգերի ներքին քաղաքականության սկզբունքներին, որոնց օգնությամբ նրանք մետրոպոլիան վերածում են ագրեսիայի բազայի, իսկ նրա բնակիչներին՝ ագրեսիայի գործիքի, այն էլ «ժողովրդի բարձրագույն շահերի պաշտպանության» կեղծ

դրոշով։ Ու այնուամենայնիվ, այդ բոլորը ոչ թե նպատակ է, այլ միայն նպատակին հասնելու միջոց։ Նպատակը արտաքին ագրեսիան է, գաղութային նվաճումը, գաղութների ձեռքբերումը։

Էքսպանսիոնիստական շրջաններն այժմ դուրս են գալիս իրենց ազգային սահմաններից, գործում են մետրոպոլիայից դուրս, արդեն իրև գաղութարարներ, իրև թույլ ու փոքր ժողովուրդների անհաշտ թշնամիներ։ Նրանց զենքը դիվանագիտական ու ռազմական արվեստն է, տնտեսական, քաղաքական ու հոգևոր ներթափանցման միջոցները։ Ծանոթանանք նրանց արտաքին գործունեությանը, ամփոփենք այդ գործունեության մի քանի արդյունքները։

§ 71. ԻՆՉ Է ԹԱՔՆՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՏԱՆԵՐԻ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԵՂԵՑԻԿ ՖՐԱԶՆԵՐԻ ՏԱԿ։ Գերշահույթի գաղութային աղբյուրների համար մղվող պայքարում դիվանագիտական արվեստը գաղութատիրության զինանոցում գրավում է հատուկ տեղ, և, ինչպես նշում է Կ. Մարքսը, կարող է նույնիսկ առաջնություն ստանալ ռազմական ուժի հանդեպ։

Պատահական չէ, որ անցյալ դարում Կ. Մարքսը բանվորներին կոչ էր անում իրենց շահերի համար ավելի լավ պայքարելու նպատակով տիրապետել դիվանագիտության գաղտնիքներին։ Իրոք, այդ գաղտնիքներին չտիրապետած մարդիկ չեն հասկանա Հռոմի գաղութային իմպերիալիզմի, բուրժուական Եվրոպայի, ցարական Ռուսաստանի դիվանագիտության կամ պետական կապիտալիզմի ժամանակաշրջանում գաղութարարների դիվանագիտության էությունը, չեն հասկանա, թե ժողովուրդների համար ինչպիսի զարհուրելի ուժ են թաքնված նոտաների, հայտարարությունների ու պայմանագրերի գեղեցիկ ֆրազների տակ։ Նրանց բոլորի նպատակը մեկ է՝ բաժանել ու վերաբաժանել գաղութները, վաճառքի հանել ուրիշի հողերը, ցինիկաբար խաղալ թույլ ու փոքր երկրների ու ժողովուրդների բախտի հետ։

§ 72. ՀՌՈՄԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ։ Հռոմը մշակել էր առավել ահեղ դիվանագիտական եղանակներ, որոնք մյուս մեթոդների հետ միասին նրան

օգնեցին դառնալու աշխարհի տերը, մարդկության պատմության մեջ գաղութային առաջին իմպերիալիզմը։

Ինչո՞վ են դրանք արտահայտվում, ո՞րն է այդ եղանակների էությունը։

Նախ, այն, որ Հռոմը ամենուրեք հանդես էր գալիս իբրև ժողովուրդների «ազատարար», փոքր պետությունների «հովանավոր», թույլին «ագրեսիայից պաշտպանող»։ «Հռոմը հրապարակ եկավ սկզբում իբրև ազատարար ու հովանավոր մանր պետությունների ու ճնշված ժողովուրդների,— ասում է Հ. Մանանդյանը։— Սակայն իրապես նրա քաղաքականության նպատակն էր գրգռել ու թշնամացնել իրար դեմ... բարեկամ պետություններին և, ուժասպառ անելով բոլորին, հաստատել ամենուրեք իր տիրապետությունը»[1]։ Հռոմի սենատում Կարթագենի դեսպանները բազմիցս ճառեր էին լսում այն մասին, թե իրենք Աֆրիկայում եկվորներ են, թե տերերը ոչ թե իրենք են, այլ աֆրիկացիները։ «Աֆրիկան աֆրիկացիների համար»,— ահա թե ինչ էր նշանակում այդ քաղաքականությունը, որի նպատակն էր աֆրիկացիների համակրանքը վաստակել կարթագենցիների դեմ, բայց հենց որ այդ թշնամին դուրս եկավ բեմից, այդ ժամանակ հռոմեացիներն սկսեցին առաջնորդվել ուրիշ տակտիկայով՝ «Աֆրիկան Հռոմի համար»։

Երկրորդ, Հռոմը բոլոր երկրներում ստեղծում էր իր պարտիաները, որոնք հնում կատարում էին հինգերորդ զորասյան դեր, մասնավորապես Կարթագենի ռեսպուբլիկայի և Տիգրան Մեծի արքունիքում։ Հռոմեական պարտիայի ջանքերով Կարթագենը դժկամություն ցուցաբերեց իր հանճարեղ զորավար Հաննիբալի հանդեպ, որը 15 տարի շարունակ Հռոմի դեմ հաջող պայքար էր մղում բուն Իտալիայում, իսկ երբ վերադարձավ հայրենիք, վռնդեցին նրան։ Բուն Հայաստանում հռոմեական պարտիան գլխավորում էր թագավորի որդին՝ Տիգրան Կրտսերը։

Երրորդ, դիվանագիտությունը ձգտում էր, որ Հռոմը պա-

---

1 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա., էջ 115—116։

տերազմեր միայն մեկ, իսկ նրա հակառակորդները՝ մի քանի ճակատում։

Չորրորդ, Հռոմին հաջողվում է այնպես կազմակերպել, որ իր գահի վրա հարձակվեին նրա իսկ հարևանները, իսկ ինքը հաճախ հանդես էր գալիս դատավորի դերում։

Հինգերորդ, գաղութներում, դաշնակիցների և նույնիսկ ռազմագերիների հետ Հռոմը վարում էր հեռահար նպատակի քաղաքականություն, որը չի նկատվում ուրիշ երկրների քաղաքականության մեջ։ Այսպես, Կարթագենը գաղութներում և դաշնակից երկրներում դիմանում էր ուժով, սարսափով, իսկ պատերազմական հաջող կողոպուտից ոչ մի փայ չէր հասցնում նրանց։ Հռոմը, ընդհակառակն, նրանց էր բաժին հանում կողոպտած գույքի ու գանձի, ինչպես նաև զավթած տերիտորիայի մի մասը։ Կարթագենցիները հողը մշակում էին շղթայակապ ստրուկների ձեռքով։ Առանձին հողատերեր ունեին մինչև 20 հազար ստրուկ և նրանց հետ կարող էին վարվել իրենց ուզածի պես։ Հռոմեացիներն այդպես չէին վարվում. ստրուկները կարող էին ազատ արձակվել և նույնիսկ Հռոմի «ազատ» քաղաքացի դառնալ։

Վեցերորդ, Հռոմը կատարելագործեց գաղտնի դիվանագիտության մեթոդները։

Այս և սրանց նման դիվանագիտական ցանցերը ուրիշ ժողովուրդների համար ավելի նենգ ու ահեղ եղան, քան հռոմեական լեգեոնները։ Այդ երկուսի զուգորդմամբ նվաճվեցին Հունաստանը, Կարթագենը, Եգիպտոսը, Եվրոպայի, Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի, Բալկանների, Անդրկովկասի ժողովուրդները։ Եվ դա հասկանալի է. եթե ռազմական ստրատեգիան չի ամրապնդվում դիվանագիտական նախապատրաստությամբ, ապա դժվար է հաղթանակ հուսալ։

§ 73. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆԸ։ Անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարի անհաջողության ամենավճռական պատճառներից մեկը նրա դիվանագիտության թուլությունն էր։

Հայաստանը կենտրոնական դիրք էր գրավում ինչպես հին շրջանում Հռոմի և Պարսկաստանի միջև, միջին դարերում Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև, այնպես էլ

նոր ժամանակներում Թուրքիայի ու Իրանի, Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի միջև։ Այս հանգամանքի հետ հայ դիվանագիտությունը քիչ էր հաշվի նստում։ Դիվանագիտությունը մեծ մասամբ անընդունակ եղավ երկրի համար դաշնակիցներ ապահովել, իսկ զինված ընդհարման դեպքում՝ ապահովել պատերազմ մի ճակատում։ Ինչպես նշել է Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը, այդ պատճառով Հայաստանը հաճախ պատերազմ է մղել երկու և ավելի ճակատներում։ Այդպիսի դեպքում պարտությունն անխուսափելի էր։

Պետրոս Առաջինը «Պետրոսի քաղաք» դառուցեց Ռուսաստանի ու Եվրոպայի սահմանագլխին, դրանով իսկ «դեպի Եվրոպա լուսամուտ բացեց» և ծով դուրս եկավ։ Նույնպիսի լուսամուտ էր բացել Տիգրանը, հիմնադրելով «Տիգրանի քաղաքը», Հայաստանի ու Հռոմեական կայսրության՝ այն ժամանակվա Եվրոպայի սահմանագլխին, մտադիր լինելով դեպի ծով դուրս գալ, առանց որի չէր կարող մարտունակ պետություն լինել։ «Քաղաքն ստեղծվեց նոր մեծ տերության համար» (Մոմզեն)։ Նրա պարիսպների բարձրությունը 50 կանգուն էր, ուներ պալատներ, այգիներ ու զբոսայգիներ։ Բայց եթե Պետերբուրգին վիճակված էր տեղում կանգուն մնալ, ապա Տիգրանակերտը չարժանացավ այդ բախտին։ Եվ բազմաթիվ պատճառներից մեկն էլ այն էր, որ ռուսական դիվանագիտությունը ճկուն եղավ, մի բան, որ չի կարելի ասել հայկական դիվանագիտության մասին։ Հռոմը իր հակառակորդներին շարքից դուրս էր բերում մեկ առ մեկ՝ սկզբում Միհրդատին, այնուհետև՝ Տիգրանին, իսկ հետո՝ Ֆրաատին։ Նույն Մոմզենը ճիշտ է նկատում, որ «հենց պարթևների հետ ունեցած հռոմեացիների դաշինքը հանգեցրեց Հայաստանի պարտությանը»։ Ընդամին, հետաքրքրական է նշել, որ «Նրա (խոսքը վերաբերում է Հայաստանին.— Հ. Ս.) անկումից հետո Հռոմը, իր քաղաքական տրադիցիային հավատարիմ, հանդես եկավ նոր դերով և սկսեց հովանավորել իր նվաստացրած թշնամուն ի վնաս հզորագոր դաշնակցի»[1]։

§ 74. ԲԻՍՄԱՐԿԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ։ Բիսմարկի դի-

[1] Т. Моммзен, История Рима, том 3, стр. 120.

վանագիտությունը կարողացավ Գերմանիայի համար ապահովել պատերազմ մի ճակատում, և դրանով իսկ մեծապես ապահովեց Գերմանիայի հաղթանակը Դանիայի, Ավստրիայի ու Ֆրանսիայի հանդեպ, բայց երբ գերմանական դիվանագետները անընդունակ եղան կատարելու մեկ ճակատում պատերազմելու Շլիֆենի պահանջը, պարտությունն անխուսափելի դարձավ։

§ 75. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԱԲՍՈԼՅՈՒՏԻԶՄԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ։ Ռուսական ցարերի դիվանագիտական արվեստը, որի հիմքը դրել են Պետրոս I և Եկատերինա II, միանգամայն համապատասխանում էր նրանց գաղութային նվաճումների ծրագրերին։ «Ռուսական դիվանագիտությունը,— գրում է Կ. Մարքսը «Թուրքական պատերազմը» հոդվածում,— ռուսական ռազմական արվեստից վտանգավոր է»[1]։ Հայտնի է, թե ինչպիսի համառ պայքար էին մղում գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը XIX հարյուրամյակի 50-ական թվականներին ռուսական ցարիզմի դեմ, որը, ինչպես այդ բանը ակնբախ ցույց տվեցին 1848—1849 թվականների դեպքերը, դարձել էր ռեակցիայի անհաղթ թշնամին, «ռեակցիայի գլխավոր պատվարը քաղաքակիրթ ամբողջ աշխարհում»։ Նրանք մերկացնում էին ցարիզմի արտոյոտիզմը և նվաճողական քաղաքականությունը, ցարական դիվանագիտության խաղերը, ցարիզմի հովանավորությունը անգլիական ու արևմտաեվրոպական քաղաքական մյուս գործիչների կողմից, դիմակաղերծում ցարական կառավարությանը իբրև թույլ ժողովուրդների «բարեկամի», «հովանավորի», «ազատարարի»։

Հայտնի է, որ ցարական կառավարության հրապարակային ելույթներում և պաշտոնական դիվանագիտական փաստաթղթերում շարունակ խոսվել է նոր հողեր ձեռք բերելու նկատմամբ Ռուսաստանի «հակակրանքի մասին»։ Այս կապակցությամբ Կ. Մարքսը գրում է. «Ընդլայնման նկատմամբ Ռուսաստանի «հակակրանքը» պատկերելու համար ես կբերեմ բաղում փաստերից մի քանիսը, որոնք վերաբերում են

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, второе издание, стр. 544.

Պետրոս Մեծի ժամանակվանից ի վեր Ռուսաստանի տերիտորիալ նվաճումներին։

Ռուսական սահմանները առաջ են շարժվել Բեռլինի, Դրեզդենի և Վիեննայի ուղղությամբ մոտավորապես 700 մղոն,

Պոլսի ուղղությամբ՝ մոտավորապես 500 մղոն,

Ստոկհոլմի ուղղությամբ՝ մոտավորապես 630 մղոն,

Թեհրանի ուղղությամբ՝ մոտավորապես 1.000 մղոն»[1]։

Կարթագենի դեմ մղած պատերազմի շրջանում Հռոմը գաղութային տիրապետությունների չէր ձգտում։ Հռոմեացիները, ընդհակառակը, նպաստում էին այնպիսի անկախ պետությունների ստեղծմանը, որոնք այնքան թույլ լինեին, որ Հռոմի հովանավորության կարիքն զգային և այնքան ուժեղ լինեին, որ թուլացնեին Կարթագենի հզորությունը։ Ռուսական ցարերը ձգտում էին, որ թուրքերը ճանաչեին Ղրիմի անկախությունը, որպեսզի հետագայում իրենք գրավեին այդ երկրամասը։ Նույն եղանակն էլ թուրքերը գործադրեցին համաշխարհային առաջին պատերազմից հետո։ Նրանք ճանաչեցին Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի անկախությունը, իսկ այնուհետև ձեռնամուխ եղան այդ երկրների գրավմանը։

§ 76. ԵՐԲ Է ԳԱՂՈՒԹԱՐԱՐԸ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ։ Ժամանակակից գաղութարարների դիվանագիտությունը զինված է ոչ միայն հռոմեական դիվանագիտության եղանակներով, այլև մեծապես կատարելագործել ու հարստացրել է դրանք։ 1963 թվականին Երևանի կինոթատրոններում ցուցադրվեց «Դիվանագետ Կարկլոն Բրաունը» կինոկատակերգությունը։ Թեպետև գրոտեսքային գույներով, բայց շատ ճշմարիտ ցույց էին տրված ժամանակակից գաղութատիրական դիվանագիտության բարքերը։ Անգլիան մի ուրիշ տերության հետ մրցում էր մի թույլ երկրի վրա ազդելու համար, որտեղ հայտնաբերվել էին հազվագյուտ մետաղներ։ Այդ երկրին տիրելու համար անգլիացիները դիմում են այն բանին, որպեսզի երկիրը բաժանեն երկու մասի՝ կեսը իրենց (հենց այն մասը, որտեղ գտնվում է արժեքավոր հում-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, второе издание, стр. 119.

քը) երկրորդ կեսը թողնում են գաղութակալ մյուս տերությանը։ Այդ հարցը դրվում է միջազգային կազմակերպության օրակարգում։ Բնիկ ժողովուրդը դառնում է «մանր դրամ»։ «Հանուն խաղաղության՝ Անգլիայում ու ամբողջ աշխարհում» բնիկ ժողովրդին բռնությամբ մասնատում են. սահմանն անցնում է մայրաքաղաքի կենտրոնով՝ քաղաքներով ու գյուղերով, անտառներով ու գետերով և նույնիսկ երկաթուղային ցանցով ութունելներով։ Բայց, դժբախտաբար, շուտով պարզվում է, որ արժեքավոր մետաղները գտնվում են ոչ թե հյուսիսում, այլ հարավում, այսինքն՝ մյուս տերությանն անցած կեսում։ Անգլիական դիվանագիտությունը փոխում է տակտիկան։ Այժմ նա նորից «հանուն խաղաղության Անգլիայում և ամբողջ աշխարհում» պայքարում է երկրի «միավորման» համար։

Բնիկները հիանալի հասկանում են գաղութարարների դիտավորությունները, մերժում «բարեկամների անշահախնդիր օգնությունը» և նրանց վռնդում երկրից։

§ 77. ԳԱՂՏՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ։ Ժամանակակից գաղութարարները խոսքով պայքարում են «հանուն խաղաղության», «հանուն ժողովուրդների ազատության ու անկախության», իսկ իրականում գաղտնի դիվանագիտություն են վարում՝ վաճառում թույլ ժողովուրդների պատիվը, ճակատագիրն ու կյանքը։

Ի դեպ, գաղտնի դիվանագիտության մասին. ֆաշիստական պարագլուխները այն «մերժում էին», պրոպագանդելով «բացահայտ», «ազնիվ» դիվանագիտությունը։ Այդ բանն այնպես լավ էր կազմակերպված, որ շփոթության մեջ գցեց ԱՄՆ-ի շատ բան տեսած ղեկավարներին։ Իրականում ֆաշիստները մի նոր գարագլուխ բացին ամենից անազնիվ, գաղտնի դիվանագիտական խաղի մեջ։ Պրագմատիզմը ֆաշիզմի ամենաբարձր սկզբունքը դարձավ։ Այն ամենը, որ Հիտլերին ձեռնտու էր, նա հայտարարում էր «սոցիալիստական», իսկ այն, որ շահավետ չէր, «իմպերիալիստական», որի դեմ վճռականորեն կռվում էր։

§ 78. ԳԱՂՈՒԹԱԿԱԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՌԱԶՄԱ-ԱԳՐԵՍԻՎ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ։ Գաղութատիրությունը, ինչպես

տեսանք, հին աշխարհի իմպերիալիզմի սնուցող հողը եղավ։ Նա նաև ժամանակակից իմպերիալիզմի սնուցող միջավայրն է։ Ձենց «կենսական տարածություն» ձեռք բերելու տենչն է ֆաշիզմ ծնում և նրան մղում արտաքին ավանտյուրաների, հենց գաղութային գերշահույթի աղբյուրներին տիրելու ձգտումն է համաշխարհային աղետներ բերում, ժողովուրդների միջև ատելություն, կասկածանք։ Եվ հասկանալի է, թե ինչու գաղութային քաղաքականությունվարող երկիրը միշտ դառնում է ռազմա-ագրեսիվ, ոստիկանական տերություն։ Երբ ավազակը կողոպտելու նպատակով հարձակվում է մարդու վրա, նա գործի է դնում կամ սպառազինությունը, դանակ, ատրճանակ։ Ունում է գործի դնել բռունցքները, դանակը։ Ուժը և առաջին հարվածի «իրավունքը» միշտ նրա կողմն են։

Այդպես է գործում և գաղութատիրությունը։ Տարբերությունը միայն մասշտաբների մեջ է, վերջինս գործում է բանակներով, իսկ ավազակը՝ մենակ կամ իր խմբով։ Եվ որքան շատ են գաղութարարների սվինները, ավտոմատները, այնքան նրանք ավելի լկտի ու ագահ են դառնում։ Զավթումների պատրաստվող երկիրը, որպես կանոն, ունենում է ավելի ուժեղ ու պատրաստված բանակ, քան այն երկիրը, որի վրա ագրեսիա են կատարում. նվաճողական պատերազմներ մղելուց շատ առաջ այն դառնում է ռազմական, ագրեսիվ, ոստիկանական տերություն։ Կառավարող շրջանները այդ նպատակին են ենթարկում իրենց ամբողջ ներքին քաղաքականությունը և մասնավորապես, ինչպես նշվեց, «երկրորդ խնդիրը»։ Դատական համակարգի ամբողջ սիստեմը նույնպես ենթարկվում է արտաքին էքսպանսիայի նպատակներին։

§ 79. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆՎԱԾ Է ԹԱԼԱՆԻ ՎՐԱ։ Մարդկության պատմության մեջ ոչ մի պետություն չի հասել այնպիսի հզորության ու մեծության, ինչպես հին հռոմեական կայսրությունը։ Իր բազմաքանակ լեգեոնների շնորհիվ նա բազում տասնամյակներ շարունակ իր կամքն էր թելադրում աշխարհին։ «Բոլոր ճանապարհները Հռոմ են տանում»,— ասում էին հնում։ Եվ դա իսկապես այդպես էր։ Հռոմի սենատին

կամ կայսրին երկրպագելու էին գնում ուրիշ երկրների արքաները։ Խաղաղության ու պատերազմի հարցերը նույնպես վճռվում էին Հռոմում։ Կայսրության մայրաքաղաքը հայտարարված էր «Հավերժական քաղաք»։ Ապշեցուցիչ հաջողություններ ձեռք բերվեցին պալատների, հանրային շենքերի, ճանապարհների, ոռոգման, շինությունների կառուցման բնագավառում։ Կայսրությունը համարվում էր տնտեսապես ամենից հզոր ու բարգավաճ երկիրը։ Աշխարհը նախանձում էր Հռոմի պալատների շքեղությանն ու փարթամությանը, «Հավերժական քաղաքի» ոչ միայն կայսրերի, այլև սենատորների ու կոնսուլների հարստությանը։ Հռոմի պլեբեյները ձրի էին սնվում, նրանց համար կառուցում էին հոյակապ կրկեսներ, ստադիոններ, զվարճարաններ էին կազմակերպում։

Իսկ ինչի՞ վրա էր հիմնված հռոմեական կայսրության այդպիսի անսովոր, եթե կուզեք, հեքիաթային վեհությունը. ուրիշ ժողովուրդների կողոպուտի վրա։ «Հռոմի տիրապետությունը,— ասում է Կ. Մարքսը,— հիմնվում էր նվաճված նահանգների անողոք շահագործման վրա»։

Շարլ Լուի Մոնտեսքյոն «Խորհրդածություններ հռոմեացիների վեհության ու անկման պատճառների մասին» աշխատության մեջ գրել է. «Հռոմը առևտրական քաղաք չէր, նա համարյա թե արհեստներ չուներ, նրա քաղաքացիների հարստացման միակ եղանակը կողոպուտն էր։ Կողոպտման ժամանակ որոշ կարգապահություն էին պահպանում։

Ավարը ընդհանուր էր համարվում, այն բաժանում էին զինվորներին, ոչ մի բան չէր կորչում, որովհետև պատերազմ գնալուց առաջ յուրաքանչյուրը երդում էր տալիս, որ ավարից ոչինչ չի թողնի անձամբ իր օգտին։ Իսկ հռոմեացիներն աշխարհում բոլոր ժողովուրդներից ավելի բարեխղճորեն էին կատարում երդումը, որը միշտ նրանց ռազմական կարգապահության սյուներից մեկն է եղել։

Վերջապես, քաղաքում մնացած քաղաքացիները նույնպես վայելում էին հաղթանակի պտուղները։ Պայտված ժողովրդի հողերի մի մասը բռնագրավում էին, ընդ որում բաժանում էին երկու մասի՝ մեկը վաճառում հօգուտ պետության,

մյուսը տալիս աղքատ քաղաքացիներին, նրանց, ովքեր պարտավոր էին ռենտա վճարել հանրապետության օգտին»[1]։

Կայսրության մայրաքաղաքը զորավարներին պատիվներ էր տալիս ըստ այն քանի, թե նրանք ինչքան ոսկի ու արծաթ էին կողոպտել։ Լուկուլլոսը, Պոմպեոսը, Անտոնիոսը, ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում ամենից շատ աշխատում էին ձեռք գցել թագավորական գանձատունը՝ թանկարժեք իրերը, ոսկու և արծաթի պետական պաշարները։ Նենգ Անտոնիոսը հայոց տաճարից հափշտակեց նույնիսկ Անահիտ աստվածուհու ոսկե արձանը։ Հռոմի զորավարներն ու սենատորները կողոպտում էին ամբողջ երկրներ, կողոպտում բովանդակ աշխարհը։ Յուրաքանչյուր պատերազմ նոր պատերազմ սկսելու հնարավորություն էր ստեղծում։ Հիտլերյան գեներալներից մեկը համաշխարհային երկրորդ պատերազմի նախօրյակին ասել է, որ պատերազմը պատերազմ է սնուցանում։ Ինչպես տեսնում ենք, այդ բանը գալիս է Հռոմից։

Հռոմը միայն աշխարհի գանձերի տերը չէր։ Նրա համար էին աշխատում բոլոր ժողովուրդները։ Հյուսիսային Աֆրիկան, որի մեջ մտնում էր Բերբերիան, «Հռոմի շտեմարանն էր»։ Հռոմեացիները ստանում էին հաց, յուղ, միս, գինի, անասուն, բուրդ, ոսկի, մարմար, ստրուկներ։ Ստրուկ վարպետները հոյակապ պալատներ էին կառուցում «Հավերժական քաղաքում», իսկ ստրուկ գլադիատորները ստադիոններում առյուծների ու վագրերի հետ մենամարտելով զվարճացնում էին հռոմեացիներին։

Ֆրանսիական գաղութարարները XIX դարի առաջին կեսին, ինչպես և Հռոմի գաղութարարները, ժամանակին իրենց գրենադերներին ոգեշնչում էին Բերբերիան գրավել կողոպտելու նպատակով։ «Ոսկին, փղոսկրը, ամենաթանկ մարգարիտները ու մորթիները,— ասում էր Լուի Ֆիլիպ թագավորը,— արևելյան թափ կհաղորդեին հարուստների փարթամությանը, միաժամանակ աղքատը կկարողանար հանգիստ քնել,

---

[1] **Ш. Монтескье**, Избранные произведения, М., 1955, стр. 51—52.

չվախենալով սովից, քանի որ հարուստ բերքը միշտ առատորեն ապահովում է մայր հայրենիքը»։

«Արևի թագավոր» Լյուդովիկոս XIV ժամանակաշրջանից Ֆրանսիան աշխարհը զարմացնում էր Վերսալի պալատների շքեղությամբ ու փարթամությամբ։ Երկիրը ռազմա-տնտեսական տեսակետից դարձել էր Եվրոպայի ամենահզոր տերությունը։ Եվ այդ ամենը՝ դարձյալ կողոպուտի, ուրիշի ստեղծած բարիքի հաշվին։ Յուրաքանչյուր գաղութակալ տերության «վեհությունը» և «հզորությունը» հիմնված են գաղութային ժողովուրդների կողոպուտի վրա։

§ 80. «ԱՂՔԱՏ» ԵՎ «ՀԱՐՈՒՍՏ» ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ, «ՀԵՏԱՄՆԱՑ» ԵՎ «ԶԱՐԳԱՑԱԾ» ԵՐԿՐՆԵՐ։ Գաղութատիրությունը շրջանառության մեջ է դրել այնպիսի տերմիններ, ինչպես «աղքատ» և «հարուստ» ժողովուրդներ, «հետամնաց» և «զարգացած» երկրներ և այլն։ Բավական է թեկուզ թեթևակիորեն ծանոթանալ այդ երկրների պատմությանը, որպեսզի համոզվենք, որ այդ ժողովուրդներն աղքատացել, ետ են գնացել, փոքրացել են անողոք բնաջնջման, կողոպտման ու շահագործման պատճառով, որ նրանք իրենց քրտինքով, աշխատանքով, տաղանդով ու ստեղծած բարիքով հարստացնում են ուրիշներին, որ իրենց երկրի հարստությունը պատկանում է նրանց, ովքեր իրենց հաշվին դարձել են «հարուստ» և «մեծ»։

Եթե այդ իմպերիալիստական «հարուստ» երկրներին զրկեն «աղքատ» ժողովուրդներին կողոպտելու հնարավորությունից, զրկեն գավթած հողերից և գաղութային գերշահույթի մյուս աղբյուրներից, ապա քիչ բան կմնա «հարուստ» ժողովուրդների հարստությունից և «մեծ» երկրների «մեծությունից»։ Հռոմեական ժողովուրդը, ինչպես տեսանք, աշխարհի ամենահարուստ ժողովուրդն էր, իսկ Գաղիան (ներկայիս Ֆրանսիան) ու Անգլիան, որոնք այն ժամանակ «Հավերժական քաղաքի» գաղութներն էին, փոքր ու աղքատ էին։ Այժմ դերերը փոխվել են. Անգլիան ու Ֆրանսիան դարձել են «մեծ» ու «հարուստ», իսկ Իտալիան՝ Եվրոպայի ամենաաղքատ երկրներից մեկը և համաշխարհային երկրորդ պատերազմում կրած պարտությունից հետո երկրորդական կարգի մի պետություն։

Ուրեմն, երբ ասում ենք «աղքատ ժողովուրդներ» և «հետամնաց երկրներ», ապա միշտ ենթադրում ենք, որ նրանք մի ինչ-որ կախման մեջ են գտնվում «մեծ», «զարգացած» ու «հարուստ» տերություններից և ենթարկվում են նրանց գաղութային կեղեքմանը։

§ 81. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԽՄԱՆ ԱՆՅՈՂԻԿ ՁԵՎԵՐԸ։ Վ. Ի. Լենինը, խոսելով կապիտալիստական իմպերիալիզմի դարաշրջանի գաղութային քաղաքականության մասին, նշել է, որ «ֆինանսական կապիտալն ու սրան համապատասխանող միջազգային քաղաքականությունը, որը հանգում է մեծ տերությունների կողմից՝ աշխարհը տնտեսապես ու քաղաքականապես բաժանելու համար, պետական կախման մի ամբողջ շարք անցման ձևեր են ստեղծում։ Այս դարաշրջանի համար տիպիկ են ոչ միայն երկրների երկու հիմնական խմբերը—գաղութատեր երկրներն ու գաղութները,—այլև բազմազան ձևեր կախյալ երկրների, որոնք քաղաքականապես ձևականորեն անկախ են, այնինչ իրապես խճճված են ֆինանսական ու դիվանագիտական կախման ցանցերում»[1]։

Գաղութային ճնշման են ենթարկում ոչ միայն գաղութների, պրոտեկտորատների ու մանդատային տերիտորիաների ժողովուրդներին, այլև վասալիտետներին (ֆեոդալական կարգերի մնացորդ, որը մինչև 1947 թվականը պահպանվել էր սյուզերեն Անգլիայի թագավորի և նրա վասալների՝ հնդկական փշխանությունների միջև), կոնդոմինումներին (համատիրություն, որի ժամանակ մի որոշակի տերիտորիա երկու կամ մի քանի պետության համատեղ տիրապետությունն է, ընդ որում, իշխանությունը փաստորեն իրագործում է համատեր պետություններից առավել ուժեղը։ Օրինակ, Սուդանը մինչև 1956 թվականը), ձևականորեն «ինքնուրույն» հանրապետություններին, որոնք մտնում են իմպերիալիստական պետությունների միության կամ ֆեդերացիայի մեջ (օրինակ՝ Ֆրանսիական միությունը), ինչպես նաև այն երկրները, որոնք մտնում են այս կամ այն պետության «ազդեցության ոլորտի մեջ», «չեզոք» զոնաների, «ազատ շրջանների» մեջ և այլն, և այլն։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 349։

Այս և թույլ ժողովուրդների շահագործման ու կեղեքման նման ձևերը հանգեցնում են այն բանին, որ ներկա աշխարհում կան «աղքատ» ժողովուրդներ և «թերզարգացած» երկրներ։ Հենց իմպերիալիստ գաղութարարներն են «գաղութների հարյուրավոր ժողովուրդների դատապարտել այն բանին, որ նրանք մետրոպոլիայից ետ մնան 2—3 հարյուրամյակ»[1]։

§ 82. ԻՆՉՈՒ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՎԱՂԱԺԱՄ ՄԵՌՆՈՒՄ։ Երբ մենք ասում ենք «հարուստ» ժողովուրդներ, ապա այդ բանը բնավ չի նշանակում, թե այդ «հարուստ» ժողովուրդները հարուստ են ապրում։ Իհարկե, ո՛չ։ Հարուստ են ապրում հասարակության իշխող խավերը՝ շահագործողները, չինովնիկական ապարատը, այն մարդիկ, որոնք զբաղված են անարտադրողական աշխատանքով, իսկ անմիջականորեն նյութական բարիքներ արտադրողները՝ բանվորներն ու գյուղացիները վատ են ապրում։ Ամենաազարգացած և հարուստ կապիտալիստական երկրներում կյանքի միջին տևողությունը հազիվ անցնում է 70 տարուց։ Ագրեսիվ գաղութային տերությունների մեջ կան և այնպիսիները, որտեղ մարդիկ միջին հաշվով 50 տարի էլ չեն ապրում։ Եվ դա այն դեպքում, երբ ժամանակակից տեխնիկան ու բժշկականությունը մարդու կյանքի տևողությունը կարող են երկարացնել առնվազն մինչև 100—120 տարի։

Ուրեմն ի՞նչն է խանգարում։

Մարդիկ մեռնում են սննդի, բնակարանի, հագուստի, բուժօգնության պակասից, տեսած ահ ու սարսափից, որ ապրել են ռազմի դաշտերում, բանտերում, համակենտրոնացման ճամբարներում, այլևայլ բարդուղիմյան գիշերներին։

Մի խոսքով, այդ ամենը մեծ մասամբ գաղութատիրության ներքին ու արտաքին քաղաքականության այն դոկտրինաների կենսագործման արդյունքն է, որոնք քննարկվեցին այս գրքի էջերում։

Բայց եթե մարդը մեռնում է վաղաժամ, ոչ բնական մահով, այդ փաստորեն նշանակում է, որ մեկն ու մեկը սպանում է նրան։ Իրականում այդ էլ հենց սպանություն է, իսկ սպանողը գաղութատիրությունն է, շահագործման վրա հիմնված հասարակությունը։

Այսպես է բանը «հարուստ» մետրոպոլիաներում։ Իսկ «աղքատ» ու «թերզարգացած» երկրներո՞ւմ։ Հեշտ է պատկերացնել նրանց դրության ամբողջ սոսկալիությունը։ Մերձարևադարձային Աֆրիկայում մարդը 25 տարի էլ չի ապրում։ Սակայն բանը ոչ միայն քաղաքացիների կյանքի կարճ տևողությունն է, այլ այն, որ գաղութատիրությունը, և առանձնապես քաղաքական-տնտեսական գաղութատիրությունը, ծրագրում է ընդհանրապես ազատվել նրանցից։ Այս մասին առավել հանգամանորեն խոսք կլինի հաջորդ գլուխներում։ Այստեղ միայն հիշենք, որ ինչքան էլ նեոգաղութատերերն իրենց կայսրություններն անվանեն «ազատ ու իրավահավասար» ժողովուրդների համագործակցություն կամ միություն, դրանք, միևնույն է, այդ «ազատ» ու «իրավահավասար» ժողովուրդների համար բանտ են։ Եվ դա հասկանալի է։

§ 83. ԱՄԵՆ ՄԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ է։ «Կայսրություն» ասելով մենք հասկանում ենք այնպիսի մի երկիր, որ զանազան պատրվակներով զավթելով ուրիշ երկրների տերիտորիան, այդ ժողովուրդներին «միավորում է» մի միասնական պետության մեջ։

Պատմությանը հայտնի են բազմաթիվ փոքր ու մեծ կայսրություններ, բայց հայտնի չէ ոչ մի այնպիսի դեպք, որ կայսրությունների կազմում որևէ կախյալ ժողովուրդ առաջադիմեր։ Ընդհակառակը, բոլոր դեպքերում կախյալ ժողովուրդը բռնել է դանդաղ կամ արագ մահացման ուղին։ Գաղութային ժողովուրդները վերակենդանացել են միայն այն ժամանակ, երբ նրանց հաջողվել է դուրս գալ «իրենց» կայսրության կազմից և նորից ազատ ու անկախ լինել։

Ժամանակակից քաղաքակրթությունը շատ բանով է պարտական հույն ժողովրդին, որը շատ ու շատ արժեքներ է տվել։ Բայց ե՞րբ։ Այն ժամանակ, երբ հույնը եղել է ազատ, ինքնուրույն։ Իսկ երբ նա «մտել էր» թուրքական կայսրության մեջ, հարյուրամյակներով ետ է մղվել, անխուսափելի կործա-

[1] Б. Н. Пономарев, газ. «Коммунист» (Ереван), 14 марта 1962.

նամից փրկվել է միայն այն դեպքում, երբ անկախություն է վերանվաճել։

Ոչ ոք չի կարող ժխտել Եվրոպայի ժողովուրդների ներդրումը գիտության, տեխնիկայի, գրականության, փիլիսոփայության մեջ։ Սակայն այդ ամբողջ ներդրումը գաղութատիրական անսահմանափակ կայսրությունների կործանման և ազգային պետությունների առաջացման արդյունքն է։ Դեռ վերջերս Աֆրիկայի երկրները իրենց գաղութային դրությամբ իրենց կենսագրությունը չունեին, սկսեցին ունենալ միայն անկախություն նվաճելուց հետո։

Ճշմարտությունը պարզելու համար հարկավոր է իմանալ, թե ինչ բան է սուտը, կեղծիքը, հարկավոր է բաղդատել դրանք։ Չի կարելի ջերմություն զգալ, առանց ծանոթ լինելու ցրտին, իմանալ լույսը՝ առանց խավարի, ցերեկն՝ առանց գիշերվա։ Առանց համադրման ու համեմատության չի կարելի, ինչպես ասել է գերմանացի մի բանաստեղծ, ճանաչել ճշմարտությունը և ընթանալ դեպի գեղեցիկը։

§ 84. ՏԵՍԱՆԵԼԻ ԵՎ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։ Նեոգաղութատիրությունը հանգեցրել է այն բանին, որ արդի աշխարհում երևան են եկել «անտեսանելի» կայսրություններ։ Այս դեպքում մետրոպոլիան ձևականորեն «օրինական» հիմք չունի գաղութային տերություն համարվելու, ուստի և թվում է, թե այն չի կարելի կայսրություն համարել։ Իսկ փաստորեն նա շրջապատված է հեռավոր ու մերձավոր արբանյակ երկրներով, որոնք գաղութների դեր են խաղում, քանի որ այդ երկրներում մետրոպոլիան ունի գաղութային գերշահույթի մեկ կամ մի քանի աղբյուրներ։

Խոսքը վերաբերում է ոչ թե քաղաքական-տնտեսական նեոգաղութատիրությանը, այլ դրա, այսպես կոչված, լատինաամերիկյան ձևին, որի ստեղծողն ու ոգեշնչողը հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգներն են, որոնք, ինչպես հայտնի է, աշխարհում ունեն ամենալայնածավալ «անտեսանելի» կայսրություն։ «Այդ գաղութատիրությունը քարտեզի վրա չի երևում,— գրել է Ջավահարլալ Ներուն։— Երկիրը կարող է ազատ թվալ, եթե նրա մասին դատենք ըստ աշխարհագրության դասագրքի կամ ատլասի։ Սակայն խորամուխ լինելիս

պարզում ենք, որ նա գտնվում է մի այլ երկրի կամ, ավելի ճիշտ, նրա բանկիրների ու խոշոր ձեռնարկատերերի ճիրանների մեջ։ Ահա այդպիսի անտեսանելի կայսրություն ունի ԱՄՆ-ը»[1]։

Ո՞րն է նեոգաղութատիրության ամերիկյան այդ ձևի էությունը, ի՞նչ նպատակներ է հետապնդում նա իր գաղութային քաղաքականությամբ։

ԱՄՆ-ը, իհարկե, հավակնություն չունի ուրիշ երկրներում հաստատելու գաղութային վարչություն, առհավետ յուրացնելու նոր հողեր, ֆիզիկապես բնաջնջելու կամ ասիմիլացնելու նրանց ժողովուրդներին։ Ինչո՞վ բացատրել։

Այդպիսի քաղաքականություն կարող են վարել միայն նրանք, ովքեր վստահ չեն իրենց կարողությանը։ ԱՄՆ-ի ղեկավարները, վստահ ամերիկյան «ապրելակերպի», «ազատության ու դեմոկրատիայի», ամերիկյան իդեալների գերազանցությանը, գիտեն, որ աշխարհը կարելի է կողոպտել նաև ուրիշ, ավելի խելացի ուղիով, հենվելով իրենց երկրի արդյունաբերական ու ֆինանսական հնարավորությունների վրա։ Ուստի նրանք չեն կարող պաշտպանել իրենց պարտնյորների տրադիցիոն գաղութային քաղաքականությունը։ Նրանք գաղութների ազատագրումը, մետրոպոլիաներից լիակատար անջատումը համարում են «անխուսափելի և օգտակար գործ»։ Բանը մոտավորապես այսպես էր մի ժամանակ նաև անգլիական իմպերիալիզմի համար։ «Անգլիայում ազատ կոնկուրենցիայի ամենից շատ ծաղկելու դարաշրջանում, 1840—1860-ական թվականներին, Անգլիայի բուրժուական ղեկավար քաղաքագետները դեմ էին գաղութային քաղաքականությանը, գաղութների ազատագրումը, Անգլիայից նրանց լիովին անջատվելը համարում էին անխուսափելի և օգտակար գործ»[2]։

Ամերիկյան իմպերիալիզմը հենց այդպիսի «առավել բարգավաճման շրջան» էր ապրում այն ժամանակ, երբ առաջին համաշխարհային պատերազմից շատ առաջ (ու, հատկապես,

---

1 «Правда», 9 июля 1962.

2 Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, երեք հատորով, հատ. 1, էջ 844, Հայպետհրատ, 1962։

նրանից հետո) սկսեց վարել «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» քաղաքականություն։ Սակայն աշխարհի գաղութային տերությունները՝ Ճապոնիան, Անգլիան, Ֆրանսիան և մյուսները, իհարկե, չէին կարող իրենց գաղութների դռները բաց անել ամենազոր ամերիկյան բիզնեսի առջև։ Դռները լիովին բացվեցին միայն այն բանից հետո, երբ ստեղծվեցին Ասիայի ու Աֆրիկայի նոր, քաղաքականապես անկախ պետություններ։ Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի ու Հոլանդիայի՝ իրենց գաղութներից հեռանալու պատճառով առաջացած վակուումը լցնում էր ամերիկյան իմպերիալիզմը։ Օրինակ, Սև աշխարհամասում ԱՄՆ-ը այժմ ունի ավելի ամուր դիրքեր, քան միասին վերցրած այն երկրները, որոնք դեռ մի քանի տարի առաջ իրենց համարում էին Աֆրիկայի տերերը։ Դրությունն այսպես է նաև Ասիայի շատ երկրներում։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեսանելի կայսրությունների մեծամասնությունը փուլ եկավ և նրա փլատակների վրա հեքիաթային արագությամբ աճեց Ամերիկայի Միացյալ Նահանգների «անտեսանելի» կայսրությունը։ «Բաց դռների» և «հավասար հնարավորությունների» քաղաքականությունը լիովին արդարացնում էր այն հույսերը, որ նրա վրա դնում էին ԱՄՆ-ի ֆինանսական ու արդյունաբերական շրջանները։ ԱՄՆ-ը գտավ, որ հասել է իր կողմից «աշխարհը կառավարելու» ժամանակը։

§ 85. ՔԵՆԵԴԻՆ ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ ԱՄՆ-ի հանգուցյալ պրեզիդենտ Քեննեդին սենատոր եղած ժամանակ շարադրել է ԱՄՆ-ի ամբողջ քաղաքականության հիմունքները «Տասներկու կետի ծրագրում»։ Ծրագրի յոթերորդ կետում, որը նվիրված է Աֆրիկային ասված է.

«Մենք պետք է մեր ջանքերը գործադրենք, որպեսզի աջակցենք աֆրիկյան աշխարհամասում կազմավորվող երկրներին, նրանց համոզենք, որ կարիք չունեն օգնության ու բարեկամության համար Մոսկվային դիմելու, օգնենք, որ նրանք հասնեն տնտեսական առաջադիմության, որից կախված են նրանց ժողովուրդների բարեկեցությունը և կոմունիստական

ազդեցությանը դիմակայելու ունակությունը։ Մենք այլևս չենք կարող մեզ շռայլություն թույլ տալ վարելու այնպիսի քաղաքականություն, որը չի ընդունում Աֆրիկայում ազգասիրության անխուսափելի հաղթանակը և գաղութատիրության անխուսափելի պարտությունը... Մենք պետք է ստեղծենք տնտեսական զարգացման այնպիսի ֆոնդ, որի մեջ մտնեն շատ երկրներ. այն կդառնար Արևմուտքի ու Աֆրիկայի համագործակցության մի յուրահատուկ օրգան և կապահովեր այն կապիտալը, որն անհրաժեշտ է աֆրիկյան երկրների տնտեսական զարգացման համար։ Եվ, վերջապես, եթե մենք ուզում ենք, որ Աֆրիկայի նկատմամբ մեր քաղաքականությունը արդյունավետ լինի, պետք է օգնություն ցույց տանք այն լոզունգով, թե Ամերիկան ցանկանում է Աֆրիկային բերել ազատություն ու բարգավաճում, այլ ոչ թե նրան օգտագործել իր շահերի համար, ինչպես սառը պատերազմի մի խաղաքիք»[1]։

§ 86. ԱՄՆ-Ի ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։ Ամերիկյան «անտեսանելի» կայսրության գաղութային քաղաքականությունը հետապնդում է հետևյալ նպատակները.

ա) ազատագրված երկրները պահել «ազատ աշխարհի ոլորտներում», կապիտալիստական տնտեսության սիստեմում։ Ուրեմն, գաղութատիրության «մոդեռնացումը» թելադրվում է նաև այն բանով, որ արդի պայմաններում գաղութային նախկին ծայրամասերը հատուկ նշանակություն են ստանում համաշխարհային երկու սիստեմների պայքարի տեսակետից, որը վիթխարի մասշտաբներով ծավալվել է միջազգային ասպարեզում։ Հանդես գալով Հարավ-Աֆրիկյան Միության պառլամենտում, Անգլիայի նախկին պրեմիեր-մինիստր Մակմիլանը ասել է. «XX դարի երկրորդ կեսի մեծ հարցն այն է, թե Ասիայի ու Աֆրիկայի չմիացած երկրները արդյոք, դեպի Արևմո՞ւտք, թե՞ դեպի Արևելք կշրջվեն։ Եվ այժմ խաղաթղթի վրա դրված է անհամեմատ շատ բան, քան մեր ռազմական հզորությունն է կամ մեր դիվանագիտական ու վարչական արվեստը։ Խոսքը վերաբերում է մեր ապրելակերպին»։ Նույնպիսի հայտարարություններով էլ հանդես են եկել

[1] Журнал «За рубежом», № 8, 1962.

Արևմտյան Գերմանայի պրեզիդենտ Լյուբկեն, ԱՄՆ-ի հանգուցյալ պրեզիդենտ Քենեդին և Արևմուտքի մյուս նշանավոր պետական գործիչները։ Այս պայմաններում իմպերիալիստների գաղութային քաղաքականությունը որոշվում է ոչ միայն անմիջական տնտեսական նկատառումներով, այլև առաջին հերթին մի ձգտմամբ՝ ինչ գնով էլ լինի նախկին գաղութները պահել կապիտալիզմի սիստեմում, խանգարելով նրանց օրիենտացիային դեպի սոցիալիզմի սիստեմը.

բ) կռվել «ռուսական կարմիր գաղութատիրության» դեմ, հասնել ՍՍՌՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների «ստրկացված» ժողովուրդների «ազատագրմանը»։ ԱՄՆ-ի նախկին պետական քարտուղար Դալլեսը ուղղակի հայտարարել է, որ Ասիայի ու Աֆրիկայի՝ պետական սուվերենություն նվաճած հետամնաց ժողովուրդների օրինակը ՍՍՌՄ-ի «առավել զարգացած և կուլտուրական ժողովուրդներին» պետք է «ոգեշնչի» դուրս գալու «ռուսական կայսրությունից» և կազմելու ինքնուրույն պետություններ։

ԱՄՆ-ի իմպերիալիստները իրենց գաղութային քաղաքականությունն ամրապնդում են տնտեսական ու ստրատեգիական կարգի միջոցառումներով։ Առաջին կարգի միջոցառումների թվին է պատկանում, այսպես կոչված, տնտեսական, տեխնիկական և ֆինանսական «օգնությունը»՝ «Մարշալի պլանը», «Աֆրիկային ցույց տրվող տնտեսական օգնության պլանը», «Հանուն առաջադիմության միությունը» և այլն։ Իսկ ինչ վերաբերում է ռազմական ձեռնարկումներին, ապա դա պարզաբանումների կարիք չի զգում։ Հանրահայտ է, թե ինչպես ԱՄՆ-ը տենդորեն ռազմական բլոկներ ու ռազմական բազաներ է ստեղծում Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների տերիտորիաներում, շրջապատելով սոցիալիստական լագերը։

Այդ բոլոր միջոցառումների նպատակն է՝ ա) բորբոքել «սառը պատերազմ», բ) տնտեսապես ստրկացնել ԱՄՆ-ից կախում ունեցող երկրները, կռվել Լատինական Ամերիկայի երկրների «տնտեսական նացիոնալիզմի» դեմ, այդ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների դեմ, թույլ չտալով, որ նրանք անցնեն սոցիալիստական լագերը։

Պարզ է, որ ամերիկյան իմպերիալիզմը, իբրև «արդի գաղութատիրության գլխավոր պատվար», սկսել է կատարել «համաշխարհային ժանդարմի դեր»[1]։

«Ազատ աշխարհի» բոլոր երկրներում ԱՄՆ-ը փորձում է պաշտպանել հին դիրքերը և գրավել նոր դիրքեր, ընդլայնել իր սոցիալական հենարանը, իր կողմը քաշել ազգային բուրժուազիային և հաստատել իրեն ձեռնտու ռեժիմներ։ Այսպիսով, ԱՄՆ-ը ամենուրեք ձգտում է անուղղակիորեն հաստատել իր տիրապետությունը, որը հնարավորություն է տալիս միշտ ունենալ իրեն ձեռնտու կառավարություն։

Այս տեսակետից բնորոշ են Գվատեմալայում ամերիկյան նախկին դեսպան Պատերսոնի խոսքերը։ Նա, որին երկրից վռնդեցին հակառեպուբլիկական դավադրություն կազմակերպելու համար, հրաժեշտի ժամանակ Գվատեմալայի պրեզիդենտ Արեվալոյին ասաց. «Ես ուզում եմ ոչ պաշտոնական ձևով հաղորդել ձեզ, պ-րն պրեզիդենտ, որ... ձեր կառավարությունը երբեք ոչ մի կոպեկ, ոչ մի զույգ կոշիկ չի ստանա իմ կառավարությունից այնքան ժամանակ, քանի դուք չեք դադարեցրել ամերիկյան բիզնեսի հետապնդումը»։

Արբենսի դեմոկրատական կառավարության արտաքին գործերի նախկին մինիստր Գ. Տորիելիոն այսպես է բնութագրել Գվատեմալայի դրությունը մինչև 1944 թ. դեմոկրատական հեղափոխությունը.

«Հանրապետությունը ազատ, սուվերեն ու անկախ էր միայն անվանապես։ Իրականում նա մի գաղութ էր, որին շահագործում էին բանանի «Յունայտեդ ֆրուտ կոմպանի» կոնցեռնը, «Ինտերնեյշնլ ռեյլուեյզ օֆ Սենտրալ Ամերիկա» երկաթուղային մոնոպոլիան, էլեկտրաէներգիայի արտադրության մոնոպոլիան՝ «էմպրեսա էլեկտրիկա դե Գվատեմալա» փայատիրական ընկերությունը («Էլեկտրիկ Բոնդ էնդ Շեյր» ֆիլիալը) և զգալիորեն փոքր չափով՝ հերթական բռնապետը, նրա շքախումբն ու օլիգարխիայի և ֆեոդալների ներկայացուցիչների փոքրիկ խումբը»[2]։

1 ՍՄԿՊ ծրագիր, էջ 31։

2 Г.Ториэльо, Битва за Гватемалу, М., Издательство иностранной литературы, 1956, стр. 40.

Այսպիսի դրության մեջ են գտնվում այն բոլոր երկրները, որոնք մտնում են ԱՄՆ-ի «անտեսանելի» գաղութային կայսրության մեջ։

§ 87. ԿՈԼԵԿՏԻՎ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ։ Ժամանակակից նեոգաղութատերերն ստեղծել են նաև մի այնպիսի «անտեսանելի» կայսրություն, որը պատկանում է ոչ թե մեկ, ինչպես առաջ էր, այլ մի քանի գաղութատեր երկրների, այսինքն՝ կոլեկտիվ գաղութատիրություն։

Վաճառահանման նոր շուկաների և հումքի աղբյուրների համար մղվող պայքարը տեղի է ունենում ինչպես ուղղակի ռազմական օկուպացման ու նվաճումների, այնպես էլ գաղափարական, քաղաքական ու տնտեսական ներթափանցման միջոցով։ Դրա համար կիրառում են այնպիսի մեթոդներ, ինչպես «ժողովրդական ապստամբության», «քաղաքացիական պատերազմի», տնտեսական, տեխնիկական, ֆինանսական կամ ռազմական «օգնության» կազմակերպում և այլն։ Ընդամին, նոր գաղութարարները հաճախ արդեն չեն կարող հանդես գալ միայն իրենց ուժերով, սեփական մետրոպոլիայի մասշտաբով, ստիպված են գործելու կոլեկտիվ կերպով, ուրիշ երկրների տնտեսական, ռազմական կամ ռազմա-քաղաքական խմբավորումների հետ դաշինք մտքած։

1830 թ. Ֆրանսիան մեն-մենակ գրավեց Ալժիրը, իսկ անկախության պատերազմի տարիներին չկարողացավ ճնշել Ալժիրի ազգային-ազատագրական շարժումը, թեև հենվում էր ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցների և վեցյակի ու յոթնյակի օգնության ու աջակցության վրա։ Ասենք Ալժիրի ժողովուրդն էլ չէր կարող այդ անհավասար կռվից հաղթող դուրս գալ, եթե չլիներ արաբական արևելքի և սոցիալիստական երկրների ժողովուրդների օգնությունը։

Անգլո-ֆրանս-բելգիական կապիտալիստները, իմպերիալիստական ուրիշ երկրների շահերին հակառակ, ուզում են միասին հաստատվել Կատանգայում։ ԱՄՆ-ի «անտեսանելի» կայսրության կառավարիչներն ուզում են իրենց դաշնակիցների հետ միասին «սիրալիր կերպով» շահագործել Ասիայի ու Աֆրիկայի երկրների հարստությունները, իսկ Լատինական Ամերիկայի երկրների հետ բլոկ կազմած խեղդել Կուբան։

§ 88. «ՔՆՔՈՒՅՇ ԽՈՍՔԵՐԻ ԵՎ ՄԵԾ ՄԱՀԱԿԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Սակայն գաղութարարները ինչպիսի ուղիներով ու միջոցներով էլ պայքարեն նոր գաղութների, գերշահույթի նոր աղբյուրների նվաճման համար, միևնույն է, ընդհանուր առմամբ այն բնորոշվում է որպես «քընքույշ խոսքերի և մեծ մահակի» քաղաքականություն։ Եթե «մտրակի ու բլիթի» քաղաքականությունը նախատեսված էր ներքին գործադրման համար՝ մետրոպոլիայի սեփական ժողովրդի դեմ, ապա քնքույշ խոսքերի և մեծ մահակի կամ, Հովհաննես Հովհաննիսյանի խոսքերով ասած, «ոսկեջրած երկաթե բռունցքի» քաղաքականությունը նախատեսված է արդեն դրսի՝ գաղութային ու թույլ ժողովուրդների համար։

Տեսնենք, թե ո՞րն է նրանց տարբերությունը։

«Քնքույշ խոսքերը» նույն բլիթն է, խայծը, որը նախատեսված է, ինչպես ասվեց, ոչ թե սեփական, այլ ուրիշ ժողովրդի համար, որին ուզում են կա՛մ ստրկացնել, կա՛մ «իրենցը» դարձնել։ «Մեծ մահակը» նույն մտրակն է։ Եթե կարելի է մտրակել սեփական հպատակներին, ապա մահակով ճնշում են այն ժողովուրդներին, որոնք հանդգնում են հրաժարվել «կամավոր» միանալու կեղեքողի երկրին կամ ապստամբում են «միասնական պետության» կազմից դուրս գալու նպատակով։ Մի խոսքով, դա մի այնպիսի քաղաքականություն է, որի օգնությամբ, ամերիկյան պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտի խոսքերով ասած, փոքր ժողովուրդների հետ «խոսում են մեղմորեն», բայց մեծ մահակը ձեռքներին պահած։

1830 թվականին «մեծ մահակի» օգնությամբ ֆրանսիացիները Ալժիր մտան ժողովրդին նրա «բռնապետական կառավարիչներից ազատագրելու» մեծախոստում լոզունգներով, «կարգուկանոն» հաստատելու և «քաոսի ու բարբարոսության» երկրում «քաղաքակրթություն» տարածելու համար. հենց որ ալժիրցիները փորձում էին վերականգնել իրենց անկախությունը, «մեծ մահակը» գործի էր դրվում։

Վերջին մի քանի տարում մենք վկա եղանք Կոնգոյի ցեղերի ու ժողովուրդների նկատմամբ իմպերիալիստական մեծ ու փոքր գիշատիչների «հայրական հոգատարության»։ Սիրո ու նվիրվածության ինչպիսի քնքույշ խոսքերով ասես, որ նրանք

չեն դիմում այդ ցեղերին ու ցեղապետներին, նրանց չեն առաջարկում իրենց «ծառայությունները», «օգնությունը»։ Սակայն ո՞ւմ հայտնի չէ, որ այդ ամենն արվում է ոչ թե հանուն կոնգոցիների, այլ հանուն ատոմային էներգիայի ու ատոմային ռումբերի արտադրությունում օգտագործվող ուրանի, հանուն ջրածնային ռումբերի արտադրությունում օգտագործվող լիթիումի, հանուն մյուս հազվագյուտ մետաղների, որոնց կարիքն այնպե՞ս զգացվում է ժամանակակից արդյունաբերության մեջ և որոնցով այնքա՞ն հարուստ է այդ երկիրը։ Մի խոսքով, իմպերիալիստները սիրում են այն ամենը, ինչով հարուստ է Կոնգոյի ցեղերի «հավերժական մայրը»։

Իմպերիալիստները պատրաստ են հումքի այդ աղբյուրների և էժան բանվորական ուժի ձեռքբերման համար «մեծ մահակը» գործի դնել։ Այդ նպատակով նրանք մշակում են իրենց քաղաքացիներին, որոնց մեծամասնությունն իր ամբողջ կյանքի ընթացքում առաջներում չգիտեր էլ, թե ինչ բան էր Կոնգոն, որտեղ էր գտնվում և ովքեր են ապրում այնտեղ։ Այժմ նրանք պետք է գիտենան և «սիրեն» այդ երկիրը, չէ որ անհրաժեշտության դեպքում միայն նրանց ձեռքով կարելի է գործի դնել «մեծ մահակը»։ Մենք չգիտենք, թե արդյո՞ք այն կգործադրեն։ Զափազանց շատ են Կոնգոյի հարստությունների որսկանները։

§ 89. ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՉԵՆ ԱՐԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ԱՆՈՒՄ ԵՆ «ԵՐԿՐԱՅԻՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԸ»։ Ժողովուրդների ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունեցել է կամ դեռ մինչև օրս էլ ունի իր առասպելական չար ու բարի աստվածները։ Հին հույները մի առանձին տեղ՝ Պանտեոն լեռն էին հատկացրել աստվածներին։ Ինչպես մարդիկ երկրի վրա, նրանց օրինակով էլ աստվածները երկնքում կատաղի կռիվներ էին մղում իրար դեմ։ Նրանք բնաջնջում էին ոչ միայն միմյանց, այլև առավել ստելի աստվածների գերդաստանի անդամներին։ Սակայն, առասպելական աստվածներից և ոչ մեկը չէր ոչնչացնում պարտված աստծո ողջ «ժողովրդին»։ Դա նրանց ուժերից վեր էր։ Այդպիսի դաժանություն չեն քարոզել նաև միաստվածական աստվածների հետևորդները, ինչպես նաև կրոնների «հիմնադիրները»՝ ոչ Բուդդան, ոչ էլ Քրիստոսը։ Նույնիսկ Մահմեդը խնայում էր «գյավուր» ժողովուրդներին։

Սակայն այն, ինչ չէին կարող նույնիսկ երևակայել առասպելական ամենաանգութ աստվածները», իրենց թույլ են տվել և թույլ են տալիս երկրային «աստվածները», որոնց ձեռքում գտնվում է «մեծ մահակը»։ Մարդկության պատմությանը հայտնի է այդպիսի երկրային «աստվածների» գոյության երկու շրջան՝ «Հավերժական քաղաքի» շրջանը և նեխվող իմպերիալիզմի շրջանը։ Ինչպես ասվեց առաջին գլխում, Հռոմի երկրային «աստվածները» ոչ միայն հողին հավասարեցրին Կարթագենը, այլև այդ վաճառականական հանրապետության ժողովրդին ստիպեցին հեռանալ երկրից։ Նրանք այդպես վարվեցին նաև հրեա ժողովրդի հետ։

Թուրքիայի երկրային «աստվածները» նույն կերպ էին «լուծում» հայկական հարցը։ Ֆաշիստական Գերմանիայի «աստված» Հիտլերը նույն քաղաքականությունը շարունակեց Եվրոպայի շատ ժողովուրդների նկատմամբ։ Ֆյուրերի հանձնարարությամբ Գեստապոյի Բ—4 հատուկ բաժնի պետ Ադոլֆ Այխմանը զբաղվում էր հրեական հարցի «վերջնական լուծմամբ»։ Եվ նա հետագայում ստիպված եղավ խոստովանել, որ «իր խղճի վրա ծանրացած է մոտավորապես հինգ միլիոն մարդու արյան մեղքը»[1]։ Սլավոնական հարցով զբաղվում էր ինքը՝ Գեստապոյի պետ Հիմլերը, որն իր ճառերից մեկում «կոչ էր արել բնաջնջել 30 միլիոն սլավոն»[2]։

Ֆրանսիական գաղութարարի «աստվածներն», ուզում էին Ալժիրի ժողովրդի հարցն այնպես լուծել, որ Ալժիրը դառնար ֆրանսիական, իսկ նրա ժողովուրդը կա՛մ միաձուլվեր ֆրանսիական ժողովրդին, կա՛մ հին կարթագենցիների ու հուդաների նման հեռանար իր հայրենիքից։

Ավելացնենք նաև, որ երկրային «աստվածները» չեն կարող հանդուրժել միմյանց, մի բան, որ չի նկատվել առասպելական աստվածների շրջանում։ Օրինակ, հունական աստվածները, թեպետև երբեմն պատերազմում էին միմյանց

---

1 Нюрнбергский процесс, том 1, стр. 848.

2 Там же, том 2, стр. 23.

դեմ, այնուամենայնիվ նրանք, իբրև կանոն, Պառնասի վրա ապրում էին հաշտ ու խաղաղ, նույնիսկ զվարճալի ճաշփիրույթներ էին տարքում։ Երկրային «ատելածները» այդպես չեն ապրում։ Նրանցից մեկը, դեռ Հիտլերից շատ առաջ, պնդում էր, որ աշխարհը չափազանց նեղ է երկու տիրոջ համար։ Այդ համաշխարհային բռնապետների հոգեբանությունը, խոհերն ու իղձերը լավ է արտահայտել Դ. Դեմիրճյանը իր անմահ Քաջ Նազարի բերանով։ Թախտի թերմամբ, թե պատահմամբ թագավոր դառնալուց հետո այդ նախկին աղքատն ու վախկոտը ուզում է արդեն ամբողջ աշխարհը տիրել։

«Հիմա ուզում եմ,— ասում է նա,— որ ոնց մտքիս գալիս է, էնպես էլ աշխարհքը շարժվի, որ ողջ աշխարքը գցեմ ոտքիս տակ։ Ինչացո՞ւ է էսքան պետություն ու թագավոր։ Ես հերիք եմ»։

§ 90. ԴԵՂՈՐԱՅՔ, ՈՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՈՉ ԹԵ ՀԻՎԱՆԴԻՆ ԲՈՒԺԵԼՈՒ, ԱՅԼ ԹՈՒՆԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ Ուրիշ ժողովուրդներին ու աշխարհին տիրելու համար նեոգաղութատիրությունը ձգտում է ստեղծել «համապարփակ տեսություն», որը կոչված լինի տեսականորեն արդարացնելու ու գործնականորեն հիմնավորել իր «նոր կարգը», «համաշխարհային սիստեմը» և դրանով իսկ ժողովուրդներին պահել «հոգևոր գերության մեջ»[1]։ «Գիտնականները» հավաստիացնում են, թե իբր պետական կապիտալիզմը իրենից ներկայացնում է «սոցիալիզմ», որ իրենք ստեղծում են «համընդհանուր բարության պետություն», մի այնպիսի իրավակարգ, որտեղ մարդիկ ու ժողովուրդները «ճնշված չեն», այլ «ազատ են» ու «իրավահավասար»։ Նեոգաղութատիրության պաշտպանները հավաստիացնում են, թե իբր պետական կապիտալիզմը փոխել է իր շահագործողական, գաղութատիրական էությունը և դարձել սոցիալիստական, «ժողովրդական», որի պայմաններում իշխում է լայն դեմոկրատիան, վերանում են դասակարգերը, ազգային հակամարտությունները, «հավասարվում են եկամուտները», վերացվում են տնտեսական ճգնաժամերը, գժվարություն-

[1] ՍՄԿՊ ծրագիր, էջ 61։

ներն ու կարիքը, իսկ կյանքը զարգանում է ներդաշնակ, պլանաչափորեն[1]։

«Ռուսական հրաշք» կինոնկարում կա մի այսպիսի կադր. հարցաթերթիկը լրացնելիս ռուսական ցարը «Պաշտոնդ» հարցին պատասխանում է. «Ռուսաց հողի տեր»։ Բայց հողը միայն ռուսական չէր։ Այդ հողը պատկանում էր 120 այնպիսի ժողովուրդների, որոնց իրենց բուն հայրենիքում համարում էին օտարներ— «եկվորներ» (инородцы)։ Դա կլասիկ գաղութատիրություն էր։ Այդպես էր նաև Ֆրանսիայում։ Ալժիրը համարվում էր ֆրանսիական հող, իսկ ալժիրցիները «բնիկներ» չէին։ Նեոգաղութատիրությունը փոխեց ֆասադը՝ Ալժիրը դարձավ «ֆրանսիական Միության անբաժան մասը», իսկ ալժիրցիները՝ «իրավահավասար քաղաքացիներ»։ Այդ ճանապարհով փորձում էին մոլորության մեջ գցել ալժիրցիներին։

Նեոգաղութատիրության «տեսությունը» թույն է, որը ժամանակակից «բժիշկը» (գաղութատերը) դեղի փոխարեն է տալիս «հիվանդին» (ճնշված ժողովուրդներին), առերես նրան բուժելու, իսկ իրականում նրան թունավորելու նպատակով։

Նեոգաղութատիրության տեսաբանները ընթանում են հին գաղութատիրության տեսաբանների շավղով։ Այն ժամանակների «գիտնականները» թագմաթիվ «տեսություններ» էին հնարում եղած դրությունն արդարացնելու համար։ Նրանք, օրինակ, «օգտակար և արդարացի» էին համարում ստրուկի ու ստրկատիրոջ գոյությունը, «բնական» էին համարում այն, որ «թույլերը ենթարկվում են ուժեղներին»։

«Բնությունն այնպես է տնօրինել,— գրել է Արիստոտելը,— որ ազատ մարդկանց ֆիզիկական կառուցվածքն էլ տարբեր է ստրուկների ֆիզիկական կառուցվածքից։ Ինչ էլ որ լինի, համենայն դեպս, ակներև է, որ մի խումբ մարդիկ իրենց բնությամբ ազատ են, մյուսները՝ ստրուկ, և այդ վերջինների ստրուկ լինելը թե՛ օգտակար է և թե՛ արդար։ Որոշ մարդիկ ամենուրեք ստրուկներ են, ոմանք էլ ոչ մի տեղ այդպիսիք չեն։ Արդյոք ընդհանրապես հնարավո՞ր է, որ ստրուկը որևէ առաքինություն ունենա, բացի այն բանից, որ նա պիտանի է

[1] ՍՄԿՊ ծրագիր, էջ 31, 61, 62, 65։

իբրև աշխատանքի ու ծառայության գործիք։ Ստրուկին ընդհանրապես հատուկ չէ դատելու ունակությունը»[1]։ Հին աշխարհի մի ուրիշ գիտնական նույնպես ենթադրում էր, որ «Ազնվազարմները պետք է կառավարեն անազնվազարմներին։ Ստրուկները պետք է ենթարկվեն, իսկ տերերը՝ իշխեն, ուժեղը պետք է իշխի, իսկ թույլը՝ ենթարկվի։ Արդարությունը ուժեղի օգուտն է»[2]։ Այստեղից եզրակացնում էին՝ կայսրությունները բնության օրինաչափ երևույթներ են, աստվածային պարգև, նրանց հիմքերը անսասան են, նրանք պետք է հավերժ գոյություն ունենան։ Եթե հռոմեական կայսրության մայրաքաղաքը հայտարարվել էր «Հավերժական քաղաք», ապա Կարլոս Մեծի կայսրությունն էլ հայտարարվել էր «սրբազան»։

Նեոգաղութատիրությունն աշխարհի նոր իրավակարգի իր տեսությունը ներկայացնում է իբրև ամենաճշմարիտ, արդար ու հավերժական տեսություն, իբրև ինչ-որ նոր կրոն, որին պետք է կուրորեն հետևել, և աստված մի արասցե, քննադատել։ Այդպես էին վարվում հին աշխարհի գաղութարարները ինչպես բազմաստվածության, այնպես էլ միաստվածության շրջանում։ Իսկ ինչո՞ւ։ Որովհետև ամեն մի կրոն հակագիտական է. հակագիտական ու հակամարդկային է նաև նեոգաղութատիրության տեսությունը։ Ուստի նրա (ինչպես և բոլոր նախկին կրոնների) առաքյալները շրջանակներ էին ստեղծում մարդկային մտածողության համար։

Ֆաշիզմի, ժամանակակից իմպերիալիստական պետությունների նշանաբանը Հռոմեական կայսրության վաղեմի նշանաբանն է՝ «Ուժեղը պետք է իշխի, իսկ թույլը՝ ենթարկվի։ Արդարությունը ուժեղի օգուտն է»։ Նոր ստրկության ջատագովներին, հնադարյան ստրկության պաշտպանների նման, խայտառակ ձախողում է սպասում։ «Հավերժական քաղաքի», Կարլոս Մեծի, ինչպես և մյուս կայսրությունները խորտակվեցին, կխորտակվեն նաև նոր կայսրությունները։

Որքան էլ անգլիացիները, ֆրանսիացիներն ու մյուս

[1] **Аристотель**, Политика, стр. 14, 16, 33, 35.

[2] **Платон**, Законы, том 13, изд. «Академия», пб., стр. 99, 128.

գաղութարարներն իրենց կայսրությունները քողարկեն «Ազգերի քրիստոնեական համագործակցություն», «Ֆրանսիական միություն» ու դեռ, ասված գիտե, ինչպիսի նոր անուններով, ոչ մի բան չի օգնի։ Մոտենում է տեսանելի ու անտեսանելի բոլոր կայսրությունների վախճանը։ Ժողովուրդները սովորում են պահպանել ժամանակակից առողջապահության կանոնները՝ վնասազերծել աղբանոցները։

§ 91. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿՆՎՈՒՄ Է. ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԻԲՐԵՎ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԻԲՐԵՎ ՖԱՐՍ։

Հեգելը գտնում էր, որ «պատմությունը կրկնվում է»։ Մարքսը, հավաստելով նույն միտքը, ճշգրտեց. «Համաշխարհային-պատմական անցքերն ու անձերը կրկնվում են, այսպես ասած. երկու անգամ... առաջին անգամ իբրև ողբերգություն, երկրորդ անգամ իբրև ֆարս»։

Այո՛, իսկապես, պատմությունը կրկնվում է։ Ժամանակակից նեոգաղութատիրությունը «նոր կարգի», «համաշխարհային նոր սիստեմի» դիմակի տակ ձգտում է վերականգնել ստրկատիրական կարգերը, մարդկությանը պարտադրել ստրատատիրական իրավունք, վերջինս մատուցելով իբրև ճշմարիտ ու հավերժական։ Բայց եթե ստրկատիրական իրավակարգը հին աշխարհի ողբերգությունն էր, ապա XX դարում նրա երկրորդ հրատարակությունը իսկապես ֆարս է։

Աշխարհի ժողովուրդները շարունակ երաղել են լիկվիդացնել երեք չարիք.

ա) ոչնչացնել մարդու շահագործումը մարդու կողմից, բ) վերացնել ազգային ճնշումը և ազգերի անիրավահավասարությունը և գ) ազատվել պատերազմներից։

Առաջին չարիքը հանգեցրեց դասակարգերի հակամարտության ու բախումների, բռնապետական կամ դեմոկրատական ռեժիմների հաստատման, երկրորդը՝ ժողովուրդների թշնամանքի ու պատերազմների։ Ակներև է, որ առաջին երկու պրոբլեմների լուծումից էլ կախված է երրորդը։

Բախտի դառն հեգնանքով ոչ միայն ժողովուրդների լավագույն մտածողները, այլև իրենք՝ գաղութարարները, այսինքն՝ այդ չարիքները սերմանողները, ձեռնամուխ են եղել

և ձեռնամուխ են լինում այս երեք սոցիալական պրոբլեմների «լուծմանը»։

«Հանուն երկրի վրա հավերժական երջանկության ու խաղաղության ենթարկվեցե՛ք Հռոմի աստվածներին»,— հնում այսպես էին ասում առաջին գաղութային իմպերիալիզմի հիմնադիրներն ու կառավարիչները։ «Հանուն երկրի վրա հավերժական երջանկության ու խաղաղության ենթարկվեցե՛ք նորին աստվածային մեծությանը՝ պետական կապիտալիզմին»,— կրկնում են գաղութային երկրորդ իմպերիալիզմի հիմնադիրներն ու կառավարիչները։

Երբ «Հավերժական քաղաքի» բռնապետները քարոզում էին հանուն մարդկանց խաղաղության ու երջանկության, ժողովուրդները հասկանում էին, որ նրանք պատերազմ, դժբախտություն են նախապատրաստում իրենց դեմ։ Երբ Լուկուլլոսն ու Պոմպեոսը, Կրասոսն ու Ներոնը կամ Հռոմի, Պարսկաստանի ու Բյուզանդիայի մյուս կառավարիչները խոսում էին Բերբերիայի, Հայաստանի կամ Վրաստանի ժողովուրդների նկատմամբ սիրո, փոքր ժողովուրդների անկախությունը հարգելու մասին, դա կեղծավորություն էր։ Իրականում նրանք ատելությամբ էին լցված այդ ժողովուրդների նկատմամբ և ձգտում էին ոչնչացնել նրանց պետականությունը, ասիմիլացնել նրանց։ Հռոմի հրամանով տապալում էին կառավարիչներին, հրահրում «փոքր պատերազմներ»։ Ժամանակի մշուշով պատած երեկվա օրը ինչքա՞ն նման է արևաշող այսօրվան։ Բայց ինչ որ կատարվել է երեկ, չպետք է կատարվի այսօր։

Հռոմի կայսրերը, այնուամենայնիվ, կարողացան հրով ու սրով իրենց ենթարկել աշխարհը։ Նրա լեգեոնները անցնում էին բոլոր երկրներով, ջանալով ոտնատակ անել երկրի բոլոր ծաղիկները, թողնելով միայն մի ծաղիկ՝ հռոմեականը։ Դա ժամանակի ողբերգությունն է։ Սակայն այժմ այդպիսի նպատակ առաջադրելը, երբ ժողովուրդները ճաշակել են ազատության ու անկախության պտուղները, գիտակցաբար անդունդ գլորվելու նման մի բան է։

Առաջին անգամ Սուլլան զինված բանակ մտցնելով Հռոմ՝ «ազատության ապաստանը», երկրում հաստատեց ահաբեկ-

ման ու սարսափի ռեժիմ։ Նա օրինակ տվեց հաջորդ կայսրերին։ Ժամանակակից ուժերը գործում են նույն սկզբունքով, ոչ մի տեղ ազատության նշույլ անգամ չթողնելով։

Հին դարերում մարդիկ չէին կարողանում հասկանալ բնության երևույթները, և իրենց համար աստվածներ էին հորինում։ Թագավորներին հաջողվում էր հավատացնել իրենց հպատակներին, որ իրենք աստվածներ ու կիսաստվածներ են և որ քաղաքացիների պարտքն է չդատել, չմտածել, այլ միայն կատարել «աստծո» կամքը։ Պահանջել այժմ, որ երկրի բոլոր քաղաքացիները կատարեն բռնակալի քմահաճույքները որպես հլու ստրուկներ, այսինքն՝ այն, ինչ որ անում են նեոգաղութատիրությունի «հանճարեղ» ֆյուրերները, նշանակում է ոչ թե ողբերգություն, այլ խեղկատակություն խաղալ։

Հայտնի է, որ քրիստոնեությունն իր սկզբնավորման շրջանում ճնշվածների շարժում էր. այն հանդես էր գալիս իբրև ստրուկի և ազատ արձակված չքավորների ու իրավազուրկների, Հռոմի նվաճած կամ ցրիվ տված ժողովուրդների կրոն։ Հին Հռոմի ագահ ու նենգ իմպերիալիզմը չէր կարող չօգտագործել այդ հզոր «շարժումը ճնշվածների»։ Եվ այդ շարժումը հայտարարվեց հռոմեական համաշխարհային կայսրության պետական կրոն։ Նրա վրա սկսեցին հենվել ներքին ու արտաքին քաղաքականության մեջ։

Համանման բան է տեղի ունենում նեոգաղութատիրության հետ։ Հռոմեական կայսրության նման, նեոգաղութատիրությունը ձգտում է օգտագործել ժողովուրդների ազատության ու անկախության շարժումը։ Անցյալում եղածն անցյալի ողբերգությունն է։ Անցյալի կրկնությանը ձգտելն արդեն խեղկատակություն է։

Հռոմի աստվածները վարում էին «մտրակի ու բլիթի» քաղաքականություն», «քնքույշ խոսքերի և մեծ մահակի» քաղաքականություն։ Դրանից ժողովուրդները չէին ճաշակում ո՛չ «բլիթ», ո՛չ «խաղաղություն», ո՛չ էլ «ազատություն»։ Նրանք վկա էին լինում միայն մշտական պատերազմների, Հռոմի պաշտոնյաների կամայականության և այլն։ Նրանք արհամարհում և ատում էին ոչ միայն հռոմեական աստվածնե-

ին, այլև բոլոր հեթանոս աստվածներին։ Եվ աստվածները չքացան։ Բազմաստվածության փոխարեն հայտնվեց մեկ աստված, մեկ հավատ։ Կառավարող դասակարգերը, հաշվի առնելով անցյալի փորձը, սկսեցին մարդկանց խոստանալ արդեն ոչ թե Հռոմի հեթանոս աստվածների նման երկրային, այլ երկնային դրախտ, ու այն էլ մի պայմանով՝ եթե նրանք այս իրական աշխարհում հնազանդ լինեն նվաճողին, հարստահարողին։ Ժողովուրդներն սկսեցին մերժել նաև այդ առաքյալներին՝ մեկ հավատով հանդերձ։ Այդ ժամանակ երևան եկան նոր քրիստոսներ ու մահմեդներ՝ ի դեմս ժամանակակից գաղութարարների։ Նրանք վերադարձան Հռոմի հեթանոս աստվածների ժամանակներին՝ այն իմաստով, որ ժողովուրդներին երկրային դրախտ ու հավերժական խաղաղություն խոստացան, բայց միայն «վաղը» և ոչ թե այսօր, քանի որ այսօր զբաղված են «պատմական գործերով»։ Պարզ է, որ այդպիսի «վաղը» երբեք էլ այսօր չի դառնա։ Ճիշտն ասած, այս բանի վրա է հիմնված «բլիթի» ամեն մի քաղաքականություն։ Նա միշտ օդից է կախված, միրաժ է, մինչդեռ «մտրակի» քաղաքականությունը միշտ ռեալ, շոշափելի և զգալի է միլիոնավորների համար։

Մարդիկ և ժողովուրդներն այսօր վճռականորեն մերժում են «բլիթի» ու «մտրակի», «քնքույշ խոսքերի և մեծ մտրակի» քաղաքականությունը։ Նրանք ուզում են ռեալ ազատություն, ուզում են ունենալ բավարար սնունդ, բնակարան, հագուստ, այդ ամենն ուզում են ոչ թե «վաղը», այլ «այսօր»։

Այո՞, հիրավի, պատմությունը կրկնվում է՝ առաջին անգամ իբրև ողբերգություն, երկրորդ անգամ՝ իբրև խեղկատակություն։ Բայց այդ խեղկատակությունը չի կարող շատ երկար տևել։

§ 92. ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱԿԱՍՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԿԱՆՑ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԷՈՒԹՅԱՆԸ։ Ալժիրցիները զենք վերցրին և սկսեցին վռնդել ֆրանսիացի «ազատարարներին»։ Այն, ինչ անում էին ալժիրցիները, ժողովրդական վրիժառության արտահայտություն էր, բնական ձգտում՝ ապրել այնպես, ինչպես իրենք են ուզում, և ոչ թե թելադրանքով։ Եթե ֆրանսիացի գաղութարարները

չլինեին, ապա ալժիրցիները զենքի չէին դիմի, չէին սկսի սպանել ֆրանսիացի պարաշյուտիստներին և օասականներին։ Ալժիրցիների «նոցիոնալիզմն» աշխարհ եկավ իբրև ֆրանսիական մեծապետական շովինիզմի հարձակումից պաշտպանվելու վահան։

Ամեն ինչում հանցավոր է գաղութատիրությունը։ Նրա դեմ ըմբոստացել է մարդու և ժողովուրդների բանականությունը։ Գաղութարարներն ու ճնշողները միշտ և ամենուրեք ընդհանուր արհամարհանքի և ատելության առարկա են եղել։ Նրանց ճակատագիրը ավելի քան անփառունակ է։ Մարկ Բրուտոսը և նրա ընկերները դաշույնով 23 հարված հասցրին «բոլոր մեծ մարդկանցից մեծագույնին»՝ Կեսարին։ Ոսանող Թելլերյանը գնդակ արձակեց Թալեաթ փաշայի սև սրտին, Մուսոլինիի կյանքի ուղին ավարտվեց շատ յուրօրինակ ձևով՝ պարտիզանները նրան գնդակահարելուց հետո Միլանում գլխիվայր կախեցին։ XX դարի «փրկիչ» Հիտլերը չցանկացավ իր բարեկամի վիճակին արժանանալ և գնդակն ուղղեց... իր բերանին։ Իհարկե, եղել են նաև այնպիսի երկրային «աստվածներ», որոնք իրենց մահով են մեռել։ Այդպիսին է, օրինակ, Երջանիկ Սուլլան։ Սակայն այդ բոլոր «երջանիկ» բռնապետները, ինչպես նաև մյուս բոլոր բռնակալները, ժողովուրդների հիշողության մեջ մնացել են իբրև արնախում բռնակալներ, իբրև ժամանակի չար ոգիներ։

Իրականում մարդկային միտքը, ժողովուրդների ընտանիքը կարող են նորմալ, ներդաշնակ կերպով զարգանալ, բարգավաճել միմիայն լույսի, օդի առատության լայն ասպարեզում, այլ ոչ թե լաբիրինթոսում՝ բանտում, երկաթե շղթաների մեջ։ Այնտեղ, ուր իշխում է գաղութատիրությունը, ուր առկա են նեխումը, հառաչանքը, արցունքն ու մահը, այնտեղ հասարակությունը դահիճների ճիրաններում է, այնտեղ ժողովուրդները միայն գալարվում են անդունդի եզրին։

Ժամանակակից իմպերիալիզմի «կայսրերը», Հռոմի ժամանակների իմպերիալիզմի կայսրերի նման, հպարտանում են, որ իրենց մոտ ստեղծված է «հաստատուն կարգուկանոն», ամեն ինչ «բարգավաճում է»։ Նրանք բացեիբաց

հայտարարում են, թե ձգտում են ստեղծել «համաշխարհային կարգուկանոն», «համաշխարհային տիստեմ»։

Այս բոլոր ծրագրերը, «Հավերժական քաղաքի» պլաններ-ի նման, «Եվրոպայի (և ոչ միայն Եվրոպայի) բոլոր ազգերի ու ժողովուրդների ամենագազանային, ամենավայրագ, գերիմպերիալիստական ստրկացման ու ճնշման»[1] պլաններ են։ Եվ այդ պլանները, որքան էլ զարմանալի է, կառուցում են... իմպերիալիզմի ու գաղութատիրության դեմ «պայքարելու» դրոշով, հանուն մարդկանց ու ժողովուրդների «տնտեսական բարգավաճման»։

Նույնպիսի «բարգավաճմամբ» մի ժամանակ հպարտանում էին Եգիպտոսի փարավոններն ու Հռոմի կայսրերը։ Նեղոսի բուրգերը և Եգիպտոսի ու Հռոմի մյուս կառույցներն էլ այսօր ապշեցնում են մարդուն։ Սակայն ինչպե՞ս ու ինչպիսի՞ գնով են կառուցվել դրանք։ Ժողովուրդներին հարկավոր չեն այդպիսի «բարգավաճումները»։ Նրանք մերժել են Եգիպտոսի փարավոններին ու Հռոմի կայսրերին, ցրել եգիպտական խավարը, խորտակել հռոմեական լաբիրինթոսի պատնեշները, իսկ մեր օրերում փշրում են իմպերիալիզմի շղթաները և լույսի ու ազատության լայն ճանապարհ են դուրս գալիս։ Նրանք հերոսական ջանքերով այդ բանը կատարում են ոչ թե այժմ նոր հռոմների լծի տակ ընկնելու, այլ ազատության ու իսկական բարգավաճման համար։

§ 93. ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԸ։ Հին, կլասիկ գաղութատիրությունը մեռած դիակ է։ Այն այժմ ոչ ոք չի կարող վերակենդանացնել։ Նրան հաջորդել է նեոգաղութատիրությունը, որը գործում է մոդայիկ լոզունգներով և որը ձևափոխել է ստրկացման հին մեթոդներն ու ստեղծել նորերը։ Սակայն գաղութատիրությունը, ինչպես օձը, չի փոխել իր բնությունը։ Նրա գլխավոր նպատակը, կրկնում ենք, առաջվա նման զավթումն է, գերշահույթի գաղութային աղբյուրների նվաճումը՝ առավել թույլ և պակաս չափով զարգացած երկրներում։ Ամեն մի գաղութատիրության քաղաքական, ստրատեգիական, տնտեսական ու գաղափարական գործունեություն ենթարկված է այդ հիմնական խնդրին։

[1] «Правда», 22 декабря 1961.

Հինգերորդ գլուխ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

(Գերշահույթի գաղութային աղբյուրների նշանակությունն իմպերիալիզմի դարաշրջանում)։

Գաղութային սիստեմը հարստացումը հռչակել է մարդկության վերջին ու միակ նպատակը։

Կ. Մարքս։

§ 94. Ի՞ՆՉ Է ԳԵՐՇԱՀՈՒՅԹԸ։ Այս գլխում էլ խոսք կլինի գաղութատիրության ստրատեգիական նպատակների, այսինքն՝ գերշահույթի գաղութային աղբյուրների մասին, որոնք իմպերիալիզմի ժամանակ ավելի ու ավելի մեծ նշանակություն և կշիռ են ստանում։

Նյութական բարիքների արտադրությունը ամեն մի հասարակության կյանքի հիմքն է։ Եվ դա հասկանալի է. մարդիկ ապրելու համար պետք է ունենան ուտելիք, հագուստ, բնակարան և այլ նյութական բարիքներ։

Ի՞նչ է պահանջվում նյութական բարիքների արտադրության համար։

Նյութական բարիքների արտադրության պրոցեսը բաղկացած է հետևյալ տարրերից. ա) մարդու աշխատանքից (աշխատուժից) և բ) արտադրության միջոցներից, որոնց մեջ մտնում

են՝ 1. աշխատանքի առարկաները (հողը, անտառները, ջուրը, ընդերքը) և 2. աշխատանքի միջոցները (մեքենաներ, հաստոցներ, գործիքներ, արտադրական շենքեր, հաղորդակցության ու կապի միջոցներ և այլն)։

Գաղութարարը գաղութային ժողովրդից խլում է նրա երկրի հարստությունները, աշխատանքի առարկաները (հողը, անտառները, ջրերը, ընդերքը, հումքը), կաշկանդում կամ պարզապես թույլ չի տալիս, որ նա զարգացնի իր երկրի տնտեսությունը, այսինքն՝ աշխատանքի միջոցները (կառուցի ֆաբրիկաներ ու գործարաններ՝ արտադրական շենքեր, զարգացնի հաղորդակցության և կապի միջոցները, արտադրի անհրաժեշտ հաստոցներ, մեքենաներ և այլն), ինչպես նաև շահագործում է ժողովրդի աշխատանքը (բանուժը), վատնում նրա ֆիզիկական ու հոգևոր ուժերը, այդ ամենը ծառայեցնելով սոսկ մետրոպոլիայի հարստացմանը։

Կարող են ասել՝ կապիտալիստը նույն կերպ է վարվում նաև սեփական երկրի ժողովրդի հետ։ Բանն էլ այն է, որ «նույն կերպ» չի վարվում։ Իհարկե, կապիտալիզմի հիմնական տնտեսական օրենքը՝ հավելյալ արժեքի արտադրության օրենքը գործում է ինչպես մետրոպոլիայում, այնպես էլ գաղութներում։ Բայց տարբերությունն այն է, որ եթե մետրոպոլիայում կիրառվում են շահագործման սովորական ձևեր, ապա գաղութներում դրան ավելանում են նաև գաղութային ճնշումը, գաղութային շահագործումը։

Կապիտալիստը հավելյալ արժեքն իբրև շահույթ մետրոպոլիայում արտադրության ընդլայնման (նոր ֆաբրիկաների ու գործարանների, երկաթուղիների ու հաղորդակցության ուրիշ միջոցների և այլն) վրա է ծախսում՝ նոր հավելյալ արժեք ստանալու համար, մինչդեռ գաղութարար կապիտալիստը գերշահույթը ներդրում է գերազանցապես մետրոպոլիայում. եթե նա մասամբ միջոցներ է ներդնում գաղութի էկոնոմիկայում (կապիտալի արտահանություն), ապա դարձյալ հանուն գերշահույթի։ Հենց այստեղ բացահայտվում է այն «գաղտնիքը», թե ինչու մետրոպոլիաները լինում են «զարգացած», «առաջավոր», իսկ գաղութները՝ հետամնաց, մնում են որպես մետրոպոլիայի հումքի բազաներ։

Ինչո՞ւ են գաղութարարներն այդպես վարվում։ Կապիտալիստները միշտ հենվում են իրենց ազգային շուկայի վրա։ Մետրոպոլիան նրանց կենսական բազան է։ Ուրիշ երկրներով նրանք հետաքրքրվում են այն չափով, որչափով դրանք կարող են դառնալ տնտեսական, քաղաքական կամ ռազմա-ստրատեգիական շահույթների օբյեկտ։ Հենց հանուն առավել բարձր նորմայի շահույթի ստացման էլ իմպերիալիստները պատրաստ են դիմելու ամենածայրահեղ միջոցների, գնալու ուր լինի, թեկուզ «աշխարհի ծայրը»։

§ 95. ՈՍԿՈՒ «ԳԵՏԵՐԸ» ՍԿԻԶԲ ԵՆ ԱՌՆՈՒՄ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՆԵՐԻՑ։ Նախքան շահույթի այդ նորմաների մասին խոսելը, նորից անդրադառնանք ժողովրդի մայր հողի հարցին։ Ինչպես արդեն ասվեց, ամեն մի ժողովրդի ազգային տերիտորիան նրա գոյության ու կենսագործունեության միակ նյութական բազան է։ Այն միշտ զավթիչների ու գաղութարարների գայթակղության առարկան է եղել։ Գաղութի տերիտորիայից են սկիզբ առնում ոսկու «գետերը» և թափվում մետրոպոլիաների կառավարիչների սեյֆերը։ Արդյոք զարմանալի՞ է, որ ագրեսորների գլխավոր հոգսերն իրենց համար «կենսական տարածություն» նվաճելն է, հանուն որի նրանք հաճախ կանգ չեն առնում ամբողջ ժողովուրդների ֆիզիկական բնաջնջման առաջ։ Թուրք և ռուս գաղութարարները Հայաստանն ուզում էին առանց հայերի։ Թուրք սուլթանն ասում էր, որ հայ ժողովուրդը միայն գերեզմանի տեղ կստանա, իսկ ռուս ցարը իր փոխարքա Գոլիցինի բերանով հռչակեց, որ հայ ժողովրդից միայն մի մարդ պիտանի իբրև թանգարանային նմուշ։

Պետությունների պատմությունը, ըստ էության, մետրոպոլիայի տերիտորիայի ընդլայնման համար մղված պայքարի կամ նրա ամբողջականության ու ազդեցության պահպանման համար պայքարի պատմություն է։

Այո, հենց ուղղակիորեն (ռազմական ուժով) կամ անուղղակի ճանապարհով (տնտեսական կամ քաղաքական վերահսկողության հաստատմամբ) գաղութարարները տիրում են գաղութային գերշահույթի կա՛մ բոլոր, կա՛մ էլ սոսկ մի քանի աղբյուրների։

§ 96. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳԵՐՇԱՀՈՒՅԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐԸ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ, ՆՐԱ ԸՆԴԵՐՔԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ «Երկրի հարստությունը,— ասում է Ա. Ի. Միկոյանը,— նյութական այն բազան է, որն ապահովում է ժողովրդի ապագան»[1]։ Գաղութարարը, բնիկ ժողովրդից խլելով ու յուրացնելով հարստությունները, ձգտում է դրանով իսկ ապահովել իր ապագան՝ մետրոպոլիայի ապագան։ Այս մասին միանգամայն պարզորեն ու անեղկմտորեն հայտարարում էր ֆրանսիական գաղութարարների գաղափարախոսներից մեկը՝ Էժեն Էտենը տակավին իմպերիալիզմի արշալույսին «Թան» թերթում հրապարակված հոդվածում։ «Հայրենիքի գաղափարը,— ասում էր նա,— խարսխվում է պարտքի գիտակցության վրա, մինչդեռ գաղութի գաղափարը կարող է և պետք է հիմնավորվի բացառապես այն շահի վրա, որը և ազգին ստիպում է բարի կամքով դուրս գալ իր սահմաններից և կամավոր կերպով էքսպանսիա կատարել։ Հետևաբար, յուրաքանչյուր գաղութային ձեռնարկության հարկավոր է մոտենալ միայն մի չափանիշով՝ այն օգտակարության, առավելության ու շահի չափանիշով, որ կարող է ստանալ մետրոպոլիան։

Ո՞րն է մեր նպատակը։ Մենք ստեղծել ենք և մտադիր ենք պահպանել ու զարգացնել գաղութային կայսրությունը, որպեսզի ապահովենք մեր երկրի ապագան» (ընդգծումը մերն է — Հ. Ս.)։

Գաղութատիրության այս տեսությունը, այնուհետև, արդարացնում է այն բոլոր ծախսերն ու մարդկային զոհերը, որ պահանջում են էքսպանսիայի շահերը, քանի որ նոր տիրապետությունները ֆրանսիական ապրանքներին ապահովում են նոր շուկաներ, իսկ արդյունաբերությանը՝ հումքի աղբյուրներ։

Այս «տեսական» դրույթներով էին ղեկավարվում Ֆրանսիայի ֆաշիստացող կառավարող շրջանները, երբ Ալժիրի նկատմամբ վարում էին «ֆրանսիական Ալժիրի» քաղաքականություն։

[1] «Правда», 24 января 1962.

Ալժիրը նրանց համար հետաքրքրություն էր ներկայացնում նախ և առաջ իբրև մի երկիր, որի ընդերքը պարունակում է մեծ քանակությամբ նավթ (նախնական տվյալներով, պաշարները կազմում են մի քանի միլիարդ տոննա), քարածուխ (մոտավոր պաշարները՝ մեկ միլարդ տոննա), երկաթաքար (պաշարները՝ մոտ երկու միլիարդ տոննա), ոսկի, պղինձ, կապար, մարգանեց, ցինկ, վոլֆրամ, ուրան, թորիում, շինաքար (մարմար, գրանիտ), քիմիական հումք։ Այդ ամենն անհրաժեշտ էր, որ Ֆրանսիան մնար որպես «մեծ» տերություն, աշխարհի ատոմային «չորրորդ» տերությունը։

Այո՛, հենց ժողովրդի ազգային տերիտորիան, նրա բնական հարստությունները գաղութային գերշահույթի անսպառ և վճռական աղբյուր են, այսպես ասած, համար առաջին աղբյուրը։ Գերմանական իմպերիալիստները մի սերնդի կյանքի ընթացքում երկու անգամ համաշխարհային պատերազմ սանձազերծեցին՝ Արևելքում «կենսական տարածություն», նոր հողեր նվաճելու նպատակով։ Եվ չնայած այն բանին, որ նրանք երկու անգամ էլ ջախջախվեցին, այնուամենայնիվ չեն հրաժարվել իրենց այդ գլխավոր նպատակից։ Ինքնասպանությունից առաջ Հիտլերը իր գեներալներին իբրև «պատգամ» ասել է. «Ապագայում նպատակը պետք է առաջվա նման լինի՝ Արևելքում գերմանացիների համար տերիտորիա գրավելը»։

§ 97. ՁՍՈՒՁՎՈՂ ԱՎԻԱԿԻՐՆԵՐ ԵՎ «ԱՆՊԱՐՏԵԼԻ» ԳԵՆԵՐԱԼՆԵՐ։ Բայց գաղութների տերիտորիաները ոչ միայն գերշահույթ՝ նյութական բարիքներ քաղելու ուղղակի և անմիջական օբյեկտներ են, այլև ռազմա-ստրատեգիական բազաներ. դրանց բերած օգուտն ընդհանուր առմամբ հեռանկարային է։ Այդ ռազմա-քաղաքական առավելությունները հաճախ գերադասելի են և առավելություն են ստանում նույնիսկ առաջին աղբյուրի նկատմամբ։

Թույլ և փոքր ժողովուրդների տերիտորիաները հաճախ զավթում են այն նպատակով, որ դրանք դարձնեն՝ ա) տրամպլին՝ ավելի շահավետ տերիտորիաներ զավթելու համար. բ) առաջներում զավթած գաղութները պաշտպանելու համար.

գ) հնարավոր հակառակորդների դեմ պատերազմի նախապատրաստվելու համար։

Այդպիսի դեր, օրինակ, խաղացել և դեռ շարունակում են խաղալ Ջիբրալթարը, Ադենը, Սինգապուրը և Անգլիայի փաղանթիվ ուրիշ գաղութային տիրապետություններ։ Այդ բազաները տասնամյակներ շարունակ բրիտանական իմպերիալիզմին հնարավորություն են տվել ամուր փակելու դեպի իր գաղութային կայսրությունը տանող դարբասները՝ Եվրոպայում իր հակառակորդների (Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Իտալիայի) համար։ Ռուսական ցարիզմը շարունակ ճգնել է զավթել Դարդանելը, որպեսզի Սև ծովը փակի բոլորի առջև և բաց պահի միայն իր համար՝ Միջերկրական ծով դուրս գալու համար։

Անգլիան և ԱՄՆ-ը օվկիանոսներում ու ծովերում ունեն հազարավոր կղզիներ, որոնցից շատերը համարյա անմարդաբնակ են և տնտեսական հետաքրքրություն չեն ներկայացնում։ Բայց նրանք ամուր կառչում են դրանցից։ Ամերիկացի գեներալ Մակարթուրն այդ կղզիներն անվանել է «չսուզվող ավիակիրներ»։ Խաղաղ ժամանակ դրանք ծառայում են որպես հրաձգարաններ։

Պատերազմի շրջանում գաղութների տերիտորիաները դառնում են հարձակման նախապատրաստվելու բազա կամ մետրոպոլիայի պաշտպանության վահան։ Նրանք ավերման են ենթակա։ Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Հյուսիսային Աֆրիկան դարձավ զինանոց-բազա անգլո-ֆրանսիական զորքերի և նրանց դաշնակիցների՝ ամերիկյան զորքերի համար, որտեղ նրանք նախապատրաստվեցին և հարձակվեցին Իտալիայի ու Գերմանիայի վրա։

Գաղութարարներին վիճակված ծանր փորձությունների տարիներին տերիտորիալ մեծ տարածությունը նրանց համար ծառայում է իբրև ամենամարտական «անպարտելի» գեներալ։ 1940 թվականին Հիտլերը գրավեց Ֆրանսիան։ Երկրի դիմադրության ուժերն սկսեցին բազմամարդվել գաղութային տերիտորիայում, որտեղ գերմանական ֆաշիստները արդեն չէին կարող թափանցել։ Անգլիան դժվար թե կարողանար դիմակայել Նապոլեոնին, կամ էլ Հիտլերին, եթե չունենար հզոր կայսրություն, որտեղից հարվածներ էր հասցնում իր հակառակորդին։

Քանի-քանի հզոր բանակներ են փորձել զավթել ստրկատիրական Հռոմը, բայց ապարդյուն։ Իտալիայի սահմաններից շատ հեռու, նրա գաղութային տիրապետություններում սպառել են իրենց հարձակողական ուժը և վերջիվերջո պարտություն կրել։ Բավական է բերել մի օրինակ։ Պիրենեյները և Ալպերը անցնելիս Հաննիբալը 60 հազար մարտիկից կորցրեց 40 հազարը, որոնք զոհվեցին լեռներով ու գետերով անցնելիս։ Նրա եղբայր Հասդրուբալը իր բանակով կրկնեց Հաննիբալի սխրագործությունը, ձգտելով նրան միանալ Իտալիայում և համատեղ արշավել Հռոմի վրա, բայց շարաշար պարտություն կրեց հենց «անպարտելի» գեներալ... տարածությունից։

XX դարի գաղութատիրությունը իր առջև դնում է ավելի վիթխարի խնդիր։ Այն փորձում է օգտագործել գաղութային տերիտորիաները, դրանք դարձնել թե՛ «մեռյալ գոտիներ», թե՛ չսուզվող ավիակիրներ, և թե՛ «անհաղթ գեներալներ»։

Ֆրանսիացի գեներալ Պոլլեն «Ռեվ դե դեֆանս նասիոնալ» ռազմական հանդեսի էջերում գրում է. «Աֆրիկան հնարավորություն է տալիս ամեն տեսակի մանևրներ կատարելու ինչպես Եվրոպայի, այնպես էլ Ասիայի դեմ։ Նրա վիթխարի տարածությունը մեզ պաշտպանում է անակնկալներից և թույլ է տալիս խստագույն գաղտնապահության մթնոլորտում նախապատրաստվել ամենից ավերիչ գործողությունների, որպիսիք միայն կարելի է ծրագրել նրա դեմ, իսկ դա պահանջում է երկիրը պահել ենթակա վիճակում»։

«Եվրաֆրիկա» գրքի հեղինակ Պիեր Նորը պնդում է, որ «Ստրատեգիական տեսակետից ոչ ոք չէր գրոհի Եվրաֆրիկայի աշխարհագրական ռազմական տարածության վրա, որը մարդկանց համար ավելի լայնատարած ապաստարան է, քան Սիբիրը, արդյունաբերության համար ավելի հոսալի թաքստոց է, քան Ուրալը և որտեղ մի քանի տարում կարելի է ատոմային ռումբեր արտադրել տեղական հումքի աղբյուրներով»։

Գաղութային տերիտորիաներում ստեղծվում են ռազմածովային և օդային բազաներ, կառուցվում նավահանգիստներ,

երկաթուղիներ ու խճուղիներ, ավտոճանապարհներ, օդային գծեր, հրթիռների արձակման հրապարակներ, ապաստարաններ, արդյունաբերության պատնեշներ և այլն և այլն։

§ 98. ԳԵՐՇԱՀՈՒՅԹԻ ԿԵՆԴԱՆԻ ԱՂԲՅՈՒՐԸ։ Գաղութային ժողովուրդները, իբրև աշխատուժ, իրենց հերթին գերշահույթի կարևորագույն աղբյուր են։ Կար ժամանակ, երբ այդ աղբյուրն առաջնակարգ նշանակություն ուներ։ Հռոմի ստրկատերերը հաճախ պատերազմներ են մղել իրենց լատիֆունդիաների և քաղաքների կարիքների համար ստրուկներ ձեռք բերելու նպատակով։ Կապիտալիզմի նախնական զարգացման շրջանում՝ սկսած XV դարից, «պայմանագրով» կազմակերպվել են ստրկավաճառություն և աշխատուժի ներմուծում Հնդկաստանից ու Աֆրիկայից։

Հանուն գերշահույթի՝ այդ կենդանի աղբյուրի, Պարսկաստանի ու Բյուզանդիայի տիրակալները զանազան պատրվակներով հայերին ու վրացիներին քշել են իրենց երկրների խորքերը, նրանց հետնորդները միայն մեր օրերում են վերադառնում հայրենիք։ Իսկ ինչքա՞ն այդպիսի տիրակալներ են եղել նրանցից առաջ ու հետո։ Քաղաքական ու տնտեսական նկատառումներով Լեհաստանի և Ռուսաստանի տիրակալները խրախուսել են հայերի գաղթը Լեհաստան և Ռուսաստան, նրանց համար ստեղծելով մի շարք արտոնյալ պայմաններ։

Տեխնիկայի զարգացումը, արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքի մեքենայացումն ու ավտոմատացումը, գաղութային և կախյալ ժողովուրդների ազատության ու անկախության, ազգային-ազատագրական պայքարը մեծապես փոխել են գաղութային տերությունների վերաբերմունքը գաղութների աշխատուժի հարցի նկատմամբ։ Գաղութարար իմպերիալիստներն այժմ այնքան կարիք չունեն աշխատուժի, որքան հումքի և վաճառահանման շուկայի, չնայած այդ ուժը դարձյալ նրանց վիթխարի գերշահույթ է տալիս։

Գաղութային ժողովուրդները իրենց տերերի համար միաժամանակ պոտենցիալ վտանգավոր տարրեր են, որոնք շարունակ սպառնում են նրանց տիրապետությանը։ Այդ իսկ պատճառով, գաղութարարները ֆիզիկական ոչնչացման, արտամղման, ազգալուծման քաղաքականությամբ և այլ եղանակներով փորձում են կա՛մ ազատվել տեղական բնակչությունից, կա՛մ ուժասպառ անել, չեզոքացնել նրան։

Քննության առնենք գաղութային ժողովուրդների աշխատանքի՝ իբրև գերշահույթի աղբյուրի հարցը։

Աշխատուժի մասին խոսելիս մենք նկատի ունենք ժողովրդի ֆիզիկական և հոգևոր ուժերը։ Դրանք օգտագործվում են երկու գլխավոր կանալներով։ Առաջին հերթին շահագործվում է բնիկների այն առավել զգալի մասը, որ կապված է հողի հետ, զբաղված է գաղութների արդյունաբերական ձեռնարկություններում և միայն պետական-իրավական տեսակետից է ենթարկված գաղութային իշխանություններին։ Այնուհետև օգտագործվում են բնիկների այն տարրերը, որոնք լիովին կամ մասամբ կտրված են իրենց մայր հողից ու ժողովրդից և աշխատում կամ ծառայում են մետրոպոլիայում, գիտական կազմակերպություններում, պետական հիմնարկություններում, զինված ուժերում և այլուր։

Միևնույն ազգային օրգանիզմի այս երկու կարգի մարդկանց նկատմամբ գաղութային իշխանությունների վերաբերմունքը, նրանց շահագործման ձևն ու չափը համանման չեն։ Սակայն բոլոր դեպքերում նրանք օգտագործվում են առավելագույն չափով. գաղութային ժողովուրդներն իրենց արյուն-քրտինքով օտարերկրացիների համար ստեղծում են վիթխարի նյութական ու հոգևոր արժեքներ։

Գաղութարարները, ընդամին, իրենց իրավունք են վերապահում տնօրինելու ոչ միայն այդ ուժը, այլև բնիկների կյանքն ու գույքը, օգտվելով նույնիսկ նրանց ժառանգական իրավունքներից։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թալեաթ փաշան ԱՄՆ-ի դեսպանի հետ զրուցելիս խնդիր դրեց, որ նա ներգործի իր երկրի ապահովագրական ընկերությունների վրա, որտեղ շատ հայեր ապահովագրել են իրենց կյանքը։ «Քանի որ այժմ գրեթե բոլոր հայերն արդեն մեռել են, ժառանգներ չեն թողել,— ցինիկորեն ասում էր նա դեսպանին,— ապա հետևաբար նրանց փողը պետք է ստանա թուրքական կառավարությունը, նա պետք է օգտվի այդ

փողերից։ Կարո՞ղ եք դուք ինձ այդ ծառայությունը մատուցել»[1]։

Օսմանյան կառավարիչները կարողացան իրենց փոքր կալվածքը վերածել համաշխարհային տիրապետության։ Արաբական և բազմաթիվ եվրոպական ու ասիական երկրներ դարձան Օսմանյան կայսրության նահանգներ։ Սև ծովը դարձավ Թուրքական ներքին ծով։ Այդպիսի «հրաշքի» պատճառներից մեկն այն էր, որ այդ շրջանի թուրք սուլթանները ասիական, թուրքական կառավարչաձևերն ու նվաճումները կարողանում էին հմտորեն զուգորդել եվրոպական ճկուն մեթոդներին, առանձնապես ենթակա ժողովուրդների աշխատուժի օգտագործման հարցում։ Վերջիններս հանդես էին գալիս իբրև հիմնական նյութական բարիքներ արտադրողներ։

Հույների, հայերի, բուլղարների, չերնոգորցիների, վրացիների, արաբների և մյուս ազգերի ձեռքում էին հիմնականում կենտրոնացված առևտուրն ու արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու շինարարությունը, ճարտարապետությունն ու արվեստը, գիտությունն ու տեխնիկան, ամենաբարձր դիվանագիտական, ֆինանսական, ռազմական, պետական և մյուս պաշտոնները։

Տակավին Ռումի սուլթանության առաջին կառավարիչները հանդես էին բերում հավատի հանդուրժողականություն, որը միաժամանակ հեռահար նշանակետի հռոմեական քաղաքականության շարունակությունն էր։ Դրա հետևանքով հայերի, հույների, պարսիկների, վրացիների մի զգալի մասը յուրացրեց թուրքերենը և ազգալուծվեց։

Թուրքիան հմտորեն օգտագործեց առաջին սուլթանների ժամանակ իր լծի տակ ընկած ժողովուրդների հոգևոր ու ֆիզիկական ուժերը։ Մահմեդ II-ը 1453 թվականին արձակեց «կանոնագրքերի» մի շարք օրենքներ, որոնցով սահմանվեց ոչ մուսուլմանական կրոնական համայնքների՝ հայերի, հույների և հրեաների ստատուսը։ Վերջիններս ոչ միայն եկեղեցական, այլև դատական իշխանություն ունեին։ Հույն և հայ պատրիարքների, ինչպես նաև հրեա ռաբիների իրավասությանն էին ենթակա իրենց համայնքների հավատացյալների դատական գործերը (ընդհուպ մինչև տաժանակիր աքսոր ուղարկելը), լուսավորության և դաստիարակության հարցերը։ Սուլեյման օրենսդիրը կամ, ինչպես նրան անվանում էին եվրոպացիները, Սուլեյման Սքանչելին (1520—1566 թթ.) ընդունեց առևտուրը, արհեստները, արվեստը, գիտությունը, դրականությունը քաջալերող մի շարք օրենքներ։ Սակայն Թուրքիայի հաջորդ կառավարիչները անցան զուտ ասիական բռնապետական մեթոդների, որը արագորեն անդրադարձավ երկրի դրության վրա։ Գտնվեցին հեռատես մարդիկ, որոնք փորձեցին շտկել դրությունը։ Դրանցից են սուլթան Մահմուդը (1808—1839 թթ.), Աբդուլ Մեջիդան (1839—1861 թթ.), Մեծ վեզիր Ռեշիդ փաշան և ուրիշներ։ Նրանք փորձեցին կայսրության բոլոր հպատակների համար, նրանց դավանանքից անկախ, ապահովել կյանքի, պատվի ու գույքի անձեռնմխելիություն։ Սակայն այդ ամենը մնաց իբրև բարի կամք, հաղթեց արևելյան դեսպոտիզմը՝ խարսխված իսլամական մոլեռանդության վրա։

§ 99. «ԻՆՉ ՈՐ ԵՐԿԻՐՆ Է, ԱՅՆ ԷԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Է»։ Եվ դա հասկանալի է. ինչպիսին տվյալ երկրի սոցիալ-տնտեսական պայմաններն են, այնպիսին էլ ղեկավարման ձևն է։ Պարսկաստանում Պերիկլես չէր կարող ծնվել, կա՛մ Հունաստանում Կյուրոս ու Քսերքսես։ Մոնղոլական քոչվոր ցեղերի առաջնորդներ կարող էին դառնալ Չինգիզ-խանն ու նրա ժառանգները, բայց ոչ անգլիացին։ Արևելքի ինքնակալները չեն կարող նստել Սպիտակ տանը։ Իզուր չէ, որ իտալացիներն ասում են՝ «Ինչ որ երկիրն է, այն էլ պետությունն է»։

Տիրապետող թուրք ժողովրդին ամենայն իրավամբ կարելի է վերագրել Ֆ. Էնգելսի այն խոսքերը, թե նա մոլեռանդ նվաճողների ջանքերով այն աստիճանին հասցվեց, որ կենսական հարցերում «միանգամայն պասսիվ էր», «կառավարության կամքից բացի ուրիշ կամք» չգիտեր, չգիտեր «ուրիշ կոչում, բացի զինվորական ծառայությունից և այն խնդիրների կատարման համար տուրք վճարելուց, որ առաջադրել

[1] «Мемуары американского посла Моргентау». Цитировано по книге Е. В. Тарле «Европа в эпоху империализма 1871—1919», издание второе, 1928, стр. 392.

էին այն դիվանագետ» ագրեսորները, որոնք «աշխարհակալություն» էին երազում։

Երբ Թուրք սուլթանները հրաժարվեցին եվրոպական կառավարչաձևերից և բավարարվեցին (այլ կերպ չէր կարող լինել) զուտ թուրքական կառավարչաձևով, այդ ժամանակ երկրի արտադրողական ուժերն արագորեն անկում ապրեցին։ Համաշխարհային տերությունն սկսեց քայքայվել։ «...Թուրքական, ինչպես նաև ամեն մի ուրիշ արևելյան տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ. ձեռք բերած հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների և փաշաների գիշատիչ ձեռքերից. գոյություն չունի բուրժուական շահույթի առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության ապահովությունը»[1]։

Բալկանյան պատերազմի և համաշխարհային առաջին պատերազմի ընթացքում Թուրքիան կորցրեց իր գաղութների մեծամասնությունը և արտաքին ուժի օգնությամբ հաղիվ-հազ փրկվեց անխուսափելի կործանումից։

§ 100. ՃՆՇՎԱԾ ԵՎ ԹՈՒՅԼ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՎՈՐ ՈՒԺԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ։

Գիտության և տեխնիկայի մարդիկ նեոգաղութատիրության ժամանակաշրջանում ստանում են հատուկ նշանակություն ու արժեք։ Եվ դա հասկանալի է։ Հենց այդ մարդիկ են գիտատեխնիկական հեղափոխության «գեներալները»։ Որքան շատ են նրանք, այնքան արագորեն կարելի է այդպիսի հեղաշրջումներ կատարել։ Ահա թե ինչու մենք զարգացած երկրներում նկատում ենք գիտաշխատողների բանակի մշտական աճ։

XX դարի սկզբին երկրագնդի վրա կար ընդամենը 15 հազար գիտաշխատող։ Այժմ արդեն այդ թիվն ավելի քան երկու միլիոն է։ Այս տվյալները բերվում են ամբողջ աշխարհում գիտական հետազոտությունների զարգացման մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի նյութերից։

1961 թվականի սկզբներին մարդկությունը մոտավորապես 2,9 միլիարդ էր։ Նշանակում է միջին հաշվով երկրագնդի յուրաքանչյուր հազար հինգ հարյուր բնակչին ընկնում

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 16, часть 2, стр. 22.

էր մի գիտաշխատող։ Հասկանալի է, որ ինդուստրիալ երկրներում այդ համամասնությունն անհամեմատ բարձր է։

Եվս մի հետաքրքրական երևույթ. եթե մարդկությունը կրկնապատկվում է մոտավորապես ամեն կես դարում, ապա գիտությունը զարգանում է ավելի արագ թափով։ Հետազոտողների քանակի կրկնապատկումը, դատելով ըստ XX դարի առաջին կեսի, տեղի է ունենում միջին հաշվով յուրաքանչյուր ութ ու կես տարին մեկ անգամ։ Եթե այս հարաբերակցությունն անփոփոխ մնա, ապա մինչև 2000 թվականը Երկրի վրա արդեն կլինի... 20—30 միլիոն գիտնական։ Իսկ դրանից հիսուն տարի հետո, երբ մեր մոլորակը կունենա 8—10 միլիարդ մարդ, գիտական աշխատանքով կսկսեն զբաղվել մոտավորապես երկու միլիարդ հետազոտողներ՝ մոլորակի յուրաքանչյուր հինգ բնակչից մեկը։

Ուստի հասկանալի է, թե ինչու ժամանակակից գաղութարարներն այդպիսի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում գիտության ու տեխնիկայի աշխատողների նկատմամբ։

Ճիշտ է, բոլոր ժամանակների գաղութարարները «գնահատել են» աչքի ընկնող մարդկանց ու նրանց աշխատանքները։ Մեր թվականությունից առաջ II դարում Կարթագենում ապրում էր խոշորագույն գիտնական Մագանը։ Պլանտացիոն տնտեսությանը նվիրված նրա աշխատությունը մեծ համբավ էր ստացել։ Երբ Հռոմի զորքերը պաշարեցին Կարթագենը, սենատը հրամայեց պահպանել գիտնականի կյանքն ու նրա աշխատությունը, որը և կատարվեց։ Մագանի գիտական հետազոտությունը նույն սենատի որոշմամբ փյունիկերենից թարգմանվեց լատիներեն ու լայնորեն օգտագործվում էր կայսրության գյուղատնտեսության մեջ։

Հայտնի է նաև, թե այդ գործին ինչպիսի քաղաքական նշանակություն էր տալիս Կեսարը։ Մի հին փաստաթուղթ վկայում է, որ «այն բոլոր մարդկանց, ովքեր Հռոմում զբաղվում էին բժշկությամբ, և ազնիվ արվեստների բոլոր դասատուներին, նա շնորհում էր հռոմեական քաղաքացիություն, որպեսզի նրանք էլ քաղաքում ավելի սիրով բնակություն հաս-

տատեին և ներգրավեին նաև ուրիշներին», իսկ ինքը «գիտնական ատրուկներ էր գնում չլսված գներով»[1]։

Մետրոպոլիայի նվաճող տարրերը, նրա տիրապետող դասակարգերը միշտ սիրով պետության կառավարման ղեկը հանձնել են գաղութային ժողովուրդների միջից դուրս եկածներին միայն այն դեպքում, երբ վստահ են եղել, որ նրանց «հմուտ» ղեկավարությամբ կկարողանան ընդլայնել պետության սահմանները, նվաճել նորանոր երկրներ, գերշահույթի նոր աղբյուրներ։ Ահա թե ինչու այդպիսի պետությունների մետրոպոլիան հաճախ դառնում էր «հայրենիքը», այն տաղանդավոր և փառասեր մարդկանց, որոնք ձգտում են իշխանության՝ միևնույն է, թե որտեղ և ինչպես, միայն թե դա լինի իսկական իշխանություն, իսկական ասպարեզ իրենց տաղանդի ու փառասիրության համար»[2]։

Պոլսի՝ «Արևելքի այդ Հավերժական քաղաքի, այդ Հռոմի» (Կ. Մարքս) կայսրերից (եթե չխոսենք արդեն զորավարների մասին) շատերը դուրս են եկել հույներին ենթակա ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ծոցից։ Թուրքերը շարունակում էին բյուզանդացիների տրադիցիաները։ Օքսֆորդի համալսարանի դասախոս Դ. Ե. Լոփսը գրում է. «Արդարև, հայտնի է, թե 1281 թվականից մինչև 1922 թվականը օսմանյան գահի վրա բազմած 36 փադիշահերեն միայն հինգի մայրը թուրք էր»[3]։

Մետրոպոլիայի իշխող դասակարգերը, պետական կարևոր պաշտոնները այդպիսի մարդկանց տալով, առաջնորդվում են նաև այն նկատառումով, որ նրանք մետրոպոլիայի շահերին ծառայելու իրենց փութաջանությամբ կվարեն փոքր ժողովուրդների (որոնց ծոցից դուրս են եկել նաև իրենք) կեղեքման ու ազգալուծման ավելի կատաղի քաղաքականություն, քան նույնիսկ իշխող ազգի առանձին ներկայացուցիչները։ Ու, այնուամենայնիվ, դրանք պետական ու ռազմական

[1] Гай Светоний, указанный труд, стр. 19—20.

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 16, часть 2, стр. 13 (первое издание).

[3] «Արարատ», 1963 թ., ապրիլի 3։

գործիչներ էին։ Գիտության ու տեխնիկայի մարդիկ այն ժամանակ չէին խաղում այն դերը, որ խաղում են այժմ։

Հեղաշրջում տեղի ունեցավ այն ժամանակ, երբ ռազմի դաշտում զինվորը հայտնվեց տանկի և ինքնաթիռի զրահով պաշտպանված, երբ երևան եկան ինքնակառավարվող արկերն ու ջերմամիջուկային զենքերը, այսինքն՝ երբ տեխնիկան փոխեց պատերազմի թե ձևը և թե բնույթը, իսկ նրա ընթացքը մեծապես պայմանավորվեց գիտական նվաճումներով։ Ահա այդ ժամանակ տեխնիկա ստեղծող մարդիկ նոր գաղութարարների համար դարձան արդեն գաղութային գերշահույթի նոր, մի յուրատեսակ աղբյուր։ Եվ նոր գաղութարարները գաղտնի ու բացահայտ սկսեցին ոչ պակաս համառությամբ ու կատաղությամբ պայքարել այդ աղբյուրի համար։ Այս հարցի մասնագետներից մեկը՝ գերմանացի պաշտոնաթող գեներալ-լեյտենանտ Էրիխ Շնայդերը ենթադրում է, որ այդպիսի պայքարը «որոշակի հանգամանքներում կարող է վճռել աշխարհի բախտը և կանխորոշել ապագա ամեն մի պատերազմի վախճանը... Հետևաբար և ժողովուրդների ճակատագիրը»[1]։

Անգլիացի գիտնականների հաշվումներով ամեն մի կուլտուրական ժողովրդի մեկ միլիոն բնակչին տարեկան ընկնում է միայն մեկ հետազոտող։ Եվ պատահական չէ, որ նույն Շնայդերը այդպիսի «մարդկային նյութը» համարում է «թանկարժեք ու երբեմն անփոխարինելի», քանի որ «մեկ հետազոտող գիտնականը պատերազմ մղելու համար կարող է նույնքան կարևոր նշանակություն ունենալ, որքան ամբողջ բանակներ»[2]։

§ 101. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵՏՐՈՊՈԼԻԱՅԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆ Է։ Գաղութակալները իրենց ենթակա ժողովուրդներին դիտում են իբրև իշխող ազգի քանակական կազմի ավելացման ռեզերվ։ Այդ աղբյուրին նրանք հատուկ նշանակություն են տալիս և ամենասևեռուն ուշադրություն նվիրում։ Այդ մեծ ու բարդ պրոբլեմի լուծմամբ զբաղված են

[1] Итоги второй мировой войны, сборник статей, М., 1957, стр. 333.

[2] Там же, стр. 344.

ոչ միայն հատուկ պետական-վարչական օրգաններ, լուսավորության, գրականության, արվեստի, մամուլի և կինոյի գործիչներ, այլև ամբողջ «գիտական» հիմնարկություններ։

Գաղութատեր պետությունը կարող է նվաճողական արտաքին քաղաքականություն վարել կամ պաշտպանողական հաջող պատերազմ մղել, ինչպես նաև արդեն նվաճածը մարսել, եթե առաջին հերթին բուն մետրոպոլիայում մարդկային մեծ ռեզերվներ կան։ Վերջին հաշվով, ենթակա ժողովուրդները մշտապես եղել են պոտենցյալ վտանգավոր ուժեր, որոնք հարմար րոպեի են սպասում մետրոպոլիային հարվածներ հասցնելու, կապանքներից ազատագրվելու նպատակով։

Գաղութային ժողովուրդներին օգտագործելիս Ալեքսանդր Մակեդոնացին, Հռոմի կայսրերը, Պարսկաստանի փադիշահները, Բյուզանդիայի ու Օսմանյան կայսրության նվաճողները առաջին հերթին հենվել են սեփական ազգային ուժերի վրա։ Ալեքսանդր Մակեդոնացին ռազմի դաշտերում հենվում էր մակեդոնական ֆալանգների, «Հավերժական քաղաքի» կայսրերը՝ հռոմեական լեգեոնների, Բյուզանդիայի տիրակալները՝ հույների, իսկ Օսմանյան կայսրության սուլթանները՝ թուրքական գնդերի վրա։

Սակայն ի՞նչ կարելի է անել, եթե ազգամիջյան կռիվներն ու ռազմի դաշտերը մետրոպոլիաների ժողովուրդների վրա ներգործում են այնպես, ինչպես գարնան արևը ձյան վրա։ Եվ գաղութարարները ավելի ու ավելի մեծ կարիք են զգում հուսալի ու նվիրված ուժերի՝ ոչ միայն ռազմաճակատի, այլև երկրի ներսում տնտեսության ամրապնդման ու զարգացման համար։

Ուրեմն ի՞նչ կարելի է անել։

Ծննդաբերության աճի խրախուսման քաղաքականությունը երկրի ներսում ցանկալի արդյունք չի տալիս։ Մյուս կողմից, կենտրոնախույս ուժերը սպառնում են փշրել ստրկության շղթաները։ Գաղութային ժողովուրդների հարվածների տակ խորտակվեցին անցյալի բոլոր կայսրությունները՝ Ասորեստանի, Մարաստանի, Բաբելոնի կայսրությունները։

Ահա թե ինչու իշխող դասակարգերն սկսեցին մտահոգվել Ենթակա ժողովուրդների հաշվին մետրոպոլիայի բնակչության

քանակական ավելացման, նրանց ռեզերվի վերածելու հարցով։ Այդպես ծնունդ առավ և օրեցօր սկսեց կատարելագործվել ազգալուծման քաղաքականությունը, որին մեծապես օգնում է կոսմոպոլիտիզմի գաղափարը։

Հռոմը գաղութային առաջին իմպերիալիզմի քաղաքականության կրողն էր և նրան էր վիճակված առաջինը մշակելու այդ քաղաքականության հիմունքները։ Ու քանի որ ներկայիս գաղութային իմպերիալիզմը շատ բանով ընդօրինակում է «Հավերժական քաղաքի» գործելակերպը, ապա մենք համառոտակի կխոսենք նախատիպարի մասին։

Հենց որ Հռոմը ստեղծեց աշխարհակալ գաղութային տերություն, պարզվեց, որ Հռոմի բուն լատինական ցեղն սկսել էր անհետանալ, մահանալ, ինչպես ասում է Թ. Մոմզենը, «զարհուրելի արագությամբ»։

Դրա պատճառները շատ էին.

1. Հռոմեացիները զոհվում էին բազմաթիվ պառակտիչ ու առանձնապես նվաճողական պատերազմներում։

2. Հռոմեացիները նահանգներ էին գնում իբրև գաղութային պաշտոնյաներ կամ իբրև զինվորներ, այնտեղ ծառայում էին կայազորներում և մետրոպոլիայից կտրվում էին կամ մշտապես, կա՛մ ժամանակավորապես։

3. Հռոմեացի վաճառականներն ապրում էին գաղութներում։

4. Իշխող դասակարգերի ցոփությունն ու անձարձակությունը մեծ չափեր էին ընդունել։ Դրանք առանձնապես սպառնալի դարձավ Կեսարի օրոք, որը կանանց «ազատություն» տվեց։ Վերջինս հանգեցրեց սանձարձակության, բարքերի փչացման, ամուրիությունի տարածման, ծննդաբերության նվազման։ Այս վերջին հանգամանքը հին աշխարհի գիտնականները նույնիսկ համարել են Հռոմի կործանման գլխավոր «պատճառը»։

Հռոմի կառավարիչները, առանձնապես Կեսարը, սկսեցին հոգատարություն ցուցաբերել «հռոմեական ժողովրդի» նկատմամբ այն հաշվով, որպեսզի ապահովեն նրա տիրապետությունն ուրիշների նկատմամբ։ Նրանք պարգևատրում էին շատ Երեխաներ ունեցող հայրերին, կրճատում

զինվորների կայազորային ծառայության ժամկետը, ոչ ոքի, նույնիսկ սենատական կոչման տեր մարդկանց, թույլ չէին տալիս իրենց սեփական ցանկությամբ հեռանալ Իտալիայի սահմաններից, իսկ ամուսնության տարիքի հասած մարդիկ կարող էին երկրից հեռանալ միմիայն «հանրային գործերով», այն էլ երեք տարուց ոչ ավելի ժամանակով։ Հին աշխարհի պատմիչ Սվետոնիոսը գրում է, որ Կեսարը «կամենալով լրացնել քաղաքների նոսրացած բնակչության պակասը, օրենք արձակեց առ այն, որ քսան տարուց մեծ ու քառասուն տարուց երիտասարդ ոչ մի քաղաքացի, որը զինվորական ծառայության մեջ չի գտնվում, Իտալիայից չպետք է հեռանա երեք տարուց ավելի. սենատորների երեխաներից ոչ ոք երկրից չէր կարող հեռանալ այլ կերպ, քան պաշտոնատար անձի ռազմական կամ քաղաքացիական շքախմբի ուղեկցությամբ»[1]։

Բանը հասավ այնտեղ, որ Օգոստոսը մի շարք օրենքներ արձակեց ընտանիքի մասին, որոնցով բոլոր հռոմեացիներին առաջարկվում էր ամուսնանալ ու երեխաներ ունենալ։ Այդ օրենքները խախտողների իրավունքները սահմանափակվում էին ժառանգություն ու զանազան բարձր պաշտոններ ստանալիս և, ընդհակառակն, ով երեք ու ավելի երեխաներ ուներ, զանազան արտոնություններ ու պետական նպաստ էր ստանում։

Ու, այնուամենայնիվ, դա քիչ էր։ Այդ ժամանակ «Հավերժական քաղաքի» կառավարիչները ձեռնամուխ եղան սգալուծման քաղաքականությանը։

Գայոս Գրակքոսը առաջինը հանդես եկավ իտալիկներին վերաբնակեցնելու միջոցով հռոմեական նահանգները ռոմանացնելու գաղափարով և սկսեց կենսագործել այդ քաղաքականությունը։

Այնուհետև պայմաններ ստեղծվեցին, որպեսզի արհեստավորները, առևտրականներն ու պրոլետար ստրուկները (որոնք աշխարհի բոլոր ծայրերից Հռոմ էին գալիս) վերափոխվեն ու դառնան «հռոմեական ժողովրդի լիիրավ քաղաքացիներ»։ Օրենք հռչակվեց, որով ազատ արձակվածներին տրվում էր Հռոմի ազատ քաղաքացիներին համահավասար իրավունքներ, իսկ ստրուկներին՝ ազատ արձակվածի իրավունքներ։ Այդ օրենքի հեղինակ դարձավ պրետոր և ժողովրդական տրիբուն Պուբլիոս Կլոդիոսը։ Դա նման էր նրան, ինչ ժամանակակից գաղութատերերը «իրավահավասարություն» են անվանում, գաղութային ժողովուրդների նկատմամբ իրենց քաղաքականության մեջ։

Հռոմեացիներն սկսեցին արևելյան ու արևմտյան «բարբարոսներին» մասնակից դարձնել իրենց քաղաքակրթությանը։ Նշանավոր երիտասարդներին հռոմեական հագուստ էին տալիս և նրանց սովորեցնում լատիներեն։ Նրանց համար Օսկվա քաղաքում ստեղծվել էր հատուկ դպրոց։ Այդ ամենը հանգեցրեց այն բանին, որ ժամանակին «հռոմեական ժողովուրդը» դարձավ մի այնպիսի ժողովուրդ, որի նախահայրերը կա՛մ ստրուկներ էին, կա՛մ ուրիշ ժողովուրդների ծոցից դուրս եկած մարդիկ։

Այնուհետև հռոմեացիներն այդ պրոբլեմն սկսեցին լուծել արդեն Միջերկրական ծովի բոլոր երկրների մասշտաբով։ Բայց քանի որ այդ բանը նրանց ուժերից վեր էր, ապա սկսեցին ստեղծել Հռոմեա-հելլենական երկլեզվյան՝ իտալա-հունական պետություն[1]։ Միայն այդ երկու լեզուները պաշտոնական դարձան, իսկ մնացածներն արտամղվեցին։ Արձակվեցին կարգադրություններ, որոնցով այլ ժողովուրդների հեթանոս աստվածները պետք է իրենց պառնասները զիջեին Հռոմի ու Աթենքի աստվածներին։ Ժողովուրդներին կարգադրվում էր նաև հրաժարվել իրենց սովորություններից։ Հռոմեացիների կամայականության դեմ առանձնապես արիաբար հանդես եկան հուդաները։

---

[1] **Гай Светоний**, указанный труд, стр. 11—12.

[1] Դրանում մեծ դեր խաղացին այն հույները, որոնք բարձր պաշտոններ էին գրավում հռոմեական պետության մեջ։ Նրանցից միթիլենացի Թեոփանոսի (որը, պատմիչների վկայությամբ, անսահման ազդեցություն ուներ Պոմպեոսի վրա) և նրա բարեկամների ջանքերով հույները հռոմեացիներին հավասար դիրք գրավեցին։ Հռոմեական պետությունը դարձավ դուալիստական պետություն։ Պատահական չէ, որ հույն ժողովուրդը մինչև օրս էլ խորապես հարգում է իր իսկապես մեծ հայրենասեր զավակի հիշատակը։

Նրանք քաջ հասկանում էին, որ իրենց ազգային տերիտորիայի ու լեզվի կորստից հետո իրենք կանհետանան իբրև ժողովուրդ, եթե չպաշտպանեն իրենց համայնքի կենսաձևը, հավատն ու ազգային տրադիցիաները։ Այս պատճառով հրեաները իրենց ազգային գործունեության նկատմամբ ոտնձգություն ընդունեցին ոչ միայն Հռոմի օրենքներն իրենց համայնքի ու աստծո վերաբերյալ, այլև թլփատումն արգելող օրենքը։

Հռոմեացիներն իրենց նպատակին չհասան միայն այս պատճառով, որ փորձում էին ընդգրկել անընդգրկելին։ Հընդիկները պորտուգալական նվաճողների մասին ասում էին. «բարեբախտություն է, որ պորտուգալացիները վագրերի ու առյուծների նման քիչ են, այլապես կբնաջնջեին մարդկային ամբողջ ցեղը»։

Ուրեմն այդպիսի քաղաքականությունը միայն հռոմեացիներին չէր հատուկ։

Պարսկաստանը Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի քրիստոնյա ժողովուրդներին պարտադրում էր ուրանալ իրենց հավատը, որն այն պայմաններում նշանակում էր պարսկացում։ Բյուզանդացիները նույն քաղաքականությունը վարում էին վարչական միջոցառումների ճանապարհով։ Նրանք ենթակա ժողովուրդներին զրկում էին տեղական ինքնավարությունից, քաջալերում հունական դպրոցների տարածումը, բայց միաժամանակ փակում էին տեղական ազգային դպրոցները։

Թուրքերը ազգալուծման քաղաքականության մեջ շատ նոր բան մտցրին. նրանք քրիստոնյա Սերեխաներին բռնությամբ վերցնում էին հատուկ դպրոցներ, ավարտումից հետո նրանց մտցնում էին ենիչերների հարվածող գնդերի՝ սուլթանների գվարդիայի մեջ, իսկ իրենց հարեմները լցնում ենթակա ժողովուրդների աղջիկներով։ Նրանք թուրքացման քաղաքականություն էին վարում նաև իրենց լեզվի ու իսլամի տարածման միջոցով։

Պարսկական վերջին աշխարհակալ Նադիր շահը անձամբ զբաղվեց իր կայսրության բնակիչների համարմի միասնական հավատ ու լեզու ստեղծելու հարցով։ Նա ուզում էր այդ

հավատն ստեղծել իսլամի, քրիստոնեության և հուդայականության կրոնական դոգմաների հիման վրա։

Այս դեռ բոլորը չէ։

Ազգալուծման քաղաքականությունը, նրա հաջող իրագործման դեպքում, ոչ միայն ամրապնդում է գաղութարարների հիմնական բաղան, նրա ռազմա-տնտեսական պոտենցիալը, այլև միաժամանակ մետրոպոլիային հնարավորություն է տալիս տիրապետելու «մայր-հողին» այն ժողովուրդների, որի ուստերն ու դուստրերը ձուլվում են իշխող ազգին։

Հասկանալի է, թե ինչու, ժամանակակից ֆաշիստական, քաղաքական-տնտեսական տիպի գաղութարարներն այնպիսի կրքոտությամբ կատարելագործում են գաղութային գերշահույթի այդ աղբյուրի օգտագործման ձևերն ու մեթոդները։

§ 102. ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանում առավել զարգացած երկրները գերշահույթ են քամում թույլ զարգացած երկրներից։ «Նպաստավոր պայմաններում գտնվող երկիրը փոխանակման ժամանակ ավելի շատ արդյունք է ստանում քիչ քանակությամբ աշխատանքի դիմաց» (Մարքս)։ Տնտեսապես զարգացած երկիրը կարող է արդյունաբերական տեսակետից թույլ երկրից գերշահույթ քամել զուտ առևտրական փոխանակության և տնտեսական կապերի բազայի վրա, առանց այդ երկրի նկատմամբ քաղաքական և ռազմական տիրապետություն հաստատելու։ Խոսքն այստեղ կապիտալի արտահանության և անհամարժեք առևտրական փոխանակության մասին է։

Գերշահույթի այս երկու աղբյուրները մյուսներից տարբերվում են այն բանով, որ նրանցից կարող են օգտվել ոչ միայն գաղութային տերությունները, այլև նույնիսկ գաղութ չունեցող իմպերիալիստական երկրները։

Նախ քննենք կապիտալի արտահանության հարցը։

Ֆինանսական, պետական կապիտալիզմի դարաշրջանում կապիտալի արտահանությունն ավելի ու ավելի վճռական նշանակություն է ստանում։ Իմպերիալիստական բոլոր տերությունները շահագրգռված են, որ, նախ, լրիվ չափով օգտագործվի գերշահույթի աղբյուրը և, երկրորդ, այդ երկրները միշտ հետամնաց վիճակում մնան։ Ուստի նրանք դիտավոր-

յալ արգելակում են արդյունաբերության այն ճյուղերի զարգացումը, որոնցով կենսականորեն շահագրգռված են կախյալ երկրների ժողովուրդները։

Երրորդ, և սա շատ կարևոր է, իմպերիալիստական տերությունները (եթե նրանք գործում են իրենց գաղութներում) տնտեսական, քաղաքական, պետական-վարչական բոլոր միջոցներով ձգտում են գաղութները շղթայակապել մետրոպոլիաներին, իսկ եթե նրանք գործում են անկախ երկրում կամ իրենց «բարեկամների» գաղութներում, ապա ձգտում են այնտեղ նվաճել ամուր դիրքեր, սկզբում հաստատելով անուղղակի, իսկ այնուհետև նաև ուղղակի քաղաքական տիրապետություն կամ վերահսկողություն այն հաշվով, որ այդ երկիրը ամբողջությամբ դառնա բազա, առավելապես գերշահույթի բազա, ինչպես իրենց գաղութները։

Կապիտալի արտահանությունը դեպի թույլ զարգացած երկրները առանձնապես ուժեղացել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Եթե մինչև առաջին համաշխարհային պատերազմը Ֆրանսիայից դեպի նրա գաղութներն էր հոսում արտահանվող ընդհանուր կապիտալի գրեթե 10 տոկոսը, ապա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գաղութների բաժինը հասավ 55—60 տոկոսի։ Դրան համապատասխան, հասկանալի է, ավելացան նաև ֆրանսիական գաղութարարների շահույթները։ Հյուսիսային Աֆրիկայի ֆրանսիական 63 ընկերությունների զուտ շահույթներն աճեցին 8,5 անգամ, Թունիսում՝ 10, Մարոկկոյում՝ 14, Ալժիրում՝ 14։ Ֆրանսիական ընկերությունների զուտ շահույթները պատերազմից հետո աճեցին 5—7 անգամ և տարեկան կազմեցին 20,6 միլիարդ ֆրանկ[1]։

Ավելի ու ավելի մեծ թափ է ստանում կապիտալի պետական արտահանությունը, որ կատարվում է իբրև փոխառություն և վարկ. մեծ գիշատիչները դրանք տրամադրում են թույլ զարգացած երկրներին իբրև «անշահախնդիր օգնություն»։ Այդ օգնությունը հսկայական եկամուտ է բերում։ 1954

[1] С. Тюльпанов, Колониальная система империализма и ее распад, стр. 37.

թվականին ԱՄՆ-ի մոնոպոլիաների կապիտալ ներդրումները բաշխված էին հետևյալ կերպ։ Կանադայում՝ 5,0 Լատինական Ամերիկայում՝ 6,3 միլիարդ, Եվրոպական երկրների գաղութներում՝ 0,6, թույլ զարգացած այլ երկրներում՝ 2,4 միլիարդ։ Իսկ նրա եկամուտների գումարն ու համապատասխանաբար այդ կապիտալի շահույթի նորման Կանադայում կազմեց 451 միլիոն դոլար (8 տոկոս), Լատինական Ամերիկայում՝ 751 միլիոն (12 տոկոս), Եվրոպական երկրների գաղութներում՝ 187 միլիոն (31 տոկոս), թույլ զարգացած այլ երկրներում՝ 538 դոլար (24 տոկոս)։ Ամերիկյան «Արամկո» ընկերության շահույթի նորման Սաուդյան Արաբիայում հասնում է 400 տոկոսի։ «Ջեներալ մոտորս»-ի արտասահմանյան կապիտալ ներդրումների շահույթի նորման մոտավորապես 3 անգամ բարձր է ներքին կապիտալ ներդրումների շահույթի նորմայից[1]։

«Լատին Ամերիկան թու դեյ» ժուռնալը հաղորդում է, որ այն գումարը, որը Լատինական Ամերիկայի երկրներից մոնոպոլիստական կորպորացիաները և առանձին ընկերություններ տարել են ԱՄՆ, 22 անգամ գերազանցում է այն բոլոր տեսակի «օգնությանը», որ ԱՄՆ-ի կառավարությունը ցույց է տվել այդ երկրներին։ Լատինական Ամերիկային ցույց տրված «օգնությունը», օրինակ, ութ տարում կազմել է 189 միլիոն դոլար։ Իսկ այդտեղից ամերիկյան մոնոպոլիստները քաղել են վիթխարի շահույթ՝ 4.082 միլիոն դոլար։ Դրան հարկավոր է ավելացնել նաև այն 108 միլիոն դոլարը, որ ԱՄՆ-ի կառավարությունն ստացել է իբրև փոխառությունների տոկոս և Լատինական Ամերիկայում գտնվող ամերիկյան մոնոպոլիաների ֆիլիալների չբաշխված շահույթ՝ 1.653 միլիոն դոլար։ Այսպիսով, գերշահույթի այդ աղբյուրը՝ կապիտալի արտահանությունը, ԱՄՆ-ի ֆինանսական օլիգարխիային տվել է 5 միլիարդ 843 միլիոն դոլար։ Ժուռնալը երկրների այդպիսի հարաբերություններն իրավացիորեն անվանում է բացարձակ թալան[2]։

[1] С. Тюльпанов, Колониальная система и ее распад, стр. 60.
[2] Там же, стр. 54—55.

Եռապատերազմյան ժամանակաշրջանում Աֆրիկայում ամերիկյան մասնավոր և պետական կապիտալ ներդրումների ընդհանուր գումարն աճեց 20 անգամ և այժմ կազմում է ավելի քան 2 միլիարդ դոլար։ Այդտեղ գործում են ամերիկյան ավելի քան 200 խոշոր ընկերություններ, որոնց գործունեության ոլորտը տարածվում է ամբողջ «Սև աշխարհամասում»։ Այդ ընկերությունների շահույթը եռապատերազմյան ժամանակամիջոցում կազմում է մեկուկես միլիարդ դոլար։

ՍՄԿՊ ծրագրում նշվում է, որ «ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը, որն ուռճացել է ռազմական շահույթներից և սպառազինությունների մրցավազքից, գրավել է հումքի կարևորագույն աղբյուրները, վաճառահանման շուկաները և կապիտալի ներդրման ոլորտները, ստեղծել է յուրահատուկ գաղութային կայսրություն, դարձել է ամենախոշոր համաշխարհային շահագործողը»[1]։

§ 103. ԱՆՀԱՄԱՐԺԵՔ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ։ Առևտրական անհամարժեք փոխանակությունը իբրև գաղութային գերշահույթի աղբյուր գաղութային և թույլ զարգացած երկրների աշխատավորների շահագործման յուրահատուկ ձևերից մեկն է։ Գաղութարարներն այդ երկրների ժողովուրդներին ապրանք են վաճառում անհամեմատ բարձր գներով, քան նույն ապրանքների համաշխարհային շուկայական գներն են։ Միևնույն ժամանակ տեղական բնակչությունից ապրանքներ են գնում առավել ցածր գնով, քան դրանք իրականում արժեն։ Այսպիսով, նրանք շորթում են թե՛ ծախսելիս և թե՛ գնելիս։

Ֆրանսիական տնտեսագետ Պիեռ Մուսսան հաշվել է, որ ֆրանսիական մոնոպոլիաները միայն աֆրիկյան երկրների հետ անհամարժեք առևտրական փոխանակություն կատարելով տարեկան ստանում են ավելի քան 20 միլիոն դոլարի շահույթ։

Ռ. Պալմ Դատը նշում է, որ Անգլիան իր գաղութներից պարենամթերք ու հումք է ստանում համաշխարհային գներից և նույնիսկ այն գներից ցածր, որ վճարում է Բրիտանական կայսրության մեջ մտնող երկրներից ստացվող համանման ապրանքների համար։ Ընդամենը, նա մեջ է բերում անգլիական «Մանչեստր գարդիան» թերթի խոստովանությունը. «Գաղութային մատակարարների նկատմամբ վերահսկողությունը մեզ տալիս է կրկնակի առավելություն՝ մենք կարող ենք նույն ապրանքները մեր գաղութներից ստանալ ավելի ցածր գներով, քան ուրիշ անդրծովյան երկրներից...

Նիգերիայից և Ցամայկայից բանան ենք բերում ցենտներ՝ 2,42 ֆունտ ստեռլինգով, իսկ Կանարյան կղզիներից՝ 2,65։ Բրիտանական Արևելյան Աֆրիկայից սուրճ էինք ներմուծում ցենտները 13 ֆունտ ստեռլինգով, իսկ Բրազիլիայից՝ 20, 3։ Զտած շաքարը ներմուծում էինք Մավրինիա կղզուց՝ ցենտները 1,92 ֆունտ ստեռլինգով, իսկ Բրիտանական Արևելա-Հնդկաստանից՝ 2,5 Կուբայից՝ 2,48 ֆունտ ստեռլինգով։

Այս օրինակները բավական են ցույց տալու համար որ Անգլիան կարող է առավելությունների հասնել և հասնում է գների ասպարեզում կախյալ մատակարարներից։ Այդ առավելությունը կարող է ընդունել նաև մի ուրիշ ձև։ Անգլիական գաղութներից արտահանվող նույն ապրանքները ուրիշ պետություններում վաճառվում են ավելի բարձր գներով, քան Միացյալ թագավորությունում...»[2]։

Այսպիսով, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի թույլ զարգացած երկրները իմպերիալիստական տերությունների հետ կատարվող անհամարժեք առևտրից տարեկան կորցնում են 14—16 միլիարդ դոլար։ 1958 թվականից մինչև 1961 թվականն ընկած ժամանակաշրջանում ինդուստրիալ կապիտալիստական երկրներից արտահանած ապրանքների գները, ինչպես նշվում է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի թեզիսներում, աճել են 1 տոկոսով, իսկ թույլ երկրների արտահանած ապրանքների գներն իջել են 5 տոկոսով։

---

[1] ՍՄԿՊ ծրագիր, էջ 36, Հայպետհրատ, 1961։

[1] Նկատի է առնված անգլիական ցենտները, որը հավասար է անգլիական 112 ֆունտի կամ 50,8 կիլոգրամի։

[2] Р. Пальм Датт, Кризис Британии и Британской империи, стр. 66—67.

Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը տնտեսական զարգացման տարբեր աստիճանի վրա գտնվող ժողովուրդների անհամարժեք առևտուրը եղել է մի յուրահատուկ ձև, որով կուտակած հարստությունն անցել է ավելի թույլ երկրից առավել ուժեղ երկրին։ Այդ առևտուրը միշտ անհամարժեք է տնտեսապես թույլ զարգացած երկրի համար՝ անկախ այն բանից՝ նա գաղութ է, թե անկախ երկիր։

Դեռ շատ հնում փյունիկեցիները առևտրի ասպարեզում համարվում էին «համաշխարհային կառապաններ»։ Առևտրական փոխանակության միջոցով նրանք կուտակել էին անհամար հարստություններ և ստեղծել հզոր տերություն։ Այնուհետև նրանց տեղը գրավեցին Կարթագենի առևտրական հանրապետության վաճառականները։ Կարթագենն ուներ ռազմա առևտրական հզոր նավատորմ և առևտուր էր անում այն ժամանակվա աշխարհի բոլոր երկրների հետ։ Նա դարձել էր միջնորդական առևտրի կենտրոն։

Այդ գործի ծավալը և մասշտաբը պատկերացնելու համար բավական է ասել, որ Տյուրոսի և Կարթագենի նավերը պատմության մեջ առաջին անգամ ակոսեցին Ատլանտյան օվկիանոսի ջրերը, Անգլիայի ափերը հասան Ջիբրալթարի նեղուցով, որը նրանք անվանում էին «Մելկարտի սյուներ» (Տյուրոսի գերագույն աստծո անվամբ), նավարկեցին Աֆրիկայի արևմտյան ափերի երկայնքով, թափանցեցին Կարմիր ծով։ Աֆրիկան շրջանցելով, նրանք հասան Հնդկական օվկիանոս, բայց տուն վերադարձան Ատլանտյան օվկիանոսով ու «Մելկարտի սյուներով», այդ սխրագործությունը կատարելով Վասկո դե Գամայից ավելի քան երկու հազար տարի առաջ։

Կարթագենացիները վաճառում էին Մերձքալթիկայի սաթ (ցամաքով բերում էին Դանիայի, Բելգիայի ափերը ու այնտեղից բեռնում նավերը), անգլիական անագ, իսպանական արծաթ ու ոսկի, Բալերյան կղզիների գինի, Սիցիլիայի յուղ, Կորսիկայի մեղրամոմ, Էլբա կղզու երկաթ, Լիբանանի ընտիր տեսակի փայտ, Սիրիայի բուրդ, Տյուրոսի պուրպուր, Առաջավոր Ասիայի այլ երկրների թանկարժեք գործվածքներ ու գորգեր, աֆրիկյան փղոսկր, ադամանդ ու հովազի մորթի, արաբական խունկ, եգիպտական վուշեղեն,

Հունաստանի գեղարվեստական արհեստագործության արտադրանքներ և բազմաթիվ այլ ապրանքներ։

Նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում անհամարժեք առևտուրն ավելի ու ավելի մեծ նշանակություն էր ստանում։ Էապես հենց դրանով է բացատրվում այն, որ XVII—XVIII դարերի առևտրական պատերազմները համակել էին ամբողջ աշխարհը։ Ընդսմին հարկավոր է հաշվի առնել, որ գաղութային գերշահույթի այդ աղբյուրն ավելի շատ օգուտ էր տալիս եվրոպական արդյունաբերությանը, քան տեխնիկական առաջադիմության և շոգեմեքենաների հարաճուն կիրառումը։ «Ներկայումս,— գրել է Կ. Մարքսը,— արդյունաբերական գերիշխանությունն իր ետևից բերում է առևտրական գերիշխանություն»։ Բուն մանուֆակտուրայի ժամանակաշրջանում, ընդհակառակը, առևտրական գերիշխանության միջոցով է ապահովվում արդյունաբերական գերիշխանությունը։ Դրանից էլ առաջ էր գալիս այն աչքի ընկնող դերը, որ գաղութային սիստեմը խաղում էր այն ժամանակ։ «Գաղութային սիստեմն այն «անծանոթ աստվածն էր», որը բազմեց եկեղեցու սեղանի վրա Եվրոպայի հին աստվածների կողքին և մի գեղեցիկ օր նրանց բոլորին մի հարվածով դուրս շպրտեց սրբարանից։ Նա հարստացումը մարդկության վերջին ու միակ նպատակը հռչակեց»[1]։

Սկզբում իշխում էին իսպանացիներն ու պորտուգալացիները, բայց արդեն XVII դարում հոլանդացիներն ու անգլիացիները վերջ տվեցին Իսպանիայի ու Պորտուգալիայի գաղութային տիրապետությանը, ընդ որում Հոլանդիան առևտրի ասպարեզում գրավում է առաջատար տեղ։ Այդ հանգամանքը մեծապես նպաստեց այն բանին, որ փոքր Հոլանդիան (որն ունի ընդամենը 33 հազար կմ² տարածություն, այսինքն՝ Սովետական Հայաստանի տերիտորիայից մի փոքր ավելի), ունենալով քիչ բնակչություն, դարձավ իր ժամանակի «մեծ» տերությունը։ Նրա նավատորմում կար մոտավորապես 15 հազար նավ և առաջնակարգ դեր էր խաղում միջազգային առևտրի զարգացման գործում։ Հոլանդացիներն ունեին նա-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 787։

վաշինական հզոր արդյունաբերություն, որն ի վիճակի էր XVI—XVII դարերում միաժամանակ հարյուրավոր նավեր կառուցել։ Փյունիկեցիների նման նրանց սկսեցին համարել Եվրոպայի «ծովային կառապաններ»։

Երկրների անհամաչափ տնտեսական զարգացման օրենքը հանգեցնում է համաշխարհային ասպարեզում գաղութարարների ուժերի նոր տեղաբաշխման՝ հանուն առևտրական, ծովային ու գաղութային գերիշխանության նրանց պայքարում։ XVII դարի 40-ական թվականների բուրժուական ռևոլյուցիան Անգլիային թույլ տվեց հաղթել Հոլանդիային։ XVII դարի երեք ծովային պատերազմներում Հոլանդիան կորցնում է «մեծ» տերության համբավը և դառնում երկրորդական տերություն։ Այնուհետև պայքար է սկսվում Անգլիայի ու Ֆրանսիայի միջև։ Նրանց պատերազմը, որն սկսվել էր XVII դարի վերջերին և շարունակվեց XVIII դարում ընդհուպ մինչև Ֆրանսիական հեղափոխությունը, հանգեցրեց Ֆրանսիայի պարտությանը ծովում և գաղութներում։

Այս փաստերը վկայում են այն մասին, թե նախասկզբնական կուտակման գործում ինչպիսի խոշոր դեր է խաղացել անհամարժեք առևտրական փոխանակությունը։ Ուժեղը հարստացել է թույլ զարգացած ժողովուրդների հաշվին։ Երբ Թուրքերի կամայականությունը վտանգավոր դարձրեց կամ լիովին փակեց Հնդկաստանի հնագույն ցամաքային ու ծովային կապը Եվրոպայի հետ Պարսից ծոցով և Իրանի վրայով՝ Սև ու Միջերկրական ծովերի հետ, կամ Կարմիր ծովով ու Եգիպտոսով՝ Միջերկրական ծովի ավազանի հետ, այդ ժամանակ եվրոպացիները XVII դարի երկրորդ կեսին հայտնագործեցին Աֆրիկան շրջանցող նոր ուղին, որն ավելի էժան ու անվտանգ էր, քան հինը։ Եվ Առևտրական հին ուղին անկում ապրեց։ Դա հանգեցրեց մի շարք քաղաքների նսեմացման, այնպիսի առևտրական կենտրոնների, ինչպիսիք էին Կահիրեն (Եգիպտոս), Դամասկոսը (Սիրիա), Իզմիրը (Թուրքիա), Թավրիզը (Իրան), Քաբուլը (Աֆղանստան) և այլն։ Անհամարժեք առևտրական փոխանակությունն իր առաջնակարգ նշանակությունը պահպանեց ընդհուպ մինչև XVII դարը։

XVIII դարից սկսած այդ աղբյուրի նկատմամբ սկսեցին գերազանցություն ստանալ գաղութային գերշահույթի ուրիշ աղբյուրներ, մասնավորապես գաղութները, վաճառահանման շուկաները, այնուհետև հումքի աղբյուրները։

Գաղութային ժողովուրդները անկախություն նվաճելով և զարգանալով ինքնուրույն, գաղութարարներին զրկում են գերշահույթի շատ աղբյուրներից, նրանց ստիպում բավարարվել այնպիսի աղբյուրներով, ինչպիսիք են անհամարժեք առևտուրը, կապիտալի արտահանությունը, վաճառահանման աղբյուրները։ Դրանով է բացատրվում այն կատաղի պայքարը, որ այժմ մղվում է Ասիայի ու Աֆրիկայի երիտասարդ երկրներ թափանցելու նպատակով, ինչպես նաև այն «անշահախնդիր» օգնությունը և «հոգատարությունը», որ նրանց նկատմամբ ցուցաբերում են արդյունաբերական տեսակետից զարգացած ագրեսիվ շրջանները։

§ 104. ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ։ Հայտնի է, որ հին Հռոմը նոր երկրներ էր նվաճում ո՛չ այնքան իր լեգեոններով, որքան «Հավերժական քաղաքի» կայսրության արբանյակների ռազմական ուժով։ Հռոմը երբևէ մենակ չի հարձակվել իր զոհի վրա։ Սկզբում նա իր զոհին պատերազմի էր հրահրում հարևանների դեմ, բայց հետո ինքը հանդես էր գալիս ճնշված ժողովուրդների «ազատագրման» լոզունգներով։

Հռոմի մեթոդներն անցան հետագա գաղութարարներին։ Բյուզանդիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ցարական Ռուսաստանի և մյուս երկրների կառավարող շրջանները տասնամյակներ շարունակ կրակից շագանակ են հանել ուրիշի ձեռքով։ Գերշահույթի այդ աղբյուրի օգտագործման հռոմեական եղանակն ավելի հմտորեն և դեմագոգիայի մեծ արվեստով օգտագործում են ներկայիս գաղութարարները։

Ազգային-ազատագրական շարժման աճի, ազգային ինքնագիտակցության ու արժանապատվության բարձրացման, ինչպես նաև ռազմական նոր տեխնիկայի երևան գալու կապակցությամբ նեոգաղութարարները վախենում են ճնշված ժողովուրդների երիտասարդներին ռազմական մասնագիտություններ սովորեցնել և զենք տալ նրանց ձեռքը։ Իրենց «եղ-

բայրական» բանակներում նրանք ստեղծում են բանվորական գումարտակներ, որոնց կազմում միմիայն «իրավահավասար», բայց ենթակա ժողովուրդների զինակոչիկներն են, նրանց օգտագործում են ամենածանր, սև աշխատանքներում՝ ստրատեգիական ճանապարհների, ստորերկրյա շինությունների և այլ օբյեկտների կառուցման վրա։ Պատերազմի դեպքում այդ նվազ վարժ կամ բոլորովին անվարժ մարդկանց կրակի բերան են նետում՝ թշնամուն հյուծելու և մետրոպոլիայի զինվորներին պահպանելու համար։ Դրանով նրանք հետապնդում են նաև մի երրորդ նպատակ՝ ոչնչացնելով ճնշված ժողովուրդների մարտունակ երիտասարդներին, դրանով իսկ նրանց զրկել շղթաներից ազատագրվելու հնարավորությունից։

Մենք խոսեցինք գերշահույթի այն վեց աղբյուրների մասին, որոնք ստեղծում են անմիջականորեն իրենք՝ գաղութային կամ թույլ զարգացած ժողովուրդները։ Այդ աղբյուրները, ինչպես տեսնում ենք, գաղութարարներին հնարավորություն են տալիս տեխնիկական, նյութական ու հոգևոր մեծ արժեքներ կուտակել։ Այդպիսով, գաղութային ժողովուրդները այն օբյեկտներն են, որոնց օգնությամբ տիրապետող ազգը ամրապնդվում է որակապես (ռազմա-տնտեսական տեսակետից), քանակապես (ենթակա ժողովուրդների ազգալուծման միջոցով) և դառնում «մեծ» ազգ։

§ 105. ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՂՈՊՈՒՏԸ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆ Է։ Զավթիչը նպատակ է դնում կամ գաղութացնել, կամ անեքսիայի ենթարկել նրա տերիտորիայի մի մասը, կամ էլ հակառակորդին թուլացնել ռազմա-քաղաքական ու տնտեսական տեսակետից։

Հարձակվող կողմը իր զոհի ուժը ոչնչացնում է ոչ միայն ուղղակի ոչնչացման, այլև նրա պետական հարստությունները, նրա արդյունաբերական սարքավորումներն ու արտադրանքը, հումքը և գյուղատնտեսական մթերքները, կուլտուրական ու մյուս արժեքները բացահայտորեն կողոպտելու միջոցով։

Ռազմական հաղթանակը միշտ դառնում է հարստացման և զորեղացման հեքիաթային աղբյուր, երկրի՝ «մեծ» տերություն դառնալու պայման։ Այդպես են իրենց «վեհությունը» ստեղծել Հռոմի ու Ցարգրադի, Ստամբուլի ու Փարիզի, Լոնդոնի ու Պետերբուրգի գաղութարարները։ Տիգրանակերտի մոտ Լուկուլլոսի տարած հաղթանակը նրան հնարավորություն տվեց հայոց թագավորի մայրաքաղաքում զավթել այնքան հարստություն, որը նրան հնարավորություն տվեց առանց պետության օժանդակության իր զինվորներին ապահովել անհրաժեշտ սննդամթերքով, յուրաքանչյուրին 800 դինար դրամական պարգև տալ։ Հնդկաստանում Մեծ Մողոլի ու նրա մեծավորների գանձարաններից Նադիր Շահի զավթած հարստության ընդհանուր արժեքը հասնում էր մոտավորապես 700 միլիոն ռուփիի։ Անգլիական արևելահնդկական ընկերության ցամաքային զորքերի հրամանատար Կլայվը Բենգալիան օկուպացնելիս գրավեց Բենգալիայի պետական գանձարանը, որտեղ 3 միլիոն ֆունտ ստեռլինգի հարստություն կար։ Իր քաջագործությունների մասին նա պատմել է համայնքների պալատի անդամներին. «Հարուստ քաղաքը (խոսքը վերաբերում է Բենգալիայի մայրաքաղաք Մուրշիդաբադին—Հ. Ս.) ոտքերիս տակ էր, հզոր պետությունը՝ իմ իշխանության ներքո. միայն իմ առջև բաց արեցին գանձարանների դռները, որոնք լի էին ձուլածո ոսկով, արծաթով ու ակնեղենով։ Ես վերցրի ընդամենը 200 հազար ֆունտ ստեռլինգ։ Ջենտլմեննե՛ր, ես մինչև այժմ էլ զարմացած եմ իմ իսկ համեստության վրա»։

Պրուսական թագավորությունը XIX դարի առաջին կեսին մի փոքր ու աննշան պետություն էր, բայց Ավստրիայի, Դանիայի ու առանձնապես Ֆրանսիայի նկատմամբ տարած հաղթանակներից հետո դարձավ կենտրոնական Եվրոպայի հզոր «մեծ» տերությունը։ Վիտլերը չբավարարվեց դրանով։ Նա ուզում էր Բեռլինը դարձնել մի նոր «Հավերժական քաղաք»։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Սովետական Միության կրած նյութական կորուստների ընդհանուր գումարը, 1941 թվականի պետական գներով, հավասար է 679.000.000.000 ռուբլու[1]։

[1] Нюрнбергский процесс, сборник документов, издание третье, М., 1955, том I, стр. 63.

Հիտլերը կողոպտում էր Սովետական Միության ոչ միայն ժամանակավորապես օկուպացված շրջանները, այլև Եվրոպայի երկրները։ Եվ եթե հիտլերականները իրենց կողոպտած անհամար հարստությունները չկարողացան մարսել, ապա միայն այն պատճառով, որ նրանք պատերազմում պարտություն կրեցին՝ այս փաստից բխող բոլոր հետևանքներով հանդերձ։

Եթե ռազմական հաղթանակը «վեհության» կարևոր պայմանն է, երկրի «մեծ տերություն» դառնալու կարևոր պայմանը, ապա, ինքնին հասկանալի է, պարտությունը կարող է ճակատագրական լինել պարտվածների համար։ Հայկական պետության համար ճակատագրական եղավ պարտությունը Տիգրանակերտի մոտ։ Եվ ոչ մի ռազմական ճակատամարտ չէր ունեցել այնպիսի ծանր հետևանքներ, ինչպես այն։ Դա կորուստ էր ոչ միայն մայրաքաղաքի, այլև Տիգրանի ուժեղ և անկախ երկիր ստեղծելու բոլոր հույսերի։ Այս բանը հիմնավոր կերպով նշում է Թ. Մոմզենը, այդ ճակատամարտը համարելով «Հռոմի փառավոր ռազմական պատմության ամենափայլուն էջերից մեկը»[1]։ Սակայն «Հավերժական քաղաքի» համար էլ բավական էր մի քանի ճակատամարտ տանուլ տալ բուն մետրոպոլիայում, որպեսզի նրա վաղեմի վեհությունից միայն հիշողություն մնար։

Ռազմական անհաջողությունը կամ մրցակցող կողմերի ուժերի հավասարակշռությունը կարող է հանգեցնել նրանց միջև «հավասարակշռության» քաղաքականության հաստատման։ Կարրա քաղաքի մոտակայքում Կրասոսի նկատմամբ Սուրենի հեծելազորի տարած վճռական հաղթանակը (որտեղ Հռոմի համարյա ամբողջ բանակը կործանվեց ռազմի դաշտում) Հռոմին ստիպեց ընդմիշտ հրաժարվել Արևելքի նվաճման հույսերից և դիմել Արևմուտքի ու Արևելքի միջև քաղաքական հավասարակշռության սիստեմի հաստատման, որը, ինչպես հայտնի է, երկար տևեց։

Վկայակոչելով ջերմամիջուկային երկու մեծ տերություն-

[1] **Т. Моммзен**, История Рима, том 3, стр. 59.

ների ուժերը, համաշխարհային բուրժուական մամուլը աղմուկ է բարձրացնում Արևմուտքի ու Արևելքի միջև «վախի հավասարակշռություն» հաստատվելու մասին։

***

Մենք խոսեցինք գաղութային գերշահույթի աղբյուրների մասին։ Հայ ընթերցողը առանձնապես լավ պետք է իմանա դրանցից յուրաքանչյուրը, քանի որ մեր երկիրն ու ժողովուրդը դարեր շարունակ այդպիսի աղբյուրներ են եղել բոլոր կարգի ու Երանգի գաղութարարների համար՝ ասորական թագավորներից սկսած մինչև ժամանակակից գաղութարարները։ Հայաստանն ու հայերը այն փեթակներն էին, որոնք գիշեր-ցերեկ մեղր էին արտադրում ում համար ասես, բայց ոչ իրենց։

Վեցերորդ գլուխ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

(Գաղութային ստրկացման, կեղեքման, շահագործման ու ապգալուծման մեթոդների մասին)

...Ամենքին հայտնի է, որ գաղութները նվաճված են հրով ու սրով, որ գաղութներում գազանարար են վարվում բնակչության հետ, որ նրան շահագործում են հազարավոր եղանակներով (կապիտալ արտահանելու, կոնցեսիաների և այլնի, ապրանք վաճառելիս խաբելու, «տիրապետող» ազգի իշխանություններին ենթարկելու և այլ ու այլ միջոցներով)

Վ. Ի. Լենին

§ 106. ՀԱՐՑԻ ԴՐՎԱԾՔԸ։ Դարեր շարունակ գաղութատիրությունը բազմաթիվ եղանակներ է մշակել, գաղութային գերշահույթի աղբյուրներին տիրելու համար։ Յուրացման այդ մեթոդներն այնքան շատ են, որ յուրաքանչյուր աղբյուրի համար կարելի է հաշվել գաղութային գերշահույթ քամելու տասնյակ, հարյուրավոր մեթոդներ։ Վ. Ի. Լենինը միանգամայն իրավացի է, երբ գրում է, որ գաղութների ժողովուրդներին «շահագործում են հազարավոր եղանակներով»[1]։

Յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է գաղութային ժողովուրդների կեղեքման ու շահագործման իր եղանակները։ Սակայն գաղութային թալանի նոր ձևերի երևան գալով հները ամենևին չեն չքանում։ Դրանք կա՛մ ձևափոխվում են, կա՛մ ձուլվում նորին, հարմարվելով ժամանակի «պահանջներին»։

Գաղութների աշխատավոր զանգվածների շահագործման ու կեղեքման այդ բոլոր հին ու նոր եղանակներն իրենց բնույթով, նպատակներով ու խնդիրներով բաժանվում են Երեք խմբի՝ 1) ռազմական, 2) պետական-վարչական և 3) քաղաքական-գաղափարական։

Գերշահույթի գաղութային աղբյուրներին ծանոթանալիս մենք անդրադարձանք նաև այդ աղբյուրների յուրացման իմպերիալիստական մեթոդներին (օրինակ, կապիտալի արտահանման, անհամարժեք առևտրական փոխանակության մասին պարագրաֆներում)։ Այս գլխում մենք ընթերցողներին կծանոթացնենք դրանցից միայն առավել կարևորներին։ Այդ հարցերը կլուսաբանվեն գլխավորապես Ալժիրին վերաբերող հատվածներում։

§ 107. ԱԼԺԻՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ։ Ալժիրի օրինակի ընտրությունը պատահական չէ։ Ալժիրի պատմությունն ուշագրավ է շատ տեսակետներից։ Այդ երկրի ժողովրդի ազատագրական պայքարի ուսումնասիրությունը կարևոր ու հետաքրքրական է նաև այն տեսակետից, որ նրա օրինակով կարելի է հետևել գաղութային ժողովուրդների ճակատագրին, ակնբախ կերպով տեսնել, թե գաղութարարներն ինչպիսի նպատակներ են հետապնդում գաղութներում և ինչպիսի տակտիկական եղանակներով են դրանք իրագործում։

Ալժիրի պրոբլեմն այժմ առանձին սրություն ու հրատապություն է ստանում իմպերիալիզմի համաշխարհային գաղութային ամբողջ սիստեմի կործանման ու գաղութատիրության՝ նեոգաղութատիրության վերաճման լույսի տակ։ Ալժիրի արյունահեղ իրադարձությունները մեզ հնարավորություն տվեցին առավել որոշակիորեն նկատելու, թե ինչու մի կողմից՝ ժամանակակից գաղութատերերն ստիպված են քաղա-

[1] Վ. Ի. Լենին, *Սոցիալիզմը և պատերազմը*, Երկեր, հ. 21, էջ 384։

քական անկախություն տալ իրենց շատ գաղութների, այդ թվում նաև մի այնպիսի երկրի, ինչպիսին Գաբոնն է, որի բնակչությունը մեր Երևանի բնակչությունից ավելի քիչ է։ Մյուս կողմից՝ «կեղտոտ պատերազմ» մղել մի այլ բազմամիլիոն ժողովրդի դեմ։

Ավելացնենք նույնպես հետևյալը։

Ալժիրի նկատմամբ նեոգաղութատիրության ֆրանսիական քաղաքականությունն առավել վտանգավոր է փոքր ժողովուրդների համար։ Այդ քաղաքականությունը եղավ տրամաբանական շարունակությունն ու ամփոփումը գաղութային այն հին քաղաքականության, որով ճգնում էին ինչ գնով էլ լինի Ալժիրը դարձնել ֆրանսիական Ալժիր, սկսած իշխան Պոլինյակի թագավորական կառավարությունից մինչև V հանրապետության դը Գոլ-Դեբրիի կառավարությունը։ Ուստի ալժիրցիների ազգալուծման ֆրանսիական քաղաքականության կրախը պետք է դիտել իբրև ժամանակակից գաղութային աշխարհի ամենակարևոր ու նշանակալից իրադարձությունը, որն արժանի է հատուկ ուշադրության։ Պակաս նշանակալից չեն գաղութային կեղեքման ինչպես հին, այնպես էլ նոր ձևերի դեմ Ալժիրի ժողովրդի մղած պայքարի եղանակները։

Այն ամենը, որ տեղի ունեցավ Ալժիրում, ռենտգենյան լուսանկարն է այն հիվանդությունների ու տառապանքների, որ դեռ կրում են նեոգաղութատիրության իշխանության տակ գտնվող բազմաթիվ ժողովուրդներ։ Արդյոք այդ չէ՞ պատճառը, որ այժմ, երբ գաղութային հին աշխարհը փուլ է գալիս, գաղութային ժողովուրդների ճակատագիրը հուզում է աշխարհի բոլոր ազատասեր մարդկանց։

I. ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

§ 108. ԵՐԿՈՒ ՏԻՊԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ։ Ռազմական ուժը միշտ հանդես է եկել ու հանդես է գալիս իբրև մի այնպիսի միջոց, որով իմպերիալիզմը ոչ միայն գրավում, այլև ամրապնդում է իր տիրապետությունը։

Պատերազմը մի միջոց է, որ գաղութատիրությունը հնարել է ուրիշ ժողովուրդների վրա բռնանալու համար։ Ինչ վերաբերում է այն պատերազմներին, որ ժողովուրդները մղել են ու մղում են իրենց ազատագրության ու ազատության համար, ապա դրանք պատերազմներ չեն բառիս ուղղակի իմաստով, այլ հակապատերազմներ են, որոնք սովորաբար իրավացիորեն անվանում են արդարացի պատերազմներ։ Արդարացի պատերազմի նշանաբանն է՝ պատերազմ հանուն կյանքի։ Գաղութային պատերազմի նշանաբանն է՝ պատերազմ հանուն ստրկացման ու շահույթի։

§ 109. ՀԻՆ ՀՌՈՄԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Զարմանալի չէ, որ գաղութատեր պետություններն իրենց ուշադրությունը հիմնականում նվիրում են զինված ուժերի ամրապնդմանը, ռազմական արվեստի կատարելագործմանը։ Մարդ հաճախ դժվարանում է որոշել Հռոմեական կայսրության շրջանի և ժամանակակից գաղութատիրության ռազմական արվեստների սահմանները։ Ի՞նչ բաներ են, օրինակ, «փոքր պատերազմների» քաղաքականությունը, «բաժանիր և տիրիր», «հինգերորդ զորասյան» քաղաքականությունը, անսանձ դեմագոգիայի և մարիոնետային երկրների ստեղծման քաղաքականությունը և այլն, և այլն։

Դրանք համաշխարհային հռոմեական կայսրության ու նեոգաղութատիրության քաղաքականության հարցե՞ր են, թե՞ ռազմական արվեստի բաղկացուցիչ տարրեր։ Ավելի շուտ՝ վերջինը։ Հռոմը, ինչպես հայտնի է, միայն խոսքով, կարճ ժամանակով, տակտիկական նկատառումներով ընդունում էր հավասարակշռության քաղաքականությունը։ Նա խոսում էր բոլոր ժողովուրդների անունից և գործում հանուն «նրանց շահերի»։

Ֆեոդալիզմի և կապիտալիզմի նախասկզբնական զարգացման շրջանում, երբ աշխարհում կային «ազատ», չգրավված հողեր, հավասարակշռության քաղաքականությունն ըստացավ այլ բովանդակություն՝ ավելի կայուն դարձավ։ Գաղութարարները խոսում էին միայն «իրենց» ժողովրդի և «իրենց» գաղութների ժողովուրդների անունից։ XX դարի գաղութատիրությունն առաջնորդվում է Հռոմի ստրատեգիայով։

Պատահական չէ, որ համաշխարհային պատերազմներ են տեղի ունեցել իմպերիալիզմի շրջանում, իսկ ֆեոդալիզմի ու վաղ կապիտալիզմի շրջանում՝ տեղի չեն ունեցել։

§ 110. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳԵՐՇԱՀՈՒՅԹԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԱՄ ԶԻՆՎԱԾ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ։ Գաղութներ, տերիտորիաներ, գերշահույթի նոր աղբյուրներ նվաճում են պատերազմի, զենքի միջոցով։ Եվ դա հասկանալի է։ Պատմությանը ծանոթ չէ գեթ մի դեպք, երբ որևէ ժողովուրդ կամավոր, առանց բռնության, իր վիզը դնի օտար կեղեքիչների լծի տակ։

Սակայն երբ լեռը չի գնում Մահմեդի մոտ, ապա Մահմեդն է գնում լեռան մոտ։ Գաղութարարները գնում են թույլ ու փոքր ժողովուրդների մոտ սվիններով ու հրանոթներով։ Բայց իրենց այդ գործողություններում նրանք, իբրև կանոն, դիմակավորվում են, գործում այլևայլ պատրվակներով։

Գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նշել են գաղութարարները ամեն մի գաղութային թալան, ամեն մի բռնություն, ամեն մի ճնշում «կատարում են ոչ այլ կերպ, քան «լուսավորության», «առաջադիմության», «ազատագրության» պիտակով, որը նրանք քողարկում են «օրինականության պաշտպանության, կարգուկանոնի պաշտպանության... պայմանագրերի սրբության»[1] ֆրազներով։

Այդպիսի լոզունգներով Ալժիր մտան նաև ֆրանսիացի գաղութարարները։ «Ես Ալժիրը գրավեցի միայն Ֆրանսիայի արժանապատվության նկատառումներով»,— հայտարարել է Կարլոս X-ը։ Բուրժուական պատմաբանները պնդում էին, որ մինչև ֆրանսիացիների գալը Ալժիրը իբր թե չի ունեցել պետականություն[1], որ ֆրանսիացիները Ալժիր են մտել իբրև «քաղաքակրթություն» տարածողներ, ալժիրցիներին պարգևել են «ազատություն», «ազգային վերածնության ու զարգացման» հնարավորություն։

Դա մի սովորական կեղծիք էր, որի նպատակն էր մոլորության մեջ գցել բնիկներին ու համաշխարհային հասարակական կարծիքը։

Իսկ ի՞նչ դրություն էր տիրում իրականում։

Իրականում պատկերը հետևյալն էր. Ֆրանսիան ձգտում էր գրավել Ալժիրը և այդ նպատակով պատրվակ էր որոնում։ Պատրվակը գտնվեց՝ մի օր Ալժիրի դեյ Հուսեինը ճանճսպանիչով հարվածեց ֆրանսիական դեսպան Դեվալյեի երեսին[2]։ Ֆրանսիայում ոռնոց բարձրացավ։ Պահանջում էին հանդուգն ալժիրցու խելքը գլուխը բերել, պաշտպանել Ֆրանսիայի «արժանապատվությունը»։

Ռազմական մեքենան սկսեց գործել՝ ֆրանսիական նավատորմը շրջափակեց Ալժիրի ափերը, բանակը մարտական պատրաստության մեջ դրվեց։ Սկսվեցին բանակցությունները, բայց Ֆրանսիան դրանք այնպես էր վարում, որ ձգձգեր այնքան ժամանակ, մինչև որ ներխուժման համար բանակը լիովին պատրաստ լիներ։ Երբ վերջին նախապատրաստու-

---

[1] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 16, ч. 2, 1936, стр. 15.

[1] Ալժիրը մինչ անկախությունը կորցնելը կենտրոնացված պետություն չէր, ուներ չորս նահանգ, որոնցից յուրաքանչյուրը մի համայնք էր՝ ղադիի գլխավորությամբ, որին նշանակում էր դեյը։ Պետության գլուխ կանգնած ընտրովի դեյը երկիրը կառավարում էր մինիստրների և մյուս պաշտոնյաների միջոցով։ Ալժիրը պայմանագրեր ուներ աշխարհի շատ երկրների

հետ, օրինակ, 1792 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգները նրա հետ ստորագրել էին խաղաղության ու բարեկամության պայմանագիր, որի շնորհիվ նրանց միջև հաստատվել էին դիպլոմատիկական ու առևտրական հարաբերություններ։ Նա այդպիսի հարաբերությունների մեջ էր նաև Անգլիայի, Հոլանդիայի հետ։ Ֆրանսիայի պաշտոնական հարաբերությունները Ալժիրի հետ սկիզբ են առնում XVI դարից։ Այդ երկրների միջև կնքվել են նույնիսկ ռազմական բնույթի պայմանագրեր, որոնք ուղղված են եղել ջենովացիների (1525 թ.) և Կարլոս V-ի (1536 թ.) դեմ։ 1661 թ. Ֆրանսիան և Ալժիրը դեսպաններ են փոխանակել։

[2] 1794 թ. սկսած դեյը Ֆրանսիային օժանդակում էր հաց գնելու գործում և նույնիսկ անտոկոս վարկ էր տալիս նրան։ Բայց անցնում էին տարիներ, իսկ Ալժիրը իր գումարները ետ չէր ստանում։ 1827 թ. ապրիլի 29-ին Հուսեինը հրավիրեց ֆրանսիական դեսպանին և խնդրեց իրեն հաղորդել, թե ինչու կառավարությունը չի վճարում պարտքերը և ինչու նույնիսկ չի պատասխանում իր հարցերին։ Դեսպանը պատասխանեց հանդգնորեն. «Իմ կառավարությունը ձեզ չի պատասխանի»։ Այդ ժամանակ դեյն ասաց, որ հանդիպումն ավարտված է, նա կարող է գնալ։ Եվ երբ վերջինս հրաժարվեց դուրս գալ, դեյը կորցրեց իրեն ու ճանճսպանիչով հարվածեց նրա երեսին։

թյուններն ավարտվեցին, բանակցությունները, ինչպես նախօրոք ծրագրել էին, ընդհատվեցին, և որոտացին հրանոթները։

Եվրոպայի ամենահզոր ու առաջնակարգ բանակը, որը բաղկացած էր մի հսկայական նավատորմիղից՝ 100 ռազմանավից ու 357 փոխադրանավից, 35.000 մարդով և 4.000 ձիով, 1830 թվականի հունիսի 14-ին հասավ Ալժիրի ափերը, օկուպացրեց Սիդի-Ֆարուխը, իսկ հաջորդ օրը՝ Ալժիրը։

Պարզ է, որ Ֆրանսիան Ալժիրը գրավեց բոլորովին էլ ոչ «արժանապատվության նկատառումներով», ոչ էլ հանուն Ալժիրի «ազատագրության» ու «առաջադիմության»։ «Ճանճասպանիչի հարվածի պատճառով,— ասում էր այն ժամանակվա նշանավոր դիվանագետ Մետերնիխը,— 100 միլիոն սեղանի վրա չեն դնում և ոչ էլ 40 հազար մարդու կյանք վտանգի ենթարկում»։ Ֆրանսիան պարզապես ուզում էր նոր գաղութներ Աֆրիկայի հյուսիսում։ Ռազմական մինիստր գեներալ Ժերարը ֆրանսիական զորքերի ներխուժման հենց երկրորդ օրը հայտարարեց, որ «այս նվաճումը համապատասխանում է խիստ հրամայական անհրաժեշտությանը, մեր ավելցուկ բնակչության համար տեղ կբացվի և մեր մանուֆակտուրաների համար կապահովվի փոխանակությունը պակասող առարկաների հետ»[1]։ Պրեմիեր-մինիստր Պոլինյակը ներազում էր «Ֆրանսիայի ազդեցությունը տարածել Միջերկրական ծովի աֆրիկյան ափերից մինչև Ասիայի սիրտը»։

Հասկանալի է, որ Ֆրանսիայի ստրատեգիական նպատակն էր՝ նվաճել նոր «տնտեսական տերիտորիա» և դրա իրագործման համար էլ ընտրեց ուղղակի ռազմական ճանապարհը, քանի որ Ալժիրը գրավելու ուրիշ հնարավորություն չկար։ Այդպիսի դեպքերում ձևական առիթ միշտ կարելի է գտնել կամ ստեղծել։ Եվ ստեղծեց։

§ 111. Ի՞ՆՉՆ Է ՀԵՏԵՎՈՒՄ ՄԵԾ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ։ Ստրատեգիական նպատակներն իրագործելիս ռազմադաշտում «մեծ գումարտակների» գործողությունները վճռական, բայց սոսկ առաջին մեթոդն է, որով զավթիչների համար մաքրվում է գաղութային աշխարհի ճանապարհը։ Տակտիկական մյուս եղանակները նախատեսված են նվաճումներն ամրապնդելու և հետևյալ խնդիրների իրագործման համար.

1. Պատժիչ ջոկատներով ահաբեկել բնիկներին, որպեսզի նրանք հնազանդվեն և չդիմադրեն գաղութային իշխանություններին։

2. Պառակտել ժողովրդի ուժերը, կիրառելով «Բաժանիր և իշխիր» քաղաքականությունը։

3. Կողոպտելով Երկիրը, նրան զրկել ռազմա-տնտեսական պոտենցիալից։

4. Գաղութացնել նոր «տնտեսական տերիտորիան», որպեսզի ամրապնդվի ռազմական հաղթանակը և ապահով վիճակում մնան գերշահույթի աղբյուրները։

5. Նույն նպատակով բոլոր միջոցներով սահմանափակել բնիկների բիոլոգիական պոտենցիալները։

6. Գաղութացված ժողովրդի ինտելիգենցիայի անդամահատումը։

7. Ստեղծել «հինգերորդ զորասյուն» և այլն, և այլն։

Համառոտակի անդրադառնանք այս հարցերին։

§ 112. «ԱՐՅԱՆ ՈՒ ԵՐԿԱԹԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ։ Կոպիտ բռնության, Բիսմարկի խոսքերով ասած, «արյան ու երկաթի» քաղաքականությունը գաղութարարները ժողովուրդների, պետությունների հետ ունեցած իրենց հարաբերությունների հիմքն են դարձնում։ Սվիններով ոչնչացնում են նրանց անկախությունը, սվինների վրա են խարսխվում գաղութարարների «ազատ ու դեմոկրատական» օրենքները, սվիններով են տարածում «քաղաքակրթություն», «կուլտուրա», «կարգուկանոն»։

Սվինը, այսպիսով, հանդես է գալիս ոչ միայն ռազմի դաշտում իբրև «մեծ գումարտակի» ատրիբուտ, այլև խաղաղ ժամանակ։ Անցած պատերազմի տարիներին հիտլերականները վերականգնեցին պատանդներ վերցնելու և նրանց գնդա-

[1] Ալժիրում ֆրանսիական բանակի գործողությունների վերաբերյալ ցիտատներն այստեղ ու ստորև բերված են К. и Р. Жансон «Алжир вне закона» գրքից։

կահարելու, ինչպես նաև քաղաքացիներին գնդակահարելու միջնադարյան մեթոդը։ Այն բանի համար, որ չեխոսլովակյան հայրենասերները Լիդիցե գյուղում 1942 թ. հունիսի 10-ին սպանել էին մի օկուպանտի, էսէսական պատժիչ ջոկատները հիմնահատակ այրեցին Լիդիցեն և գնդակահարեցին նրա բոլոր բնակիչներին։ Իսկ որքա՞ն լիդիցեներ եղան նրանց օկուպացրած երկրների տերիտորիաներում։

Այդպես էին գործում նաև ֆրանսիական զավթիչները Ալժիրը նվաճելիս։ Ահա ֆրանսիական էքսպեդիցիոն բանակի սպաների ու զինվորների վկայություններից մի քանի հատվածներ. «Կոտորածը զարհուրելի էր։ Տները, օտարերկրացիների վրանները, որ գտնվում էին հրապարակներում, փողոցները, բակերը լեփ-լեցուն էին դիակներով։ Հանգիստ իրադրության մեջ կատարված հաշվումները հիմնված էին գրավումից հետո ստացված հավաստի տեղեկությունների վրա։ Սպանվել էին 2.300 կին ու երեխա, իսկ վիրավորների թիվը, հասկանալի է, աննշան էր...

Զինվորները կատաղել էին, քանի որ նրանց վրա կրակում էին ձեղուններից, նկուղներից ու պատշգամբներից, և, ներխուժելով տները, անգթորեն մորթում էին բոլորին»։

Երկրի նվաճված շրջանները հանձնում էին արաբական բյուրոյի սպաների տնօրինությանը, որոնք անսահման իշխանություն ունեին։ «Ես արքա եմ,— ասում էր, օրինակ, նրանցից մեկը։— Ես ունեմ անսահման իշխանություն, մեծ ցեղերը, իմ իշխանությունից բացի, ուրիշ ոչ մի իշխանություն չեն ընդունում»։

Կամ ահա դիպուկ մի օրինակ, թե ինչպես էին կառավարվում նոր հողերը.

«Թող իմանան, որ Ֆրանսիային պատկանող երկրում ապրում է 2500 հազար մարդ, որոնց դատում են առանց դատարանի, ղեկավարում են դատ ու դատաստան կատարող այնպիսի լեյտենանտներ ու կապիտաններ, որոնք անծանոթ են օրենքին. ղեկավարում են հողագործությունը, ոչ մի բան չհասկանալով նրանից, կառավարում են ֆինանսները առանց բարոյական կամ նյութական պատասխանատվության այնպիսի մարդիկ, որոնց վերցրել են գնդերից և վարչական աշ-

խատանքի նշանակել՝ այն հաշվով, որ նրանց գնդեր վերադարձվեն որոշակի փորձ կուտակելուց անմիջապես հետո»։

§ 113. «ԲԱԺԱՆԻՐ ԵՎ ՏԻՐԻՐ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։

Գաղութարարները ի վիճակի չեն կառավարել սոսկ ռազմական ուժով, ահաբեկման մեթոդներով։ Ուստի ժողովրդի միասնությունը, նրա մարտական ուժերը պառակտելու և այդպիսով հոգեպես ու ֆիզիկապես զինաթափելու նպատակով դիմում են նաև ուրիշ մեթոդների։ Այդ նպատակներն էլ հետապնդում է այսպես կոչված «բաժանիր և տիրիր» քաղաքականությունը։

Այդ քաղաքականությունը Հռոմի սենատի պետական ղեկավար սկզբունքն էր։ Հայտնի չէ, թե ով է եղել նրա հեղինակը։ 1842 թ. հունվարի 12-ի նամակում Հ. Հայնեն Dlvide et impera բանաձևի հեղինակ է անվանում Մակեդոնիայի Ֆիլիպ թագավորին (մեր թվականությունից առաջ 359—336 թթ.)։ Հայնեն չի նշում, թե ինչ աղբյուրի վրա է հիմնվում։ Գուցե և Ֆիլիպն է իսկապես այդպես հատակ ձևակերպել հին աշխարհի ագրեսիվ պետությունների պետական քաղաքականության սկզբունքը։ Բայց որոշակիորեն հայտնի է, որ այդ քաղաքականությունը Ֆիլիպից առաջ է ծնունդ առել։

Անվիճելի է մի բան՝ այդ քաղաքականությունը կատարելագործել է երիտասարդ, աճող Հռոմը, որը մեծապետական ձգտումներ ուներ։ Այդ քաղաքականությունը հետագայում դարձավ բոլոր իմպերիալիստական տերությունների հիմնական, ղեկավար սկզբունքը և այդպիսին մնում է մինչև օրս։

Հռոմն առաջին պտուղները վայելեց պունիկյան երեք պատերազմների ժամանակ։ Նա բերբերական թագավորներին օգտագործում էր Կարթագենի դեմ։ Միայն Սիֆաքսի և Մասիպիսայի օգնությամբ Սցիպիոն Աֆրիկացին, իսկ այնուհետև Սցիպիոն Էմիլիանը կարողացան խորտակել Կարթագենի հզորությունը։

Տեսնելով, որ իր հիմնական ախոյան Կարթագենի կործանումից հետո բարձրանում է նումիդական թագավորությունը, որը ձգտում է Բերբերիան դարձնել միասնական, կենտրոնացված պետություն, Հռոմը Մասիպիսայի մահից

հետո կազմակերպում է գահաժառանգների մրցակցություն։ Վախճանված արքայի թոռը՝ Յուգուրտան ստիպված էր բազմամյա ծանր կռիվ մղել Հռոմի կաշառած իր հորեղբոր որդիների՝ Գիեմպսալի և Ադիրբալի, իսկ այնուհետև նաև բուն Հռոմի դեմ։ Բազմաթիվ փայլուն հաղթանակներ տարավ Յուգուրտան, որը տաղանդավոր զորավար էր, առաջնակարգ դիվանագետ և հիանալի գիտեր հզոր կայսրության բոլոր ուժեղ ու թույլ կողմերը, բայց այնուամենայնիվ վերջին խոսքը մնաց Հռոմին, և դարձյալ «բաժանիր և տիրիր» նույն նենգ քաղաքականության շնորհիվ՝ Յուգուրտայի աները, մավրիտանական Բոկխ թագավորն անցավ թշնամու կողմը։ Մեր թվականությունից առաջ 105 թվականին Յուգուրտան հռոմեացիների ձեռքը գերի ընկավ։

Այս դեպքից համարյա հազար յոթ հարյուր տարի անց նույնպիսի ողբերգություն ապրեց այդ երկրի մի ուրիշ հերոս՝ Աբդ-էլ-Կադարը, որը նույնպես դարձավ «բաժանիր և տիրիր» քաղաքականության զոհը, մի քաղաքականություն, որն այս անգամ իրագործում էին ոչ թե Հռոմի, այլ Փարիզի գաղութարարները։ Թշնամու ոտնձգությունները թույլ չէին տալիս երկրի բոլոր ցեղերը միավորել սրբազան պատերազմի համար, իսկ երբ նրա դեմ հանդես եկավ Մարոկկոյի իշխանը, ապա վերջինս, Յուգուրտայի նման, 1847 թ. դեկտեմբերի 23-ին գերի ընկավ թշնամուն։

Այդ քաղաքականությամբ էր ղեկավարվում նաև ցարական կառավարությունը։ Նա հայաբնակ տերիտորիաները մտցնում էր Ելիզավետպոլի ու Թբիլիսիի նահանգների մեջ, իսկ Երևանի նահանգի մեջ մտցնում ադրբեջանական բնակչություն ունեցող հողերը, Անդրկովկասի ժողովուրդների մեջ մերմանելով գժտություն, անվստահություն ու թշնամանք. այնուհետև նրանց հանում էր միմյանց դեմ։ Այդ քաղաքականության նպատակը միայն ռևոլյուցիոն շարժման դեմ պայքարը չէր, այն ուներ նաև շատ հեռու գնացող հաշիվներ։ 1917—1920 թվականներին, երբ Անդրկովկասում իշխանությունն անցավ բուրժուական նացիոնալիստների ձեռքը, տերիտորիալ վեճերի պատճառով ծայր առան եղբայրասպան պատերազմներ։ Այդ հանգամանքը ժողովուրդներին թույլ չէր

տալիս միավորվել և միասնական ճակատով հանդես գալ իրենց ընդհանուր թշնամու և ստրկացնողների դեմ։

Նույն քաղաքականությունն էր վարում նաև Ֆրանսիան իր գաղութներում։ «Կեղտոտ պատերազմի» ժամանակ ու նրանից հետո Ֆրանսիան ձգտում էր Ալժիրի ու նրա հարևան երկրների միջև պատերազմ հրահրել Սահարայի հողերի համար։ Սակայն Ալժիրի, Թունիսի, Մարոկկոյի ղեկավարները հեռատես գտնվեցին, տուրք չտվին ֆրանսիական գաղութարարների պրովակացիոն քաղաքականությանը։

Այսպիսով, «բաժանիր և տիրիր» քաղաքականությունն այլ բան չէ, քան ժողովուրդների դիտավորյալ, դեմագոգիկ հրահրում միմյանց դեմ։ Ինչպես առաջ, այնպես էլ այժմ այդ քաղաքականությունը մի միջոց է, որով գաղութարարները հակառակորդին ձգտում են ուժասպառ անել։

Ֆրանսիացի մի գաղութարար ասել է. «Առանց խախտելու բարոյական ու միջազգային իրավարանության օրենքները, մենք կարող ենք մեր աֆրիկացի թշնամիների դեմ կռվել վառոդով ու երկաթով, ինչպես նաև սվինի միջոցով, ներքին գժտություններով, արաբների ու կաբիլների պատերազմներով, ծովափին և Սահարայում ապրող ցեղերի կռիվներով։ Դրա համար մենք կարող ենք օգտագործել օդին, կաշառքն ու կազմալուծումը։ Չէ՞ որ դրանից հեշտ բան չկա»։

«Բաժանիր և տիրիր» քաղաքականությունն իրագործվում է ոչ միայն զուտ ռազմական մեթոդներով։ Խաղաղ իրագրության մեջ այն կենսագործում են պետական-վարչական միջոցներով և գաղափարական մշակման ձևերով։

§ 114. ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՏԵՐԱԶՄ է ՆՅՈՒԹՈՒՄ։ Այն, որ պատերազմը կողոպուտի կարևորագույն աղբյուր է, այն հաջող վարելու դեպքում ագրեսորը հնարավորություն է ստանում ծրագրել նորանոր պատերազմներ, հայտնի էր դեռ հին աշխարհում։ Հռոմը գիտեր, որ պատերազմը ոչ միայն պատերազմ է նյութում, այլև նոր պատերազմ է ծնում։

Ֆրանսիան էքսպեդիցիոն բանակի նախապատրաստման վրա ծախսեց 100 միլիոն ֆրանկ։ Պատերազմի երկրորդ օրը նրա բանակը գրավեց Ալժիրի պետական գանձարանը, ուր կար 50 միլիոն ֆրանկի արժեք։ Նա ամբողջովին կողոպ-

տեց երկիրը և Աֆրիկայում ձեռք բերեց նոր պլացդարմ, որտեղից միմյանց ետևից սկսեց գրավել «Սև աշխարհամասի» հողերը։

Պատերազմը գաղութարարների համար ոչ միայն պետական «վեհության», փառքի բարձրացման միջոց է, այլև զորավարների ու զինվորների հարստացման աղբյուր։ Ֆրանսիական գրոնադերներն իրենց գեներալների ու մարշալների առաջնորդությամբ այնպես ստորաբար ու դաժանորեն էին կողոպտում ալժիրցիներին, ինչպես նրանց նախապապերին կողոպտել էին Հռոմի լեգեոներները իրենց զորավարների գլխավորությամբ[1]։

Ռազմական թալանը իմպերիալիստական տերությունների հարստացման և ուժեղացման կարևոր աղբյուր է նաև այն դեպքում, երբ պատերազմ է մղվում ոչ թե գաղութներ ձեռք բերելու (հաճախ այդ բանը անհնարին է), այլ ուժեղ հակառակորդի (կամ հակառակորդների) հզորության խորտակման նպատակով։ Այդ դեպքում հաղթողը պարտվածին պարտադրում է ռազմատուգանք, քանդում և տանում է ամբողջ գործարաններ ու ֆաբրիկաներ, իբրև ռազմավար զավթում ռազմական, ինչպես նաև ամեն տեսակի նյութական արժեքներ։ Բացի այդ, հաղթողը հաճախ անեքսիայի է ենթարկում հակառակորդի տերիտորիայի մի մասը։ Վերջին երկու դարում Գերմանիան Եվրոպայում մղել է հիմնականում այդպիսի պատերազմներ և գործադրել կողոպտման ու հարստացման այդ մեթոդները։

Այսպիսով, հաղթողը բոլոր եղանակներով կողոպտում է հաղթվածին, նրան զրկում ռազմա-տնտեսական պոտենցիայից։

§ 115. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈՂԸ ԶԱՎԹԻՉԻ ՆՊԱՏԱԿՆ Է։ Գաղութարարները տակավին նոր հողեր չգրաված, արդեն հայտարարում են, թե դրանք իրենց են պատկանում։ Ֆրանսիական գեներալ Բրոյի կինը Ալժիրի օկուպացիայի նախօրեին հաղորդում էր եղբորը, որ Ալժիրը «ֆրանսիական հող է, այն պետք է ֆրանսիացիները տիրեն։ Նրանք այն պետք է որքան կարելի է արագորեն բնակեցնեն ու մշակեն, որպեսզի ֆրանսիացիների ձեռքում մի ժամանակ դառնա մարդկության ճակատագրի տնօրինման ներգործող զենք։ Առանց իրեն թուլացնելու, Ֆրանսիան կարող է Ալժիր ուղարկել 4 միլիոն մարդ»։

Ներխուժման բանակի հետ մեկտեղ, երկրորդ էշելոնով, գնում էին գաղութարարները՝ առևտրականները, վաշխառուները, սպեկուլյանտները, բրեական հանցագործները, հեշտ ապրուստ որոնողները։ Նրանք շնչին գնով ձեռք էին բերում ալժիրցիների լքած հողերը, այգիներն ու տները։ Հաճախ հողերն ավելի շուտ էին վաճառվում, քան դրանք զավթում էին ֆրանսիական զինվորները։

«Դու կդարմանաս, եթե ասեմ, որ Բլիդան հազարավոր գաղութարանակների վաճառեց նվաճելուց ու գրավվելուց առաջ։ Այդ պարոնները զվարճանում են, երբ իրենց կալվածքները դիտում են հեռադիտակով, դրա համար կտրում են երեք կիլոմետր, որպեսզի իրենց դիտակետը հաստատեն բարձունքներից մեկի վրա»,— եղբորը գրել է նույն տիրուհի Բրոն։ Նա էլ ավելացնում է. «Պատվավոր գաղութարանակները իրենց մեծամասնությամբ տաժանավայրի փախստականներ են կամ այնպիսի մարդիկ, որոնց տեղը տաժանավայրն է»։ Արագ հարստացման ետևից ընկած մարդիկ մրգատու ծառերը վաճառում էին որպես փայտ, իսկ վաստակած փողով գնում էին կալվածք ու անմիջապես վերավաճառում։ Հենց որ ալժիրցիները թողնում էին իրենց այրվող խրճիթները և լեռներն էին քաշվում զավթիչների դեմ պայքարը շարունակելու համար, նրանց հողերը գրավում էին եկվորները։ Այսպես էին գործում ֆրանսիական գաղութարարները 130 տարի առաջ։ Այսպես են գործում նրանք նաև այժմ։

§ 116. ՀՐԵՇԱՎՈՐ ՄԻՆՈՏԱՎՐՈՍԸ։ Ըստ հունական առասպելաբանության, Մինոտավրոսը մի հրեշ էր, որն ուներ մարդու իրան ու եզի գլուխ, ապրում էր Քրետի լաբիրինթոս պալատում։ Կրետե կղզու Մինոս թագավորը Մինոտավրոսին

[1] Կոմս Դեբիսոնը «Մարդու որս» գրքում գրում է. «Ուելդ-Նաիլ ցեղի վրա մեր կատարած հաջող հարձակումը մեզ տվեց 25 հազար ոչխար և 600 բեռնավորված ուղտ։ Յուրաքանչյուր զինվոր պետք է ստանար միայն իրեն հասնող մասը՝ մոտավորապես 25 կամ 30 ֆրանկ»։

լափելու էր տալիս պատանիների ու աղջիկներ, որ իբրև տուրք նրան ուղարկում էին աթենացիները։

Մենք արդեն տեսանք, թե ինչպիսի հրեշ էր Հռոմի մինոտավրոսը։ Ժամանակակից մինոտավրոսը գերազանցում է իր հռոմեական եղբորը։ Նա բուն է դնում ամեն տեղ, ուր կարող են թափանցել ժամանակակից գաղութարարների շոշափուկները։ Գաղութարարները զուտ ռազմական մեթոդներով ոչընչացնում են միլիոնավոր մարդկանց, որպեսզի վերջնականապես լուծեն նրանց «մայր հողի» ճակատագիրը։

Այդ մեթոդները, որ գերմանական ֆաշիստները անվանել են «բնիկների բիոլոգիական պոտենցիալի սահմանափակման միջոցառումներ», մտնում են ֆիզիկական բնաջնջման քաղաքականության ընդհանուր պլանի մեջ, որի մասին խոսք կլինի ստորև։

Այժմ տեսնենք, թե գաղութարարներն ինչպես են կենսագործում այդ միջոցառումները։

«Մարդու որս» գրքում կոմս Դերիսոնը նկարագրում է մի այսպիսի դեպք.

«Պարոն գեներալ, մի ցեղ ևս ուզում է անձնատուր լինել և խնդրում է խնայել։— Ո՛չ,— պատասխանեց գեներալը։— Մեզանից ձախ գտնվում է մի շատ սիրելի գնդապետ, որի ձեռքը դեռ ոչինչ չի ընկել։ Թող նա ոչնչացնի այդ ցեղը, որ ամփոփագրում հիշատակելու բան ունենա»։

Այսպես էր գործում ֆրանսիական մինոտավրոսը։ Նրանցից ետ չէին մնում ուրիշները։ Միայն վերջին կես դարում թուրք մինոտավրոսը լափեց միլիոնավոր հայերի, հույների, արաբների, ասորիների ու քրդերի։

Ի տարբերություն այդ մինոտավրոսների, գերմանականը գործում էր նոր մեթոդներով, այդ գործը դնելով խիստ «գիտական» հիմքերի վրա։ Այդ նպատակով հիտլերականները դիմում էին մարդկանց ամլացման, շանալով այդ գործում գտնել լավագույն եղանակներ։ Ինչպես խոստովանեցին իրենք՝ էսէսականները, նրանք ձգտում էին «օկուպացված երկրների բնիկներին փոխարինել գերմանացիներով այն բանից հետո, երբ բնիկների մեկ սերունդը կօգտագործվեր իբրև

գերմանացիների համար աշխատող ստրուկ»[1]։ Նույն նպատակին էր ծառայում գրավված շրջանների բնակչության մասսայական տեղափոխումը Գերմանիա։ «Այդ միջոցառումը,— ասված է ֆաշիստական հույժ գաղտնի փաստաթղթերից մեկում,— նպատակ ունի ոչ միայն կանխել թշնամու ռազմական ուժի աճը, այլև կրճատել նրա բիոլոգիական պոտենցիալը՝ ապագայի հեռանկարների տեսանկյունից. այս գաղափարների օգտին արտահայտվել է ոչ միայն ՍՍ-ի կայսերական ղեկավարը, այլև ինքը՝ ֆյուրերը»[2]։

§ 117. ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ԱՆԴԱՄԱՀԱՏՈՒՄԸ։ Նվաճման ու օկուպացման շրջանում զավթիչները հատուկ նշանակություն են տալիս պարտված ժողովրդի հանճարին ու տաղանդին։ Նվաճողներն ինտելիգենցիային բաժանում են երկու խմբի։ Առաջինի մեջ մտցնում են պետական, ռազմական, քաղաքական գործիչներին ու հումանիտար գիտությունների բնագավառում աշխատողներին (փիլիսոփաներին, գրականության և արվեստի գործիչներին), երկրորդի մեջ՝ ճշգրիտ գիտությունների գործիչներին՝ հետազոտողներին, գյուտարարներին, ինժեներներին, տեխնիկներին։

Գաղութարարները առաջին խմբի մարդկանցով հետաքրքրվում են այն չափով, ինչ չափով որ նրանք անցնում են իրենց կողմը։ Մյուսների հետ, որոնք չեն պաշտպանում գաղութարարների քաղաքական հավատամքը, խիստ հաշվեհարդար են տեսնում, ֆիզիկապես ոչնչացնելով նրանց, լավագույն դեպքում բանտեր ու համակենտրոնացման ճամբարներ նետելով։ Բայց գլխավորը երկրորդ խմբի մարդիկ են, որոնք գաղութարարների համար ստեղծում են գաղութային գերշահույթի նոր, շատ կարևոր աղբյուր։ Այստեղ օկուպանտներն արդեն չեն հետաքրքրվում գիտնականների համոզմունքներով, որոնք կարող են անգամ թշնամական լինել, չընդունել նրանց քաղաքական դավանանքը, բայց պարտավոր են ծառայել իրենց գիտելիքներով ու փորձով։

Գաղութարարները երկրորդ խմբի մարդկանց որս են կազմակերպում բառիս բուն իմաստով։

[1] Нюрнбергский процесс, том I, стр. 370.
[2] Там же, стр. 788.

Ահա թե այդ բանը ինչպես տեղի ունեցավ Գերմանիայում համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտման փուլում։ Դեռ նախքան Եվրոպա ներխուժելը ամերիկացիները (և ոչ միայն նրանք) նախապատրաստել էին Պեյպեր-Կլիպս» օպերացիան, որի նպատակն էր զավթել Գերմանիայի արժեքավոր գիտական նյութերը։ 1943 թվականի աշնանը գնդապետ Բորիս Պաշի հրամանատարությամբ ստեղծվեց հետախուզական գաղտնի ստորաբաժանում, որն ստացավ «Ալսոս» ծածկանունը։ «Ալսոսը», ինչպես և «Կոմանդոսի» մյուս ջոկատները, հատուկ դեսանտային խմբերի միջոցով և այլ ճանապարհներով Գերմանիայի առանձին վայրերում անցնում էին ռազմաճակատի գիծը այն նպատակով, որպեսզի «ապահովեին» գերմանական գիտնականների ու նրանց ձեռագրերի հափշտակումը։

Ըստ գերմանական և ամերիկյան տվյալների, բռնագրավվեց 346 հազար գերմանական պատենտ։ Այդ գիտական փաստաթղթերի ընդհանուր քաշը ավելի քան 1,5 հազար տոննա էր։ Իսկ ինչ վերաբերում է «կենդանի» նյութերին, ապա, Պենտագոնի խոստովանությամբ, ամերիկացիների ձեռքն ընկան 523 գիտնականներ։

Գերմանական պատենտները վերաբերում էին գիտության ու տեխնիկայի բոլոր ճյուղերին։ Բավական է ասել, որ դրանք պարունակում էին արտադրության ու մշակման տարբեր փուլերում գտնվող 138 տիպի հեռահար հրթիռների ու արկերի նախագծեր։ Միայն Ի. Գ. Ֆարբենինդուստրի կոնցեռնի լաբորատորիաներում կային 50 հազար տեսակի ներկերի դեղատոմսեր[1]։

Այդ «ավարի» շնորհիվ «ամերիկյան գիտությունն ու տեխնիկան առաջ մղվեց մի քանի տարով, իսկ որոշ բնագավառներում՝ մի ամբողջ տասնամյակով»,— խոստովանում էին իրենք՝ ամերիկացիները[2]։ Բավական է բերել մի այսպիսի օրինակ. «Ֆաու—2» հրթիռների ծրագրի նախկին տեխնի՛կական մասնագետը նացիստական Գերմանիայում դոկտոր Վիլյամ Մրազեկը այժմ դարձել է ամերիկյան «Սատուրն» լուսնահրթիռի ստեղծման նախագծի իրագործման գլխավոր ինժեներ։ Նրան այդ պաշտոնում նշանակեց «Ֆաու—2» հրթիռի «հայր», դ-ր Վեռներ Ֆոն Բրաունը, որն այժմ գլխավորում է Նասայի (Հանստվիլլ, Ալաբամա) տիեզերական թռիչքների գլխավոր կենտրոնը։

Այդ «ավարի» մի մասը՝ 6000 պատենտ և 46 գերմանացի մասնագետներ բաժին հասավ Ավստրալիային։ Այդ կապակցությամբ Ավստրալիայի պրեմիեր-մինիստր Չիֆիլին իր ռադիոելույթում հայտարարեց. «Ավստրալիայի արդյունաբերողներն ի վիճակի են գերմանական գաղտնի նյութերի օգնությամբ տեխնիկայի ստպարեզում իրենց երկիրը հասցնելու աշխարհի ամենաառաջավոր երկրներին»[1]։

XX դարը պատմության մեջ մտել է իբրև ատոմային դար։ Իր անունով նա պարտական է այն գիտնականներին, որոնց հաջողվեց ճեղքել ուրանը և օգտագործել այդ ճեղքումից գոյացող հսկայական էներգիան։ Ուրանը հեղաշրջում կատարեց տեխնիկայի, ռազմական գործի մեջ։

Հարց է ծագում՝ ինչպե՞ս ամերիկացիներին հաջողվեց աշխարհում առաջինը կազմակերպել ատոմային ռումբերի արտադրությունը։ Բանն այն է, որ նրանք բոլորից լավ կարողացան օգտագործել գաղութային գերշահույթի այդ նոր աղբյուրը՝ ուրիշ երկրների ու ժողովուրդների գիտնականներին։ Այդ բանում դժվար չէ համոզվել, եթե աչքի անցկացնենք ամերիկյան առաջատար գիտնականների ցուցակը։ «Ժամանակակից ֆիզիկայի հայրը»՝ Ալբերտ Էյնշտեյնը գերմանական հրեա գիտնական է, որը երկրից հեռացել էր ֆաշիստների իշխանության գլուխ անցնելու ժամանակ։ «Ատոմային ռումբի հայրը»՝ Ռոբերտ Օպենհեյմերը ամերիկյան հրեա է։ «Սուպերռումբի» (ջրածնային ռումբի) «հայրը»՝ Էդուարդ Թելլերը բուդապեշտցի հրեայի որդի է։ Հրեաներ են գիտնականներ Ջեմս Ֆրանկը և Մաքս Բոռնը։ Լեո Սցիլարդը հունգարացի է, Ն. Բորը՝ դանիացի, Էնրիկո Ֆերմին՝ իտալացի։

Նեոգաղութարարները բոլոր միջոցները ձեռնարկում են, որ գիտնականները իրենց հակառակորդների ձեռքը չընկնեն։

[1] Итоги второй мировой войны, сборник статей, стр. 319.
[2] Там же, стр. 337.

[1] Итоги второй мировой войны, стр. 337.

Անգլիացիներն ու ամերիկացիները կազմակերպեցին նշանավոր դանիացի գիտնական Ն. Բորի փախուստը օդով՝ Հյուսիսային ծովի վրայով Լոնդոն։ Բորին դրել էին ինքնաթիռի ռմբակալի մեջ։ Գերմանական ավիացիայի կողմից վտանգ լինելու դեպքում անգլիացի օդաչուն կոճակի սեղմումով գիտնականին պետք է նետեր ծովը, որպեսզի նա չընկներ գերմանացիների ձեռքը։

Ամեն մի հավաքագրված կամ գերված գիտնականի համար տերերն ստեղծում են «կյանքի բոլոր բարիքները», բայց միաժամանակ նրանց մեկուսացնում են «արտաքին աշխարհից», հետևում նրա ամեն մի քայլին. նրանք ապրում են կալանավորների նման։ Գաղտնի են պահում ոչ միայն նրան, այլև այն քաղաքները, ուր աշխատում և ապրում են նրանք։ Նույն Բորը Ամերիկայում ստացավ նոր անուն՝ Նիկոլաս Բեյքեր։ Երբ նա երևում էր Նյու-Յորքի փողոցներում, նրան ուղեկցում էին գաղտնի ոստիկանության գործակալները՝ «մեկ ու կես տասնյակ պահապան շներ»։ Եվ երբ Բորն անցնում էր արգելված տեղերով (իսկ նա սիրում էր այդ բանն անել), ապա «օրենքի պահպանման» այդ կապովի շները նրա հետ միասին խախտում էին փողոցային երթևեկության կանոնները։

§ 118. ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ «ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՈՐԱՍՅՈՒՆԸ»։ «Բաժանիր և տիրիր» քաղաքականությունը չպետք է նույնացնել «հինգերորդ զորասյան» քաղաքականության հետ։

«Բաժանիր և տիրիր» քաղաքականությունը իրագործում են առավելապես վարչական միջոցառումներով, հարկադրանքի, կաշառքի մեթոդներով, դեմագոգիայով, մինչդեռ երկրորդն իրագործվում է հիմնականում բնիկներին գաղափարապես մշակելու միջոցով, ձգտելով տեղում ստեղծել մասսայական բազա։ Բնիկներից որոշ մարդիկ, այսպես ասած, «կամավոր» կերպով անցնում են օկուպանտների կողմը և դառնում նրանց հոգևոր ճորտերը։ «Հինգերորդ զորասյան» մեջ, ինչ խոսք, մտնում են քաղաքական ավազակները, ստահակները, բանդիտները, եսամոլները, բայց, այնուամենայնիվ, որակ են ստեղծում նրանք, ովքեր կուրորեն հավատում

են նեոգաղութարարների «պատմական միսիայի» առասպելին։

Պատերազմի նախօրյակին և պատերազմական գործողությունների ժամանակ նրանք բոլորն աջակցում են հակառակորդին՝ գործում իբրև լրտեսներ, պրովակատորներ, դիվերսանտներ, ընդհատակյա պրոպագանդիստական աշխատանք են կատարում թշնամու պրոպագանդիստական կենտրոնի թելադրանքով։ Մի խոսքով, «հինգերորդ զորասյան» անդամներն ամենից կեղտոտ աշխատանքն են կատարում իբրև մոլի մատնիչներ ու դավաճաններ։ Հիշենք, թեկուզ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայի օգտին «հինգերորդ զորասյան» աշխատանքները։

Հասկանալի է, Ֆրանսիան Ալժիրում, օկուպացման ժամանակաշրջանում, այդպիսի «հինգերորդ զորասյուն» չուներ։ Այդ զորասյունը հետո երևան եկավ։ 1954—1962 թվականների անկախության համար մղվող պատերազմի ընթացքում ալժիրյան «հինգերորդ զորասյունը» լրիվ չափով գործում էր արդեն ոչ թե քաղաքացիական հիմնարկությունների ղեկավարությամբ, ինչպես խաղաղ ժամանակ, այլ ռազմական հրամանատարության թելադրանքով։

II. ԳԱՂՈՒԹԱՑԻՆ ԿԵՂԵՔՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

§ 119. ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։ Եվ ահա ավարտվում է այն ժամանակաշրջանը, երբ գաղութը զավթում ու նվաճում են ուղղակի ռազմական ճանապարհով կամ անուղղակի ճընշման մեթոդներով, «օգնության», կաշառքի, պետական, պալատական հեղաշրջման կամ «ժողովրդական» ապստամբության, «քաղաքացիական» պատերազմ կազմակերպելու միջոցով։ Սկսվում է, այսպես կոչված, «խաղաղեցման» շրջանը՝ մայր հողի հարստությունների յուրացման ու նրա որդիների ու դուստրերի «խաղաղ» շահագործման շրջանը։

Ժողովուրդների գաղութային կեղեքման ու դիմադրության կամքի ճնշման ռազմական մեթոդներին փոխարինելու

են գալիս «խաղաղ» մեթոդները՝ պետական-վարչական և գաղափարական մեթոդները։

Նախ խոսենք պետական-վարչական մեթոդների մասին։

Գաղութացման մեթոդները, որ մետրոպոլիայի պետական-վարչական օրգանները կամ նրանց ֆիլիալներն օգտագործում են օկուպացիոն զինված ուժերի սերտ համագործակցությամբ, հիմնականում հետապնդում են երեք նպատակ.

առաջին, ավարտել «տնտեսական տերիտորիայի» հիմնական դիրքերի զավթումը և լրիվ յուրացնել գերշահույթի գաղութային աղբյուրները։

Երկրորդ, արգելակել գաղութի արտադրողական ուժերի զարգացումն այն հաշվով, որպեսզի տեղի բնակչությունը երբեք չկարողանա նրանց վրա հենվել իր պայքարում ընդդեմ գաղութարարների. գաղութը դարձնել մետրոպոլիայի համար հումքի բազա և վաճառահանման շուկա։

Երրորդ, ջլատել ժողովրդի ուժերը, ջանալով թուլացնել կամ չեզոքացնել նրա ֆիզիկական ու հոգևոր ուժերը, որոնք պոտենցիալ սպառնալիք են ներկայացնում մետրոպոլիայի տիրապետության համար։

§ 120. «ՄԻԱՅՆ ԳԱՂՈՒԹԱՅՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ԱՄՐԱՊՆԴԵԼ ՀԱՂԹԱՆԱԿԸ»,— ԱՍՈՒՄ Է ԳԱՂՈՒԹԱՐԱՐ ԲՅՈՒԺՈՆ։ Գաղութային ժողովրդի մայր հողի բռնագրավման մոլուցքը, որի մասին խոսվեց վերևում, շարունակվում է նաև մարտական գործողությունների ձևական ընդհատումից հետո. գործի են անցնում քաղաքացիական պաշտոնյաները։

Ահա թե Ալժիրում այդ գործն ինչպես էր կազմակերպվել «չափազանց բարի Բյուժո քեռին» (այդպես էին Ֆրանսիայում անվանում նրան, Ալժիրի առաջին նահանգապետներից մեկին)։ Նահանգապետ դառնալուց առաջ, նա խոսում էր այն մասին, թե ինչ բան է ֆրանսիացու «բարությունն ու արդարությունը»։ «Անհրաժեշտ է,— ասում էր նա,— որ ֆրանսիական դրոշակը ծածանվի այս հողի վրա... Ես կրքոտ գաղութարար կլինեմ»։

Եվ նա իսկապես դարձավ «կրքոտ գաղութարար»։

Վտանգավոր գիշատիչը գիտեր, որ ալժիրցին չի կարող

ապրել առանց հողի, և որ հարկավոր է հարվածել ալժիրցու հենց այդ ամենանուրբ տեղին։ «Այն միակ շահը, որ կարելի է շոշափել, նրանց հողագործությունն է, —ասում էր գաղութարարը,—ուստի հարկավոր է շարունակ օգտագործել այդ հանգամանքը»։ Եվ նա ալժիրցիներին քշում էր երկրի լավագույն հողերից։ Որոշում կար բռնագրավել այն արաբների գույքը, որոնք հանդես էին գալիս Ֆրանսիայի դեմ կամ անցել «թշնամու», այսինքն՝ ազգային հերոս Արդ-էլ-Կադիրի կողմը։ Իսկ նրա կողմն էին անցնում հազարավոր ու հազարավոր հայրենասերներ, որոնք որոշել էին հայրենիքը պաշտպանել օկուպանտներից։ Այդպիսով, երկրի իսկական հերոսներն ու հայրենասերները զրկվեցին հողից ու գույքից։ 1841 թվականի հունիսի 16-ի օրենքով «պետական գույք» է հայտարարվում 200 հազար հեկտար անտառ և 61 հազար հեկտար լավագույն հողեր, որոնք առաջ պատկանում էին տեղական ցեղերին։

1844 թ. հոկտեմբերի 1-ին և 1846 թ. հունիսի 31-ին տրվում են նոր կարգադրություններ, որոնք «պետական գույք» (իմա՝ ֆրանսիական սեփականություն— Հ. Ս.) են հայտարարում այն հողերը, որոնց տերերը չէին կարողացել օկուպացիոն իշխանություններին ներկայացնել գնման թղթեր։

«Խիստ բարի Բյուժո քեռու» այդ ավազակային խաղը հասկանալու համար ասենք, որ նախքան Ալժիրի օկուպացումը տեղական ցեղերը հողին տիրում էին դեյի թույլտվությամբ, բայց քչերն էին դեյից ստացել թույլտվության համապատասխան փաստացի ձևակերպում։ Այդ բանը, իհարկե, հայտնի էր ֆրանսիական կառավարությանը, և այդ պատճառով վերջինս դիմեց այդպիսի բացահայտ ավազակության, արտաքնապես պահպանելով «օրինականության» պատրանքը։ Եվ ահա այդպիսի «օրինական» ճանապարհով գաղութարարները «վաստակեցին» ալժիրյան հարուստ նոր հողատարածություններ, մասնավորապես Միթիջի, Օրանի և Բոնի լայնածավալ հովիտները։

Սակայն զավթած հողերը հարկավոր էր յուրացնել, իսկ դրա համար Ֆրանսիայի ու Եվրոպայի այլ երկրների գաղութաքնակների կարիք էր զգացվում։

Այո՛, պարոն Բյուժոն հիանալի հասկանում էր, որ հարկավոր է գործել ոչ միայն հրով, սրով ու «օրենքով», այլև ուրիշ կերպ։ Ու զորացրված զինվորներին նա լավագույն հողեր էր տալիս, նրանցից պահանջելով «վերցնել բահ ու քլունգ», քանի որ «միայն գաղութացումը կարող է ամրապնդել հաղթանակը»։ Նա Փարիզի կառավարությունից պահանջում է Ալժիր ուղարկել ոչ թե ամուրիների, որոնցից քիչ օգուտ կա, այլ ընտանիքավորների, որ մշտապես ապրեն Ալժիրում։

§ 121. ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԱՆԱՅՔ ԵՎ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԸ։ Հայտնի է, որ երբ գաղութարարները չեն կարողանում ամրոցները գրավել հրանոթներով, գործի են դնում... կանանց։ Վեցիններիս ծառայությունների կարիքը նրանք զգում են հատկապես՝ ա) նոր «կենսական տարածությունը» իրենց ձեռքում ամրապնդելու և բ) բնիկների ապազգայնացման քաղաքականություն վարելու համար։

Ճապոնացիները ձգտում էին Կորեան, Մանջուրիան, ռուսական Հեռավոր Արևելքը, «Ծագող արևի Երկրի» մի բարձրաստիճան պետական գործչի խոսքերով ասած, նվաճել «կանանց տոտիկներով»։ Հեռավոր Արևելքում նրանք հենց սկզբից խայտառակ կերպով տապալվեցին, իսկ մյուս շրջաններում որոշ հաջողություն ունեցան մինչև 1945 թ. իրենց պարտությունը։

Պարոն Բյուժոն նույնպես հիանալի հասկանում էր այդ մեթոդի արդյունավետությունը՝ մետրոպոլիայի կանանց դերը «գաղութների հաղթանակի ամրապնդման գործում»։ Նա Փարիզից պահանջում է Տուլոնից ու Ֆրանսիայի մյուս քաղաքներից ուղարկել հասարակաց կանանց, ամեն մեկին 200 ֆրանկ պարգևատրելու պայմանով, իսկ այնուհետև խոստանալով ամուսնացնել նրանց։ Ընդամին յուրաքանչյուր նոր ընտանիք լրացուցիչ ստանալու էր 500 ֆրանկ «նպաստ»։

Մենք գիտենք, որ ֆրանսիական կառավարությունը վարվեց այնպես, ինչպես պահանջում էր պարոն Բյուժոն, բայց մենք չգիտենք, թե այս «խիստ բարի քեռին» Ֆրանսիայի բոլոր ծայրերից ինչքան հասարակաց կին հավաքեց։ Մի բան հավաստի հայտնի է՝ նա, զեկավարվելով «պետության բարձրագույն շահերով», ամեն ինչ արեց Ալժիրի գարուքացման

համար։ Նա այդ քաղաքականությունը վարում էր բոլոր գծերով՝ ռազմական, քաղաքացիական, եկեղեցական ու ֆինանսական։ Երբ մեծահարուստ Լամորիսիերը պահանջեց 100 հազար հեկտար հող տալ իրեն, այդ հողից քշելով արաբներին, Բյուժոյի միջնորդությամբ ֆրանսիական կառավարությունը 1846 թվականի դեկտեմբերի 4-ին թույլ տվեց Օրանի շրջակայքում նրա օգտին բռնագրավել պահանջված չափի հող։ Բյուժոյի ջանքերով մինչև 1847 թվականի հունվարի 1-ը, այսինքն՝ մինչև Ալժիրից հեռանալը, այնտեղ արդեն կար 109.400 գաղութաբնակ։

Երկրորդ հանրապետության տարիներին Ֆրանսիայի կառավարող շրջանները։ Ալժիր են ուղարկում 13500 գործազուրկ՝ չէ՞ որ նրանք «հանրորեն վտանգավոր» մարդիկ էին, և չէր խանգարի նրանցից ազատվել ու հեռու պահել մայրաքաղաքից՝ Փարիզից։ Եվ ասենք ի՞նչ վատ բան կար, դատում էին նրանք, եթե բանվորներն էլ կապիտալիստներին օգնեն գաղութացնելու Աֆրիկան։

Կաբի ցեղի ապստամբությունը ճնշելուց հետո Ֆրանսիական գաղութարարները գավթում են 2500 հազար հեկտար լավագույն հողեր։ Այդ հողերից 500 հազար հեկտարը տալիս են նոր գաղութաբնակներին, նրանց համար նոր բնակավայրեր են կառուցում. Ֆրանսիայից գալիս է 2079, Էլզասից և Լոթարինգիայից՝ 1183 ընտանիք։ Յոթ տարում, 1871 թվականից մինչև 1877 թվականը, հիմնում են 200 նոր գյուղ, որտեղ տեղավորում են 30 հազար գաղութաբնակների։ 1877 թվականից մինչև 1881 թվականը 400 հազար հեկտար լավագույն հողեր հատկացվում են ֆրանսիացի նոր գաղթականներին։ Այդպես շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ Ալժիրի ժողովուրդն ապրում էր Փարիզի հրամաններով։ Իսկ երբ սկսեց ապրել այնպես, ինչպես ինքն էր ցանկանում, դրությունը շեշտակիորեն փոխվեց։ Ալժիրցիներն իրենց բախտի տերը դառնալուց հետո հողային ռեֆորմ անցկացրին, որը հնարավորություն տվեց եվրոպացի վերաբնակիչներից ետ վերցնել 2500 հազար հեկտար լավագույն հողեր, այսինքն վերստանալ այն հողերը, որ խլել էին ֆրանսիական գա-

գուիթարարները 130-ամյա գաղութային տիրապետության ժամանակ։

§ 122. ԳԱՂՈՒԻԹԱՐԱՐԸ ՊԱՐՏՎԱԾԻՆ ԹԵԼԱԴՐՈՒՄ Է ԻՐ ԿԱՐԳԵՐԸ, ԱՊՐԵԼԱԿԵՐՊՆ ՈՒ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԸ։ Յուրաքանչյուր գաղութարար պարտված երկրին թելադրում է կառավարման իր ձևը, ապրելակերպն ու մտածելակերպը, անկախ այն բանից, թե մետրոպոլիան զարգացած է, թե ոչ։ Պատահում է, որ այն նույնիսկ ավելի հետամնաց է, քան նվաճված երկրները։ Այս բանը հավասարապես վերաբերում է ինչպես տնտեսությանը, այնպես էլ պետական կարգերին, քաղաքական ու կուլտուրական հիմնարկություններին։ Հայաստանը, օրինակ, տեսել է «առաջավոր» հռոմեացիների, բյուզանդացիների և դրա հետ միասին կիսավայրենի սելջուկ Թուրքերի լուծը՝ նրանց քոչվորական ապրելակերպի ժամանակ։ Խիստ զարգացած ու կուլտուրական արևելահռոմեական կայսրությունը, որը դարեր շարունակ ճնշում էր «բարբարոս» ցեղերին ու ժողովուրդներին, ի վերջո ինքը դարձավ նույնպիսի ցեղերի՝ օսմանյան Թուրքերի զոհը։ Նրանց փառավոր մայրաքաղաք Պոլիսը 1453 թվականի մայիսի 29-ին ընկավ Մահմեդի ռազմատենչ զինվորների հարվածներից։

§ 123. «ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։ Ժամանակակից գաղութատիրության ամենաբնորոշ գծերից մեկն այն է, որ նա մետրոպոլիայի ու գաղութների բոլոր քաղաքացիների «իրավահավասարություն» է հռչակում։

Այդպիսի քաղաքականություն են վարում նաև ֆրանսիացի գաղութարարները։ Պատերազմից հետո ալժիրցիները դարձան «Ֆրանսիական միության իրավահավասար քաղաքացիներ»։ «Ալժիրի օրգանական ստատուտի» երկրորդ հոդվածը հռչակեց ֆրանսիական բոլոր քաղաքացիների իսկական «հավասարություն»։

«Բոլոր անձինք... առանց ծագման, ռասայի, լեզվի կամ դավանանքի խտրության վայելում են ֆրանսիական քաղաքացիների իրավունքներ և կատարում նույն պարտականությունները։ Նրանք վայելում են ֆրանսիական միության քաղաքացու բոլոր դեմոկրատական ազատությունները, բոլոր քաղաքական, տնտեսական ու սոցիալական իրավունքները, որ երաշխավորված են ֆրանսիական կոնստիտուցիայի առաջաբանով և 81-րդ հոդվածով։ Հանրային բոլոր պաշտոնները նրանց հավասարապես մատչելի են։ Ցամաքային, ծովային կամ օդային զինված ուժերում, մագիստրատուրայում և բոլոր վարչական հիմնարկություններում, կոմունալ սպասարկման օրգաններում... վարձակալության, պաշտոնում առաջադիմության, աստիճանի բարձրացման, վարձատրության, նպաստի, պաշտոնազրկման, թոշակավորման պայմանները կիրառվում են բոլորի նկատմամբ»[1]։

Գաղութատիրության գաղափարախոսներն ու ջատագովները գտնում են, որ «իրավահավասարության» քաղաքականությունը համապատասխանում է «ժամանակի ոգուն»։ Իրոք, XX դարը ժողովուրդների լիակատար իրավահավասարության, ինքնորոշման զարթոնքի դար է։ Արդյոք գաղութատիրությունը չի՞ ընդառաջում ժողովուրդների դարավոր իղձերին։ Բնավ։ Այն իրավահավասարությունը, որին ձգտում են գաղութային ժողովուրդները, նշանակում է ինքնորոշում, քաղաքական անկախություն, պետական սուվերենություն, այնինչ գաղութարարների հռչակած «իրավահավասարությունը» ժողովուրդներին զրկում է այդ իրավունքներից, նրանց տալով մետրոպոլիայի հետ սոսկ ինտեգրացիայի[2] «իրավունք»։

Ասենք թե Ալժիրի բնակիչը ձգտում է բարձր կամ ցածր պաշտոն գրավել «ցամաքային, ծովային կամ օդային զինված ուժերում, մագիստրատուրայում և բոլոր վարչական հիմնարկություններում, կոմունալ սպասարկման օրգաններում...»։ Այդ դեպքում նա պետք է ծառայության ընդունվի ֆրանսիական պետության ապարատում։ Բայց դրա համար նրանից պահանջվում է ֆրանսիական, և ոչ թե ազգային կրթություն։ Համենայն դեպս, նա պետք է իմանա ֆրանսերեն։ Նա պետք է իմանա մետրոպոլիայի ժողովրդի կուլ-

---

1 «Ալժիրի օրգանական ստատուտի» լրիվ ընագիրը հրապարակված է К. и Ф. Жансон, «Алжир вне закона» գրքում։

2 Ինտեգրացումը զարգացման պրոցեսում որոշ մասերի կամ տարրերի միավորումն է մի միասնական ամբողջի մեջ։

տուրան ու բարքերը։ Այդ ամենը աստիճանաբար հանգեցնում է այն բանին, որ հոգևոր, կուլտուրական և մյուս բոլոր ասպարեզներում նա աստիճանաբար կտրվում է իր ժողովրդից։ Կարճ ասած, նա կամ նրա առաջին, կամ երկրորդ սերունդը ֆրանսիանում է։ Միայն այդ ուղիով գաղութի բնակիչները կարող են վայելել «ֆրանսիական միության քաղաքացու բոլոր դեմոկրատական ազատությունները, բոլոր քաղաքական, տնտեսական ու սոցիալական իրավունքները, որ երաշխավորված են ֆրանսիական հանրապետության կոնստիտուցիայի առաջաբանով և 81-րդ հոդվածով»։ Մի խոսքով, դուրս է գալիս այսպես. ոչխարների հոտը հանձնում են սոված գայլերի ոհմակին և նրանց ասում՝ ապրեք գայլերի իշխանության տակ, դուք նրանց հետ իրավահավասար եք։

Աշխարհի ժողովուրդների ընտանիքում իսկական իրավահավասարություն կարող է լինել միայն սուվերեն ժողովուրդների միջև։ Իրավահավասարությունն անհնարին է իշխող ու ենթակա ազգերի, շահագործողի ու շահագործվողի միջև, հրամայողի ու ենթակայի միջև։ Միայն «տեր» ժողովուրդը ունի բոլոր արտոնությունները, իսկ «հպատակ» ժողովուրդը զուրկ է այդ իրավունքներից թե իրավաբանորեն և թե փաստորեն, քանի որ նա զուրկ է պետականությունից։

Չանալով վերացնել մետրոպոլիայի ու գաղութի հակասությունները, գաղութարարները հնարել են այդ խայծը։ Նեոգաղութատիրության տեսաբանների կարծիքով, «իրավահավասարության» քաղաքականությունը կոչված է, ի վերջո, լուծելու այդ պրոբլեմը։ «Ինչու անջատվել մետրոպոլիայից,— ասում են ժամանակակից գաղութարարները գաղութների ժողովուրդներին, — Չէ՞ որ բոլորս էլ իրավահավասար ենք»։

Նեոգաղութարարների հեռահար նշանակետի քաղաքականության այդ նպատակները ակներև էին Ֆրանսիայի ոչ միայն կոմունիստների, որոնք պայքարում էին Ալժիրը մետրոպոլիայից լիովին անջատելու, Ալժիրի անկախ պետություն ստեղծելու օգտին, այլև Ֆրանսիայի բոլոր առաջադիմական գործիչների համար։ Օրինակ, «Ալժիրը օրենքից դուրս»

գրքի հեղինակներ Կ. և Ֆ. Ժանսոնները այդ «իրավահավասարության» քաղաքականության մասին գրում են. «Պաշտոնապես մենք արդեն մի քանի տարի է, որ ձգտում ենք իրագործել անցումը քաղաքացիական իրավունքներից դեպի իրավահավասար համաքաղաքացիություն։ Որպեսզի Ալժիրը ֆրանսիական դառնա, բավական է, որ այնտեղ համասեռ բնակչություն լինի, որը իր քաղաքացիական իրավունքներով բնավ չտարբերվի ֆրանսիական բնակչության ամեն մի այլ խմբից։ Հարկավոր էր միայն հանդիսավոր կերպով հռչակել ազգալուծման մեր տրադիցիոն ձգտումը (ժամանակին համաքայլ ընթանալու համար, կոչեցեք «ինտեգրացիա»)[1] (ընդգծումը մերն է— Հ. Ս.)։

Ավելի լավ դժվար է ասել։

Ընթերցողը, ընդսմին, պետք է գիտենա, որ ֆրանսիական գաղութարարները «իրավահավասարության» իրենց քաղաքականությունը բնավ էլ չեն անվանում «ազգալուծման» քաղաքականություն։ Բոլորովին ո՛չ։ Չէ՞ որ նրանք «ոչ թե իմպերիալիստներ են», այլ «սոցիալիստներ», «իմպերիալիզմի և գաղութատիրության» թշնամիներ։ «Այն, ինչ տեղի է ունենում, պարզապես «ինտեգրացիա է», ոչ ավելին,— ասում են նրանք։— Ստեղծվում է մի միասնական ամբողջություն, որը տնտեսական զարգացման օրինաչափ երևույթ է։ Եվ մենք Ալժիրի ու Ֆրանսիայի ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական մերձեցման քաղաքականություն ենք վարում, ամրապնդում Ֆրանսիական միության եղբայրությունը»։

Բայց եթե ֆրանսիական գաղութարարները ձգտում էին բողոքել «իրավահավասարության» քաղաքականության բուն նպատակները, ապա թուրք գաղութարարները բնավ էլ միտք չունեին այդպիսի բան անելու։ Նրանք բացեիբաց էին խոսում այդ մասին։ «Թուրքիայում,— ասում էր Թալեաթ փաշան,— կարող է օրենքի առջև հավասարության մասին խոսք լինել միայն այն ժամանակ, երբ ավարտվի բնակչության բոլոր տարրերի թուրքացումը»։ Եվ այն, որ Թուրքիայում գործնա-

[1] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 98.

կանորեն իրավահավասարության քաղաքականություն չէր իրագործվում, ապա դրանում մեղավոր էին միայն «իրենք՝ քրիստոնյաները, քանի որ նրանք չէին ցանկանում թրքանալ»[1]։

§ 124. «ՄԻԱՎՈՐԻՐ ԵՎ ԻՇԽԻՐ» ՏԱԿՏԻԿԱՆ։ Գաղութային հին սիստեմի կործանման ու նրա փլատակների վրա ազգային նոր պետությունների ստեղծման դարաշրջանում գաղութարարները շարունակ կեղեքման նոր ձևեր են որոնում։ Դրանց մեջ առանձին տեղ է գրավում «միավորիր և իշխիր» տակտիկան։ Այն սերտորեն կապված է ինտեգրացիայի քաղաքականության հետ և նպատակ ունի գաղութային ու թույլ զարգացած երկրների էկոնոմիկան կապել մետրոպոլիայի էկոնոմիկային և, այդպիսով, ա) նվազեցնել կենտրոնախույս ուժերի աղետաբեր հետևանքները գաղութարարների համար, այսինքն՝ գաղութների ու մետրոպոլիաների միջև հակամարտությունները, բ) ավելի արդյունավետ շահագործել առավել թույլ զարգացած երկրների տնտեսական պոտենցիալը։

«Միավորիր և իշխիր» տակտիկան առավել հաջող իրագործման նպատակով կիրառվում են թույլ զարգացած երկրներին ֆինանսական, տեխնիկական ու այլ «օգնություն» ցույց տալու քաղաքականություն, տնտեսական ու ռազմա-քաղաքական դաշինքների քաղաքականություն և այլն։ Այդպիսի քաղաքականություն են վարում Ֆրանսիայի նեոգաղութարարները Ֆինանսական միության երկրների, Անգլիան՝ Ազգերի բրիտանական համագործակցության երկրների նկատմամբ. անգլիացիները Կենտրոնական Աֆրիկայում ստեղծեցին Ռոդեզիայի ու Նյասալենդի ֆեդերացիան (որը քայքայվեց, ինչպես նաև Հարավ-արևելյան Ասիայում՝ «Մալայզիա» անունով ֆեդերացիան, որի մեջ մտնում էին Մալայան, Հյուսիսային Բոռնեոն, Սարավաքը, Սինգապուրը և Բրունեյը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «միավորիր և իշխիր» սկզբունքը առաջնակարգ սկզբունք է դարձել ոչ միայն մետրոպոլիայի համար՝ նրա հարաբերություններում գաղութների ու արբանյակների հետ, այլև իմպերիալիստական տերությունների մյուս խմբերի համար։ ԱՄՆ-ի նեոգաղութարարները «Միավորված Եվրոպայի» քաղաքականություն էին վարում, որպեսզի դիմանային «Արևելքի ճնշմանը»։ Այնուհետև երևան եկան «յոթնյակի» և «վեցյակի» երկրները։ Ամերիկայի իմպերիալիստներն առաջվա նման կողմնակից են եվրոպական «ընդհանուր շուկային», որտեղ նրանք առաջին ջութակն են նվագում։ Սակայն այդ հասկացողության մեջ դը Գոլը ուրիշ բովանդակություն է դնում՝ ստեղծել միասնական քաղաքական-տնտեսական եվրոպական մի այնպիսի օրգանիզմ, որն ազատ լինի անգլո-ամերիկյան դաշնակիցների թելադրանքից։

Նեոգաղութատիրության «միավորիր և իշխիր» նոր տակտիկան ոչ թե փոխարինում, ինչպես ենթադրում են ոմանք, հին Հռոմի «բաժանիր և իշխիր» տակտիկային, ոչ թե հակադրվում է նրան, այլ լրացնում է այն, իրենից ներկայացնում է մեդալի մյուս երեսը։ Դիմելով նոր սկզբունքին, գաղութարարներն ամենևին էլ չեն հրաժարվել իրենց սիրելի «բաժանիր և իշխիր» իմպերիալիստական քաղաքականության հին մեթոդից։ Մենք արդեն գիտենք, թե ինչպես են այն կիրառում նեոգաղութարարները պատերազմական բախումների ժամանակ։ Խաղաղ ժամանակ «բաժանիր և իշխիր» քաղաքականությունը իրագործում են տնտեսական ճնշման մեթոդներով և մի ժողովրդին մյուսի դեմ գրգռելու միջոցով։ Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, որ աշխարհում հաշտություն ու, առավել ևս, միավորում ճնշողների ու ճնշվածների միջև չի կարող լինել։ Գաղութների ու մետրոպոլիայի շահերը անտագոնիստական են։ Եվ այն, որ նեոգաղութարարները «իրավահավասարության», «ինտեգրացիայի» քաղաքականություն են հռչակել, չի փոխել դրությունը, այլ, ընդհակառակը, ինչպես վկայում են վերջին փաստերը, վատացրել, բարդացրել է այն։ Ժամանակակից գաղութարարների այն ձևակերպմանը, թե «Ալժիրը Ֆրանսիա է, իսկ Ֆրանսիան մենք բոլորս ենք», ճնշվածները հակադրեցին իրենց ձևակերպումը՝ «Ալժիրը Ֆրանսիա չէ, Ալժիրը մենք ենք՝ ալժիրցիներս»։

[1] А. К. Дживелегов, Армения и Турция, М., 1946, стр. 10.

§ 125 ՀԻՆԸ ՆՈՐ ԵՐԱՆԳՈՎ։ Ալժիրցիները 130 տարում տեսել են գաղութարարներ Կարլոս X-ին, Նապոլեոն III-ին և երկրորդից մինչև հինգերորդ ռեսպուբլիկայի պարագլուխներին, «ամենաձախ» սոցիալիստներից սկսած մինչև «ամենից աջ» բուրժուական պարտիաները։ Դրանց միջև տարբերությունը միայն գաղութային ժողովուրդների կեղեքման տակտիկական եղանակների մեջ է։ Ֆրանսիական միության քաղաքականությունը մեծապետական ֆրանսիական կայսրության քաղաքականության շարունակությունն է։ Ֆրանսիական միության ղեկավարներն էլ ֆրանսիական նախկին թագավորների ու կայսրերի պես ձգտում են «Ֆրանսիայի վեհությանը», գաղութային գերշահույթի աղբյուրների պահպանմանը։

§ 126. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր, Ո՛Չ, ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԽԱՂ։ Ճնշված ժողովրդին իրենց պետական կարգերը պարտադրելով, գաղութարարներն այդ բանին տալիս են «իրավաբանական», այսպես ասած, «օրինական» ձև։ Օրինակ, ֆրանսիական կեղեքիչները իրենց երկրում ստեղծելով «առաջավոր դեմոկրատական» կարգեր, մեծահոգությամբ դրանցով «երջանկացրին» գաղութների ժողովուրդներին, որոնք, տեսնո՞ւմ եք, առաջ ճնշված էին, իսկ հիմա դարձել են Ֆրանսիական միության «իրավահավասար» քաղաքացիներ։

Հայտնի է, որ «ալժիրյան ընտրություն» արտահայտությունը համաշխարհային «անվանում» է ստացել։ Նա դարձել է ժամանակակից նեոգաղութարարների երկերեսանությունը, երեսպաշտությունը ու անզուսպ դեմագոգիան բնութագրող հասարակ անուն, «ամենախայտառակ ընտրական մեքենայությունների որակման»[1] արտահայտություն։ Ճիշտ է, ալժիրյան ժողովրդի համար այդ «ընտրությունները» արդեն անցած էտապ են, բայց դրանց մասին պետք է խոսել, քանի որ նման երևույթները պատմություն չեն դարձել ուրիշ ժողովուրդների համար։

Ալժիրցիները «ազատ ընտրության» իրավունք ստացան

[1] Р. Аваков, Вступительная статья к книге К. и Ф. Жансона «Алжир вне закона», стр. 10.

«Ալժիրի օրգանական ստատուտի» 1947 թվականի սեպտեմբերի 20-ին հռչակված օրենքով։ Այդ օրենքը, ինչպես արդեն գիտենք, նրանց տվեց «Ֆրանսիական միության քաղաքացու», իրենց «ազգային», ալժիրյան, ասամբլեան ունենալու իրավունք, որտեղ բնիկները կարող են «ազատորեն» ընտրել Ալժիրի «գերագույն» պետական օրգանը։ Իսկ ինչպե՞ս էին տեղի ունենում այդ «ազատ» ընտրությունները և ի՞նչ էր ներկայացնում այդ «գերագույն» օրգանը։

Նախքան առաջին հարցին պատասխանելը, մի քանի խոսք այն մասին, թե ինչպես էին թեկնածուներ՝ «ժողովրդի ներկայացուցիչներ» առաջադրվում։ Ձևականորեն նրանց առաջադրում էին հասարակական կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները՝ իսկ փաստորեն՝ կառավարությունը. գաղութային մարմինները վաղօրոք կազմում էին նրանց ցուցակը, իսկ այնուհետև դրանք պարտադրում «ժողովրդին»։ Առաջադրվածներին ընտրում էին ոչ թե ընտրողները, այլ, ինչպես ճիշտ նկատել է մի տեսաբան, «քվեատուփերը», այսինքն՝ նույն կառավարությունը. այնպես էր կազմակերպվում, որ նեոգաղութարարներին հաճելի «ժողովրդի դեպուտատներն» անպայման «ընտրվում էին»։

Այդ «նշանակում-ընտրությունների մեթոդը զայրույթ է առաջացնում յուրաքանչյուր ազնիվ մարդու մեջ, սակայն գաղութարարներն այն ներկայացնում են իբրև «իսկական դեմոկրատիա», նորագույն նվաճում։ Արժե այստեղ մի քաղվածք բերել 1949 թվականի ընտրությունների կապակցությամբ ֆրանսիացի մի պաշտոնյայի ներքին գործերի մինիստրին հասցեագրած նամակից։ «Դեպուտատին ընտրողները չընտրեցին, նրան կառավարությունը նշանակեց այնպիսի փորձված մեթոդներով, որ նրան թելադրում էր դառը փորձը Ալժիրում։ Այս փաստն անվիճելի է։ Ավելին։ Այն չեն թաքցնում։ Պաշտոնյաներից և ոչ մեկը (որոնց ես պատահել եմ) ոչ մի անգամ չի փորձել ժխտել, որ Ալժիրում ընտրությունը կառավարության գործն է։ Բոլորն ինձ այդ մասին ասում էին առավել կամ պակաս բացահայտորեն։ Նրանցից մեկը ինձ որոշակիորեն հայտարարեց մեր կոլեգա Պիեռ Անրի Տեյժենի ներկայությամբ, որ ինքը կատարում էր ստացած հրամանները, որ ին-

քը «ընտրություններ էր խաղում», քանի որ այդ էին ասում իր ստացած հրահանգները...[1]

Այդ նույն մարդը 1955 թ. հուլիսի 29-ին Ֆրանսիայի ազգային ժողովի ամբիոնից հայտարարեց. «Ես հետևել եմ Ալժիրում շատ ընտրությունների ու կարող եմ առանց վախենալու ասել, որ եթե պատահականորեն մեկն ու մեկն իսկապես ընտրվում է, այսինքն՝ մարդուն ընտրում են ընտրողները, այլ ոչ թե քվեատուփերը, ապա դա մի յուրատեսակ դժբախտ դեպք է։ Այդպիսի բարքերի արդարացման համար բազմաթիվ փաստարկներ էին բերում։ Մեզ ասում էին, որ թեկնածուների մեջ կան վատ ֆրանսիացիներ, որ նրանց մեջ կան վտանգավոր մարդիկ... Կեղծումը կատարում էին անխնայ ու անշնորհք կերպով»։

Ինչպես տեսնում ենք, այն դեպքը, երբ ընտրողներն իսկապես ընտրում են իրենց դեպուտատին, այնքան հազվադեպ էր, որ այդ պարոնը նման դեպքն անվանում է «մի յուրատեսակ դժբախտ դեպք»։ Ֆրանսիայի կառավարող շրջանները մշակել էին ընտրությունների այնպիսի կարգ, որը հնարավորություն էր տալիս իրենց ցանկացածն անել։ Իսկ նրանք շատ բան չէին ցանկանում՝ ունենալ իշխանության գերագույն օրգանի այնպիսի կազմ, որի դեպուտատները կատարեն երկու խնդիր՝ ա) ծափահարեն, երբ Ֆրանսիայի ղեկավարները հանդես են գալիս ասամբլեայի բարձր ամբիոնից և բ) առանց մտածելու քվեարկեն Փարիզից առաջարկված օրինագծերի օգտին։

Եվ պետք է ասել, որ նրանց հաջողվում էր ջոկել Ալժիրի ասամբլեայի համար իրենց անհրաժեշտ դեպուտատներ։ Դրանց մեջ համարյա չէին մտնում «վատ ֆրանսիացիները» կամ «վտանգավոր մարդիկ», այսինքն՝ ժողովրդի իսկական ներկայացուցիչները, որոնք բոյկոտում էին այդ «ազատ ընտրությունները» և գաղութարարների դեմ պայքարում հանուն Ալժիրի ազատության ու անկախության։

Ահա թե, օրինակ, իրենից ինչ էր ներկայացնում Ալժիրի առաջին ասամբլեայի դեպուտատների կազմը։

[1] Ցիտատները բերվում են Կ. և Ֆ. Ժանսոնների «Ալժիրը օրենքից դուրս» (ռուս.) գրքից։

«Անկախականներ» (գաղութարարների թեկնածուներ)—43

ԴԱՀՇ (Դեմոկրատական ազատությունների հաղթանակի շարժում)...9

ԱՄՀԴՄ (Ալժիրյան մանիֆեստի հաղթանակի դեմոկրատական միություն)...9

Իմպերիալիստական երկրները իրենց ընտրական սիստեմը լայնորեն ներկայանում են որպես դեմոկրատական։ Սակայն իրականում, ինչպես նշվում է ՍՄԿՊ ծրագրում, «ժողովրդական մասսաներին զրկում են իրենց կամքն արտահայտելու և իրենց շահերի իսկական պաշտպաններ ընտրելու հնարավորությունից։ Իրենց ձեռքին ունենալով այնպիսի հզոր միջոցներ, ինչպիսիք են կապիտալը, մամուլը, ռադիոն, կինոն, հեռուստատեսությունը, օգտագործելով արհմիություններում և մյուս մասսայական կազմակերպություններում իրենց դրածոներին, մոնոպոլիստները մոլորեցնում են ժողովրդական մասսաներին, ընտրողներին պարտադրում են իրենց թեկնածուները»[1]։

Իսպանացի մի գեներալ ասել է. «Հաղթելը դեռ չի նշանակում համոզել»։ Այդ իսկապես այդպես է. համոզելու համար հարկավոր է շահել ժողովրդի համակրանքը, կամքը, իսկ դրա համար հարկավոր են ոչ թե գնդակ, բռնություն ու մեքենայություն, այլ խաղաղ, ազատ ընտրություններ։ Դրա համար հարկավոր է, որ յուրաքանչյուր քաղաքացի դեպի քվեատուփերը գնա առանց վախի և ձայն տա իր խղճի թելադրանքով։ Սակայն այն մարդիկ, ովքեր զավթել են ժողովրդի իշխանությունը, հասկանալի պատճառով չեն կարող դիմել այդպիսի ընտրությունների, քանի որ այնտեղ, ուր իշխում են ճշմարտությունն ու ժողովրդի կամքը, տեղ չունեն կեղծիքն ու բռնադատիչները։

Իսկ այժմ նրանք կարող են կեղծել։

Ալժիրի գեներալ նահանգապետի «հաջող» ընտրությունից հետո, ահա թե սոցիալիստ Մարսել Էդմոն Նեժլենը «ժողովրդի» անունից ինչպես խոսեց «ժողովրդական քվեարկության» մասին, այն մասին, թե ինչպես ընտրողները «հայտե-

[1] ՍՄԿՊ ծրագիր, Երևան, 1961, էջ 39։

նասիրական խանդավառությամբ» քվեարկում էին «իրենց դեպուտատների օգտին»։

«Ես ուրախ եմ,— ասում էր նա,— որ Ալժիրի բնակչությունը, կատարյալ հանգստություն պահպանելով, կատարեց իր ընտրական պարտքը։ Դրա համար շնորհակալ եմ նրանից։ Հանրապետական օրենքների հովանու տակ, ստատուտի շրջանակներում, հարգելով բոլոր դավանանքները և բոլոր մարդկանց՝ առանց նրանց ծագման խտրության, միահամուռ ավյունով առաջ շարժվենք դեպի ազատություն ու եղբայրություն, դեպի ավելի ու ավելի բարձր դեմոկրատիա...»։

Ինչպի՜սի հուզիչ խոսքեր... Սոցիալիստ-Նեժլենը կոչ է անում միասնական ավյունով ընթանալ դեպի երջանիկ կյանք՝ դեպի ազատություն ու եղբայրություն, առանց ծագման խտրության, հարգելով բոլոր դավանանքները և բոլոր մարդկանց։

Եվ նա չի թաքցնում, թե հանուն ինչի՞ է մարդկանց կոչում այդ բանին։ Ասամբլեայի բացման ժամանակ՝ 1948 թվականի մայիսի 28-ին արտասանած իր ճառում նա հայտարարեց. «Ֆրանսիայի մտադրությունը պարզ է... Մենք ուզում ենք 8 միլիոն ալժիրցիներին դարձնել 8 միլիոն իրավահավասար քաղաքացիներ... Իմպերիալիզմը տեղացի ժողովրդին ուժով պարտադրում է հպատակվել տիրող ժողովրդին և այս բոլորը զզվանք են պատճառում մեզ... Սակայն հարկավոր է հասկանալ, որ այստեղ գալով այն համոզմունքով, որ Ալժիրը կարող է ազատ ու երջանիկ լինել միմիայն ֆրանսիական Ալժիր լինելիս, մենք երբեք մեր մտքով չէր անցնում, որ նրա ճակատագիրը կարող է անջատվել Ֆրանսիայի ճակատագրից...»։

Ահա թե ինչպես են ժամանակակից գաղութարարները խոսքով հանդես գալիս իմպերիալիզմի դեմ, իսկ գործով ամենամոլի իմպերիալիստական քաղաքականություն վարում։

§ 127. ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ։ Ինչպես նշվեց, նեոգաղութատիրության քաղաքականություն վարող երկրները պարծենում են իրենց «դեմոկրատիայով», «դավանանքի ազատությամբ»։ Թվում էր, թե նրանք չպետք է խառնվեին հավատացյալների գործերին։ Բայց բնավ էլ դա

այդպես չէ։ Ժամանակակից գաղութարարները ոչ միայն վերահսկում են մարդկանց կյանքի բոլոր կողմերը, այլև ամենուրեք ու ամեն ինչ դարձնում իրենց ներքին ու արտաքին քաղաքականության գործիք։ Պարզ է, որ նրանք չեն կարող հանգիստ թողնել ու հանգիստ չեն թողնում ո՛չ քրիստոնեական եկեղեցիներին, ո՛չ մահմեդական մզկիթներին, ո՛չ էլ հրեական սինագոգաներին։

Դրա ցայտուն վկայությունն է ֆրանսիական գաղութարարների քաղաքականությունն Ալժիրում, մասնավորապես՝ «Միշելի շրջաբերականը»։ Միշելը 1933 թվականին Ալժիրի պրեֆեկտուրայի գլխավոր քարտուղարն էր։ Շրջաբերականը թեև պաշտոնապես նրա անունը չի կրում, բայց փաստորեն կառավարության կարգադրությունն է։ Համաձայն այդ հրամանի,

ա) յուրաքանչյուր դեպարտամենտում կառավարական պաշտոնյայի նախագահությամբ ստեղծվում են «պաշտամունքի հարցերի կոնսուլտատիվ կոմիտեներ»։

բ) խիստ հսկողություն է հաստատվում այն ուսուցիչների նկատմամբ, որոնց վրա կասկածում էին «Ֆրանսիայի գործը ջլատելու» ձգտումների մեջ.

գ) միայն իմամներին և մուֆտիներին էր թույլատրվում քարոզել մզկիթներում, մինչդեռ, ըստ մուսուլմանական սովորույթի, ամեն մի գիտնական հրապարակայնորեն հանդես գալու իրավունք ունի։

Առաջին երկու կետերը մեկնաբանության կարիք չեն զգում, Արրորդի իմաստը նույնպես պարզ կդառնա, եթե հաշվի առնենք, որ Ֆրանսիայի գաղտնի ոստիկանությունը իմամների և մուֆտիների մեծ մասին դեռևս 1933 թվականից շատ առաջ գնել էր և նրանք այդ ոստիկանության գործակալներն էին։

Իսկ գաղութարարների լակեյները պնդում էին, որ «միայն Ֆրանսիան է ապահովում անհատի անձեռնմխելիություն... դավանանքի հարգանք»։ Ինչպիսի՜ կեղծիք։ Ուլեմների ղեկավարներից մեկը, շեյխ Լարբի Տեբերսին, իրավացի կերպով պնդում էր, որ «նրանք, ովքեր ղեկավարում են պաշտամունքը, ոգեշնչված են ոչ թե ղուրանով ու տրադիցիայով, այլ գեներալ-նահանգապետի գրասենյակից ստացած ցու-

ցումներով։ Իզուր չէ, որ Ալժիրի ժողովրդի մեջ ցածրաձայն լրամատում էին, թե Ալժիրում մահմեդական դավանանքի ղեկավարը սոցիալիստական կուսակցության անդամ է, իսկ նրա քարտուղարը՝ ֆրանսիական հետախուզության գործակալ։ Եվ այդ բանը տեղի էր ունենում Հոլբախի երկրում, որը պատմության մեջ մտել է իբրև «աստծո անձնական թշնամին», Վոլտերի երկրում, մի մարդ, որի առջև դողում էին Եվրոպայի միապետներն ու Հռոմի պապը, Ժան Ժակ Ռուսոյի երկրում, որը բուրժուական դեմոկրատական մտքի զարգացման նոր էջ գրեց։

Իհարկե, այստեղ զարմանալու բան չկա։ Ժամանակակից գաղութարարներն ամենուրեք այդպես են գործում։ Հիտլերը Բորմանին ասել էր. «Լեհերը կաթոլիկ կմնան, լեհ քահանաները մեզանից սնունդ կստանան, բայց դրա դիմաց իրենց գառնուկներին կքշեն մեզ համար ցանկալի ուղիով։ Քահանաներին մենք կվարձատրենք, դրա համար նրանք կքարոզեն մեր ուզածը։ Եթե գտնվի մի քահանա, որը ցանկանա այլ կերպ գործել, ապա նրա հետ կարճ կկապենք։ Քահանայի խնդիրն է, որ լեհերին պահի հանգիստ, հիմար ու բթամիտ։ Այդ բանը լիովին ձեռնտու է մեզ»[1]։

§ 128. ԳԱՂՈՒԹՔ ՎԱՃԱՌԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՀՈՒՄՔԻ ՇՈՒԿԱ Է, ՄԵՏՐՈՊՈԼԻԱՅԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԲԱԶԱ։ Հենվելով իրենց գործադիր, օրենսդիր և դատական իշխանության օրգանների վրա, իրենց մեծաքանակ գաղութային բյուրոկրատական տեղական ապարատի վրա, ֆրանսիական գաղութարարներն Ալժիրը դրավելու պահից այն դարձրին գյուղատնտեսական բազա ինդուստրացվող մետրոպոլիայի համար, թույլ չտալով, որ զարգանա ազգային արդյունաբերությունը։ Արտադրողական ուժերի զարգացումը պլանաչափ կերպով կասեցվում էր։ Որոշ իմաստով չէին խանգարում դաշտավարությանը, անասնապահությանը, բանջարաբուծությանը (ծովափնյա գոտում), գինեգործության զարգացմանը։

Ճիշտ է, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

[1] Нюрнбергский процесс, том I, стр. 850.

ստեղծվեցին վերամշակող արդյունաբերության մի քանի նոր ձեռնարկություններ, մետալուրգիական, մետաղամշակման, քիմիական և ապակու փոքր գործարաններ, տեքստիլ ֆաբրիկաներ, սակայն դրանք ստեղծվել էին այնպես, որ լիովին կախում ունեին մետրոպոլիայից։ Տրանսպորտի զարգացումը նույնպես ծառայում էր գաղութները կողոպտելու և այնտեղ Ֆրանսիայի տիրապետությունն ամրապնդելու նպատակներին։

Երկաթուղային ցանցն ուներ 4360 կմ (1946 թ.), խճուղային ցանցը՝ 7,1 հազար կմ երկարություն, որոնք միմյանց էին կապում երկրի բոլոր նավահանգիստները։ Օրան-Կոլոմ-Բեշիր երկաթուղին անդրսահարային ուղու բաղկացուցիչ մասն է։

§ 129. ԳԵՆՈՑԻԴԻ՝ ԲՆԻԿՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Ինչպես ասվեց, բնիկների ֆիզիկական, բնաջնջման քաղաքականությունը մասամբ իրագործվում է զուտ ռազմական մեթոդներով՝ գաղութային կամ ենթակա ժողովրդի բիոլոգիական պոտենցիալը սահմանափակելու նպատակով։ Սակայն բանը դրանով չի ավարտվում։ Այն իրագործվում է դյխավորապես պետական-վարչական և գաղափարական մեթոդներով, երբ բնիկները չեն ենթարկվում միաձուլման քաղաքականությանը և ձգտում են պահպանել իրենց ազգային դեմքը։

Առաջին գլխում հանգամանորեն խոսվեց Հրեաստանում հռոմեական կայսրության վարած քաղաքականության մասին։ Հռոմեական գաղութարարներն հարձակվում էին հուդաների վրա, կազմակերպում ջարդեր և նրանց բնաջնջում լոկ այն բանի համար, որ չէին ենթարկվում ազգալուծման քաղաքականությանը և ջանում էին պահպանել իրենց, իբրև ժողովրդի, ինքնուրույնությունը։

Ոչնչացման քաղաքականությունը այժմ դարձել է XX դարի բարբարոս ու ռազմամոլ գաղութարարների վարքագծի սովորական նորման։

Ճնշված ժողովուրդների ֆիզիկական ոչնչացման հռոմեական քաղաքականության վերականգնման առաջնությունը, իհարկե, պատկանում է Թուրքիայի նախկին պարագլուխնե-

ռին, մասնավորապես նրա տրիումվիրատին (Էնվերին, Թալեաթին և Ջեմալին)։ Նրանք իրավամբ համարվում են Թուրքական հիտլերներ, հիմլերներ ու այխմաններ, իրենց եվրոպական եղբայրների կնքահայրեր։ Եվրոպական Էնվերներն ընդօրինակեցին Թուրքական փորձը, բայց այն կիրառեցին մահվան առավել ժամանակակից միջոցներով, մինչդեռ նրանց Թուրք հոգևոր հայրերը գործում էին համեմատաբար պարզունակ տեխնիկայով։

§ 130. ԳԵՆՈՅԻԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ։ Բնիկների (օրինակ՝ տվյալ դեպքում հայերի) ոչնչացման քաղաքականությունը, կրկնում ենք, հետապնդում էր երկու նպատակ՝ տնտեսական ու քաղաքական։ Թուրք գաղութարարների տնտեսական նպատակն էր «առհավետ» տիրել Հայաստանի արգավանդ հողերին, քաղաքական նպատակն էր, Բ. Բորյանի խոսքերով ասած, «Միջազգային դիվանագիտական շրջանառությունից հանել հայկական հարցը որպես միջազգային իրավունքի հարց և որպես մեծ տերությունների կողմից Թուրքերի գործերին միջամտելու օբյեկտ»[1]։

§ 131. ԱՐՏԱՄՂՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Այս քաղաքականությունը ծառայում է ոչնչացման նպատակներին, նրա լրացումն իրագործվում է այլ եղանակով։ Բանն այն է, որ գաղութարարները չեն կարող բավարարվել միայն ֆիզիկական բնաջնջման քաղաքականությամբ, առանձնապես այն ժամանակ, երբ գործ ունեն բազմամիլիոն ժողովրդի հետ և ստիպված են հաշվի նստել համաշխարհային հասարակական կարծիքի հետ։ Այն հաճախ իրագործվում է ռազմական անհրաժեշտության պատրվակով, ուստի հասկանալի է, որ խաղաղ ժամանակ դժվար է այն կիրառել լայն չափերով։ Այդ պատճառով, կամ զուգահեռաբար, կամ առանձին, նրանք վարում են ուրիշ քաղաքականություն՝ արտամղման քաղաքականություն։ Դրա էությունն այն է, որ դիմում են բռնությունների, ստեղծում՝ սով, հարկադրանքի միջոցներով բնիկներին դնում ծանր հարկեր, ստիպում են լքել հարազատ վայրերը և

[1] Б. Борьян, Армения, международная дипломатия и СССР, М.—Л., Госиздат, часть 2, 1929, стр. 62.

«երջանկություն» որոնել ուրիշ վայրերում ու երկրներում։ Եվ հայրուր հազարավոր հայեր «կամավոր կերպով» գնացին սուլթանական Թուրքիայի ու ցարական Ռուսաստանի ուրիշ շրջաններ ու քաղաքներ, ինչպես նաև այլ երկրներ։

Արտաքսման քաղաքականության Թուրքական մեթոդներն առանձնապես անսքող ու վայրագ էին։

Ահա մի քանի փաստեր ևս։

1942 թվականի նոյեմբերի 11-ին Թուրքական մեջլիսն ընդունում է № 4305 հարկային նոր օրենքը, ըստ որի, ինչպես գրել է «Նյու-Յորք Թայմս» թերթի ամերիկյան թղթակից Սուլցբերգերը, Թուրք առևտրականը պետությանը վճարում էր իր տարեկան եկամտի 4,7 տոկոսը, հույն առևտրականը՝ 156, հրեան՝ 179, հայը՝ 232 տոկոսը, այսինքն՝ հույնը վճարում էր Թուրքից 31, հրեան՝ 36, իսկ հայը՝ 47 անգամ շատ։ Պարզ է, որ այդպիսի հարկային քաղաքականությունը պետք է քայքայեր ազգային փոքրամասնություններին և աղքատության դիրկը գցեր նրանց։ Պետությունը դրանից ստանում էր մի այնպիսի գումար, որն ավելի քան մեկուկես անգամ գերազանցում էր Թուրքիայի նախապատերազմյան ժամանակվա տարեկան բյուջեն։ Կամ ահա ոչ պակաս արտառոց մի փաստ ևս։ Ստամբուլի ամերիկյան հիվանդանոցի վրա Թուրքական իշխանությունները դրել են 2500, իսկ հայկական հիվանդանոցի վրա՝ 30 000 լիրա հարկ։

Արտամղման այն քաղաքականությունը, որ ֆրանսիացիները վարում էին Ալժիրի ժողովրդի նկատմամբ, շատ քիչ բանով էր տարբերվում ժամանակակից Թուրքական քաղաքականությունից։ «Հարկավոր է աննկատելիորեն, բայց շարունակ ու անգթորեն կրճատել նրանց (ալժիրցիների— Հ. Ս.) քոչվորության տերիտորիան և հարկերի միջոցով շարունակ նրանց գոյությունը դարձնել այնքան տանջալի, որ եթե ուզենան ապրել, մի գեղեցիկ օր կանգնեն երկընտրանքի առջև՝ խռովություն բարձրացնել (այսինքն՝ նրանց հրահրել վաղաժամ ապստամբության, որպեսզի բաց մարտում բնաջնջեն— Հ. Ս.), կամ դառնան Ֆրանսիայի զինվորներ»[1]։ Այսպես

[1] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 50.

էր ասում հերցոգ Իսլիցին։ Մի ուրիշ խորհրդատու հայտարարել է. «Եթե Ֆրանսիան լրջորեն ուզում է քաղաքակրթել Ալժիրը և հօգուտ բոլոր ժողովուրդների այնտեղից կորզել զանազան հարստություններ, որոնք անշարժ ընկած են, հանուն հանրային բարիքի անհրաժեշտ է, որ նա գրավի բնիկների բոլոր հողերը։ Մենք ժամանակ չունենք քննարկել իրավունքի հարցերը և հրաժարվել... ոչնչացման ու արտաքսման գաղափարից»[1]։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ռայխֆյուրեր (Հիմլերի ցուցումով Գեստապոյի բարձրաստիճան պաշտոնյաները կազմել էին «Օստ» կոչվող մի պլան, որով նախատեսված էր 20 տարվա ընթացքում բոլոր բելոռուսների 75 տոկոսը արտաքսել իրենց հայրենիքից, իսկ մնացածներին գերմանացնել[2]։ Գերմանական գաղութարարները նույնպես պլաններ էին կազմել նաև Եվրոպայի մյուս ժողովուրդների համար։

§ 132. ԲՆԻԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Այս քաղաքականությունն արտամղման, արտաքսման քաղաքականությունից տարբերվում է նրանով, որ նախապես ծրագրվում է, թե ուր են քշվելու տեղացիները, մինչդեռ արտամղման քաղաքականության մեջ դա հանգամանորեն հաշվի չի առնվում։ Սակայն երկուսի մեթոդներն էլ մեծապես համընկնում են։

Պարոն Բյուժոն իր «Հիշողություններում» (1846 թ.) նշում է, որ առաջին անգամ հարկադիր տեղափոխման տեսությունը ֆրանսիացիների մոտ երևան է եկել 1840 թվականին, այսինքն՝ Ալժիր ներխուժելուց տասը տարի հետո։ Այդ տեսության մեջ նա գտավ «Ֆրանսիայի իրավունքը՝ ցեղերը տեղափոխել այնպես, ինչպես ինքն է ցանկանում»։ Թվականն այստեղ ճիշտ չէ նշված։ Ինչ խոսք, ֆրանսիացիները մյուս բոլոր օկուպանտների նման, այդ «իրավունքից» օգտվում են ուրիշի հողերը զավթելու առաջին իսկ օրվանից։ Իսկ ինչ վերաբերում է «տեղափոխման տեսության» էությանը, ապա պարոն Բյուժոն ճիշտ է հասկացել այն։

[1] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 50.
[2] Журнал «Новое время», № 14, 1962, стр. 18.

Հարկադիր վերաբնակեցման գաղութային քաղաքականությունը հետևյալ նպատակներն է հետապնդում.

ա) բնիկներին արտաքսել լավագույն հողերից կամ այն տեղերից, որոնք ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեն.

բ) ամայացնել գաղութարարների համար վտանգավոր ու անհանգիստ տարրերով բնակեցված շրջանները.

գ) բնիկներին արտաքսել այնպիսի անմարդաբնակ վայրեր, որոնց յուրացումը օգտավետ է նոր տերերին.

դ) վերաբնակեցման ընթացքում բնիկներին ենթարկել զրկանքների, հասցնելով մահվան դուռը, կամ, ընդհակառակը, նրանց նկատմամբ ցուցաբերել պատշաճ հոգատարություն՝ ելնելով այն բանից, թե ինչն է համապատասխանում «պետության բարձրագույն շահերին».

ե) նրանց վերաբնակեցնել նոր միջավայրի հիմնական բնակիչների մոտ՝ առաջինների ազգալուծման նպատակով.

զ) վերաբնակեցման վայր ընտրել այն հողերը, որոնք մետրոպոլիայի տնտեսական ու ինդուստրիալ հզորության ամրապնդման տեսակետից կարևոր են, և օգտագործել նորաբնակների աշխատուժն ու տաղանդը։

Պարսկաստանի շահնշահերը զանազան պատրվակներով հաճախ հայերին ու վրացիներին մետրոպոլիա են քշել նրանց ֆիզիկական ու հոգևոր ուժերի օգտագործման և ազգալուծման նպատակով։ Շապուհ II-ը 368 թվականին Պարսկաստան տարավ 700 հազար հայերի։ Շահ Աբբասը 1605 թվականին կազմակերպեց համատարած գաղթ, որը Հայաստանին հասցված մի այնպիսի հրեշավոր հարված էր, որից նա չկարողացավ ուշքի գալ ավելի քան 300 տարի։

Հայերի, ասորիների, քրդերի, հույների ոչնչացումը թուրքերը կատարում էին նաև վերաբնակեցման քաղաքականության պատրվակով։

Վերաբնակեցման թուրքական քաղաքականությունն այժմ գործադրվում է հիմնականում քրդերի նկատմամբ։ Դեռ երիտասարդ թուրքերի կառավարությունը Մուհամմեդ V սուլթանի օրոք որոշեց քուրդ բնակիչներին վերաբնակեցնել երկրի կենտրոնական շրջաններում թուրքերի հետ այն հաշ-

վով, ոպեսզի քրդերը Թուրքերի 5 տոկոսից ավելին չկազմեն։ Նույնպիսի որոշում ընդունեց Թուրքական կառավարությունը 1932 Թվականի մայիսի 5-ին՝ մի շարք քրդական ապստամբությունների կապակցությամբ։ Հասկանալի է, որ վերաբնակեցման այդ քաղաքականության արդյունքների մասին պաշտոնական տվյալներ չկան, սակայն 1935, 1940 և 1945 Թվականների մարդահամարների նյութերը ցույց են տալիս, որ Էլյազիգի, Գորուխի, Էրզրումի, Մուշի և Վանի վիլայեթների քուրդ բնակչության Թիվը 1935—1940 ԹԹ. կրճատվել է մոտավորապես 300 հազարով։ Ընդհանուր առմամբ արևելյան նահանգներից այլ շրջաններ են վերաբնակեցվել 500 հազար քուրդ[1])։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ռուսական զորքերը հայ կամավորական ջոկատների մասնակցությամբ ազատագրում էին Արևմտահայաստանի տերիտորիան, ցարական կառավարությունը տեղական գաղութային մարմիններին գաղտնի կերպով կարգադրել էր Թույլ չտալ, որ նվաճված վայրերում բնիկ հայ բնակչություն հաստատվի, պատվիրել էր այդ տեղերը Թողնել Ռուսաստանի կենտրոնի ռուս վերաբնակիչների համար։

Վերաբնակեցման քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Հարավ-Աֆրիկյան Միության բնիկները զրկվեցին իրենց երկրի հարստություններից օգտվելու հնարավորությունից, նրանք ներփակվեցին հատուկ շրջաններում։

Բնիկներին վերաբնակեցնելու քաղաքականությունը նեոգաղութարարներն անվանում են նաև բնիկների տեղաշարժ մետրոպոլիայից դեպի գաղութներ և գաղութներից մետրոպոլիա, մի քաղաքականություն, որն իբր Թե իրագործվում է տնտեսության «պլանաչափ» զարգացման նպատակով, «հօգուտ» բոլոր «ժողովուրդների», բայց իրականում կենսագործվում է հօգուտ մետրոպոլիայի, նրա բարձրագույն տրնտեսական նպատակի։

§ 133. ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՔԱՂԱ-

[1] См. вышеуказанную книгу С. С. Аванесова, стр. 48, 60, 62.

ՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Արտագաղթի քաղաքականությունը համարյա համազոր է արտաքսման քաղաքականությանը։ Մետրոպոլիայի մյուս միջոցառումների հետ միասին այն պատճառ է դառնում գաղութային ժողովուրդների Թուլացման, քայքայման։ Հիմնականում դրանով է բացատրվում այն, որ այժմ իրենց երկրներից դուրս ապրում են ավելի շատ իռլանդացիներ, սլովակներ, հրեաներ ու հայեր, քան իրենց ազգային տերիտորիաներում։ Ուստի սոսկ այդ երկրների պատմությունը չի կարող դառնալ այդ ժողովուրդների պատմություն, ճիշտ այնպես, ինչպես Հռոմի պապի մարզի պատմությունը չի կարող դառնալ կաթոլիկների պատմություն։

§ 134. ՄԵՏՐՈՊՈԼԻԱ ՆԵՐԳԱՂԹԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Վերջինս այլ երկրներ կատարվող արտագաղթի քաղաքականությունից տարբերվում է այն բանով, որ խիստ պլանավորված բնույթ է կրում։ Նախատեսվում է, Թե մետրոպոլիայի որ շրջաններն է հարկավոր վերաբնակեցնել նոր բնակիչներով, հաճախ նրանց համար «իրավահավասար», բարենպաստ պայմաններ են ստեղծում, մետրոպոլիայում կատարվող աշխատանքը համարելով «հայրենասիրական պարտք», «համապետական միջոցառում»։ Այդ ձևով Ֆրանսիա փոխադրեցին մոտավորապես մեկ միլիոն ալժիրցիների։

§ 135. ԳԱՂՈՒԹԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Մենք խոսեցինք արտագաղթի երկու քաղաքականությունների մասին։ Ֆիզիկական ընջնջման մեթոդը և արտաքսման ու վերաբնակեցման մեթոդը ժամանակակից գաղութարարների համար ոչ Թե ինքնանպատակ է, այլ միայն նպատակին հասնելու միջոց։ Այն, որ այդ մեթոդները տմարդի են, բնավ չի հուզում գաղութարարներին։ Նպատակն արդարացնում է միջոցները։ Այն օրվանից, երբ մետրոպոլիայի տերերը հաստատապես ոտք դրին ուրիշի տերիտորիա, նրանց կամքով սկսվեց մարդկանց երկու հոսանք՝ մեկը լքում էր հայրենի հողը և գնում ուրիշ երկրներ, մյուսը գնում էր գաղութ դառնալու գաղութաբնակ։

1830 Թվականին Ալժիրում ոչ մի եվրոպացի գաղութաբնակ չկար, իսկ տասը տարի հետո նրանց Թիվը հասավ 25 հազարի։ Միայն այդ կերպ գաղութարարները կարող են

ինչպես հարկն է ամրապնդել իրենց տիրապետությունը գաղութներում։ Մենք արդեն մեջ բերեցինք Բուժոյի այն խոսքերը, թե «միայն գաղութացումը կարող է ամրապնդել հաղթանակը»։ Նա ամեն ինչ անում էր, որպեսզի «Ամեն օր Ալժիր եկող վերաբնակիչների համար ապահովվեր գործունեության լայն ասպարեզ»։ Նրա գեներալ-նահանգապետության շրջանում, այսինքն՝ մինչև 1847 թվականի հունվարի 1-ը, Ալժիրում կար 109400 գաղութարնակ։ Բոլոր գաղութարարների ջանքերը հանգեցրին այն բանին, որ եկվոր տարրը բնիկների մի զգալի տոկոսը կազմեց։

Ահա Ալժիրի եվրոպական բնակչության աճի աղյուսակը։

Թվականներ	Օտարներ
1830	—
1839	25 000
1847	109 000
1860	200 000
1871	245 000
1881	376 000
1896	536 000
1911	752 000
1954	ավելի քան մեկ միլիոն[1]։

Գաղութարնակները յուրացնում են ոչ միայն նոր տերիտորիաները և ապահովում օկուպանտների «հաղթանակը», այլև ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը ճնշելու առավել հուսալի հարվածող ուժ են։ Մասնավորապես այդ է վկայում ֆրանսիական «ծայրահեղների» գործունեությունը։

Բայց հենց որ Ալժիրի ժողովուրդը իսկական անկախություն նվաճեց, այդ եկվորներն սկսեցին Ալժիրից փախչել այնպես, ինչպես առնետները սուզվող նավից։ Կարճ ժամանակում ավելի քան մեկ միլիոն օտարներից մինչև 1963 թվականի սկիզբը Ալժիրում մնաց 100 հազարից ոչ ավելի։

Մենք բերեցինք Ալժիրում ֆրանսիական գաղութա-

[1] Այս թվի մեջ չեն մտնում ֆրանսիական հպատակություն ընդունած մի քանի հազար օտարներ, ինչպես նաև 150 հազար հրեաներ։

յին քաղաքականության «օրինակներ», բայց ընթերցողը պետք է քաջ գիտենա, որ մյուս գաղութարարները նույն քաղաքականությունը վարում են ֆրանսիացիներից ոչ պակաս չափով։

Ազգային հարցի շուրջը ՌԿ(բ)Պ X համագումարի որոշման մեջ ասված է, որ ցարիզմը կեղեքում էր ոչ ռուս ժողովուրդներին, մասնավորապես կիրգիզներին, բաշկիրներին, չեչեններին, օսերին, ինգուշներին, «որոնց հողերը մինչև վերջին ժամանակներս գաղութացման օբյեկտ էին ռուս վերաբնակների համար, որոնք արդեն կարողացել էին նրանցից գավթել լավագույն վարելահողերը և նրանց սիստեմատիկաբար քշել դեպի ամայի տարածություններ։ Ցարիզմի քաղաքականության, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականության նպատակն էր այդ շրջաններում ավելի շատ կուլակային տարրեր հաստատել ռուս գյուղացիներից ու կազակներից, վերջիններիս դարձնելով մեծապետական նկրտումների հուսալի պատվար։ Այդ քաղաքականության արդյունքն այն է, որ աստիճանաբար մահանում են ամայի վայրեր քշված բնիկները (կիրգիզները, բաշկիրները)»[1]։

Ռուսական ցարիզմը նույնպիսի քաղաքականություն էր վարում ամենուրեք ու մասնավորապես Անդրկովկասում։

§ 136. ԱԶԳԱԼՈՒԾՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ։ Մի կողմից գաղութային ժողովուրդների ազգալուծումը և մյուս կողմից նրանց ուղղակի քայքայումն ու ոչնչացումը, ըստ էության, կազմում են միևնույն մեդալի երկու տարբեր երեսները՝ դա բնիկներից ազատվելու մետրոպոլիայի ընդհանուր քաղաքականություն էր։

Ազգալուծման (ապազգայնացման կամ ասիմիլացման) քաղաքականությունը առավել հին ղենք է, որ օգտագործում է գաղութատիրությունը։ Այդ քաղաքականությունն իրագործվում է մտրակով ու բլիթով։ Մեր գեղարվեստական գրականության մեջ բավական հանգամանորեն նկարագրվել է, թե գաղութարարներն ինչպես էին այդ քաղաքականությունն իրագործում հրով ու սրով։ Հիշենք թեկուզ Բաֆֆու «Սամվել»

[1] КПСС в резолюциях и решениях, издание седьмое, часть I, стр. 561.

հոյակապ վեպը։ Իսկ ինչ վերաբերում է բլիթին, ապա նշենք Շահ Աբասի մեթոդները։ Հայերին բռնությամբ Պարսկաստան քշելուց հետո Շահ Աբասը ջանում էր նրանց համար ստեղծել գոյության տանելի պայմաններ. վերաբնակներին տվեց հող, գյուղատնտեսական գործիքներ, պակասեցրեց հարկերը, անվանի հայերին մասնակից դարձրեց երկրի կառավարմանը, նրանց թույլ տվեց ոչ միայն քրիստոնեություն դավանել, այլև հրամայեց Նոր Ջուղայում կառուցել նոր էջմիածին։ Շահ Աբասը յուրաքանչյուր ցանկացող ընտանիքի 400 թուման փոխառություն-վարկ տվեց։ Հետաքրքրական է ծանոթանալ այդ վարկի պայմաններին։ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ բերում է այդ վարկի պայմանները.

«Իմ թագավորական գանձարանից տալիս եմ ձեզ այս դրամը (400 թուման — Հ. Ս.) ապրելու համար, բայց պայման եմ դնում և այդ պայմանով տալիս եմ... Արդ, բոլոր նրանք, ովքեր թագավորական գանձարանից դրամ են ստանում, պարտավոր են ժամանակին վճարելու և կլինեն ազատ։ Եվ եթե լինեն այնպիսիները, որոնք ժամանակին չվճարեն դրամը, այդպիսիները պարտավոր են կա՛մ հավատափոխ լինել և ընդունել Մահմեդի կրոնը, կա՛մ տալ մեզ աղջիկը կամ տղան... Եվ այժմվանից հայտնում եմ, որ նրանք, ովքեր բնավ դրամ չեն տա, պարտավոր են դրամի փոխարեն տղան մեզ ծախել չորս թումանով, իսկ կնոջը և դստերը՝ երեք թումանով»։

Պայմանաժամը երեք տարի էր։ Պարզ է, որ գաղթականների մեծամասնությունը, որն ստացել էր շահնշահի այդ գումարը, չէր կարողանա վարկը վերադարձնել և ստիպված էր ստրկության վաճառել իր հարազատներին, կամ իսլամ ընդունել։

Մենք գիտենք, թե ինչպես Արևելքի ու Արևմուտքի հզոր տերությունները դեռ հին դարերում մերթ առանձին, մերթ միասին, այսպես ասած, միացյալ ուժերով ձգտել են ազգալուծել հայ ժողովուրդը։ Պարսկաստանը և հռոմեական կայսրությունը Հայաստանը հեղեղում էին «հույն քահանաներով ու պարսիկ մոգերով, որոնք ազդեցիկ մի քանի նախարարների օգնությամբ պետք է նպաստեին հայերի ասիմիլացմանը։

Այն ժամանակ, երբ Հայաստանի վրա ծանրացան ահավոր ամպեր, որոնք սպառնում էին հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությանը, նրա ծոցից, ինչպես առասպելական Վահագնը եղեգնյա փողից, դուրս եկավ մի դյուցազնական ուժ՝ արևային Մեսրոպ Մաշտոցը, որը ցրեց խավարը և ժողովրդի հոգին ջերմացրեց հայրենասիրության անմար կրակով, մեծապես բարձրացնելով նրա ազգային ինքնագիտակցությունը»[1]։ Հանճարեղ Մեսրոպն իր երկաթագրերով հարազատ ժողովրդին տվեց մի ուղեգիր, որպեսզի նա վստահ քայլերով մտնի աշխարհի ժողովուրդների ընտանիքը և նրանց հետ ապրի հավերժական կյանքով։ Այդ հոգևոր անխորտակ զենքով նա կարողացավ հաջողությամբ կռվել բոլոր հետագա գաղութարարների ազգալուծման քաղաքականության դեմ։

Ազգալուծման քաղաքականությամբ՝ գաղութատիրության այդ հին զենքով այժմ էլ զինված են գաղութարարները։ Ստրկատիրական կայսրությունների կործանումից հետո այդ զենքը երբևէ չի օգտագործվել այնպիսի մասշտաբներով ու այնպես մտածված կերպով, պետական ապարատի ամբողջ զորությամբ, ինչպես այժմ, պետական կապիտալիզմի ժամանակ։ Նախ պարզենք, թե ինչ բան է ասիմիլացիան։ Լայն իմաստով ասիմիլացիան պետական մշակված սիստեմ է, որի նպատակն է ենթակա ժողովուրդներին դարձնել իշխող ազգի զուտ քանակական մեծացման ռեզերվ՝ մետրոպոլիայի տնտեսական ու ռազմական հզորությունն ամրապնդելու և նրա ու գաղութների հակամարտությունը վերացնելու համար։

Ասիմիլացիան, նեղ իմաստով, Վ. Ի. Լենինի բնորոշմամբ, մարդու «ազգափոխությունն է»։ Հարց է ծագում՝ ե՞րբ է մարդ կամավոր (առանց չակերտների) փոխում իր ազգությունը և մտնում մի ուրիշ ազգի մեջ։

Դա տեղի է ունենում գլխավորապես հետևյալ չորս պայմաններում։

ա) Երբ մարդ իր ազգը համարում է ցածր, ուստի և բարձր ռասայի մեջ է մտնում (նորմալ մարդը հաղիվ թե այսպես մտածի և անի)։

[1] **Гурген Севак**, Месроп Маштоц, создание армянских письмен и словесности, Ереван, 1962, стр. 12.

բ) Երբ կտրվում է հայրենիքից, իր ազգային ընդհանրությունից, իսկ նոր բնակավայրում հնարավորություն չի ունենում իր երեխաներին մայրենի լեզվով կրթություն տալ։

գ) Մահվան սպառնալիքի տակ։

դ) Երբ պետությունը իր ապարատի բոլոր միջոցներով վարում է «մեռած լեզվի ու կենդանի լեզվի քաղաքականություն»։

Ասիմիլացման միևնույն քաղաքականության այս տարբեր ասպեկտները իրագործվել ու իրագործվում են ոչ միայն կոպիտ ուժի միջոցով, այլև գաղափարական մշակմամբ։

1928 թվականի մարտին Թուրքիայում հրապարակվեց Թեհին Ալպոնի ծածկանունով ոմն Քոհենի «Թուրքացման տասը պատվիրանները»։ Ահա ժամանակակից ասիմիլյատորների այդ «դավանանքի» մի քանի «նմուշներ».

Թուրքացրու ընտանիքիդ անդամների անունները.

Խոսիր Թուրքերեն.

Երեխաներիդ ուղարկիր Թուրքական դպրոց.

Վանիր քո միջից համայնքի ոգին.

Մտերմացիր Թուրքերի հետ.

Հետաքրքրվիր Թուրքիայի հասարակական գործերով, և այլն։

Ազգալուծման քաղաքականությունը դարձել էր Թուրքական կառավարության պաշտոնական քաղաքականությունը։ Խոսքը վերաբերում է ոչ միայն պատասխանատու անձանց հայտարարություններին, այլև օրենսգրական որոշումներին։ Թուրքական սահմանադրության 88-րդ հոդվածը «Թուրքիայի բոլոր բնակիչներին «կրոնական ու ազգային պատկանելությունից անկախ...» ուղղակի հայտարարում է «Թուրքեր»։ Մենք արդեն հիշատակեցինք քրդերի վերաբնակեցման օրենքը, որ Թուրքական մեջլիսն ընդունել է 1932 թվականի մայիսի 5-ին։ Այդ օրենքով քրդերը զրկվում էին մայրենի լեզվից, որևէ կուլտուր-լուսավորական կամ հասարակական կազմակերպություն ունենալու իրավունքից։ Քրդերին պարզապես հայտարարում են «լեռնային Թուրքեր»։

Ազգալուծման քաղաքականության արևելյան մեթոդներից մեկը քրիստոնյաների մահմեդականացումն է։

«...Երկու հարյուր հազար հայերի,— նշում են Ջոն Պարկերը և Չարլզ Սմիթը,— գլխավորապես կանանց ու երեխաների, բռնությամբ մահմեդականացրին»։ Այդ բանն արվում է ոչ միայն մահվան սպառնալիքով, այլև ուղղակի կաշառքով։ Դիարբեքիրում Քեսո անունով մի հայ մահմեդականություն է ընդունում, դառնում Քյամիլ, որի համար տեղի ասիմիլյատորներից ստանում է 200 լիրա։ Ս. Ս. Ավանեսովը նշում է, որ Թուրքացման քաղաքականությունը մի առանձին կատաղությամբ էր իրագործվում հատկապես Վանի, Մուշի, Բաղեշի, Էրզրումի, Դերջանի, Էրզնջանի շրջաններում և այլ վայրերում, որտեղ առաջ հիմնական բնակչությունը կազմում էին հայերը։

Դա ազգալուծման քաղաքականության Թուրքական տարբերակն է։ «Առաջավոր» երկրների նույն քաղաքականությունը Թուրքականից տարբերվում է միայն տակտիկական եղանակներով։ Նրանք ստեղծում են տնտեսական, քաղաքական ու գաղափարական այնպիսի միջավայր, որ իրենք՝ «իրավահավասար» փոքր ժողովուրդները «կամավոր» կորցնում են իրենց ազգային դեմքը։

Իմպերիալիստական պետությունները, հասկանալի պատճառներով, ազգալուծման քաղաքականությանը տվել են ոչ թե սովորական, այլ իրավաբանական, միջազգային իրավունքի ուժ։ Լ. Օպենհայմը պնդում է, որ միջազգային իրավունքը «ընդունում է յուրաքանչյուր պետության, իբրև սուվերենի, բնական իրավասությունը իր քաղաքացիների թիվն ավելացնել նատուրալիզացիայի միջոցով»[1]։ Այդ «իրավունքը», ինչպես բոլորը, այնպես էլ Ֆրանսիան, օգտագործում են լիովին։ «Ազգալուծման քաղաքականությունը,— ասում են Ֆրանսիացի գրողներ Կոլետ և Ֆրանսիս Ժանսոնները,— այժմ ավելի, քան երբևէ, դարձել է մեր պաշտոնական քաղաքականությունը»։ Այդ քաղաքականության օգնությամբ Ֆրանսիան ձգտում էր հերքել այն կշտամբանքը, թե ուզում է իշխել Ալժիրում, չէ՞ որ Ալժիրը Ֆրանսիա է»[2]։

---

1 Л. Оппенгейм, Международное право, том I, полутом 2, стр. 223.

2 К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 98.

§ 137. «ՍԵՎ ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԻ» ԵՎ «ՍԵՎ ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ» ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ։ Բուրժուական բոլոր տեսությունները «բարձր ուցածր ռասաների» մասին, ռասիստական դատողությունները աֆրիկյան ժողովուրդների թերարժեքության մասին, այն մասին, թե նրանք անընդունակ են ինքնուրույն զարգացման, ինչպես նաև «իրավահավասարության» քաղաքականությունը վերջին հաշվով ծառայում են ժողովուրդների ոչնչացման քաղաքականությանը և նպատակ ունեն «հալՎերժորեն» տիրելու նրանց տերիտորիան։ Այժմ ամենամոդայիկ «տեսությունը» «իրավահավասարության» քաղաքականությունն է։ Այդ քաղաքականության օգնությամբ ֆրանսիական գաղութարարները պլանավորել էին Ասիայում ստեղծել «դեղին ֆրանսիացիների» կայսրություն, իսկ Աֆրիկայում՝ «սև ֆրանսիացիների» կայսրություն։ Ինչպես հայտնի է, անգլիացիներն էլ ուզում էին կազմակերպել «սև անգլիացիների» կայսրություն Աֆրիկայում և «դեղին անգլիացիների» կայսրություն Ասիայում, ինչպես և Հնդկական թերակղզու անգլերեն խոսող ժողովուրդների կայսրություն։ Այժմ այդպիսի ծրագրեր են փայփայում նաև այլ գաղութարարներ։

Ֆրանսիան ազգալուծման քաղաքականություն էր վարում ոչ միայն ութ միլիոն ալժիրցիների, այլև Աֆրիկայի գաղութային բոլոր ժողովուրդների և նույնիսկ այնպիսի տիրապետությունների բնակչության նկատմամբ, ինչպիսիք են Գվատելուպան և Մարտինիկան, որոնք մետրոպոլիայի ափերից 7000 կիլոմետր հեռու են գտնվում։ «1946 թվականի օրենքով այդ կղզիների[1] բնակիչները ճանաչվեցին որպես Ֆրանսիայի իրավահավասար բնակիչներ, որից հետո սկսվեց ազգալուծման քաղաքականության տենդագին կենսագործումը»,— խոստովանում է ֆրանսիացի լրագրող Մորիս Պոնսը[2]։

Ոչ այլ ոք, քան Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի գլխավոր քարտուղար Գի Մոլլեն ասում էր, որ «Ալ-

[1] Գվատելուպայի և Մարտինիկայի բնակիչները այդ կղզիներ բերված նեգր-արաբների ժառանգներն են։

[2] Журнал За рубежом, № 5, 1961, стр. 22.

ժիրը աստիճանաբար դարձել է մետրոպոլիայի բաղկացուցիչ մասը։ Արդեն մեկ դար է, ինչ այն ֆրանսիական դեպարտամենտների մեջ է մտնում, 1946 թվականից նրա բոլոր բնակիչները ֆրանսիական քաղաքացիություն են ընդունել»[1]։ Գի Մոլլեն ասում էր, որ «Ֆրանսիական միության քաղաքացի» (այսինքն՝ ֆրանսիացի) դառնալ՝ նշանակում է դառնալ «սոցիալիզմի մարտիկ», «աշխարհի քաղաքացի»։ Սակայն ալժիրցիները մերժում են այն «սոցիալիզմը», որտեղ Ալժիրը դառնում է Ֆրանսիա, իսկ ալժիրցիները՝ ֆրանսիացիներ։ Ալժիրի կոմունիստական պարտիայի առաջին քարտուղար Հարբա Բուհալին դրան պատասխանեց. «Ալժիրը Ֆրանսիա չէ և նրա բնակիչները ֆրանսիացիներ չեն ու չեն կարող լինել, չնայած այն բանին, որ պատմական կապեր ունեն Ֆրանսիայի հետ»[2]։

Ազգալուծման քաղաքականությունը վարում են պետական-վարչական մեթոդներով և գաղափարական ստրկացման մեթոդներով։ Նշված մեթոդներից բացի, կանգ առնենք նաև մի քանի այլ մեթոդների վրա։

§ 138. ՄԵՌԱԾ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ԼԵԶՈՒՆԵՐ։ Այս արտահայտությունը քաղաքական բառարանի մեջ են մտցրել նույնպես գաղութարարները։ Ընդսմին նրանք, հասկանալի է, կենդանի լեզու են համարում իրենցը՝ մետրոպոլիայի իշխող ազգի լեզուն, իսկ մեռած՝ այն թույլ ու փոքր ժողովուրդների լեզուները, որոնց վրա իշխում են իրենք։

Մենք արդեն գիտենք, որ լայն մասշտաբով այդպիսի քաղաքականություն էին վարում Հռոմի գաղութարարները։ Ճիշտ է, Հռոմի ժողովուրդը, ինչպես և ամեն մի նվաճող ժողովուրդ, դեպքերի երկաթե տրամաբանությամբ պետք է հեռանար ու հեռացավ պատմության բեմից։ Նրա լեզուն դարձավ մեռած լեզու։ Մեր օրերում լատիներեն գրում են միայն գեղատոմսերը։ Բայց՝ այն ժամանակ այդ մեծապետական լեզուն Հռոմի լեգեոններից ավելի ահեղ էր։ Լատիներենը թա-

[1] Л. Бухали, Октябрьская революция и национальное движение в Алжире, стр. 6.

[2] Там же, стр. 7.

փանցում էր ամեն տեղ, ուր տարածվում էր «Հավերժական քաղաքի» իշխանությունը, մահ բերելով տեղի բնակչության լեզուներին։

Հռոմեական այդ քաղաքականությունը այժմ որդեգրել են քաղաքական-տնտեսական տիպի դաղութատիրության ջատագովները։

Այդ բանին նրանք հասնում են հետևյալ կերպ. ոչ պաշտոնական կամ պաշտոնական ձևերով, բայց միշտ «աննկատելիորեն», մետրոպոլիայի լեզուն արմատավորելով վարչական օրգաններում, դուրս են մղում «իրավահավասարների» տեղական լեզուն, այնուհետև, մետրոպոլիայի լեզուն մտցնում են բարձրագույն, միջնակարգ և տարրական ուսումնական հաստատություններում, բնիկների լեզուն սկզբում դարձնելով «մարզային», այնուհետև «շրջանային» և նույնիսկ «տնային» լեզու։

Կարճ ասած, նրանք ճնշված ժողովուրդների լեզուն արհեստականորեն մեռցնում են, իսկ իրենցը պարտադրում։ Պարզ է, որ «մեռած ու կենդանի լեզուների» քաղաքականությունը կարևոր տեղ է գրավում ազգալուծման ընդհանուր քաղաքականության մեջ։

Ահա թե, օրինակ, այդ բանն ինչպես էր արվում Թուրքիայում։ Մետրոպոլիայի ասիմիլյատորները ազգային փոքրամասնություններին հարկադրում էին ամենուրեք օգտագործել միայն թուրքերենը, նրանց արգելում ունենալ իրենց դպրոցները, իսկ այնտեղ, ուր ստիպված թույլ էին տալիս՝ ամեն ինչ անում են, որպեսզի այդ ազգային դպրոցների նշանակությունը նսեմացվի։

1914 թվականին Թուրքիայում կար ավելի քան 2000 հայկական դպրոց (միայն Ստամբուլում՝ 40), այժմ կա ընդամենը 24 դպրոց 4800 աշակերտներով։ Տեղական իշխանությունները հասել են այն բանին, որ հայկական դպրոցներում թուրքերենը, պատմությունը, աշխարհագրությունը, իրավունքը, հասարակագիտությունը, թուրքական գրականությունը թուրքերեն ավանդում են թուրք ուսուցիչները։

Բայց այս ամենը նրանց քիչ է թվում։ «Ազատ Թուրքիա» թերթը գրում է. «Բավական չէ, որ ուժեղացվի թուրքերենի

ազդեցությունը, նրա դասավանդումը հայ գաղութի դպրոցներում կամ մեր ուսումնական հաստատությունների դռները բացվեն հայրենակիցների համար։ Մենք պետք է վերահսկենք ընտանեկան ու կրոնական բնույթի բոլոր հարցերը... Հայերը պետք է մոռանան իրենց լեզուն, որը կարելի է ճանաչել միայն իբրև կրոնի լեզու»։

Այդ բանին էր կոչում նաև լուսավորության նախկին մինիստր Համբդուլա Սուբհիբեյը, երբ մեկնաբանում էր Թուրքիայի սահմանադրության վերոհիշյալ 88-րդ հոդվածը։ Նա նշում էր՝ այդ հոդվածի նպատակն է հույներին ու հայերին վռնդել բոլոր հանրային հիմնարկություններից, ազգային փոքրամասնություններին ստիպել հրաժարվելու իրենց դպրոցներից ու մայրենի լեզվից։

Գաղութային ժողովրդի կենդանի լեզվի մահացման քաղաքականության ամենաներգործուն մեթոդներից մեկը օրենքն է, որով իշխող ազգի լեզուն հայտարարվում է պետական լեզու։ Այդ մեթոդն օգտագործում են անխտիր բոլոր գաղութարարները։ Ալժիրի օկուպացումից հետո ֆրանսիական գաղութային իշխանությունները պարտադիր կարգով սկսեցին ամենուրեք գործադրել մետրոպոլիայի լեզուն։ Դրանով էին խոսում և գրագրություն վարում բոլոր հիմնարկություններում։ Ֆրանսերենով էին սովորեցնում ուսումնական հաստատությունների մեծ մասում, հրատարակում գրքեր, թերթեր, հանրագիտարաններ, դասագրքեր, պլակատներ, առարկայական ագիտացիա մղում, ռադիոհաղորդումներ տալիս և այլն, և այլն։

Այն բնիկները, որոնք ընդունել էին մետրոպոլիայի լեզուն, համարվում էին առավել «կուլտուրական», «առաջավոր», «կրթված»։ Նրանց տալիս էին շահավետ պաշտոններ, իսկ այն մարդիկ, որոնք չեն տիրապետել ֆրանսերենին, «հետամնաց», «տգետ էին» համարվում, սև աշխատանքից բացի ուրիշ գործ չէին կարողանում գտնել։

Այդպես էին վարվում նաև «կուլտուրական», ունևոր ու հարուստ հայերն այն ժամանակ, երբ Հայաստանում իշխում էին պարսիկները, հոռոմեացիները, արաբները, սելջուկները, թուրքերը, ռուս ցարերը։ Մառը նշում է, որ

Անիի «քաղաքակիրթ» հայերը իրենց ազգությունը և իրենց լեզուն հիշում էին միայն այն ժամանակ, երբ հայ եկեղեցում էին գտնվում։ Դրությունն այդպես էր նաև Ալժիրում։ Ատիճանաբար տեղական լեզուն դուրս մղվեց քաղաքներից, այն դադարեց զարգանալ, հարստանալ և համազգային լեզվի դեր խաղալ։ Արաբերենը, որ աշխարհի հարուստ և Ալժիրի բնակչության ճնշող մեծամասնության լեզուն է, սկսեցին դիտել իբրև «օտար, իբրև «մեռած» լեզու։

Լարբի Բուհալին հիշյալ գրքում ասում է, որ արաբերենի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը միայն ասպեկտներից մեկն է քաղաքական այն գծի, որ գաղութարարներն իրագործում են «բացարձակապես բոլոր բնագավառներում, որը ծառայում է Ալժիրի բնիկների ապազգայնացմանը և ազգալուծմանը»[1]։ Այո՛, իրավացի է ֆրանսիացի գրող Ժան-Պոլ Սարտրը, որն ասում է, թե գաղութատիրությունը քայքայում է մարդու ներաշխարհը, հոգեպես ու բարոյապես հաշմանդամ դարձնում նրան, մարդուն դաստիարակում է ուրիշ ժողովուրդների նկատմամբ գոռոզամտության ու ատելության ոգով, արհեստականորեն մասնատում համամարդկային կուլտուրան։

Սակայն Ալժիրում եղան պարզամիտ մարդիկ, որոնք կարծում էին, թե տիրող ազգի լեզվի տարածումը հետապնդում է միայն տնտեսական կապերի ու հաղորդակցության ամրապնդման նպատակ, մոռանալով, որ ամենալայն կապեր կարող են լինել միմիայն հավասար ու անկախ ազգերի միջև։ Մետրոպոլիայի նպատակը պարզ է՝ վերացնել իր և գաղութների միջև եղած հակամարտությունը։ Այդ բանին կարելի է հասնել ոչ միայն տնտեսական, զուտ քաղաքական և գաղափարական, այլև լեզվի, կուլտուրայի, սովորությունների ոչնչացմամբ։

«Մեռած և կենդանի» լեզուների քաղաքականության իրագործման ասպարեզում առավել մեծ հաջողությունների են հասել անգլո-սաքսոնական գաղութարարները։ Անգլերեն են խոսում Ասիայի, Աֆրիկայի, Հյուսիսային Ամերիկայի մի

[1] **Ларби Бухали**, Октябрьская революция и национальное движение в Алжире, стр. 11.

քանի հարյուր միլիոն բնակիչներ։ Աֆրիկյան 18 երկրում խոսում են ֆրանսերեն։ Իրենց «հաջողություններով» կարող են հպարտանալ թե՛ իսպանացի, թե՛ թուրք և թե՛ մյուս դաղութարարները։ Բայց այդ հաջողությունները պյուրոսյան հաջողություններ են։ Այդ են վկայում աշխարհի ետպատերազմյան անցքերը՝ իմպերիալիզմի գաղութային սիստեմի կործանումը։ Ճիշտ է, անկախություն ստանալուց հետո Հնդկաստանը, Բիրման, Հնդկաչինը և Ասիայի ու Աֆրիկայի մյուս նախկին գաղութային երկրները ստիպված են պետության գործերը ժամանակավորապես վարել անգլերեն կամ ֆրանսերեն, սակայն նրանք ամենաներգործուն միջոցներ են ձեռնարկել դրանք փոխարինելու իրենց ազգային լեզուներով։

Հասկանալի է, թե ինչու լեզվի պրոբլեմը անկախություն նվաճած գաղութային երկրի կուլտուրական հեղափոխության կարևորագույն պրոբլեմներից մեկն է։ Լրագրողների հետ ունեցած հանդիպման ժամանակ Ալժիրի նախկին պրեզիդենտ Բեն Բելլան ասել է, որ «Չի կարող սոցիալիզմ լինել այնքան ժամանակ, քանի դեռ ժողովուրդը չի խոսում մայրենի լեզվով»։ Նա նշեց, որ ալժիրցիներն ընկալում են արաբերեն, բայց իրենց զգացմունքներն առայժմ արտահայտում են ֆրանսերեն։ Այդ է մեր ողբերգությունը»[1]։

Խոսելով լեզվի նշանակության մասին, վերհիշենք Հրաչյա Քոչարի «Ուսուցիչը» պատմվածքը. Մեսրոպ էֆենդին, երբ հասկացավ իր ճակատագրական սխալը, ողբերգական վախճանից առաջ աշակերտներին հայերեն լեզվով կտակեց.

— Սիրելի հայորդիներ... անուշիկ զավակներս...

Հիմա ոչինչ չունենք մենք, ոչ հույս ու ապավեն, ոչ զենք ու զորություն։ Ունինք միայն հայ լեզու և հայ գիր... Պահպանեցեք, որ չկորչեն, պահպանեցեք հայ լեզուն և հայ գիրը, եթե փրկվեք այս եղեռնեն։ Եթե իմ հիշատակս հարգել ցանկանաք, սիրեցեք և գալոց սերունդներին ավանդեցեք հայ լեզուն ու հայ գիրը...

Իզուր չէ, որ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը կոչ է անում ընթերցողներին.

[1] **«Правда»**, 5 октября, 1963.

Ուր էլ լինես,
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,
Թե մորդ անգամ մոռից հանես,
Քո մայրը լեզուն չմոռանաս...

§ 139. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԱՍԻՄԻԼՅԱՏՈՐՆԵՐԸ։ Հասկանալի պատճառներով ինչպես մյուս, այնպես էլ ֆրանսիական նեոգաղութարարները հատուկ ուշադրություն էին նվիրում ժողովրդական կրթությանը։ Նրանք վերահսկում էին ոչ միայն աշխարհիկ, այլև կրոնական մուսուլմանական դպրոցները։ Բոլոր դպրոցների ծրագրերը կազմում և հաստատում էին կա՛մ Փարիզը, կա՛մ Ալժիրի գաղութային իշխանությունները։

1946 թվականին Ալժիրն ուներ 1239 տարրական դպրոց՝ 140117 աշակերտով։ Դրանց $^2/_3$ մասը սովորում էր ֆրանսիական դպրոցներում և միայն $^1/_3$ մասը՝ արաբական։ Ավելի քան մեկ միլիոն ալժիրցի երեխաներ դպրոցներում տեղ չունեին։ Ինչպես նշվել է ԴՍԱՄ-ի քաղբյուրոյի որոշումներից մեկում, ֆրանսիական գաղութարարների նպատակն էր «նվազագույնի հասցնել արաբերենի դասավանդումը» դպրոցներում։ Դրա փոխարեն նրանք ամեն կերպ քաջալերում էին մուսուլմանների ուսուցում ֆրանսիական դպրոցներում։ Ֆրանսիական դպրոցների բոլոր սովորողների ճնշող մեծամասնությունն ամենևին էլ ֆրանսիացիներ չէին, բայց այդտեղ երեխաներն ու երիտասարդները սովորում էին ոչ թե մայրենի լեզու և հարազատ երկրի ու ժողովրդի պատմություն, այլ Ֆրանսիայի պատմություն և ֆրանսերեն։

Այդ ամենն արվում էր ապազգայնացման նպատակով։ «Չկան այնպիսի միջոցներ, որոնք չօգտագործվեն, մոռացության մատնելու ու խեղաթյուրելու Ալժիրի ժողովրդի պատմական անցյալը, ընդհուպ մինչև պատմության դպրոցական դասագրքերը, որոնցից մենք իմանում ենք, որ «մեր նախահայրերը գաղիացիներ են եղել»[1]։

[1] Ларби Бухали, Октябрьская революция и национальное движение в Алжире, стр. 11.

Դրությունն ավելի վատ էր բարձրագույն ուսումնական հաստատություններում, զանազան տեխնիկական ու այլ դասընթացներում։

Ինչպես ճիշտ նշվում է սովետական Մեծ հանրագիտարանում, ֆրանս-արաբական դպրոցներում ամբողջ ուսուցման նպատակն էր պրոպագանդել «իմպերիալիստական Ֆրանսիայի «բարեգործությունները» Ալժիրի համար, պատրաստել հլու-հնազանդ արհեստագործ բանվորներ ու հողագործներ, որպեսզի նրանց շահագործեն ֆրանսիական իմպերիալիստները և բնիկներից պատրաստեն (միջնակարգ ֆրանս-արաբական դպրոցներում) իմպերիալիզմի գործակալներ»[1]։

§ 140. ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ։ Այս կամ այն ժողովրդի քանակի հարցը գաղութարարների ընդհանուր ստրատեգիական ու տակտիկական պլանի, առանձնապես քաղաքական-տնտեսական պլանի ամենակարևոր հարցն է։

«Քանակ» բառը մենք գործածում ենք ուղղակի իմաստով, նկատի ունենալով այս կամ այն երկրի բնակչության քանակական կազմը, որը պետական-իրավական տեսակետից գաղութ կամ կախյալ երկիր է։

Կամայականությունների ու բռնությունների աշխարհում, ինչպիսին շահագործողական կապիտալիստական հասարակությունն է, ժողովուրդները կարող են կորցնել և վերանվաճել անկախությունը։ Սակայն հասկանալի է, այդ բանը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ նրանք մի որոշ քանակ են պահպանում, և ինչքան շատ՝ այնքան լավ կարող են ավելի շուտ ազատություն նվաճել կամ, համենայնդեպս, պահպանել ազատություն նվաճման համար գրավականները։ Ահա թե ինչու մետրոպոլիաները, ինչպես արդեն տեսանք, ամեն կերպ աշխատում են նվազեցնել ժողովուրդների քանակը, որպեսզի իրենց համար միանգամայն անվտանգ դառնան։

Հասկանալի է, որ քանակը պետականություն նվաճման մի վճռական պայման է, մշտապես գործող գոտենցիալ ուժ.

[1] БСЭ. Второе издание, 1950, стр. 107.

որը վտանգավոր է նվաճողների համար և անհրաժեշտ կենսարար ուժ՝ ճնշված ժողովրդի համար։

Չին ժողովուրդը շատ նվաճողներ է տեսել, և չինական Մեծ պարիսպը չի կարողացել նրան փրկել ազգերից։ Սակայն եթե ռազմական տեսակետից զավթիչները չինացիներից ուժեղ էին, ապա քանակապես համարյա ոչինչ էին։ Արդյունքն այն եղավ, որ ոչ թե օկուպանտներն ազգալուծեցին չինացիներին, այլ ընդհակառակը։ Նույնը կարելի է ասել Հնդկաստանի մասին։ «Արաբները, թուրքերը, թաթարները, մոնղոլները,— գրում է Կ. Մարքսը,— որոնք միմյանց ետևից նվաճում էին Հնդկաստանը, արագորեն ազգալուծվում էին բնիկների մեջ»[1]։ Անգլիացիները այդ վիճակից խուսափեցին, որովհետև չէին կորվում մետրոպոլիայից և կուլտուր-տնտեսական տեսակետից բնիկներից բարձր էին կանգնած։

Ժողովրդի քանակը կարևոր դեր է խաղում նաև հնարավոր ագրեսիայից իր ազատությունը պաշտպանելիս։ Սլավոնական ժողովուրդների մեծ քանակը, նրանց բնական բուռն ազատ միշտ կատաղեցրել է գերմանական նվաճողներին։ Եվ նրանք, ինչպես արդեն տեսանք, զանազան միջոցներով ճգնում էին նվազեցնել սլավոնական ժողովուրդների «բիոլոգիական պոտենցիալները»։

Պատերազմից հետո գեներալ Գուդերիանը լույս ընծայեց մի գիրք, որի մեջ զետեղեց հետևյալ ցանկը.

Եվրոպայի բնակչության ազգային կազմի փոփոխությունը (միլ. մարդ).

Ազգություններ	1870	1910	1930	1960
1. Գերմանական	59 31,6%	152 34 %	149 30 %	160 26,9%
2. Ռոմանական	63 33,7%	108 24,3%	121 24,4%	133 22,3%
3. Սլավոնական	65 34,7%	187 41,7%	226 45,6%	303 50,8%

Վերլուծելով այս թվերը, գեներալը ահաբեկելով Առնմբտյան Եվրոպայի ու ԱՄՆ-ի ղեկավարներին, կոչ է անում

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, стр. 225.

[2] Гейниц Гудериан, Так это не пойдет,. Воен. издат. М., 1954, стр. 78.

իրենց երկրների ջանքերը միավորել «Արևելքից բխող սպառնալիքը վանելու» համար։

1945 թվականի սկզբներին, երբ Գերմանիայի պարտությունը միանգամայն պարզ դարձավ «երրորդ ռայխի» բոլոր բնակիչների համար, ֆաշիստական մի թերթ, հռոմեական կայսրության «գիտնականների» օրինակով, այդ բանում մեղադրեց, ի՞նչ եք կարծում, ո՞ւմ. գերմանացի կանանց՝ այն բանի համար, որ նրանք քիչ երեխաներ էին ծնել, և Հիտլերն իր տրամադրության տակ չուներ բավարար քանակությամբ... զինվոր։ Պարզ է, որ, ինչպես ասում էին դեռ հնում, ավելի լավ է ողջ-առողջ մի մշակ ունենալ, քան մեռած Աքիլես։

Ահա այս է գաղութատիրության արյունոտ դեմքը։

1961 թվականի ապրիլին Երևան ժամանեցին բազմաթիվ արտասահմանյան թերթերի թղթակիցներ։ Նրանցից մեկը հայ ժողովրդի մասին արտահայտվեց այսպես. «Այսպիսի կուլտուրա և գիտություն ունեցող ժողովրդին չի կարելի անվանել փոքր ժողովուրդ... Նա համեստ, բայց իմաստուն ժողովուրդ է, որը հավերժ երիտասարդ է մնացել, աշխարհին տալիս է այնպիսի ականավոր մարդիկ, ինչպես մեծ ժողովուրդները»[1]։ Բայց բանն այն է, որ իմպերիալիստական աշխարհում «մեծի» ու «փոքրի» չափանիշը ոչ թե այս կամ այն ժողովրդի՝ համաշխարհային գիտության ու կուլտուրայի մեջ կատարած ներդրումն է, այլ դիվիզիաների քանակն ու որակը։

III. ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՍՏՐԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

§ 141. ՀՈԴԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՎԵՐՍԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԵՎ ՆՐԱ ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ։ Ժամանակակից գաղութարարները կլատիկ շրջանի իրենց եղբայրակիցներից տարբերվում են հիմնականում այն բանով, որ իրենց գործունեության մեջ ոչ թե սահմանափակվում են գաղութային գերշահույթի աղբյուրների յուրացման համար ռազմական ու պետական-վարչական մեթոդների գործադրմամբ, այլ դրան զուգընթաց

[1] Газета «Коммунист» (Ереван), 22 апреля, 1961.

լայնորեն կիրառում են նաև գաղափարական ներգործության մեթոդներ։

Իմպերիալիստական բոլոր երկրներում ստեղծված են պետական հզոր օրգաններ, որոնք ղեկավարում են այդ մեթոդների մշակումն ու կիրառումը իրենց հակառակորդների, փոքր ու թույլ ժողովուրդների դեմ ուղղված հոգեբանական պատերազմում։ Խոսքը վերաբերում է հոգեբանական դիվերսիաների լաբորատորիային, որի «արտադրանքը» (պրոպագանդիստական առատ նյութը) նախատեսված է թունավորելու ոչ միայն մետրոպոլիայի ժողովրդի, այլև

1. Սեփական գաղութային երկրների ժողովուրդների,

2. Գաղութային թալանի ասպարեզում իրենց «բարեկամների» ու թշնամիների գաղութային երկրների ժողովուրդների,

3. Մեծ ու փոքր անկախ երկրների ժողովուրդների,

4. Իրենց հակառակորդների ժողովուրդների գիտակցությունը։

Առաջին դեպքում գաղութարարները հոգեպես զինաթափում են նրանց, որպեսզի նրանք չմտածեն անջատվելու և ինքնուրույն ազգային օրգանիզմ կազմելու մասին, հաշտվեն ապազգայնացման մտքի հետ և իրենց երկիրը համարեն տիրող ազգի պետության «անբաժան», բաղկացուցիչ մասը։

Երկրորդ դեպքում ցուցադրում են միանգամայն հակառակ գիծ. հանդես են գալիս իբրև ուրիշ մետրոպոլիաների գաղութային ժողովուրդների «ազատության ու անկախության մարտիկներ»[1]։

Երրորդ դեպքում ձգտում են կամ իրենց կողմը քաշել, կամ նրանց չեզոքացնելով թույլ չտալ անցնելու հակառակորդի լագերը։

[1] Այս տեսակետից միանգամայն բնորոշ է 1964 թ. ապրիլին Դը Գոլի հեռուստատեսային ելույթը։ Հինգերորդ հանրապետության ղեկավարը հայտարարեց, որ Ֆրանսիան շարունակ ձգտում է օգնել Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի երկրներին՝ «իսկական անկախություն» նվաճել, և որ այդպիսի անկախությանն սպառնում են մի կողմից ԱՄՆ-ը, իսկ մյուս կողմից ՍՍՌՄ-ը։ Դը Գոլը զարգացող երկրներին կոչ արեց «գաղափարական աքաղաղի» պաշտպանության տակ անցնել։

Չորրորդ՝ ձգտում են, որ մետրոպոլիայի ժողովուրդը բարոյալքի իր ուղղակի թշնամիներին, որպեսզի հեշտ լինի նրանց ջախջախել ճակատամարտում։

Հարյուրավոր ու հազարավոր գրքեր ու բրոշյուրներ են հրատարակվել «հոգեբանական պատերազմի դոկտրինայի տեսական հիմունքների», նրա կազմակերպման, պլանավորման ու կիրառման սկզբունքների, նրա տակտիկայի, միջոցների ու տեխնիկայի մասին, նրա արդյունավետության չափանիշների, «թշնամու ոտնձգությունների» մասին, «կազմակերպվածության և արագաշարժության բարձրացման» մասին և այլն, և այլն։ Զարմանալի չէ, որ որոշ երկրներ այնքան են հմտացել հոգեբանական դիվերսիոն աշխատանքը ճարպկորեն ու վարպետորեն կատարելու մեջ, որ երբեմն քաղաքական ու դիվանագիտական հարցերում նույնիսկ փորձված մասնագետի համար դժվար է լինում նրանից գլուխ հանել։

§ 142. ԳԱՂՏՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ԳԱՂՏՆԻ ԶԵՆՔԵՐԸ։

Այսպիսով, խոսքը վերաբերում է ժամանակակից գաղութարարների գաղտնի այն միջոցառումներին, որոնց նպատակն է գլխավոր հարվածը հասցնել այն ժողովրդի հոգեբանությանը, ոգուն ու գիտակցությանը, որը ապազգայնացման, իսկ երբեմն էլ «օգնության» ու «ազատության», տաք կամ սառը պատերազմի միջոցով նվաճման օբյեկտ է։

Այդ գաղտնի գրոհը կատարվում է ոչ թե զինվորների ու լրտեսների, դիվերսանտների ու տեռորիստների միջոցով, այլ, գլխավորապես, այսպես կոչված, այն «ազնիվ» գործիչների ձեռքով, որոնք թափանցում են տեղական բանվորական շարժման մեջ, մամուլի, փիլիսոփայության ասպարեզը, ժողովրդի հոգևոր կյանքի բոլոր բնագավառները։ Ու քանի որ այդ այդպես է, ապա հիշյալ զենքը կարող է նշանակետին հարվածել, եթե կիրառվի իբրև գաղտնի զենք, հակառակ պարագայում կարող է հակառակ ներգործություն թողնել։

«Ամեն մի երկրում, որի վրա հարձակվում էր Հիտլերը, նա նախօրոք ստեղծում էր հոգեբանական դիվերսանտների «հինգերորդ զորասյուն», որպեսզի ջլատեր ժողովրդի ոգին, կասկածանք, շփոթություն ու դավաճանություն սերմաներ։ Մինչդեռ Հիտլերը պատերազմի էր պատրաստվում, Հոլան-

դիայում, Նորվեգիայում, Լեհաստանում ու Ֆրանսիայում նրա գործակալները «խաղաղություն» էին գոռում։ Այն ժամանակ, երբ նացիստական արդյունաբերությունը հսկայական քանակությամբ զենք էր արտադրում, այլ երկրներում ֆյուրերի գործակալները կամպանիա էին մղում սպառազինության դեմ։ Հիտլերը հոգեբանական դիվերսիայի կատարողներ էր դարձնում խիստ բազմապիսի մարդկանց՝ պրեմիեր-մինիստրների ու դիվանագետների, պրոֆեսորների ու վաճառականների, ժուռնալիստների, արհմիութենական պարագլուխների ու քաղաքական գործիչների, որոնցից ոմանք գիտակցաբար, ոմանք էլ անգիտակցաբար իրենց երկրներում տարածում էին հիտլերյան թույնը։ Շատ հաճախ նրանք, ովքեր այդ գործը կատարում էին անկեղծորեն, առանցքի տերություններին կվիսլինգյան տարրերից պակաս օգուտ չէին տալիս։ Ջնկատելով ահեղ վտանգը, այդպիսի մարդիկ ազնվորեն մոլորվում էին, ուստի հեշտությամբ մոլորեցնում էին ուրիշներին»[1]։

Հիտլերի առաջյալներից մեկը, գաղտնի պատերազմի հայտնի ստրատեգ Էվալդ Բենդեն, գրել է. «Կիրառական հոգեբանության օգտագործումն իբրև պատերազմի զենք նշանակում է մի այնպիսի պրոպագանդա, որը նախատեսված է... հարվածելու թշնամի ազգի թույլ տեղերին (իսկ ո՞ր ազգը թույլ տեղեր չունի), կազմալուծելու և կոտրելու նրա դիմադրությունը... Ուստի մարդիկ կորցնում են իրենց գործի արդարացիության հավատը... Թշնամի ազգի ամուր, հզոր ու լավ կազմակերպված միասնությունը հարկավոր է աստիճանաբար քայքայել, քանդել ու, վերջապես, այնպես փշրել, որ նա վերջին հաշվով դառնա անտառում ոտնակոխ տրված, ծվատված սունկ»[2]։

«Սոցիալիստները», իրենց դավաճանությունը քողարկելու նպատակով, ՍՍՌՄ-ին են վերագրում հոգեբանական պատերազմի և նրա մեխանիզմի «գյուտը»։

---

[1] Майкл Сейрес и Альберт Кан, Тайная война против Америки, стр. 143.

[2] Там же, стр. 141.

1960 թվականի դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ քաղաքական պատերազմին նվիրված միջազգային կոնֆերանս «Արևմուտքը կոմունիզմի հոգեբանական հարձակումից պաշտպանելու» համար։ Կոնֆերանսի հրավիրման նախաձեռնողը ֆրանսիական սոցիալիստ Մյուզան Լաբեն էր։ «Զգուշացի՛ր, սովետական պրոպագանդա է» խորագրով իր գրքում նա պնդում է, թե իբր «սովետական քաղաքական պատերազմի մեքենան իր նպատակների վրա տարեկան ծախսում է 2 միլիարդ դոլար և ամբողջ աշխարհում ունի 500.000 գործակալ»[1]։

§ 143. ԴԱՐՁՅԱԼ «ՀԻՆԳԵՐՈՐԴ ՁՈՐԱՍՅԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։ Այսպիսով, հոգեբանական գաղտնի պատերազմի զինանոցի զենքերով հիմնականում զինում են ընիկներից հավաքագրված «հինգերորդ զորասյան» անդամներին, որոնք կույր ու առավել ներգործուն զենք են դառնում ժամանակակից ռազմաշունչ իմպերիալիզմի ձեռքում։ Հասկանալի է, որ այդ քաղաքականությունը ժամանակակից իմպերիալիզմի «բարձրագույն ռազմական ստրատեգիայի» տակտիկական եղանակն է, որը կոչված է հաջողությամբ կենսագործելու «քնքուշ խոսքերի և մեծ մահակի» քաղաքականությունը։ Դա որակապես նոր երևույթ է, որը քիչ ընդհանուր բան ունի այդ ասպարեզում առաջներում տեղի ունեցածի հետ։

Այս թևավոր արտահայտության հեղինակը թեպետև իսպանացի խռովարար գեներալ Մոլան[2] է, այնուամենայնիվ, «հինգերորդ զորասյան» գործողությունների մեթոդները 1936 թվականից դեռևս շատ առաջ մշակել են գաղութատիրության հոգևոր առաջնորդները։ «Հինգերորդ զորասյան» ծառայություններից օգտվել են բոլոր ժամանակների կեղեքիչները։ Ամերիկյան «լոյալիստները» հանդես են եկել իբրև «հինգերորդ

---

[1] Проблемы мира и социализма, № 1 (29), 1961, стр. 92.

[2] Այդ գեներալը իր հարցազրույցներից մեկի ժամանակ թղթակիցներին հայտարարել է, որ Մադրիդի վրա հարձակվում է չորս զորասյուներով «ես ունեմ ևս հինգերորդ զորասյուն բուն Մադրիդում»,— հայտարարել է նա, նկատի ունենալով հանրապետական մայրաքաղաքում իր կողմնակիցներին։

զորասյան» մարտիկներ։ Անգլիացիները նրանց վրա էին հենվում սաբոտաժ, դիվերսիա, խուճապ, Վաշինգտոնի և անկախության հեղափոխության մյուս ղեկավարների դեմ դավադրություն կազմակերպելիս։

Սակայն «հինգերորդ զորասյան» տակտիկան որակապես փոխվել է պետական կապիտալիզմի ժամանակ. այն դարձել է պետական պլանաչափ քաղաքականություն։ Ռուզվելտի պսակով, Հիտլերը հետևյալ կերպ էր սահմանում այդ տակտիկայի էությունը. «Ժողովուրդը սպանում է միայն այն ժամանակ, երբ չի կարողանում իր նպատակին հասնել ուրիշ ճանապարհով... Կա՞ ավելի լայն ստրատեգիա, որը զինված է հոգեբանական զենքով։ Ինչո՞ւ ես հակառակորդին բարոյալքեմ ռազմական միջոցներով, եթե կարող եմ այդ բանն ավելի լավ ու էժան անել ուրիշ ճանապարհով... Մեր ստրատեգիայի նպատակն է հակառակորդին ջախջախել ներսից, նվաճել հակառակորդին՝ նրան իսկ օգտագործելով»։

Նշանակում է, «հինգերորդ զորասյունն» իր էությամբ հոգեբանական ու դիվերսիոն զենք է, որով զինված են գաղութարարները, որպեսզի հակառակորդին ջախջախեն ներսից, նվաճեն հակառակորդին, օգտագործելով հենց նրան։ Մենք ընթերցողին խնդրում ենք հիշել այս սահմանումը. այն մի այնպիսի բանալի է, որ կարող է օգտակար լինել ժամանակակից ագրեսիվ իմպերիալիստական պետությունների բարձրագույն հաղթականության գաղտնի սեյֆերին, գաղտնիքներին մոտենալիս, հասկանալու և իմաստավորելու համար ժամանակակից աշխարհի բազմաթիվ տարօրինակ երևույթներ։ Ընդսմին, անհրաժեշտ է վերապահում անել, որ Հիտլերը բոլորովին էլ ֆաշիզմի «մեծ ստրատեգիայի»— հինգերորդ զորասյան տեսության ու պրակտիկայի հիմնադիրը չէ։ Նա «աչքի էր ընկնում», թերևս, միայն իր ցինիկությամբ, որը, բազմաթիվ ուրիշ պատճառների հետ միասին, կանխորոշեց նրա արագ վախճանը։

§ 144. «ԱՋԱՏ ԱՇԽԱՐՀԻ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։ Այժմ խոսենք հոգեբանական պատերազմի զինանոցի մասին։ Ինչպիսի՞ զենքերով են իրենց գաղտնի հարձակումը հաջողեցնում ժամանակակից գաղութարարները։ Դրանցից մեկը, այս-

պես կոչված, «ազատ աշխարհի» տեսությունն է։ Իրենց և իրենց կողմնակիցներին նրանք համարում են «ազատ աշխարհի» անդամներ, իսկ հակառակորդներին՝ «ստրուկների աշխարհի»։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի իմպերիալիստներն սկսել են գործնականում իրագործել «ազատ աշխարհի» ղեկավարությունը։ Անգլիական իմպերիալիստները թեպետև առաջնության դափնին զիջել են նոր աշխարհի գործամոլներին, այնուամենայնիվ իրենց են համարում այդ «ազատ աշխարհի» հոգևոր ղեկավարներ։ «Անգլո-սաքսոնական ազատության համառոտ պատմություն» գրքի հեղինակ Ջ. Կ. Գոսմերը գրում է. «Թեպետ անգլո-սաքսոնական ազատությունը մի այնպիսի ձև է, որը Ռուսաստանից ու Ճապոնիայից բացի մասամբ ընդունել են (ավելի լավ է ասել ընդօրինակման առարկա է դարձել) բոլոր ազգերը. ազատության ապագայի հետ կապված հույսերը կախված են միայն անգլո-սաքսոնական ռասայից։ Միայն այդ ռասան է ազատությունը պահպանել հազարավոր վտանգների մեջ։ Միայն այդ ռասայի ազատությունն է լիովին վերհանված։ Եթե ենթադրենք, որ այդ ռասան կարող է անհետանալ, ապա ազատության գրավականները կոչնչանան»[1]։

Ֆրանսիական գաղութարարները, իհարկե, իրենց մտցրնում են Արևմուտքի «ազատ աշխարհի» մեջ և Ֆրանսիան հակադրում Արևելյան «ստրկության աշխարհին»։ Նրանք շարունակ ջանում էին ապացուցել ալժիրցիներին, որ եթե նրանք դուրս գան Ֆրանսիական միությունից ու ինքնուրույն պետություն կազմեն, ապա «սովետական իմպերիալիզմի» ավարը կդառնան։

Պարոն ժակ Շեվելիեն «Էկո Դավժե» թերթում ուղղակի հայտարարեց, որ «Ալժիրը, ինչպես և բոլոր ազատ երկրները, զինված չէ ոչ նյութապես, ոչ հոգեպես մոսկովյան իմպերիալիզմի ագրեսիվ գործողություններին դիմադրելու համար»։ Նրանք բարբաջում էին ալժիրյան և ֆրանսիական ժողովուրդների «դարավոր ու հավերժական» բարեկա-

[1] Вопросы истории, № 6, 1961, стр. 29.

մության, Ֆրանսիայի փրկարար միսիայի մասին, այն մասին, որ Ալժիրը առանց այդ միսիայի կկործանվի՝ ի վիճակի չի լինի ինքնուրույն օրգանիզմ կազմակերպել։

Իմպերիալիզմի վարձու և անվարձ գործակալները դիտակցաբար ու անգիտակցաբար կրկնում են, թե կգա ինքնուրույն պետությունների անհետացման ժամանակը, թե ժողովուրդները վերջիվերջո կմիաձուլվեն ֆրանսիական մի «մեծ» ազգի մեջ։

§ 145. ՆԵՈԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄԱԿԱՎՈՐՎՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴՐՈՇՈՎ։ Նեոգաղութատիրությունը երկոտանի մի քամելեոն է, որը խաղաթղթի վրա է դրել բովանդակ մարդկության ճակատագիրը։ Չորքոտանի քամելեոններին հատուկ է իրենց մաշկի գույնը փոխել նույնիսկ լույսի ու ջերմության ազդեցությամբ։ Նրանք այնպես են հարմարվում տեղանքին, որ աննկատելիորեն լափում են իրենց զոհերին նույնիսկ ամենամոտ տարածության վրա։ Երկոտանի քամելեոնները չորքոտանիներից ավելի վարպետորեն են քողարկվում։ Նրանք գործում են այնպիսի լոզունգներով, որ արտացոլում են հասարակ մարդկանց ու ճնշված ժողովուրդների խոհերն ու իղձերը՝ գործում են սոցիալիզմի լոզունգներով։

Ճիշտ է, գաղութատիրությունը միշտ ընդունակ է այլափոխությունների։ Կ. Մարքսը, խոսելով ցարական Ռուսաստանի դիվանագիտության նենգամտությունների մասին, որը ձգտում էր գեղեցիկ բառերով քողարկել իր ագրեսիվ գործողությունները, բերում է հետևյալ «զվարճալի անեկդոտն» այն երկու պարսիկ բնախույզների մասին, որոնք հետազոտել էին արջին։ Նրանցից մեկը, որ երբեք չէր տեսել այդպիսի կենդանի, հարցրեց, թե արջը կենդանի՞ ձագեր է ծնում, թե՞ ձու է ածում։ Երկրորդը, որ ավելի լավատեղյակ էր, պատասխանեց՝ «Այդ անասունը ընդունակ է ամեն ինչի»։ Այնուհետև Կ. Մարքսը նկատում է. «Ռուսական արջը, անկասկած, ընդունակ է ամեն ինչի, առանձնապես այն ժամանակ, երբ գիտե, որ մյուս կենդանիները, որոնց հետ գործ է ունենալու, ոչ մի բանի ընդունակ չեն[1]»։

[1] К. Маркс и Ф. Энгельс, том 9, стр. 172—173.

Եվ այնուամենայնիվ ժամանակակից գաղութատիրությունը ավելի է հմտացել ու դիմակավորվել, քան մոտ անցյալում։

Սոցիալիստական ուսմունքը միլիոնների դրոշն է դարձել շնորհիվ այն բանի, որ նա ժխտում է ուժեղի իրավունքը թույլի նկատմամբ, մերժում է շահագործումը ու կեղեքումը, օգնում հաստատելու այնպիսի սոցիալական կարգեր, որտեղ բոլոր ժողովուրդները սուվերեն են, իրավահավասար ու ազատ, որտեղ չկան իշխող ու ենթակա ազգեր, որտեղ թագավորում է օրենքը, և ոչ թե պաշտոնյայի բազկաթոռը։ Այդպիսի հասարակարգի կառուցման ուսմունքը կապված է նոր, ավելի կազմակերպված դասակարգի՝ բանվոր դասակարգի երևան գալու հետ։

Հիտլերը նույնպես խոսում էր բանվոր դասակարգի գլխավորությամբ «սոցիալիզմի համար», «կապիտալիզմի դեմ» ժողովրդի պայքարի մասին։ Նա իր պարտիան անվանում էր ոչ միայն «սոցիալիստական», այլև «բանվորական»[1]։

Հիտլերյան «սոցիալիզմը» Նեչաևի և Վերխովենսկու «սոցիալիզմն» էր։ Ո՞րն էր այդ «սոցիալիստների» դավանած ուսմունքի էությունը։ Նեչաևը ասում էր. «Հեղափոխությանը ծառայ է միայն մի գիտություն՝ բնաջնջման ու ավերման գիտությունը»։ «Անհատի պաշտամունքը, սոցիալիստների միջև փոխադարձ լրտեսության սիստեմը, որոնք միավորված են առանձին օղակներում՝ «հնգյակներում», գաղտնի ցուցակները—սրանք են ըստ Նեչաևի սոցիալիզմի հաղթության պայմանները»[2]։ Ահա Ֆ. Դոստոևսկու «Դևեր» վեպի հերոս Պյոտր Վերխովենսկու «սոցիալիմի» երազանքը. «Հասարակության յուրաքանչյուր անդամ հետապնդում է մյուսին և պարտավոր է լրտեսել... Բոլորն ստրուկներ են և ստրկությամբ հավասար... Մենք ամեն մի հանճար կխեղդենք բնում։ Ամեն ինչ կհանգեցնենք մի հայտարարի, լիակատար հավասարության...

[1] Հիտլերյան ֆաշիստական պարտիան սկզբում կոչվում էր «Գերմանական բանվորական պարտիա», 1921 թ. վերանվանվեց «Գերմանիայի նացիոնալ-սոցիալիստների բանվորական պարտիա»։

[2] Проблемы мира и социализма, № 5, 1963, стр. 35.

լիակատար հլու-հնազանդություն, լիակատար դիմազրկություն»[1]։

Ժողովուրդը վաղուց է դարձել իրավունքի ու ամենաբարձր արդարության խորհրդանշան։ Ուստի այժմ իշխանությունը զավթող ամեն մի ստահակ գործում է ժողովրդի անունից ու հանուն նրա։ Սակայն դեռ ոչ մի բռնակալ, ոչ մի բուրժուական պարտիա, որը ագրեսիվ, իմպերիալիստական նպատակներ էր հետապնդում, այնպես ճարպկորեն չէր բարբաջել ժողովրդի մասին, ինչպես բարբաջում էին ֆաշիզմի պարագլուխները։ Դեռ ոչ ոք այնպես ճարպկորեն, ավազակաբար չի օգտագործել բանվորների անունը բանվորների արմատական շահերի դեմ, աշխատավոր գյուղացիության անունը նրա իսկ կենսական շահերի դեմ, ինչպես այդ ոհմակը, որը կոչվում է «սոցիալիստների» պարտիա։ Զինվելով «նոր ուժեղ զենքով՝ սոցիալիզմի գաղափարով», Հիտլերը գերմանական գաղութատիրությունն առաջնորդեց դեպի աշխարհակալություն, դեպի աշխարհի նվաճում, դեպի «նոր կարգի» հաստատում։ Այս բանը բացահայտորեն խոստովանում է ագենտուերյան Գերմանիայի ռազմական խոշոր տեսաբաններից մեկը, ֆաշիստ գեներալ-գնդապետ Հայնց Գուդերիանը։ Նա գրում է.-«Այդ նոր գաղափարի կրողները և առանձնապես Հիտլերը այնքան էին տոգորված նրանով, որ հնարավոր էին համարում Եվրոպայում նոր կարգ ստեղծելու պրոբլեմը լուծել պատերազմի միջոցով»[2]։

Պրուսական թագավորների ամբողջ պրոպագանդիստական մեքենան հենվում էր երեք սյան վրա՝ թագավոր, հավատ և ժողովուրդ։ Հիտլերը այդ երեք «կետերը» թողեց նույնը, միայն թեթևակի, նոր երանգ տվեց երկուսին՝ թագավորի տեղը դնելով ֆյուրերին, հավատի տեղը՝ «սոցիալիզմի գաղափարը», իսկ ժողովուրդը մնաց նախկին քավության նոխազը։ Ինչպես որ հին հռոմեական գաղութային առաջին իմպերիալիզմը քրիստոնեության գաղափարն օգտագործում էր աշխարհակալության համար, այդպես էլ XX դարի գաղութային երկրորդ իմպերիալիզմը նույն նպատակի համար փորձում է օգտագործել սոցիալիզմի գաղափարը։

Իսկ ինչպիսի՞ դրություն էր Եվրոպայում գերմանական ֆաշիզմի նախօրեին։

1920 թվականին քեմալականներն իրենց համարում էին «կարմիր» և խոսում էին «իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի» մասին։ Նրանք իբրև թե կողմնակից էին «ճնշված ժողովուրդների ինքնորոշմանը»։ Թուրք զինվորները հագնում էին այնպիսի «բուդյոնովկաներ», ինչպիսիք այն ժամանակ կրում էր կարմիր բանակը։ Իրականում թուրք «հանրապետականները» վարում էին սուլթանական հին քաղաքականությունը՝ ընաջնջող պատերազմ էին մղում ճնշված ժողովուրդների դեմ։

§ 146. ԲՌՆԱԿԱԼՆԵՐԸ ՄԻՇՏ ՃԳՆԵԼ ԵՆ ՀԱՄԲԱՎԱՎՈՐ ԼԻՆԵԼ։ Հռոմի կայսրերը կազմակերպում էին փքուն հաղթական երթեր, վիթխարի զվարճալիքներ, որտեղ գլադիատորները «ի մահ գնալիս ողջունում էին նրանց» առյուծների ու վագրերի հետ մենամարտի բռնվելուց առաջ։ Նույն տրադիցիան շարունակում էր Մուսոլինին՝ երազելով Կեսարի փառքը։ Նրա ցուցումներով կազմակերպվում էին մանիֆեստացիաներ, և «ժողովրդի» կողմից «ընդունված» կոչեր ու բանաձևեր, որոնցում հավատարմություն էր հայտնվում դուչեին և «բողոքներ» Սովետական Միության դեմ։

Սոցիալիզմի մասին էր բարբաջում նաև Էնվեր փաշան, այն մարդը, որ պատմության մեջ մտել է ոչ միայն իբրև հայ ժողովրդի դահիճ, այլև իբրև աշխարհում առաջին թուրք փոքրիկ Հիտլեր, եվրոպական մեծ ֆյուրերների ու դուչեների հոգեհայր։ Էնվերը «Միասնություն և առաջադիմություն» պարտիայի առաջնորդն էր, որը զինված էր «ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգներով։

Այդ լոզունգները շատերին էին մոլորեցնում։ Վարուժանը երազում էր ժողովուրդների ազատություն ու եղբայրություն, երազում, որ գա մի այնպիսի ժամանակ, երբ «աշխարհը վերաշինվի ու գեղեցկանա, արեգակի շուրջը դառնալու արժանի լինի»։ Երիտասարդ թուրքերի լոզունգներում նա ակնկալում էր այդ աշխարհը։ Վարուժանը գրեց «Ավերակնե-

[1] Проблемы мира и социализма, № 5, стр. 35, 1963.
[2] Итого второй мировой войны, сборник статей, стр. 116.

րի տիրուհին» հիանալի բանաստեղծությունը, որով երգեց «ազատության ու եղբայրության» գաղափարը։

1961 թ. հոկտեմբերին Հռոմում տեղի ունեցավ սոցիալիստական ինտերնացիոնալի VII կոնգրեսը, որ գումարվել էր «նոր երկրները և նոր սերունդը կողմնակից են սոցիալիզմին» լոզունգով։ Ֆրանսիայի սոցիալիստական պարտիայի ծրագրում բազմաթիվ գեղեցիկ խոսքեր կան «սոցիալիստական իդեալի, սոցիալիստական պլանավորման, անդասակարգ հասարակության, մարդու կողմից մարդու շահագործման վերացման» մասին և այլն, և այլն։ Բայց այդ նույն սոցիալիստներն Ալժիրում վարում էին գաղութային, ասիմիլյատորական քաղաքականություն։ Այժմ «սոցիալիզմ» են կառուցում Արևելքի բասիստները, Արևմուտքի լեյբորիստները և նույնիսկ... ԱՄՆ-ի կապիտալիստները։ Արևմուտքում աշխարհին այդ մասին ազդարարեց տնտեսագետ Ադոլֆ Բեռլին, պնդելով թե ԱՄՆ-ը «Ոչ-պետական սոցիալիզմի երկիր է»։ Նա պնդում էր նաև, որ ՍՍՌՄ-ում իշխում է «ոչ թե սոցիալիզմը, այլ պետական կապիտալիզմը»։ Լեյբորիստների տեսաբան Դուգլաս Ջեյը «Սոցիալիզմը նոր հասարակության մեջ» գրքում ոչ միայն չի ընդունում սոցիալիզմը ՍՍՌՄ-ում, այլև հայտարարում է, որ «մարքսիզմը ցույց է տվել, որ սոցիալիզմի ամենամեծ թշնամիներից մեկն հենց ինքն է»[1]։ Իսկ Կանադայի պրեմիեր-մինիստր Դիֆենբեյքերը նույնիսկ մտադիր էր Գլխավոր ասամբլեայի սեսիայի քննարկմանը դնել «սովետական գաղութատիրության» հարցը։

Սոցիալիստական ինտերնացիոնալի Հայֆայի (Իսրայել) խորհրդի սեսիայում Իսրայելի արտաքին գործերի մինիստր Գոլդա Մեյերը ՍՍՌՄ-ը անվանեց «աշխարհի ամենախոշոր իմպերիալիստական ուժը»[2]։

§ 147. «ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ» ԵՎ «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Է ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴԱՌՆԱ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Իմպերիալիստական պրոպագանդիստների ձեռքում ո՛չ պակաս չափով կարևոր

[1] Проблемы мира и социализма, № 4, 1963, стр. 82.
[2] Международная жизнь, № 3, 1961, стр. 27.

զենք է մոնոպոլիստական կապիտալիզմի պետության ֆունկցիաների տեսությունը։ Այդ տեսության համաձայն, նման պետությունը հավասարապես պաշտպանում է իր տերիտորիայում ապրող բոլոր դասակարգերի, ամբողջ հասարակության, բոլոր ժողովուրդների շահերը։ Քանի որ այդ այդպես է, պնդում են նրանք, ապա ժողովուրդները պետք է նրան համարեն իրենց հարազատ պետությունը և նրա շահերն իրենց անձնական, ազգային շահերից բարձր դասեն։

«Պետության բարձրագույն շահերը» կամ, ինչպես այլ կերպ անվանում են, «հասարակական բարօրության բարձրագույն շահերը» կապիտալիստական պետության ֆունկցիաների ընդհանուր տեսության հատկանիշներն են։ Նրա մյուս հատկանիշը «յուրաքանչյուր պետություն պետք է ազգային պետություն դառնա» տեսությունն է։ Այդ տեսության կողմնակիցները այն մեկնաբանում են հետևյալ ոգով՝ իբր քանի որ յուրաքանչյուր պետություն պետք է դառնա ազգային պետություն, ապա տվյալ պետության մեջ մնող բոլոր ժողովուրդները պետք է ազգալուծվեն, ձուլվեն մետրոպոլիայի իշխող ազգին՝ այս է պահանջում «պետության բարձրագույն շահը»։

Այս տեսություններն ստեղծել են բազմազգ կալվածատիրական-կապիտալիստական պետությունների իշխող դասակարգերի գաղափարախոսները։ Հետագայում դրանք «կատարելագործվեցին» նեոգաղութատիրության երկրներում. նրանք տեսությունից անցան գործնականի, որպեսզի վերացնեին բազմազգ բուրժուական պետություններին առավել բնորոշ երևույթները՝ կենտրոնախույս ուժերը, և դրանք դարձնեին կենտրոնաձիգ ուժեր, այսինքն կյանքում հաշտեցնեին՝ անհաշտելին՝ կեղեքողի ու կեղեքվողի հակամարտությունը։

«Պետության բարձրագույն շահերը», «հասարակական բարօրության բարձրագույն շահերը» կամ «համապետական պահանջների բարձրագույն շահերը», ինչպես և «յուրաքանչյուր պետություն պետք է դառնա ազգային պետություն» տեսությունները լայն տարածում էին գտել աշխարհի շատ երկրներում ու առանձնապես ցարական Ռուսաստանում։ Հայտնի է, թե Վ. Ի. Լենինն ինչպիսի անողոքությամբ է քննա-

դատել դրանք, առանձնապես «Ֆինլանդական ժողովրդի բողոքը» հոդվածում։

Ինչպես հայտնի է, Ֆինլանդիան Ռուսաստանին միացվեց 1809 թվականին Շվեդիայի դեմ մղած պատերազմի ժամանակ։ Ցանկանալով իրենց կողմը քաշել ֆիններին՝ շվեդական թագավորի նախկին հպատակներին, ռուս ցարերը ճանաչեցին ֆինլանդական կոնստիտուցիան, ինքնավար իրավունքները և խոստացան չխախտել դրանք։ Սակայն 1899 թվականին արձակվեց նոր կարգ սահմանող մանիֆեստ, ըստ որի՝ առանց ֆինլանդական սեյմի համաձայնության կարող էին հրապարակվել օրենքներ, «եթե դրանք վերաբերում են համապետական պահանջմունքներին կամ կապված են կայսրության օրենսդրության հետ»։ Դրա հիման վրա ցարերն սկսեցին բոլոր գծերով վարել Ֆինլանդիայի ազատությունը ոչընչացնելու քաղաքականություն, ինչպես նրանք այդ բանն անում էին Միջին Ասիայում, Անդրկովկասում կամ Մերձբալթիկայում։ «Առաջին բռնությանը,— գրում է Վ. Ի. Լենինը,— հետևեց ուրիշ բռնությունների անթիվ մի շարք. արգելում էին մեկը մյուսի ետևից ֆինլանդական լրագրերը, վերացրին ժողովների ազատությունը, Ֆինլանդիան հեղեղեցին ռուս լրտեսների և ամենագարշելի պրովոկատորների հմակներով... Վերջապես, առանց սեյմի համաձայնության, հրատարակվեց հունիսի 29-ի (հուլիսի 12-ի) օրենքը զինվորական ծառայության մասին»[1]։

Եվ այդ ամենն արվում էր հանուն «համապետական պահանջմունքների»։ «Մենք դեռևս,— շարունակում է Վ. Ի. Լենինը,— մինչ այն աստիճանի ստրուկներ ենք, որ մեզանից օգտվում են ուրիշ ցեղերին ստրուկ դարձնելու համար։ Մենք դեռևս մեզ մոտ հանդուրժում ենք մի կառավարություն, որը դահճի վայրագությամբ ոչ միայն ճնշում է ազատության ամեն մի ձգտում Ռուսաստանում, այլև, բացի դրանից, օգտվում է ռուսական զորքերից ուրիշի ազատությա՞ն դեմ բռնի ոտնձգություն անելու համար»[2]։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 410։
[2] Նույն տեղում, էջ 411։

Սակայն եթե ցարական գաղութարարները իրենց քաղաքականությունը վարում էին հանուն «համապետական պահանջմունքների» կամ «կայսրության օրենսդրության» կապակցությամբ, ապա ֆրանսիական գաղութարարներն այդ բանն անում էին հանուն «հանրային բարիքի բարձրագույն շահերի»։

Ավելի քան 130 տարի առաջ «պետության բարձրագույն շահերի», «հանրային բարիքի բարձրագույն շահերի» գաղափարները Ֆրանսիայի գաղութարարներին ավազակության էին ոգեշնչում Ալժիրում։ Ի՞նչ կա որ, չէ՞ որ «հանրային բարիքի բարձրագույն շահերը,— դատում էին նրանք,— ամ՛են ինչ արդարացնում են։ Մի՞թե այն համայնական հողերը, որոնց համատեղ տիրում է ցեղը, առաջին հերթին սեփականությունը չեն աստծո, հետևաբար և նրա ներկայացուցիչ Բեյլիկի, այսինքն՝ կառավարության... Եվ վերջապես, մի՞թե չպետք է լիովին օգտագործել հողը։ Չէ՞ որ ցեղերն էլ ունեն հսկայական հողեր, որոնց մեծ մասը օգտագործում են իբրև արոտավայրեր։ Հետևաբար, չօգտագործվող, հանրային օգուտ չբերող ամբողջ հողը իրավամբ կարելի է խլել»[1]։

Այս նույն «գաղափարները» ներկայիս ֆրանսիական գաղութարարներին ոգեշնչում էին պատերազմի ընդդեմ Ալժիրի ժողովրդի։ Իսկապես, ինչո՞ւ են ալժիրցիները «հասմոլություն» ցուցաբերում և չեն համաձայնվում, որ իրենց հայրենիքից կտրեն Սահարան ու հանձնեն Ֆրանսիային։ Չէ՞ որ իրենք չունեն ո՛չ տեխնիկա, ո՛չ միջոցներ, որպեսզի շահագործեն Սահարայի նավթը, իսկ Ֆրանսիան ունի այդ հնարավորությունները և կարող է այնտեղ «հատարակության բարօրության» համար «սև ոսկի» արդյունահանել։ Ի վերջո, ֆրանսիական պետության «բարձրագույն շահերը» պահանջում են, որպեսզի ալժիրական Ալժիրը դառնա ֆրանսիական Ալժիր, մետրոպոլիայի անբաժանելի բաղկացուցիչ մասը. այդ ժամանակ էլ ինչո՞ւ են ալժիրցիներն ուզում անջատվել ու վենք են վերցնում։

Ժողովուրդները գաղութային ստրկության դեմ կռվում են

[1] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 63.

հանուն իրենց ազատության ու անկախության։ «Պետության բարձրագույն շահերի» կամ «հանրային բարիքի բարձրագույն շահերի» տեսությունը կոչված է պայքարելու այդ, «իրենց դարն ապրած ձգտումների», «հետամնաց տրամադրությունների» և «հետամնաց ժողովուրդների» դեմ, նրանց «դաստիարակելու «պետության և հասարակության» շահերը հասկանալու ոգով, իմպերիալիստական պետությունների օրենքները ճշտորեն և հլու-հնազանդ կատարելու ոգով։ Գաղութատիրությունը քննադատելիս Վ. Ի. Լենինն ասում էր, որ «...ամեն մի օրենքի համար կարելի է ասել, թե այն վերաբերում է համապետակա՞ն պահանջմունքներին»[1], և իմպերիալիստներն այդպես էլ մեկնաբանում են իրենց ամեն մի օրենքը։ Այո՛, հենց այդպես։ Ֆրանսիական գաղութարարները գտնում են, որ ալժիրցիները, ղենքի դիմելով, խախտել են այդ օրենքները, որոնք արտահայտում են «համապետական պահանջմունքները», ուստի և նրանք որպես թե «խռովարարներ են», «մատնիչներ», «տեռորիստներ»։

§ 148. Ո՞ՐՄՆ Է ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՆԻԿ ԺՈՂՈՎՐԴԻ՞ՆԸ, ԹԵ՞ ՄԵՏՐՈՊՈԼԻԱՅԻՆԸ։ Մենք արդեն խոսեցինք գաղութային գերշահույթի աղբյուրներ զավթելու և սեփականացնելու մի քանի ձևերի ու մեթոդների մասին։ Այդ աղբյուրների սեփականումը «օրինականացնելու» և «իրավաբանորեն» ձևակերպելու մյուս կարևոր ձևը այսպես կոչված «պետական սեփականության տեսությունն» է։ Ելնելով այն բանից, որ իմպերիալիստական պետությունը «ընդհանուր բարօրության պետություն» է, ժամանակակից գաղութարարները պնդում են՝ այն ամենը, ինչ այդ պետության սեփականությունն է, ծառայում է բոլոր դասակարգերի, բոլոր ժողովուրդների բարօրությանը։

Կարճ ասած, «պետական սեփականության տեսությունը կոչված է քողարկելու զավթումների ու կողոպուտի հին քաղաքականությունը, գաղութային երկրների բնական հարստությունների ավազակային շահագործման, կեղեքման քաղաքականությունը։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 410։

Իրականում այն ամենը, ինչը գաղութային երկրներում հայտարարվում է պետական սեփականություն, ոչ թե տեղի ժողովրդի, այլ բացառապես մետրոպոլիայի իմպերիալիստների սեփականությունն է։ Ահա թե, օրինակ, դրությունն ինչպես էր Ալժիրում։ Այստեղ 21 միլիոն հեկտար մշակովի հող կար, որից 11 միլիոն հեկտարը ֆրանսիական իշխանությունները հայտարարել էին «պետական սեփականություն» կամ «պետական հողեր»[1]։ «Անտառների ավելի քան 72 տոկոսը զավթել էին ֆրանսիական իշխանությունները և «պետական սեփականություն» հայտարարել, իսկ 18 տոկոսը գտնվում էր ֆրանսիական մասնավոր ընկերությունների ձեռքում, որոնք դրաղվում էին նաև «պետական» անտառների մի մասի օգտագործմամբ, և միայն 9 տոկոսն էր պատկանում համայնքներին»[2]։

Իսկ ինչպիսի՞ անսպառ հարստություններ են պարունակում այդ անտառներն ու հողը, նրա ընդերքը։ Մենք առիթ ունեցանք խոսելու այս մասին։ Ֆրանսիական գաղութարարներն այդ հարստությունների 10 տոկոսն էին տալիս ալժիրցիներին, և այն էլ հանուն մի նպատակի՝ աշխատող ձեռքեր այնտեղ պահելու համար։

§ 149. ՀԱՅՐԵՆԱԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԱՓԱՐԱՊԵՍ ՀԻՄՆԱՎՈՐԵԼՈՒ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։ Ալժիրում մղած պատերազմի տարիներին Ֆրանսիայի կառավարական ղեկի գլուխ կանգնած էին երկրի բոլոր հիմնական պարտիաների պարագլուխները՝ սոցիալիստները, արմատականները, կաթոլիկները, «անկախականները», դրգոլականները։ Եվ նրանք բոլորն էլ գաղութային քաղաքականություն էին վարում կոսմոպոլիտիզմի դրոշով։

Դա պատահական չէր։

Կոսմոպոլիտիզմը, ինչպես նշված է Սովետական մեծ հանրագիտարանում (երկրորդ հրատարակություն), ժխտում է ազգային տարբերությունները, ազգային սուվերենությունն ու ազգային կուլտուրան և պահանջում ստեղծել «համաշխարհային պետություն» ու «համաշխարհային քաղաքացիու-

[1] Б. Е. Косолапов, Алжир, М., 1959, стр. 57.
[2] Там же.

թյուն», ձգտելով, այսպես ասած, «գաղափարապես հիմնավորել հայրենադավությունը»[1]:

Նապոլեոնը ասում էր. «Բարոյական գործոնը հարաբերում է ֆիզիկականին այնպես, ինչպես երեքը մեկին»: Ժամանակակից գաղութատիրությունը զինվել է այդ թունավոր գաղափարական զենքով, որպեսզի խարխլի ժողովուրդների կյանքում բարոյական գործոնը՝ նրանց նվաճելու նպատակով:

Այդ զենքը հանել են հին աշխարհի այն պետությունների զինանոցից, որոնք աշխարհակալության էին ձգտում և փորձում էին դրանով մաքրել իրենց ֆալանգների ու լեգեոնների ճանապարհը: Մակեդոնիայի թագավոր Ֆիլիպ II-ը ֆալանգներով նվաճեց Հունաստանը: Նրա որդին՝ Ալեքսանդրը պատրաստվում էր ամբողջ Արևելքը նվաճելու, երբ նրա ուսուցիչը՝ հին աշխարհի մեծագույն մտածող Արիստոտելը, կոսմոպոլիտիզմի հոգևոր զենքն էր կռում: Նա գտնում էր, որ համաշխարհային միապետության ստեղծումը բնական այնպիսի օրինաչափ վիճակ է, ինչպես ստրկությունը: Ժողովուրդները հայրենիք չունեն, «որտեղ բարիք, այնտեղ էլ հայրենիք»,— այսպես է կոսմոպոլիտիզմի հիմնական գաղափարը սահմանել Արիստոտելը: Այդ գաղափարը շատ լավ համապատասխանում էր համաշխարհային միապետական կայսրության ստեղծման նպատակներին ու խնդիրներին՝ յուրաքանչյուր ոք կարող էր «գաղափարապես հիմնավորել հայրենադավությունը»:

Այնուհետև այդ բանաձևը պաշտպանեց Հռոմի աշխարհակալ կայսրության մունետիկ Ցիցերոնը, երբ ֆալանգներն իրենց տեղը զիջեցին առավել ճկուն ու զորեղ լեգեոններին: Հռոմը մշակեց մի «իրավունք», որը ամեն մի երկրի ու ժողովրդի ամեն մի քաղաքացու հնարավորություն էր տալիս հայրենի հողում դառնալ «անձեռնմխելի»: Դրա համար հարկավոր էր դառնալ «հռոմեական քաղաքացի» կամ «հռոմեական ժողովրդի բարեկամ»: Նույնիսկ ստրուկը կարող էր ազատ արձակվել, իսկ այնուհետև Հռոմի «ազատ» քաղաքացի դառնալ: Դա հանգեցրեց այն բանին, որ ժամանակի ընթացքում Հավերժական քաղաքի բնակիչներ դարձան նախկին ստրուկները: Աշխարհակալները ստրկական ծագում ունեին: Հռոմը դարձավ «գլուխն այն մարմնի, որը բաղկացած էր աշխարհիս բոլոր ժողովուրդներից»[1]:

Հայտնի է, որ հայերից քիչ կոսմոպոլիտներ չեն եղել: Նրանցից թերևս առավել հայտնին Պարույր Հայկազն է, որի պղնձե արձանը գտնվում էր կայսեր պալատում (իսկ ոմանց ասելով՝ Հավերժական քաղաքի հրապարակներից մեկում): Սակայն եթե նա համոզված էր, որ աշխարհում ավելի լավ է լինի մի ծաղիկ, իհարկե, միայն հռոմեական (իսկ Հռոմի կործանումից հետո ուրիշները նախընտրում էին արդեն Կոստանդնուպոլսինը), ապա ինչպես մեր ամբողջ ժողովուրդը, այնպես էլ Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին միանգամայն ուրիշ համոզմունքի էին՝ աշխարհը գեղեցիկ է հենց իր բազմազանությամբ, այն բանով, որ նրա մեջ կան շատ ու շատ ծաղիկներ, որոնցից յուրաքանչյուրն մյուսներից տարբերվում է իր առանձին, միայն իրեն հատուկ գույնով ու բույրով: Պարույրի նման կրթություն ստանալով հայրենիքից դուրս, Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին և շատ ուրիշներ վերադարձան հայրենիք՝ իրենց ժողովրդին ծառայելու համար, մինչդեռ Հայկազնը, «աշխարհաքաղաքացի» դառնալով, մնաց Աթենքում ու Հռոմում, դարձավ աշխարհակալ կայսրերի ու կայսրությունների ձեռքում մի սովորական գործիք:

Հայրենադավ մարդիկ է ունեցել նաև բերբեր ժողովուրդը: Հերոս Յուգուրտան կռվել է հռոմեական զավթիչների դեմ և ձգտել ստեղծել միասնական ու հզոր պետություն, իսկ նրա հորեղբոր տղան՝ Ադգեբալը դարձավ «հռոմեական ժողովրդի բարեկամը»: Երբ Յուգուրտան մահապատժի ենթարկեց դավաճանին, Հռոմը պատերազմ հայտարարեց նրան:

Այսպես, բոլոր երկրներում Հռոմը գտնում էր մարդկանց, որոնք ուրախությամբ հագնում էին ստրկության շապիկը, բայց նա չգտավ և ոչ մի ժողովուրդ, որը հոժար կամքով մտներ Հռոմի ախոռը:

---

[1] БСЭ, том 23, стр. 113.

[1] **Ш. Монтескье**, Избран. произ., М., 1955, стр. 79.

Հռոմի ստրկատիրական կարգերը փուլ եկան իրենց իսկ ոճրագործությունների ծանրությունից։ Աշխարհի ժողովուրդներն ազատ շունչ քաշեցին։

Ֆեոդալիզմի վերջում և կապիտալիզմի զարգացման նախակղզնական շրջանում ձևավորվեցին ու ամրապնդվեցին բազմաթիվ ազգային պետություններ։ Դրանցից առավել հզոր ու ագրեսիվ պետությունները «սիրով» աշխարհը բաժանեցին իրար միջև։

Կոսմոպոլիտիզմը այնքան էլ պիտանի ապրանք չեղավ։

Աշխարհի գիտնականները ենթադրում էին, թե համաշխարհային նվաճումների ժամանակաշրջանը և այդ հիման վրա հռոմեական տիպի աշխարհակալ տերության ստեղծման օրերն անցել են, որ այդպիսի նկրտումները հատուկ էին միայն Հռոմի ժողովրդին։ Բայց այդպես չէր։ Կապիտալիզմն սկսեց փշրել ազգային սահմանները և նվաճել համաշխարհային շուկա։ «Համաշխարհային շուկայի շահագործման միջոցով բուրժուազիան բոլոր երկրների արտադրությունն ու սպառումը դարձրել է կոսմոպոլիտական»[1]։

Ամեն մի իմպերիալիստական երկրի կառավարող դասակարգ սկսեց բոլոր ջանքերն ուղղել այն բանին, որպեսզի «իր» ժողովրդին դարձնի ներքին ու արտաքին քաղաքականության գործիք։ XX դարը ծնեց նեոգաղութատիրություն, որը ժողովուրդներին բացահայտ մարտահրավեր նետեց հռոմեական կայսրությունը նոր հրատարակությամբ վերականգնելու իր մտադրությամբ։ Ֆալանգներին և լեգեոններին փոխարինեցին հրաձգային դիվիզիաները, մեքենայացված և ավիա-դեսանտային միավորումները, որոնք զինված են հրանոթներով ու տանկերով, ինքնաթիռներով և ջրածնային ռումբերով։ Ու, այնուամենայնիվ, ինչպես Հավերժական քաղաքի ժամանակ, այնպես էլ այժմ այդ ամենը բավական չէ. ժողովուրդներին ստրկացնելու, զավթիչների առաջ նրանց զինաթափելու համար պահանջվում է նաև «գաղափարական» զենք։

Հին աշխարհի աղբարկղներից հանվեց «որտեղ բարիք, այնտեղ էլ հայրենիք» բանաձևը և նրա վրա էլ կառուցվեցին նոր ծրագրեր։ Արևմտաեվրոպական երկրների ժողովուրդներին կոչ է արվում՝ հանուն «ազատ աշխարհի» շահերի, «ռուսական իմպերիալիզմի» դեմ մղվող պայքարին զոհաբերել ազգային անկախությունը։ «Բացարձակ ազգային սուվերենությունն Արևմուտքի թշնամին է»,— կոնֆերանսում արտասանած իր ճառում հայտարարել է Բոլոնիայի եվրոպական կոլեջի ռեկտոր, աջ սոցիալիստ պ-րն Բրուգմանսը։

Ազգային սուվերենության դեմ կատարվող իմպերիալիստական ոտնձգությունները հիմնավորելու համար եվրոպամոլ ռեակցիոն գիտնականները ճգնում են եվրոպական երկրների ազգային պատմությունը նենգափոխել կոսմոպոլիտական «համաեվրոպական» պատմությամբ[1]։ Կոսմոպոլիտիզմը քարոզում է անտարբեր վերաբերմունք հայրենիքի նկատմամբ, հրաժարումն ազգային արժանապատվությունից, իր ժողովրդի ու երկրի հանդեպ ունեցած մարդու քաղաքացիական ու բարոյական պարտքից։ Իմպերիալիզմի գաղափարախոսները, հենվելով այդ ռեակցիոն տեսության վրա, ջանում են ապացուցել, որ ազգային տարբերությունները, սուվերենությունը, ազգային լեզուն կորցրել են իրենց արժեքը և պետք է իրենց տեղը զիջեն մի ինչ-որ «համընդհանուր կարգի» և «համընդհանուր մշակույթի»։

Թե այդ գաղափարախոսության հետևանքով ինչպես է այլանդակվում մարդու ներաշխարհը, վկայում են մասնավորապես հայրենիքի դավաճան Պենկովսկու դատավարության նյութերը։

Կոսմոպոլիտիզմի բաղկացուցիչ մասը նիհիլիզմն է։ Մարդու ազգային հպարտությունը չի հաշտվում նաև ազգային նիհիլիզմի հետ։ Ցավոք սրտի, մեր մեջ դեռ կան նիհիլիստական տրամադրություն և հոգեբանություն ունեցող մարդիկ։ Նրանցից մեկի մասին, որը անանուն նամակ էր գրել «Կոմունիստ» թերթի խմբագրությանը, խոսվում է «Նիհիլիզմի և նիհիլիստների մասին» հոդվածում[1]։

---

[1] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Հայպետհրատ, Երևան, 1952, էջ 40։

[1] В. Б. Княжеский, О фальсификации идеологии европейской «интеграции», журнал «Вопросы истории», № 5, 1960.

[1] «Коммунист» (Ереван), 22 июля 1963.

Այդ «աշխարհաքաղաքացին» բաղմադարյան հայ գրականության անդաստանում ոչինչ պայծառ չի գտնում. ըստ նրա, այնտեղ իշխում է միայն «մտավոր սովը»։ Հոդվածում ճիշտ է նշվում, որ այդպիսի մարդիկ մեծ վնաս են հասցնում մեր ժողովրդին։

Պարզ է, որ առողջ մտածելակերպի տեր մարդը, որը թանկ է գնահատում իր արժանապատվությունը և իր ժողովրդի ու երկրի պատիվը, չի կարող հաշտվել ոչ նիհիլիստների, ոչ էլ կոսմոպոլիտների հետ։

§ 150. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ «ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ» ԵՎ «ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ» ՄԱՍԻՆ։ Պարզապես ապշեցուցիչ է նեոգաղութատիրության չափազանց հեշտությամբ այլակերպվելու ունակությունը։ Հարկավոր պահին սոցիալիզմի մոլեռանդ թշնամին դառնում է «սոցիալիստ» և նույնիսկ «սոցիալիզմ» է կառուցում, ժողովուրդների ազատության ու անկախության մահացու թշնամին հանդես է գալիս իբրև նրանց արդար գործի պաշտպան, ռասիստը, շովինիստը դառնում է «ինտերնացիոնալիստ», տեղական «նացիոնալիզմի թշնամի»,— մի խոսքով, ըստ տեղի ու ժամանակի է ամեն ինչ դառնում, ընտրելով սոսկ նպատակին հասնելու շահավետ միջոցներ։

Ֆրանսիական բոլոր գույնի ու երանգի գաղութարարներն Ալժիրում հանդես էին գալիս իբրև «ինտերնացիոնալիստներ», ուստի և, հասկանալի է, չէին կարող պայքար չմղել «տեղական ալժիրյան նացիոնալիզմի դեմ։ Նրանք փակում են իրենց աչքերը ֆրանսիական մեծապետական շովինիզմի դեմ, որը ձգտում է ազգալուծել Ալժիրի ժողովրդին, ալժիրական Ալժիրը դարձնել ֆրանսիական Ալժիր։ Գոյություն ուներ միայն տեղական «բուրժուական նացիոնալիզմ», որի դեմ նրանք կռվում էին բոլոր հնարավոր եղանակներով։ Ոչ միայն բուրժուական պարտիաները, այլև սոցիալիստները կոսմոպոլիտիզմի թունավոր զենքը մատուցում են իբրև «ինտերնացիոնալիստական»[1] գաղափարախոսություն։

Այդ մարդիկ չեն կարող չափսոսալ «որ ալժիրցիներն

[1] БСЭ, второе издание, том. 23, стр. 114.

իրենց գոյության իրավունքի ճանաչման համար մղած պայքարում որոշել են խոսել նացիոնալիզմի լեզվով։ Այդ լեզուն... հնացել է. պատմական զարգացումը ավելի, քան երբեք, ընթանում է պրոբլեմների միջազգայնացման ուղղությամբ, տարբեր ազգերի փոխկախվածության ուղղությամբ»[2]։

Ո՛չ, ընդհակառակը։ Պատմական զարգացումը, ինչպես երբեք, ընթանում է այնպիսի ուղղությամբ, որ յուրաքանչյուր ազգ դառնում է ազատ ու սուվերեն, միայն դրա հիման վրա կուլտուրական, առևտրական ու մյուս կապերը նրանց միջև իսկապես սկսում են զարգանալ «պրոբլեմների միջազգայնացման ուղղությամբ, տարբեր ազգերի փոխկախվածության ուղղությամբ»։

Ի՞նչ «ինտերնացիոնալիզմի և փոխկախվածության» մասին կարող էր խոսք լինել այն ժամանակ, երբ Ալժիրը Ֆրանսիայի գաղութն էր։ Ֆրանսիական «ինտերնացիոնալիզմը» արտահայտվում էր միայն այն բանում, որ գաղութարարները ուժով ալժիրցիներին պարտադրում էին իրենց պետական ու սոցիալական կարգերը, սիստեմը, բարոյականության և մշակույթի այլևայլ նորմաները, իրենց բարքերը, սովորությունները, տրադիցիաները, որոնք բոլորովին էլ չէին բխում Ալժիրի ժողովրդի ապրելակերպից ու կենցաղից, իսկ տեղական «նացիոնալիզմն» արտահայտվում էր այն բանում, որ ալժիրցիներն ուզում էին իրենց երեխաներին կրթել ո՛չ թե ֆրանսերենով, այլ մայրենի լեզվով, դառնալ իրենց հայրենիքի հարստությունների տերը, հասնել այն բանին, որ իրենց ճակատագիրը տնօրինեն իրենք, այլ ոչ թե Ելիսեյան պալատում նստած ինչ-որ մի Գի Մոլլե, դը Գոլ կամ մեկ ուրիշը։

Նացիոնալիզմի և ինտերնացիոնալիզմի մասին տարօրինակ գաղափար ունեն XX դարի գաղութարարները։

Փարիզի հիմնադրման թվականը նշելը «ինտերնացիոնալիզմ» է, իսկ էլ-Դշեզայրի (Ալժիրի) հիմնադրման թվականը նշելն արդեն «նացիոնալիզմ է»։ Ժաննա դը Արկի ծննդյան տարեդարձը տոնելը, ի՞նչ խոսք, «ինտերնացիոնալիզմ է», իսկ Աբդ-էդ-Կադարի ծննդյան տարեդարձը տոնե-

[2] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 100—101.

լը—՞, զարհուրելի «նացիոնալիզմ է»։ Կարելի է նշել Փարիզի թատրոնի հիմնադրման տարեդարձը. դա «ինտերնացիոնալիզմ է», իսկ բերբերական հնադարյան թատրոնի տարեթիվը նշել չի կարելի, դա «նացիոնալիզմ է»։ Ալժիրը Ֆրանսիայի անբաժան, անկապտելի մասը համարելը «ինտերնացիոնալիզմ է», իսկ ասել, թե գաղութային Ալժիրը պետք է անկախ դառնա՝ չի կարելի, դա «նացիոնալիզմ է»։ Արաբական թերթեր ու հանդեսներ հրատարակել կամ Փարիզում ու ֆրանսիական ուրիշ քաղաքներում ապրող հարյուր հազարավոր ալժիրցիների համար արաբական դպրոցներ բանալ չի կարելի՝ դա «նացիոնալիզմ է», իսկ ֆրանսերեն լեզվով թերթեր ու հանդեսներ հրատարակել կամ ֆրանսիական դպրոցներ բաց անելն Ալժիրի նույնիսկ այնպիսի բնակավայրերում, որտեղ ոչ մի ֆրանսիացի չկա (կամ նրանց կարելի է մատների վրա հաշվել) անհրաժեշտ է, որովհետև դա «ինտերնացիոնալիզմ է»։

Հարց է ծագում՝ արդյո՞ք միշտ են ֆրանսիական գաղութարարները առաջնորդվել «ինտերնացիոնալիզմի» և «նացիոնալիզմի» այդպիսի հասկացողությամբ։

1940 թվականին՝ Ֆրանսիայի պատմության այդ օրհասական ժամին, երբ Հիտլերի տանկային միավորումներն մահ էին սփռում ֆրանսիական հողում, «ինտերնացիոնալիստ» Չերչիլը չորրորդ հանրապետության ղեկավարներին առաջարկեց ֆրանսիական ու բրիտանական կայսրությունները միավորել մի միասնական կայսրության մեջ, որի քաղաքացիները «բացարձակապես իրավահավասար» լինեն։ Ֆրանսիայի կառավարող շրջանները մի ակնթարթում «նացիոնալիստներ» դարձան և վճռականորեն մերժեցին «ինտերնացիոնալիստ» Չերչիլի առաջարկությունը։

Նրանք հիանալի հաշիվ էին տալիս իրենց, որ Անգլիան ձգտում է կլանել Ֆրանսիային, որ վերջինս այդպիսի միացյալ դաշինքում ժամանակին կկորցնի իր ազգային դեմքը և կդառնա բրիտանական կայսրության մի մասը։ Իսկ փոքրիկ Ալժիրի հետ կարելի է այդպիսի կատակերգություն խաղալ։ Դա շատ հաճելի է, այնպես չէ՞։ Ասենք բազմալեզու Փարիզն էլ հին Հռոմից վատ չէ։ Ինչո՞ւ Փարիզը չի կարող Հա-

վերժական քաղաքի տեղը գրավել և միշտ իր ձեռքում պահել կայսրության կաթի գետերը։ Հիտլերը ծրագրել էր մի կայսրություն, որը գոյատևելու էր ոչ պակաս, քան հազար տարի։ Այդպես էին երազում Հիտլերի տիպի նեոգաղութարարները, այդպես են երազում նաև այժմ։ Սակայն հիշեցնենք, որ Հռոմի կայսրությունը դիմացավ մի քանի դար, իսկ հիտլերյան ռայխը՝ միայն 12 տարի։ Մենք չգիտենք, թե քանի տարի կդիմանան ժամանակակից տեսանելի ու «անտեսանելի» կայսրությունները, բայց մարդկությունը վստահ է, որ նրանց օրերը հաշված են։ «Կապիտալիզմը շահագործողական վերջին հասարակարգն է»[1]։

§ 151. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՉԵՆ ՄԵՌՆՈՒՄ, ՆՐԱՆՑ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ։ Ընթերցողը հաճախ գրքերում կարդում է՝ «ժողովուրդները ծնվում ու մեռնում են»։ Ճիշտ չէ։ Ժողովուրդները չեն մեռնում, նրանց սպանում են։ Նրանց սպանողը գաղութատիրությունն է։ Այս բանում մենք կհամոզվենք, եթե մի փոքր գնանք գաղութատիրության պատմության խորքերը և համառոտակի ծանոթանանք գաղութային ճնշման, ստրկացման ու շահագործման ձևերին ու մեթոդներին։

Ըստ էության, ոչ մի տարբերություն չկա այն մարդկանց գաղութային քաղաքականության, ովքեր իրենց համարում են բացահայտորեն ռասիստներ և նրանց միջև, ովքեր այդ նպատակները քողարկում են բարձրագոչ ֆրազներով։ Հիրավի։ Ոմանք իրենց ազգը բացեիբաց հայտարարում են «բարձրը ռասա», մյուս ազգերին «իրավունք» վերապահելով կամ ազգալուծվելու կամ դառնալու «տերերի ռասայի» ծառայողներ։ Իսկ ոմանք էլ «իրավահավասարության» դրոշով են անցկացնում փոքր ժողովուրդներին ու ազգերին մետրոպոլիայի «մեծ» ազգի մեջ ձուլելու քաղաքականությունը։

Տվյալ դեպքում «մեծ ազգը» և «բարձր ռասան» կատարում են միևնույն դերը։

Հավի համար ի՞նչ նշանակություն ունի, թե ով է լափում իրեն՝ գա՞յլը, թե՞ աղվեսը։

§ 152. ՈՎ ՎՃԱՐՈՒՄ Է ՆՎԱԳՈՂՆԵՐԻՆ, ՆԱ ԷԼ ՊԱՏՎԻ-

[1] ՍՄԿՊ ծրագիր, էջ 7, Հայպետհրատ, Երևան, 1961։

ՐՈՒՄ է ՆՎԱԳԸ։ Ինչպես տեսնում ենք, գաղութային կեղեքման ու ստրկացման ռազմական, պետական-վարչական և գաղափարական բոլոր մեթոդներն իրագործվում են ամբողջ պետական ապարատի օգնությամբ։ Այդ մեծ բանակի յուրաքանչյուր պաշտոնյա (իսկ նրա մեջ մտնում են ուսադիրներով ու անուսադիր մարդիկ) ստիպված է կանոնավոր կերպով ծառայել, այլապես նա կարող է կորցնել ոչ միայն իր գոյության աղբյուրը, այլև... գլուխը։ Պարզ է, «ով նվագախումբն է պահում, նա էլ նվագ է պատվիրում»։

Բյուրոկրատիզմը (խոսքը վերաբերում է պետական բյուրոկրատիզմին) առաջին անգամ ստրկատիրական Հռոմի կառավարիչներն ստեղծեցին անծայրածիր համաշխարհային կայսրությունը կառավարելու համար։ Այդպիսով, բյուրոկրատիզմն իր ծագմամբ ու գոյությամբ պարտական է շահագործող դասակարգերին ու բռնապետական կարգերին։ Իրենց սեփական երկրի և առավել ևս նվաճված երկրների ժողովուրդներին հլու-հնազանդ պահելու համար նրանք ստեղծում են մի այդպիսի ապարատ։ Նվաճված երկրներում այդ ապարատը կազմվում է մետրոպոլիայի պաշտոնյաներից, ինչպես նաև տեղական վաճառվող տարրերից։

Գաղութարարները միշտ հենվել են բնիկների ստորաքարշ տարրերի վրա։ Հինգերորդ դարի հայ պատմիչ Եղիշեն վկայում է, որ պարսից արքա Հազկերտը (որը Հայաստանի նկատմամբ նվաճողական ու ազգալուծման քաղաքականություն էր վարում. Հ. Ս.) սկսեց բարձր դասել փոքր նախարարներին ավագներից, ստորներին՝ պատվավորներից, տգետներին՝ գիտուններից, երկչոտներին՝ քաջերից... Բոլոր անարժաններին պատիվ էր տալիս, իսկ բոլոր արժանավորներին նսեմացնում...

Հազկերտի այդ գործելակերպը, ինչպես արդեն տեսանք, ժամանակակից գաղութատիրությունը կատարելագործել է և ընդարձակելով նրա գործունեության ոլորտը, հասցրել է հրեշավոր չափերի։

§ 153. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ։ Այժմ պարզենք մի ուրիշ, ավելի կարևոր հարց՝ ի՞նչ կերպ էր փոքր Հռոմը (ինչպես նաև ներկա էտապում

ժամանակակից իմպերիալիստական պետությունները) կարողանում իր ձեռքում պահել աշխարհի մեծ մասը։ Չէ՞ որ այդ իշխանությունն ատելի էր ոչ միայն ստրկացված ժողովուրդներին, այլև էապես բուն մետրոպոլիայի ժողովուրդներին։

Ո՞րն է իշխանության կայունության գաղտնիքը։

Այս հարցի վրա մարդիկ գլուխ են ջարդել դեռ շատ հեռավոր դարերում։ Հռոմեական պատմիչ Կորնելիոս Տակիտոսը (55—120 թ.թ.) կարծում էր, թե առեղծվածը բացարձակապես զորքերի ուժի մեջ է։ Իհարկե, զորքերը մեծ դեր են խաղում։ Արդյոք այդ չէ՞ր պատճառը, որ Սուլլան իր լեգեոնները մտցրեց «ազատության տաճար», իսկ Կեսարն անցավ Ռուբիկոնը։ Բանակի օգնությամբ մեր օրերում էլ հաճախ պետական հեղաշրջումներ են կատարվում։ Բայց, ինչ խոսք, բանն այդ չէ։ Հանգույցը պետական-բյուրոկրատական ապարատի մեջ է, որի միայն մի մասն են կազմում զինված ուժերը։

Պալատական հեղաշրջումները իշխանության բովանդակությունը չեն փոխում. կառավարման ղեկի մոտ փոխվում են տիրապետները՝ մի «աստվածային կայսր» կամ «գերահանճար ֆյուրեր» գրավում է մյուսի տեղը։ Իշխող դասակարգի ներսում պայքարը արմատական փոփոխություն չի կարող մտցնել իրերի ռեալ դրության մեջ։ Պատմությունը վկայում է նաև այլ փաստերի մասին, երբ պետական ապարատը ամբողջությամբ վերցրած կանոնավոր է գործել, թեպետև թշնամաբար է վերաբերվել իրեն գլխավորողին։ Այս բանն առանձնապես վերաբերում է «օրինակելի» գաղութատեր երկրներին, որտեղ գործում է ռազմական բնույթի սկզբունքը՝ «ֆյուրերի պատգամները կատարում են և ոչ թե քննարկում»։

Նշանակում է, խոսքը ոչ թե կառավարողների հասարակ փոփոխության, այլ իշխանության որակական փոփոխության մասին է, երբ ճնշված ժողովուրդն ազատագրվում է մետրոպոլիայի իշխող ազգի գաղութային ճնշումից, կամ երբ ճնշված դասակարգն ազատագրվում է շահագործող դասակարգի լծից։ Իսկ դա կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ,

երբ ճնշման բոլոր օրգանները, այսինքն՝ պետական ամբողջ ապարատը փոխարինվում է իշխանության նոր օրգաններով։

Վ. Ի. Լենինը սովորեցնում է, որ ամեն մի արմատական հեղաշրջման, ամեն մի հեղափոխության գլխավոր հարցը իշխանության հարցն է, կառավարման մի ապարատը մեկ ուրիշով փոխարինելու կամ ջախջախելու հարցը։ Հարցն այն է, թե ում ձեռքում է գտնվում իշխանությունը (այսինքն պետական կառավարման օրգանները), բանվոր դասակարգի՞, թե՞ կապիտալիստների դասակարգի ձեռքում, մետրոպոլիայի իշխող ազգի՞, թե՞ տեղական հիմնական բնակչության ձեռքում։

Գաղութային և կախյալ ժողովուրդները կարող են իշխանություն նվաճել միայն այն ժամանակ, երբ լիովին ազատվեն կեղեքման այն բոլոր ձևերից, որ մետրոպոլիան գործադրում է իր պետական բյուրոկրատական ապարատի միջոցով։

Եվ դա հասկանալի է։

Ինչպես ամեն մի ժողովուրդ, այնպես էլ Ալժիրի ժողովուրդը կարող էր առաջադիմել միմիայն ազատ, այլ ոչ թե ֆրանսիական Ալժիրում, իր «հավերժակենդան մոր» գրկում, և ոչ թե «ազատ», «դեմոկրատական» և «իրավահավասար» Ֆրանսիական միության մեջ, որն այդ լոզունգներով քողարկվելով, գաղութների ժողովուրդներին պահում էր առևտրական ու տնտեսական, ֆինանսական ու տերիտորիալ, քաղաքական ու հոգևոր ճնշման մեջ։

Յոթերորդ գլուխ

ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ Է

Միջազգային խաղաղություն ապահովելու համար հարկավոր է նախ և առաջ վերացնել բոլոր հնարավոր ազգային բախումները։ Յուրաքանչյուր ժողովուրդ պետք է լինի անկախ և սեփական երկրի տերը։

Ֆ. Էնգելս

1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՀԱՎՃԻՌԸ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՆ Ի ԿԱՏԱՐ ԵՆ ԱԾՈՒՄ

§ 154. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ։ Գաղութատիրության երևան գալով շղթայվեց աշխարհի ժողովուրդների ապագան։ Այժմ եկել է շղթան փշրելու ժամանակը։ Նեոգաղութատիրությունը, ինչպես նշվեց, ջանում է վերստին նոր շղթաներով շղթայել մարդկությանը։ Սակայն ժողովուրդների ազատագրման շղթայական ռեակցիան գործում է ամբողջ թափով և անհնարին է որևէ կերպ կասեցնել այն։

Դեռ երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ երկրագնդի երկու միլիարդ 200 միլիոն բնակչից 1,5 միլիարդը, այսինքն մեր մոլորակի բնակչության կեսից ավելին, գտնվում էր ուղղակի կամ անուղղակի գաղութային տիրա-

պետության տակ։ Իսկ այժմ, նրանք, քիչ բացառությամբ, դարձել են անկախ պետությունների քաղաքացիներ։ Եթե Ազգերի լիգայում միավորված էին 56 պետություն, ապա Միավորված ազգերի կազմակերպությունում նրանց թիվը հասել է 120-ի։ Եթե 1955 թվականի սկզբներին Աֆրիկայում ընդամենը չորս անկախ երկիր կար, ապա 1963 թվականի վերջերին արդեն 34 այդպիսի երկրներ նշվեցին քարտեզի վրա։

Անցյալ պատերազմի տարիներին Չերչիլն ասում էր. «Ես պրեմիեր-մինիստր չեմ դարձել, որ նախագահեմ բրիտանական կայսրության վերացման օրերին»։ Պատերազմից հետո նույն Չերչիլը ստիպված էր «նախագահելու բրիտանական կայսրության վերացման օրերին»։ Եվ այդ բանը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ կայսրությունը երկրորդ համաշխարհային պատերազմից ամենևին էլ պարտված դուրս չէր եկել։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, ինչպես նաև Բանվորների միջազգային ընկերության Գլխավոր խորհրդի մյուս անդամները (Պոլ Լաֆարգը, Ֆ. Լեսները), գաղութատիրությունը մարմնավորող եվրոպական ռեակցիան անվանել են «մոնղոլական տիրապետություն՝ ժամանակակից հասարակության նկատմամբ»։ Եվրոպական հեղափոխությունը և դեմոկրատիան, ինչպես նաև «մարդուն ի բնե հատուկ ազատության ձգտումը» ծնեցին այդ «մոնղոլական տիրապետության» ահեղ թշնամուն։ Դրանք առաջադիմական ուժերն են, որոնք իրենց սոսկ աշխարհ գալով արդեն կայացրել են գաղութատիրության մահավճիռը, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծավալված ազգային-ազատագրական շարժումն սկսել է պատմության կայացրած այդ մահավճիռն իրականացնել։

Եթե, ընդամենը, տնտեսական գաղութատիրության մահն արտահայտվեց միայն գաղութներում պետական գերագույն իշխանության կորստով, ընդ որում այնտեղ նա հիմնականում պահպանեց իր տնտեսական դիրքերը (ԱՄՆ, Անգլիա), ապա քաղաքական-տնտեսական գաղութատիրության անկումն ուղեկցվեց և կուղեկցվի գաղութարարների ռազմա-քաղաքական ուժերի լիակատար ջախջախմամբ և նրա

բոլոր դիրքերի կորուստով գաղութներում (Թուրքիա, Իտալիա, Ֆրանսիան Ալժիրում, Պորտուգալիա և այլն)։

§ 155. ՆՈՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ։ Առաջներում գաղութային ժողովուրդներն անկախություն էին նվաճում որևէ պատերազմի ընթացքում կամ մետրոպոլիայի թուլացման ժամանակ։ Այժմ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր փուլում ազատագրման շղթայական ռեակցիան տեղի է ունենում անգամ այդ պայմանների բացակայության դեպքում։ Ընդամենը, տնտեսական նեոգաղութատիրությունը նահանջում է առանց զինված ուժ գործադրելու, իսկ քաղաքական-տնտեսական նեոգաղութատիրությունը գաղութների ժողովուրդներին կեղտոտ պատերազմ է պարտադրում։ Հենց այս է այն նոր, զգալի ու բնորոշ երևույթը, որ մենք նկատում ենք ժողովուրդների ազատագրման համաշխարհային-պատմական պրոցեսում։

§ 156. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է ԾԱՂՐՈՒԾԱՆԱԿԻ ԵՆԹԱՐԿԵԼ, ԱՐԳԵԼԵԼ, ԲԱՅՑ Ո՛Չ ՈՉՆՉԱՑՆԵԼ։ Այս է վկայում մարդկության ողջ պատմությունը, այս է վկայում նաև հին ու նոր աստվածների «մարտական» սխրագործությունների պատմությունը։

Պետությունների ներքին ու արտաքին քաղաքականությունը հանգել էր այն բանին, որ մարդիկ ու ժողովուրդները զրկվում էին իրենց բնական իրավունքներից։ Ինչպես պատկերավոր արտահայտվել է Միքայել Նալբանդյանը, ազատությունը հայտարարվել էր օրենքից դուրս— նա դարձել էր հավերժական աֆսոական։

Հին աշխարհին ծանոթ է յոթ հրաշալիք։ Քանի՞ հրաշալիք է ծանոթ արդի աշխարհին։ Դրանք շատ են։ Բայց, ինչ խոսք, մեր դարի հրաշալիքների հրաշալիքն այն հոյակապ շարժումն է, երբ մարդիկ ու ժողովուրդներն ազատագրվում են շահագործումից, ազատություն են ստանում, իրենց տեղն են գրտնում արևի տակ։ Եթե մյուս բոլոր հրաշալիքները գիտության ու տեխնիկայի զարգացման արդյունք են, ապա այդ հրաշալիքը մարդու ու ժողովուրդների ազատ հոգու թռիչքի արգասիքն է։

Մարդը հեքիաթային արագությամբ է փոխում նյութա-

կան միջավայրը և չափազանց դանդաղորեն՝ հոգեկանը։ Սերն ու ատելությունը, բերկրանքն ու վիշտը, վախն ու խանդավառությունը, ծիծաղն ու արցունքը այսօրվա մարդու համար նույնպիսի մշտական ուղեկիցներն են, ինչպես և հազարավոր տարիներ առաջ։ Ճիշտ է, կենսաբանական գիտության հաջողություններն ու առանձնապես իտալացի բժիշկ Դանիել Պետրուչիի զարմանալի հետազոտությունները շատ բան են ազդարարում։ Մոտ ապագայում ծնողները թերևս կկարողանան նախորոշել ոչ միայն իրենց երեխաների սեռը, այլև ցանկալի ֆիզիկական ու հոգևոր հատկությունները։ Սակայն կենսաբանական գիտության հաջողությունները ինչպիսի փոփոխություններ էլ մտցնեն մարդու տրադիցիոն ընտանեկան ու այլ հարաբերություններում, մարդը չի դադարում մարդ, ժողովուրդները՝ ժողովուրդներ լինելուց։ Նրանք կարող են ներդաշնակ կերպով զարգանալ ոչ թե ապակե անոթներում կամ բանտերում՝ մեծ ու փոքր կայսրություններում, այլ ազատության ու անկախ գոյության պայմաններում։

Դա նրանց տարերքն է։

Շատ ժողովուրդների ծագումն սկսվում է առասպելից, բռնակալության ու կեղեքման դեմ, ազատության համար մարդկանց մղած պայքարից։ Մի այդպիսի առասպելով է սկսվում նաև մեր հայ ժողովրդի աշխարհ գալը։

Այդ առասպելն ինքնին, ըստ էության, բովանդակում է չարիքի դեմ մղվող պայքարը։ Մեր նախահայր Հայկը հրաժարվում է երկրպագել Բելին իբրև աստծու և հնազանդվել նրան, ուստի և ամբողջ գերդաստանով հեռանում է բռնակալից և հաստատվում Հայաստանի լեռներում։ Բելը կատաղում է։ Նա պատերազմի է դուրս գալիս Հայկի դեմ։ Մենամարտում Հայկը հաղթում է բռնակալին և ազատություն նվաճում։

Այո՛, ժողովուրդները միշտ ազատ գոյություն են երազել և նույնիսկ նրանց ձևավորման առասպելները ներդաշնակել են այդ երազանքին։ Սակայն բելերից ազատվելը, ինչպես արդեն տեսանք, այնքան էլ հեշտ չէ։ Պայքարը դարեր է տևում։ Եվ միայն մեր դարն է դառնում ազատագրման դար, բոլոր բելերի մահվան դար։ Աշխարհը փոխվում է։ «Եթե իմպերիալիզմը ճնշել է ժողովուրդների մեծամասնության ազգային անկախությունը և ազատությունը, նրանց կաշկանդել է գաղութային դաժան ստրկության շղթաներով, ապա սոցիալիզմի առաջացումը նշանավորում է ճնշված ժողովուրդների ազատագրության դարաշրջանի սկիզբը։ Ազգային-ազատագրական ռևոլյուցիաների հզոր ալիքը սրբում-տանում է գաղութային սիստեմը, քայքայում է իմպերիալիզմի հիմքերը։ Նախկին գաղութների և կիսագաղութների տեղում առաջացել և առաջանում են երիտասարդ սուվերեն պետություններ։ Դրանց ժողովուրդները թևակոխել են իրենց զարգացման մի նոր ժամանակաշրջան։ Նրանք ոտքի են ելել որպես նոր կյանքի ստեղծողներ և միջազգային քաղաքականության ակտիվ մասնակիցներ, որպես իմպերիալիզմի կործանման ռևոլյուցիոն ուժ»[1]։

§ 157. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ։

Ազգային պետությունները գնալով ավելի ակտիվորեն են հանդես գալիս որպես ինքնուրույն ուժ համաշխարհային ասպարեզում, ընդ որում դա օբյեկտիվորեն առաջադեմ, ռևոլյուցիոն և հակաիմպերիալիստական ուժ է։ Գաղութային ճնշումից ազատագրված երկրները և ժողովուրդները կոչված են աչքի ընկնող դեր խաղալու արդիականության կենտրոնական պրոբլեմը լուծելու՝ համաշխարհային նոր պատերազմը կանխելու գործում։

Անցել է այն ժամանակը, երբ իմպերիալիզմը կարող էր անարգել կերպով այդ երկրների մարդկային և նյութական ռեսուրսները օգտագործել իր սանձազերծած կողոպտչական պատերազմներում։ Եկել է այն ժամանակը, երբ այդ երկրների ժողովուրդները, հաղթահարելով ռեակցիոն և գաղութարարների հետ կապված շրջանների դիմադրությունը, ինչպես նաև ազգային բուրժուազիայի տատանումները, կարող են իրենց ռեսուրսներն ի սպաս դնել ընդհանուր անվտանգությանը, դառնալ խաղաղության նոր ամրոց։ Այդ են պահանջում նրանց սեփական արմատական շահերը, բոլոր ժողովուրդների շահերը։

---

[1] ՍՄԿՊ ծրագիր, էջ 52, Երևան, 1961։

գաղութատիրության շղթաները թոթափող ժողովուրդները ազատագրության տարբեր աստիճանի են հասել։ Նրանցից շատերը, ստեղծելով ազգային պետություններ, ձգտում են հասնել տնտեսական ինքնուրույնության և քաղաքական անկախության ամրապնդման։ Իմպերիալիզմի և ռեակցիոն, պրոիմպերիալիստական տարրերի դեմ պայքարի են ելնում նաև այն երկրների ժողովուրդները, որոնք ձևականորեն ինքնուրույն են, իսկ փաստորեն գտնվում են քաղաքական և տնտեսական կախման մեջ օտարերկրյա մոնոպոլիաներից։ Օտար-հարստահարիչների դեմ հերոսական պայքար են մղում և այն ժողովուրդները, որոնք դեռևս չեն թոթափել գաղութային ստրկության շղթաները։

Երիտասարդ սովետական պետությունները, ինչպես նշված է ՍՄԿՊ ծրագրում, չեն մտնում ո՛չ իմպերիալիստական պետությունների սիստեմի, ո՛չ էլ սոցիալիստական պետությունների սիստեմի մեջ։ Բայց նրանց ճնշող մեծամասնությունը դեռևս չի անջատվել համաշխարհային կապիտալիստական տնտեսությունից, թեպետև առանձնահատուկ տեղ է գրավում այնտեղ։

Դա աշխարհի այն մասն է, որը դեռևս շահագործվում է կապիտալիստական մոնոպոլիաների կողմից։ Քանի դեռ այդ երկրները վերջ չեն տվել իմպերիալիզմից ունեցած տնտեսական կախմանը, նրանք կխաղան «համաշխարհային գյուղի» դեր, կմնան կիսագաղութային շահագործման օբյեկտ։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գոյությունը և իմպերիալիզմի թուլանալը ազատագրված երկրների ժողովուրդների առջև բացում են ազգային վերածննդի, դարավոր հետամնացության և աղքատության վերացման, տնտեսական ինքնուրույնության հասնելու հեռանկար։

Ազգերի շահերը պահանջում են ոչնչացնել գաղութատիրությունը, արմատախիլ անել իմպերիալիզմի տիրապետությունը, դուրս մղել օտարերկրյա մոնոպոլիաները, ստեղծել ազգային արդյունաբերություն, վերացնել ֆեոդալական կարգերն ու մնացուկները, կենսագործել արմատական ագրարային վերափոխություններ ամբողջ գյուղացիության մասնակցությամբ և հօգուտ նրա, իրականացնել ինքնուրույն խաղաղասիրական արտաքին քաղաքականություն, հասարակական կյանքի դեմոկրատացում, քաղաքական անկախության ամրապնդում։ Համազգային խնդիրների լուծման գործում շահագրգռված են ազգի բոլոր հայրենասիրական և առաջադեմ ուժերը։ Դա այն հողն է, որի վրա հնարավոր է նրանց միավորումը։

Ազատագրված երկրների զարգացման պրոցեսը կարող է լինել բարդ, անգամ մի շարք էտապներից։ Ազատագրված երկրների պատմական և սոցիալ-տնտեսական տարբեր պայմանների պատճառով մասսաների ռևոլյուցիոն ստեղծագործությունը շատ յուրահատկություններ կմտցնի սոցիալական առաջադիմության ուղիով նրանց զարգանալու ձևերի ու տեմպերի մեջ։

Ո՞ր ուղիով կընթանան գաղութատիրության լծից ազատագրված երկրները, կապիտալիստակա՞ն, թե՞ ոչ կապիտալիստական զարգացման ուղիով. այս է նրանց ժողովուրդների առջև ծառացած արմատական պրոբլեմներից մեկը։

Թե ո՛ր ուղին ընտրել, դա իրենց՝ ժողովուրդների ներքին գործն է։ Համաշխարհային ասպարեզում ուժերի ներկա հարաբերակցության և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի հզոր աջակցության ռեալ հնարավորության առկայության պայմաններում նախկին գաղութների ժողովուրդները կարող են այդ հարցը լուծել իրենց օգտին։ Այդ ուղու ընտրությունը կախված կլինի դասակարգային ուժերի հարաբերակցությունից։

Զարգացման ոչ-կապիտալիստական ուղին ապահովվում է բանվոր դասակարգի, ժողովրդական մասսաների, համադեմոկրատական շարժման պայքարով և համապատասխանում է ազգի բացարձակ մեծամասնության շահերին։

§ 158. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ՄԱՍԻՆ։ Ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումն ունի մի քանի փուլ։ Առաջին փուլը՝ ճնշված ազգերի ինքնորոշումն է, պետական անկախության նվաճումը։ Այդ փուլը մեր օրերում գտնվում է ավարտման շրջանում։ Ժողովուրդներն ազգային-ազատագրական շարժման հաջորդ փուլերում պայքարում են արդեն իրենց քաղաքական անկա-

խության ամրապնդման համար, անհետաձգելի տնտեսական ու սոցիալական բարեփոխումների իրագործման համար։ Մեզ հետաքրքրում են շրջայական ռեակցիայի առաջին փուլի հարցերը։

Իր տեղում մենք քննարկեցինք գաղութային ստրկացման մեթոդները։ Միանգամայն ակներև է, որ ճնշված ժողովուրդները կեղեքման այդ մեթոդներին հակադրում են ազատագրման իրենց սեփական մեթոդները։

Գաղութային ժողովրդի դիմադրության ուժը, պայքարի մեթոդների ընտրությունը, ինչպես նաև այդ մեթոդների յուրահատկությունները պայմանավորված են շատ գործոններով։

Դրանք կախված են.

Նախ, տվյալ գաղութի հասարակական զարգացման մակարդակից, նրա ժողովրդի դասակարգային կազմից և մետրոպոլիայի քաղաքականությանը դիմադրելու նրա ռեալ հնարավորություններից և այլն։

Երկրորդ, գաղութային ստրկացման այն մեթոդներից, որ գործադրում է մետրոպոլիան։

Երրորդ, միջազգային դրությունից։

Այսպիսով, յուրաքանչյուր ժողովուրդ անկախության պայքարում ղեկավարվում է ամենից առաջ ելնելով սեփական երկրի պայմաններից, հնարավորություններից և պատմական փորձից։ Ուրիշ ոչ մի բան չի կարող փոխարինել դրան։ Սակայն կան նաև ընդհանուր, ինչպես նաև այնպիսի մասնավոր մեթոդներ, որոնք ժամանակին դարձել են բոլորի սեփականությունը։

§ 159. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔ Է, ԱՅՍԻՆՔԸՆ՝ ՃՆՇՈՂ ԱԶԳԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՊԵՍ ԱՆՋԱՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ։

Տակավին վերջերս Աֆրիկայի ժողովուրդները նույնիսկ չէին կարող երազել պետական անկախության մասին։ Նրանք մարտնչում էին տնտեսական և կուլտուր-լուսավորական բարեփոխումների համար։ Այնուհետև կռիվ էին մղում ինքնավար ու ֆեդերատիվ իրավունքների համար։ Բայց երբ գաղութարարներն առաջ քաշեցին «սև ֆրանսիացիների կայսրության», «սև անգլիացիների կայսրության» լոզունգը, նրանք պահանջեցին «անկախություն մի՞ սերնդի կյանքի ընթացքում», իսկ այնուհետև «անկախություն՝ անհապաղ»։

Երբ գաղութարարները «իրավահավասարության» քողի տակ առաջ քաշեցին «ապազգայնացման», «միավորման» լոզունգներ, ժողովուրդները մարտական կոչ արեցին՝ «չի՛ լինի այդ բանը», «Աֆրիկան աֆրիկացիների՛ն»։

Հակոբ Շահամիրյանը տակավին XVIII դարում ասում էր նույն բանը՝ «Հայաստանը պետք է հայերինը լինի»։ Տարբեր գաղութարարներ դրան պատասխանում էին միատեսակ՝ «Հայաստանը մեզ հարկավոր է առանց հայերի»։ Պորտուգալացիները և մյուս գաղութարարները նույնպես այդպես էին պատասխանում աֆրիկացիների պահանջներին։ Սակայն այսօր դրությունը փոխվել է։ Գաղութային ճնշման ռազմական, պետական-վարչական և գաղափարական մեթոդներին նրանք հակադրում են իրենց ազատագրական պայքարի ռազմական, քաղաքացիական ու գաղափարական մեթոդները։

Եվ դա բնական է։

Միշտ էլ թույնի դեմ հակաթույն է գտնվում։ Տանկերի երևան գալու կապակցությամբ երևան եկան հակատանկային հրանոթներ, ինքնաթիռների դեմ՝ զենիթային հրանոթներ։ Այդպես է ոչ միայն պատերազմում, այլև հասարակական կյանքում։

Կեղեքիչները ապազգայնացման, միավորման քաղաքականությունը հաջողությամբ առաջ տանելու համար, ինչպես արդեն հիշատակեցինք, հնարել են մի կեղծ տեսություն՝ «յուրաքանչյուր պետություն պետք է ազգային լինի»։ Սակայն շատ շուտով գտնվեց հակաթույնը՝ աշխարհ եկավ մի ուրիշ, արդար, կենսական տեսություն՝ «յուրաքանչյուր ազգ պետք է պետություն դառնա», այսինքն՝ յուրաքանչյուր ճնշված ազգ ինքնորոշման, ազատության, սոսվերեն պետության ստեղծման անվիճելի իրավունք ունի։ Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ ազգային ու գաղութային հարցը ամենից առաջ դարձել է մի այնպիսի հարց, որը վերաբերում է քաղաքական դեմոկրատիայի բնագավառին, և որ գաղութների ազատագրման պահանջը այլ բան չէ, քան ազգերի ինքնորոշում, այսինքն

ճնշող ազգից քաղաքականապես անջատվելու բացարձակ իրավունք։

§ 160. «ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՍՏԵՂԾԵԼ ԵՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԴՐԱՆՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ»։ Իմպերիալիզմի գաղութային սիստեմի ետպատերազմյան քայքայումը և նրա փլատակների վրա քաղաքականապես անկախ պետությունների ստեղծումը Աֆրիկայում ու Ասիայում այդ մտքի կենսունակության ու ճշտության վառ վկայությունն է։ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ռուպերտ Էմերսոնը «Կայսրությունից դեպի ազգերը։ Ասիայի և Աֆրիկայի երկրների ժողովուրդների՝ իրենց իրավունքների համար պայքարի վերելքը» ծավալուն մենագրության մեջ ոչ միայն ընդունում է գաղութային հին կայսրությունների քայքայումը, այլև յուրաքանչյուր ազգի ինքնուրույն գոյությունը։

Յուրաքանչյուր ժողովրդի անկախության իրավունքը ճանաչում է նաև եկեղեցին։ 1963 թվականի ապրիլի 11-ին Վատիկանում Պապի ստորագրած «Պացեմ նի տերիս» («Խաղաղություն աշխարհին») կոնդակում ասված է. «Բոլոր ժողովուրդներն ստեղծել են անկախ պետություններ կամ գտնվում են դրանք ստեղծելու նախօրյակին»[1]։ Պատմության օրինաչափ ընթացքը չէր կարող չհանգեցնել այդ պրոցեսի հաղթանակին։

§ 161. ԱՄՆ-Ի ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐՆ ԻՐԵՆՑ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ» ԴԵՄ։ Մի ժամանակ իսպանական կայսրությունն այնքան այնածավալ ու համայնապարփակ էր, որ երբ կայսրության առանձին մասերի վրա գիշերն էր իջնում, մյուս մասերի վրա արևն էր ծագում։ Եվ ինչքա՞ն էին դրանով հպարտանում իսպանական թագավորները։ Համաշխարհային ավազակների օրինակով նրանք բռնել էին անվերջ ուրիշ երկրներ նվաճելու ուղին, համաշխարհային կայսրություն ստեղծելու ուղին, մի ուղի, որի համար բնորոշ են միլիոնավոր մարդկանց կործանումը և անթիվ-անհամար նյութական ու կուլտուրական արժեքների ոչնչացումը։ Նրանք բնիկներին պարտադրում էին իրենց կրոնը, լեզուն, հասարակական վարչաձևը։ Բայց և այնպես ոչ մի բան չէր օգնում։ Լատինական և կենտրոնական Ամերիկայի ժողովուրդները փշրեցին Իսպանիայի և Պորտուգալիայի գաղութային կեղեքման շղթաները և պետական անկախություն նվաճեցին։ Ճիշտ է, հետո նրանք ընկան ԱՄՆ-ից տնտեսական կախման մեջ և մտան նրա «անտեսանելի» կայսրության մեջ։ Բայց արդյո՞ք երկար ժամանակով։ Կուբայի օրինակը վկայում է, որ ԱՄՆ-ի «ինտերնացիոնալիստները», որոնք պայքար են մղում իրենց հարավային հարևանների «տնտեսական նացիոնալիզմի» դեմ, ձախողվում են հիշտ այնպես, ինչպես ձախողվում են քաղաքական-տնտեսական կարգի գաղութարարները, որոնք կռվում են գաղութային ժողովուրդների «քաղաքական նացիոնալիզմի» դեմ։

Բուրժուական բազմազգ պետությունը միշտ եղել է այն շարիքը, որից տուժել և տուժում են մետրոպոլիային ենթակա ժողովուրդները, և որքան նա բռնապետական է դառնում, այնքան համապատասխանաբար մեծանում է այդ շարիքը, վերածվելով ողբերգության աղբյուրի, զարհուրելի աղետի փոքր ժողովուրդների համար։ Միայն այդպիսի կայսրություն-պետություններ ոչնչացմամբ ժողովուրդները կարող են ազատվել կեղեքման, ոչնչացման հոգեկան ու բարոյական նվաստացման վտանգից։

§ 162. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐՆ ԱԼԺԻՐՅԻՆԵՐԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ» ԴԵՄ։ Ֆրանսիական միության, Ազգերի բրիտանական համագործակցության և ուրիշ երկրների նեոգաղութատիրության ջատագովները պնդում են, թե իբր գիտության, տեխնիկայի ու կուլտուրայի զարգացումը ինքնաբերաբար տանում է դեպի ժողովուրդների միավորում, նրանց միաձուլում մետրոպոլիայի իշխող ժողովուրդների հետ, ուստի և իբր թե այն ժողովուրդները, որոնք մտնում են Ֆրանսիական միության և Բրիտանական համագործակցության մեջ, չպետք է անջատվեն ու առանձին, ինքնուրույն պետություններ կազմեն, քանի որ այդպիսի երևույթը ոչ թե առաջադիմական, այլ «ռեակցիոն» կլիներ։ Ֆրանսիական գաղութարարները մասնավորապես

[1] За рубежом, № 16, 1963, стр. 19.

այդպիսի «խորհուրդներ» էին տալիս Ալժիրի ժողովրդին և ազգային-ազատագրական շարժման ղեկավարներին մեղադրում «քաղաքական նացիոնալիզմի» ու համանման մեղքերի մեջ։

§ 163. XX ԴԱՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ։ Տնտեսության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացումը պայմաններ են ստեղծում ոչ թե այն բանի համար, որ գաղութային ու կախյալ ժողովուրդներն ապագաղութանան, այլ, ընդհակառակը, այդ զարգացումը, ինչպես երբեք, ուժեղացնում է նրանց ազգային հպարտությունը, բարձրացնում ինքնագիտակցությունը, նրանց մեջ կյանքի է կոչում վճռականություն՝ սահմանազատվելու «հովանավորներից», ապրելու ազատորեն, առանց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու հոգևոր կեղեքման։

Բանն այն է, որ գիրքը, մամուլը, կինոն, հեռուստատեսությունը և մյուս միջոցները հնարավորություն են տալիս նույնիսկ ամենախավար ցեղերին ու ժողովուրդներին ծանոթանալու ամենազարգացած երկրների ու ժողովուրդների կյանքին, կենցաղին, պետական ու հասարակական հիմնարկների աշխատանքներին, իսկ այդ ամենը նրանց առջև դնում է բազմաթիվ հարցեր՝ ինչո՞ւ մեր երկիրը այդքան հետամնաց է, ինչո՞ւ մեր լեզուն և մշակույթը մեռնում են, ինչո՞ւ մենք այդպես աղքատ ենք ու վատ ենք ապրում։ Ինչո՞ւ... Եվ այս անվերջ «ինչուները» նրանց հետապնդում են տառացիորեն յուրաքանչյուր քայլում, ինչպես փոքրիկ երեխաներին, երբ նրանք սկսում են կյանքի երևույթները հասկանալ։ Այդ «ինչուների» պատասխանը բխում է բնականորեն՝ մենք չենք ապրում այնպես, ինչպես մենք ենք կամենում, այլ այնպես, ինչպես հրամայում են ուրիշները. այն պատճառով, որ մեր «հավերժակենդան մոր» բոլոր հարստություններին տիրում են ուրիշները. այն պատճառով, որ...

Կարճ ասած՝ աշխարհում, բանության և կեղեքման աշխարհում, չի կարող լինել ժողովուրդների կամավոր միավորում մի միասնական եղբայրական ընտանիքում։ Միավորվելուց առաջ և միավորվելու համար ժողովուրդները պետք է սկզբում սահմանազատվեն կեղեքիչներից, գաղութարարներից, դառնան իսկական ազատ, իրավահավասար և սուվերեն ժողովուրդներ։

Միայն միջին դարերի վերջերից Եվրոպայում սկսեցին կազմավորվել ազգային պետությունները։ «Միայն այդպիսի պետություններն են եվրոպական իշխող բուրժուազիայի նորմալ քաղաքական կազմակերպություն Veztassung ներկայացնում և դրա հետ միասին ծառայում որպես անհրաժեշտ նախադրյալ ժողովուրդների ներդաշնակ համագործակցության ստեղծման համար, առանց որի պրոլետարիատի տիրապետությունը չի կարող գոյություն ունենալ»[1] (Ընդգծումը մերն է — Հ. Ս.)։

Հենց ժողովուրդների անկախության բուռն ձգտումը ծնեց XX դարի անհաղթելի հզոր շարժումը՝ ազգային-ազատագրական շարժումը, որը Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի մի քանի երկրների ղեկավարներ անվանում են «քաղաքական նացիոնալիզմ», երբ ժողովուրդները պայքարում են պետական անկախության համար (Ներու, Սուկառնո, Նասեր) և «տնտեսական նացիոնալիզմ», երբ պայքարում են տնտեսական անկախության համար (Քվադրոս, Վելամկո, Գուլարտ)։

§ 164. ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ։ Շատ երկրներում ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումն ընթանում է նացիոնալիզմի դրոշով։ «Մարքսիստ-լենինյանները տարբերություն են դնում ճնշված ազգերի նացիոնալիզմի և ճնշող ազգերի նացիոնալիզմի միջև։ Ճնշված ազգի նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն, որն ուղղված է ճնշման դեմ, և կոմունիստները պաշտպանում են այն»[2]։ Այդ համադեմոկրատական բովանդակությունը արտահայտվում է ճնշված ժողովուրդների ձգտումով՝ ազատագրվելու իմպերիալիստական ճնշումից, ձեռք բերելու ազգային անկախություն և ազգային վերածնունդ։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, часть I, стр. 453, первое издание.

[2] Տե՛ս ՍՄԿՊ ծրագիր, Երևան, 1961, էջ 55—56։

Գաղութարարների «բաժանիր, որ տիրես» քաղաքականությանը ժողովուրդները հակադրում են ազգային միասնության, համաժողովրդական միասնության քաղաքականությունը, քաղաքականություն, որին մասնակցում է նաև ազգային բուրժուազիան, որը թեպետև իր էությամբ երկակի բնույթ ունի, բայց ժամանակակից պայմաններում գաղութներում, նախկին գաղութներում և կախյալ երկրներում, կապված չլինելով իմպերիալիստական շրջանների հետ, օբյեկտիվորեն շահագրգռված է հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխության հիմնական խնդիրներով։

Ճնշված ժողովուրդների ազատության ու անկախության պայքարի այդ միասնական ճակատը ուղղված է առաջին հերթին ասիմիլյացիայի ու ազգալուծման քաղաքականության դեմ։

§ 165. ԴՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱԼԺԻՐԱԿԱՆ ԱԶԳ։ Միացման քաղաքականությունը, ինչպես արդեն ցույց տվեցինք, խարբսխված է միասնական պետության, միասնական էկոնոմիկայի սկզբունքի վրա։ Նրա հիմունքները ֆրանսիական գաղութարարները մշակել են դեռևս XIX դարի վերջերին։ 1881 թվականի օգոստոսի 26-ին հռչակվեց «Միավորման մասին» դեկրետ, որով Ալժիրի տերիտորիան հայտարարվում էր Ֆրանսիայի անբաժան մասը և պետք է նրա հետ ապրեր միևնույն կյանքով։

Իսկ ինչ վերաբերում է ազգալուծման քաղաքականությանը, ապա այն սերտորեն կապված է միացման քաղաքականության հետ և նպատակ ունի «նատուրալացման» ճանապարհով ամրապնդել մետրոպոլիան, ամրապնդել իշխող ազգի քանակի ավելացմամբ՝ ի հաշիվ այն կենդանի աղբյուրի, որի մասին հանգամանորեն խոսվեց։

Ֆրանսիացի հրապարակախոսներ Կոլդ և Ֆրանսիս Ժանսոնները «Ալժիրը օրենքից դուրս» գրքում մերկացնող մեծ ուժով հանդես են գալիս ֆրանսիական նեոգաղութարարների՝ Ֆրանսիայի համար աղետաբեր այդ ազգալուծման քաղաքականության դեմ, թեպետև չեն բացահայտում այդ ֆաշիստական, ռասիստական քաղաքականության իսկական բնավանգակությունը։ Նրանք բերում են բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են այդ քաղաքականության ձախողումը։

Միացման և ազգալուծման քաղաքականության իրագործման ամենաեռուն շրջանում ֆրանսիական կոմունիստները առաջինը հանդես եկան ֆրանսիական իմպերիալիստների այդպիսի գծի դեմ, պաշտպանեցին ճնշված ժողովուրդների, մասնավորապես Ալժիրի ժողովրդի իրավունքները։ Ֆրանսիայի կոմպարտիայի ղեկավար Մորիս Թորեզը դեռ 1939 թվականին հռչակեց, որ «գոյություն ունի ալժիրական ազգ»[1]։

§ 166. ԱԶԳԱԼՈՒԾՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սև ու դեղին ֆրանսիացիներից կայսրություն ստեղծելու պլանի անհեթեթությունն ակներև դարձավ հենց իրենց՝ այդ պլանի հեղինակների համար։ Խոսելով Սև Աֆրիկայի ժողովուրդների նկատմամբ ֆրանսիական նեոգաղութարարների միավորման ու ազգալուծման քաղաքականության կործանման մասին, «Բիզնես ուիկ» հանդեսը պնդում էր, որ Ֆրանսիան որոշել է գաղութային նոր քաղաքականություն մշակել ետպատերազմյան անգլիական քաղաքականության օրինակով։ Բայց եթե «Փարիզն այլևս չի փորձում աֆրիկացիներին դարձնել սև ֆրանսիացիներ, ապա միայն այն պատճառով, որ ազգալուծման քաղաքականությունը վճռականորեն ըմբոստացել են աֆրիկյան ժողովուրդները»։ Նույնիսկ գաղութների վաճառված արտոնյալ տարրերը, որոնց պահում են Փարիզի նեոգաղութարարները և որոնք իրագործում են նրանց միավորման քաղաքականությունը, ստիպված էին հանդես գալ ազգալուծման քաղաքականության դեմ, որը զզվանք էր առաջացրել ազգաբնակչության բոլոր խավերում։ «Դեռ տասը տարի առաջ աֆրիկյան կրթված դասակարգերն ուզում էին ֆրանսիական մտավորականություն դառնալ։ Այժմ այդ բանը չկա»,— խոստովանում է նույն հանդեսը։

Նույն հոդվածում պնդում է արվում, թե աֆրիկյան մտավորականությունը ձգտում է լիակատար ազգային ան-

---

1 **Л. Бухали.** Октябрьская социалистическая революция и национальное движение в Алжире, стр. 6.

կախության և այդ պատճառով ստեղծում է իր ազգային կազմակերպությունները՝ արհմիությունները, կուսակցությունները ու հասարակական կազմակերպությունները, որոնք մտնում են ոչ թե ֆրանսիական համապատասխան, ինչպես այդ առաջներում էր, այլ միջազգային կազմակերպությունների մեջ։ Եվ դա հասկանալի է։ Առաջին դեպքում այդ կազմակերպություններն ու կուսակցությունները գաղութներում մետրոպոլիայի միայն ֆիլիալներն էին, որոնք գաղութարարների քաղաքականությունն էին վարում, երկրորդ դեպքում նրանք անկախ են։

Ալժիրի (և ո՛չ միայն Ալժիրի) մի քանի քաղաքական գործիչներ առաջարկում էին Ֆրանսիայի դեմոկրատական ուժերի հետ համատեղ հանդես գալ առավել լայն «դեմոկրատական իրավունքների» նվաճման համար և ոչ թե անկախ ալժիրական պետություն ստեղծելու նպատակով Ֆրանսիայի կամ Ֆրանսիական միության կազմից դուրս գալու համար։ Այդ մարդիկ մետրոպոլիայի գաղափարների ֆրանսիական նեոգաղութարարների գիտակից կամ անգիտակից գործակալները դարձան։

Ինչպես ուղղակի գործակալները, այնպես էլ այդպիսի գծի կողմնակիցները, խայտառակ պարտություն կրեցին։

Միացման ու ազգալուծման քաղաքականությունը ձախողվեց ո՛չ միայն Ալժիրի ու Աֆրիկայի մյուս երկրների, այլև փոքր կղզիների գաղութային ժողովուրդների նկատմամբ։ Փարիզում 1962 թվականի մայիսի 16-ի պրես-կոնֆերանսում Մարտինիկա կղզու կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Քամիլ Սիլվեստրը նշեց, որ «ֆրանսիական կառավարության ազգալուծման քաղաքականությունը ձախողվեց Անտիլյան կղզիներում ճիշտ այնպես, ինչպես Ալժիրում։ Մարտինիկայի ժողովուրդը ձգտում է իր ձեռքը վերցնել իր գործերի ղեկավարությունը և ուզում է Ֆրանսիայի հետ հաստատել նոր հարաբերություններ, որոնք ազատ լինեն գաղութային ամեն մի կապանքից»[1]։

«Ֆրանսիայի հետ հաստատել գաղութային ամեն մի

[1] Газета «Коммунист» (Ереван), 29 мая, 1962.

կապանքից ազատ նոր հարաբերություններ»,— դա միաժամանակ նշանակում է օգնել իրեն՝ ֆրանսիական ժողովրդին ազատագրվելու իր «ազգային» կեղեքիչներից և նրանց ձեռքում չդառնալ ուրիշ ժողովուրդների ստրկացման գործիք։ Հենց այդ բանի համար է պայքարում Ֆրանսիայի կոմունիստական պարտիան։

§ 167. «ՉԻ ԿԱՐՈՂ ԱԶԱՏ ԼԻՆԵԼ ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՈՐ ՃՆՇՈՒՄ Է ՈՒՐԻՇՆԵՐԻՆ»,— այսպես են հայտարարել գիտական կոմունիզմի հիմնադիրները, այսպես է ասված կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության հայտարարության մեջ։ Դա մի ճշմարտություն է, որը հաստատվել է աշխարհիս ժողովուրդների ամբողջ պատմության ընթացքով։

Ազատ չէին ոչ Փյունիկիայի, ոչ էլ Կարթագենի հանրապետության ժողովուրդները։ Ազատ չէր նաև Հռոմի ժողովուրդը, որն ապրում էր Բերբերիայի ու Միջերկրական ծովի ուրիշ երկրների ժողովուրդների հաշվին և աշխարհի տերն էր համարվում։ Իրականում այն մի կույր գործիք էր արքաների, սենատի ու կայսրերի ձեռքում։ Ֆրանսիայի ժողովուրդն էլ չի կարող ազատ համարվել, քանի դեռ այդ երկրի կառավարող շրջանները ճնշում են գաղութային մյուս ժողովուրդներին։ Սակայն ֆրանսիական ժողովուրդը փառավոր հեղափոխական ավանդներ ունի։ Նրա քաջարի որդիներն ու դուստրերն էին, որ Ալժիրում մղված գաղութային պատերազմն անվանեցին «կեղտոտ», նրանք պահանջեցին դադարեցնել այդ պատերազմը, Ալժիրի ժողովրդին տալ ինքնորոշման, ազատության ու անկախության իրավունք։

Ֆրանսիական հրապարակախոս Պիեռ Կուրտատը «Պրավդայում» հրապարակած իր հոդվածում գրել է. «Հիշում եմ, մանկությանս օրերին մեր դպրոցում փակցված էր Ֆրանսիայի ու Ամերիկայի քարտեզը, որի վրա աֆրիկյան աշխարհամասի մեծ մասը ներկված էր նույն գույնով, ինչ որ Ֆրանսիան։ Այն ժամանակ այդ քարտեզը հպարտություն էր պատճառում ինձ։ Եվ ես շատ ժամանակ ծախսեցի, շատ գրքեր կարդացի, կենսափորձ կուտակեցի, որից հետո միայն հասկացա, որ քարտեզի այդ գույնով հպարտանալու ոչ մի

հիմք չկա։ Այդ գույնը նշանակում էր, որ իմ երկիրը տիրացել էր շատ ժողովուրդների ազատությանը, նրանց պարտադրել իր «խնամակալությունը»։ Հիմա, իբրև ֆրանսիացի և իբրև կոմունիստ, ես հպարտանում եմ, որ աֆրիկյան աշխարհամասի քարտեզը Աֆրիկայի գույնն է ստանում։ Եվ ես սպասում եմ այն օրվան, երբ ՄԱԿ-ի արարողապետը Գլխավոր ասամբլեային կներկայացնի հսկայական զոհերի գնով ազատություն նվաճած Ալժիրի պատվիրակությանը»[1]։

***

Մենք նշեցինք ազգային-ազատագրական շարժման մի քանի ընդհանուր հարցեր։ Այժմ քննության առնենք ժողովրդական պայքարի այլ կարգի մեթոդներ։ Դրանց շարադրման ընթացքում կհետևենք Ֆրանսիայի գործողություններին, Ալժիրի ժողովրդի դեմ նրա պայքարի տակտիկական եղանակներին, որոնք մեծապես տարբերվում են 130 տարի առաջ Ալժիրի նվաճման եղանակներից։

Այս ամենը գալիս է լրացնելու մեր հիմնական նյութը. սրանք են գաղութներում գերշահույթի աղբյուրների յուրացման նեոգաղութարարների մեթոդները և իրենց անկոչ խնամակալներից ժողովրդական մասսաների ազատվելու ուղիները։

II. ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

§ 168. ԵՐԿԱԹԵ ՇՂԹԱՆԵՐԸ ԻԲՐԵՎ ՈՍԿԵ ՄԱՆՅԱԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ԶԳՏՈՒՄՆԵՐԸ։ Հնարավոր է ճնշել ժողովրդին, նրանից խլել իրավունքները, կաշկանդել ստրկության շղթաներով, բայց անհնարին է այդ երկաթե կապանքները ներկայացնել իբրև ոսկյա մանյակներ։ Ու այնուամենայնիվ, ժամանակակից գաղութարարները, մի՛ջնադարյան ալքիմիկոսների նման, փորձում են անել անհնարին։

Ֆրանսիական մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն շարունակ պրոպագանդում էին իրենց «անշահախնդիր օգնությունն Ալժիրին», թմբկահարում «հաջողությունները» արդյունաբերության, գյուղատնտեսության ու մշակույթի զարգացման գործում, անընդհատ բարբաջում, թե ֆրանսիական տիրապետության տարիներին ինչպիսի նավահանգիստներ, քաղաքներ, գյուղեր, գործարաններ ու ֆաբրիկաներ են կառուցվել Ալժիրում, այն մասին, թե ինչպես է այնտեղ «բարգավաճել» մշակույթը։

Մ. Լեբեկը Փարիզի «Կանոր Անշենե» հանդեսում հիշում է մի հետաքրքրական դեպք. Ալժիրում ապրող ֆրանսիացիներից մեկը իրեն ցույց տալով Օրանի հոյակապ ծովախորշը, այն ներկայացրել է իբրև առաջադիմություն ու երջանկություն, որ ֆրանսիացիները բերել են Ալժիրի «հետամնաց» ժողովրդին։ «Տեսնում եք,— հպարտությամբ ինձ մատնացույց է անում ուղեկիցս, ցույց տալով մի երկնաքեր,— ահա թե ինչ ենք արել այստեղ մենք։ Ահա թե ով ենք մենք։ Ահա թե ինչ արժենք մենք այս երկրի համար»[1]։ Եվ այդպես անվերջ «ահա թե ով ենք մենք», «ահա թե ինչ ենք մենք»։

Նա մետրոպոլիայի «սև գվարդիայի» անձնակազմի այն ֆրանսիացիներից է, որի մասին մենք խոսեցինք։ Նա անկեղծորեն հավատացած է, որ «երջանկություն» է տանում ալժիրցիներին, Ալժիրի վիզը գցած օղակը նրան թվում է ոսկյա մանյակ, և պատրաստ է գնդակահարելու ամեն մեկին, ով այլ կերպ մտածի։ Եվ նա, ըստ երևույթին, Ալժիրի ժողովրդի անկախության պայքարի տարիներին, լինելով պարաշյուտիստների կամ օասի կազմում, գնդակահարել է ալժիրցիներին։

§ 169. ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Այդպես են մտածում, ի միջի այլոց, ոչ միայն այդ ֆրանսիացի գաղութաբնակը, այլև տեղական «հինգերորդ զորասյան» այսպես կոչված ֆրանսիացած ալժիրցիները։

[1] «Правда», 8 октября, 1960.

[1] За рубежом, № 17, 1960.

Նրանցից մեկի մասին պատմում է մի արաբ լրագրող։ Վերջինս մի անգամ հյուրընկալվում է իր ընկերոջ՝ Հասանի մոտ։ Սեղանի շուրջը կնոջ հետ միասին ներկա է լինում ալժիրաբնակ Ժորժը իր ֆրանսուհի կնոջ հետ։ Ժորժը արաբ լրագրողի հետ միասին մի ժամանակ ուսանել է Ֆրանսիայի ծովափնյա քաղաքներից մեկում։ Զրույցին մասնակցում են նաև Հասանի որդիները՝ Հասանը, որ վերադարձել էր Ֆրանսիայի հարավից, ուր նա վերջացրել էր ուսումնառությունը, և Ահմադը, որ ֆրանսիական միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո արհեստագործական ուսումնարան էր մտել վերջերս։

Արաբը դատապարտում էր մեծապետական Ֆրանսիայի ագգալուծիչ քաղաքականությունը և պնդում, որ Երկրի փրկությունը միայն մետրոպոլիայից ազատվելու և անկախ ալժիրական պետություն ստեղծելու մեջ է։ Հասանը նույնպես չէր համաձայնում մետրոպոլիայի քաղաքականությանը, բայց անջատման հարց չէր դնում։ Այն հարցին, թե ինչու Հասանը թերթում հոդվածներ է գրում պաշտոնական քաղաքականության ոգով, նեղացած Հասանը պատասխանում է. «Իսկ ես ի՞նչ պետք է գրեմ։ Ինչո՞վ պահեմ ընտանիքս։ Այլ կերպ վարվելիս սովից կսատկեմ, կամ կփտեմ բանտում, իսկ ավելի շուտ՝ ծոծրակիս մի գնդակ կարձակեն»։

Ժորժը և կինը փրփուրը բերաններին պաշտպանում էին ֆրանսիական քաղաքականությունը, ֆրանսիացիներին համարում «կուլտուրական», «կրթված» մարդիկ, որոնց պատկանում է ապագան, ամբողջ աշխարհը, իսկ ալժիրցիներին համարում «վայրենիներ», «ոչխարներ», «էշեր»։ «Բոլոր ալժիրցիները որքան շուտ ֆրանսիացի դառնան, այնքան լավ նրանց համար, և սրիկայի մեկն է այն ալժիրցին, որն իր երեխաներին ալժիրական դպրոց է տալիս»,— միաբերան պնդում էին նրանք, բացահայտորեն վիրավորելով այն ալժիրցիներին, որոնց երեխաներն արաբական դպրոց էին հաճախում։

Հասանի տղաները լիովին պաշտպանում էին Ժորժին ու նրա կնոջը։ Մյուս կանայք իրենց ամուսիններից խնդրում էին զգուշանալ «վնասակար» մտքեր արտահայտելուց և դադարեցնել վեճը, վախենալով Ժորժից ու կնոջից, որոնք

կարող էին իրենց մատնել գաղտնի ոստիկանության ձեռքը։

Այդպիսի ժորժերին ալժիրական ժողովուրդն անվանել է «ֆրանսալժիրցիներ», որոնք դարձել են ազատագրական պայքարի թշնամիներ, իմպերիալիստական Ֆրանսիայի գործակալներ, պրովոկատորներ, հոգևոր ճորտեր։

Այդպիսի թափթփուկներն առանձնապես շատ էին մարբուների՝ պաշտամունքի ստորին աշխատողների և իմամների, մուֆտիների մեջ, պետական պաշտոնյաների ու մյուս պաշտոնատար անձանց, մտավորականության մի հատվածի մեջ։ Դրանք նման էին նիհիլիստ այն կոսմոպոլիտներին, որոնք սիրով նշում էին Ժաննա Դը Արկի տոնը, երկրպագում Օրլեանի կույսին, բայց հանցագործություն էին համարում Ալժիրի ազգային հերոսներին մեծարելը։ Դրանք այն մարդիկ էին, ովքեր կողմնակից են «ֆրանսիական հոգևոր արժեքներին», բայց ժխտում են Ալժիրի ժողովրդի կուլտուրական անցյալը, ովքեր իրենց հայրենիքը համարում են ոչ թե Ալժիրը, այլ «միասնական, անբաժան Ֆրանսիական միությունը»։ Մի խոսքով, բոլոր նրանք, ովքեր իրենց ներկայացնում էին իբրև «նեոֆրանսիացի» և չէին տեսնում Ալժիրի ինքնուրույն ժողովրդի ապագան։

Այդ մարդիկ օժտված էին Տարտյուֆի երկերեսանությամբ և Մերուժանի վաճառվածությամբ։ Ինչ խոսք, նրանց չէր կարելի խելացի մարդիկ համարել, բայց նրանք բավական գործնական մարդիկ էին ու լավ հասկանում իրենց «այսօրվա» շահերը և դրանք պաշտպանելով յուրացնում գաղութարարների ավետարանն այն հաշվով, որպեսզի անթերի ծառայեն նրանց, շահեն նրանց վստահությունը և այդպիսով եկամտաբեր պաշտոն ստանան։

§ 170. ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՈՒ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ։ Այսպիսով. ֆրանսիական գաղութարարները և տեղական ֆրանսալժիրցիները՝ «հինգերորդ զորասյան» անդամները, երկաթե շղթաները ներկայացնում էին իբրև ոսկյա մանյակներ։ Սակայն ժողովուրդը մտածում էր միանգամայն այլ բանի մասին, այն է՝ ինչպես փշրել այդ կապանքները։

Փարիզի գաղութարարները սվիններով իրենց կամքն էին

թելադրել ալժիրցիներին, բայց 130 տարվա ընթացքում նրանց չհաջողվեց համոզել, որ ազատություն են բերում։

Հաղթել դեռ չի նշանակում համոզել։

«Ալժիրի ժողովուրդը երբեք չի դադարեցրել պայքարը գաղութային լծի դեմ»,— այսպես է վերնագրել «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և Ալժիրի ազգային շարժումը» խորագրով իր գրքի բաժիններից մեկը Ալժիրի կոմունիստական պարտիայի առաջին քարտուղար Լարբի Բուհալին։

Ալժիրի ժողովրդի պայքարը ֆրանսիական գաղութարարների ու նրանց գործակալների դեմ սկսվել էր օկուպացման օրվանից։ Երբ Ալժիրի դեյը կապիտուլյացիայի դիմեց, ժողովուրդը շարունակեց պայքարը, որը 15 տարի՝ 1832 թվականից մինչև 1847 թվականը գլխավորեց մեծ հայրենասեր Էմիր Արդ էլ-Կադիրը։

Դիմադրության ռազմական մեթոդներին փոխարինում էին «խաղաղ» մեթոդները. ընդհանուր արհամարհանքի ու բոյկոտի մթնոլորտն էր իշխում։

§ 171. ԿԱՊԻՏԱՆ ԲՈՅԿՈՏԸ ԵՎ ԲՈՅԿՈՏԻ ՏԱԿՏԻԿԱՆ։ Բոյկոտի մեթոդն իբրև պայքարի մի ներդաշնակ սիստեմ մշակվել է իռլանդական ժողովրդի մեջ Պառնելի, Գորդոնի, Բրենարի և մյուսների կողմից։

Պառնելը ժողովրդին կոչ էր անում արհամարհանքով վերաբերվել գաղութարարներին ու մատնիչներին, իսկ Գորդոնը կոչ էր անում «այդպիսի մարդկանց հետ չխոսել տոնավաճառներում։ Արհամարհանքով խուսափեցեք նրանցից։ Չներեք նրանց։ Նրանք վաճառել են իրենց հայրենիքը, թող սատանայի ծոցը գնան»[1]։

Ահա մի դրվագ, որը ցույց է տալիս, թե ժողովուրդն ինչպես էր կենսագործում այդ տակտիկան Էոնի կառավարիչ կապիտան Բոյկոտի նկատմամբ, որի անունով էլ հետագայում կոչվեց այդ տակտիկան։ Կապիտան Բոյկոտը այն սակավաթիվ իռլանդացիներից էր, որը «հայրենիքը վաճառել էր» ոչ թե վախից, այլ, ընդհակառակը, խղճի մտոք ծառայում էր անգլիական գաղութարարներին։ Եվ ժողովուրդը կապիտանին շրջապատել էր ընդհանուր արհամարհանքով։ «Պայտառը հրաժարվում էր նրա ձիերը պայտելուց, հովիվները չէին ուզում արածացնել նրա անասունները, մոտակա քաղաքի փուռը դադարել էր նրան հաց ուղարկել, լվացքատունը՝ սպիտակեղենը լվալ, փոստատարը՝ նամակներ ու հեռագրեր բերել։ Նույնիսկ ծառաները հեռացան նրանից, հայտարարելով, որ «ժողովուրդը չի ուզում, որ մենք ծառայենք ձեզ»։ Փողոցում կապիտանին սուլոցով էին դիմավորում։ Երեք շաբաթ նա քնում էր առանց հանվելու, ինքն էր տունը հավաքում, անասունները պահում։ Հասավ հնձի ժամանակը, իսկ կապիտան Բոյկոտի մոտ ոչ մի ծառա չէր մնացել։ Նրա խնդիրքով հարևան կոմսությունից հիսուն մարդ եկավ ոստիկանության ու զինվորների ջոկատի պաշտպանությամբ։ Հնձից հետո զինվորները գնացին, և կապիտանի դեմ բոյկոտը շարունակվեց։ Կառավարիչը փոխադրվեց Դուբլինի հյուրանոց, սակայն հյուրանոցատիրոջ հասցեին տեղացող սպառնալիքների պատճառով նա ստիպված էր չվել այնտեղից։ Մի տարի հետո նա ստիպված էր լուծարքի ենթարկել իր գործերը»[1]։

Բոյկոտի տակտիկան պատմության բոլոր ժամանակաշրջաններում խիստ բազմազան ձևերով ու երանգներով է երևան եկել։

Անկախության պատերազմի նախօրյակին ԱՄՆ-ի հայրենասերները կազմակերպեցին անգլիական ապրանքների բոյկոտ, մարդկանց կոչ էին անում հրաժարվել թեյի և անգլիական ուրիշ մթերքների ու ապրանքների գործածությունից։ 1774 թվականի սեպտեմբերի 5-ին կոնտինենտալ առաջին կոնգրեսի այդ կոչը լայն արձագանք գտավ բովանդակ երկրում։ Տեղերում կազմակերպում էին անգլիական ապրանքների բոյկոտի իրագործմանը հսկող կոմիտեներ։ Կոմիտեները Ամերիկայի ազատության թշնամիներ էին հայտարարում այն քաղաքացիներին, որոնք չէին հետևում հայրենասերների կոչին[2]։

[1] **П. Керженцев**, Ирландия в борьбе за независимость, издание третье, М., 1936, стр. 121.

[1] **П. Керженцев**, Ирландия в борьбе за независимость, стр. 122.

[2] **И. С. Юзевич**, Джордж Вашингтон в борьбе за независимость Америки, М., 1941, стр. 37.

§ 172. ԳԱՆԴԻՆ ԵՎ ԳԱՆԴԻԶՄԸ։ Բոյկոտի տակտիկան անգլիական գաղութարարների ու նրանց տեղական գործակալների դեմ հոյակապ կերպով օգտագործեց հնդիկ ժողովուրդը Գանդիի ղեկավարությամբ։

Մահաթմա Գանդին կեղեքման ու բռնության դեմ, հանուն ազատության ու երջանկության մղված ժողովրդական պայքարի ամենամարդասեր ու ականավոր ղեկավարներից մեկն է եղել։ Նա պնդում էր, որ մարդիկ պետք է ազատ լինեն ճշմարտություն որոնելիս, ու այդ ժամանակ ճշմարտությունը կերջանկացնի նրանց։ «Մարդուն անվայել է,— ասում էր նա,— մեքենայի հասարակ պտուտակ դառնալը»։ Նա ուզում էր, որ «մարդը դառնա հասարակության լիարյուն, համակողմանիորեն զարգացած անդամ»։ Գանդին այն հազվագյուտ մեծ մարդկանցից էր, որը գտնում էր, թե միջոցը նպատակից կարևոր է։ Այդ բանը նա ասում էր այն ժամանակ, երբ Արևելքի ու Արևմուտքի բոլոր բռնապետներն ու բռնակալները առաջնորդվել ու առաջնորդվում էին հակառակ սկզբունքով, պնդելով, թե բոլոր միջոցները լավ են նպատակին հասնելու համար, և նպատակն արդարացնում է միջոցները։

Այն սիստեմը, որի միջոցով Գանդին ձգտում էր հասնել նվիրական նպատակին՝ Հնդկաստանի ազատագրմանը անգլիական գաղութարարների ճնշումից, նա անվանել է «սաթյագրահոյ», այսինքն՝ ոչ բռնություն։ Այդ սիստեմը հաճախ սխալ կերպով անվանում են պասսիվ դիմադրություն։ «Սաթյագրահոյը,— ասում է Գանդին,— նշանակում է ոչ թե հլու ենթարկվածություն նրա կամքին, ով չարիք է գործում; այլ ոգու ամբողջ ուժով դիմադրություն բռնակալի կամքին»։

Պայքարի այդ մեթոդը (որ նշանակում էր բացահայտորեն ու խաղաղությամբ չենթարկվել գաղութային իշխանություններին) Գանդին առաջին անգամ կիրառեց 1906 թվականին, երբ եվրոպական գաղութարարները մտցրին Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների արժանապատվությունը շոշափող նոր օրենքներ։ Տարեցտարի այդ մեթոդը կատարելագործվում էր և ընդունում մասսայական ժողովրդական շարժման ձև։ Երբ անգլիական գեներալ Դայերը 1919 թվականին գնդակահարեց բողոքի դուրս եկած ավելի քան հազար խաղաղ մարդկանց, Գանդին ժողովրդին կոչ արեց լիովին հրաժարվել անգլիացիների հետ գործակցելուց, նրանց մոտ աշխատելուց, անգլիական կոչումներից, բոյկոտել անգլիական ապրանքները։

Գանդիի ետևից գնացին արդեն տասնյակ միլիոնավոր մարդիկ, նա դարձավ ճանաչված առաջնորդ։ Եվ գաղութարարների համար այնքան էլ հեշտ չէր նրանց հետ գործ ունենալը։

Գանդիզմը հնդկական իրականությանը բնորոշ երևույթ է։ Գանդիի մշակած սիստեմը, իբրև քաղաքական պայքարի յուրահատուկ զենք, կապ չունի լենինյան ուսմունքի հետ։ Սակայն այդ սիստեմը հաստատուն տեղ է գրավել Հնդկաստանի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարում ընդդեմ Մեծ Բրիտանիայի գաղութային իմպերիալիզմի։

§ 173. ԲՈՅԿՈՏԻ ԱԼԺԻՐՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ։ Յուրաքանչյուր երկրում բոյկոտի տակտիկան ունեցել է իր առանձնահատկությունները։ Ալժիրում այն երևան եկավ բազմապիսի ձևերով։

Լարբի Բուհալին նշում է, որ անկախության պայքարում ժողովրդի դիմադրությունը երևան է եկել բազմապիսի ձևերով՝ բանվորների, ծառայողների գործադուլներով, դպրոցականների դասադուլներով, ընտրովի հիմնարկությունների դեպուտատների և ուրիշ պաշտոնյաների հրաժարականով, ծխախոտի և ոգելից խմիչքների բոյկոտով (որոնք միլիարդներ էին լցնում գաղութային պետության գանձարանը), գաղութարարների առանձին ֆերմաների ու առանձնապես խաղողի այգիների ոչնչացմամբ, հեռախոսային, երկաթուղային ու ավտոմոբիլային կապի գծերում սաբոտաժով և դիվերսիաներով։ Ալժիրցիներն իրենց խնայողությունները հանում էին բանկերից, բոյկոտում մետրոպոլիայի օրենքները, «հինգերորդ զորասյան» անդամներին նշավակում որպես ֆրանսալժիրցիներ[1] և այլն։

§ 174. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։ Գաղութատիրությունը պետական սիստեմ է, ժողովուրդներին ճնշելու, ստրկացնելու և ոչնչացնելու, մշակված հատուկ սիստեմ։ Նա, ով չի հասկանում և արհամարհում է այդ, դատապարտված է

[1] Л. Бухали, Октябрьская социалистическая революция и национальное движение в Алжире, стр. 33.

կտրվելու և հեռանալու ժողովուրդների ընտանիքից։ Հայ ժողովուրդը, դեռ այդ սիստեմի երևան գալու արշալույսին, ճաշակել է այն ու սկսել հաջողությամբ պայքարել իր իրավունքների համար։ Եվ նա ապրեց, հասավ մինչև մեր պայծառ օրերը։ Այժմ, ինչպես երբեք, վստահորեն է նայում իր պայծառ ապագային։

Այդ ծանր, անհավասար պայքարից նա լայն ճանապարհ դուրս եկավ հատկապես շնորհիվ այն բանի, որ տոգորված էր հայրենասիրությամբ՝ դիտեր կյանքի ու ազատության գինը։ Այո՛, հայրենասիրությունը մեծ ուժ է։ Իբրև զգացմունք և հասարակական երևույթ, հայրենասիրությունը, ասում է Գոմուլկան, իր ուժը քաղում է հայրենի երկրին նվիրվածությունից, ժողովրդի բարգավաճման ու ազատության հոգատարությունից, ժողովրդական զանգվածների ստեղծագործ ուժերի հանդեպ ջերմ հավատից։

Հատկապես հայ ժողովրդի հայրենասիրությունը, ինչպես ընդունում է Թ. Մոմզենը, Հայաստանը փրկեց Հռոմի ստրկացումից[1]։ Այդ ուժը նրան օգնեց իրեն ու հայրենի երկիրը պաշտպանել աշխարհակալ Ասորեստանից, պարսիկների նենգությունից, բյուզանդացիների երկերեսանությունից, թուրք բռնապետների սրից, Արևմուտքի խոստումներից, ռուս ցարերի կամայականություններից, նեոգաղութարարների «հայրական հոգատարությունից»։

Հայրենասիրությունը մի այնպիսի ուժ է, որն ալժիրցուն օգնեց իրեն ու երկիրը պաշտպանել ֆրանսիական գաղութարարներից, օգնեց մեծ մասշտաբներով կիրառելու բոյկոտի տակտիկան։ Այդ տակտիկան մի կողմից շոշափելի հարվածներ էր հասցնում գաղութարարների ու նրանց գործակալների շահերին, մյուս կողմից բարձրացնում էր ժողովրդի հարձակողական ոգին։

Հայրենասիրությունը դարձավ այն ուժը, որն ալժիրցուն տալիս էր հավատ իր անմահության նկատմամբ, անսպառ եռանդ, հպարտություն, որ ինքը ալժիրցի է, Ալժիրի քաղաքացի։

---

[1] Տե՛ս Т. Моммзен, История Рима, том. 3, стр. 63.

Ալժիրցու հպարտությունն ընդհանուր ճանաչում ստացավ ողջ աշխարհում։

Եվ ինչո՞ւ ալժիրցին հպարտ չլիներ, հայրենի երկրի քաղաքներով ու գյուղերով չանցներ գլուխը բարձր պահած, կայտառ, վստահ, համարձակ, գեղեցիկ, չծաղրեր գաղութարար իմպերիալիստների «բարձր գաղափարները», չպահպաներ իրեն և իր «հավերժակենդան մորը»։

§ 175. ՆԱՊՈԼԵՈՆ III-Ի ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ։ Անցյալ դարի 60-ական թվականներին Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը երկու անգամ այցելեց Ալժիր և երկու անգամ էլ հուզվեց բնիկների բարձր արժանապատվության զգացումից։ Այդ գերեց և կայսրուհուն։ Եվ Նապոլեոն III-ի մեջ ծնունդ առավ մի գաղափար՝ ազգալուծել ալժիրցիներին, բայց ո՛չ ուժով, այլ «նոր մոտեցմամբ», բլիթի քաղաքականությամբ։

«Ես առաջարկում եմ,— գրում էր նա Մակ-Մահոնին,— օգտագործել արաբների քաջությունը, քան թե այդ խեղճերի վերջին պատառը խլել... Չպետք է Ալժիրը լցնել ողորմելի ու ագահ մարդկանցով, հարկավոր է քաջալերել եվրոպական կապիտալի խոշոր ձեռնարկումները՝ առողջացման, ոռոգման, գիտական էքսպեդիցիայի խոշոր աշխատանքներ կատարելու համար»։ Հարկավոր է «գաղութաբնակներին հաշտեցնել արաբների հետ, իրականում ապացուցել, որ վերջիններին չի կարելի կողոպտել հօգուտ առաջինների և որ այդ երկու խմբերը պետք է օգնեն միմյանց՝ ահա այն ուղին, որով հարկավոր է ընթանալ»։

Ֆրանսիական սենատը, առաջնորդվելով այդ դիրեկտիվներով, 1865 թվականի հուլիսի 14-ի դեկրետով Ալժիրի մուսուլմաններին թույլ տվեց «ֆրանսիացիներ դառնալ»՝ քաղաքացիական և ռազմական պաշտոններ գրավել։ Եվ Ալժիրն սկսեց թնդանոթի միս մատակարարել մետրոպոլիային։ Դա «ազգայնացման» ֆրանսիական, ժամանակակից «ճկուն» քաղաքականության առաջին սերմերն էին։

§ 176. ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՐԲԵՔ ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՆԱ ԻՐ ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՍՏՐԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՆ։ ՆԱ ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ՄԱՐՏՆՉԻ ԱՉԱՏ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ։ Չեափոխելով նեգրական մի առած, կարելի է ասել որ, «ժողովուրդը կանգ-

նած է երեք սյուների վրա, որոնցից մեկը երեկ, մյուսը՝ այսօր, երրորդը՝ վաղն է»։ Ինչպես բոլոր մյուս, այնպես էլ ֆրանսիական գաղութարարները ձգտում են, որ գաղութային ժողովուրդները մոռանան իրենց պատմությունը՝ իրենց երեկը, այսօրն ու վաղը, իմանան միայն մետրոպոլիայի պատմությունը։ Բայց իզուր։ Ալժիրի ժողովուրդը երբեք չէր մոռանում իր հերոսական անցյալը, իր ստրկական ներկան և չէր դադարեցնում իր պայքարը լավագույն ապագայի համար։ Եվ երբ նրա բոյկոտի տակտիկայով ստեղծվեցին նպաստավոր պայմաններ, որոնք համընկան ներքին ու միջազգային իրադրության նույնանման օբյեկտիվ պայմաններին, երկիրը դիմեց նաև արդեն ուրիշ՝ ոչ-խաղաղ, զինված ապստամբության տակտիկային։

Ինչպե՞ս եղավ, ինչի՞ց սկսվեց։

§ 177. ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԶԵՆՔ Է ՎԵՐՑՆՈՒՄ։ 1954 թվականի նոյեմբերի 1-ին Ալժիրի գեներալ-նահանգապետի գրասենյակը հաղորդեց. «Գիշերվա ընթացքում (հոկտեմբերի 31-ի լույս նոյեմբերի 1-ին։ Հ. Ս.) Ալժիրի տերիտորիայի տարբեր շրջաններում, առանձնապես Կոնստանտինայի դեպարտամենտի արևելյան հատվածում և Օրեսի մարզում տեռորիստների փոքրիկ խմբեր, մոտավորապես երեսուն հոգի, իրենց մասշտաբներով տարբեր հարձակումներ են գործել... Ժանդարմական բաժանմունքները գնդակոծության են ենթարկվել։ Նկատվել են նաև որոշ ինքնաշեն պայթուցիկ կամ հրձիգ արկերի օգտագործման փաստեր, որոնք, իբրև կանոն, վնաս չեն պատճառել։ Սակայն համեմատաբար խոշոր վնասներ են կրել Բուֆարիկի մի կոպերատիվ, Սելյունավի պահեստը և Կարիլիայի խցանի պահեստը։ Այն պաշտպանողական և պատժիչ ձեռնարկումները, որ թելադրում էր այդպիսի դրությունը, անհապաղ ձեռնարկվեցին գեներալ-նահանգապետի հրամանագրով»։

Այսպես սկսվեց ժողովրդի զինված ապստամբությունը, ալժիրցիների ընդվզումն այնպես ընկալեցին իրենք՝ գաղութարարները։ Նոյեմբերի 2-ին ռազմական մինիստրի պետական քարտուղար պ-րն Ժակ Շեվալիեն խոստովանեց, որ «փաստորեն ապստամբություն է տեղի ունենում», որ հարյուրավոր ալժիրցիներ, որոնք զինված են ավտոմատ զենքով, ունեն ընդունող ու հաղորդող ռադիոապարատներ, իրենց ձեռքում են պահում Երկրի «ամբողջ լեռնային մասը»։

Ամբողջ վտանգն ըմբռնելուց հետո գաղութարարները ձեռնարկեցին բոլոր հնարավոր միջոցները. մետրոպոլիայից և կայսրության մյուս մասերից Ալժիր էին փոխադրում նորանոր զորագնդեր, առաջին իսկ օրվանից, այսինքն՝ նոյեմբերի 1-ից սկսեցին համատարած ձերբակալություններ, խուզարկություններ, շուրջկալներ, արգելեցին Ալժիրի ժողովրդի շահերը պաշտպանող կուսակցությունները, շրջափակեցին ապստամբության օջախները, որպեսզի սովով խեղդեն հայրենասերներին։ Իսկ պաշտոնապես, որպեսզի մոլորության մեջ գցեն հասարակական կարծիքը, գաղութարարները խոսում էին «օտար գործակալների» և բանդիտների «տեռորիստական գործողությունների մասին», որոնք իբր խախտում են «հասարակական կարգը»։ Ժակ Շեվալիեն պնդում էր, որ «բնակչության 99 տոկոսը լոյալ է Ֆրանսիայի նկատմամբ» և չի մասնակցում մետրոպոլիայի շահերի դեմ ուղղված գործողություններին։

§ 178. ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԼԱՍԻԿ «ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ»։ Այսպիսով, ապստամբության առաջին իսկ օրվանից ֆրանսիական գաղութարարները բոլոր միջոցները ձեռնարկեցին Ալժիրի ժողովրդի դիմադրությունը զենքով ճնշելու համար։ Ինչո՞ւ։ Հանուն «հիմնական սկզբունքի»։

Այսինքն՝ ո՞ր։

Լսենք թե ինչ են ասում։ Նույն տարվա նոյեմբերի 12-ի ազգային ժողովում բանավեճի ժամանակ ֆրանսիական պետական գործիչ Մենդես-Ֆրանսը հայտարարեց. «Ալժիրի դեպարտամենտները հանրապետության մի մասն են կազմում, նրանք վաղուց արդեն ֆրանսիական դեպարտամենտներ են։ Նրանց բնակչությունը ֆրանսիական քաղաքացիության իրավունքներով է օժտված և ներկայացված է պառլամենտում։ Նա տվել է Ֆրանսիայի հանդեպ իր նվիրվածության բավականաչափ ապացույցներ և Ֆրանսիան չի կարող թույլ տալ, որ սպառնալիքի տակ դնեն նրա միասնությունը... Երբեք Ֆրան-

սիան, երբեք կառավարությունը, երբեք պառլամենտը չեն դիջի այն բանում, ինչ կոչվում է «հիմնական սկզբունք»: «Ալժիրը Ֆրանսիա է»,— նույն օրերին իր ռադիոճառում պընդում էր ներքին գործերի մինիստրը:

Այժմ հասկանալի՞ է, թե ինչ բան է «հիմնական սկզբունքը»: Դարձյալ ո՞չ:

Այդ դեպքում լսենք ևս մի ուրիշ պետական գործչի՝ Միտերանի ճառը: «Ֆլանդրիայից մինչև Կոնգո,— պնդում էր նա,— կա միայն մի օրենք, կա միասնական մի ազգ, մի պառլամենտ: Այդ է սահմանադրությունը և այդ է մեր կամքը: Կառավարությունը հոգ կտանի, որ ալժիրյան մեր համաքաղաքացիներն իմանան, որ իրենք հույս ունեն և որ հույսը կապված է Ֆրանսիայի հետ... Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի Ալժիրի ժողովուրդը, որը ֆրանսիական ժողովրդի անկապտելի մասն է, իր տանը զգա իրեն այնպես, ինչպես մենք մերոնց մեջ»:

Այժմ հասկանալի՞ է, թե ինչ բան է «հիմնական սկզբունքը»: Ըստ այդ սկզբունքի գաղութային ժողովուրդների տերիտորիան դառնում է «Ֆրանսիայի անբաժան մասը», «միասնական պետություն», իսկ ժողովուրդները դառնում են ֆրանսիացիներ, «իրավահավասար քաղաքացիներ», «միասնական ազգ», Փարիզում գործող «մի պառլամենտով»: Այս է նեոգաղութարարների կլասիկ «միասնական սկզբունքը»:

§ 179. ՊԱՅՔԱՐԻ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Ճնշված ժողովրդի անկախության պայքարը դժվարին, բարդ ու արյունահեղ պայքար է: Եվ ոչ միայն այն պատճառով, որ ճնշողը ռազմա-տնտեսական տեսակետից ավելի ուժեղ է, որքան այն պատճառով, որ ստրկացված ժողովրդի համար գոյություն չունեն միասնական թիկունք ու ճակատ: Նա պայքարում է ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամու դեմ: Իսկ ներքին թշնամին կարող է լինել ամեն տան մեջ, ամեն ընտանիքում: Հիշենք մեր ժողովրդի պատմության թեկուզ այն շրջանը, որը Բաֆֆին պատկերել է «Սամվել» վեպում, երբ մայրը հանդես էր գալիս որդու, կինը՝ ամուսնու, որդին՝ հոր ու մոր դեմ:

Իսկ ահա թե ինչ վիճակի մեջ էին գերմանացիները,

որոնք Հռոմի դեմ պայքար էին մղում հանուն անկախության նվաճման:

Հռոմի բանակում մարտնչում էին Արմինիոսը և Սեգեստը: Երկուսն էլ կռիվներում աչքի ընկան, հռոմեական քաղաքացիության արժանացան և հեծյալի կոչում ստացան: Սակայն 26-ամյա գեղեցիկ Արմինիոսի կրծքում կար բոցաշունչ, առնական սիրտ, որը բաբախում էր Գերմանիայի համար, իսկ Սեգեստի կրծքում՝ նողկալի դավաճանի սիրտ, որը բաբախում էր հանուն Հռոմի: Սեգեստի դուստր Տուսնելդան հոր կամքին հակառակ սիրում է Արմինիոսին և դառնում նրա կինը: Հայրենասերների կողմն են նաև Տուսնելդայի եղբայրը՝ Սեգիմունդը, Սեգեստի եղբայր Սեգիմերը, նրա եղբորորդի Սեգիտակը և ուրիշներ:

Ապստամբության նախօրյակին Արմինիոսը դեռ ծառայում էր բանակի գլխավոր շտաբում և գտնվում էր գլխավոր հրամանատարի՝ Վարոսի վրանում: Ընթրիքի ժամանակ Սեգեստը Վարոսին խնդրում է ձերբակալել Արմինիոսին, բայց Վարոսը դանդաղում է: Ընթրիքից հետո, գիշերը, Արմինիոսը հեռանում է հռոմեացիներից, կանգնում ապստամբության գլուխ և առավոտյան մարտի բռնվում կեղեքիչների հետ: Երեք օրում Արմինիոսը Տևտոբուրգյան անտառում լիովին բնաջնջում է Վարոսի բանակը:

Սակայն հռոմեական զորավարներ Դրուզը և Գերմանիկոսը (Դրուզի որդին) նոր լեգեոններով մտնում են Գերմանիա և սեգեստների օգնությամբ արյան մեջ խեղդում ժողովրդական ապստամբությունը:

17 թվականի մայիսի 26-ին Սեգեստը, Հռոմի Կապիտոլիումի պատվավոր վայրում նստած կարող էր արդեն Գերմանիկոսի հաղթական երթի մեջ տեսնել իր դստեր՝ Տուսնելդայի խայտառակությունը, գերության մեջ ծնված իր թոռանը՝ Տումելիկին և Գերմանիայի մյուս նշանավոր մարդկանց խայտառակությունը:

Ալժիրում սեգեստներին այս անգամ չվիճակվեց հաղթանակել:

§ 180. ԱՊՍՏԱՄԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԲՆԱՋՆՋՈՒՄ Է «ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՈՐԱՍՅՈՒՆԸ»: Ալժիրի զինված ապստամբությունը

նշանավորեց «հինգերորդ զորասյան» ջախջախման սկիզբը։ Ճիշտ է, զգալի թվով ֆրանսալժիրցիների աչքերը բացվեցին, նրանք հասկացան իրենց մոլորությունը և անցան ժողովրդի կողմը, իսկ մի մասը «շեղոք», սպասողական դիրք գրավեց։ Փոքրամասնությունը մնաց հայրենադավության դիրքերում։ Հայրենասերների ցասումն առաջին հերթին ուղղվեց նրանց դեմ։ Դավաճաններին պարզապես վերացնում էին ճանապարհից։

Դա, հասկանալի պատճառներով, կատաղեցրեց գաղութարարներին։ Գեներալ-նահանգապետ Լեոնարը նրանց ուղղած իր դիմումներով «խնդրում էր» շարունակել «իրենց գործը հանուն ընդհանուր գործի», խոստանալով օգնել ու պաշտպանել նրանց։ «Մենք ձեր կարիքն ունենք,— ասում էր նա,— խաղաղության վերականգնման համար, որը հնարավորություն կտա աշխատել։ Մենք ձեր ինֆորմացիայի կարիքն ունենք. դա բանակին և մեր ոստիկանական զորամասերին հնարավորություն կտա հաջողությամբ գործել։ Սրանով ես հավաստիացնում եմ ձեզ, որ ձեզ կպաշտպանենք հնարավոր բռնություններից։ Միջոցներ են ձեռնարկված, որպեսզի Ֆրանսիայի բարեկամներին պաշտպանենք խռովարարներից»։

Մեկնաբանելու կարիք չի զգացվում։ Այստեղ ամեն ինչ հասկանալի է։ Ի՞նչ կլինի, եթե բնիկների մեջ գաղութարարներն ու կեղեքիչները չգտնեն թափթփուկներ, վաճառվող մարդկանց, լրտեսներ ու դիվերսանտներ։ Օ՜, դա զարհուրելի է նրանց համար։ «Ագիտատորները,— ոռնում էր Լեոնարը,— հույս ունեն բնակչությանը ներշնչել այն միտքը, թե Ֆրանսիան ի վիճակի չէ պաշտպանելու կյանքն ու գույքը այն մարդկանց, ովքեր հավատարիմ են իրեն։

Եթե այսպիսի դրությունը շարունակվի, ապա պետք է երկյուղ կրել, որ բնակչությունը կհանգի այն հետևությանը, թե ավելի քիչ է վտանգի դիմում, գործելով իբրև ապստամբների բարյացակամ գործակից, քան եթե գործակցի Ֆրանսիայի հետ։ Անկարգությունները կարող են ընդհանուր ապստամբության վերածվել»։

Բայց ընդհանուր ապստամբությունն արդեն առկա էր։ Ժողովուրդը արդեն ջախջախել էր «հինգերորդ զորասյանը»,

դա նրա հետագա անկախության հաջող պայքարի կարևորագույն պայմանն էր։

§ 181. ԱԼԺԻՐԻ ՄԱԿԻՆԵՐԸ։ Այսպիսով, բոյկոտի տակտիկայից ալժիրցիներն անցան ուղղակի գործողությունների։ Ակզբում գաղութարարներն մակիներին (պարտիզաններին) հայտարարեցին «տեռորիստներ», «բանդիտներ», մետրոպոլիայից եկած «խռովարարներ ու ավազակներ», որոնք «միայնակ են» գործում, իսկ հետո պարզվեց, որ «բանդիտները գործում են տասից մինչև տասնհինգ հոգուց բաղկացած խմբերով»։ Ապա նրանք սկսեցին Ալժիրի դուարաները (շրջանները, մարզերը) բաժանել «խռովարար» և «խաղաղ» դուարաների, իսկ որոշ ժամանակ անց «խաղաղ դուարաները» ընդհանրապես չքացան, մնացին միայն «խռովարարները»։

Պատժիչ, ոստիկանական զորամասերին փոխարինելու եկան գծային վաշտերը, գնդերը, դիվիզիաները, ավելի խոշոր զորամիավորումները։ Փոխվում է գաղութարարների բառամթերքը։ Ընդունում են, որ գործում են ոչ թե բանդիտներ, այլ կանոնավոր զորամասեր, պարտիզանական ջոկատներ, ընդունում, որ դա «պատերազմ է աներևույթ թշնամու դեմ» («Մոնդ» թերթ)։

Ալժիրի մակիներն ստիպեցին «բարձրաստիճան» ֆրանսիական գաղութարարներին իրենց ընդունել որպես «հավասար կողմ» և իրենց հետ կլոր սեղան նստել։ Ուժի լեզուն այն միակ լեզուն է, որի հետ գաղութարարները հաշվի են նստում։

§ 182. «ԵԹԵ ՆՈՒՅՆԻՍԿ ՄԵՆՔ ԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԻՆՔ ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐԻ ՍԵՎԻՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ, ԴԱ ՄԵԶ ԵՏ ՉԷՐ ՊԱՀԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒՑ»։ Մենք արդեն ասացինք, թե ինչպես ժամանակակից գաղութարարները նոր «բլիթի քաղաքականության» օգնությամբ հասնում են մետրոպոլիայի հին նպատակներին։ Նրանք համարձակորեն քննադատում են «կլասիկ գաղութատիրությունը», խոստովանում նրա «մեղքը» և միաժամանակ նոր աշխարհ բաց անում երկրի «եղբայրական ժողովուրդների իրավահավասարության ու տնտեսական զարգացման» համար։ Ֆրանսիայում այդ քաղաքականության ոգեշնչողը ժակ Շեվալիեն էր՝ Ալժիրը նախկին կառավարիչը։

Ալժիրի մասին նա այսպես է ասել. «Այդ երկիրը, որ ավերման էր մատնված, կարող է ապրել ու շնչել ազատորեն... Եթե մենք նրա համար բաց չանենք նոր շուկաներ, նոր ուղիներ, նոր հորիզոններ, մենք շարունակ քաղաքական ու սոցիալական անվստահության մեջ կլինենք, այնպիսի վիճակում, երբ մեր ամբողջ սիստեմը կկործանվի մեզ հետ միասին...»:

Խոսելով գաղութի տնտեսական գոյության մասին, Ֆորի, Սուստելի և Շեվելիեի տիպի գաղութարարները մոռանում են կամ բացահայտորեն մերժում գաղութային ժողովուրդների ազգային իղձերը, նրանց՝ ինքնուրույն կյանքի ձգտումները:

Երբ Ալժիրի ժողովրդի մարտական ջոկատները պայքար սկսեցին երկրի անկախության համար, նույն գաղութատիրական շրջանները դա բացատրեցին միևնույն տնտեսական պատճառներով՝ իբր թե ալժիրցիները զենքի են դիմել լոկ այն պատճառով, որ վատ էին ապրում, նրանց տնտեսապես նեղում էին, որ նրանք լիովին չէին վայելում «Ֆրանսիական միության» իրավունքները և այլն:

Ալժիրի քաղաքական կուսակցությունները, ազգային ազատագրության ճակատի ղեկավարները կանոնավոր կերպով մերկացնում էին թշնամու այս մեքենայությունները:

Այսպես, այն թռուցիկներից մեկում, որ Ալժիրում ազգային ազատագրության ճակատը տարածել էր իր բանակի տասնամյա պայքարի կապակցությամբ, ասված էր.

«...Նեոգաղութարարները պնդում են, թե մենք ապստամբել ենք, որովհետև տուժում էինք գործազրկությունից, մեզ անողոքաբար շահագործում էին ագահ գաղութարարները: Ճիշտ չէ: Դա կոպիտ սուտ է: Մենք ապստամբել ենք, որպեսզի վերականգնենք Ալժիրի ազատությունն ու անկախությունը: Մի անգամ մեկն ասել է, և նա իրավացի էր. «Եթե նույնիսկ մենք երջանիկ լինեինք ֆրանսիացիների սվիններ իշխանության ներքո, դա մեզ ետ չէր պահի անկախություն պահանջելուց», քանի որ ոչ մի ֆրանսիացի չէր համաձայնի զրկվել իր ազգությունից, որպեսզի, օրինակ, իտալացի դառնար: Նույնը և մենք: Մենք ալժիրցիներ ենք, և ցանկանում ենք ալժիրցի մնալ, որովհետև մենք հպարտանում ենք մեր ազգությամբ:

Ամենաբարբարոսական հետապնդումները մեզ ֆրանսիացի չեն դարձնի ճիշտ այնպես, ինչպես սոցիալական ոչ մի բարեկեցություն մեզ չի ստիպի մոռացության տալ կորցրած ազատությունը»:

Այդ բավականին հետաքրքրական փաստաթղթի մեջ մերկացվում են ֆրանսիական գաղութարարների նաև ուրիշ սուտ պնդումներ:

«Մամուլը և ռադիոն,— ասված է նրա մեջ,— բոլոր ուժերը գործադրեցին, որպեսզի մեր դեմ հանեին հասարակական կարծիքը երկրում ու արտասահմանում:

Ըստ նրանց նկարագրության, մենք մեծ մասամբ բանդիտներ ու նախկին կալանավորներ ենք, որոնք այլևս ոչինչ չունեն կորցնելու: Մենք անհրաժեշտ ենք համարում հայտարարելու, որ մեր զինված ուժերի անձնակազմի 99 տոկոսը կազմում են պանծալի հողագործները, որոնք մեծ մասամբ ընտանիքի հայրեր են, և երիտասարդ քաղաքացիները, որոնք երբեք բանտի շեմքը չեն տեսել, մեկ տոկոսը բանտարկված է եղել քաղաքական գործունեության համար:

Գաղութարարները պնդում են, որ մենք ծառայում ենք մի օտար տերության. հերթականորեն մեզ պահում են Մոսկվան, Կահիրեն, Տեհրանը, Լոնդոնը և Վաշինգտոնը: Մենք պատասխանում ենք, որ ծառայել ենք միայն Ալժիրին: Մեր շարքերում չկա ոչ մի օտարերկրացի՝ ոչ Թունիսի բնակիչ, ոչ եգիպտացի, ոչ գերմանացի, ոչ էլ լապլանդացի: Ալժիրցիները և միայն ալժիրցիներն են գլխավորում և պայքար մղում»:

Ալժիրի ազգային անկախության մարտիկների առաջին շարքերում ընթանում էին կոմունիստները: Նրանց մարտական խմբերը գործում էին Ալժիրում, Կոնստանտինայում, Օրանում, Բլիդում: Այդ խմբերը ոչնչացնում էին «հինգերորդ զորասյան» մատնիչներին, գաղութարարներին, պայթեցնում կամուրջները, հարձակումներ գործում ֆրանսիական պարեկների վրա:

Այս է ճշմարտությունը ալժիրյան ժողովրդի պայքարի մասին:

§ 183. ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ: Ալժիրի պա-

տերազմը տևեց ավելի քան յոթ տարի։ Ի՞նչ արդյունքի հասցրեց։

Ինչքա՞ն շատ բան փոխվեց այդ ժամանակ։ Փարիզի միապետներն ու իշխողները այլևս չէին ասում, թե Ալժիրի ժողովուրդը կազմում է «ֆրանսիական ժողովրդի անկապտելի մասը». ընդունեցին, որ Ալժիրի ժողովուրդն առանձին, ինքնուրույն ժողովուրդ է։ Այլևս չէին պնդում, թե «Ալժիրը Ֆրանսիա է»։ Նրանք խոստովանեցին, որ Ալժիրը Ալժիրն է։ Այլևս չեն բարբաջում «միասնական ազգի», «պետության», «պառլամենտի», «իրավահավասարության» մասին։ Նրանք ընդունում են Ալժիրի ժողովրդի՝ իր ազգային պառլամենտը, պետությունն ստեղծելու իրավունքը։ Այլևս չեն շաղակրատում «խռովարարների», «տեռորիստների», «խառնակիչների», «օտար տերությունների գործակալների» մասին և ստիպված են խոստովանել, որ գործ ունեն զինված ժողովրդի հետ։

Ճիշտ է, այդ ամենը շատ թանկ նստեց։ Ավելի քան մեկ միլիոն ալժիրցի զոհվեց յոթնամյա պատերազմում, մինչև 1961 թվականի առաջին կեսը։ Երկու միլիոն էլ (նույն ժամանակամիջոցում) տառապում էր փշալարերի ետևում, այսպես կոչված «վերախմբավորման կենտրոններում», համակենտրոնացման ճամբարներում, բանտերում, ապրում արտաքսման մեջ։ Ի՞նչ արած։ Այդ անիծյալ իմպերիալիստական աշխարհում առանց կռվի չի կարելի ճշմարտություն ու արդարություն գտնել։ 130 տարվա ստրկական «խաղաղ» կյանքի ժամանակ ավելի շատ մարդկային ու նյութական կորուստներ էին եղել, քան այդ պանծալի ու քաջարի պայքարի տարիներին։ Ժողովուրդն իր լավագույն զավակների ու դուստրերի մահվան գնով հաստատում էր կյանք և անմահություն։

III. ԳԱՂՈՒԹԱՐԱՐՆԵՐԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 184. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱԽՈՂՈՒՄԸ։ Գաղութարարների միջև միշտ էլ եղել են ու մինչև օրս էլ կան տակտիկական կարգի տարաձայնություններ այն հարցի շուրջը, թե ինչպիսի մեթոդներով

յուրացնեն գերշահույթի գաղութային աղբյուրները։ Դրանք առանձնապես սրվեցին XX դարում, ազգային-ազատագրական շարժման ընդհանուր վերելքի կապակցությամբ։

Ֆրանսիան չէր կարող այս ընդհանուր կանոնից բացառություն կազմել ու չկազմեց։ Օրինակ, գաղութարար Բյուժոն ընդունում էր գաղութացման միմիայն ռազմական մեթոդները, իսկ Սուլտը կողմնակից էր ռազմական և քաղաքացիական կառավարման մեթոդների զուգորդմանը։ Քրիստոնեական եկեղեցին այս հարցում հանդես եկավ իրեն հատուկ «զգաստությամբ». նա ավելին չէր պահանջում, քան կիսալուսինը փոխարինել խաչով։

«Սոցիալիստների» մասին խոսելն ավելորդ է, այդ «առաջավոր» մարդիկ առավել արմատական ձևով են լուծում ազգային-գաղութային հարցը։ Լինելով կապիտալիզմի «թշնամիներ», կեղեքման նրա «կեղտոտ», պարզունակ-«անպլան» մեթոդներով հանդերձ, սոցիալիստներն ուզում են պլանային կերպով, պետության ամբողջ հզորությամբ այնպես կազմակերպել գործը, որ Ֆրանսիան դառնա բոլոր փոքր ժողովուրդների «հայրենիքը՝ ազատության ու իրավահավասարության պայմաններում», այդ ճանապարհով ստեղծել մի «մեծ ֆրանսիական ազգ»։

Այսպիսով, գաղութարարների բանակում միշտ տարաձայնություններ կան։ Սակայն նրանց միջև պայքարը, իբրև կանոն, հանգում է «ընդհանուր համաձայնության» քաղաքականության հաստատման. իշխող դասակարգերը գաղութային քաղաքականություն են վարում բոլոր ուղղություններով՝ ռազմական, քաղաքացիական, եկեղեցական, տնտեսական, քաղաքական-գաղափարական և այլն, և այլն։

Բոլորը գոհ են, բոլորը ցնծում են։ Սակայն դա տևում է այնքան ժամանակ, քանի դեռ գաղութային ժողովուրդը «խաղաղ» է պահում իրեն, իսկ երբ պայքարի է դուրս գալիս զենքը ձեռքին, որպեսզի պաշտպանի իր իրավունքները՝ «ընդհանուր համաձայնության» քաղաքականությունը տապալվում է։ Գաղութարարների առանձին խավերի տարաձայնությունները խիստ սրվում են, հաճախ ընդունում մետրոպոլիայում իշխանության համար մղվող լեգալ ու անլեգալ, պառլամեն-

տական կամ բացահայտ զինված պայքարի ձևեր։ Արդեն ասվեց, որ հռոմեական կայսրության մեջ այդպիսի գժտությունների ժամանակ գաղութարարները բնաջնջում էին միմյանց։ Այդպիսի դրություն ստեղծվեց ֆրանսիական գաղութարարների բանակում, հենց որ «ընդհանուր համաձայնության» քաղաքականությունը ձախողվեց Ալժիրում։

Մենք այդ տարաձայնությունների մանրամասն վերլուծության հնարավորությունը չունենք։ Սակայն տեղին են մի շարք ընդհանրացումներ։

Ֆրանսիական գաղութարարները հիմնականում բաժանվում են երկու խմբի։ Առաջինի մեջ մտնում են տեղական գաղութարարները՝ «ծայրահեղները», երկրորդի մեջ՝ այսպես կոչված «մեծ քաղաքականության» մարդիկ։

«Ծայրահեղները» արտացոլում էին Ալժիրի եվրոպական բնակչության շահերը, որի մեջ մտնում էին Ալժիրի հողերի ու անտառների տերերը, գործարանների ու ֆաբրիկաների, բանկերի ու տրեստների տերերը, թեթև և անտառային արդյունաբերության գործամոլները, ինչպես նաև այնպիսի մարդիկ, որոնք զբաղված էին խաղողի և գինու, վաղահաս բանջարեղենի և մրգի արտադրությամբ։ Նրանք բոլորն էլ առորփառոք ապրում էին բնիկների և նրանց «հավերժակենդան մոր» հաշվին։ «Ծայրահեղներին» պաշտպանում էին մետրոպոլիայի այն շերտերը, որոնք տառապում են Ֆրանսիայի «վեհության» հիվանդությամբ, բոլոր նրանք, ովքեր «Ֆրանսիայի ապագան ու երջանկությունը» տեսնում են այն բանում, որ նա ունի «տեսանելի» գաղութային կայսրություն։

Իսկ «մեծ քաղաքականության» գաղութարարները արտացոլում են մետրոպոլիայի մոնոսոլիստական կապիտալի շահերը։

§ 185. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ «ԾԱՅՐԱՀԵՂՆԵՐԸ» ԵՎ ՕԱՍԱԿԱՆՆԵՐԸ։ Ինչպես գաղութային բոլոր տիրապետություններում, այնպես էլ Ալժիրում տեղական գաղութարարներն էին սնում «ծայրահեղներին»։ Վերջիններս այնպիսի մարդիկ էին, որոնց օգնությամբ «շատ բարի քեռի Բյուժոն» ուզում էր Ալժիրում ֆրանսիական զենքի հաղթանակն ամրապնդել։ Եվ իսկապես, նրանք դարձել էին ֆրանսիական Ալժիրի քաղաքականության ամենամոլի կողմնակիցներ, Ալժիրի ժողովրդի ամենակատաղի թշնամիներ։ «...Ալժիրում ապրող եվրոպացիների մեծամասնությունը,— ասում է Լարբի Բուհալին,— իսկապես ենթարկվեց գաղութատերերի վերնախավին և հանդես է գալիս Ալժիրի ժողովրդի գործի դեմ... Ծայրահեղ գաղութարարների քաղաքական ու տնտեսական ազդեցությունը միանգամայն զգալի է ինչպես Ալժիրում, այնպես էլ Ֆրանսիայում, որտեղ նրանք բազմաթիվ համախոհներ ունեն կառավարական շրջաններում»[1]։

Այսպիսով, ֆրանսիական «ծայրահեղ գաղութարարները» Ալժիրում եվրոպական վերաբնակների առավել ագրեսիվ շովինիստական թևն են կազմում, որոնք միաձուլվել են բուն Ֆրանսիայում ծայրահեղ աջ տարրերի հետ՝ գործում են գաղութացման ֆաշիստական մեթոդներով և, հասկանալի է, իրենք էլ ֆաշիստներ են։

Ալժիրում գաղութարարների զանազան կազմակերպությունների ու շարժումների պարագլուխները բացահայտորեն մերժում էին Ալժիրի գաղութային ստատուտի փոփոխության ամեն մի ձև և հանուն իրենց արտոնությունների պահպանման դիմում պատերազմի շարունակման։ Նրանք հանդես էին գալիս ընդդեմ ֆրանսիական կառավարության այն որոշման, որ բանակցություններ վարվեն Ալժիրի հանրապետության ժամանակավոր կառավարության հետ, մի որոշում, որ ընդունվել էր Ալժիրի ժողովրդի՝ իր իրավունքների համար մղված բազմամյա պայքարի շնորհիվ։ Այդ ձևոք էր բերվել ինչպես միջազգային, այնպես էլ մետրոպոլիայի հասարակայնության ուժեղ ճնշման շնորհիվ, բայց երբ Էվիանի համաձայնագիրը կնքվեց, դրան զինված խռովությամբ պատասխանեցին։

1961 թ. փետրվարին ինչպես Ալժիրում, այնպես էլ մետրոպոլիայում «ծայրահեղների» բոլոր կազմակերպություններն ու խմբերը միացան և ֆրանկոյական Իսպանիայում գումարված դավադիր այլևայլ կազմակերպությունների ներկայացուցիչների «Մադրիդի համաձայնագրի» հիման վրա ստեղծեցին

---

[1] Журнал «Коммунист», № 16, 1960, стр. 78—79.

նոր կազմակերպություն՝ «ՕԱՍ» («գաղտնի զինված կազմակերպություն»)։

«ՕԱՍ»-ի ստեղծումից հետո «ծայրահեղներն» է՛լ ավելի լկտիացան և սկսեցին ահաբեկել իրենց հակառակորդներին։ Գիշեր-ցերեկ Ֆրանսիայի ու Ալժիրի քաղաքներում կարելի էր ականատես լինել «ՕԱՍ-ի» ռումբերի հրացոլքերի։

Ֆրանսիական «ծայրահեղները» մի քանի տարի շարունակ բազմիցս փորձեցին գրավել իշխանությունը Ալժիրում և Ֆրանսիայում։ Ալժիրում նրանց կազմակերպած ռազմական խռովության պատճառով 1958 թ. մայիսի 13-ին Ֆրանսիայում հաստատվեց գեներալ դը Գոլի անձնական իշխանության ռեժիմը։ Սակայն վերջինս «շարդարացրեց» նրանց հույսերը, դարձավ «մեծ քաղաքականության» մարդ։ 1961 թ. ապրիլին նրանք Ալժիրում, Օրանում և ուրիշ քաղաքներում իշխանությունը գրավելու մի նոր, երրորդ փորձը կատարեցին։ Նրանք «զինվորական դիրեկտորիա» կազմակերպեցին ավիացիայի գեներալ, Կենտրոնական Եվրոպայում ՆԱՏՕ-ի զինված ուժերի նախկին գլխավոր հրամանատար Մորիս Շալի գլխավորությամբ։ Ռազմական խունտան ձգտում էր տապալել դը Գոլի կառավարությունը։ Չնայած անհաջողությանը, ՕԱՍ-ականները շարունակում էին իրենց տեռորիստական գործը նրանց դեմ, ովքեր հանդես էին գալիս Ալժիրում պատերազմի դադարեցման և Ալժիրի ժողովրդի հետ բանակցելու, նրա իրավունքները ճանաչելու օգտին։ Բայց փաստը առկա էր։ Ֆրանսիական կառավարությունն ստիպված էր ճանաչել Ալժիրի հանրապետությունը։

Ընթերցողը հիշում է, թե ինչպես առաջներում գաղութարարները հանդես էին գալիս «ինտերնացիոնալիստների» դերում, Ալժիրի «նացիոնալիզմն» ու «սեպարատիզմը» խստորեն քննադատում՝ «Ֆրանսիական միության» կազմից դուրս գալու ձգտումների համար, որտեղ նրանք «իրավահավասար» ապրում էին մետրոպոլիայի քաղաքացիների հետ, այն էլ Փարիզի օրենքներով։ Իսկ այժմ, երբ ստեղծվել էր Ալժիրի անկախ կառավարություն, որը երաշխավորում էր տեղի եվրոպական բնակիչների և բնիկների իրավահավասարությունը, բայց արդեն ոչ թե Փարիզի, այլ Ալժիրի օրենքներով, ապա

«ինտերնացիոնալիստները» մի ակնթարթում «նացիոնալիստներ» դարձան. նրանք չէին ուզում ապրել ազատ Ալժիրի օրենքներով։

Գաղութարարները խուճապի մեջ էին։ Այն օրերին հեռագրերը հաղորդում էին. «Ալժիրի շատ քաղաքներից այժմ սկսվել է եվրոպացիների ընտանիքների համատարած փախուստ Ֆրանսիա։ Ալժիրից մեկնել ցանկացողների քանակն այնքան մեծ է, որ նրանց էվակուացման համար ստիպված են լինում օգտագործելու ռազմական փոխադրական ավիացիան...

Ֆրանսիական բնակչությունը հեռանում է գյուղատնտեսական ֆերմաներից, որտեղ ապրում էր, և քաշվում է ֆրանսիական զորքերի հսկողության տակ գտնվող շրջանները»[1]։

Մենք այսքան մանրամասն անդրադարձանք տվյալ հարցին ընթերցողին ցույց տալու համար գաղութարարի դեմքը, նրա «հոգևոր» աշխարհը, այն զարհուրելի վտանգը, որ տեղի գաղութարարները ներկայացնում են գաղութային ժողովուրդների համար։ Նրանց օգնությամբ է մետրոպոլիան իր ձեռքում պահում իշխանությունը։ Չնայած այն բանին, որ կառավարական շրջանների և «օասականների» միջև գզվռտոց է տեղի ունենում, վերջիններս շարունակում են մնալ դեռ այն ուժը, որի օգնությամբ իմպերիալիստական Ֆրանսիան հույս ունի ապագայում ճնշում գործադրել Ալժիրի վրա։ Հենց դրանով է բացատրվում այն, որ Ֆրանսիայի կառավարությունը այնպես ներողամտորեն է վերաբերվում «ծայրահեղներին» և նրանց ճնշելու համար վճռական միջոցների չի դիմում[2]։

Այժմ խոսենք ծայրահեղների «հակառակորդների»՝ «մեծ քաղաքականության մարդկանց» մասին։

§ 186. «ՄԵԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԱՐԴԻԿ։ Մետրոպոլիայի գաղութարարների և հիմնականում բուն Ալժիրում ապ-

---

1 «Коммунист» (Ереван), 29 мая, 1962.

2 Речь Мориса Тореза, газета «Коммунист» (Ереван), 24 мая, 1962.

բող գաղութարարների հակասությունները ոչ թե նպատակների միջև հակասություններ են, այլ նպատակին հասնելու մեթոդների ու միջոցների հակասություններ։ Մոնոպոլիստական կապիտալի ղեկավարները՝ «մեծ բիզնեսի» մարդիկ ղեկավարվում են «համապետական շահերով» և «Ֆրանսիայի միջազգային հեղինակությամբ», այլ ոչ թե «անձնական շահերով», ինչպես այդ բանն անում են ֆրանսիական «ծայրահեղները», որոնք «իրենց բթից հեռու» չեն տեսնում։ ՕԱՍ-ի ղեկավարները գործում են ֆեոդալիզմի և կապիտալի նախնական կուտակման շրջանի կոպիտ մեթոդներով, մինչդեռ «մեծ քաղաքականության մարդիկ» գործում են ժամանակակից գաղութատիրության մեթոդներով, այնպիսի ձևով, որն առավել ճկուն է և թույլ է տալիս ամեն տեսակ խաղեր խաղալ։

Այդ խմբի մեջ մտնում են խոշոր բուրժուազիան, ծանր և նավթի արդյունաբերության մագնատները, ֆինանսական խոշոր տրեստները և մետրոպոլիայի բուրժուազիայի մյուս խմբերը, որոնք պատրաստ են հրաժարվել միացման ու ազգալուծման քաղաքականությունից, ֆրանսիական Ալժիրի քաղաքականությունից, հանուն իրենց հիմնական միջազգային շահերի պահպանման։

§ 187. ՍԱՐԴՆ ԻՐ ՈՍՏԱՅՆՆ Է ՀՅՈՒՍՈՒՄ։ Վերոհիշյալ հիմնական գաղութատիրական երկու խմբերը, ինչպես ասացինք, «ընդհանուր համաձայնության» շրջանում միասնական ճակատով էին վարում Ալժիրի ժողովրդի գաղութացման ու կեղեքման քաղաքականությունը։ Լարբի Բուհալին նշում է, որ «սկսած 1865 թվականից, երբ Ալժիրում ֆրանսիական գաղութարարների քանակն աճեց, ֆրանսիական կառավարությունները տեսականորեն առաջնորդվեցին ազգալուծման քաղաքական գծով, որի նպատակն է Ալժիրը դարձնել «ֆրանսիական երեք դեպարտամենտ», իսկ նրա բնակիչներին՝ «ֆրանսիացիներ»[1]։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ֆրանսիական կառավարությունները և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն առաջնորդվում էին ազգալուծման քաղաքականությամբ, որի նպատակն էր Ալժիրը դարձնել «ֆրանսիական երեք դեպարտամենտ», իսկ նրա բնակիչներին՝ «ֆրանսիացիներ»։

[1] **Ларби Бухали**, Октябрьская социалистическая революция и национальное движение в Алжире, стр. 7—8.

Բայց Ալժիրի ժողովուրդը վճռականորեն մերժեց գաղութատիրության միացման ու ազգալուծման քաղաքականությունը։ Նա ոչ միայն չընկավ այդ ցանցը, այդ նենգորեն հյուսված սարդոստայնը, այլև զենք վերցնելով պաշտպանեց իր իրավունքները։ Այդ ժամանակ գաղութաբնակները դիմեցին ականներին, արկերին, նապալմային ռումբերի օգնությանը։ Սակայն դրանից էլ բան չստացվեց։ Մինչդեռ գաղութարարների զորավարների շարքերում տեղի է ունենում պառակտում։ Ոմանք դարձան «էլաստիկ պաշտպանության» տակտիկայի կողմնակից, ոմանք էլ սկսեցին առաջնորդվել հին՝ «պատերազմ մինչև հաղթական վախճան» տակտիկայով։ Երևան եկան դրգռողականներ և օասականներ։

Իր ռադիո և հեռուստատեսային ելույթներով ֆրանսիական պետության ղեկավար դը Գոլը դեռ 1960 թվականի առաջին կեսին ճանաչեց Ալժիրի ժողովրդի իրավունքը՝ ազատ քվեարկության միջոցով տնօրինել իր բախտը։ Ավելին, նա խոստովանեց, որ «ամենայն հավանականությամբ այդ որոշումը կլինի Ալժիրյան Ալժիրի օգտին»։ Այդ ամենը կարելի էր մեկնաբանել իբրև ելույթ՝ ընդդեմ «միացման» և «ֆրանսիական Ալժիրի» կողմնակիցների։ Դը Գոլը խոսեց «ճակատամարտի պատվավոր վախճանի» մասին՝ «աշխարհը քաջերինն է» ֆեոդալական հին լոզունգի փոխարեն, որ առաջ նշանակում էր պարտվածի ծառայություն հաղթողին՝ վասսալի իրավունքներով։ Նա խոստովանեց, որ Ալժիրի «պրոբլեմն անլուծելի էր մնացել հարյուր երեսուն տարի», այսինքն՝ Ալժիրի գաղութացման օրվանից։ Թվում էր, թե ամեն ինչ արվեց՝ դը Գոլը դատապարտում է նվաճման բուն սկզբունքը։ Ինչպե՞ս չէ. սարդը սարդոստայն է հյուսում նեյլոնի թելերից՝ ճշմարտացի ու գեղեցիկ խոսքերը դը Գոլին հարկավոր էին Ալժիրի ժողովրդի ազգային-ազատագրական ճակատի ղեկավարներին հրապուրելու, որ համաձայնեին ալժիրյան Ալժիրի՝ «ինքնուրույն հանրապետության» ստեղծմանը, միայն թե «ազատ Ֆրանսիական միության» կազմում։

Այս բանն ակներև դարձավ Ալժիրի և Ֆրանսիայի կառավարությունների ներկայացուցիչների բանակցությունների ժամանակ։ Բայց խաղը չհաջողվեց։ Այդ ժամանակ գաղութարարներն առաջարկեցին ուրիշ տարբերակ՝ «ինքնուրույն» ալժիրական հանրապետություն ստեղծել ֆեդերատիվ սկզբունքներով, որի մեջ մտնեին այն տերիտորիաները, որտեղ ապրում էին եվրոպացիները և այն տերիտորիաները, որտեղ ապրում էին արաբներն ու բերբերները։ Դա կհամապատասխաներ գաղութարարների ցանկություններին՝ այդպիսի ֆեդերատիվ պետությունն ուղղակի կամ անուղղակի կերպով կախված կլիներ մետրոպոլիայից։

Սակայն այս անգամ էլ կրակոցները նշանակետին չհասան։ Գաղութարարները չէին հանգստանում։ Նրանք առաջարկեցին նոր նախագիծ՝ Ալժիրի նորակազմ Հանրապետության մեջ չպետք է մտնի Սահարայի լայնածավալ անապատը, որը հայտնի է իր հեքիաթային հարստություններով։ Ալժիրի ժողովուրդը չէր կարող ընդունել նաև այդ, որ նրանից խլեին իր հայրենիքի չորս հինգերորդ մասը։

Պատերազմը շարունակվում էր։ Այն անհեռանկար էր Ֆրանսիայի համար և շափազանց ծանր՝ Ալժիրի համար։

Բանակցությունները վերսկսվեցին։ 1962 թ. մարտի երկրորդ կեսին Էվիանում համաձայնագիր ստորագրվեց Ալժիրի ու Ֆրանսիայի միջև։ Մարտի 19-ին Ալժիրի տերիտորիայում դադարեցին պատերազմական գործողությունները, որոնք շարունակվում էին 2.694 օր։ Էվիանի համաձայնագիրը պրոբլեմի կոմպրոմիսային լուծում էր։ Ինչպես նշում է Լ. Բուհարին, նրա մեջ «ֆրանսիական կառավարությանը հաջողվեց մտցնել տնտեսական ու ռազմական կետեր, որոնց օգնությամբ հույս ուներ այսուհետև նույնպես նեոգաղութարարական քաղաքականություն կենսագործել»[1]։ Դա այն է, ինչին ձգտում էին «մեծ քաղաքականության մարդիկ»։ Նրանք պահպանեցին իրենց տնտեսական շահերը Սահարայում, իրենց ձեռքում պահեցին Մարս ալ-Կաբիրի ռազմական բազան և ռազմական ուրիշ բազաներ Ալժիրի տերիտորիայում։

[1] «Литературная газета», 12 мая, 1962.

Այնուամենայնիվ Էվիանի համաձայնագիրը նշանավորեց Ալժիրի ժողովրդի հաղթանակը՝ Ֆրանսիան ճանաչեց նրա անկախությունը, նրա տերիտորիայի ամբողջականությունը և համաձայնեց սուվերեն ազգային պետության ստեղծմանը՝ ներքին ու արտաքին քաղաքականության սուվերենության բոլոր հատկանիշներով հանդերձ։ Իբրև Ալժիրի ժողովրդի միակ լիազոր ներկայացուցիչ ճանաչվեց Ալժիրի Հանրապետության ժամանակավոր կառավարությունը։

§ 188. ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԻ ՄԵՋ ԵՆ։ Այս աշխարհում ոչինչ մեկուսացված տեղի չի ունենում։ Այս բանը լիովին վերաբերում է Կորեայի, Վիետնամի, Կամբոջայի, Ալժիրի, Հունգարիայի, Սուեզի ջրանցքի շրջանի և Կարիբյան ծովի, Կոնգոյի, Կիպրոսի, Տոնկինի ծովախորշի և աշխարհի մյուս բոլոր շրջանների դեպքերին։ Դրանով է բացատրվում և այն հետաքրքրությունը, որ այդ երկրների ու դեպքերի նկատմամբ հանդես են բերել ու հանդես են բերում աշխարհի տարբեր շրջանների մեծ ու փոքր ժողովուրդները։ Իմպերիալիստական խոշոր տերությունները ղեկավարվում են իրենց ռազմա-քաղաքական ու տնտեսական հեռավոր շահերով, ոչ միայն այսօրվա, այլև վաղվա՝ գալիք պատերազմի հեռանկարով։

Այո՛, ժամանակակից աշխարհում դեպքերը փոխադարձ կապի մեջ են, համաշխարհային ուժերի այդ հարաբերակցության տրամաբանական արդյունքն է, այն ստեղծվել է համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտումից հետո։

§ 189. ՄԱԿ-Ը ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԶԱՎԱԿՆ Է։ Համաշխարհային երկրորդ պատերազմն ավարտվեց ֆաշիստական երկրների ջախջախմամբ։ Հաղթանակած կողմի երկրները՝ Սովետական Միությունը, ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և ուրիշներ ստեղծեցին ՄԱԿ-ը, որի բարձրագույն օրենսդրական ու գործադիր օրգանում՝ Անվտանգության խորհրդում փաստորեն կենտրոնացված է ամբողջ իշխանությունը։ Վերոհիշյալ երկրների ներկայացուցիչները հարցերի քննության ժամանակ արգելքի իրավունքով են օժտված, առանց որոնց համաձայնության ՄԱԿ-ում ոչ մի որոշում չի կարող իրավական ուժ ստանալ։ Այսպիսով, ՄԱԿ-ը դարաշրջանի առանձ-

նահատակությունների արտահայտությունն է, XX դարի օրինական զավակը։

Օգտվելով այդ բացառիկ իրավունքից, իմպերիալիստական մեծ երկրները ոտնահարում են մարդու և ժողովուրդների այն հիմնական իրավունքները, որոնք գրանցված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ։ Եվ դուրս է գալիս այսպես՝ եթե մի կողմը պաշտպանում է մարդու և ժողովուրդների անկախությունը և զատապարտում ստրկությունն ու ճնշումը, ապա մյուս կողմը դրա վրա իր արգելքն է դնում և պնդում հակառակը։

Ընդամենը, նրանք հենվում են «միասնական պետության» շրջանակներում «իրավահավասարության» քաղաքականության վրա։ Երկրի ներսում այս հասկացողությունը գործածելիս գաղութարարները նրա մեջ դնում են երկու իմաստ՝ իշխանություն, այսինքն՝ բռնի ուժ, և հավասարություն, այսինքն՝ ասիմիլյացիա։ Իսկ արտաքին շուկայում դա մեկնաբանում են այսպիսի ոգով. ուրիշ երկրներ ու միջազգային կազմակերպություններ իրավունք չունեն միջամտելու «միասնական պետության» ներքին գործերին, որի ժողովուրդներն իբր «իրավահավասարություն» են վայելում։

Իրենց իրավունքները ՄԱԿ-ում հենց այդպես էին պաշտպանում Ֆրանսիայի ներկայացուցիչները Ալժիրի հարցը քննարկելիս։ Գլխավոր ասամբլեայի նիստերից մեկում պ-ն Պինոն ասաունում էր, որ Ֆրանսիան չի մասնակցի ասամբլեայի աշխատանքներին, եթե վերջինս «միջամտի երկրի ներքին գործերին»։

«1830 թվականից,— հայտարարեց նա,— Ալժիրը կազմում է ֆրանսիական տերիտորիայի անկապտելի մասը։ Մեր ստորագրած բոլոր միջազգային պայմանագրերը, այդ թվում նաև ՄԱԿ-ի կանոնադրությունը, կիրառելի են Ալժիրի նկատմամբ իբրև ֆրանսիական տերիտորիայի։ Երբեք ոչ ոքի մտքով չի անցել վիճարկելու այս։ Իսկ ինչպե՞ս և ի՞նչ բանի հիման վրա այժմ կարելի է հարցականի տակ դնել այն, ինչը ազգային և միջազգային իրողություն է եղել ավելի քան հարյուր տարի»[1]։

[1] К. и Ф. Жансон, Алжир вне закона, стр. 104.

Դա նեոգաղութարարի ձայնն էր, չար Ահրիմանի ձայնը։

Ֆրանսիան հասու լինելով, որ ի վիճակի է անտեսել Գլխավոր ասամբլեայի ամեն մի որոշում, իսկ Անվտանգության խորհուրդը առանց իրեն չի կարող որոշում ընդունել, պնդում էր իր ասածների վրա։ Չէ՞ որ նա ուներ վետոյի իրավունք։

Եվ չէ՞ որ ՄԱԿ-ում միայն Ֆրանսիան չի այդպես գործում։

§ 190. ԴԱՐՁՅԱԼ «ՄԵԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Սուեզի ճգնաժամի օրերին Եգիպտոսը կանգուն մնաց Սովետական Միության հզոր աջակցության շնորհիվ։ Առանց ՍՍՌՄ-ի և Չինաստանի աջակցության, Կորեայի ու Վիետնամի դեպքերն այլ ընթացք կընդունեին։ Ալժիրը նույնպես չէր կարողանա այդպիսի լարվածության դիմանալ Ֆրանսիայի դեմ մղած պատերազմում առանց Եգիպտոսի ու սոցիալիստական ամբողջ լագերի աջակցության։ Ասենք և առանց ՆԱՏՕ-ի երկրների ռազմական, ֆինանսական ու դիվանագիտական աջակցության Ֆրանսիական գաղութարարներն էլ չէին կարողանա այդքան երկար շարունակել «կեղտոտ պատերազմը» Ալժիրում։

ՆԱՏՕ-ի ղեկավարները, ինչպես հայտնի է, իրենց համարում են «մեծ քաղաքականության» մարդիկ, որոնց հետքերով գնում են այդ «մեծ քաղաքականության» ֆրանսիական գործիչները։ Սակայն չպետք է կարծել, թե Ատլանտյան պակտի մասնակիցների միջև լիակատար փոխըմբռնում գոյություն ունի և նրանց միջև սուր հակասություններ չկան։

ԱՄՆ-ի ղեկավարները կարծում են, որ ամբողջ «ազատ աշխարհը» պետք է ղեկավարվի Ամերիկայի ցուցումներով, բայց դրա դեմ վճռականորեն հանդես են գալիս ուրիշները, առանձնապես դը Գոլը։ Վերջինս ենթադրում է, որ Ֆրանսիան ու Արևմտյան Գերմանիան պետք է աշխարհում «երրորդ ինքնուրույն ուժը» դառնան ԱՄՆ-ից ու ՍՍՌՄ-ից հետո։ Դը Գոլի հետ համաձայն էր Ադենաուերը, բայց այդ պլանի դեմ հանդես է գալիս Էրհարդը, որը հույս ունի ոչ թե Ֆրանսիայի, այլ ԱՄՆ-ի հետ դաշն կնքած ետ ստանալ Գերմանիայի 1937 թվականի սահմանները։

«Կեղտոտ պատերազմի» ժամանակ բազմաթիվ ինֆոր-

մացիոն տվյալների հիման վրա Ֆրանսիայի որոշակի շրջաններում այն հաստատ համոզմունքն ստեղծվեց, թե Ալժիրի ապստամբությունը հրահրել էր ԱՄՆ-ը Արաբական Լիգայի միջնորդությամբ՝ նույնիսկ ՌԿԵԴ-ի (Революционный комитет единства и действия[1]) ծրագրած ժամկետից շուտ։ Այդ բանն արվել է, ինչպես ենթադրում են այդ շրջանները, որպեսզի Գերմանիայի օգտին Մենդես-Ֆրանսի կառավարության վրա ճնշում գործադրվի։ ԱՄՆ-ի կառավարող շրջանները ենթադրում էին, որ «ազատ աշխարհը սովետական իմպերիալիզմի ճնշումից պաշտպանելու համար» կապիտալիստական Եվրոպան կարող է միավորվել ոչ թե Ֆրանսիայի, այլ արևմտյան Գերմանիայի ղեկավարությամբ։

Ինչ խոսք, գերմանական ռևանշիստները լիովին համաձայն էին ԱՄՆ-ի այդ պլանին։ Նրանք ամբողջովին պաշտպանեցին Ֆրանսիային, Ալժիրի ժողովրդի դեմ մղած պատերազմում այն նկատառումներով, որ նախ, այդ պատերազմը թուլացնում էր Ֆրանսիային և դրանով իսկ ուժեղացնում Եվրոպայում Բոնnի հեգեմոն դիրք գրավելու շանսերը, երկրորդ, Ֆրանսիային ցույց տրված օգնության փոխարեն դը Գոլը իր հերթին պաշտպանում էր Ադենաուերին Արևմտյան Բեռլինի հարցում։

[1] «Ուղղակի գործողությունների» անցնելու հրամանը տվեց Միասնության ու գործողության ռևոլյուցիոն կոմիտեն. վերջինս ընդհատակյա մարտական կազմակերպություն էր, որ 1954 թ. ապրիլին ստեղծել էին դեմոկրատական ազատությունների հաղթանակի շարժում կուսակցության երիտասարդ նացիոնալիստները։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով գաղութատիրության մասին համառոտ ուրվագիծը, ի՞նչ հետևություններ, ընդհանրացումներ կարող ենք անել։

Առաջին. ժամանակակից գաղութատիրությունը կամ նեոգաղութատիրությունն իր էությամբ ու բովանդակությամբ չի տարբերվում հնից։ Առաջվա նման նա ձգտում է գերշահույթի գաղութային աղբյուրներ ձեռք բերել և հանուն այդ նպատակի պատրաստ է անգամ միջուկային պատերազմ սանձազերծելու, չխուսափելով ամեն տեսակի տակտիկական եղանակներից։ Նա եղել է ստրկատեր, ֆեոդալ ու կապիտալիստ, կարող է դառնալ «բանվոր»։ Նա եղել է միապետական, իսկ այժմ «հանրապետական է»։ Նա դեմոկրատի, «սոցիալիստի», «մարքսիստի» դիմակ է հագնում։

Աճող կապիտալիզմի դեմ պայքարում ֆեոդալիզմը օգտվում էր սոցիալիզմի գաղափարից։ Այդպես առաջ եկավ «ֆեոդալական սոցիալիզմը»։ Այնուհետև հանդես եկան մանրբուրժուական ու այլ կարգի «սոցիալիզմները»[1]։ Այժմ պետական կապիտալիզմը վերստին ձգտում է օգտագործել սոցիալիզմի գաղափարը։

«Սոցիալիզմ» էին կառուցում Արևմուտքի ու Արևելքի ավանտյուրիստները՝ Իտալիայի, Գերմանիայի «սոցիալիստները», Իրաքի բաասականները... Նրանք, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, բոլորից բարձր են գոռում իմպերիալիզմի ու գաղութատիրության մասին, կայծակ ու շանթ են։

[1] Տե՛ս Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը։

տեղում նրա հացեին, բայց խոսքով լինելով «սոցիալիստ», իսկ գործով՝ շովինիստ, նրանք առավել վտանգավոր իմպերիալիստներ ու գաղութարարներ են։

Երկրորդ, գաղութատիրության սիստեմը լիովին չի թաղված, և ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պատմության վերջին էջը լիովին չի գրված, որի ավարտման համար դեռ ինչքա՜ն ճիգ ու ջանք, արյուն ու արցունք է պահանջվում։

XX դարի սկզբներին ծագած մարդկության հասարակական զարգացման երկու գծերն իրենց վերջնական ավարտն ու ճարտարապետական հստակ ձևավորումն ստացան երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։

Առաջին գիծը առաջադիմական է, հիմնված է կենսական երևույթների ռեալիստական գնահատության, բանականության ու արդարության, իսկական դեմոկրատիայի, յուրաքանչյուր պետության, ժողովրդի պետական սուվերենության իրավունքի փաստացի ճանաչման վրա, երկրորդը ռեակցիոն, ագրեսիվ գիծ է, որը հիմնված է քարացած սկզբունքների, կոպիտ ուժի գործադրման, ճնշված ու թույլ ժողովուրդների ազատությունը և անկախության ոգին խեղդելու վրա։

Գերմանական, իտալական ու ճապոնական ֆաշիզմի տիպի գաղութային իմպերիալիզմի ռազմա-քաղաքական ջախջախումը և անգլիական, ֆրանսիական ու բելգիական տիպի գաղութային իմպերիալիզմի ճնշումից շատ ժողովուրդների ազատագրումը դեռ չեն նշանավորում գաղութատիրության վախճանը։ Ավելին, քաղաքական-տնտեսական տիպի նեոգաղութատիրությունը, որը խարսխված է գերշահույթի գաղութային բոլոր աղբյուրների համապարփակ յուրացման վրա, մի շարք տեղերում ամրապնդել է իր դիրքերը, ամենուրեք կամայականություն, ամենուրեք ռազմամոլություն, անհաշտություն է ցուցաբերում, թեև այդ ամենի մեջ մենք պետք է տեսնենք գաղութատիրական այդ շրջանների թե ուժը և թե թուլությունը։ Եվ եթե Ասիայում ու Աֆրիկայում սուվերեն պետությունների ետպատերազմյան գոյացումը եղավ մի տեսակ նորմալ իրավական երևույթ, ապա ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ճնշումը դարձել

է ոչ իրավական երևույթ, ռազմա-քաղաքական բանդիտիզմի քաղաքական արտահայտություն։

Երրորդ, բազմաթիվ «ինքնուրույն» երկրներ և «իրավահավասար» ժողովուրդներ բոլորովին էլ անկախ ու իրավահավասար չեն։ Նրանք գտնվում են կամ գաղութի վիճակում, կամ իմպերիալիստական հզոր տերությունների արբանյակներ են։

Չորրորդ, պետական սուվերենություն նվաճած մի շարք երկրներ այնքան թույլ են և տնտեսական ու տերիտորիալ իրավունքներով անզոր, որ սահմանափակ հնարավորություններ ունեն ազգային ու սոցիալական առաջադիմության համար։

Հինգերորդ, մարդկային բանականության, ազգային-ազատագրական շարժումների հաջողությունները, յուրաքանչյուր ժողովրդի պետական ինքնորոշման իրավունքների ընդհանուր ճանաչումը դեռ չպետք է կուրացնելու չափ խանդավառեն մարդկանց, այլապես նրանք աչքաթող կանեն սպասնացող վտանգը։ Բաֆֆին ենթադրում էր, թե հասել է բոլոր փոքր ու մեծ ժողովուրդների ազատագրության դարը և անցել է ժողովուրդների բնաջնջման ժամանակը։ Գրիգոր Զոհրապն ասում էր, թե ազգերի ստրկացման դարը, իմպերիալիզմի դարը վերջնականապես ավարտվել է։ Եվ նա այդ բանն ասում էր նեոգաղութատիրության՝ ժողովուրդների մահացու թշնամու աշխարհ գալու օրերին, երբ երիտթուրքերի կառավարությունն արդեն պատրաստում էր ամբողջ Հայության ֆիզիկական բնաջնջումը։

Եվ, վերջապես, նույնիսկ իմպերիալիզմի գաղութային սիստեմի լիակատար փլուզումը գաղութատիրության վախճանը չէ։ 1932 թվականի Գերմանիան գաղութներ չուներ, բայց մեծ պատերազմ սանձազերծեց, որի նպատակն էր բնաջնջել ու ստրկացնել Եվրոպայի (և ոչ միայն Եվրոպայի) ժողովուրդներին։ Ի՞նչ երաշխիք կա, որ վաղը երևան չի գա այդպիսի մի Գերմանիա և պատերազմ չի սկսի նույն նպատակով։ Մի՞թե այժմ դրան չեն պատրաստվում ագրեսիվ ռազմա-քաղաքական բլոկները, մի՞թե դրա համար չի գի-

շեր-ցերեկ միջմայրցամաքային հրթիռներով զինվում նեոգաղութատիրությունը։

Ո՛չ Ասիայի ու Աֆրիկայի երիտասարդ սեփականությունները, ո՛չ այն երկրները, որոնք միայն թղթի վրա գրված անկախություն կամ «հավասարություն» ունեն և մնքում են նեոգաղութատիրության լծի տակ, ոչ էլ սուվերենները չեն կարող երաշխավորել, որ չեն կորցնի իրենց ազատությունը և չեն «ապագաղութանա», քանի դեռ երկրի երեսից չի անհետացել կապիտալիզմը։ «Իմպերիալիզմը,— ասել է Ա. Ի. Միկոյանը Երևանի լենինյան ընտրական օկրուգի ընտրողների նախընտրական ժողովում 1962 թ. ապրիլի 14-ին արտասանած ճառում,— կձգտի կեղեքել թույլ զարգացած երկրներին այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի»։

Մենք արդեն տեսանք, թե ինչպես դարեր շարունակ առանձին «նվաճող ազգեր» դառնում են «մեծ ազգեր», իսկ հետո իջնում պատմության բեմից, «մեծ տերության» տիտղոսը զիջելով իրենցից զորեղին։ Այդ ժամանակները դեռևս լիովին չեն անցել, թեև մարդու բանականությունը հրամայաբար պահանջում է, որ ժողովուրդները գնահատվեն ըստ իրենց ունակությունների, սեփական աշխատանքի ու տաղանդի։ Բանականությունը և պատմության զարգացումը պահանջում են, որ ամեն մի ժողովուրդ օգտվի սեփական ազգային տերիտորիայի բնությունից ու նրա հարստություններից, որպեսզի հասարակության ամեն մի անդամ երջանիկ ապրի, այսինքն՝ ունևոր, կուլտուրական, ազատ ու Երկար կյանք վարի և ոչ թե կողոպտի ու ճնշի փոքրերին ու թույլերին։ Այո՛, դժբախտաբար այդ ժամանակները դեռ չեն անցել։ Մեր օրերում դեռ կան այնպիսի «գիտնականներ», որոնք ոչ միայն փառաբանում են ժամանակակից գաղութատիրությունը, այլև ֆեոդալական բացարձակ միապետությունները, «մեծ տերիտորիաներ» զավթելու և իրենց ձեռքում պահելու նրանց քաջագործություններում տեսնելով մի ինչ-որ «առաջադիմական դեր»։

Նեոգաղութատիրության երկրպագուները «ինտեգրացման» կոսմոպոլիտական քաղաքականության մեջ տեսնում են մի ինչ-որ նոր սպեղանի, որն ընդունակ է բուժելու իրենց պե-

տական կարգի բոլոր արատները և հասցնելու «ընդհանուր բարեկեցության»։

Բայց փաստը առկա է։ Նեոգաղութատիրությունը թեև նույն «մերկ թագավորն» է, բայց հանդես է գալիս իբրև «աշխարհի փրկիչ», իրեն ներկայացնելով այն մանկական հեքիաթի աքլորի պես, որը կարծում է, թե արևը ծագում ու աշխարհը լուսավորում է միայն այն ժամանակ, երբ ինքը ծուղրուղու է կանչում, իսկ բոլոր ֆյուրերները նման են այն արևածաղկին, որը կարծում է, թե ոչ թե ինքը, այլ արևն է ամբողջ օրը պտտվում իր շուրջը։

Այժմ ոչ միայն քաղաքակիրթ ժողովուրդները, այլև Ղետամնաց ցեղերն ու ցեղախմբերը ցանկանում են ապրել առանց այդպիսի «մերկ թագավորի», առանց այդպիսի աքլորի ու արևածաղկի խնամակալության։

Խնամակալությունը, ինչպես տեսանք, արտահայտվում է «սառը» և «տաք» պայքարով։ Ճնշելով և ստրկացնելով ժողովուրդներին, գաղութարարները ծուղրուղու են կանչում, թե իրենք ցանկանում են երկրի վրա հաստատել այն «հավիտենական խաղաղությունը», որը միշտ երազել է մարդկությունը։

Բայց արդյո՞ք ժողովուրդները կհամաձայնվեն դրան։ Հին Հռոմը, որ զավթել էր գրեթե ողջ աշխարհը, նույնպես պայքարում էր «հանուն հավերժական խաղաղության», ստրկացրած ժողովուրդների հավերժ «խաղաղ» կեղեքման։ Կապիտալիստները նույնպես անկեղծորեն ձգտում են աշխատանքի և կապիտալի խաղաղության։ Սակայն մի՞թե ժամանակակից գաղութարարների նպատակը ճնշված ժողովուրդներին խաղաղ, առանց պայքարի մետրոպոլիայի տիրող ազգին ձուլելը և նրա երկրին տիրանալը չէ։ Իսկ երկրի նոր աստվածնե՞րը՝ այդ «գերհանճարեղ» ֆյուրերները և դուչենե՞րը։ Մի՞թե նրանք չեն երազում «խաղաղություն» այն նպատակով, որպեսզի իշխեն միլիոնավորների վրա, նրանց զրկեն բոլոր իրավունքներից, բացի ստրկական աշխատանքի և նույն Երկրային «աստվածների» համար աղոթելու իրավունքից։

«Միջազգային խաղաղություն ապահովելու համար,—

մեզ ուսուցանում են գիտական կոմունիզմի հիմնադիրները,— հարկավոր է նախ և առաջ վերացնել բոլոր հնարավոր ազգային բախումները։ Յուրաքանչյուր ժողովուրդ պետք է լինի անկախ և սեփական երկրի տերը»[1]։ (Ընդգծումը մերն է Հ. Ս.։)

Այո՛, միայն այդ ուղիով։ Ո՞վ կարող էր Ալժիրի ժողովրդին, Անգոլայի, Մոզամբիկի ժողովուրդներին կամ գաղութային մյուս երկրների ժողովուրդներին զսպել, որ պատերազմ չմղեն իրենց սեփական կեղեքիչների դեմ, իրենց ազատության և անկախության համար։

Պարզ է, որ «քանի գոյություն ունի իմպերիալիզմը, մարդկությունը չի կարող հանգիստ լինել իր ապագայի համար»[2]։

Մարդկության առաջադիմության հաջողությունները չպետք է բթացնեն ժողովուրդների զգոնությունը։

1961 թվականին Երուսաղեմ քաղաքի հրեական մասում սկսեցին դատել հրեա ժողովրդի դահիճ Այխմանին, որին դրել էին անխոցելի ապակե անոթի մեջ։ Էսեսական գնդապետը հանգիստ էր պահում իրեն, մեղավոր չէր զգում և նույնիսկ զարմանում էր, թե ինչո՞ւ են իրեն Արգենտինայից առևանգել։ Չէ՞ որ պատերազմի տարիներին ինքը կատարում էր իր վերադաս պետերի հրամանները, կատարում այնպես, ինչպես վայել է պարտաճանաչ աստիճանավորին՝ ճշտորեն, կետ առ կետ։ Եվ միայն այդքանը։

Աշխարհակալության համար իր ավազակներին այդպես էր դաստիարակել «աստվածային» Հիտլերը, այդպես են դաստիարակում նաև ժամանակակից ռազմամոլ նեոգաղութատիրության ղեկավարները, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո պատերազմի հանցագործների ցուցակի մեջ չընկան և Նյուրնբերգում չդատվեցին միայն այն պատճառով, որ հաղթեցին գերմանա-ֆաշիստական գաղութարարներին։

Եվ, այսպես, դատում էին Այխմանին։ Ովքե՞ր։ Միայն

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 16, часть I, стр. 453.

2 ՍՄԿՊ ծրագիր, էջ 32։

հրեանե՞րը։ Ո՛չ, ո՛չ միայն նրանք։ Նրան դատում էին աշխարհի ժողովուրդները։

Ովքե՞ր հանդես եկան Այխմանի դեմ մեղադրանքներով։ Վեց միլիոն մեռած հրեաներ։ Եվ ոչ միայն նրանք։ Նրան մեղադրում էին երեք միլիարդ կենդանի մարդիկ[1]։

Ո՞րն է Այխմանի հանցանքը։ Հրեաների մասսայական բնաջնջո՞ւմը։ Այո՛, բայց ոչ միայն այդ։ Ֆաշիզմը՝ նեոգաղութատիրությունն սպառնում է բոլոր ժողովուրդներին, բոլոր ազատախոհ մարդկանց։ Անցյալ պատերազմի տարիներին զոհվեց 60 միլիոն մարդ։

Ո՞վ էր նստած մեղադրական աթոռին։ Միայն Այխմա՞նը։ Ո՛չ։ Նրա հետ նստել էին մեռած ու կենդանի հիտլերները և մուսոլինիները։

Աշխարհի ժողովուրդները չպետք է մոռանան, որ հին հիտլերները թեև արդեն այն աշխարհում են, սակայն նորերը ազատության մեջ են։ Նրանք հներից պակաս վտանգավոր չեն։ Հին Հունաստանում գտնվեց մի մարդ, որն իր «անմահության» համար այրեց այն ժամանակի յոթ հրաշալիքներից մեկը։ Ժամանակակից գաղութատիրությունը նման է այդպիսի մի խելագարի՝ նա պատրաստ է այրելու ամբողջ աշխարհը։

1 А. Леонов, Под стеклом, журнал «Новое время», № 29, 1961,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

I. Գաղութային առաջին կայսրություններից մինչև ֆեոդալիզմի հաստատումը

§ 1. Գաղութատիրության ծնունդը — 9։ § 2. Պատերազմը ժողովուրդների ընտանիքն է մտնում որպես մեծագույն չարիք — 10։ § 3. Արևելքի ռազմաքաղաքական գաղութային կայսրությունները — 11։ § 4. Ասորական կայսրությունը — 11։ § 5. Արևելքի միապետությունը և Հունական քաղաք-պետությունների դեմոկրատիան — 13։ § 6. Համաշխարհային գաղութային կայսրությունների առաջացման պատճառները — 15։ § 1. Աքեմենյան տերությունը — 16։ § 8. Գաղութատիրության զարգացման երեք էտապ — 17։ § 9. Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության անկումը — 18։ § 10. Փյունիկեցիները և Կարթագենը — 19։ § 11. Պյուիրոսը և Հռոմը — 20։ § 12. Կարթագենի և Հռոմի պայքարը գաղութային աշխարհատիրության համար — 21։ § 13. Տնտեսական գաղութատիրություն և քաղաքական-տնտեսական գաղութատիրություն — 22։ § 14. Հռոմի և Կարթագենի վարած գաղութային կեղեքման տակտիկական եղանակները — 23։ § 15. Հռոմի գաղութային իմպերիալիզմը — 25։ § 16. Մոլահենություն — 26։ § 17. Հռոմի մեծապետական քաղաքականությունը — 26։ § 18. Հռոմը և հուդաները — 27։ § 19. Քրիստոնեությունը և Հռոմը — 31։ § 20. Հռոմի անկումը — 32։

II. Հռոմի կործանումից մինչև կապիտալիզմի հաղթանակը

§ 21. Ազգային նոր պետությունների կազմավորումը Եվրոպայում և Ասիայում — 33։ § 22. Արևելյան և Արևմտյան գաղութատիրություն — 34։ § 23։ Մոնղոլների գաղութային նվաճումները — 35։ § 24. Թուրքական գաղութատիրությունը — 37։ § 25. Խալիֆ և Կիսալուսնի մենամարտը — 38։ § 26. Թուրքական կայսրության քայքայումը — 40։ § 27. Վերածնության դարաշրջան — 41։ § 28. Իսպանական և Պորտուգալական գաղութային կայսրությունների առաջացումը — 42։ § 29. Նորը ծնվող բուրժուազիայի գաղութային քաղաքականության մեջ — 43։ § 30. Հյուսիսային Ամերիկայի մասնատումը և գաղութային նոր կայսրությունների՝ Անգլիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի ձևավորումը — 45։

III. Ֆեոդալիզմի կործանումից մինչև բաժանված աշխարհի վերաբաժանումը

§ 31. Կապիտալիզմի վերածումը համաշխարհային սիստեմի — 45; § 32. Ամերիկյան «Անկախության դեկլարացիայի» սկզբունքները — 46; § 33. Ազգերի ձևավորման պրոցեսը Նոր աշխարհում և Եվրոպայում—47; § 34. Դեմոկրատիայի և աբսոլյուտիզմի ուժերի պայքարը — 48; § 35. Ուժերի նոր հարաբերակցությունը գաղութատիրական աշխարհում — 50; § 36. Աֆրիկայի բաժանումը—51; § 37. Ճապոնական և ցարական Ռուսաստանը գաղութատիրական պետություններ — 52; § 38. Եոյակ դաշինքը և եոյակ Անտանտան — 54;

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

§ 39. Ինչ է գաղութատիրությունը — 55; § 40. Ազգային տերիտորիան «հավերժակենդան մայրն է ժողովրդի»—57; § 41. Պետական սուվերենություն — 59; § 42. Իրավունքը ժողովուրդների միջև և իրավունքը պետությունների միջև — 59; § 43. Բուրժուական աշխարհում սուվերենությունն անբաժան չէ — 60; § 44. Միջազգային իրավունքի սովետական սկզբունքները — 61; § 45. Գաղութատիրության տնտեսական նպատակները — 62; § 46. Գաղութատիրության քաղաքական նպատակները — 63; § 47. Դարձյալ տնտեսական ու քաղաքական-տնտեսական գաղութատիրության մասին — 64; § 48. Ցարական գաղութատիրությունը քաղաքական-տնտեսական գաղութատիրություն էր — 66; § 49. Կլասիկ գաղութատիրության վերածումը նեոգաղութատիրության — 68; § 50. Գաղութատիրական քաղաքականություն վարող երկրների երեք խումբ — 76; § 51. Ինչ է նեոգաղութատիրությունը — 78; § 52. Գերշահույթի գաղութային աղբյուրների ձևավորման չորս եղանակները — 79;

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏՐՈՊՈԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՀԱՑՈՒ ԹՇՆԱՄԻՆ Է

§ 53. Հարցի դրվածքը — 82; § 54. Հին և նոր «ասոմածներ» — 84; § 55. Հուլիոս Կեսարը և իշխանության գրաված ու պետության նրա վեց սկզբունքները — 86; § 56. Մոտակի քաղաքականությունն առաջին խնդիրն է — 92; § 57. Ագրեսիվ բանակի ստեղծումը երկրորդ խնդիրն է — 94; § 58. Բլիթի քաղաքականությունը երրորդ խնդիրն է — 95; § 59. Նվաճող ազգն ավերիչ ուժ է — 96; § 60. Գաղութարարների սև գվարդիան — 98; § 61. Նեոգաղութատիրությունն է պատմության մեջ առաջին անգամ պետական օրգաններ ստեղծել «մոտակի ու բլիթի» քաղաքականության իրագործման համար — 104; § 62. Պաշտոնյայի բազկաթոռը և օրենքը — 105; § 63. Պետական կապիտալիզմը ոչ ոքի հետ չի բաժանում քաղաքական իշխանությունը — 106; § 64. Ագրեսիվ պետությունը միջազգային լարվածության և աղետի պատճառն է — 108; § 65. Երբ մարդը դադարում է ինքնուրույն մտածելուց — 109; § 66. «Պատերազմը բարբարոսների գիտությունն է» — 112; § 67. Ռազմիկների դատարակման պետական սկզբունքները — 112; § 68. Իշխող դասակարգերը գաղութարար դառնալուց առաջ սարկացնում են մետրոպոլիայի մարդկանց — 113; § 69. Հռոմի կործանման պատճառների մասին — 114;

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՅԼ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՀԱՇՏ ԹՇՆԱՄԻՆ Է

§ 70. Հարցի դրվածքը — 115; § 71. Ինչ է թաքնված դիվանագիտական նոտաների, հայտարարությունների ու պայմանագրերի գեղեցիկ ֆրազների տակ — 116; § 72. Հռոմի արտաքին քաղաքականության սկզբունքները—116; § 73. Հայաստանի դիվանագիտական արվեստի թուլությունը — 118; § 74. Բիսմարկի դիվանագիտությունը — 119; § 75. Ֆեոդալական աբսոլյուտիզմի դիվանագիտությունը — 120; § 76. Երբ է գաղութարարը պայքարում խաղաղության համար — 121; § 77. Դաղտնի դիվանագիտություն — 122; § 78. Դաղութակալ պետությունը դառնում է ռազմա-ագրեսիվ տերություն — 122; § 79. Գաղութային տերությունների մեծությունը և հզորությունը հիմնված են թալանի վրա — 123; § 80. «Աղքատ» և «հարուստ» ժողովուրդներ, «հետամնաց» և «զարգացած» երկրներ — 126; § 81. Պետական կախման անցողիկ ձևերը — 127; § 82. Ինչու են մարդիկ վաղաժամ մեռնում — 128; § 83. Ամեն մի կայսրություն ժողովուրդների բանտ է — 129; § 84. Տեսանելի և անտեսանելի կայսրություններ — 130; § 85. Քենեդին և ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմունքների մասին — 132; § 86. ԱՄՆ-ի տնտեսության կայսրության քաղաքականության նպատակները — 133; § 87. Կոլեկտիվ գաղութատիրություն — 136; § 88. «Քնքուշ խոսքերի և մեծ մահակի» քաղաքականությունը — 137; § 89. Առասպելական ասոմածները չեն արել այն, ինչ անում են «երկրային ասոմածները» — 138; § 90. Դեղորայք, որ նախատեսված է ոչ թե հիվանդին բուժելու, այլ թունավորելու համար — 140; § 91. Պատմությունը կրկնվում է, առաջին անգամ իբրև ողբերգություն, երկրորդ անգամ իբրև ֆարս — 143; § 92. Գաղութատիրության նպատակներն ու խնդիրները հակասում են մարդկանց ու ժողովուրդների էությանը — 146; § 93. Գաղութատիրության գլխավոր նպատակը — 148;

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

§ 94. Ի՞նչ է գերշահույթը — 149; § 95. Ոսկու «գետերը» սկիզբ են առնում գաղութային տերիտորիաներից — 151; § 96. Գաղութային գերշահույթի գլխավոր աղբյուրը գաղութային ժողովրդի ազգային տերիտորիայի բնական հարստություններն են, նրա ընդերքի հարստությունները — 152; § 97. Ջուզվող ավիակիրներ և անպարտելի գեներալներ — 153; § 98. Գերշահույթի կենդանի աղբյուրը — 156; § 99. «Ինչ որ երկիրն է, այն էլ պետությունն է» — 159; § 100. Ճնշված և թույլ ժողովրդի հոգևոր ուժերի օգտագործումը — 160; § 101. Գաղութային ժողովուրդը մետրոպոլիայի մարդկային ռեզերվն է — 163; § 102. Կապիտալի արտահանությունը — 169; § 103. Անհամարժեք առևտրական փոխանակություն — 172; § 104. Ճնշված ժողովրդի զավակների զինծառայությունը — 174; § 105. Ռազմական կողոպուտը գաղութային տերությունների հարստացման կարևոր աղբյուր է — 178;

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

§ 106. Հարցի դրվածքը — 182; § 107. Ալժիրի պրոբլեմը — 183;

I. Գաղութատիրության ռազմական մեթոդները

§ 108. Երկու տիպի պատերազմներ — 184; § 109. Հին Հռոմի և ժամանակակից գաղութարարների տակտիկական եղանակների նմանությունը — 185; § 110. Գաղութային գերշահույթի աղբյուրների գրավումը պատերազմի կամ զինված հարձակման միջոցով — 186; § 111. Ի՞նչ է հետևում մեծ գումարտակների գործողություններին — 188; § 112. «Արյան ու երկաթի» քաղաքականություն — 189; § 113. «Բաժանիր և իշխիր» քաղաքականությունը — 191; § 114. Պատերազմը պատերազմ է նյութում — 193; § 115. Գաղութային ժողովրդի հողը գավազան նպատակն է — 194; § 116. Հրեշավոր միջոցավորումը — 195; § 117. Ինտերվենցիայի «անդամահատումը» — 197; § 118. Գաղութարարների «հինգերորդ զորասյունը» — 200;

II. Գաղութային կեղեքման պետական-վարչական ձևերը

§ 119. Գլխավոր նպատակները — 201; § 120. «Միայն գաղութացումը կարող է ամրապնդել հաղթանակը» — ասում է գաղութարար Բյուժոն — 202; § 121. Հասարակաց կանայք և գաղութարարները — 204; § 122. Գաղութարարը պայմանագրին թելադրում է իր կարգերը, ապրելակերպն ու մտածելակերպը — 206; § 123. «Իրավահավասարության» քաղաքականության մասին — 206; § 124. «Մի՛ացրու և իշխիր» տակտիկան — 210; § 125. Հինը նոր երանգով — 212; § 126. Ընտրությունները, ոչ, տիկնիկային խաղ — 212; § 127. Պաշտամունքի վերահսկողություն — 216; § 128. Գաղութը վաճառականության ու հումքի շուկա է, մետրոպոլիայի ինդուստրիալ հզորության ամրապնդման բազա — 218; § 129. Գենոցիդի՝ բնիկների ֆիզիկական ոչնչացման քաղաքականությունը — 219; § 130. Գենոցիդի քաղաքականության նպատակը — 220; § 131. Արտամղման քաղաքականությունը — 220; § 132. Բնիկների տեղափոխման քաղաքականությունը — 222; § 133. Այլ երկրներ կատարվող արտագաղթի քաղաքականությունը — 224; § 134. Դեպի մետրոպոլիա ներգաղթի քաղաքականությունը — 225; § 135. Գաղութաբնակեցման պետական քաղաքականությունը — 225; § 136. Ազգալուծման քաղաքականությունը — 227; § 137. «Մեկ ֆրանսիացիների» և «սև անգլիացիների» կայսրության ստեղծման նախագծի մասին — 232; § 138. Մեռած և կենդանի լեզուներ — 233; § 139. Ժողովրդական կրթության հարցերը և ասիմիլյատորները — 238; § 140. Մի քանի խոսք ժողովրդի քանակական կազմի մասին — 239;

III. Գաղափարական ստրկացման մեթոդները

§ 141. Հոգեբանական դիվերսիայի լաբորատորիան և նրա գլխավոր նպատակները — 241; § 142. Գաղտնի պատերազմը և նրա գաղտնի զենքերը — 243; § 143. Դարձյալ «հինգերորդ զորասյան» քաղաքականության մասին — 245; 144. «Ազատ աշխարհի» տեսության մասին — 246; § 145. Նեոգաղութատիրությունը դիմակավորվում է սոցիալիզմի դրոշով—248; § 146. Բռնակալները միշտ ճգնել են համբավավոր լինել — 251; § 147. «Համապետական պահանջմունքների» և «Յուրաքանչյուր պետություն պետք է ազգային պետություն դառնա» տեսությունների մասին — 252; § 148. Ո՞մն է պետական սեփականությունը՝ բնիկ ժողովրդի՞նը, թե՞ մետրոպոլիայինը — 256; § 149. Հայրենադավությունը գաղափարապես հիմնավորելու տեսության մասին — 257; § 150. Ժամանակակից գաղութարարների «նացիոնալիզմի» և «ինտերնացիոնալիզմի» մասին — 262; § 151. Ժողովուրդները չեն մեռնում, նրանց սպանում են — 265; § 152. Ով վճարում է նվագողներին, նա էլ պատվիրում է նվագը — 266; § 153. Գաղութային իշխանության կայսրության գաղտնիքը — 266;

ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԻՆ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆ Է

1. Պատմության մաճավճիռը գաղութատիրության նկատմամբ ժողովուրդներն ի կատար են ածում

§ 154. Ժողովուրդների ազատագրման շղթայական ռեակցիան — 269; § 155. Նորը ժողովուրդների ազատության պրոցեսում — 271; § 156. Ճշմարտությունն ու ազատությունը կարելի է ծաղր ու ծանակի ենթարկել, արգելել, բայց ոչ ոչնչացնել — 271; § 157. Ազգային-ազատագրական շարժման մի քանի հարցերի մասին — 273; § 158. Ազգային-ազատագրական շարժման առաջին փուլի մասին — 275; § 159. Ժողովուրդների ինքնորոշումը քաղաքական իմաստով անկախության բացառիկ իրավունք է, այսինքն՝ ճնշող ազգից քաղաքականապես անջատվելու իրավունք — 276; § 160. Բոլոր ժողովուրդները ստեղծել են անկախ պետություններ կամ գտնվում են դրանք ստեղծելու նախօրյակին — 278; § 161. ԱՄՆ-ի գաղութարարների պայքարն իրենց հայրենային հարևանների «տնտեսական նացիոնալիզմի» դեմ — 278; § 162. Ֆրանսիական միության գաղութարարների պայքարն ալժիրցիների «քաղաքական նացիոնալիզմի» մասին—289; § 163. 20-րդ դարի առաջադիմության էությունը — 280; § 164. Ազգային միասնությունն գաղութարարների քաղաքականության դեմ — 281; § 165. Գոյություն ունի ալժիրական ազգ — 282; § 166. Ազգալուծման ֆրանսիական քաղաքականության կործանումը — 283; § 167. Չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, որ ճնշում է ուրիշներին — 285;

II. Պայքար հանուն ազգային անկախ պետությունների ստեղծման

§ 168. Երկաթե շղթաները իրրև ոսկե մանյակներ ներկայացնելու գաղութարարների ձգտումները — 286; § 169. Գաղութարարների հոգևոր ստրուկների մասին — 287; § 170. Գաղութարարների դեմ մղվող ժողովրդական պայքարի մեթոդների և ձևերի մասին — 289; § 171. Կապիտան Բոյկոտը և Բոյկոտի տակտիկան — 290; § 172. Գանդին և գանդիզմը — 292; § 173. Բոյկոտի ալժիրյան մեթոդները — 293; § 174. Հայրենասիրության մասին — 293; § 175. Նապոլեոն III-ի նոր մոտեցումը — 295; § 176. Գաղութային ժողովուրդը երբեք չպետք է մոռանա իր անցյալը և ստրկական ներկան։ Նա միշտ պետք է մարտնչի ազատ ապագայի համար — 295; § 177. Ժողովուրդը գենք է վերցնում — 296; § 178. Քաղաքական-տնտեսական գաղութատիրության կլասիկ «միասնական սկզբունքը — 297; § 179. Պայքարի դժվարությունները ու առանձնահատկությունները — 298; § 180. Ապստամբ ժողովուրդը բնաջնջում է «հինգերորդ զորասյունը» — 299; § 181. Ալժիրի մակերը — 301; § 182. «Եթե նույնիսկ մենք երջանիկ լինենք ֆրանսիացիների սվիններով, դա մեզ համար չէր պահի անկախություն պահանջելուց» — 301; § 183. Պայքար հանուն անմահության — 304;

III. Դաղութարարների տակտիկական տարաձայնությունները

§ 184. «Ընդհանուր համաձայնության քաղաքականության ձախողումը — 304։ § 185. Ֆրանսիական ծայրահեղները և օասականները — 306։ § 186. «Մեծ քաղաքականության» մարդիկ — 309։ § 187. Մարդն իր ոստայնն է հյուսում — 310։ § 188. Աշխարհում իրադարձությունները փոխադարձ կապի մեջ են — 313։ § 189. ՄԱԿ-ը դարաշրջանի օրինական զավակն է — 313։ § 190. Դարձյալ «Մեծ քաղաքականության» գործիչների մասին — 315։ Եզրակացություն — 317։

Հարություն Ներսեսի Սարգսյան

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԳԱՂՈՒԹԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական ձեռնարկ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
1 և 2	1 ն.	1965	1966
51	1 վ.	Լուռիպա~	Լուիպա~
154	3 ն.	բազմավորվել	բաղավորվել
162	10 վ.	«հայրենիքը», այն	«հայրենիքը» այն
220	4 ն.	ընիկներին	ընիկների վրա
256	14 ն.	սեփականումը	սեփականացումը
339	25 ն.	մասին—289	դեմ—279

Պատ.—1432

[illegible] 60×90/32, տպ. 20,75 մամ., հրատ. 14,8 մամ., պայմ. 17,0 մամ.։
Գինը՝ 44 կոպ.։

Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան. Երևան, Ալավերդյան փող. № 65։